

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

3(663)
ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
СЕНТЯБРЬ-ДЕКАБРЬ
SEPTEMBER-DECEMBER

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ,
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦУН АВАКЯН, АРАРАТ АГАСЯН, ВЛАДИМИР АРУТЮНЯН,
ГАМЛЕТ ГЕВОРКЯН, ВАРДАН ДЕВРИКЯН, ГАГИК КАЗИНЯН, РУБЕН КАРАПЕТАН,
ВИКТОР КАТВАЛЯН, АШОТ МЕЛКОНЯН, ВАЧЕ ОВАКИМЯН,
НИКОЛАЙ ОГАНЕСЯН, ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН,
ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAYEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGYAN, VARDAN DEVRIKYAN,
ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN,
VLADIMIR HARUTIUNYAN, VACHE HOVAKIMYAN, NIKOLAY HOVHANNISYAN,
GAGIK GHAZINYAN, ASHOT MELKONYAN, GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN,
YURI SUVARYAN

©Լրաբեր հասարակական գիտությունների
©Вестник общественных наук
©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության նոր էջը.....	12
--	----

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Խառատյան – Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության և Էջմիածնի կաթողիկոսության փոխհարաբերությունները XVIII դարում..	18
Քնարիկ Ավագյան – «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպության աջակցությունը Հայաստան ներգաղթած հայրենակիցներին գործարար ոլորտում (2013-2018 թթ.).....	34
Լիզա Քարիմյան – «Քաղկեդոնական հայ եկեղեցու»՝ Վ. Հարությունովա- Ֆիդանյանի հայեցակարգը.....	53
Հայկարամ Հակոբյան – XVI դարի Ռեֆորմացիայի ներքին և արտաքին պատճառները.....	73
Նարեկ Գրիգորյան – Քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացի մեթոդաբանական վերլուծություն.....	85

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Հարությունյան, Մարիանա Քոչարյան – Հանրային կառավարման համակարգի տեղեկատվայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում.....	102
---	-----

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոբերտ Ղազարյան, Ռուսլան Ցականյան – Սուբուր/Սուբարտու երկիրն Ադաբի արքա Լուգալ-Աննե-Մունդուի արձանագրությունում.....	114
Արամ Գասպարյան – Իրավիճակն Ալժիրում. էմիր Աբդ ալ-Կադերի հակաֆրանսիական պայքարի վերջին փուլը (1844-1847 թթ.).....	126

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ալվարդ Խաչատրյան – Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի ոճական բնութագրիչների շուրջ.....	139
Իննա Իլիչևա (Բելառուս, Բրեստ) – «Վայրի ցուլ» կոնցեպտի ներկայացման միջոցները տարածաշրջանային հաղորդակցական տարածքում.....	150
Նաիրա Համբարձումյան – Մշակութային հիշողության և ժամանակի ֆենոմենները Ղևոնդ Ալիշանի «Ընդ եղենեալ յամայութեան բացա- վայրի. խորհրդածութիւն» երկում.....	165

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հենրիկ Հովհաննիսյան – Լույսի և ստվերի գեղագիտությունը.....	180
Անի Հակոբյան – Տարոն աշխարհի ղույրներ.....	199
Ջահրա Մալեքի (ԻԻՀ, Շիրազ) – Հաֆեզի բանաստեղծական աշխարհի արտացոլումն Այդին Ադաշլուի նկարներում.....	216

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բենիկ Վարդանյան – Կուրարաքսյան Միջագետքի բրոնզ-երկաթեդարյան ուսագոտիները.....	226
Գոհար Ստեփանյան – Տոնը առաձային լեզվում.....	247
Անի Սարատիկյան – Ուշագրավ թաղում Բովեր դամբարանադաշտում....	255

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էմինե Ռուխկյան – Հայաստանի մեդիաշուկայում հեռուստաալիքների ձևաչափերի զարգացման միտումներն ու հեռանկարները.....	264
---	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Աշոտ Սարգսյան – Հասարակական գիտությունների բնագավառում ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի բարեփոխման ծրագիրը.....	270
Ստեփան Ղարիբջանյան – Աշխարհբեկ Քալանթար, Եվգենի Բայբուրդյան.....	280
Արմեն Գրիգորյան (ՌԴ, Մոսկվա) – Վարդան Հայրապետյանի գիտական ժառանգությունից.....	293

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վանիկ Վիրաբյան – Կարեն Խաչատրյան, Համո Սուքիասյան, Գեղամ Բադալյան, Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին.....	308
Լիլիթ Հովհաննիսյան – Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում, ժողովածուի կազմող և թարգմանիչ՝ Գ. Մախմուրյան.....	315
Անահիտ Ամիրխանյան – Ռեբերտ Բաղդասարյան, Հոգվածներ. Հայ-ռուսական գրական-մշակութային առնչություններ.....	323
Աստղիկ Մարտիրոսյան – Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք: Կոմիտասը և իր ժառանգությունը.....	327

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Արմեն Վարդապետյան, Աննա Ասլանյան – Գեղարվեստական դրվագումը Խորհրդային Հայաստանում.....	334
---	-----

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Գրիգոր Օրդոյան – Տաղանդաշատ հայ թատերագետը (Հենրիկ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ).....	338
Աննա Ասատրյան – Արարատ Աղասյան. բազմավաստակ արվեստաբանը և գիտության հմուտ կազմակերպիչը.....	343
Հակոբ Հարությունյան – Նշանավոր հայագետը և հայրենասերը (Էդիկ Մինասյանի ծննդյան 65-ամյակին).....	358
Արսեն Բոբոխյան – Ծովքից դեպի Տրոյա. Արամ Քոսյանի գիտական ժառանգությունը.....	364

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Գարեգին Թումանյան – Տաղանդավոր հնագետը (Գևորգ Տիրացյանի ծննդյան 95-ամյակի առթիվ).....	370
--	-----

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Հենրիկ Սուրենի Սվազյան. լուսավոր հետազիծ թողած գիտնականը.....	377
---	-----

СОДЕРЖАНИЕ

Новая страница истории Национальной Академии наук РА.....	12
---	----

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Альберт Харатян – Отношения между Армянским патриархатом Константинополя и Эчмиадзинским католикосатом в XVIII веке.....	18
Кнарик Авакян – Поддержка общественной организации «Союз сирийских армян», оказанная в сфере бизнеса репатриантам – армянам из Сирии (2013-2018 гг.).....	34
Лиза Каримян – Концепция «халкидонской армянской церкви» В. Арутюновой-Фиданян.....	53
Айкарам Акобян – Внутренние и внешние причины Реформации XVI века..	73
Нарек Григорян – Методологический анализ процесса принятия политических решений.....	85

ЭКОНОМИКА

Асмик Арутюнян, Мариана Кочарян – Проблемы информатизации системы общественного управления в РА.....	102
---	-----

ВОСТОКОВЕДЕНИЕ

Роберт Казарян, Руслан Цаканян – Страна Субур/Субарту в надписи царя Адаба Лугаль-Анне-Мунду.....	114
Арам Гаспарян – Ситуация в Алжире: последний этап антифранцузской борьбы Абд Аль-Кадира (1844-1847 гг.).....	126

ФИЛОЛОГИЯ

Алвард Хачатрян – О стилистических характеристиках труда Ованеса Драсханакертци «История Армении».....	139
Инна Ильичева (Беларусь, Брест) – Средства репрезентации концепта «Зубр» в региональном коммуникативном пространстве.....	150
Наира Амбарцумян – Феномены культурной памяти и времени в сочинении Гевонда Алишана «Под елью: размышления на лоне безлюдной природы».....	165

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Генрих Оганесян – Эстетика света и тени.....	180
Ани Акопян – Колыбельные Таронского региона.....	199
Захра Малеки (ИРИ, Шираз) – Отображение поэтического мира Хафеза в картинах Айдина Агдашлу.....	216

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Беник Варданян – Перевязь в эпоху бронзы и железа куро-араксского междуречья.....	226
Гоар Степанян – Праздник в языке пословиц.....	247
Ани Саратикян – Уникальное захоронение из могильника Бовер.....	255

ЖУРНАЛИСТИКА

Эмине Рухкян –Тенденции и перспективы развития форматов телеканалов на армянском медиарынке.....	264
--	-----

ПУБЛИКАЦИИ

Ашот Саргсян – Программа реформ академика Гагика Саргсяна в области социальных наук.....	270
Степан Гарибджанян – Ашхарбек Калантар, Евгений Байбуртян.....	280
Армен Григорян (РФ, Москва) – Из научного наследия Вардана Айрапетяна.....	293

РЕЦЕНЗИИ

Ваник Вирабян – Карен Хачатрян, Амо Сукиасян, Гегам Бадалян, Аннексия армянских территорий Турцией и Советским Азербайджаном в 1920-1930-ых годах.....	308
Лилит Оганисян – Армения в документах Государственного департамента США, 1917-1920 гг. Составитель сборника и перевод Г. Махмурия.....	315
Анаит Амирханян – Роберт Багдасарян, Статьи. Армяно-российские литературно-культурные связи.....	323
Астхик Мартиросян – Ежегодник Музея-института Комитаса. Комитас и его наследие.....	327

НАУЧНАЯ ХРОНИКА

Армен Вардапетян, Анна Асланян – Художественная чеканка в Советской Армении.....	334
---	-----

НАШИ ЮБИЛЯРЫ

Григор Ордоян – Талантливый армянский театровед (к 85-летию со дня рождения Генриха Оганесяна).....	338
Анна Асатрян – Арарат Агасян: заслуженный искусствовед и опытный организатор науки.....	343
Акоп Арутюнян – Известный арменовед и патриот (к 65-летию со дня рождения Эдика Минасяна).....	358
Арсен Бобохян – От Цопка до Трои: научное наследие Арама Косяна.....	364

ПАМЯТНЫЕ ДАТЫ

Гарегин Туманян – Одаренный археолог (к 95-летию со дня рождения Геворка Тирацяна).....	370
--	-----

СЛОВО ПАМЯТИ

Генрик Суренович Связян: ученый, оставивший светлый след.....	377
---	-----

CONTENT

The New Page of the History of NAS RA.....	12
--	----

HISTORY AND POLITICAL SCIENCE

Albert Kharatyan – Relationships Between the Constantinople Patriarchate and Etchmiadzin Catholicosate in the 18 TH Century.....	18
Knarik Avagyan – Support of the "Union of Syrian-Armenians" Non-Governmental Organization to the Compatriots Repatriated to Armenia in the Business Field (2013-2018).....	34
Liza Karimyan – V. Arutyunova-Fidanyan's Concept of "Chalcedonic Armenian Church"	53
Haykaram Hakobyan – Internal and External Reasons of Reformation in the XVI Century.....	73
Narek Grigoryan – Methodological Analysis of Political Decision-Making Process.....	85

ECONOMICS

Hasmik Harutyunyan, Mariana Kocharyan – Issues of Informatization of Public Administration System in the RA.....	102
---	-----

ORIENTAL STUDIES

Robert Ghazaryan, Ruslan Tsakanyan – The Land of Subur/Subartu in the Inscription of King Adab Lugal-Anne-Mundu.....	114
Aram Gasparyan – The Situation in Algeria: The Last Period of Abd Al-kader's Anti-French Struggle (1844-1847).....	126

PHILOLOGY

Alvard Khachatryan – On the Stylistic Characteristics of the Work of Hovhannes Draskhanakerttsi "History of Armenia".....	139
Inna Ilyicheva (Belarus, Brest) – Means of Representation of the "Zubr" Concept in the Regional Communicative Space.....	150
Naira Hambardzumyan –The Phenomena of Cultural Memory and Time in the Composition "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature" by Ghevond Alishan.....	165

CULTURE AND ART HISTORY

Henrick Hovhannissian – The Aesthetics of Light and Shade.....	180
Ani Hakobyan – The Lullabies of Taron Region.....	199
Zahra Maleqi (IRI, Shiraz) – Reflection of Hafez’s Poetic World in the Paintings of Aydin Aghdashloo.....	216

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Benik Vardanyan – Shoulder Straps in the Bronze and Iron Age in the Territory of Kura-Araxes Interfluvium.....	226
Gohar Stepanyan – The Holiday in Proverbial Language.....	247
Ani Saratikyan – A Remarkable Burial from Bover Cemetery.....	255

JOURNALISM

Emine Rukhkyan – Trends and Prospects for the Development of TV Channels Formats in the Armenian Media.....	264
--	-----

PUBLICATIONS

Ashot Sargsyan – The Reform Programs of Academician Gagik Sargsyan in the Field of Social Sciences.....	270
Stepan Gharibjanyan – Ashkharbek Kalantar and Yevgeniy Bayburtyan.....	280
Armen Grigoryan (RF, Moscow) – From Scientific Legacy of Vardan Hayrapetyan.....	293

LITERARY REVIEWS

Vanik Virabyan – Karen Khachatryan, Hamo Sukiasyan, Gegham Badalyan Annexation of Armenian Territories to Turkey and Soviet Azerbaijan in the 1920–1930s.....	308
Lilit Hovhannisyan – Armenia in Documents of the U. S. Department of State, 1917–1920. Compiled and Translated by G. Makhmourian.....	315
Anahit Amirkhanyan – Robert Baghdasaryan, Articles. Armenian-Russian Literary-Cultural Relations.....	323
Astghik Martirosyan – Komitas Museum-Institute Yearbook: Komitas and his Legacy.....	327

SCIENTIFIC CHRONICLE

Armen Vardapetyan, Anna Aslanyan – Artistic Incuse in Soviet Armenia.....	334
--	-----

OUR JUBILEES

Grigor Ordoyan – The Talented Armenian Theater Expert (On the Occasion of Henrik Hovhannisyan's 85th Birthday).....	338
Anna Asatryan – Ararat Aghasyan. A Well-Deserved Art Critic and a Skilled Organizer of Science.....	343
Hakob Harutyunyan – The Famous Armenologist and Patriot (On the 65th Birthday of Edik Minasyan).....	358
Arsen Bobokhyan – From Tsopk to Troy: The Scientific Heritage of Aram Kosyan.....	364

IMPORTANT DATES

Garegin Tumanyan – The Talented Devotee of Archaeology (On the Occasion of Gevorg Tiratsyan's 95th Birthday).....	370
--	-----

A WORD OF MEMORY

Henrik Svazyan. The Way of a Bright Scientist.....	377
--	-----

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷԶԸ




2021 թվականը շրջադարձային եղավ ՀՀ ԳԱԱ պատմության համար. հունիսի 28-ին ընտրությունների շնորհիվ մեր երկրի գիտական հիմնական հաստատության հինգերորդ նախագահ ընտրվեց ակադեմիկոս **Աշոտ Սաղյանը**: Ապագա գիտնականը ծնվել է 1957 թ. ապրիլի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1978 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1980-1984 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում: Ա. Սաղյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1985 թ., դոկտորականը՝ 1997 թ.: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2016 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Նրա գիտական գործունեության բնագավառներն են ստերեոսելեկտիվ կատալիզը, ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը, բնական և կենսասինթետիկ խառնուրդներից կենսաակտիվ միացությունների անջատումը և մաքրումը: Ա. Սաղյանը հեղինակ է շուրջ 350 գիտական հոդվածների, 2 դասագրքի, 2 մենագրության: Նա 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու է: Ա. Սաղյանն արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի (2001), պարգևատրվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական «Բարեկամություն» շքանշանով (2002) և ՀՀ վարչապետի հուշամեդալով (2009): Աշոտ Սաղյանը ՀՀ պետական մրցանակի դափնեկիր

է (2015), ՀՀ նախագահի մրցանակի կրկնակի դափնեկիր (2004, 2011): 2014 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:



ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ընտրվեց **Հրանտ Հենրիկի Մաթևոսյանը**: Հ. Մաթևոսյանը ծնվել է 1947 թ. հուլիսի 10-ին Երևանում: 1970 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977 թ. նա ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 1997 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Հ. Մաթևոսյանը 2011-2021 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար: Նա ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» տնօրենն է, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնի վարիչը: 2018 թ. Հրանտ Մաթևոսյանին շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց **Արթուր Միքայելի Իշխանյանը**: Ա. Իշխանյանը ծնվել է 1960 թ. մայիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: 1983 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: 1983-1986 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի ասպիրանտուրայում: 1997 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 2004 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Արթուր Իշխանյանի գիտական գործունեության հիմնական բնագավառներն են ատոմական, մոլեկուլային և օպտիկական ֆիզիկան, մակերևույթային ֆիզիկան, քվանտային սակավավիճակ համակարգերը և այլն: Գիտնականը ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր է (2015):

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանի առաջարկությամբ ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը** դարձավ ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս **Յուրի Շուքուրյանը**՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը** ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1958 թ.՝ ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում: Իր գիտական աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԳԱ Բյուրականի աստղադիտարանում, ապա Աշտարակում՝ ՀԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի նորաստեղծ ինստիտուտում: 1960-1964 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Պ. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրայում:

Ռ. Մարտիրոսյանը 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, վերադարձել Աշտարակ՝ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ, ղեկավարել նորաստեղծ՝ քվանտային ուժեղացուցիչների լաբորատորիան: 1980 թ. նա նշանակվում է նույն ինստիտուտի տնօրեն:

1980 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը: 1984-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1986 թ. ընտրվում է Հայաստանի Հանրապետության ԳԱ թղթակից անդամ, իսկ 1990-ին՝ ակադեմիկոս:

1993-2006 թթ. Երևանի պետական համալսարանի ռեկտորն էր: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ, այն ղեկավարել մինչև 2021 թ.:

Գիտնականը արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարական բարձր պարգևների, նրան շնորհվել են բազմաթիվ մեդալներ ու շքանշաններ:

Նշենք նաև, որ այս տարի լրանում է բազմավաստակ գիտնականի ծննդյան 85-ամյակը, մաղթենք, որ նա ունենա ամուր առողջություն և նոր ավանդ հայրենական գիտության զարգացման մեջ:

Հունիսի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցան նաև ԳԱԱ նախագահության անդամների և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների ընտրությունները: ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ **Ռադիկ Մարտիրոսյանը, Աշոտ Մելքոնյանը, Գեղամ Գևորգյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ՝ Արսեն Հախումյանը, Վազգեն Մելիքյանը:** ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Լենսեր Աղալովյանը:** ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռադիկ Կոստանյանը:** ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ռուբեն Հարությունյանը:** ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Լևոն Թավադյանը:**



ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը:** Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. հունիսի 25-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1965 թ. ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը: 1970 թ. ստացել է տնտեսագիտության թեկնա-

ծուի, 1983 թ.' դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.' ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2011 թ.' ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների, այդ թվում՝ շուրջ 50 մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, որոնք վերաբերում են տնտեսագիտության ամենատարբեր բնագավառների: Յու. Սուվարյանը ավելի քան 70 թեկնածուական և 8 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու է: Նրա բազմաթիվ պարգևների մեջ հատկապես հիշարժան են «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին (2011) և 2-րդ (2017) աստիճանի շքանշանները: 2014 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Մեր երկրի համար ճակատագրական այս օրերին աննկուն կամք և ուժ է պահանջվելու ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահից և մեր գիտական վերնախավից՝ պատմության հերթական մարտահրավերներին դիմակայելու համար: Համոզված ենք, որ գիտությունը ոչ միայն լույս է սփռելու մեր հայրենիքում, այլև էապես պաշտպանելու է նրան: Այս առաքելության իրականացման գործում մեր գիտական առաջին այրերին սրտանց մաղթում ենք անսպառ եռանդ և նորանոր հաջողություններ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԶՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ

Ալբերտ Խառատյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ info@haygithimnadram.am
Հոդվածը ներկայացվել է 30.03.2021, գրախոսվել է 29.06.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-18

Ներածություն

1441 թ. Մայր Աթոռի՝ Էջմիածնում վերահաստատվելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն անցել է իր համազգային բնույթն ու նշանակությունն ամրապնդելու և ինքնահաստատման ոչ միանշանակ հակադրություններով լեցուն ճանապարհ: Այդ ընթացքի կարևոր առանձնահատկություններից մեկը Էջմիածնի բարոյական գերագահության հաստատման խնդիրն էր Հայաստանյայց եկեղեցու նվիրապետության մեջ, որտեղ, սկսած XVII դ., առաջնահերթություն էր ստանում Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ կաթողիկոսության փոխհարաբերությունների հիմնահարցը: Մովսես Տաթևացի կաթողիկոսի (1628-1631) և ապա հատկապես Փիլիպոս (1632-1655) և Հակոբ Զուղայեցի (1655-1680) կաթողիկոսների ազգանվեր գործունեության հետևանքով որակապես նոր փոխհարաբերություններ ձևավորվեցին կաթողիկոսության և պատրիարքության միջև, երբ վերջինս ընդլայնելու էր կաթողիկոսության հետ սերտացող շփումները՝ ելնելով Էջմիածինը որպես ընդհանրական աթոռ ճանաչելու անհրաժեշտությունից: Հայ Առաքելական Եկեղեցին կարողացավ պահպանել իր ամբողջականությունը և հաղթահարել առաջացող բարդությունները՝ ամենից առաջ Օսմանյան Թուրքիայում իր թեմերի պահպանության շնորհիվ: Եղիազար Այնթափցու՝ Էջմիածնի կաթողիկոս ընտրվելու իրողությունը մեկընդմիշտ վերացրեց Արևմտահայաստանի և Օսմանյան Թուրքիայի մյուս հայաբնակ թեմերում Էջմիածնի ներկայության առջև ծառացած՝ նոր պառակտման

հույժ վտանգավոր սպառնալիքը: Մնում էր Կ. Պոլսի պատրիարքության ամրապնդման, հայ եկեղեցու համակարգում նրա նշանակալիության հարցը, որ բազմաթիվ աղերսներ ուներ ազգային եկեղեցական կենտրոնների և առաջին հերթին Էջմիածնի կաթողիկոսության հետ: Հատկապես XVIII դ. սկզբներին, երբ պատրիարքությունը թուլացած էր նախորդ դարաշրջանից հայտնի՝ պատրիարքական քայքայիչ ներհակությունների հետևանքով:

Պատրիարքության վերելքը

Հովհաննես Կոլոտ պատրիարքի հայտնությամբ պատրիարքությունը, սակայն, կարողացավ վերջ տալ իր հեղհեղուկ ընթացքին և նոր, կենսունակ կապեր ու հարաբերություններ ստեղծել ազգային կրոնական մյուս կենտրոնների, հատկապես Էջմիածնի կաթողիկոսության հետ: Հ. Կոլոտի գործունեության բուն շրջանը՝ սկսած 1710-ական թթ., հազեցած էր այդ երևելի գործչին նպաստող մի շարք ներքին և արտաքին գործոններով, որոնք և պայմանավորեցին պատրիարքության կշռի ու հեղինակության աննախընթաց բարձրացմանը ազգային կրոնական կառույցների մեջ: Հ. Կոլոտի պատրիարքության նախընթաց շրջանում՝ Եղիազար Այնթափցուց մինչև Աստվածատուր Համադանցի, Էջմիածնի կաթողիկոսությունը նվազագույնի էր հասցրել շփումները Կ. Պոլսի պատրիարքության հետ, որի պատճառները պետք է որոնել ոչ միայն թուրք-պարսկական քաղաքական հարաբերությունների բնույթի, այլև դրա համեմատ, կաթողիկոսների և պատրիարքների փոխհարաբերությունների մեջ իրեն զգացնել տվող մեկուսացած վիճակը: Այս պայմաններում Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի նկատմամբ Կ. Պոլսի պատրիարքության առողջ դիրքորոշման կայացումը (վանքին աղետալի չափերով սպառնացող՝ կուտակված պարտքերը մարելուն ուղղված ողջամիտ քայլերը, Երուսաղեմում Կ. Պոլսից ուղղորդվող՝ վեքիլների ու նազըրների կողոպտչական գործողությունների կասեցումը), Կոլոտի եռանդուն և արդյունավետ գործունեության շնորհիվ, մեծապես նպաստեց նրա, որպես անհատականության անվերապահ ճանաչմանը հոգևորականության և առևտրական վերնախավի շրջաններում: Հատկապես Երուսաղեմի պատրիարքությունը Կ. Պոլսի պատրիարքությանը կցելու, ապա բաժանելու և վերստին կցելու պայմաններում (1702-1715) և վերոհիշյալ՝ անողորմ թալանի ենթարկվելու պատճա-

ռով վանքը հասել էր տնտեսական ողբալի վիճակի¹: 1713-1715 թթ., մինչև իր պատրիարք ընտրվելը, վանքը բարեկարգելու ուղղությամբ իր քայլերով Կոլոտը փրկեց նրա գոյությունը, ասել կուզի՝ հայկական վաղնջական ներկայությունը Երուսաղեմում²: Հ. Կոլոտի այս հույժ տպավորիչ ձեռնարկը իր արդյունավետ շարունակությունը պետք է ունենար մեկ այլ նվիրյալի՝ Գրիգոր Շղթայակրի գործակցությամբ, որ առավել քան համոզիչ հիմք դարձան առաջինի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք (1715, 10 սեպտեմբերի)³ և մյուսի՝ Երուսաղեմի պատրիարք ընտրվելու համար:

Հ. Կոլոտի հետագա գործունեությունն ընթացավ Կ. Պոլսի պատրիարքության և հայ եկեղեցու ավանդական կառույցներում վերջինիս հեղինակության հիմնավոր վերելքի պայմաններում: Էջմիածնի հետ փոխհարաբերություններում նրա ազդեցության ընդլայնմանը մի հայտնի չափով նպաստեց Օսմանյան Թուրքիայի ներթափանցումը Հարավային Կովկաս և առաջին հերթին՝ Արևելյան Հայաստան: 1725 թ. Երևանի գրավումը պարսիկներից, դրան հետևած՝ թուրքերի վարչաքաղաքական վերածնունդներն այս տարածաշրջանում և համապատասխան տնտեսական համակարգի մեջ այս վերջինի ընդգրկումն իրենց անմիջական հետևանքներն են թողնում հայերի կրոնական բաղադրիչների ակտիվացման վրա: Կ. Պոլսի պատրիարքության՝ որպես Օսմանյան Թուրքիայում պետության կողմից ճանաչված միլիթի կրոնական կառույցի նշանակության ընդլայնումը պետք է կարևոր և խոստումնալից գործոն դառնար կայսրության մեջ նրա գործնական ու հոգևոր դերակատարման համար: Քաղաքական ու տնտեսական նոր իրավիճակը, ընդհակառակը, գործողության նվազ հնարավորություններ էր ապահովում շահական Պարսկաստանի կարգուկանոնից, ուրեմն և տնօրինությունից ձերբազատված Էջմիածնի համար: Կաթողիկոսությունը դրան կարող էր հակադրել Ամենայն Հայոց Կաթողիկոսության կարգավիճակի դեռևս ավանդականորեն կայուն և հնավանդ ժառանգությունը, մինչդեռ իրականության մեջ ծանրության կենտրոնը տեղափոխվում էր Կ. Պոլսի պատրիարքություն, որին, բնականաբար, նախապատվություն պետք է տար օսմանյան պետությունը: Ի լրումն սրա՝ բուն այդ նախապատվությունը, իր հերթին, թելադրվում էր այն բացառիկ իրադրությամբ, որ հայ եկեղեցու հնամենի կառույցները՝ Երուսաղեմի վանքը,

¹ Յովհաննէս Հաննա 1782, 106-107:

² Օրմանեան 2011, 3231-3232:

³ Կիլիսեւրեան 1904, 135:

Կիլիկիայի աթոռը, Աղթամարը և ինքը՝ համազգային դիրք և հմայք ունեցող Էջմիածնի կաթողիկոսությունը, հայտնվել էին օսմանյան քաղաքական տիրապետության շրջագծում, որ ընդգրկեց 1725-1734 թթ. ժամանակաշրջանը: Կ. Պոլսի պատրիարքությանը մնում էր զգուշավորության և լայնախոհության սահմաններում օգտվել իր համար նոր և բարենպաստ պայմաններից, որ և հիմնականում ցուցաբերեց նա ամբողջ XVIII դ. ընթացքում, և որի մտածված ու հավասարակշիռ դրսևորումներն ենք տեսնում Հ. Կոլոտ պատրիարքի գործունեության մեջ: Հենց նրա պատրիարքության ժամանակից սկսած՝ այս հարյուրամյակում, ընդհուպ Դավիթ-Դանիելյան ներհակությունը (XIX դ. սկիզբ), իրեն զգացնել է տալիս Կ. Պոլսի պատրիարքության անտարակուսելի ազդեցությունը Էջմիածնի կաթողիկոսության վրա: Այստեղ հարկ է վերականգնել այս ամենը պայմանավորող և դրանք շարժման մեջ դնող գործոնները՝ Էջմիածնի թուլացած վիճակը Աղեքսանդր Ա Զուղայեցու (1706-1714) կաթողիկոսության ժամանակ, այս գործընթացը խորացնող անկայուն վիճակը Աստվածատուր կաթողիկոսի (1715-1725) գործունեության վերջին շրջանում, Երևանի և Էջմիածնի փաստական անցումը օսմանցիների տիրապետության տակ և ի լրումն այս ամենի՝ տաղանդավոր ազգային և եկեղեցական գործչի, որպիսին Հ. Կոլոտն էր, ճիշտ տեղին և ժամանակին հայտնվելը Կ. Պոլսի պատրիարքության վերնախավում: Երուսաղեմի պատրիարքության անջատումը Կ. Պոլսի պատրիարքությունից, որի մասին ասվեց վերը, և դրանից տասնմեկ տարի անց Կարապետ Ուլնեցու կաթողիկոսական ընտրությունը Կ. Պոլսի Մայր եկեղեցում (1726) վավերացնում էին Կ. Պոլսի պատրիարքության վերելքը և ազգային եկեղեցու համակարգում նրա կարգավիճակի կտրուկ փոփոխությունը տասնամյա այս ժամանակահատվածում և դրանից հետո: Կարապետ Ուլնեցու փոխարինած կաթողիկոսների ընտրության հարցում (Աբրահամ Խոշաբեցի, Աբրահամ Կրետացի, Ղազար Ջահկեցի, Մինաս Ակնեցի և հաջորդները՝ մինչև Սիմեոն Երևանցու ընտրությունը (1763), Էջմիածնի կաթողիկոսներն ընտրվել են Կ. Պոլսի պատրիարքության վճռորոշ մասնակցությամբ, եթե չասենք՝ ուղղորդմամբ: Կարապետ Ուլնեցուն փոխարինած Աբրահամ Խոշաբեցին (1730-1734) Մշո Ս. Կարապետ վանքի նախկին առաջնորդն էր, Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակրի եղբորորդին և նրան ու Հ. Կոլոտին համախոհ մի եկեղեցական⁴, որի ընտ-

⁴ Օրմանյան 2011, 3322:

րության մեջ, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, «Միշտ յայտնի կերելի, թե Կ. Պոլսոյ եւ Երուսաղեմի պատրիարքներուն համամիտ ազդեցութիւնը տիրեց»⁵: Այստեղ բացառություն է կազմում, թվում է, Աբրահամ Կրետացին (1734-1737), որի անակնկալ կաթողիկոսական ընտրությունը տեղի ունեցավ Էջմիածնի միաբանության հապշտապ վճռով, իբրև օսմանյան իշխանությունների կողմից ընտրությունը արագացնող գործողությունների հետևանք՝ թուրք-պարսկական մոտալուտ ռազմական բախումների պայմաններում⁶:

Ղազար Ջահկեցու (1737-1751) կաթողիկոսական ընտրությունը դարձյալ ցույց է տալիս, որ պատրիարքությունը պահպանում էր իր վճռական նշանակությունը Էջմիածնի միաբանության առջև՝ իր ընտրելին նախապատիվ համարելու գործընթացում: Այս դեպքում պատրիարքությանը տրվել էր ընտրության առավել քան լայն հնարավորություն (փաստորեն երկու թեկնածուներն էլ (Գրիգոր Շղթայակիր և Ղազար Ջահկեցի) առաջ էին մղվել Հ. Կոլոտի և Նրա շրջապատի խրախուսանքով և համաձայնությամբ): Այստեղ նշանակություն չունեն այն հանգամանքը, որ վերջիններիս համար նախընտրելի էր իր թեկնածությունից հրաժարված Գրիգոր Շղթայակիրը⁷: Ջահկեցին ևս միանգամայն ընդունելի էր Հ. Կոլոտի և յուրայինների համար՝ իբրև Ջմյունիայի հեղինակավոր թեմի առաջնորդ և հարգված եկեղեցական: Հարկ է ավելացնել ևս մեկ կարևոր հանգամանք՝ պատրիարքությունը կաթողիկոսության հետ հարաբերություններում ոչ միայն չէր սահմանափակվում կաթողիկոսական աթոռին իր թեկնածուների հաստատմամբ, այլև հետևում էր Էջմիածնի միաբանության շուրջ այս ժամանակաշրջանում այնքան հատկանշական դարձած խլրտումներն ու պառակտումները կանխելու ուղեգծին: Այդպիսի խոհեմության արտահայտություն կարելի է համարել անհանդուրժող դարձած կաթողիկոս Ջահկեցու և միաբանության բախումներից հետո անտերության մատնված Էջմիածնին կաթողիկոսական երկու թեկնածուներ առաջարկելու (Պետրոս Քյուրյուր և Սա-

⁵ Օրմանեան 2011, 3322-3323:

⁶ Օրմանեան 2011, 3335-3336: Աբրահամ Կրետացի 1870, 8-9:

⁷ Երուսաղեմի պատրիարք Գրիգորի հրաժարվելը Մ. Մուրատյանցը բացատրում է Նրա լայնախոհությամբ՝ Ղազարի հետ մրցակցության պատճառով «նոր խռովութեան առիթ մը չտալու համար» (Մուրատեանց 1872, 588): Մ. Օրմանյանն այդ հրաժարականի հնարավոր պատճառներից է համարում ոչ միայն պատրիարք Գրիգորի առաջացած տարիքը, այլև Երուսաղեմի վանքի կենսական խնդիրները առկախ չթողնելու ցանկությունը (Օրմանեան 2011, 3372):

հակ Ահագին) Կ. Պոլսի պատրիարքության քայլը⁸: Զահկեցու անկումը, Պետրոս Քյոպյուրի կաթողիկոսական ընտրությունը և վերջինիս վերստին կաթողիկոսական աթոռ վերադառնալը, կարելի է կարծել, իրողություն դարձան պարսկական նոր շահ Իբրահիմի բարեհաճության շնորհիվ, որի հիմքերը, հավանաբար, պետք է որոնել պարսկաթուրքական հարաբերությունների ասպարեզում շահի քաղաքական կողմնորոշումների մեջ⁹:

Իսնդրո առարկա փոխհարաբերություններում բավական անամպ ընթացք ունեցավ Մինաս Ակնեցու (1751-1753) կաթողիկոսական ընտրությունը: 1749 թ. գարնանը Հ. Նալյանին որպես պատրիարք հաջորդած այս եկեղեցականը՝ հանդարտաբարո և բավական տարբեր Հ. Կոլոտի և Հ. Նալյանի անհատականություններից, կաթողիկոս ընտրվեց Էջմիածնի միաբանության և Կ. Պոլսի հոգևոր ու աշխարհիկ երևելիների միաբանության պայմաններում: Հաջորդ կաթողիկոսը՝ Աղեքսանդր Բյուզանդացին (1753-1755), թվում է, շատ ավելի հավասարակշռություն էր մտցնում Էջմիածնի միաբանության և պատրիարքության միջև՝ կաթողիկոսական ընտրությունների տրամաբանության տեսակետից: Նրա ընտրության գործընթացում ուշագրավն այն է, որ առաջադրված բոլոր երեք թեկնածություններն էլ (Հ. Նալյան, Սահակ Ահագին, Աղեքսանդր Բյուզանդացի) քննարկվել էին Կ. Պոլսի «մեծամեծներուն եւ ժողովներուն առջև»¹⁰: Գրեթե նույն սցենարն ենք տեսնում հաջորդ ընտրություններին (1756)՝ Հ. Նալյան, Սահակ Ահագին, որից հետո, միաբանության տարակարծությունների պատճառով, կաթողիկոս ընտրված Սահակը այդպես էլ «ոչ կամեցաւ գնալ յԷջմիածին»¹¹: Հազիվ թե նրա այս յուրօրինակ հրաժարականը բացատրվի իր՝ Սահակի քմահաճությամբ: Հավանաբար այստեղ նշանակություն ունեցան և՛ Պարսկաստանի խառնակ քաղաքական վիճակը, և՛ միաբանության թաքնված առարկությունները նրա դեմ: Միաբանությանն ուղղված Սահակ Ահագնի մի նամակում ակնհայտորեն երևում է կաթողիկոսությունն ստանձնելու վճիռ չկայացրած և կասկածների մեջ տարուբեր-

⁸ Չամչյանց 1984, 839:

⁹ Պատահական չէր, որ, բախվելով Էջմիածնի միաբանության հետ, Ղազար Զահկեցին թշնամաբար ընդունելով Կ. Պոլսից ուղարկված այդ վարդապետներին՝ տեղեկացնում էր Թավրիզի իշխանավորին, թե Կ. Պոլսից եկած երկու վարդապետները «կամին առնուլ յինէն զկաթողիկոսութիւն իմ. և են ինքեանք լրտեսք» (Չամչյանց 1984, 839-840, Օրմանեան 2011, 3425):

¹⁰ Օրմանեան 2011, 3449:

¹¹ Չամչյանց 1984, 840:

վող եկեղեցականը¹²: Սահակի եռամյա տարօրինակ համառությունը ավարտվեց մեզ արդեն ծանոթ գործողությունների շարահարությամբ. Կ. Պոլսի երևելիներն իրենց հերթական ժողովում կաթողիկոս ընտրեցին Հակոբ Շամախեցուն (1759-1763):

Էջմիածնի ինքնուրույնության վերականգնման ընթացքը

Հաջորդ՝ Սիմեոն Երևանցու (1763-1780) կաթողիկոսական ընտրությամբ կտրուկ փոփոխություններ են կատարվում միաբանության և պատրիարքության փոխհարաբերություններում, մասնավորապես Էջմիածնի ինքնուրույնության շեշտակի բարձրացման իմաստով: Կարապետ Ուլենցու ժամանակներից սկսած՝ այս հարցում պատրիարքության վճռական և գրեթե վերջնական կամքը տեղի տվեց այս կաթողիկոսի ընտրության ժամանակ և, ինչպես քիչ անց կտեսնենք, վերջինիս աթոռակալության ամբողջ շրջանում: Ընտրությունը կատարվեց Էջմիածնում, անսպասելի՝ գոնե պատրիարք Հ. Նալյանի և Կ. Պոլսի մեծամեծների համար (թեկնածու հոգևորականների մեջ Սիմեոն Երևանցու անունը չկար): Միաբանության և Սիմեոնի գործողություններում հստակ երևում է, որ այս ընտրությունը խնամքով և զգուշորեն էր նախապատրաստվել, ընդամին այն ակնկալությամբ, որ այդ ամենը հեռու մնա Կ. Պոլսի ազգայինների ոչ միայն աչքից, այլև մտքից: «Այն ընտրութիւն նորա եղև առանց հաւանութեան մեծամեծացն Կոստանդնուպոլսոյ», - գրում է Մ. Չամչյանը¹³: Նույնն է ընդգծում նաև Մ. Օրմանյանը¹⁴: Այդ նշանակում էր Էջմիածնի կաթողիկոսության դիրքի և նշանակության ակնհայտ բարձրացում՝ հայ եկեղեցու համակարգում և Կ. Պոլսի պատրիարքությունից նրա կախյալ վիճակի դուրսբերում: Իրողությունն արտացոլում էր հայ հանրությունների (և՛ բնաշխարհի, և՛ գաղթօջախների) աշխարհիկ և կրոնական վերնախավերում այն մտայնության գերակշռումը, որ Կ. Պոլսի պատրիարքությունը Էջմիածնի կաթողիկոսության վրա իր ունեցած վարչական ազդեցությունից այն կողմ չէր կարող անցնել: Այդ ազդեցությունը չէր կարող տարածվել ո՛չ կաթողիկոսության վերաբերյալ ավանդական պատկերացումների, ո՛չ նրա արտատարածական կարգավիճակի և ո՛չ էլ նրա համազգային կառույցների բովանդակության վրա: Հարկավոր էր վերականգնել Էջմիածնի իրական տեղն ու

¹² Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 12:

¹³ Չամչյանց 1984, 871:

¹⁴ Օրմանեան 2011, 3491:

առաջնային արժեքը, որ վերաձվում էր ազգային ինքնության պահպանության խնդրի, և որի կարևորությունը գիտակցում էին ամբողջ Հայաստանյայց եկեղեցին, Կ. Պոլսի լուսամիտ գործիչները՝ ի դեպ, անկախ Էջմիածնի հետ պատրիարքության մրցակցային գերադաս դիրքից, և բուն իսկ Էջմիածնի միաբանությունը, որի կողմնորոշումները տվյալ պահին արտահայտում էին Սիմեոն Երևանցին և նրա համախոհները: Վերջինս ժամանակի այն խոշոր եկեղեցական գործիչներից էր, որ ըմբռնել էր Էջմիածնի սասանված հեղինակությունը վերականգնելու ամբողջ անհրաժեշտությունը: Եվ այս առումով հասկանալի են դառնում նրա հաճախ ոչ պատշաճ, ծայրահեղ հարձակումները Կ. Պոլսի պատրիարքությունը անձնավորող այնպիսի խոշոր անհատականությունների վրա, որպիսիք էին Հ. Կոլոտը և Հ. Նալյանը. ավելին, հարձակումներն առհասարակ պատրիարքության՝ որպես կրոնական կառույցի վրա՝ թիրախ դարձնելով նրա ամենախոցելի տեղը ազգային եկեղեցու նվիրապետության մեջ գերակա դիրք գրավելու հավակնություններում՝ փորձելով ցուցադրել նրա ոչ ավանդական, ասել կուզի՝ արհեստական բովանդակությունը: Կ. Պոլսի պատրիարքները, գրում է Սիմեոն կաթողիկոսը, օսմանյան իշխանությունների աջակցությամբ խլում են կաթողիկոսության իրավունքները. «Եւ մինչ այսու նենգաւորութեամբ առին Պոլսոյ պատրիարգունքն զպախուրցն կաթողիկոսացն ի ձեռս իրեանց, այնուհետեւ սկսան խաղացուցանել զնոսա որպէս եւ կամեցան»¹⁵:

Արդյո՞ք պատրիարքության նկատմամբ Սիմեոն Երևանցու ընդոստ վերաբերմունքը բացատրվում է նրա անձնական որակներով կամ սեփական ձգտումներով, ինչը տեսնում ենք Մ. Օրմանյանի և, նրա հետևությանմբ, Բ. Կյուլեսերյանի մեկնաբանություններում: Երևանցին, գրում է Մ. Օրմանյանը, «կուզէ Մայրաթոռի գերիշխանութեան և գերագահութեան նախանձախնդիր երեւալ եւ Կոլոտը իբր անոր դաւաճանած ցուցնել, Կ. Պոլսոյ աթոռին վրայ դարձնելով գերիշխանութեան ձեւը և կառավարութեան հետ ուղղակի յարաբերութեան մէջ գտնուելու արտօնութիւնը»¹⁶: Ընդ որում, Մ. Օրմանյանը նաև նկատում է Սիմեոն Երևանցու դժգոհության պատճառը՝ այն, որ նա «նախանձայոյզ զգացումէ մղուած ըլլայ Մայրաթոռոյ բարձրութիւնն ու իրաւասութիւնը պաշտպանելու», հավելելով, որ «Կոլոտ ոչ մի կերպով Մայրաթոռի իրաւունքներուն վնասել ուզած չէր»¹⁷:

¹⁵ Սիմեոն կաթողիկոս 1873, 236:

¹⁶ Օրմանեան 2011, 3292:

¹⁷ Օրմանեան 2011, 3294-3295:

Իրոք, անձերն այստեղ մեղավոր չեն, և հատկապես Հ. Կոլոտի անբասիր անձը: Բայց ոչ մի չափով չի մեղանչում նաև Սիմեոն կաթողիկոսը, երբ պաշտպանում է Էջմիածնի կաթողիկոսությունը հենց Կ. Պոլսի պատրիարքական իրավասություններից, որոնց ուժով, Կարապետ Ուլնեցուց սկսած, նոր իրավունքներով էր օժտվում Կ. Պոլսի պատրիարքությունը՝ կաթողիկոսության հետ իր փոխհարաբերություններում: Այժմ Էջմիածնի կաթողիկոսը կախման մեջ էր ընկնում պատրիարքից. առանց վերջինիս պարտադիր միջնորդության օսմանյան պետությունը ճանաչման (կամ հաստատման) ֆերման չէր տալիս կաթողիկոսներին, որով պատրիարքությունը բացառիկ առանձնաշնորհում էր ստանում հայ եկեղեցու նվիրապետության մեջ՝ այս պահով վեր կանգնելով նույնիսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից:

Միանգամայն հասկանալի բացատրություն տալով վերոհիշյալի իրավաքաղաքական հիմքին՝ հպատակ ազգի իրավունքների նկատմամբ օսմանյան պետության վարած քաղաքականությանը, Մ. Օրմանյանը Սիմեոնի կաթողիկոսին մեղադրում է այն բանում, որ նա «ամենեւին անտեղեակ կը գտնուի որպիսութիւն պատուոյն եւ իշխանութեան»¹⁸: Բայց այստեղ Մ. Օրմանյանը առկախ է թողնում մի քանի կարևոր հարցեր. մի՞թե Էջմիածինը կամ կաթողիկոսը միայն տաճկահայության հոգևոր գլուխն էր, այլ ոչ թե ամբողջ հայության, որ ներկայացնում էին Օսմանյան Թուրքիայից դուրս գտնվող մնացած բնաշխարհի և գաղթօջախների հայերը: Այլ կերպ ասած, մի՞թե Էջմիածինը չուներ թեմեր, որոնք չէին մտնում Օսմանյան Թուրքիայի կազմի մեջ, որպեսզի սուլթանները կլանեին հայ եկեղեցու արտատարածական կարգավիճակը, չէ որ այստեղ գործ ունենք այդ կարգավիճակը բռնի սահմանափակող օսմանյան էքսպանսիվ քաղաքականության հետ: Եվ այնուհետև, իբրև դրա հետևանք, Կ. Պոլսի պատրիարքի միջամտության (միջնորդության) ինստիտուտ մտցնելով, օսմանյան պետությունը Ամենայն հայոց կաթողիկոսի կարգավիճակը հավասարեցնում էր տաճկահպատակ հայերի կրոնական առաջնորդների կարգավիճակին, որոնք այդ պետության կողմից նույնպես ճանաչում չէին ստանում առանց Կ. Պոլսի պատրիարքի միջնորդագրի¹⁹: Սիմեոն Երևանցու

¹⁸ Օրմանեան 2011, 3293:

¹⁹ Օսմանյան այս ուղեգծի՝ քաղաքականապես շատ ավելի ընդգծված դրսևորումն ենք տեսնում հետագայում. Էջմիածնի կաթողիկոսության իրավունքներին երկրորդ շոշափելի հարվածը Թուրքիայում հասցվեց 1824-1825 թթ., երբ վերացվեցին նրա տա-

առարկություններն այս դեպքում ստանում էին Էջմիածնի իրավասությունները պաշտպանելու և ոչ թե անձնական շահագրգռվածության իմաստ՝ ի հակադրություն իրերի դրության պրագմատիկ, հետևաբար այդ դրությունը հիմնավորող Մ. Օրմանյանի հայեցակետի: Ասենք, որ կաթողիկոսի մտադրություններն ի հայտ եկան Հ. Նալյանի միջնորդագրով սուլթանի ֆերմանն ստանալուց հետո: Ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, Սիմեոն Երևանցին ցանկացավ պատրիարքությունը վերածել «պարզ առաջնորդության», այսինքն, Կ. Պոլսում նվիրակից զատ ունենալ կաթողիկոսական փոխանորդ՝²⁰ ի դեմս Զմյուռնիայում իր առաջնորդական պաշտոնը լրացրած Աբրահամ Աստապատցու: Հ. Նալյանին փոխարինած Գրիգոր Պասմաճյանի հրավիրած ժողովում ամիրաներն ու բնիկ պոլսեցիները մերժեցին այդ հանդուգն գաղափարը՝ առարկելով, որ այդ դեպքում Կ. Պոլսում երկու հոգևոր գլուխներ կլինեն, և որ արդեն ինքը՝ պատրիարքը, բավական է Մայր Աթոռը ներկայացնելու համար: Գործն ավարտվեց, կարծում եմ, ոչ առանց Բ. դռան թելադրանքի. Աստապատցին արտաքսվեց Կ. Պոլսից, որ Սիմեոն Երևանցու մտահոլացման ծախսովումն էր նշանակում²¹:

Մ. Օրմանյանը, ի դեպ, լռելայն շրջանցում է Սիմեոն Երևանցու փաստական մեղադրանքն ընդդեմ Էջմիածնական որոշ թեմեր յուրացնելու՝ պատրիարքների փորձերի: «Զի վասն Զմյուռնիոյ քաղաքին՝ որ է տէրունի թեմ սրբոյ աթոռոյս գնայ և առաջնորդ ևս կոչի, որ է այսպէս մինչև ցայսօր, Պոլսոյ պատրիարգունքն մախային միշտ և մոռային անդադար, զի կողմն իւրեանց արկցեն, որպէսզի և զնորին Առաջնորդն ինքեանք առաքեսցեն (որպէս և արարին այլոց քաղաքացն, որպէս ասացաւ լիովին ի Ը գլուխն...», գրում է «Ջամբոի» հեղինակը՝ մատնացույց անելով պատրիարք Հ. Նալյանին²²:

Կ. Պոլսի պատրիարքության համաձայնությունն ապահովելու խնդիրը դարձյալ ծառացավ Էջմիածնի միաբանության առջև՝ Սիմոն Երևանցու

րածքներում գտնվող Էջմիածնապատկան տերունի թեմերը՝ հանձնվելով Կ. Պոլսի պատրիարքության իրավասությանը (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, թղթ. 163-բ, վավ. 786, Խառատյան 2016, 30):

²⁰ Օրմանյան 2011, 3517:

²¹ Օրմանյան 2011, 3518-3519: Կարելի է կարծել, որ պատրիարք Պասմաճյանը ստիպված է եղել հնազանդվելու Աստապատցու վերաբերյալ այդ որոշմանը, որի համար, ինչպես ինքն է գրում, «Եղաք ատելի ազգին, կաթողիկոսին և Աթոռոյն» (Յիշատակարան Գրիգոր պատրիարքի 1908, 19):

²² Սիմեոն կաթողիկոս Երևանցի 1873, 237:

մահվանից հետո, Ղուկաս Կարնեցու կաթողիկոսական ընտրության օրերին, որը, ըստ Օրմանյանի ձևակերպման, «սովորութամբ պահանջ դարձած էր»²³: Այս անգամ ևս համընկան պատրիարք Զաքարիա Կաղզվանցու և Կ. Պոլսի երևելիների չբավարարված հավակնությունները՝ առաջինի պատվախնդրական կիրքը՝ այդ ընտրության ժամանակ իր անձը շրջանցելու, մյուսները՝ ընտրության մասին իրենց տեղյակ չպահելու պատճառով: Պատրիարքության և Էջմիածնի միաբանության հակադրությունն այս անգամ հասավ աննախադեպ լարվածության. մեծամեծների ժողովը որոշեց կաթողիկոսի անունը չհիշատակել (իմա՝ ընտրությունը չճանաչել) և չդիմել Բ. դուռ՝ հաստատման հրովարտակ ստանալու համար: Ժողովը Էջմիածնի միաբանությանն առաջարկում էր ընդունել վերջնագիր հիշեցնող նախապայմաններ, որոնց մեջ կաթողիկոսն իրենից պետք է հեռացնի փոքրավորներին, առանց Կ. Պոլսի ազգայինների կաթողիկոս չընտրվի, կաթողիկոսի կողքին լինեն նախապես նշանակված խորհրդականներ, Մայր աթոռի հաշիվները վերահսկեն Կ. պոլսեցիները, Էջմիածնի նվիրակները պետք է գործեն պատրիարքի ուղղորդմամբ²⁴:

Նկատենք, որ Զաքարիայի խոցված ինքնասիրությունն ընդամենը հետին նշանակություն կարող էր ունենալ Կ. Պոլիս-Էջմիածին հակադրության գալարներում, թեև համընթաց կարող էր գնալ այդ հակադրությանը: Խնդիրը վերաբերում էր ոչ թե պատրիարքին, այլ պատրիարքությանը, որի՝ Էջմիածնին ուղղորդելու սովորույթն էր հանդգնել վերացնելու Էջմիածնի միաբանությունը՝ սկսած Սիմեոն Երևանցու ժամանակներից: Հարկավ, Ղուկաս Կարնեցու ընտրությունը կատարվել էր Սիմեոն կաթողիկոսի նախանշած ուղիով և հրահանգներով, որոնց հետևել էին միաբանությունը և ինքը՝ Ղուկաս Կարնեցին՝ ընտրության մասին տեղյակ պահելով այդ իրողությունից հետո:

Միջադեպն իր սրությունը կորցրեց Ղուկաս կաթողիկոսի խելամիտ և խաղաղարար վարքագծից հետո, երբ հարգանքի տուրք տրվեց պատրիարքության հեղինակությանը, ինչպես և, փոքր-ինչ շրջահայաց հապաղումով, միաբանության իրավունքների պաշտպանությանը: Ասենք, Կ. Պոլսում ևս պատրաստակամություն հայտնվեց՝ սահմանափակելու ծայրահեղությունները. Էջմիածնի հանդեպ անդդվելի Զաքարիայի պաշտոնանկու-

²³ Սիմեոն կաթողիկոս Երևանցի 1873, 3629:

²⁴ Դիան Հայոց պատմության 1899, 194-195:

թյունից հետո (1781) Կ. Պոլսի մեծամեծ հայերը գրություն ուղարկեցին կաթողիկոսին՝ խնդակցություն հայտնելով նրա ընտրության առթիվ: Ուշագրավ է, որ նրանք սահմանափակվել էին այն անհրաժեշտության հիշեցումով, որ առանց Կ. Պոլսի հայության իմացության՝ օսմանյան տերությունը որևէ կաթողիկոսի «պէրաթ և զՖէրման ոչ տայցէ», և որ, ինչպես պատրիարքը, կաթողիկոսը ևս «նստի հրամանաւ արքայի»²⁵: Մի քանի տարի անց Էջմիածնի կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության մարած ներհակության արձագանքն ենք գտնում միաբանության կողմից 1787 թ. Կ. Պոլսի երևելիներին ուղղած մի գրության մեջ, որտեղ հայտնվում է, որ կաթողիկոսը կատարել է իր խոստումը և կազմել Կ. Պոլսից խնդրված Կանոնադրությունը: Գրությունն ստորագրել էին քսանչորս միաբաններ՝ եպիսկոպոսներ և վարդապետներ²⁶:

Ղուկաս Կարնեցու մահվանից հետո վերստին առաջնային դարձավ կաթողիկոսական ընտրության խնդիրը, որի հանգուցալուծման գործին, այս անգամ չթաքցնելով իրենց քաղաքական վերաբերմունքը և դրանով իսկ առավել խճողելով այն, ընդգրկվեցին շահագրգիռ տերությունները: Նկատի ունենք Դավիթ-Դանիելյան ներհակությունը, որի քննությունը դուրս է մնում այս հոդվածի շրջանակից:

Եզրակացություններ

Գրեթե ամբողջ XVIII դ. Կ. Պոլսի հայոց պատրիարքության ամրապնդման, ազգային եկեղեցու համակարգում նրա գրաված տեղի և կարևորության հարցը բազմաթիվ առնչություններ ուներ Էջմիածնի կաթողիկոսության հետ: Կ. Պոլսի պատրիարքության դերն ու նշանակությունը շեշտակիորեն բարձրացան Հովհաննես Կոլոտի և այնուհետև Հակոբ Նալյանի՝ պատրիարքական աթոռը զբաղեցնելու ժամանակաշրջանում (1715-1770-ականի սկիզբ), որին նպաստեցին, այդ ազգանվեր գործիչների հույժ արդյունավետ գործունեությանը զուգընթաց, մի շարք ներքին և արտաքին գործոններ՝ Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի քաղաքական կացությունն ու վերաբերմունքը հայ հանրությունների նկատմամբ, վերջիններիս վերնախավերի դիրքորոշումները ազգային եկեղեցու ավանդական արժեքների և դրանց պահպանության հարցում և այլն: Մինչդեռ քաղա-

²⁵ Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 71:

²⁶ Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 57:

քական անբարենպաստ պայմաններում գտնվող Էջմիածնի կաթողիկոսությունը, որպես համազգային գերակա կառույց, դժվարությամբ էր դիմակայում զորացած պատրիարքության մրցակցությանն ու հավակնություններին՝ Առաքելական եկեղեցու նվիրապետության շրջանակներում: Ավելին, Էջմիածնի մի քանի կաթողիկոսների ընտրությունը Կ. Պոլսի Մայր եկեղեցում (սկսած 1726 թ. Կարապետ Ուլնեցու ընտրությունից) և ապա կաթողիկոսների ընտրության գործին պատրիարքության վերահսկողության հաստատումը, այդ թվում և կաթողիկոսության ֆինանսական գործողությունների ոլորտում, և որպես ծայրահեղության դրսևորումներ՝ Էջմիածնական որոշ թեմերի հոգուտ պատրիարքության կլանելու փորձերը, վկայում էին, որ նշված մրցակցության մեջ ծանրության կենտրոնը տեղափոխվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքություն: Գեթ ձևականորեն, մինչև Սիմեոն Երևանցու կաթողիկոսական ընտրությունը, պատրիարքությունը պահպանում էր իր ակնհայտ ազդեցությունը Էջմիածնի կաթողիկոսության վրա: Իրադրությունը փոխվեց Սիմեոն Երևանցու՝ այդ խոշոր անհատականության տեր կաթողիկոսի ժամանակ (1763-1780): Նա արտահայտում էր հայ հանրությունների վերնախավերում (եկեղեցական և աշխարհիկ, այդ թվում և Կ. Պոլսի պատրիարքության) առկա այն մտայնությունը, որ հանուն ազգի գոյության պետք է պահպանել Էջմիածնի՝ որպես կրոնական համազգային կառույցի առաջնահերթ նշանակությունը: Սիմեոն Երևանցին և նրա համախոհներն ըմբռնել էին Էջմիածնի սասանված հեղինակությունը վերականգնելու անհրաժեշտությունը: Այս ուղեգիծը շարունակվեց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու խելամիտ գործունեության օրոք, հատկապես Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա Կաղզվանցու պատրիարքության շրջանում, որի շնորհիվ հավասարակշիռ փոխհարաբերություններ ստեղծվեցին Էջմիածնի կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության միջև: Ղուկաս Կարնեցի և Հովսեփ Արղության կաթողիկոսներին հաջորդած՝ Դավիթ-Դանիելյան պառակտումները (1800-1807) արդեն կապ չունեին Էջմիածնի կաթողիկոսություն - Կ. Պոլսի պատրիարքություն մրցակցական մարած իրողությունների հետ:

Գրականություն

Աբրահամ Կրետացույ պատմագրութիւն 1870, Վաղարշապատ, տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 129 էջ:

- Դիան Հայոց պատմութեան 1899, Ղուկաս կաթողիկոս, Գիրք Դ, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձեի, 804 էջ:
- Խառատյան Ա. 2016, Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդները, Պատմաբանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 14-31:
- Կիվլեսերեան Բ. 1904, Կոլոտ Յովհաննէս պատրիարք, Վիեննա, Մխիթարյան տպարան, 232 էջ:
- Մաշտոցյան Մատենադարան, կաթողիկոսական, թղթ. 243, վավ. 71, թղթ. 2, վավ. 12, Դիան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163-բ, վավ. 786:
- Մուրատեանց Մ. 1872, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ, Յերուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 588 էջ:
- Յիշատակարան Գրիգոր պատրիարքի 1908, Պարիս, հրատ. նշված չէ, 149 էջ:
- Յովհաննէս Հաննա 1782, Գիրք պատմութեան, Կ. Պոլիս, Յովհաննէս եւ Պօղոս հրատ., 355 էջ:
- Չամչյանց Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 896+195 էջ:
- Սիմէոն կաթողիկոս 1873, Զամբո Գիրք որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, տպարան Էջմիածնի, 304 էջ:
- Օրմանեան Մ. 2011, Ազգապատում, հ. Բ, հրատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3894 էջ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVІІІ ԴԱՐՈՒՄ

Ալբերտ Խառատյան

Ամփոփում

XVІІІ դ. հայոց պատմության մեջ հիմնահարցի նշանակություն ունի Էջմիածնի կաթողիկոսության հետ Կ. Պոլսի հայոց պատրիարքության փոխհարաբերությունների վերհանումը: Հայաստանյայց եկեղեցու նվիրապետության մեջ պատրիարքության հեղինակությունն ու ազդեցությունը կտրուկ բարձրացան պատրիարքներ Հովհաննես Կոլոտի և այնուհետև Հակոբ Նալյանի դարաշրջաններում (1715-1770-ական թթ. սկիզբ), երբ փոփոխվում էին ներքին ու արտաքին քաղաքական իրադրությունները Օսմանյան Թուրքիայում և Պարսկաստանում, որոնց տիրապետության ներքո էին ազգային եկեղեցու այս գլխավոր կառույցները: Քաղաքական անբարենպաստ պայմաններում գտնվող Էջմիածնի կաթողիկոսությունը տեղի էր տալիս ավելի նպաստավոր միջավայրում գործող պատրիարքությանը՝ վերջինիս հետ մրցակցության

ընթացքում: Կարապետ Ուլենցու ընտրությունից հետո (1726) մինչև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը պատրիարքությունը կարողացավ վերահսկողություն հաստատել Էջմիածնի նկատմամբ (Օսմանյան Թուրքիայում կաթողիկոսների հաստատման նոր կարգ՝ պատրիարքության անպայման միջնորդությամբ, կաթողիկոսության ֆինանսավարչական գործունեության հսկողություն և այլն):

Իրադրությունը փոխվեց Սիմեոն Երևանցի և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսների ժամանակ (XVIII դ. երկրորդ կես), երբ բնաշխարհի և գաղթափառների հայության մեջ հաղթահարվեց Էջմիածնի՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսության ավանդության տեղն ու նշանակությունը վերականգնելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր՝ Կարապետ Ուլենցի, Հովհաննես Կոլոտ, Հակոբ Նալյան, Սիմեոն Երևանցի, Ղուկաս Կարնեցի, Էջմիածնապատկան թեմեր Թուրքիայում, Ամենայն Հայոց Կաթողիկոսություն:

ОТНОШЕНИЯ МЕЖДУ АРМЯНСКИМ ПАТРИАРХАТОМ КОНСТАНТИНОПОЛЯ И ЭЧМИАДЗИНСКИМ КАТОЛИКОСАТОМ В XVIII ВЕКЕ

Альберт Харатян

Резюме

В истории армянского народа отношения между Армянским патриархатом Константинополя и Эчмиадзинским католикосатом в XVIII в. обрели значимость проблемы. Среди армянского духовенства авторитет и влияние патриархата резко возросли при патриархе Ованесе Колоте, а затем при Акопе Наляне (начало 1715-1770-х гг.), когда изменилась внутри – и внешнеполитическая ситуация в османской Турции и Персии, под господством которой находились эти главные структуры национальной церкви. На фоне неблагоприятных политических условий Эчмиадзинский католикосат отдавал предпочтение действовавшему в более благоприятных условиях патриархату, хотя и конкурировал с последним. После избрания Карапета Улнеци (1726) и до католикоса Симеона Ереванци патриархату удавалось держать под своим контролем Эчмиадзин (новый порядок утверждения католикосов в османской Турции, предусматривающий посредничество патриархата, контроль над финансово-админи-

стративной деятельностью католикосата и т.д.). Ситуация изменилась при католикосах Симеоне Ереванци и Гукасе Карнеци (вторая половина XVIII века), когда армянство родины и колоний сумело преодолеть необходимость восстановления традиционного места и значения Эчмиадзина как Католикосата Всех Армян.

Ключевые слова – Карапет Улнеци, Ованес Колот, Акоп Налян, Симеон Ереванци, Гукас Карнеци, епархии в Турции, являющиеся собственностью Эчмиадзина, Католикосат Всех Армян.

RELATIONSHIPS BETWEEN THE CONSTANTINOPLE PATRIARCHATE AND ETCHMIADZIN CATHOLICOSATE IN THE 18TH CENTURY

Albert Kharatyan

Abstract

In Armenian history of the 18th century the elucidation of relationships between Constantinople Patriarchate and Etchmiadzin Catholicosate is of pivotal significance. When the Constantinople patriarchate was headed by Hovhannes Kolot and Hakob Nalian (from 1715 up to the beginning of the 1770s) its standing and influence increased among the priesthood of the Mother See of Etchmiadzin. The two essential institutions were under the jurisdiction of Ottoman Turkey and Persia and it was in this period that the internal and external policies were changing constantly in these countries. The Etchmiadzin Catholicosate, being under adverse political circumstances ceded its influence to the rivaling Constantinople Patriarchate that was in more favorable conditions. Since Karapet Ulentsi's election (1726) up to the rule of the Catholicos Simeon Yerevantsi the Constantinople Patriarchate managed to take control over Etchmiadzin (new regulations for appointing Catholicosses which entailed immediate mediation of the Constantinople Patriarchate, supervising the financial, administrative activities of the Catholicosate, etc.) The situation drastically changed when Simeon Yerevantsi and Ghukas Karnetsi became the head of the Etchmiadzin Catholicosate (the second half of the 18th century). It was then that the Armenians of Diaspora realized that it was necessary to recover the traditional standing and influence of Etchmiadzin Catholicosate.

Key words – Karapet Ulnetsi, Hovhannes Kolot, Hakob Nalian, Simeon Yerevanntsi, Ghukas Karnetsi, dioceses of Etchmiadzin in Turkey, All Armenian Catholicosate.

**«ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԳԱՂԱԾ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ (2013-2018 ԹԹ.)**

Քնարիկ Ավագյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24 գ

Էլ. հասցե՝ lira777@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 20.07.2020, գրախոսվել է 01.02.2021,

ընդունվել է տպագրության 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-34

Ներածություն

2011 թ. մարտից, Սիրիայում իսլամիստ ահաբեկիչների ծավալած ռազմական գործողությունների սաստկացմանը զուգընթաց, շուրջ 22.000 սիրիահայ է ժամանել Հայաստան¹: Նրանք, ի շարս բազմաթիվ արժանիքների, բերել են նաև «ձեռնարկատիրական ոգի, նորարարական մտածելակերպ և նոր կյանք սկսելու անկոտրում կամք»² դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծելով ինչպես իրենց կենսամակարդակի բարելավման, նույնպես և Հայաստանի տնտեսության զարգացման համար:

Հայաստանում սիրիահայ մեր հայրենակիցների թվի ստվարացումով պետական կառույցների կողքին միջազգային և սփյուռքյան կազմակերպությունները ևս ձեռնամուխ են եղել նորեկների ներուժը Հայաստանի տնտեսության զարգացմանն ի նպաստ օգտագործելու խնդրի իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությունը սիրիահայ գործարարներին և առաջին միավորման ստեղծումը

Արդեն 2012 թ. նոյեմբերից ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գործող ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնն հիմնադրամը (ՀՀ ՓՄՁ ԶԱԿ) նախաձեռնել է «Աջակցություն

¹ Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանը 2017, 27 հունվարի, <http://nyut.am/?p=133813&l=am>: Տե՛ս նաև՝ Lieberman 2017, July 25, <https://www.devex.com/news/lessons-learned-as-syrian-armenian-refugees-return-to-armenia-90551>, ՍիրԱրԲի-ի մասին, <http://syarbi.am/hy/about-syarbi>

² ՍիրԱրԲի-ի մասին, <http://syarbi.am/hy/about-syarbi/>

սիրիահայերին» ծրագիրը, որի շրջանակում պարբերաբար կազմակերպվել են դասընթացներ սեփական գործ հիմնել ցանկացող սիրիահայերի համար, ներկայացվել են Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները, գործող հարկային, մաքսային օրենսդրությունները: Կազմակերպվել են B2B³ հանդիպումներ Հայաստանի տարբեր ոլորտներում գործող գործարարների հետ, տեղեկատվական բնույթի հանդիպումներ արտադրություններում, ազատ տնտեսական գոտիներում և այլուր, տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս առաջացող խնդիրների վերաբերյալ և այլն⁴:

Ստեղծվել է սիրիահայերի տվյալների պարբերաբար համալրվող հիմնապաշար (բազա), բացահայտվել են նրանց կարիքները, հստակեցվել հետագա անելիքները: Սեփական գործ հիմնել ցանկացող սիրիահայերի համար իրականացվել է սկսնակ գործարարների աջակցության ծրագիր, որտեղ ծանոթացրել են Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու պայմաններին: Մասնակիցները ձեռք են բերել բիզնեսի պլանավորման համապատասխան գիտելիք, արտոնյալ վարկ ստանալու նպատակով կազմակերպության մասնագետների օգնությամբ բիզնես-պլան կազմելու հմտություններ: Ծրագիրը շարունակական բնույթ է կրել:

Ծրագրին մասնակցած և լավագույն գնահատականի արժանացած կենսունակ գործարար առաջարկները հնարավորություն են ունեցել վարկ ստանալու հետևյալ պայմաններով՝ առավելագույնը 5 մլն դրամի չափով, տարեկան 4% տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման ժամկետով, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությամբ՝ առանց գրավի⁵:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը գործարարությունը զարգացնելու նպատակով, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) հովանավորությամբ 2013 թ. մարտից նախաձեռնել է նաև «Սիրիահայերի համար սկսնակ գործարարության դասընթացներ

³ B2B (Business to Business – անգլ.), միջազգային եզրույթ, որը սահմանում է փոխազդող սուբյեկտների տեսակների դասակարգված տեղեկատվական և տնտեսական փոխազդեցության ձևերը:

⁴ Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ Սիրիայից և հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար 2017, 113:

⁵ Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ 2017, 114:

րի» անվճար ծրագիր, որի նպատակն էր օգնել սիրիահայերին իրականացնելու իրենց գործարար նախաձեռնությունները: Արդեն 2013-2014 թթ. ծրագրին մասնակցել է 149 սիրիահայ, իսկ առավել հաջող բիզնես ծրագրեր ներկայացրած մասնակիցներին տրամադրվել են արտոնյալ վարկեր⁶:

ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պատասխանատուների և մի խումբ սիրիահայ գործարարների նախաձեռնությամբ 2013 թ. մայիսին հիմնվել է «Սիրիահայ գործարարների միություն» (ՍԳՄ) անվանումով խորհուրդը, որի հիմնական նպատակն էր «սիրիահայ գործարարների շահերի պաշտպանությունը, նրանց տնտեսական ինտեգրման բարելավումը, ինչպես նաև նրանց կարիքների բավարարումն ու աջակցության ծրագրերի իրականացումը»՝ խորհրդատվությամբ և իրավաբանական ծառայություններով⁷:

Հասարակական հիմունքներով աշխատող այդ կառույցը կազմակերպել է քննարկումներ. այդ ընթացքում վեր են հանվել հիմնական խնդիրներն ու խոչընդոտները, և ուրվագծվել են դրանց լուծման ուղիները: Միության անդամները նույնիսկ իրենց անձնական միջոցներն են ներդրել գործի հաջողության համար, կազմակերպել են հանդիպումներ տեղացի գործարարների հետ, ապահովել օրենսդրության հետ կապված խորհրդատվություն, հարթել ինչ-ինչ կառույցների հետ ծագած խնդիրները և այլն: Նրանք մեկ հիմնական նպատակ են ունեցել. «Անել ամեն ինչ, որ ակտիվ, գործունյա սիրիահայերը մնան Հայաստանում»⁸:

«Սիրիահայերի միություն» ՀԿ-ի գործունեությունը

Շուտով՝ 2016 թ. հունվարին, «Սիրիահայ գործարարների միության» անդամների նախաձեռնությամբ որոշվել է կազմակերպությունը վերանվանել «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպություն (ՍՄ ՀԿ), որը պետք է շարունակեր նախանշված աշխատանքն ավելի գործուն և կենտրոնացված⁹: Հիմնադիրների համար սկզբունքային հարց էր,

⁶ Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ 2017, 113: Կայացավ սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը 2015, 6 փետրվարի, <https://armenpress.am/arm/news/793136>

⁷ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մասին, <http://syrarbi.am/hy/about-sau>: Սիրիահայ գործարարներ. ռուսերենի չիմացությունը խանգարում է արտաքին շուկա դուրս գալուն, 2016, 4 մարտի, <http://www.panarmenian.net/arm/news/207470/>

⁸ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

⁹ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մասին, <http://syrarbi.am/hy/about-sau/>

որ նախագահը սիրիահայ լինելը: Ուստի և նախագահ է ընտրվել Ներսես Գևոն: ՀԿ-ի հիմնական նպատակն է Հայաստանում սիրիահայերի տնտեսական ինտեգրումը և հայրենադարձության խթանումը¹⁰: ՀԿ-ն կոչված է լուծելու «գործարար սիրիահայերի խնդիրները», իրավական խորհուրդներով օգնել նրանց՝ զարգացնելու իրենց ձեռնարկատիրական գործունեությունը, համագործակցության կարողությունները՝ առավելագույնս նպաստելով հայրենիքում սիրիահայերի ինտեգրմանը և արտագաղթի կանխմանը¹¹: «Սիրիահայերի միություն» ՀԿ-ն, ծրագիր ունենալով «նպաստել սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեությանը, համագործակցությանն ու կարողությունների զարգացմանը Հայաստանում», գործակցել է ՀՀ պետական, միջազգային և սփյուռքյան մի շարք գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ, որոնք «սերտորեն աշխատում են սիրիահայ տեղահանվածների և հայրենադարձների հետ՝ ապահովելով տարատեսակ աջակցություն և խորհրդատվություն»¹²:

ՀՀ պետական կառույցների հետ ՍՄ ՀԿ-ի արդյունավետ համագործակցության մասին է վկայել ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի տնտեսական զարգացման ծրագրերի պատասխանատու Հ. Մկրտչյանը. «Մեզ սկսեցին վստահել ու համագործակցել, քանի որ մեր բոլոր ծրագրերը բխում են հենց սիրիահայերի կարիքներից»¹³: ՍՄ ՀԿ-ն սկզբում սերտ գործակցել է նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ – GIZ, Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit GmbH), իսկ 2018 թ.՝ ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակի (UNHCR) հետ՝ իրականացնելով սիրիահայերի սոցիալական դրության բարելավմանն ու Հայաստանում նրանց ինտեգրմանը միտված ծրագրեր¹⁴:

¹⁰ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>: Հայաստանում սիրիահայերի կողմից հիմնադրված հասարակական կազմակերպություններ. «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպություն, http://www.mindiaspora.am/am/syriahayer_hk:

¹¹ Կայացել է «Սիրիահայերի Միություն. անցած ու հետագա ուղին» ամփոփիչ միջոցառումը 2018, 16 փետրվարի, <http://syarbi.am/hy/news-hy/կայացել-է-սիրիահայերի-միություն-անց-Սիրիահայ-գործարարներ-Ռուսերենի-շիմացությունը-խանգարում-է-արտաքին-շուկա-դուրս-գալուն-2016,4-մարտի>, <http://www.panarmenian.net/arm/news/207470/>

¹² Գործընկերներ, <http://syarbi.am/hy/partners>

¹³ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

¹⁴ Lieberman 2017, July 25, <https://www.devex.com/news/lessons-learned-as-syrian-armenian-refugees-ret-urn-to-armenia-90551>. Ընդամենը հինգ տարի առաջ էր, երբ ավելի քան 50,000 հայեր իրենց տունն ունեին Հալեպում 2016, 25 մայիսի, <http://syarbi.am/>

Սիրիահայերի հետ տարբեր ժամանակներում աշխատել են հետևյալ հաստատությունները՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ ֆինանսների, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սփյուռքի նախարարությունները, Զբաղվածության պետական գործակալությունը, Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը, ՀՀ արդյունաբերական պալատը, ՀՀ կենտրոնական բանկը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը, Հայկական կարմիր խաչի ընկերությունը, Հայաստանի զարգացման հիմնադրամը, ՕՔսֆԱՄ-ը, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը, Միջազգային համագործակցության գերմանական խնայքանկերի հիմնադրամը, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության Միջազգային համագործակցության ինստիտուտի հայաստանյան գրասենյակը, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը, «Անի և Նարոդ» հիմնադրամի «Արմենիան Ռեզվուդ Փրոջեքթը», Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը, «Վորլդ Վիժըն Հայաստանը» և այլն¹⁵:

Գործել է «Սիրիահայերի միությանը» անդամակցելու երեք կարգ՝ բազային (հիմնական), ստանդարտ (մշտական) և ՎԻՓ (VIP – Very Important Person, Շատ կարևոր անձ – անգլ.)¹⁶:

Բազային անդամն անդամավճար չի վճարել, սակայն օգտվել է նախնական ընդհանուր խորհրդատվությունից (ուղղորդում, կապեր և այլն), լոբբինգից, հանրային շահերի պաշտպանությունից, հասանելի է եղել միության գործունեությանը և այլն¹⁷:

Ստանդարտ անդամի համար որոշակի անդամավճար է սահմանվել, որի դիմաց նրան տրամադրվել են մի շարք արտոնություններ: Անդամը հնարավորություն է ունեցել միության անունից ներկայանալու պաշտոնական և բիզնես միջավայրում, գործածելու միության տարբերանշանը (logo

hy/news-hy/it-has-been-only-five-years-ago-that-more-than-50000-armenians-had-their-homes-in-aleppo

¹⁵ Գործընկերներ, <http://syrarbi.am/hy/partners>: Partners, <http://syrarbi.am/partners/>: Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

¹⁶ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մասին, <http://syrarbi.am/hy/about-sau/>: Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

¹⁷ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

–անգլ.), օգտվելու տարեկան ամրագրված ժամաքանակով անվճար դասընթացների փաթեթից, անվճար թարգմանչական ծառայությունների որոշակի ժամաքանակից, ցածր գներից, անվճար մարկետինգային ծառայությունների փաթեթից, հարկային մաքսային, իրավաբանական միջնորդություն-խորհրդատվությունից, միության արդյունաբերական գոտում արտադրական տարածքների անհամեմատ մատչելի գներից և այլն¹⁸:

Իսկ արդեն ՎԻՊ անդամությունը ենթադրում է լոբբինգ, միջնորդություն, պետական կառույցներում անդամների հանրային շահերի պաշտպանություն, հաճախորդների և հնարավոր գործընկերների ցանցի ապահովում, պետական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում, մասնակցություն բարձրակարգ բիզնես միջոցառումներին, հարկային օրենսդրության և հաշվապահության անվճար դասընթացներ և տարեկան ամրագրված ժամաքանակով խորհրդատվություն և այլն¹⁹:

ՍՄ ՀԿ-ն ապահովել է հետևյալ ծառայությունները՝ բիզնես խորհրդատվություն, հաշվապահական և իրավաբանական խորհրդատվություն, մարկետինգ, B2B կապակցություններ, ցանց ստեղծելու հնարավորություն, բիզնես դասընթացներ, տրամադրել է մատչելի գներով տարածքներ արդյունաբերական գոտում²⁰ և այլն: Սիրիահայերի իսկ գնահատմամբ՝ հայրենիքում ապրելն ու աշխատելը նպատակահարմար են սիրիահայ ինչպես միջին ու ավագ սերնդի, նույնպես և առավել կրտսեր սերնդի ապահով ու անվտանգ հեռանկարի համար, մանավանդ որ զավակներն ավելի արագ են ընտելանում նոր միջավայրին և այլևս «Հայաստանից հեռանալու մասին»²¹ լսել անգամ չեն ուզում:

«Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մաս է կազմել նաև Տիկնանց հանձնախումբը, որը ստեղծվել էր 2016 թ. հունիսին Վանի Նալբանդյան-Եփրեմյանի նախագահությամբ և 7 կանանց համագործակցված ջանքերով, որոնցից յուրաքանչյուրը հմտացել էր տարբեր մասնագիտական ոլորտներում: Նրանցից շատերի համար դժվարությունները նույնն են եղել՝ հումքի ձեռքբերում, շուկայում իրենց արտադրանքի սպառում և այլն: Նոր հայաստանյան միջավայրը ճանաչելու, հասկանալու, գործադրելու և հա-

¹⁸ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

¹⁹ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

²⁰ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մասին, <http://syrarbi.am/hy/about-sau/>

²¹ Վերսկիզբ 2017, 51:

ջողելու համար որոշակի ժամանակ է պահանջվել: Արդեն կարճ անց ՀԿ-ի անդամները, հաջողության հասնելով, իրենց փորձառությունը փոխանցել են միության նորեկ անդամներին: Կարճ ժամանակում Տիկնանց հանձնախումբը համալրվել է տարբեր հմտություններ ունեցող 100 անդամուհիներով, որոնք առանձնացել են իրենց յուրահատուկ ձեռքի աշխատանքներով, հատկապես ասեղնագործության, նկարչության, սննդի, արհեստական և արծաթյա զարդերի ոլորտներում: Նրանք իրենց արտադրանքը ներկայացրել և վաճառել են տեղական և արտասահմանյան ցուցադրություններում²²:

Ընդհանուր առմամբ, 2013-2018 թթ. ՍՄ ՀԿ-ն ստեղծել է սիրիահայ գործարարների ամենամեծ շտեմարանը՝ ներառելով շուրջ 500 անուն և տարբեր ծրագրերով աջակցել սիրիահայ ավելի քան 400 անդամի²³: 2018 թ. սկզբի տվյալներով՝ սիրիահայ շուրջ 400 սիրիահայ ներգրավված էր ակտիվ գործարար ոլորտում: Փախստականների շրջանում գործարարության մեջ ներգրավվածների շուրջ 30%-ը արձանագրել էր հարաբերական կայուն հաջողություն: ՀԿ-ի գնահատմամբ՝ հաջողության այդ ցուցանիշը բարձր էր համաշխարհային չափանիշների համեմատությամբ²⁴:

Հայաստանում սիրիահայերը թե՛ տնտեսական, թե՛ մշակութային ու ավանդական ասպարեզներում թարմացրել, զարգացրել, հաճախ նաև վերականգնել ու վերածնել են բազմաթիվ ոլորտներ, որոնցից շատերում նրանք տակավին Սիրիայում հմտացել էին ընտանեկան փոխանցվող փորձառությամբ, հիմնել նոր արտադրություններ, զբաղվել անհրաժեշտ իրերի, սարքավորումների վերանորոգմամբ, ներմուծմամբ, վաճառքով և այլն: Հայաստանում սիրիահայերն առավելապես հաջողություններ են արձանագրել յուրահատուկ շնորհք, նուրբ ճաշակ, նաև արևմտահայ ավանդական արժեքներին ու մերձավորարևելյան առանձնահատկություններին տիրապետելու կարողություն պահանջող մասնագիտություններում, արհեստներում և արվեստում: Դրանք են՝ սննդի, համեմունքների, քաղցրավենիքի, շոկոլադի, հրուշակեղենի արտադրության, միջոցառումների

²² Կայացել է «Սիրիահայերի Միություն. անցած ու հետագա ուղին» ամփոփիչ միջոցառումը, 2018, 16 փետրվարի, [http://syarbi.am/hy/news-hy/կայացել-է-սիրիահայերի-միություն-անց: Success Story of Syrian Armenians' Union NGO](http://syarbi.am/hy/news-hy/կայացել-է-սիրիահայերի-միություն-անց-Success-Story-of-Syrian-Armenians'-Union-NGO), <http://syarbi.am/success-stories/success-story-of-womens-group-of-syrian-armenians-union-ngo/>

²³ Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

²⁴ Uzelac, Meester 2018, 3.

սրահների և նվերների ձևավորման, ճաշարանի, սրճարանի, գիշերային ակումբի, հագուստի, զարդարտադրության, ասեղնագործության, սփռոցների ձևավորման և արտադրության, հուշանվերի, ձեռագործի²⁵, գորգավաճառության, կոշկարտադրության, արծաթագործության, ոսկերչության, հագուստի, տպագրության, շպարի (կոսմետիկա), բնական յուղերի, օճառի, շամպունի, վարսահարդարման, սպորտպատրաստության, բժշկության, ատամնաբուժության, մետաղաձուլվածքների, սարքավորումների, պոմպերի, ծանր պահեստամասերի արտադրության, ստարտերների ու դինամոների վերանորոգման²⁶ և այլ ոլորտները:

«Սիրիահայերի միություն» ՀԿ-ի «Սիրիահայերի արդյունաբերական գոտի» և «ԻնֆոՀաբ» ծրագրերը

Հայաստանում սիրիահայ գործարարներից շատերի ընթացիկ դժվարությունները հարթվել են կառավարության հետ արդյունավետ գործակցությամբ: Այսպես, բազմաթիվ սիրիահայեր պատրաստակամ էին իրենց գործարանները տեղափոխել Հայաստան, սակայն նրանցից մեծ մաքսատուրք է պահանջվել: Այդ է պատճառը, որ ոմանք իրենց արտադրությունն այլ երկրներ են փոխադրել, ինչպես, օրինակ՝ Եգիպտոս, «մինչդեռ կնախընտրեին Հայաստան բերել, որովհետև չգիտեն, թե այլ երկրներում քաղաքական ինչ իրավիճակներ կլինեն ապագայում»²⁷: Այնինչ Սիրիայում գործարարության համար փաստաթղթային հարցերն այդքան խիստ չեն եղել. տարիներով բիզնես ունեցողը կարող էր և չհարկվել:

Այդ էական հարցի վերաբերյալ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ն դիմել էր կառավարություն՝ խնդրելով մաքսատուրք չգանձել իրենց բիզնեսն ու անձնական օգտագործման գույքը Հայաստան տեղափոխելիս. եթե նույնիսկ հնարավոր չէր մաքսային արտոնություն տրամադրել, ապա գոնե «ազատ գոտի» ստեղծել, որտեղ կպահվեր նրանց արտադրամասը՝ հետագա գործողություն ծավալելու համար²⁸: Արդեն 2017 թ. օգոստոսի 3-ին Կառավարության նիստի օրակարգում ընդգրկված նախագծով որոշվել է «Սիրիահայերի միությանը» տրամադրել տարածք Երևանի Արաբկիր վարչական շրջանում: Նրանք ձեռք են բերել շուրջ 1.500 մ² ընդհանուր

²⁵ Վերսկիզբ 2017, 12, 25, 32, 42, 44, 61, 65, 68, 72, 74, 78, 84, 86, 117, 121, 125, 129:

²⁶ Վերսկիզբ 2017, 16, 20, 22, 27, 29, 36, 38, 47, 48, 50, 52, 54, 58, 66, 76, 82:

²⁷ Պետրոսյան 2017, 10 փետրվարի, <https://hetq.am/hy/article/75600>

²⁸ Պետրոսյան 2017, 10 փետրվարի, <https://hetq.am/hy/article/75600>

մակերեսով տարածք, 5 տարի անհատույց ժամկետով: Այն դարձել է արտադրական և բիզնես կենտրոն, որտեղ միության անդամ գործարարներն ու ձեռներեցները հնարավորություն են ունեցել շուկայականից մի քանի անգամ մատչելի գներով ձեռք բերելու արտադրական գործունեություն ծավալելու համար տարածք և կից սրահում ներկայացնելու իրենց արտադրանքը²⁹: Այսպես, իրագործվել է ՍՄ ՀԿ-ի կարևոր նախաձեռնությունը՝ հիմնվել է «Սիրիահայերի արդյունաբերական գոտի» (ՍԱԳ) անվանմամբ արտադրական և բիզնես կենտրոն: Այն պրոֆեսիոնալ գործարար ծառայությունների կարևոր հարթակ էր՝ ընդլայնելու սիրիահայերի տնտեսական ինտեգրումը և իրականացնելու հասանելի ու արտոնյալ բիզնես ծառայություններ³⁰: Ընդհանուր առմամբ, ՍԱԳ-ում իրականացվել է 16,5 մլն դրամի ներդրում. ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա, կարի մեքենաներ, գույք, ջեռուցման համակարգ, իրականացվել է շինարարական աշխատանք և այլն: Գոտին համալրվել է համակարգչային սրահով, կոնֆերանս դահլիճով, առկա էր գործող 11 բիզնես, այդ թվում՝ կարի արտադրամաս, էսթետիկ բժշկական սարքավորումների արտադրություն, լազերային տպագրություն, շշալցնող հոսքագծերի արտադրություն, միջոցառումների կազմակերպման ծառայություն, արծաթագործություն, մավային տպագրություն, օճառների արտադրություն, արտադրանքի նախատիպի արտադրություն, ավտոմեքենաների մարտկոցների նորոգում, երաժշտական գործիքների նորոգում³¹ և այլն:

Երևանում արդյունաբերական գործունեություն ծավալելու համար ՍԱԳ-ին անդամակցված սիրիահայ նոր և արդեն աշխատող գործարարներին (շուրջ 30 հոգու³²) տրամադրվել է տարածք, ինչպես նաև սրահ՝ իրենց արտադրանքը ցուցադրելու համար: Այդ ամենը մեկ նպատակ է հետապնդել, որպեսզի «սիրիահայ գործարարներն ամրապնդվեն իրենց գործում»³³: ՍԱԳ-ը միավորել է տարբեր կազմակերպություններ, տրամա-

²⁹ Վարչապետը դրական է արձագանքել սիրիահայերի համար արդյունաբերական գոտի ստեղծելու առաջարկին 2016, 20 դեկտեմբերի, <https://armenpress.am/arm/news/872485/varchapety-drakan-e-ardzaganqel-siriahayeri-hamar-ardyunaberkakan.html>

³⁰ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մասին, <http://syarbi.am/hy/about-sau>

³¹ Տարեվերջյան արդյունքների ամփոփում 2019, 3:

³² Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում 2017, 2:

³³ ՍԱԳ-ի մասին, <<http://syarbi.am/hy/about-saiz>>: Վարչապետը դրական է արձագանքել սիրիահայերի համար արդյունաբերական գոտի ստեղծելու առաջարկին 2016, 20 դեկտեմբերի, <https://armenpress.am/arm/news/872485/>:

դրել ընդհանուր ծառայություններ (հաշվապահական, իրավաբանական, խորհրդատվական, մաքսազերծման, լոգիստիկ օժանդակության և այլն)՝ նրանց զարգացմանը նպաստելու համար, ինչպես նաև անվճար տեղեկատվություն՝ սեփական գործ բացել ցանկացողներին³⁴:

Արդեն 2018 թ. փետրվարի 15-ին «Սիրիահայերի միություն» ՀԿ-ն հայրենիքում սիրիահայերի ինտեգրմանն աջակցելու նպատակով ստեղծում է մեկ այլ՝ նոր ուղղորդող կենտրոն՝ «ԻնֆոՀաբը» (InfoHub), որը կոչված էր պարզեցնելու տնտեսական ինտեգրման հարցերի վերաբերյալ տեղեկությունների ստացումը: Այն Հայաստանում հաստատվող հնարավոր առաջադեմ ձեռներեցներին ու ներդրողներին «մեկ պատուհանի» սկզբունքով աջակցող համակարգ էր, որն օգնել է ճանաչել հայկական գործարար միջավայրը, ներմուծման և արտահանման գործընթացներն ու մաքսային օրենսդրությունը, տեղեկանալ ՀՀ հարկային օրենսդրության դրույթներին ու համապատասխան գործընթացներին, կապ հաստատել ՀՀ գործարար ոլորտի ծառայությունների մատակարարների հետ և այլն³⁵: ՀԿ-ն ունեցել է նաև գործընկեր հաշվապահական և իրավաբանական ընկերություններ³⁶:

ՍՄ ՀԿ-ն, որի գործարար նշանը (logo) հայկական եռագույն դրոշի գույներով հովանոցն է, ի վերջո, կարողացել է դառնալ սիրիահայ գործարարների շահերի հովանի-պաշտպան հարթակ՝ նպաստելով հայաստանյան բիզնես միջավայրին հայրենադարձ ձեռնարկատերերի և գործարարների ինտեգրմանը:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությունը «Սիրիահայերի միություն» ՀԿ-ին

Հայաստանում ձեռներեցությամբ զբաղվել ցանկացող սիրիահայերի «կարևոր թիրախային խումբը հայտնաբերելու և նրանց տնտեսական կարիքները բավարարելու նպատակով» Գերմանիայի կառավարության (Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշ-

³⁴ ՍԱԳ-ի մասին, <http://syarabi.am/hy/about-saiz>: Ապրում են Հայաստանում, վաստակում՝ Սիրիայում. սիրիահայերի ճակատագիրը 2018, 14 մարտի, <https://armeniasputnik.am/society/20180314/>

³⁵ Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում 2017, 2: Գասպարյան 2018, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/>

³⁶ Տարեվերջյան արդյունքների ամփոփում 2019, 7:

նային նախարարություն – ԳՏՀԶԴՆ) պատվերով և ֆինանսավորմամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը 2015 թ. նոյեմբերից մինչև 2018 թ. մարտ գործարկել է «Հարավային Կովկասում մասնավոր հատվածի զարգացում» նախագծի մաս կազմող՝ «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» (ՍՓՏԻՀ) ծրագիրը, որը կոչված էր աջակցելու սիրիահայ ձեռներեցներին և աշխատանք փնտրողներին մուտք գործել շուկա և հասանելի դառնալ բիզնես ցանցերին, դրանով իսկ ձեռք բերել ֆինանսական միջոցներ և վերականգնել իրենց առօրյան: Գերմանական ծրագիրը համախմբել է տեղական և միջազգային գործընկերներին՝ խթանելու աշխատանք փնտրող սիրիահայերի և գործարարների տնտեսական ինտեգրումը, ինչպես նաև նրանց ապրանքների և ծառայությունների առաջխաղացմանն աջակցելու նպատակով նորեկներին ներգրավել գոյություն ունեցող բիզնես շրջանակներում, զբաղվածության և բիզնեսի աջակցության ծրագրերում, տեղական և միջազգային ցուցահանդեսներում³⁷:

ԳՏՀԶԴՆ-ի քաղաքական գործընկերը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն էր, իսկ իրականացնող գործընկերները պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունները՝ ՀՀ սփյուռքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունները, Զբաղվածության պետական գործակալությունը, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը, «Սիրիահայերի միություն» ՀԿ-ն, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը և այլ կառույցներ (ընդհանուր առմամբ՝ 23)³⁸:

Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը, սերտ համագործակցելով ՄԱԿ ՓԳՀ-ի հետ, մշակել է 2,5 մլն եվրո բյուջեով երկուսուկես տարվա ծրագիր: Որպես թիրախային խումբ ընտրվել են Հայաստանում աշխատանք փնտրող, գործող ձեռնարկություններ ունեցող և սկսնակ բիզնես հիմնած սիրիացի փախստականները, որոնց շարքում առանձնապես ուշադրություն է դարձվել կանանց ու երիտասարդներին: Ստեղծվել են շուրջ 1.500 սիրիահայ գործա-

³⁷ Uzelac, Meester 2018, 3. Կայացել է ԳՄՀԸ (GIZ) «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրին նվիրված ամփոփիչ միջոցառումը, 2018, 24 հունվարի, <https://mineconomy.am/news/848>: ՍիրԱրԲի-ի մասին, <http://syarbi.am/hy/about-syarbi/>

³⁸ Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում 2017, 1, 2:

րարների, աշխատանք փնտրողների, սկսնականների, ինչպես նաև գործատուների տվյալների բազաները՝ թիրախային խմբի կարիքների նույնականացման, գնահատման, աջակցության և զբաղվածության ապահովման նպատակով³⁹:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրի շրջանակում ՍՄ ՀԿ-ին տրամադրվել է <<http://SyrAr Bi.am>> (Syrian-Armenian Business) երկլեզվյա (հայերեն և անգլերեն) կայքը, որը ծառայել է որպես սիրիահայերի տնտեսական ինտեգրման հարցերի վերաբերյալ միասնական տեղեկատվական հարթակ՝ ապահովելով շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ հաղորդակցություն: Դրա միջոցով սիրիահայերին տրամադրվել է ֆինանսական, իրավական, բիզնես և կրթության հնարավորությունները զարգացնելու վերաբերյալ օգտակար տեղեկատվություն⁴⁰, ինչպես նաև հայրենակիցներին գործարարությամբ զբաղվել սկսելու համար անհրաժեշտ տեղեկություններ՝ ՀՀ-ում գործող իրավական նորմերի և հարկերի, զբաղվածության, հմտությունների զարգացման մասին, ֆինանսական տեղեկատվություն, բիզնես խորհրդատվություն⁴¹ և այլն:

Կայքէջում անդրադարձել են նաև Հայաստան մեկնող սիրիահայերի տրամադրություններին և հայրենիքում Կառավարության, ինչպես նաև տեղական ու միջազգային ՀԿ-ների՝ իրենց նկատմամբ վերաբերմունքին. «Նրանք [սիրիահայերը – Բ.Ա.] ոգեշնչված էին հայրենիքում ապրելու հեռանկարով: Հայաստանում նրանց գրկաբաց ընդունեցին: Կառավարությունն իրականացրել է ձեռնարկատիրության խթանման, հավաքագրման և աշխատանքի տեղավորման, առողջապահական ծառայությունների և կրթության մատչելիության ծրագրեր, սկզբնական շրջանի համար ապահովել է նրանց տներով: Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունները նույնպես աջակցության ծրագրեր են իրականացրել: Հայաստանում սիրիահայերը հիմնել են հարյուրավոր նոր բիզնեսներ՝ բերելով նոր հմտություններ և փորձ: ...Այնուամենայնիվ, որոշ սիրիահայ մեր

³⁹ Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում 2017, 1, 2:

⁴⁰ ՍիրԱրԲի-ի մասին, <http://syarbi.am/hy/about-syarbi/>: Կայացել է ԳՄՀՀ (GIZ) «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրին նվիրված ամփոփիչ միջոցառումը 2018, 24 հունվարի, <https://mineconomy.am/news/848>

⁴¹ Իրավական նորմեր և հարկեր. Ֆինանսական տեղեկատվություն. Բիզնես խորհրդատվություն. Զբաղվածություն. Հմտությունների զարգացում, <http://syarbi.am/hy/resource-category/>

հայրենակիցների համար Հայաստանը երբեմն դարձել է տարանցիկ երկիր: Շատ ընտանիքներ չեն կարողանում բավարար գումար վաստակել գոյատևելու համար և լքել են Հայաստանը՝ շարունակելով իրենց ճանապարհը դեպի Կանադա, ԱՄՆ և Եվրոպա»⁴²:

Ընդհանուր առմամբ, երկուսուկես տարիների (2015-2018 թթ.) ընթացքում գերմանական ծրագրով աջակցություն է ցուցաբերվել 3 100 սիրիահայ գործարարի և աշխատանք փնտրողի: Նրանք մասնակցել են հայաստանյան և միջազգային ցուցահանդեսների, բիզնես համաժողովների, ինչպես նաև մարկետինգի, բիզնեսի զարգացման ու ֆինանսական գրագիտության դասընթացների՝ զարգացնելով գործարարության վարման և այլ մասնագիտական հմտություններ: Այս գործընթացը խթանելու նպատակով ծրագիրն աջակցել է նաև 1 505 սիրիահայ գործարարի, սթարթափի (startup – անգլ., սկսող, գործառնական կարճ պատմություն ունեցող ընկերություն) և աշխատանք փնտրողի, ինչպես նաև 100 գործատուի տվյալների բազայի ստեղծմանը, որը հանձնվել է ծրագրի գործընկեր ՍՄ ՀԿ-ին⁴³: ՍՓՏԻՀ ծրագրի շրջանակում հայերեն և անգլերեն հրատարակվել են «Հայաստանի տնտեսական զեկույց 2016» և «Կարիքների գնահատման զեկույց 2017» պարբերականները, ինչպես նաև «ՎԵՐՍՍԿԻԶԲ. Սիրիահայերի հաջողությունների պատմություններն ու ավանդը ձեռնարկատիրության ոլորտում» (2017, 2018) գրքույկները՝ ներառելով երեք տասնյակից ավելի սիրիահայ գործարարի հաջողության պատմությունները, նրանց մասին նկարահանվել են կարճամետրաժ ֆիլմեր և այլն⁴⁴:

Նպատակ ունենալով բարելավել սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը համախմբել է տեղական ու միջազգային գործընկերներին և գոյություն ունեցող բիզնես շրջանակներում սիրիահայերին ներգրավել զբաղվածության ու բիզնեսի աջակցության ծրագրերում⁴⁵ և այլն: ԳՄՀԸ-ն օժանդակել է նաև «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի անդամների արտա-

⁴² It has been only five years ago that more than 50,000 Armenians had their homes in Aleppo 2016, May 25, <<http://syrarbi.am/it-has-been-only-five-years-ago-that-more-than-50000-armenians-had-their-homes-in-aleppo/>>

⁴³ Կայացել է ԳՄՀԸ (GIZ) «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրին նվիրված ամփոփիչ միջոցառումը 2018, 24 հունվարի, <<https://mineconomy.am/news/848>>

⁴⁴ Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում 2017, 2:

⁴⁵ ՍիրԱրԲի-ի մասին, <<http://syrarbi.am/hy/about-syrarbi/>>

դրանքը հայաստանյան և միջազգային ցուցադրություններում ներկայացնելուն (2016 թ. մայիս՝ Երևան, հոկտեմբեր՝ Թեհրան, 2017 թ. փետրվար՝ Էջբորն, մարտ՝ Մոսկվա, հուլիս՝ Մարսել, օգոստոս՝ Աստանա⁴⁶)՝ խթանելով նրանց ապրանքների ու ծառայությունների առաջխաղացումը և արտերկրից բազմաթիվ գործընկերներ ու պատվերներ ձեռք բերելը: Ի դեպ, 2017 թ. նոյեմբերի տվյալներով, «Սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրի շրջանակում աջակցություն է ցույց տրվել 20 սիրիահայի՝ 4 միջազգային ցուցահանդեսի մասնակցելու նրանց վերամուտքը շուկա դուրացնելու նպատակով⁴⁷:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը պետական գերատեսչությունների ու ՀԿ-ների գործակցությամբ զգալի աջակցություն է ցույց տվել սիրիահայերի սոցիալական վիճակի բարելավմանը, հայրենի հասարակությանն ու գործարար միջավայրին նրանց ինտեգրմանը՝ կանխելով Հայաստանից նրանց արտագաղթը:

Եզրակացություններ

Այսպիսով, Հայաստան ներգաղթած սիրիահայ գործարարները, անձամբ տեղյակ լինելով նոր պայմաններում իրենց և իրենց հայրենակիցներին հուզող խնդիրներին, ինչպես նաև նպատակ ունենալով թեթևացնել առկա հոգսերը, ստեղծել են աշխատավոր-ձեռնարկատերերի յուրատեսակ հայրենակցական միավորումը՝ «Սիրիահայերի միություն» ՀԿ-ն, որի միջոցով կազմակերպել և իրականացրել են նրանց համակողմանի մասնագիտական խորհրդատվությունը, պաշտպանությունն ու աջակցությունը:

Հայրենիքում հաստատվելու հավատամք ունեցող «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի անդամ մեր հայրենակիցները, ներսից ընկալելով Հայաստանից սիրիահայերին արտագաղթի մղող հիմնական դրդապատճառները, Կառավարության հետ գործակցած, աշխատել են առկա բացերն ու թերիները հաղթահարելու ուղղությամբ, որը թերևս ուսանելի օրինակ

⁴⁶ Can Business Forums Facilitate and Support the Economic Integration of Refugees? 2017, 2. Reviving Access to International Markets for Displaced Business People from Syria 2017, 1. First Forum of the Syrian International Business Association (SIBA) 2017, July 12, <<http://syrarbi.am/first-forum-of-the-syrian-international-business-association-siba/>> Armenian Companies Returned with Export Contracts from the "Eurasian Week" 2017, August 28, <<https://www.businessarmenia.am/en/news/armenian-companies-returned-with-export-contracts-from-the-eurasian-week>>

⁴⁷ Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում 2017, 2:

կարող է դառնալ հետագա հայրենադարձությունների դեպքում նման խնդիրներից զերծ մնալու: ՍՄ ՀԿ-ի անդամները կարճ ժամանակում կարողացել են հասկանալ Հայաստանի գործարար աշխարհում և այլ ոլորտներում սիրիահայերի համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքները և գործնականում հետևողականորեն լծվել դրանց հաղթահարմանը՝ ստանալով պետական ու միջազգային տարբեր կառույցների աջակցությունը:

Գրականություն

- Ապրում են Հայաստանում, վաստակում՝ Սիրիայում. սիրիահայերի ճակատագիրը 2018, 14 մարտի, <https://armeniasputnik.am/society/20180314/> (28.04.2020):
- Գասպարյան Ա. 2018, Սիրիահայերի արդյունաբերական գոտի. բիզնես հարթակ, որը կօգնի մնալ Հայաստանում, 23 փետրվարի, <http://archive3.ankakh.com/article/91238/> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Գործընկերներ, <http://syarbi.am/hy/partners> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Ընդամենը հինգ տարի առաջ էր, երբ ավելի քան 50,000 հայեր իրենց տունն ունեին Հալեպում 2016, 25 մայիսի, <http://syarbi.am/hy/news-hy/it-has-been-only-five-years-ago-that-more-than-50000-armenians-had-their-homes-in-aleppo> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Իրավական նորմեր և հարկեր. Ֆինանսական տեղեկատվություն. Բիզնես խորհրդատվություն. Զբաղվածություն. Հմտությունների զարգացում, <http://syarbi.am/hy/resource-category/> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Կայացավ սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը 2015, 6 փետրվարի, <https://armenpress.am/arm/news/793136> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Կայացել է ԳՄՀԸ (GIZ) «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրին նվիրված ամփոփիչ միջոցառումը 2018, 24 հունվարի, <https://mineconomy.am/news/848> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Կայացել է «Սիրիահայերի Միություն. անցած ու հետագա ուղին» ամփոփիչ միջոցառումը 2018, 16 փետրվարի, <http://syarbi.am/hy/news-hy/կայացել-է-սիրիահայերի-միություն-անց> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ Սիրիայից և հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար 2017, հուլիս, Երևան, Իրատ. նշված չէ, 160 էջ:
- Հայաստանում սիրիահայերի կողմից հիմնադրված հասարակական կազմակերպություններ. «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպություն, http://www.mindiaspora.am/am/syriahayer_hk (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Պետրոսյան Ս. 2017, Սիրիահայերն իրենց գործարանները տեղափոխում են այլ երկիր՝ Հայաստանում պահանջվող մեծ մաքսավճարների պատ-

- ճառով, 10 փետրվարի, <https://hetq.am/hy/article/75600> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- ՍիրԱրԲի-ի մասին, <http://syarbi.am/hy/about-syarbi> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Սիրիահայ գործարարներ. ռուսերենի չիմացությունը խանգարում է արտաքին շուկա դուրս գալուն 2016, 4 մարտի, <http://www.panarmenian.net/arm/news/207470/> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանը 2017, 27 հունվարի, <http://nyut.am/?p=133813&l=am> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի մասին, <http://syarbi.am/hy/about-sau> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում – ՍՓՏԻՀ 2017, Երևան, նոյեմբեր, 2 էջ:
- Վարչապետը դրական է արձագանքել սիրիահայերի համար արդյունաբերական գոտի ստեղծելու առաջարկին 2016, 20 դեկտեմբերի, <https://armenpress.am/arm/news/872485/varchapety-drakan-e-ardzaganqel-siriahayeri-hamar-ardyunaberakan.html> (ներբեռնման օրը՝ 28.04.2020):
- Վերսկիզբ 2017, Սիրիահայերի հաջողությունների պատմություններն ու ավանդը ձեռնարկատիրության ոլորտում. RESTART. Syrian Armenians Planting Their Entrepreneurial Spirit in Armenia. Երևան-Yerevan, 93 էջ:
- Տարեվերջյան արդյունքների ամփոփում, Սիրիահայերի միություն. Սիրիահայերի արդյունաբերական գոտի 2019, 25 դեկտեմբերի, 68 էջ:
- Armenian Companies Returned with Export Contracts from the "Eurasian Week" 2017, August 28, <<https://www.businessarmenia.am/en/news/armenian-companies-returned-with-export-contracts-from-the-eurasian-week>> (ներբեռնման օրը՝ 28.04.2020).
- Can Business Forums Facilitate and Support the Economic Integration of Refugees? 2017, Week of Economic Opportunities (WEO) in Yerevan, Armenia (19 May - 22 May, 2016), Yerevan, January, 6 p.
- First Forum of the Syrian International Business Association (SIBA) 2017, July 12, <<http://syarbi.am/first-forum-of-the-syrian-international-business-association-siba/>> (ներբեռնման օրը՝ 28.04.2020).
- It has been only five years ago that more than 50,000 Armenians had their homes in Aleppo 2016, May 25, <<http://syarbi.am/it-has-been-only-five-years-ago-that-more-than-50000-armenians-had-their-homes-in-aleppo/>> (ներբեռնման օրը՝ 28.04.2020).
- Lieberman A. 2017, Lessons learned as Syrian-Armenian refugees return to Armenia, July 25, <https://www.devex.com/news/lessons-learned-as-syrian-armenian-refugees-return-to-armenia-90551> (ներբեռնման օրը՝ 28.04.2020).
- Partners, <http://syarbi.am/partners/> (ներբեռնման օրը՝ 28.04.2020).

- Reviving Access to International Markets for Displaced Business People from Syria 2017, 1st Armenia Expo in Tehran, Iran (5 October - 8 October, 2016), Yerevan, January, 6 p.
- Success Story of Syrian Armenians' Union NGO, <http://syarbi.am/success-stories/success-story-of-womens-group-of-syrian-armenians-union-ngo/> (ներբեռնման օրը՝ 28.04.2020).
- Uzelac A., Meester J. 2018, Bringing the Colours. The effects of Syrian Armenian economic integration in Armenia. Conflict Research Unit (CRU) Report, Netherlands Institute of International Relations 'Clingendael' in cooperation with International Center for Human Development (ICHD) Armenia. Yerevan, February, 61 p.

«ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԳԱՂԹԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ (2013-2018 ԹԹ.)

Քնարիկ Ավագյան

Ամփոփում

Հայաստան ներգաղթած սիրիահայ գործարարները, անձամբ տեղյակ լինելով նոր պայմաններում իրենց և իրենց հայրենակիցներին հուզող խնդիրներին, ինչպես նաև նպատակ ունենալով թեթևացնել առկա հոգսերը, ստեղծել են աշխատավոր-ձեռնարկատերերի յուրատեսակ հայրենակցական միավորումը՝ «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունը, որի միջոցով կազմակերպել և իրականացրել են նրանց համակողմանի մասնագիտական խորհրդատվությունը, պաշտպանությունն ու աջակցությունը:

Հայրենիքում հաստատվելու հավատամք ունեցող «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի անդամ մեր հայրենակիցները, ներսից ընկալելով Հայաստանից սիրիահայերին արտագաղթի մղող հիմնական դրդապատճառները, Կառավարության հետ գործակցած, աշխատել են առկա բացերն ու թերիները հաղթահարելու ուղղությամբ, որը թերևս ուսանելի օրինակ կարող է դառնալ հետագա հայրենադարձությունների դեպքում նման խնդիրներից զերծ մնալու համար: «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի անդամները կարճ ժամանակում կարողացել են հասկանալ Հայաստանի գործարար աշխարհում և այլ ոլորտներում սիրիահայերի համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքները և գործնականում հետևողականորեն լծվել դրանց հաղթահարմանը՝ ստանալով պետական ու միջազգային տարբեր կառույցների աջակցությունը:

Բանալի բառեր՝ Սիրիա, հայրենադարձություն, ՀՀ կառավարություն, սիրիահայ գործարար, «Սիրիահայերի միություն», «Սիրիահայերի արդյունաբերական գոտի», «ԻնֆոՀաբ»:

**ПОДДЕРЖКА ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ
«СОЮЗ СИРИЙСКИХ АРМЯН», ОКАЗАННАЯ В СФЕРЕ БИЗНЕСА
РЕПАТРИАНТАМ – АРМЯНАМ ИЗ СИРИИ (2013-2018 ГГ.)**

Кнарик Авакян

Резюме

Сирийскими армянскими бизнесменами, репатриировавшими в Армению, был создан уникальный патриотический союз рабочих-предпринимателей, каковым является общественная организация «Союз сирийских армян», обеспечивающая защиту и поддержку сирийских армян в их профессиональной деятельности.

За короткое время членам «Союза сирийских армян» удалось преодолеть возникшие для сирийских армян препоны в мире бизнеса и в других сферах, опираясь на поддержку различных государственных и международных структур.

Ключевые слова – Сирия, репатриация, правительство РА, сирийско-армянский бизнесмен, «Союз сирийских армян», «Индустриальная зона сирийских армян», «ИнфоХаб».

**SUPPORT OF THE "UNION OF SYRIAN-ARMENIANS"
NON-GOVERNMENTAL ORGANIZATION TO THE COMPATRIOTS
REPATRIATED TO ARMENIA IN THE BUSINESS FIELD (2013-2018)**

Knarik Avagyan

Abstract

The Syrian-Armenian businessmen, who repatriated to Armenia, being personally aware of the problems of their compatriots in the new conditions, as well as aiming to alleviate the existing worries, created a unique compatriotic union of workers-entrepreneurs – the "Union of Syrian-Armenians" non-governmental or-

ganization, through which was organized and implemented professional advice, protection and support to them.

Our compatriots, members of the "Union of Syrian-Armenians" NGO, who believe in settling in the Homeland and perceiving the main motives for the emigration of Syrian-Armenians from Armenia, in collaboration with the government of the Republic of Armenian, worked on an important job – to overcome the existing gaps and shortcomings, which may become an instructive example to avoid such problems during further repatriations. In a short time, the members of the "Union of Syrian-Armenians" NGO were able to understand the circumstances that become an obstacle for Syrian-Armenians in business world and in other spheres of Armeniasocial life and practically were engaged to overcome them, receiving the support of various state and international structures.

Key words – Syria, repatriation, Government of the RA, Syrian-Armenian businessman, "Union of Syrian-Armenians", "Industrial Zone of Syrian-Armenians", "InfoHub".

**«ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ»՝
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Լիզա Քարիմյան

Պատմական գիտությունների թեկնածու

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ

ՀՀ, Երևան, Արուսյան 52

Էլ. հասցե՝ liz79k@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 20.07.2020, գրախոսվել է 24.09.2020,

ընդունվել է տպագրության 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-53

Ներածություն

Բյուզանդական կայսրության կրոնական քաղաքականության հետ սերտորեն կապված՝ քննարկվում է նաև քաղկեդոնական հայերի հիմնահարցը, որը վերջին տասնամյակներին հետաքրքրություն է առաջացրել ակադեմիական շրջանակներում:

«Հայ քաղկեդոնական» երևույթի մասին ուսումնասիրության գործում ուղենշային պետք է համարել Ն. Ադոնցի այն դիտողությունը, որ «Նախքան ընդհանրացումներին անցնելը, անհրաժեշտ է ճշտորեն սահմանազատել, թե քննարկվող տվյալները Հայաստանի ո՞ր մասին և երկրի պատմության ո՞ր շրջանին են վերաբերում: Պատմական Հայաստանը ո՛չ մշակութային, ո՛չ էլ քաղաքականապես միատարր ամբողջություն չէր, և նրա յուրաքանչյուր մասի բախտը պետք է քննության առնվի տվյալ մասի սեփական պայմաններում»¹: Ծայրահեղություններից և միակողմանիությունից զերծ մնալու նպատակով Հայ եկեղեցու և քաղկեդոնական հայերի հիմնախնդրի անաչառ ուսումնասիրության համար անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել նաև այն, որ սույն հարցի վերաբերյալ տրամագծորեն հակադիր կարծիքները մեծավ մասամբ ձևավորվել են «ժամանակի կամ տեղի նկատմամբ պատմական հեռանկարի խախտումով»: Առավել ևս, որ՝ «Կյանքի այդպիսի հարափոփոխ պայմաններում գրական հուշարձաններն էլ չէին խուսափում այն ընդհանուր ճակատագրից, որին ենթակա էր կյանքը, պատմական գրականությունը բազմիցս վերանայման և վերամշակման է ենթարկվել տվյալ շրջանի ոգուն և պահանջներին համա-

¹ Ադոնց 1987, 359:

պատասխան: Այդ պատճառով էլ գրական ժառանգությունները բնավ զերծ չեն միտումնավոր երանգավորումից իրական թե անիրական փաստերը լուսաբանելիս ու զուգակցելիս»²:

Վ. Հարությունովա-Ֆիդանյանի «Քաղկեդոնական հայ եկեղեցու» մասին հայեցակարգային գաղափարները

Վերջին տասնամյակներին այդ բնագավառում յուրատիպ մոտեցումներով և խիստ ուղղորդված լուծումներով առանձնանում է հատկապես Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հայեցակարգը: Նշյալ ոլորտում իր հետազոտական հետաքրքրությունը նա բացատրում է նրանով, որ թեև հայ քաղկեդոնականությունը միջնադարի յուրատիպ երևույթներից մեկն է, սակայն վերջինիս հետ կապված հիմնահարցերը պատմագրության մեջ պահանջվող մակարդակով քննարկված չեն: «Բացահայտված չեն նաև այնպիսի արմատական հարցեր, - գրում է նա, - ինչպիսիք են՝ Հայաստանում քաղկեդոնականության ծագման ու զարգացման ուղիները, երկրի որ մարզերում է գերակշռել քաղկեդոնական ազգաբնակչությունը, խորհրդակատարության և խոսակցական ինչ լեզու են գործածել քաղկեդոնականները, որքան հեռու է գնացել վրացական կամ հունական եկեղեցուց կախման մեջ գտնվող հայ քաղկեդոնականների ապազգայնացումը: Չի քննարկվել նաև հարցն այն մասին, թե Բյուզանդիայի, Հայաստանի և Վրաստանի երեք թագավորությունների քաղաքական ասպարեզում ինչ դեր են խաղացել հայ քաղկեդոնականները, հատկապես դեպի հայկական թագավորության տարածքներ Բյուզանդական կայսրության արշավանքների փուլում»³: Եվ նշյալ հիմնահարցերի պատասխանների բազմամյա որոնումներն էլ պայմանավորել են նրա հետազոտական հետաքրքրությունը, որը, ինչպես ինքն է խոստովանում, անփոփոխ կերպով կենտրոնացված է եղել գերազանցապես «...հայ-բյուզանդական համադրական հարաբերությունների գոտու երկու փուլերի (VI-VII և X-XI դդ.՝ Լ.Ք.) գործառնության և ...այդ փուլերում հայ քաղկեդոնական համայնքի դերի վրա»⁴:

Այդ կարևոր դիտարկումներում առաջադրված վերլուծական հիմնախնդիրների լուծման շնորհիվ հրապարակ են իջել *հեղինակային հայեցակարգի հիմքում ընկած հիմնարար գաղափարները*: Նախ այն, որ քննարկ-

² Ադոնց 1987, 359-360:

³ Арутюнова-Фиданян 1971, 85. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2003, 33:

⁴ Арутюнова-Фиданян 1980, 57, 68, 75-77. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2009, 9:

վող շրջանում Հայաստանում «...միասնական ազգության շրջանակում հասարակական կյանքում ժամանակ առ ժամանակ նույնատիպ ազդեցություն են ունեցել նվազագույնը երկու կրոնական հոսանքներ՝ միաբնակները և քաղկեդոնականները: Ընդ որում, Հայ Եկեղեցու համար վտանգ էր ներկայացնում ոչ միայն քաղկեդոնական գաղափարախոսությունը, այլև իբրև կառույց՝ հայ քաղկեդոնական եկեղեցին էր լրջորեն մրցակցում հայ միաբնակ եկեղեցու հետ»⁵: Եվ «հիմնավորելով» այդ պնդումը՝ նա հավաստել է, որ VI-VII դդ. քաղկեդոնականությունը Հայաստանում եղել է տիրապետող կրոնական ուղղություն և ունեցել է պաշտոնական կրոնի կարգավիճակ⁶, իսկ «Հայ-բյուզանդական սահմանամերձ տարածքներում հավատքային, մշակութային և լեզվական տեսանկյուններից ընթացել է հայկական սուբստրատի որոշակի նույնացում հունա-բյուզանդական աշխարհի հետ»⁷:

Եվ երկրորդ, թեև «տիրապետող հայ քաղկեդոնական եկեղեցին արտահայտել է Հայաստանի և հայ ժողովրդի շահերը և հաղորդության մեջ է եղել հակաքաղկեդոնական հայերի հետ», այդուամենայնիվ, այն «ապրիորի երկրորդական է համարվել հայ ժողովրդի կյանքում»: Այնինչ հայ-քաղկեդոնական եկեղեցին «...ապահովել է Բյուզանդիայի և Հայաստանի, Հայաստանի և Վրաստանի շարունակական շփումները և բյուզանդական մշակութային շրջանի երկրներում ստեղծել է յուրատիպ մշակութային միջավայր, որը պահպանվել և զարգացել է հարյուրամյակների ընթացքում»⁸:

Ինչ խոսք, վարկածային այդ պնդումները բնագրային լուրջ հիմնավորման կարիք ունեն: Եվ այդ կապակցությամբ հեղինակը ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ քրիստոնեական Արևելքում, հատկապես Հայաստանում, Վրաստանում և Բյուզանդական կայսրության կյանքում հայ ազգաբնակչության ուսումնասիրությունը բախվում է երկու հիմնական բարդությունների՝ տարալեզու (հայկական, հունական, վրացական, արաբական, ասորական) տեղեկությունների սփռվածության, բազմաժանր (պատմական ժամանակագրություններ, սրբերի վարք, աստվածաբանական և վիճաբանական տրակտատներ, էպիգրաֆիկա և այլն) սկզբնաղբյուրների առկայության, ինչպես նաև՝ հետազոտողների կանխակալության

⁵ Арутюнова-Фиданян 2003, 33. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2004, 57:

⁶ Տե՛ս Арутюнова-Фиданян 2004, 56-57, 135. Арутюнова-Фиданян 2009, 8. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2010, 9:

⁷ Арутюнова-Фиданян 2009, 8.

⁸ Арутюнова-Фиданян 2007, 324-325. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2013, 10:

հետ⁹: Եվ փորձելով հաղթահարել վերոնշյալ բացը՝ Վ. Հարությունովա-Ֆիդանյանը առաջնորդվում է ոչ թե «տարալեզու տեղեկությունների և բազմաժանր սկզբնաղբյուրների» համեմատական անաչառ վերլուծությամբ, այլ կողմնակալ և ուղղորդված ուսումնասիրությամբ: Նրա աշխատանքների քննական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այդ գործընթացում հեղինակը հետապնդել է մեկ հիմնական նպատակ՝ *ընտրովի փաստերի*, ինչպես նաև *հիմնադրուկ ենթադրությունների* մեկնաբանությամբ և ընդհանրացմամբ «պատմականորեն հիմնավորել» հայ քաղկեդոնականների առանձնահատուկ դերը հայ ժողովրդի կյանքում, բյուզանդական համագործակցության երկրների և բյուզանդական մշակութային շրջագծում¹⁰:

Հեղինակի ընտրած վերլուծական ուղին բացատրվում է նրանով, որ այդ գործում նա *անառարկելի առաջնություն է վերապահում քաղկեդոնական բնագրերին*, իսկ այլ՝ հատկապես հակաքաղկեդոնական սկզբնաղբյուրների նկատմամբ դրսևորում է պատմական իրականությունը շրջանցող մոտեցումներ: Այդպես է ձևավորվել հայ քաղկեդոնական եկեղեցու և հայ քաղկեդոնականների մասին նրա ելակետային հետևյալ պնդումը. «Միջին դարերում Հայաստանում միասնական ազգության շրջանակում պահպանվել էին հասարակական կյանքում նույնատիպ՝ առնվազն երկու կրոնական ազդեցիկ ուղղություններ Քաղկեդոնի ժողովը մերժող Հայ Եկեղեցին և քաղկեդոնականներ, որոնք նույնպես եկեղեցական կառույց ունեին»¹¹: Ընդ որում, այդ հարցում նրա «հիմնավորումներից» մեկն էլ այն է, թե իբր «Հայաստանում դավանական հակամարտության պատմության վաղ փուլում քաղկեդոնականությունը և հակաքաղկեդոնականությունը երկար ժամանակ հավասարազոր էին»¹²:

Հիմնահարցի լուծման Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հայեցակարգը բնորոշող առանձնահատկություններից մեկն էլ այն համոզումն է, որ «VI դարում Տիեզերական եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու միջև տեղի ունեցավ պառակտում, քանի որ Հայ Եկեղեցին հրաժարվեց ընդունել Քաղկեդոնի ժողովի սահմանումները: Հայ ազգության զգալի մի հատ-

⁹ Տե՛ս Арутюнова-Фиданян 1994, 58. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2010, 7:

¹⁰ Տե՛ս Арутюнова-Фиданян 2008, 16:

¹¹ Арутюнова-Фиданян 2001, 326. Այս գաղափարը անփոփոխ կրկնվում է հեղինակի մի քանի տասնյակ այլ հոդվածներում ևս:

¹² Арутюнова-Фиданян 1971, 89. Арутюнова-Фиданян 2003, 33. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2010, 8:

ված հաղորդության մեջ մնաց Տիեզերական Եկեղեցու հետ և անցավ Կոստանդնուպոլսի պատրիարքության ենթակայության տակ: Այդուամենայնիվ, Կոստանդնուպոլսի պատրիարքության ճնշող մեծամասնությունը կազմող հույներից հայերի (գլխավորապես դա Բյուզանդական կայսրության արևելյան պրովինցիաների ազգաբնակչությունն էր Փոքր Ասիայում և Հյուսիսային Միջագետքում) ազգային և լեզվական տարբերությունները հանգեցրեցին հայ-քաղկեդոնականների որոշակիորեն յուրատիպ դիրքի պահպանմանը¹³: *Թողնենք մի կողմ այն փաստը, որ այս պատմական փուլում Կ. Պոլսի աթոռը դեռևս իրեն «տիեզերականություն» չէր վերագրել*: Այս պարագայում բացարձակ մերժելի է այն, որ 4 մենագրություններից ու մի քանի տասնյակ հոդվածներից և ոչ մեկում Վ. Հարությունովա-Ֆիդանյանը չի անդրադառնում (գուցե՛ն՝ միտումնավոր) հիմնահարցի հետ անքակտելի կապ ունեցող հետքաղկեդոնական շրջանի քրիստոնեական Արևելքի դավանական իրավիճակի քննությանը: *Նրա համար աներկբա է միայն գիտական լեզվին անհարիր մեկ բան, որ Հայ եկեղեցին «միաբնակ է», իսկ Բյուզանդական եկեղեցին, կամ որ նույնն է՝ «Կ. Պոլսի տիեզերական պատրիարքությունը» կամ «տիեզերական ուղղափառությունը»՝ իր դավանորդներով միակ ճշմարիտ հավատքի կրողն է*: Դրանով պետք է բացատրել նրա կողմից ընդգծված դավանական երանգավորում ունեցող «միաբնակ եկեղեցի», «միաբնակություն», «հայ միաբնակներ» և նման եզրերի շարունակական կիրառումը:

Եվս մեկ առանձնահատկություն: Հեղինակը լիովին շրջանցում է Հայաստանում քաղկեդոնականության տարածման արտաքին գործոնների ուսումնասիրությունը: Հարկ եղած պարագայում նման վերլուծությունը նրա կողմից փոխարինվում է XX դ. սկզբին Ն. Մառի կողմից հայ քաղկեդոնականների մասին պնդումները վկայակոչելով, թեև երբեմն հիշում է նաև, որ դրանք վիճաբանական են¹⁴: Ու թեև նա անդրադարձել է նաև այն իրողությանը, որ հայ-քաղկեդոնականների «յուրատիպ դիրքը» պայմանավորված է եղել արտաքին գործոններով¹⁵, սակայն դրանք գնահատել է միայն Բյուզանդական կայսրության կողմից «հմտորեն կառուցված»

¹³ Арутюнова-Фиданян 2001, 326:

¹⁴ Տե՛ս, օրինակ, Арутюнова-Фиданян 2007, 325:

¹⁵ Նա չի մերժում այն փաստը, որ 591 թ. Հայաստանի բաժանումից հետո «...կայսրությունը ստացավ Հայաստանի մեծ մասը և պահանջեց, որ այդ տարածքում բնակվող հայերը ընդունեն Քաղկեդոնի ժողովը», Арутюнова-Фиданян 1971, 87:

սահմանամերձ տարածքների՝ այսպես կոչված, «կոնտակտային գոտու» հոլովությամբ: «Միջնադարյան բազմազգ կայսրությունները, - այդ կապակցությամբ գրում է Վ. Հարությունովա-Ֆիդանյանը, - այնպիսին, ինչպիսին Բյուզանդիան էր, շրջապատված էին սահմանամերձ գոտիներով, որոնց միջոցով իրականանում էր նրա ազդեցությունը հարևանների վրա և յուրացվում էր սահմանակից երկրների մշակույթը»¹⁶: Բայց մշակութային փոխադարձ հաղորդակցության և փոխներթափանցման այդ երևույթը հնարավոր և իրական կարող էր դառնալ միայն այն դեպքում, եթե դրանք տեղի ունենային բնականոն և երկկողմանի զարգացման մեջ: Անտեսելով դա՝ հեղինակը շրջանցում է նաև այն փաստը, որ կրոնական հարցում կայսրության քաղաքականությունը անփոփոխ կերպով հենված է եղել ոչ թե երկխոսության, այլ միակողմանիության, բռնության և հարկադրանքի վրա:

Դա չի նշանակում, որ բոլոր քաղկեդոնական հայերը կրոնափոխ են եղել հարկադրանքի միջոցով: Անշուշտ, եղել են նաև կամավոր ընտրություն կատարողներ: Բայց նույնքան անառարկելի է, որ բյուզանդական Հայաստանում քաղկեդոնականությունը ներդրվել է քողարկված կամ բացարձակ հարկադրանքով: Այդ տեսանկյունից կատարյալ հիմնազուրկ է Վ. Հարությունովա-Ֆիդանյանի այն պնդումը, որ «ձգտելով ոչնչացնել կայսերական ծայրագավառների անհատական պատկերը», հայ-բյուզանդական հարաբերությունների գոտի ստեղծելու առաջին և վճռական քայլը կատարել է Հուստինիանոս I կայսրը¹⁷: Պատահական չէ նաև այն, որ հեղինակը շրջանցում է կայսեր կրոնական քաղաքականությունը բնութագրող բյուզանդական աղբյուրները, մասնավորապես այն փաստը, որ Կ. Պոլսի 336 թ. սինոդական ժողովից հետո Հուստինիանոսի հրովարտակով ամենուր քաղկեդոնականություն պարտադրվեց, որ դրանից հետո «...բոլոր եկեղեցիներում բացահայտ դավանում են Քաղկեդոնի ժողովը, և ոչ ոք չի համարձակվում այն բանադրել, իսկ այլ կերպ մտածողներին հազարավոր միջոցներով հարկադրում էին համաձայնության գալ (ընդգծումը մերն է՝ Լ.Ք.)»¹⁸:

¹⁶ Арутюнова-Фиданян 1994, 14. Арутюнова-Фиданян 2002, 58. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2008, 16 և այլն:

¹⁷ Տե՛ս Арутюнова-Фиданян 1971, 87. Арутюнова-Фиданян 2002, 63-64:

¹⁸ Евагрий Схολастик 2010, 289. Այդ քաղաքականության հետևանքով կայսրությունում տեղի ունեցավ նաև քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հոսանքների վերջնական պառակտումը, տե՛ս Frend 1979, 275-276:

Վ. Հարությունովա-Ֆիդանյանի՝ «Քաղկեդոնական հայ եկեղեցու» մասին հայեցակարգի քննադատությունը

Հպանցիկ վերլուծությունն անգամ թույլ է տալիս հավաստել, որ «հմտորեն կառուցված սահմանամերձ տարածքների» մասին հեղինակային հիմնադրույթը հակապատմական է և նպատակավրեպ: Անհիմն է նաև այդ գոտում «հավատքային փոխազդեցություններ» որոնելը, քանի որ այդ մոտեցման դեպքում բացարձակ անտեսվում են դավանական պայքարի բնորոշ առանձնահատկությունները: Ահա թե ինչու արմատական վերանայման և էական ճշգրտման կարիք ունի հեղինակի բազմիցս հնչեցրած այն տեսակետը, թե իբր «VII դ. կեսերին դառնալով տիրապետող դավանանք՝ քաղկեդոնականությունը հաղթեց Հայաստանում»¹⁹, որ Հայաստանում «VI–VII դդ. վերջին քաղկեդոնականությունը պաշտոնական կրոնի կարգավիճակ է ունեցել...»²⁰:

Եվս մեկ դիտարկում: Շուրջ 50 տարի հայ քաղկեդոնականների հիմնահարցն ուսումնասիրող Վ. Հարությունովա-Ֆիդանյանը²¹, թեև չի մերժում, որ «...Հայաստանը VI–VII դարերում բյուզանդական պրովինցիա էր», սակայն լռության է մատնում այն փաստը, որ թեև *տարածքում վարչական հարկադրանքով քաղկեդոնականությունը պարտադրվել է, այդուամենայնիվ, զանգվածային տարածում չի ունեցել, հետևաբար, չէր կարող նաև համահայկական երևույթ լինել*: Անկասկած, այդ պատճառով է նաև, որ նա միտումնավոր շրջանցում է բյուզանդական Հայաստանում քաղկեդոնականության արմատավորման պատճառների ուսումնասիրությունը և այդ հիման վրա շարունակում է պնդել իր չհիմնավորված դրույթ-կարգախոսը՝ «Հայաստանում հաղթանակած քաղկեդոնական եկեղեցու» տեսակետը: Տարօրինակ է նաև այն, որ հեղինակի՝ «Հայաստանում գերիշխող

¹⁹ Տե՛ս Арутюнова-Фиданян 2004, 57, Арутюнова-Фиданян 2007, 326, Арутюнова-Фиданян 2009, 7-8: Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2013, 11 և այլն:

²⁰ Арутюнова-Фиданян 1994, 56, Арутюнова-Фиданян 2002, 69, Арутюнова-Фиданян 2004, 134-136, Арутюнова-Фиданян 2007, 331-332. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2009, 7-8 և այլն:

²¹ Նա հավաստում է, որ հայ քաղկեդոնականների հիմնախնդիրներով զբաղվել է դեռևս 1970-ական թթ., երբ Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի հանձնարարությամբ զբաղվել է հայ քաղկեդոնականների սկզբնաղբյուրների մշակման և հրատարակության նախագծով, այդ շրջանակում հրատարակել է երկու մենագրություն, իսկ ավելի ուշ՝ նաև մի քանի տասնյակ հոդվածներ, տե՛ս Арутюнова-Фиданян 1999, 70:

քաղկեդոնական եկեղեցու» մասին տեսակետը հիմնավորելու «միակ» և «բացառիկ» արժեք է համարվում քաղկեդոնական «Narratio»-ն:

Ավելին, սեփական հայեցակարգի «հիմնավորման» գործում նա չի խորշում անգամ կամայական հավելագրումներ կատարել քաղկեդոնական նշյալ վավերագրում, որը կարելի է փաստել «Narratio»-ի բնագրի և թարգմանությունների համեմատականով.

Narratio de rebus Armeniae		
Համեմատական բնագիր (Ժ. Գարիթ) ²²	Հ. Բարթիկյանի թարգմանություն ²³	Վ. Հարությունովա- Ֆիդանյանի թարգմանություն ²⁴
«109 Μετά δε την τούτου τελευτήν, προσελάβετο ο Χοσρόης ο βασιλεύς Περσών την χώραν Αρμενίας. 110 ότε και ο αιρετικός Αβραάμ κατέστη καθολικός». «111 και τω αυτώ έτει κατηνάγκασε τους επισκόπους και πρεσβιτέρους και ηγουμένους αναθεματίσαι την εν Χαλκηδόνι σύνοδον η εκχωρήσαι από της χώρας , οι δε ανεθεμάτισαν και έπαυσεν η αντιλογία».	«Նրա վախճանից հետո Պարսից Խոսրով արքան գրավեց Հայոց աշխարհը: Դա այն ժամանակ էր, երբ հերետիկոս Աբրահամը կաթողիկոս դարձավ: Այդ նույն տարին նա ստիպեց եպիսկոպոսներին, երեցներին և վանականներին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դեպքում հեռանալ երկրից: Նրանք նզովեցին, և վեճը դադարեց»:	«§ 109 Նրա [Մավրիկիոսի] մահից հետո պարսից Խոսրով արքան գրավեց Հայոց աշխարհը, § 110 այդ ժամանակ էլ հերետիկոս Աբրահամը կաթողիկոս դարձավ, § 111 և նույն թվականին նա [իր կաթողիկոսության] եպիսկոպոսներին, հոգևորականներին և վանականներին ստիպեց նզովել Քաղկեդոնի ժողովը կամ հեռանալ երկրից: Նրանք նզովեցին, և վեճը դադարեց»:

Եվ «հայագետ, կովկասագետ ու բյուզանդագետ» Վ. Հարությունովա-Ֆիդանյանը տեքստում ներդնելով [իր կաթողիկոսության] հավելումը, այն «պատմական փաստ» համարելով՝ պնդել է, որ «Ավանի քաղկեդոնական կաթողիկոսությունը բազմաթիվ հետևորդներ ուներ նաև Հայաստանի պարսկական հատվածում», որի պատճառով Աբրահամ Աղբաթանեցին «[իր կաթողիկոսության] եպիսկոպոսներին, հոգևորականներին և վանականներին հարկադրել է բանադրել Քաղկեդոնի ժողովը կամ հեռանալ երկրից»²⁵: Այդ միտքը անվերապահորեն մերժվում է «Գիրք Թղթոցի»

²² Garitte 1952, § 109-111, 41.

²³ Բարթիկյան 1962, 467:

²⁴ Арутюнова-Фиданян 2004, 181, 183. Շեղագրով նշվածները Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հավելագրումներն են:

²⁵ Арутюнова-Фиданян 1994, 61. Հմնտ. նաև Арутюнова-Фиданян 2010, 8:

«Ձեռնարկ՝ զոր ետուն Աբրահամու Հայոց Կաթողիկոսի ի միաբանութեանն աշխարհիս Հայոց, այնոքիք որք էին ընդ իշխանութեամբ Հռոմոց ի թագավորութեանն Մարկան» վավերագրով: Նրանում հիշատակվում է, որ Մավրիկիոս կայսեր վախճանից հետո հայ հոգևորականներին, «ուղղափառ իշխաններին և աշխարհիկներին» են ներկայացել Ավանի կաթողիկոսության եպիսկոպոսները՝ «այլ վանից երիցմամբ հանդերձ» և «...յանդիման մեր զբարեպաշտութիւն խոստովանեցին, նզովելով նոյնաձեւս ըստ երանելի հարցն մերոց զամենայն հերձուածողս, ...եւ գլար ժողովն Քաղկեդոնի, եւ զպիղծ տումարն Լեւոնի: Եւ աղաչանս մատուցանելով առաջի մեր, խառնել զինքեանս ի միաբանութիւն եկեղեցւոյ ճշմարիտ հաւատին Քրիստոսի. եւ ասացին միաբանութեամբ ամենեքեան, թէ զխոստովանութիւն եւ զսահման հաւատոյ, զոր հաստատեցին երանելի հարքն մեր, անշարժ պահեսցուք առաջի Աստուծոյ եւ հոգետր հարանցդ մերոց, եւ զապաշխարութիւն զոր տայք մեզ, յաւժարութեամբ ընդունիմք, եւ կամաք կատարեմք, եւ ի հաղորդութենէ նզովելոցն ամենեւին հեռանամք»²⁶:

Քաղկեդոնական հայ եկեղեցու հարացույցը հիմնավորելու միտումով՝ Վ. Հարությունովա-Ֆիդանյանը, պատմական էքսկուրս կատարելով, գրում է. «Հայաստանի հավատքային պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Քաղկեդոնի ժողովի մերժումը միաժամանակյա ակտ չէ, այն երկարատև գործընթաց էր: VI դ. Դվինում կայացած ժողովների (506, 508, 555, 584, 607, 609, 645, 648, 688, 720 թթ.) որոշումները հաջորդաբար մշակել են Հայ Եկեղեցու քրիստոսաբանական վարդապետությունը»²⁷: Այն տպավորությունն է առաջանում, որ նա այնքան է տարված Հայաստանում քաղկեդոնական եկեղեցի «հաստատելու մոլուցքով», որ մոռանում կամ միտումնավոր անտեսում է այն փաստը, որ V դ. *երկրորդ կեսից մինչև VII դ. 80-ական թվականներն ընկած շրջանում քաղկեդոնական դավանանքը հիմնավորելու համար բյուզանդական աստվածաբանական միտքը նույնպես որոնումների մեջ է եղել, և որ միայն VII դ. 80-ական թվականներին է վերջնական տեսք ստացել քաղկեդոնական աստվածա-*

²⁶ Տե՛ս Գիրք Թղթոց 1994, 298-299: Ապաշխարողները հավաստել են նաև. «Եւ եթէ խաբէութիւն ինչ իցե ի կամս ուրուք, նզովեսցի հոգով եւ մարմնով յամենասուրբ Երրորդութենէն»: Հավաստվում է նաև, որ այդ ամենից հետո «Եւ ընկալեալ զնոսա ապաշխարութեամբ, բեռն ինչ եւ մեր բառնալով զնոցա, ըստ գրեցելումն. կնքեցալ ձեռնարկս այս ի նոցանէն յանդիման մեր ամենեցուն, վկայութեամբ սրբոյ Երրորդութեանն...», Գիրք Թղթոց 1994, 299:

²⁷ Арутюнова-Фиданян 2010, 8.

բանությունը: Եվ այդ համատեքստում ինքնին հասկանալի է, որ ժողովական կարգով Հայ եկեղեցին ևս պետք է անդրադարձ կատարեր բյուզանդական աստվածաբանական այդ փնտրտուքներին և դավանական ցանկացած նոր լուծման հանդեպ արտահայտեր իր դիրքորոշումը²⁸:

Այդ փորձերի հետ է սերտաճում նաև հեղինակային այն պնդումը, որ Քաղկեդոնի ժողովից 30 տարի անց Հայ եկեղեցու կողմից ընդունելի է դարձել Ձենոն կայսեր «Հենոտիկոնը» (482), որը կոչված էր հաշտեցնել ժողովի կողմնակիցներին և հակառակորդներին, իսկ Դվինի Երկրորդ ժողովում (555), դատելով ժողովի արձանագրությունից, հայերը դատապարտել են նեստորականությունը և ոչ թե Քաղկեդոնը²⁹: Այս պարագայում ևս «տիեզերական ուղղափառության» ջատագով Վ. Հարությունովա-Ֆիդանյանը իր նախընտրելի դավանական հոսանքից յուրացրել է պատմական իրողությունների նկատմամբ անապացույց և հիմնազուրկ մեղադրանքներ հրապարակելը և եզրահանգումներ կատարելը:

Միամիտ կյիներ ենթադրել, որ նա իրապես տեղյակ չէ այն փաստին, որ Ձենոն կայսեր «Հենոտիկոնը» միտված էր հակամարտող հակաքաղկեդոնական և քաղկեդոնական հոսանքները հաշտեցնել միայն առաջին երեք Տիեզերական ժողովների դավանանքի շուրջ: Նրանում բացակայում էր Քաղկեդոն անունն անգամ, և դա էր պատճառը, որ ավելի ուշ այդ հրովարտակը որակվեց «հակաքաղկեդոնական», այդ իսկ պատճառով Ձենոն կայսեր անունը դուրս հանվեց քաղկեդոնական դիպտիխներից: Եվ երկրորդ, «Հենոտիկոնի» ընդունումով Հայ եկեղեցին մեկ անգամ ևս հավաստել է իր հավաքային անփոփոխ դիրքորոշումը առաջին երեք տիեզերական ժողովների նկատմամբ:

Հօգուտ իր տեսակետի հեղինակը վկայակոչում է մեկ այլ «պաշտպանական մոտեցում» ևս և գրում է. «571 թ. Հովհաննես կաթողիկոսը և Վարդան Մամիկոնյանը մեկնեցին Բյուզանդիա և քաղկեդոնականություն ընդունեցին, իսկ 591 թ., ի հակադրություն Դվինի միաբնակ կաթողիկոսության, Բյուզանդիայի հավանությամբ, Ավանում հիմնադրվեց քաղկեդոնա-

²⁸ Անառարկելի այդ իրողության մասին վկայում են անգամ քաղկեդոնական ջատագովները: Մասնավորապես, Յ. Մելենդորֆը հավաստում է, որ VI դ. 20-ական թթ. անգամ Քաղկեդոնի կողմնակիցները միասնական աստվածաբանական դիրքորոշում չեն ունեցել, Мейендорф 2000, 77:

²⁹ Арутюнова-Фиданян 2010, 8: Նա նաև պնդում է հակառակը. «...միայն Դվինի երկրորդ ժողովում (554 կամ 555 թ.) հայերը դատապարտեցին Քաղկեդոնի ժողովը և կապերը խզեցին կայսերական եկեղեցու հետ», Арутюнова-Фиданян 1994, 60:

կան կաթողիկոսություն», որը բազմաթիվ հետևորդներ ուներ նաև պարսկահայ տարածքում³⁰: Շատ պարզունակ է ստացվում, Հովհաննես կաթողիկոսը և Վարդան Մամիկոնյանը մեկնել են Բյուզանդիա, որպեսզի քաղկեդոնականություն ընդունեն: Ոչ մի խոսք պատճառների մասին: Միտումնավոր շրջանցվում է նաև այն փաստը, որ Հովհաննես կաթողիկոսը Կ. Պոլսի պատրիարքի հետ հաղորդվելուց հետո, հայ հոգևոր դասի ընդդիմության պատճառով, այլևս Հայաստան չվերադարձավ:

Այժմ անդրադառնանք գլխավորին: Ի՞նչ կռվաններ է օգտագործում Վ. Հարությունովա-Ֆիդանյանը իր տեսակետը հիմնավորելու համար, թե շուրջ 300-ամյա դավանական անփոփոխ դիրքորոշում ունեցող, հանուն հավատի և Հայ Եկեղեցու անկախության V-VI դարերում կենաց և մահու պայքարի դուրս եկած հայ ժողովուրդը ինչպես դավանափոխվեց, ընդունեց քաղկեդոնականություն և «եկեղեցի կազմելով»՝ գերիշխող դիրք գրավեց հայոց հոգևոր կյանքում: Այդ հարցերի պատասխանը պետք է որոնել *հայ քաղկեդոնականության արտադավանաբանական և անդրմշակութային էության մասին* Վ. Հարությունովա-Ֆիդանյանի յուրատիպ տեսակետի հոլովությամբ, որի մասին նա գրում է. «...հայ քաղկեդոնականների հիմնահարցը ամենևին էլ չի հանգում միայն Քրիստոսի բնությունների շուրջ դավանաբանական վեճերին, այն ներառում է պատմամշակութային և քաղաքական բնույթի հարցերի լայն շրջանակ»³¹:

Հայ-բյուզանդական հարաբերությունների գոտում, գրում է նա, «Բյուզանդիան չէր ձգտում հեղինականացնել անեքսիայի ենթարկված տարածքները, բայց նրա ներկայությունը զգալի չափով ուժեղացնում էր հայ ուղղափառ համայնքի ծավալը և ազդեցությունը: *Հայ-բյուզանդական հարաբերությունների գոյու գլխավոր արդյունքը ոչ թե ազգային, այլ հավաքային փոփոխություններն էին* (ընդգծումը մերն է՝ Լ.Ք.)»³²: Միա-

³⁰ Տե՛ս Арутюнова-Фиданян 2000, 74. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2010, 8 և այլն:

³¹ Арутюнова-Фиданян 1994, 56: Նա պնդում է նաև, որ Հայաստանում դավանական հակամարտող հոսանքները «...չեն սահմանափակվել Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելով կամ մերժելով», Арутюнова-Фиданян 1994, 57:

³² Арутюнова-Фиданян 1994, 56. Арутюнова-Фиданян 2000, 158. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2008, 97: Այս կապակցությամբ հայագետների, բյուզանդագետների և արևելագետների այն պնդումը, թե հայերը, որպես կանոն, եղել են միասնական ու ամբողջական ընդհանրություն, նա մերժում է այն հիման վրա, որ «...այդ ազգային միջավայրն ուներ տարբեր դավանանքով և համապատասխան մշակութային կար-

ժամանակ, նա պնդում է նաև, որ «Հայ քաղկեդոնականները (և դա նրանց առաջին և գլխավոր առանձնահատկությունն է) խումբ է, որն առանձնացել է լիովին կայացած ազգությունից»³³: Եվ փորձելով համատեղել քաղկեդոնական հայերին «բնորոշ այդ որակները»՝ հավաստել է, որ դեպի արևելք Բյուզանդիայի էքսպանսիայի շրջանում գերիշխել է կայսրության գաղափարական ազդեցությունը, որն էլ որոշել է ոչ միայն «հարաբերվող կողմերի մշակույթների զարգացման հետագա ուղիները», այլև «համաշխարհային պատմական գործընթացներում նրանց մասնակցության աստիճանը»³⁴: Ինչ վերաբերում է չափազանց կարևոր՝ հայ ժողովրդի՝ դարերով ամրագրված «կրոնական և մշակութային ինքնության» հարցին, հեղինակը պնդում է, որ «IV դարի սկզբին երկրի քրիստոնեականացումը, հանուն Խաչի առաջին պատերազմները մազդայական Իրանի, իսկ հետագայում՝ մուսուլմանական աշխարհի դեմ հայկական ինքնությունը լրացրեցին ցեմենտող նոր բաղադրատարրով»³⁵:

Եվ քանի որ հեղինակի ընկալման համաձայն՝ այդ պայքարին մասնակից են եղել նաև հայ քաղկեդոնականները, նա պնդել է. «Հայերի (քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների) համար ազգային ինքնության հենքային բաղադրիչները դարեր շարունակ անփոփոխ են մնացել՝ ընդհանուր ծագում, տարածք, պատմական գիտակցություն, լեզու և գրականություն, սովորույթներ և բարքեր, մշակութային ավանդություններ և հավատալիքներ»³⁶: Եվ այդուհանդերձ, նա ակամա տարբերակում է «հավասարազոր քաղկեդոնական և հակաքաղկեդոնական» հայերի ինքնությունը և պնդում. «...ուղղափառ հայերը իրենց նույնացրել են իրենց երկրի հետ, նրա հողեր արժեքների և առաջնահերթությունների հետ», ու թեև նրանք «նվիրված են եղել Հայոց երկրին», այդուհանդերձ, միաժամանակ, «Հայաստանը համարել են Բյուզանդական կայսրության մասը»³⁷:

գալիճակով երկու կրոնական ուղղություններ՝ միաբնակներ և քաղկեդոնականներ», տե՛ս Арутюнова-Фиданян 1994, 56:

³³ Арутюнова-Фиданян 1994, 65.

³⁴ Арутюнова-Фиданян 2012, 16.

³⁵ Арутюнова-Фиданян 2013, 9.

³⁶ Арутюнова-Фиданян 2011, 67.

³⁷ Տե՛ս Арутюнова-Фиданян 1994, 56. Арутюнова-Фиданян 2002, 69. Арутюнова-Фиданян 2004, 134-136. Арутюнова-Фиданян 2007, 331-332. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2009, 7-8 և այլն:

Այդ հարցում Վ. Հարությունովա-Ֆիդանյանի *սկեռուն երևակայությունը* երկնում է հայեցակարգային մեկ այլ պնդում, համաձայն որի, հայ-բյուզանդական հարաբերությունները «իրենցով պայմանավորել են նաև միջնադարյան հայերի բարդ ազգամշակութային գիտակցությունը», որը դրսևորվել է նրանում, որ «...մի մակարդակում նրանք իրենց գիտակցել են արևելաքրիստոնեական, իսկ հետագայում՝ բյուզանդական աշխարհի, մյուսում՝ հայ հասարակական մաս»³⁸: Եթե դա իրոք այդպես է, ապա բացատրելի է այն, թե ինչու «Որոշակի առումով հայ քաղկեդոնականները օտարվեցին հայոց աշխարհից, բայց կատարելապես յուրային չդարձան նաև բուն քաղկեդոնական (վրացական և բյուզանդական) աշխարհում»³⁹: Չէ՞ որ, ինչպես ինքն է պնդում, այնպիսի բազմազգ կայսրությանը, ինչպիսին Բյուզանդիան էր, «պետականությունից զատ է՛լ ավելի ամրապնդված էր իր քաղաքացիների հավատքային պատկանելությամբ»⁴⁰:

Եվ քանի որ Վ. Հարությունովա-Ֆիդանյանը տարված է բացառիկության հովերով, միանշանակ բացասական է գնահատում իր երևակայական, *կաթինեդային հայեցակարգին* հակադիր ցանկացած այլ տեսակետ: Վկայությունը վերաբերմունքն է Ն. Գարսոյանի այն պնդման վերաբերյալ, որ «...հայերին օտար է եղել իրական, Ուղղափառ, Բյուզանդական ինքնությունը» ("authentic, Orthodox, Byzantine identity")⁴¹: Այդ հարցում հեղինակի եզրահանգումը բավական պերճախոս է. «...այլ կերպ՝ նրանք, ովքեր ուղղափառություն են ընդունել, «հայ չեն»: Միանգամայն միջնադարյան տեսակետ»⁴²: Եվ «ժամանակակից մեկնաբանության» դիրքերից պնդում է, որ այդ մոտեցումը մերժելի է նաև այն պատճառաբանությամբ, թե «...հայկական ինքնությունը խստորեն կապելով Հայ Եկեղեցու պատկանելության հետ, որը ինքնուրույն ազգային քաղաքականություն է մշակել միայն VIII դ. սկզբին, անտեսում է միջնադարյան ինքնագիտակցության բարդությունը»⁴³: Իսկ ըստ նրա, ինչո՞ւմ է դրսևորվել այդ բարդությունը: Պատասխանը հետևյալն է. «...միայն VIII դարում, արաբական իշխանության հաստատումից և Հայաստանի ու Բյուզանդիայի սերտ հարա-

³⁸ Арутюнова-Фиданян 2007, 327.

³⁹ Арутюнова-Фиданян 2011, 68.

⁴⁰ Арутюнова-Фиданян 2011, 68.

⁴¹ Garsoïan 1998, 124.

⁴² Арутюнова-Фиданян 2007, 325, Арутюнова-Фиданян 2011, 67.

⁴³ Арутюнова-Фиданян 2007, 325.

բերությունների խզումից հետո հայերն անցան եկեղեցական ինքնուրույնության քաղաքականության»⁴⁴, այլ կերպ ասած՝ Հայ եկեղեցու և ազգային ինքնության կապը հրապարակ է իջել VIII դարում, որից *իմպլիցիտ հետևում է նաև*, որ IV-VII դդ. հայ ժողովուրդը և հայ հավատացյալները ունեցել են երկակի ինքնություն, այսինքն՝ եղել են միաժամանակ հայկական և արևելաքրիստոնեական-բյուզանդական ինքնության կրողներ:

Առանձնահատուկ են նաև Վ. Հարությունովա-Ֆիդանյանի հայեցակարգում տեղ գտած ստահոդ և շինծու անճշտությունները: Այսպես, նրա «սևեռուն մտքերի արգասիք» դարձած և բազմիցս կրկնվող պնդումներից մեկը հոչակում է. «Հայ քաղկեդոնականների ավանդության հիմնական գաղափարն այն էր, որ Հայ եկեղեցին, չնայած Քաղկեդոնի ժողովում նրա նվիրապետների պատահական բացակայությանը և ոչ նվազ պատահական բաժանմանը Տիեզերական եկեղեցուց, երբեք նրանից վերջնականապես չի պառակտվել և անգամ ձգտել է միավորվել նրա հետ, ընդ որում, ոչ թե քաղաքական ճնշումներով (ինչպես հակաքաղկեդոնականներն էին պնդում), այլ՝ կամավոր»⁴⁵: «Հայագետ և բյուզանդագետ» հեղինակի հայեցակարգը բնորոշում է նաև այն, որ այդ պարագայում նա ամենևին չի անդրադառնում այն հարցին, թե ինչ «պատահականության» մասին է խոսքը, և ինչն էր «պատահականությունների» այդ շղթայի պատճառը: Ինչ վերաբերում է «Տիեզերական եկեղեցուց» վերջնականապես պառակտված չլինելու և անգամ «կամավոր միավորման փորձերին», այստեղ ամեն ինչ հստակ է. այդպես է պնդում քաղկեդոնական «Narratio»-ն, և այդ տեսակետն ընկած է նաև քաղկեդոնականության և գոյություն չունեցող «տիեզերական ուղղափառության» ջատագով Վ. Հարությունովա-Ֆիդանյանի տեսակետի հիմքում:

Հեղինակի մտքի «գոհարներից» հիշատակելի է ևս մեկ պնդում: VII դ. հայ հոգևոր իրականության քննությունը նրան բերել են այս հետևությանը. «Հայկական մշակույթի ուղղափառ տարբերակը այդ ժամանակահատվածում հասնում է ազդեցության գագաթնակետին. Հայ եկեղեցին հաղորդության մեջ էր գտնվում Կոստանդնուպոլսի հետ, VII դարում հայոց պատրիարքական աթոռը զբաղեցնում էին երեք քաղկեդոնական կաթողիկոսներ՝ Եգր Փառաժնակերտցին (630-641), Ներսես III Շինարարը (641-

⁴⁴ Арутюнова-Фиданян 2001, 326. Арутюнова-Фиданян 2007, 332.

⁴⁵ Арутюнова-Фиданян 2001, 326.

661) և Սահակ III Ձորոփորեցին (677-703)»⁴⁶: Եվ այսպես, ստացվում է, որ «միաբնակ Հայ եկեղեցին» 70 և ավել տարիներ ղեկավարվում էր «քաղկեդոնական կաթողիկոսների կողմից», որ այդ տարիներին այն հաղորդության մեջ էր Կ. Պոլսի աթոռի հետ: Իսկ թե դա ինչպես էր հնարավոր, կամ ինչպես է դա պատկերացնում շուրջ 50 տարի հայ քաղկեդոնականության հիմնահարցի ուսումնասիրության մեջ «մասնագիտացած» հեղինակը, բացարձակ լռություն է: Չի կարելի չանդրադառնալ նաև Վ. Հարությունովա-Ֆիդանյանի ևս մեկ հանճարեղ «հայտնագործությանը»: Խոսելով Կյուրիոն վրացու նկատմամբ Դվինի 609 թ. ժողովի դիրքորոշման մասին՝ նա հավաստում է, որ դա կատարվել է քաղկեդոնականների «վտանգավոր ազդեցության» պատճառով: Իսկ պատճառը, գրում է նա, այն էր, որ «Այդպիսի վտանգ, անկասկած, գոյություն ուներ. Եզր կաթողիկոսի (630-641 թթ.՝ Լ.Ք.) օրոք Կարնո ժողովում ընդունվել է քաղկեդոնական դավանական սահմանումը, իսկ Ներսես III կաթողիկոսը (641-661 թթ.՝ Լ.Ք.) Դվնո մայր եկեղեցում հռչակել է ուղղափառ հավատո հանգանակը»⁴⁷: Թե ինչ է «ուղղափառ հավատո հանգանակը», հեղինակը, բնականաբար, չի պարզաբանում: Նա բավարարվում է «ուղղափառ» եզրը նշելով, վստահ, որ ընթերցողը դրա տակ կհասկանա «տիեզերական» կամ «բյուզանդական» եկեղեցու հավատո հանգանակը: Վկայությունը հեղինակային այն հավաստումներն են, որ «Եզր կաթողիկոսը (630-640) և Ներսես III Շինարարը (641-661) Հովհան Մայրագոմեցու հետ բանավեճում *պաշտպանեցին քաղկեդոնական Հավարո Հանգանակը* (ընդգծումը մերն է՝ Լ. Ք.)»⁴⁸, ինչպես նաև այն, որ «Ներսես III-Կաթողիկոսը (641-661) Դվինի նույն եկեղեցում *հռչակել է Հավարո Հանգանակը ըստ Քաղկեդոնի ժողովի* (ընդգծումը մերն է՝ Լ.Ք.)»⁴⁹: Բայց այդ «տիեզերական» կամ «բյուզանդական» քաղկեդոնական եկեղեցին օգտագործում է բոլոր, այդ թվում և Հայ եկեղեցու կողմից ճանաչված և կիրառվող *ուղղափառ մեկ հանգանակ՝ Նիկիական Հավարո Հանգանակը*:

Քննական վերլուծությունը թույլ է տալիս փաստել նաև այն, որ իրականությանը լիովին անհարիր է Վ. Հարությունովա-Ֆիդանյանի կատարյալ անհիմն այն պնդումը, թե «հայ քաղկեդոնականները արտահայտել են

⁴⁶ Арутюнова-Фиданян 1994, 54-92. Арутюнова-Фиданян 2004, 134-136. Арутюнова-Фиданян 2009, 8. Հմմտ. նաև Арутюнова-Фиданян 2010, 9:

⁴⁷ Арутюнова-Фиданян 2010, 9.

⁴⁸ Арутюнова-Фиданян 2003, 39.

⁴⁹ Арутюнова-Фиданян 1994, 61.

Հայաստանի և հայ ժողովրդի շահերը և *հաղորդության* մեջ են եղել հակա-քաղկեդոնական հայերի հետ»: Չափազանց անորոշ և փաստականորեն հիմնավորված չէ նաև *հայ քաղկեդոնականների կողմից «յուրաքանչյուր մշակութային միջավայր» ստեղծելու պնդումը*: Փաստն այն է, որ Բյուզանդական կայսրության կրոնական քաղաքականությունը ունեցել է մեկ ուղղվածություն՝ դավանական հարցերում անվերապահ ենթարկումը Կ. Պոլսի պատրիարքությանը: Հետևաբար, խոսելի է ինչ-որ հայ քաղկեդոնական եկեղեցու մասին պնդումը, քանի որ եղել են Կ. Պոլսի պատրիարքությանը ենթակա քաղկեդոնական հայ համայնքներ: Առավել ևս, որ Կ. Պոլսի աթոռի կողմից ղեկավարվող քաղկեդոնականությունը իր էությամբ ո՛չ ազգային էր, և ո՛չ էլ «համադրական երևույթ», այլ միայն բյուզանդական:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք փաստել, որ «հայագետ, բյուզանդագետ և կովկասագետ» հորջորջվող Վ. Հարությունովա-Ֆիդանյանը, շուրջ 50 տարի զբաղվելով հայ քաղկեդոնականների հիմնահարցի ուսումնասիրությամբ, դա կատարել է կատարելապես ոտնակոխ անելով գիտական բարեխղճությունը: Ձեռնպահ մնալով նրա մասնագիտական որակի և արհեստավարժության մասին դատողություններ անելուց՝ նշենք միայն, որ հայ քաղկեդոնականների մասին նրա հայեցակարգային բոլոր պնդումները կանխակալ են, հիմնազուրկ և կառուցված են միայն ենթադրությունների և քաղկեդոնական «Narratio»-ի տվյալների վրա: Դրանով նա ոչ միայն նենգափոխել է պատմական իրականությունը, այլև նվազեցրել է Հայ եկեղեցու դերը և բազմաթիվ հարցերում այն ստորադասել է հայ քաղկեդոնականների երևակայական հոգևոր-մշակութային և մշակութային-քաղաքական արժեքներին: Եվ պատահական չէ, որ նրա «գիտական վաստակը» արժանացել է Ռուս Ուղղափառ եկեղեցու Մակարևյան ֆոնդի մեծ ոսկե մեդալի՝ «ուղղափառ ժողովուրդների պատմության մեջ ներդրած ավանդի», կարծում ենք նաև՝ «Ուղղափառ հանրագիտարանում» նրա հրատարակած հակահայ լուսանք-հոդվածների համար:

Գրականություն

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան» 639 էջ:

- Բարթիկյան Հ. 1962, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, N 6, էջ 457-470:
- Գիրք Թղթոց 1994 (երկրորդ հրատ.), Երուսաղեմ, Սրբոց Յակոբեանց տպ., 711 էջ:
- Արутюнова-Фиданян В.А. 1971, К вопросу об армянах-халкидонитах, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 85-98:
- Արутюнова-Фиданян В.А. 1980, Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.), Ереван, «Айастан», 212 с.
- Արутюнова-Фиданян В.А. 1994, Армяно-византийская контактная зона (X-XI вв.), Результаты взаимодействия культур, Москва, «Наука», 236 с.
- Արутюнова-Фиданян В.А. 1999, К вопросу о концепции контактной зоны (По поводу ст. В.П. Степаненко), Византийский временник, т. 59 (84), Москва, «Наука», с. 62-78.
- Արутюнова-Фиданян В.А. 2000, Авраам I Албатанеци, Православная энциклопедия, т. I, Москва, Церковно-научный центр «Православная энциклопедия», с. 158.
- Արутюнова-Фиданян В.А. 2001, Армяне-халкидониты. Православная энциклопедия, т. III, Москва, с. 326-329. Арутюнова-Фиданян В.А. 2001, Армяне-халкидониты. Православная энциклопедия, т. III, Москва, Церковно-научный центр «Православная энциклопедия», с. 326-329.
- Արутюнова-Фиданян В.А. 2002, Армения и Византия в VII в.: синтезная контактная зона, Византийский временник, т. 61 (86), Москва, «Наука», с. 58-70.
- Արутюнова-Фиданян В.А. 2003, К вопросу об армяно-халкидонской общине (VII в.), СПб., «Антидорон», с. 33-39.
- Արутюнова-Фиданян В.А. 2004, «Повествование о делах армянских» (VII в.), Источник и время, Москва, «Индрик», 272 с.
- Արутюнова-Фиданян В.А. 2007, Армяне-халкидониты: идентичность на стыке этноса и конфессии. Диалог со временем. Альманах интеллектуальной истории, вып. 21 (Специальный выпуск: Исторические мифы и национальная идентичность), Москва, изд. ЛКИ, с. 322-344.
- Արутюнова-Фиданян В.А. 2008, Езр Паражнакертци, Православная энциклопедия, т. XVIII, Москва, Церковно-научный центр «Православная энциклопедия», с. 97.
- Արутюнова-Фиданян В.А. 2008, Контактные зоны в системе «Византийского содружества государств», Русь и Византия: место стран византийского

- круга во взаимоотношениях Востока и Запада, Москва, ИВИ РАН, с. 15-17.
- Арутюнова-Фиданян В.А. 2009, Православные армяне и армяно-византийская контактная зона, «Вестник ПСТГУ», III: Филология, вып. 3 (17), с. 7-18.
- Арутюнова-Фиданян В.А. 2010, К вопросу о существовании Халкидонской Церкви в Армении, «Вестник ПСТГУ», серия III: Филология, вып. 4 (22), с. 7-22.
- Арутюнова-Фиданян В.А. 2011, На службе империи: Апокапы и Вхкаци, «Вестник ПСТГУ», Серия III: Филология, вып. 4 (26), изд. ПСТГУ, с. 66-76.
- Арутюнова-Фиданян В.А. 2012, Синтезная контактная зона: пространство и концепция, Древняя Русь и средневековая Европа: возникновение государств (материалы конференции), Москва, Институт всеобщей истории РАН, с. 13-19.
- Арутюнова-Фиданян В.А. 2013, Армяне-халкидониты, Терминология, «Вестник ПСТГУ». Серия III. Филология, вып. 5 (35), с. 9-20.
- Евагрий Схоластик 2010, Церковная история. Книги I-VI. Кн. IV, гл. 11, СПб., «Издательство Олега Абышко», 672 с.
- Мейендорф Иоанн, прот. 2000, Христос в восточном православном богословии, Москва, ПСТБИ, 318 с.
- Frend W.H.C. 1979, The rise of the Monophysite Movement. Chapters in the history of the church in the fifth and sixth centuries. Cambridge, XVII+405 p.
- Garitte G. 1952, La Narratio de rebus Armeniae. Edition critique et commentaire. Louvain, § 109-111, p. 257-261.
- Garsoïan Nina G. 1998, The Problem of Armenian integration into the Byzantine Empire, Studies on the Internal Diaspora of the Byzantine Empire (Ed. H. Ahrweiler, A. Laiou), Washington, p. 53-124.

«ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ»՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Լիզա Քարինյան

Ամփոփում

Հայ քաղկեդոնական եկեղեցուն և հայ քաղկեդոնականների հիմնահարցին նվիրված՝ Վ. Հարությունովա-Ֆիդանյանի մենագրությունների և մի քանի տասնյակ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ հիմնահարցերի ուսումնասիրության գործընթացում հեղինակն առաջնորդվել է ոչ թե գիտական անաչառությամբ, այլ կամայական և սուբյեկտիվ լուծումներով:

Հայ քաղկեդոնականների մասին նրա հայեցակարգային պնդումները կանխակալ են և հիմնազուրկ: Դրանք կառուցված են միայն ենթադրությունների և քաղկեդոնական աղբյուրների միակողմանի տեղեկությունների վրա: Իսկ հակաքաղկեդոնական աղբյուրները կա՛մ լռության են մատնվել, կա՛մ մեկնաբանվել են միմիայն հոգուտ իր «բացահայտումների և վերագնահատումների»: Հարությունովա-Ֆիդանյանի հայեցակարգում նենգափոխվել է պատմական իրականությունը, նվազեցվել Հայ Եկեղեցու պատմական դերը, այն ստորադասվել է հայ քաղկեդոնականների երևակայական հոգևոր-մշակութային և մշակութային-քաղաքական արժեքներին:

Բանալի բառեր՝ Հայ-բյուզանդական հարաբերություններ, քաղկեդոնականություն, հայ քաղկեդոնական եկեղեցի, «առնչությունների գոտի», կրոնական քաղաքականություն, հակաքաղկեդոնականություն, միաբնակություն:

КОНЦЕПЦИЯ «ХАЛКИДОНСКОЙ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ» В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН

Лиза Каримян

Резюме

Анализ монографий и десятков статей В. Арутюновой-Фиданян, посвященных исследованию вопросов, связанных с армянской халкидонитской церковью и армянами-халкидонитами, свидетельствует о том, что В. Арутюнова-Фиданян в своих работах была далека от научной объективности.

Анализ фактического материала приводит к заключению, что ее концептуальные рассуждения об армянах-халкидонитах предвзяты и необоснованны. Они базируются исключительно на односторонней информации, основанной на предположениях и на прохалкидонитских источниках, а наличие иных источников либо умалчивается, либо они комментируются в пользу ее «открытий и переоценок».

В выдвинутой ею концепции искажена историческая реальность и историческая роль Армянской церкви в угоду армян-халкидонитов с апелляцией к их воображаемым духовно-культурным и культурно-политическим ценностям.

Ключевые слова – армяно-византийские отношения, халкидонитство, армянская халкидонитская церковь, «контактная зона», религиозная политика, антихалкидонитство, монофизитство.

V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF "CHALCEDONIC ARMENIAN CHURCH"

Liza Karimyan

Abstract

The analysis of V. Arutyunova-Fidanyan's monographs and some dozen articles on the issue of the Armenian Chalcedonic Church and the Armenian Chalcedonians shows that the author was guided not by scientific objectivity, but by arbitrary and subjective solutions while studying the issue.

Based on the analysis of the factual material, it is substantiated that the author's concepts on the Armenian Chalcedonians are biased and baseless. They are merely grounded on the assumptions and one-sided information of Chalcedonian sources. Meanwhile, anti-Chalcedonian sources have either been silenced or commented only in favor of her "findings and reassessments".

It is also stated that in the concept under discussion the historical reality has been falsified, the historical role of the Armenian Church has been reduced and subordinated to the imaginary spiritual-cultural and cultural-political values of the Armenian Chalcedonians.

Key words – Armenian-byzantine relations, chalcedonism, Armenian chalcedonic church, "contact zone", religious policy, antichalcedonism, monophysitism.

XVI ԴԱՐԻ ՌԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայկարամ Հակոբյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4

Էլ. հասցե՝ haykaramhakobyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 14.12.2020, գրախոսվել է 10.03.2021,

ընդունվել է տպագրության 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-73

Ներածություն

Տասնվեցերորդ դարի Ռեֆորմացիան¹ վճռորոշ իրադարձություն էր Եվրոպայի համար: Այդ առումով կարևորվում է այն հանգամանքը, թե պատմական ինչ զարգացումների հետևանքն էր այն, և հաճախ շեշտադրվող՝ Կաթոլիկ եկեղեցու ներքին խնդիրներից զատ, արտաքին ինչ գործոններ նպաստեցին դրան: Ռեֆորմացիան Կաթոլիկ եկեղեցին բարեփոխելու նպատակով սկսված շարժում էր, որը մի շարք կրոնադավանական ուղղությունների սկզբնավորման պատճառ դարձավ: Այդ շարժման հետևանք կարելի է համարել այն, որ Կաթոլիկ եկեղեցին կորցրեց իր մենաշնորհատիրությունը: Ռեֆորմացիան կարելի է արտահայտել որպես «մարմնավորված երազանք, հույսի առարկա ու արտահայտություն և հասարակության գրեթե բոլոր հատվածներում վերարձագանքվող կարգախոսների միավորում»²:

Մինչև Ռեֆորմացիան Եվրոպայում հասարակությունը մի ընդհանրություն էր, և ազգայնական անջրպետներ չէին զգացվում: Տարբեր էին լեզուները, բայց այդ հանգամանքը էական նշանակություն չուներ: Այդ պատճառով էլ, օրինակ՝ Հաբսբուրգները³ կառավարում էին Իսպանիայում և միաժամանակ Ավստրիայում: Միջնադարում ապրող մարդկանց համար

¹ Ռեֆորմացիա՝ ծագում է լատիներեն reformatio բառից, որը նշանակում է՝ ուղղում, վերանորոգում, վերականգնում:

² Bardy, Tracy 1995, 1.

³ Անունն առաջացել է Հաբսբուրգ կամ Հաբիխտսբուրգ դոյակի անվանումից, որը կառուցվել է 1028 թ. Աարե գետի ափին՝ Հոենոսի հետ միացման վայրից ոչ շատ հեռու (Լեո 1985, 558):

կարևորագույն հանգամանքը քրիստոնյա լինելն էր: Կաթոլիկ եկեղեցին հասարակության կենտրոնում էր⁴: Եկեղեցին ղեկավարում էր կրթությունը, ուներ իր սեփական բազմաշերտ համակարգը և հաստատում էր հիմնական բարոյական սկզբունքները, որոնցով առաջնորդվում էր ողջ հասարակությունը: Եկեղեցին՝ որպես պահապան հավիտենական ճշմարտության, միջնորդի դեր էր կատարում հավատավոր մարդկանց փրկության համար:

Ռեֆորմացիայի ներքին պատճառները

Ամբողջ միջնադարում Կաթոլիկ եկեղեցին մեծ դեր է խաղացել Եվրոպայի հասարակական կյանքում, սակայն ժամանակի ընթացքում սկսել էր շեղվել իր հիմնական առաքելությունից: Այն դարձել էր ամենամեծ ավատատերերից⁵ մեկը, որի տարածքները Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, կազմում էին ընդհանուր օգտագործման հողատարածքների մինչև 1/4 մասը⁶: Կաթոլիկ եկեղեցուն պատկանող տարածքներում կիրառում էին նույն ճորտատիրական կարգերը, որոնք կիրառում էին այլ ավատատերեր: Այդ տարածքների նկատմամբ նկրտումներ ունեին ինչպես ազնվականները, այնպես էլ այդ հողերի վրա տքնող գյուղացիները:

Հռոմի պապի իշխանությունը աշխարհականացվել և վերածվել էր եսասեր բռնատիրության, որի լուծը գնալով դառնում էր ավելի ու ավելի անտանելի⁷: Պապականության վարկն ընկավ հատկապես 1492-1521 թթ. ընթացքում: Ալեքսանդր VII-ը հայտնի էր իր բազում անարդար գործերով, Հուլիոս II-ն ավելի շուտ քաղաքական և ռազմական գործիչ էր, քան հոգևոր հոտի հովիվ, իսկ Լևոն X-ն ավելի շատ հետաքրքրված էր դիցաբանական գրականությամբ և արվեստի վերածնունդով, քան կրոնով: Լևոնի մասին ասվում է, որ նա նույնիսկ կասկածում էր Ավետարանի պատմության ճշմարտացի լինելուն: Կաթոլիկ հոգևորականների կյանքը հասարակության մեջ դժգոհություն էր հարուցում⁸: Համաձայն ավանդական պատ-

⁴ Charles, Mircea 1987, 245.

⁵ Ծագել է միջին լատիներենի *feudum* բառից և փոխանցվել հին գերմաներենին, նշանակում է՝ հողատեր, կալվածատեր ազնվական (Գրիգորյան 1982, 111):

⁶ Տե՛ս Бэрдь 1987, 73:

⁷ Տե՛ս Schaff 1888, 7:

⁸ Տե՛ս Валентинович 2012, 22:

մագրության՝ «անբարոյականությունն ու ֆինանսական ազահությունն էին կարևոր գործոնները, որոնք պատճառ դարձան, որ սկսվեր 1517 թ. Ռեֆորմացիան»⁹: Կղերականության մեջ տարածվել էին տգիտությունն ու այլասերությունը¹⁰, վանականներին ու քահանաներին նախատում էին հարստություն դիզելու և ինդուլգենցիաների¹¹ վաճառքի համար:

Սկզբնական իմաստով ինդուլգենցիան կամ «ներման թուղթը» համարվում էր մեղավոր մարդուն եկեղեցու կողմից նշանակված ապաշխարանքի կրճատումը կամ թեթևացումը: Այդ թղթում նշվում էին այն օրերն ու տարիները, որոնց ընթացքում գործում էր տրված ներումը: Միջնադարում ինդուլգենցիա ստանալու եղանակներից էին ֆինանսական կամ գործնական մասնակցությունը հասարակական որոշակի գործերի: Այդ եղանակով Եվրոպայում կառուցվեցին բազում հիվանդանոցներ, տաճարներ, համալսարաններ, կամուրջներ և ճանապարհներ¹²: Այդ վարդապետության հիմքում ընկած էին քրիստոնյաների համերաշխությունը և Քրիստոսի խորհրդավոր մարմնի մի մասնիկը կազմելու գաղափարը: Ինդուլգենցիայի սկզբնական նպատակն այն էր, որ մեղք գործած հավատացյալները բարի գործերի կամ դրամական փոխհատուցման միջոցով արժանանային սրբերի աղոթքներին:

Սակայն «ներման թղթերի» հիմնական իմաստը կարճ ժամանակ անց խեղաթյուրվում է և դառնում հավատացյալներին շահագործելու միջոց: Կաթոլիկ հոգևորականները ինդուլգենցիաները վաճառում էին մահացած մարդկանց հարազատներին՝ խոստանալով, որ տվյալ անձի այն մեղքերը, որոնց համար նա չի ապաշխարել, թողնված կլինեն այս աշխարհում, և նա դրանց համար այլևս չի տանջվի քավարանում¹³: Ժողովրդին այդ կերպով կեղեքելու մեծագույն դրվագը պատահեց, երբ 1505 թ. Հուլիոս Բ պապը նախաձեռնեց Ս. Պետրոս տաճարի շինարարությունը: Այդ առիթով նա 1507 թ. հռչակեց մեղքերի «Հոբելյանական ներում» և հոգևորականներին իրավունք տվեց մեղքերից ազատ հռչակելու բոլոր նրանց, ովքեր ներման վկայականների համար մեծ գումարներ կվճա-

⁹ Douglas 1974, 2.

¹⁰ Տե՛ս Hillebrand 1996, 836, Գլնճյան 2015, 34:

¹¹ Առաջացել է լատիներեն *indulgere* բայից, որը նշանակում է ներողամտություն ցուցաբերել, հանդուրժել:

¹² Տե՛ս Рычков 2011, 135:

¹³ Տե՛ս Огицкий 1999, 90:

րեին¹⁴: Այդպես շահագործվում էր ժողովուրդը, և մեծանում էր դժգոհությունը եկեղեցու նկատմամբ:

Դժգոհության մեկ այլ աղիթ դարձավ ինկվիզիցիան¹⁵, այսպես կոչված, հավատաքննությունը: Եզրույթը լայն տարածում ուներ նաև ավելի հին ժամանակներում, երբ Կաթոլիկ եկեղեցին դեռ չէր հիմնել այդպիսի դատարաններ: Այդպես էին անվանում այն գործերի պարզաբանումը, որոնց ընթացքում հարցաքննում և տանջանքների էին ենթարկում հարցաքննվողին: Օրինակ՝ Իսպանիայում ինկվիզիցիան կատարվում էր հռոմեացիների օրինակով՝ «նույն կերպ էին քննվում գործերը և օգտագործվում էին նույն մեթոդները»¹⁶: Ինկվիզիցիան Հռոմեակաթոլիկ եկեղեցու կողմից օգտագործվող դատի մի ձև էր հերետիկոսությունները ճնշելու և արմատախիլ անելու համար: Կաթոլիկ հոգևորականները տանջաքննում էին նաև նրանց, ովքեր կախարդության և հոգեկանչության մեջ էին մեղադրվում¹⁷: Ինկվիզիցիայի առաջին դատարանը ստեղծվել է 1233 թ. Տոլուզում¹⁸: Այդ շարժումն արագ տարածվում է, և 5 տարի անց այդպիսի դատարաններ են բացվում Արագոնում, Գերմանիայում, Հոլանդիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և Ֆրանսիայում:

Ինկվիզիցիան եկեղեցական երևույթ էր, և դրա դատավորները երբեք չէին համարվում թագավորական պաշտոնյաներ, այլ անվանվում էին առաքելական հավատաքննիչներ: Աշխարհիկ պաշտոնյաները գործում էին միայն այն ժամանակ, երբ արդեն վճիռը կայացվում էր: Դատից հետո մեղավոր ճանաչվածներին կապում էին, ուղարկում զնդան, իսկ մի քանի ժամ անց բերում մահապատժի վայրը: Կաթոլիկներին խեղդում էին և միայն դրանից հետո այրում, իսկ ոչ կաթոլիկներին՝ այրում կենդանի վիճակում¹⁹: Անշուշտ, շատ դեպքերում ինկվիզիցիան մարդկանց վախի արձագանքն էր և աֆեկտի ազդեցության տակ կատարվող գործողություն: Ուշ միջնադարում ոչ թե հավատաքննիչներն էին վախեցնում վիուկների մասին պատմություններով, այլ գուշակությամբ և այլ երևույթներով զբաղվող անձինք իրենք էին հայտնում իրենց ծառայությունների մասին: Բայց,

¹⁴ Տե՛ս Գլնճյան 2015, 36:

¹⁵ Լատիներեն՝ inquisition. նշանակում է հետաքննություն, հետախուզություն (Esmain 2000, 85).

¹⁶ Григулевич 2006, 18.

¹⁷ Տե՛ս Бориэль 2010, 101:

¹⁸ Տե՛ս Скотт 2002, 93:

¹⁹ Տե՛ս Чубарьян 2004, 52:

մյուս կողմից էլ, թե՛ հոգևորական և թե՛ աշխարհիկ շատ կաթոլիկներ դիտմամբ սկսում էին կախարդներ, վիուկներ և հերետիկոսներ փնտրել նրանց մեջ, որոնց համարում էին իրենց հակառակորդը կամ թշնամին՝ հավատաքննության ահավոր դատարանին ենթարկելու համար: Այդպիսով, մահվան էին դատապարտվում բազմաթիվ անմեղ հավատացյալներ, իսկ քրիստոնեությունը մարդկանց աչքերում դադարում էր սիրո կրոն լինելուց:

Ռեֆորմացիայի արտաքին պատճառները

Եկեղեցու պատմության տեսակետից նայելիս վերոնշյալ փաստերը կարելի է անվանել XVI դ. Ռեֆորմացիայի ներքին պատճառներ, որոնք հանգեցնում էին Եկեղեցին ներսից պառակտելուն: Բայց կային նաև Ռեֆորմացիայի արտաքին պատճառներ, որոնք էլ նման ուժգնություն հաղորդեցին այդ շարժմանը: Դրանց մասին հայ գիտական գրականության մեջ կամ չեն նշվում, կամ բերվում են առանձին պատճառներ²⁰: Հենց արտաքին նախադրյալներն էին, որ Եկեղեցու ներսում եղած կայծը հրդեհի վերածեցին և տարածեցին հասարակության գրեթե բոլոր ոլորտներում: Ռեֆորմացիան սկսվեց այն ժամանակ, երբ աշխարհը կտրուկ փոփոխությունների էր ենթարկվում: Պապական համընդհանուր իշխանական նկրտումների դեմ բարձրանում էր եվրոպական ազգերի ընդհանրությունը²¹: Ազգային պետությունների ի հայտ գալը այդ ժամանակի քաղաքականապես ամենաակնհայտ հատկանիշն էր²²:

Թագավորական ուժերը իշխանությամբ պետություններում Կաթոլիկ եկեղեցին գործում էր իր սահմանափակված հավակնություններով: Օրինակ, Գերմանիայում, որտեղ երկար ժամանակ առկա էր կարծեցյալ կենտրոնական իշխանություն, պապական կուրիան²³ հնարավորություն ուներ երկիրը ղեկավարելու սեփական կալվածքների նման: Գերմանիայում XV դ. ընթացքում կենտրոնական իշխանությունը այդպես էլ հաջողության չհասավ: Երկրի ներսում պայքար էր ընթանում իշխանների և քաղաքների միջև, ցածր ազնվականությունը հիմնականում զբաղված էր ճանապարհա-

²⁰ Տե՛ս օրինակ՝ Նիոյան 1983, 654-655, Գլնճյան 2015, Ռոզենտալի 1975, 366, Նիկողոսյան 2013, 31-142:

²¹ Տե՛ս Mitchell, Hinsdon 2013, 283:

²² Տե՛ս Hillebrand 1996, 830:

²³ Վարչական հիմնարկների ամբողջություն (Ղարիբյան 1968, 424):

յին ավազակությամբ, իսկ գյուղացիությունը գտնվում էր ճորտի կարգավիճակում: Գերմանիայում իրադրությունը կարգավորվեց միայն երկրի թագավորական ժառանգների ամուսնական հաջող կապերից հետո²⁴: Գերմանիայի թագաժառանգ Ֆիլիպն ամուսնացավ Իսպանիայի թագաժառանգուհի Իսուանայի հետ, և երբ 1519 թ. նրանց որդին՝ Չարլզը, կայսերական տիտղոս ստացավ, դարձավ Ավստրիայի, Նիդեռլանդների, Իսպանիայի տարածքների և Նոր Երկրի տերը:

Ֆրանսիան, որը թվում էր՝ գրեթե ոչնչացել է 1339-1453 թթ. Անգլիայի հետ երկարատև պատերազմների հետևանքով, վերականգնվեց միապետական կարգերի հզորացման շնորհիվ: Միապետությունը հզորացավ, քանի որ երկարատև պատերազմը կործանարար էր եղել ավատատեր ազնվականության համար: Լյուդովիկոս XI-ը (1461-1483 թթ.) հասավ այնպիսի իշխանության, ինչպիսին մինչ այդ չէր ունեցել ոչ մի թագավոր: Ֆրանսիան այդ ժամանակ հզոր, կենտրոնացված միապետություն էր: Եկեղեցին հիմնականում գտնվում էր թագավորական իշխանության տակ և զգալիորեն ազատվել էր պապական չարաշահումներից: Միապետական իշխանության հզորացմամբ ժողովրդին հնարավորություն տրվեց եկեղեցական դատարանների բողոքարկումները ներկայացնելու թագավորական դատարան:

Անգլիայում բարձր ազնվականության հզորության կործանման պատճառ դարձավ 1455-1485 թթ. Վարդերի պատերազմը՝ յորքերի և լատինների միջև: Արդեն իսկ Հենրի VII-ը (1485-1509 թթ.) ավելի հզոր էր, քան վերջին մեկ դարի այլ շատ միապետներ: Նա ուներ գրեթե բացարձակ իշխանություն, և XV դ. վերջին Անգլիայի եկեղեցին հիմնականում ազգային էր:

Ազգայնացման գործընթացը ոչ մի տեղ այնքան լավ չէր դրսևորվել, որքան Իսպանիայում: Իսպանիայի զարգացումը XV դ. վերջին իրական քաղաքական հրաշքն էր: Իսպանիայում ուժեղ թագավորական իշխանություն հաստատվելուց հետո 1492 թ. նվաճվեց Գրանադան, երկրից դուրս մղվեցին մահմեդականները, և Կոլումբոսը, թագավորական աջակցությամբ, հայտնաբերեց մի նոր երկիր²⁵, որը շուտով մեծ եկամուտների աղբյուր դարձավ: Այդ ժամանակաշրջանում Իսպանիան ուներ Եվրոպայի

²⁴ St' u Walker 1984, 404:

²⁵ St' u Tanner 2008, 9:

մնացած երկրների մեջ ամենաանկախ ու բարոյական եկեղեցին, որը շատ ավելի մեծ զարգացում էր ապրում, քան ուրիշ պետություններում, և այն իր ուսմունքով ու գործունեությամբ ամբողջապես միջնադարյան էր:

Կաթոլիկ եկեղեցին իր հարկերով և դրամաշորթումներով հարուցում էր համընդհանուր ատելություն, իսկ բարձր դասի հոգևորականության անվայել վարքը բազմապատկում էր այդ ատելությունը: Հզորացած կենտրոնական իշխանությամբ ազգային պետություններում նվազեց պապական իշխանությունը: Ազգային պետությունները մարտահրավերներ նետեցին հին կարգերին²⁶՝ ներառելով ավանդական պապական բացառիկ իրավունքները և միջնադարյան բարձր օրինապահությունը:

Տնտեսական ոլորտի համար Ռեֆորմացիան մի ժամանակահատված էր, երբ մեծանում էր դժգոհությունը շահագործվող գյուղացիության և աճող քաղաքների միջև: Այն նշանակում էր՝ «միջին դարերի ավարտը և նոր ժամանակաշրջանի սկիզբը»²⁷, երբ զարգանում էին արհեստներն ու առևտրականությունը՝ ծնունդ տալով մի նոր հասարակական-տնտեսական դասակարգի, որը կոչվեց բուրժուազիա: Այդ դասակարգը սկսել էր ձևավորվել XIV-XV դ. Միջին Իտալիայում և Ֆլանդրիայում²⁸ և կարճ ժամանակում տարածվեց ողջ Եվրոպայում: Այն աստիճանաբար իր ձեռքը գցեց թե՛ տնտեսությունը և թե՛ քաղաքական գերիշխանությունը: Այդ շրջադարձը վերացրեց միջնադարյան հասարակության կարգավորումները, և միջին դասակարգի ակնկալիքների մեծացման պատճառով աճեց նաև քաղաքական լարվածությունը²⁹: Նոր դասակարգին, որը հավակնում էր տիրապետող դառնալու, հարկավոր էր նոր գաղափարախոսություն: Բուրժուազիան չէր պատրաստվում հրաժարվել քրիստոնեությունից, բայց և այնպես չէր էլ կարող ապրել կաթոլիկական կարգ ու կանոնով: Նրանց անհրաժեշտ էր, որ կրոնը դառնար ավելի պարզ ու մատչելի: Նոր ձևավորվող դասակարգը չէր կարող մեծ չափով ֆինանսական միջոցներ տրամադրել շքեղ տաճարների կառուցման կամ եկեղեցական արարողությունների անցկացման համար: Ֆինանսական միջոցները առավել չափով կենտրոնացվում էին արտադրության և ձեռնարկությունների վրա:

²⁶ Տե՛ս Hillebrand, 830:

²⁷ Սափֆ 2010, 48.

²⁸ Պատմական տիրույթ ներկայիս Ֆրանսիայի, Բելգիայի և Նիդեռլանդների տարածքում:

²⁹ Տե՛ս Hillebrand 1996, 831:

Ռեֆորմացիային նպաստող հանգամանք էր նաև XIV դ. Վերածնունդը³⁰, որը ներկայացնում էր մշակութային նվաճումների մի նոր ժամանակաշրջան: Այդ մշակութային վերստեղծման շարժումն ուներ կրոնական արմատներ և բովանդակություն³¹: Այն համատարած մտավոր աշխատանքի արդյունք էր: Բարձր բարոյականության զգացումը, անցյալի փառահեղության վերականգնման ցանկությունը և ռասայական, էթնիկ հպարտության աճը դժգոհության թեմաներ էին տարածել գրականության մեջ: Վերածննդի քննական ոգին թույլ տվեց նոր կերպով նայել մշակույթին և կրոնին: Աստծու և մարդու մասին վարդապետությունը այդ ժամանակ ենթարկվեց վերաքննության, և մեծ տեղաշարժ կատարվեց եվրոպական մշակույթում: Պլատոնական աշխարհայացքից անցում կատարվեց դեպի արիստոտելյան մետաֆիզիկայի միջոցով ձևավորված ընդարձակ վերերկրային եղելությունների սահմանումը³²: Այդ շրջանի առաջին ուսումնասիրողներից մեկի՝ Բուրկհարդի սահմանումով, Վերածնունդը կոչվում է «Մարդու և աշխարհի բացահայտման ժամանակաշրջան»³³: Երբ Վերածննդի ժամանակաշրջանի գործիչներ Կոլյունի Սալյուտատը, Լեոնարդո Բրունոն և այլք սկսեցին օգտագործել *humanitas*³⁴ (հումանիստ) եզրը, պարզ դարձավ, որ միջնադարյան աշխարհընկալման ժամանակն ավարտվել է: Այդ ժամանակ ծնվում էր նոր մարդը՝ ստեղծողը և կրողը նոր մշակույթի³⁵: Քաղաքական, տնտեսական և ազգայնական ճնշումներից բացի, Եվրոպայում փոխվող մտավոր միջավայրը ոչ պակաս զորեղ նախադրյալ էր Ռեֆորմացիայի համար:

Վերածնունդը հենք դարձավ անհատապաշտության և անձնական պատասխանատվության գաղափարի համար, որոնք էլ օգնեցին քննել Եկեղեցու կառուցվածքը: Հին ձեռագրերի և սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց նկատելու ուշ միջնադարի և վաղ

³⁰ Ֆրանսերեն Renaissance նշանակում է վերածնունդ: Այդ եզրույթով XIX դ. արվեստի քննադատներն անվանել են XIV-XV դ. դասական ոճը (Margaret 2003, VIII):

³¹ Տե՛ս Douglas 1974, 2:

³² Տե՛ս Martur 2004, 217:

³³ Буркхардт 1904, 170.

³⁴ Լատիներեն այս բառը բազմիմաստ է, կարող է նշանակել՝ 1) մարդկային բնություն, մարդկային արժանապատվություն, 2) մարդկայնություն, բարություն, 3) կրթվածություն, հոգևոր մշակույթ:

³⁵ Տե՛ս Арутюнян 2000, 154:

քրիստոնեական եկեղեցու կյանքի տարբերությունները³⁶։ Բարեփոխիչները վերցրեցին հունարեն Նոր Կտակարանի քննական հրատարակությունը և համընդհանուր ընթերցանության համար թարգմանեցին այն իրենց իսկ լեզուներով³⁷։ Սուրբ Գրքի պատմաքննադատական մեկնաբանություններն էլ իրենց ներդրումն ունեցան Ռեֆորմացիայի գործում։

Եզրակացություններ

Այդպիսով, Ռեֆորմացիայի սերմերը սփռվեցին ամենուր և դժգոհություն առաջացրեցին մարդկային գոյության գրեթե բոլոր ասպարեզներում։ Այն ոչ միայն Կաթոլիկ եկեղեցու ներսում առաջացած խնդիրների արդյունք էր, այլև քաղաքական, տնտեսական, դասակարգային, մշակութային, գիտական շրջանակներում տեղի ունեցող փոփոխությունների և զարգացումների հետևանք։ Մարդկությունը դրանով մուտք գործեց լուսավորության և բանականության մի նոր շրջան։ Վերոնշյալ դիտարկումները ցույց տվեցին, որ Ռեֆորմացիան ոչ թե աշխարհակարգի հեղափոխություն էր այլ՝ հիմնասյուներից շեղված կարգերի դեմ ժամանակի պահանջով ձևավորված էվոլյուցիա։

Գրականություն

- Գլնճյան արք. Հ. 2015, Մարտին Լյութեր, Երևան, «Անահիտ», 520 էջ։
- Գրիգորյան Հ.Ա. 1982, Պատմական տերմինների բառարան, Երևան, «Լույս», 112 էջ։
- Լեո 1985, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, «Սովետական գրող», 568 էջ։
- Ղարիբյան Ա.Ս. 1968, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան», 1421 էջ։
- Նիկողոսյան Մ. 2013, Եվրոպական մշակույթը Վերածննդի և Ռեֆորմացիայի դարաշրջաններում, Երևան, «Գրիգոր Տաթևացի», 184 էջ։
- Նինոյան Ժ. 1983, Ռեֆորմացիա, Հայկական սովետական հանրագիտարան, (գլխ. խմբագիր՝ Մ.Վ. Արզումանյան), հ. 9, Երևան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 720 էջ։
- Ռոզենտալի Մ.Մ. 1975, Փիլիսոփայական բառարան, Երևան, «Հայաստան», 468 էջ։
- Арутюнян А. 2000, Западная Европа. От раннего христианства до Ренессанса, Ереван, «Наири», 276 с.

³⁶ St' u Schaff, 7:

³⁷ St' u Mitchel, Hinsdon, 283:

- Боризель С. 2010, Пять жизней на земле. Эволюция душ, книга третья, Израиль, ICL, 174 с.
- Буркхардт Я. 1904, Культура Италии в эпоху Возрождения, т. 1, Петербург, изд. М.В. Пирожкова, 591 с.
- Бэрдъ Ч. 1987, Реформация XVI века в ее отношении к новому мышлению и знанию, Петербург, изд. О.Н. Попова, 372 с.
- Валентинович В. 2012, История. Шпаргалка, Петербург, Издательский дом, 96 с.
- Григулевич И.Р. 2006, История инквизиции (XIII-XX вв.), Москва, АН СССР, 448 с.
- Огицкий Д.П., Козлов М. 1999, Православие и западное христианство, Москва, изд. Храма св. муч. Татианы, 605 с.
- Рычков С.В. 2011, Парапсихология. Практика духовного исцеления, Москва, «Брянских», 143 с.
- Скотт Д.Р. 2002, История пыток, Москва, «Олма-Пресс», 412 с.
- Чубарьян А.О. 2004, Иллюстрированная энциклопедия. История 16-18 вв., Москва, «Олма-Пресс», 640 с.
- Шафф Ф. 2010, История христианской церкви. Современное христианство. Реформация в Германии, т. VII, Москва, «Библия для всех», 557 с.
- Bardy A.T., Tracy D.J. 1995, Handbook of European History 1400-1600. Late Middle Ages, Renaissance and Reformation, New York, Brill pub., 710 p.
- Charles J., Mircea E. 1987, The Encyclopedia of Religion, vol. 12, New York, MacMillan pub., 570 p.
- Douglas J.D. 1974, The New International Dictionary of the Christian Church, New York, Paternoster Press, 1074 p.
- Esmain A. 2000, A History of Criminal Procedure: Reference to France, New Jersey, The Lawbook Exchange, 640 p.
- Hillebrand H.J. 1996, The Oxford Encyclopedia of the Reformation, Volume 3, New York, Oxford University Press, 2016 p.
- Margaret L.K. 2003, The Renaissance in Europe, London, McGraw, 368 p.
- Martur P.V. 2004, Studies in the History of Christian traditions, Boston, Brill Pub., 238 p.
- Mitchell D., Hinsdon E. 2013, The Popular Encyclopedia of Church History, Eugene, Harvest House Pub., 400 p.
- Schaff P. 1888, History of the Christian Church, Modern Christianity. The German Reformation, Volume VII, New York, Grand Rapids, 920 p.
- Tanner N. 2008, The Church in the Later Middle Ages, London, I.B. Tauris Pub., 224 p.
- Walker W. 1984, A history of the Christian Church, New York, Pearson Pub., 756 p.

XVI դարի Ռեֆորմացիայի Ներքին Եվ Արտաքին Պատճառները

Հայկարամ Հակոբյան

Ամփոփում

XVI դարում Եվրոպայի ցնցած և պատմության նոր շրջափուլի վրա ահռելի ազդեցություն ունեցած Ռեֆորմացիայի առաջացման պատճառները հայ գիտական գրականության մեջ ընդհանրապես կապվում են միայն Կաթոլիկ եկեղեցու ներքին խնդիրների հետ կամ ներկայացվում են մասնակիորեն: Դրանցից էին, օրինակ, Կաթոլիկ եկեղեցու աչքի ընկնող հողատարածքները, եկեղեցականների տգիտությունն ու անբարոյական վարքը, ինչպես նաև ինկվիզիցիան և ինդուլգենցիաները:

Կաթոլիկ եկեղեցու ներսում եղած վերոնշյալ խնդիրները բավական չէին մարդկային պատմության մեջ նման հեղաշրջում մտցնելու համար: Էական նշանակություն ունեին նաև այն արտաքին պատճառները, որոնք եկեղեցու ներսում առաջացած շարժումը տարածեցին հասարակության բոլոր ոլորտներում: Ռեֆորմացիան ոչ թե աշխարհակարգի հեղափոխություն էր, այլ հիմնասյուներից շեղված կարգերի դեմ ժամանակի պահանջներով ձևավորված եվոլյուցիա:

Բանալի բառեր՝ Ռեֆորմացիա, Կաթոլիկ եկեղեցի, Հռոմի պապ, ինկվիզիցիա, ինդուլգենցիա, միապետություն, Վերածնունդ:

ВНУТРЕННИЕ И ВНЕШНИЕ ПРИЧИНЫ РЕФОРМАЦИИ XVI ВЕКА

Айкарам Акобян

Резюме

Реформацию, потрясшую Европу в XVI веке и оказавшую огромное влияние на новый период исторического развития, в армянской научной литературе связывают лишь с внутренними проблемами католической церкви. В ряду этих проблем следует выделить земельные владения католической церкви, невежество и безнравственное поведение духовенства, а также вопросы, связанные с инквизицией и индульгенциями.

Однако лишь вышеназванные причины не могли стать основанием для столь судьбоносных перемен в истории человечества. Помимо

внутрицерковных существовали также внешние причины. Реформация была не революцией мировой системы, а эволюцией, основанной на требованиях времени.

Ключевые слова – Реформация, Католическая церковь, папа Римский, инквизиция, индульгенция, монархия, Возрождение.

INTERNAL AND EXTERNAL REASONS OF REFORMATION IN THE XVI CENTURY

Haykaram Hakobyan

Abstract

The reasons for the Reformation, which shook Europe in the XVI century and had a huge impact on the new historical era in the Armenian scientific literature, are generally presented in part or related only to the internal issues of the Catholic Church. Among them were, for example, vast territories of the Catholic Church, the ignorance and immoral behavior of the clergy, as well as the inquisition and indulgences.

Above mentioned issues of the Catholic Church would not suffice to make such a revolution in the history of humanity. The external reasons that spread the movement within the Church to all spheres of society were essential. The above observations show that the Reformation was not a revolution of the world system, but an evolution based on the demands of the time against the deviate from the main principles.

Key words – Reformation, Catholic Church, Pope, inquisition, indulgence, monarchy, Renaissance.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նարեկ Գրիգորյան

Քաղաքական գիտությունների թեկնածու
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային-հետազոտական համալսարան
ՀՀ, Երևան, Կարապետ Ուլենցի 56/6
Էլ. հասցե՝ nkgriqoryan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 18.02.2021, գրախոսվել է 22.04.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-85

Ներածություն

Հասարակական-քաղաքական կյանքում տեղի են ունենում բազմա-
բնույթ տեղաշարժեր, զարգացումներ և գործընթացներ, որոնք այս կամ
այն չափով ազդում են բոլորիս վրա՝ դառնալով մեր կյանքի ու կենսագրու-
թյան անբաժանելի մասը: Դրանք բնույթով կարող են լինել տնտեսական,
սոցիալական, իրավական, քաղաքական, դաստիարակչական, պաշտպա-
նողական, որոնցից յուրաքանչյուրի նպատակը հասարակության կյանքի
տարբեր ոլորտների խնդիրների կարգավորումն է: Անկախ նրանից, թե
այդ գործընթացներին ինչ չափով և մակարդակով ենք մասնակցում,
միևնույն է, դրանք էական ազդեցություն են ունենում մեզ վրա, և հաճախ
դրանցով են պայմանավորված մարդկանց նյութական և հոգևոր պահանջ-
մունքների բավարարումը, նրանց շահերի, ազատությունների, իրավունք-
ների, անվտանգության ապահովումը, պաշտպանությունը, հասարակութ-
յան կայունությունը և վերջինիս ներդաշնակ զարգացումը¹:

Քաղաքական որոշումների ընդունման գործընթացի էությունը և առանձնահատկությունները

Քաղաքական որոշումներ կայացնելը քաղաքական գործընթացների
մաս են, որոնք իրականացվում են իշխանության լեգալ և լեգիտիմ գոր-
ծունեության միջոցով, նպատակաուղղված են իրագործելու պետության քա-
ղաքական նախաձեռնությունները, որոշումները, ծրագրերը և պետական
քաղաքականության հիմքում են: Ընդհանուր առմամբ, դրանք իշխանութ-

¹ Duncan 1990, 25-50.

յուն իրականացնելու նպատակով ձեռնարկված գործողությունների ամբողջական համակարգ են: Որոշումներ ընդունելու գործընթացում նախևառաջ պետք է իմանալ, թե ինչ է նշանակում «որոշում» հասկացությունը, տալ դրա սահմանումը և առհասարակ հասկանալ, թե ինչ է պետք պետություններին քաղաքական կամ այլ բնույթի որոշումներ կայացնելու և ընդունելու համար*: Առհասարակ քաղաքական որոշումներ ընդունելը կարելի է սահմանել որպես կամային գործողություն, որը նպատակաուղղված է՝ 1) առկա խնդիրների լուծմանը, 2) ձևավորելու այնպիսի ապագա, որը կհամապատասխանի որոշում ընդունողների նպատակներին և շահերին: Այլ կերպ ասած՝ ճանաչողական գործընթաց է, որի արդյունքը տարբեր այլընտրանքներից կարծիքների կամ գործողության ընթացքի ընտրությունն է: Յուրաքանչյուր որոշման կայացում ենթադրում է վերջնական ընտրություն, որն իր հերթին կարող է դրդել կամ չդրդել գործողության: Որոշման կայացումը որոշում կայացնողի արժեքների և նախասիրությունների հիման վրա այլընտրանքներ հայտնաբերելու և դրանց մեջ ընտրություն կատարելու գործընթացն է: Քաղաքական որոշումները քաղաքական գործընթացի առանցքն են, և, ըստ էության, յուրաքանչյուր քաղաքական գործընթաց սկիզբ է առնում համապատասխան որոշումներ ընդունելու հետևանքով²:

Որոշումների կայացման գործընթացում նախ պետք է իմանալ, թե որն է խնդիրը, ինչ է պատահել, ինչը մեզ չի բավարարում, և ինչին ենք մենք փորձում հասնել տվյալ որոշման արդյունքով: Արդյունավետ որոշումների կայացման գործընթացում պետք է լուծվեն առաջադրված խնդիրները, կամ նշմարվեն դրա լուծման ելքային ռազմավարությունները, կատարվի խնդիրների վերլուծություն, և ներկայացվեն համապատասխան փորձագիտական եզրակացություն-առաջարկներ: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում կարևոր նշանակություն ունեն որոշում-

* Հայերենում կիրառելի են «որոշումների կայացում» և «որոշումների ընդունում» հասկացությունները, որոնք, որոշակիորեն հոմանիշ լինելով, միաժամանակ, բովանդակային (մասնագիտական) առումով տարբեր գործընթացներ են: Որոշումների կայացումը նախորդում է որոշումների ընդունման գործընթացին, հետևաբար բուն ընդունման գործընթացում կարող են մի շարք որոշումներ կայացվել, որոնց հիման վրա պիտի ընդունվի վերջնական որոշումը: Օրինակ՝ երբ գործադիր մարմինը նախապատրաստում է որոշման նախագիծ, դրանում կայացվում են մի շարք թեմատիկ որոշումներ, որոնք վերջնական քննարկման և համաձայնության դեպքում են միայն ընդունվում: Ավելին՝ կայացված որոշումը կարող է նաև չընդունվել, և կայացվել որոշման նոր տարբերակներ:

² Շահգեղյան 1994, 144-149:

ների ընդունման փուլերը³: Մասնագիտական գրականության մեջ որոշումների ընդունման փուլերի վերաբերյալ կան տարբեր սահմանումներ, դասակարգումներ: Ստորև ներկայացնենք այն հիմնական փուլերը, որոնք շատ մասնագետներ համարում են ընդունելի⁴: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացի փուլերը հատկապես ուշագրավ են պետական ինստիտուտների և միջազգային կառույցների համատեքստում:

Հիմնախնդիրը ձևակերպելու, իրադրությունը բացահայտելու, նպատակադրելու, հնարավոր որոշումներ ձևակերպելու, արժևորելու և գնահատելու համար հարկավոր է հստակ պատասխանել հետևյալ հարցերին⁵. ա) արդյոք առկա՞ են այն բոլոր փաստերը, որոնք պետք է իմանալ, ուսումնասիրել, բ) արդյոք հաշվի՞ են առնված քաղաքական և սոցիալական իրադրությունը, հոգեկան վիճակը, միջավայրի արժեհամակարգային աստիճանակարգությունը, մտածելակերպը, արդյոք հաշվի՞ է առնված նախկին փորձը, գ) արդյոք ուսումնասիրվա՞ծ են առկա գրականությունը և փաստաթղթերը, դ) արդյոք հաշվի՞ է առնված փորձագետների կարծիքը, ե) արդյոք քննարկվա՞ծ են տվյալ հարցերի վերաբերյալ հասարակության ունեցած վերաբերմունքն ու առկա պայմանների փոխհարաբերությունները, զ) ո՞րն է գլխավոր խոչընդոտը: Ի դեպ, այս վերջին հարցի պատասխանը կապող օղակ է հիմնախնդրի ձևակերպման, իրադրության բացահայտման և նպատակադրման, հնարավոր որոշումների ձևակերպման արժևորման և գնահատման միջև: Վերջինիս համատեքստում պետք է հստակ պատասխանել հետևյալ հարցերին. ա) ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ խոչընդոտները, բ) կարո՞ղ են դրանք նախօրինակ դառնալ, գ) արդյոք դա կանդրադառնա՞նապագայի վրա, դ) կանդրադառնա՞ր դա որոշում ընդունող ինստիտուտի կամ անհատի վրա, ե) ի՞նչ հասարակական ազդեցություն կարող է ունենալ, արդյո՞ք դա օրինական է ու բարոյական, է) ինչպե՞ս դրան կվերաբերեն հասարակական և քաղաքական կազմակերպությունները⁶:

Որոշման նպատակները կարող են լինել իրավիճակային, կարճաժամկետ, երկարաժամկետ, մեծ (macro-), փոքր (micro-) և հանդես գալ քաղաքական իդեալներով: Ցանկալի է, որ նպատակները լինեն հստակ

³ Дегтярев 2004, 218-229.

⁴ Mu, Pereyra-Rojas 2016, 31-34.

⁵ Дегтярев 2004, 269-295.

⁶ Pettigrew 2009, 5-11.

ձևակերպված, միանշանակ և ունենան կառուցվածքային բաժանում, ինչպես նաև աստիճանակարգված կառուցվածք: Իսկ եթե դրանք բազմաթիվ են, պետք է կազմել դրանց աստիճանակարգությունը: Նպատակի տեսակով են պայմանավորված նաև որոշման դասակարգումը, դրա ընդունման մեթոդների, ռեսուրսների ընտրությունը և այլն: Որոշումներ ընդունելու գործընթացում հարցերին պատասխանելու համար պետք է հաշվի առնել, որ մարդիկ, խմբերը և այլ հանրույթներ հիմնականում բաց համակարգեր են և կրում են այլ համակարգերի անմիջական և միջնորդավորված ազդեցությունը⁷: Հիմնախնդրին անդրադառնալով՝ հարկավոր է տարբերակել երկու կարևոր հակասություններ՝ բարդությունը և դժվարությունը: Շատ տեսաբաններ, մասնավորապես Հ.Սայմոնը⁸, նշում են, որ բարդությունները բազմաթիվ երևույթներ կամ օբյեկտներ են, որոնք փոխկապակցված են, օրինակ՝ տնտեսությունը պայմանավորված է էներգետիկայով, իսկ էներգետիկայի առկայությունը՝ քաղաքականությամբ: Քաղաքականությունն իր հերթին պայմանավորված է ուժով, վերջինս էլ՝ ռազմատնտեսական հզորությամբ և այլն: Պետք է նկատել, որ այդ փոխկապակցությունը համարժեք է. եթե քաղաքականությունը պայմանավորված է տնտեսությամբ, ապա տնտեսությունն էլ իր հերթին՝ քաղաքականությամբ: Այս փոխհարաբերությունները պայմանավորված են բաղկացուցիչ մասերի քանակով և իրականացվում են տարբեր հաճախականությամբ և հզորությամբ: Ընդհանուր առմամբ, որոշման բարդությունը բնորոշելու համար պետք է հաշվի առնել միջավայրի մշակույթը, լեզվի առանձնահատկությունները, մարդկանց մտածողության ձևը, անձնական հատկանիշները և այլն: Բարդությունից պետք է տարբերակել դժվարությունը: Այնպիսի պարզ առարկա, ինչպիսին պարանի հանգույցն է, ինքնին կարող է բարդ լինել: Սակայն մենք որոշումներ ընդունելու գործընթացում, հատկապես պետական կառավարման գործընթացում պետք է տարբերակենք որոշումների ընդունման գործընթացի բարդությունն ու դժվարությունը: Հանգույցն ունի մեկ լուծում, որը կարող է դժվար լինել, բայց նպատակը մեկն է՝ քանդել հանգույցը: Բարդության և դժվարության տարբերությունն այն է, որ բարդությունը վերաբերում է հիմնախնդրի էությանը, իսկ դժվարությունը՝ լուծման ուղիներին: Գործնականում հաճախ անհրաժեշտություն է

⁷ Cox 1975, 37-38.

⁸ Simon 2000, 91-117.

առաջանում հիմնախնդիրը լուծելու փոխարեն այն կանխալուծել, այսինքն՝ այն չեզոքացնել կամ լուծումը հետաձգել՝ կայացնելով համապատասխան որոշումներ: Այդա և Մարտեն Ուիլսոններն առանձնացնում են հետևյալ որոշումները, որոնք կարող են նպաստել այդ նպատակի իրականացմանը՝ ուղղորդող որոշումներ, որոնց նպատակը հիմնախնդիրը վերացնելն է որպես խնդրի լուծման ամենալավ տարբերակ: Կանխարգելիչ որոշումները կա՛մ վերացնում են հավանական հիմնախնդիրները՝ նրա կառուցվածքներում որոշակի փոփոխություններ կատարելով, կա՛մ դրա առաջացման հնարավորությունները հասցնում են նվազագույնի: Որոշումները պատահականությունների դեմ ընդունվում են այն դեպքում, երբ անհնար է նախորդ երկուսի ընդունումը, երբ նպատակ է դրված ենթադրվող անցանկալի հետևանքները դարձնել ոչ էական: Հարմարվողական որոշումները կիրառվում են այն դեպքում, երբ թույլատրելի է հիմնախնդրի գոյության հետ հաշտվել միայն այն դեպքում, երբ այն նպաստում է ցանկալի իրականացմանը և բնավ չի անդրադառնում կենսական շահերին: Ժամանակավոր որոշումներն օգնում են ժամանակ շահել և լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Որոշումների ընդունման գործընթացի արժեքավորումը և գնահատումը

Որոշումներ ընդունելու գործընթացի ընդհանուր ուսումնասիրության ժամանակ պետք է տարբերակել որոշումների արժևորումը և գնահատումը: Արժևորման դեպքում հաշվի են առնվում, թե ինչպիսի պոտենցիալ հնարավորություններ ունի տվյալ որոշումը, արդյոք համապատասխանո՞ւմ է իրավական, բարոյական նորմերին, որքանո՞վ է համապատասխանում ժողովրդի մտածելակերպին և այլն: Գնահատելիս անդրադառնում են տվյալ իրադրության մեջ որոշման կենսունակության հավանականությանը:

Նախքան բուն որոշման ընդունման գործընթացին անցնելը հարկ է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ի՞նչ նպատակ ունի որոշումը: Սա վերաբերում է ձևակերպված հիմնախնդրի լուծմանն ուղղված միջոցներին, այն նպատակներին, որոնց հասնելուն է ուղղված տվյալ որոշումը: Հարցն այն է, որ պարտադիր չէ՝ որոշում ընդունելու գործընթացը նպատակաուղղված լինի զուտ հիմնախնդրի լուծմանը: Պլանավորումը, որը ենթադրում է որոշումների ընդուն-

ման հակադարձ գործընթացի կիրառում, ուղղված է ապագայի կանխատեսմանը: Այդ գործընթացում կարևորվում են՝

- ով պետք է որոշում կայացնի. պետք է լինեն համապատասխան մարդիկ, որոնք իրենց վրա կվերցնեն տվյալ որոշման ընդունման պատասխանատվությունը.

- որտեղ պետք է ընդունվի որոշումը, ինչ միջավայրում և ինչ պայմանների և սահմանային իրադրության առկայության դեպքում.

- երբ պետք է ընդունվի որոշումը, ինչ ժամանակահատվածում.

- ինչպես պետք է ընդունվի որոշումը, ինչ տեխնոլոգիա, միջոցներ, մեթոդներ պետք է կիրառվեն, և ինչ դրսևորում պետք է ունենա ձևակերպված որոշումը:

Որոշումներ ընդունելու ժամկետը կարող է չափազանց սուղ լինել: Սակայն նշվածը հիմնականում վերաբերում է իրավիճակային որոշումների կայացմանը: Կոնֆլիկտային և ճգնաժամային իրավիճակների առկայության դեպքում, երբ հնարավոր չէ անցնել որոշումներ ընդունելու գործընթացի վերոնշյալ բոլոր փուլերով և մեկ առ մեկ անդրադառնալ բոլոր գործոններին, հնարավոր է որոշում ընդունել նաև բնազդաբար:

Որոշում կայացնելու փուլերը, ըստ Ի. Ջենիսի և Լ. Մաննի, հետևյալներն են՝

- խնդրի գնահատումը,
- հնարավոր տարբերակների վերանայումը,
- եղած տարբերակների գնահատումը,
- որոշման կայացումը՝ անկախ ռիսկի գործոնից:

Չնայած դրանց որոշակի առանձնահատկություններին՝ պետությունների՝ քաղաքական որոշումների ընդունման գործընթացը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. ա) հիմնախնդրի ձևակերպում, բ) իրադրության բացահայտում և նպատակադրում, գ) հնարավոր որոշումների ձևակերպում, դ) այլընտրանքային որոշումների ձևակերպում, ե) հնարավոր որոշումների արժևորում, զ) այլընտրանքային որոշումների արժևորում, է) հնարավոր որոշումների գնահատում, ը) այլընտրանքային որոշումների գնահատում, թ) որոշման հետևանքների կանխատեսում, ժ) որոշման ընտրություններ, ժա) վերջնական եզրակացություններ:

Բոլոր ժամանակներում անհատները, կազմակերպությունները կամ համապատասխան շարժումները ձգտել են ընդունել արդյունավետ քաղաքական որոշումներ, որոնց կենսագործումը պետք է ապահովի նրանց

կենսական և ոչ կենսական շահերի իրականացումը⁹: Ինչպես նշում էր չինական փիլիսոփայական մտքի հսկա Սուն Ցզին, «որոշման որակը նման է ճիշտ ժամանակին սրընթաց շարժվող բազեին, որը նրան հնարավորություն է տալիս հարվածելու և ոչնչացնելու իր զոհերին»:

Որոշումներ ընդունելու գործընթացի վրա ազդող կարևորագույն բաղկացուցիչներից են սուբյեկտները: Ընդհանրապես, սուբյեկտը բավական լայն հասկացություն է ինչպես միջազգային իրավական, քաղաքական, այնպես էլ բուն որոշումներ ընդունելու տեսանկյունից: Այս առումով հարկ է նշել, որ կա սուբյեկտների հստակ դասակարգում: Այդ դասակարգումը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու ոչ միայն սուբյեկտների ազդեցությունը որոշումներ ընդունելու գործընթացի վրա, այլև վեր հանելու այն կարևորագույն բնութագրիչները, որոնք առկա են տվյալ սուբյեկտների դեպքում: Ընդունված է սուբյեկտների մասին խոսելիս նշել հետևյալ սուբյեկտները՝ պետություններ, անհատներ կամ հեղինակավոր անձինք, շարժումներ, ճնշման խմբեր և այլն: Սուբյեկտների մասին խոսելիս նախառաջ պետք է հստակեցնել, թե ինչ է նշանակում է սուբյեկտ, և ինչ նշանակությամբ ենք մենք այն կիրառում: Այսպես՝ որոշումների ընդունման սուբյեկտներն այն բաղադրիչներն են, որոնք տարբեր ժամանակներում և տարբեր պայմաններում էական ազդեցություն են ունենում որոշումներ ընդունելու գործընթացի, դրանց նախապատրաստման, բուն ընդունման, վերահսկողության և այլ փուլերի վրա: Իհարկե, կան սուբյեկտների մեկը մյուսի նկատմամբ գերակայություն և մի շարք այլ առանձնահատկություններ, սակայն դրանցով չի փոխվում նրանց գործառնության նշանակությունը, կարգավիճակը. դրանք շարունակում են մնալ սուբյեկտ: Պայմանավորված որոշումների ընդունման օբյեկտներով՝ անհրաժեշտաբար փոփոխվում են նաև որոշումների ընդունման սուբյեկտները. պատմության մեջ դրանք հանդես են գալիս գրեթե նույն պրիզմայով և դասավորվածությամբ. սա մասնավորապես վերաբերում է միջազգային կազմակերպություններում որոշումներ ընդունելու գործընթացին¹⁰: Պետություններում ինչպես որոշումներ ընդունելու գործընթացի կազմակերպական, այնպես էլ դրա վրա ազդելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն մի շարք գործոններ: Որոշումներ ընդունելու գործընթացի վրա ազդող գոր-

⁹ Հայրապետյան 2010, 39:

¹⁰ Ланцова, Ачкасова 2005, 240-248.

ծոնները կարևոր են այն առումով, որ դրանց տիրապետելը հնարավորություն է տալիս ընդունելու քաղաքական արդյունավետ որոշումներ և հետազոտության միջոցով հնարավորություն ընձեռելու ընդունելու հեռահար քաղաքական որոշումներ: Որոշումների ընդունման գործոնների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կան տարատեսակ ձևակերպումներ և դասակարգումներ: Դրանք բավական շատ են, և յուրաքանչյուրն ունի ոլորտային ընկալում և մեկնաբանություններ: Ամենալայն դասակարգմամբ որոշումներ ընդունելու գործընթացի վրա ազդող գործոնները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ ներքին և արտաքին: Դրանից բացի, կան նաև քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային, բարոյահոգեբանական, իրավական և մի շարք այլ գործոններ: Ներկայումս տարբեր հետազոտողներ (Դ. Սթոուն Դ. Մոսկրոպ, Ա. Մինց և այլք) որոշումներ ընդունելու գործընթացում առանձնացնում են նաև սուբյեկտիվ գործոնի դերը: Այս գործոնները տարբեր պետություններում և համակարգերում նույնական չեն, սակայն պետք է նշել, որ, պայմանավորված տվյալ պետության առանձնահատկություններով, դրանցից մի քանիսը կարող են գերակշռել մյուսների նկատմամբ: Օրինակ՝ Հայաստանում և Մեծ Բրիտանիայում դրանք, ըստ հասարակական-քաղաքական առանձնահատկությունների, կարող են տարբեր ոլորտային առաջնահերթություններ ունենալ:

Որոշումներ ընդունելու գործընթացին անդրադառնալիս անհրաժեշտ է տարբերակել որոշումների ընթացակարգի և գործընթացի առանձնահատկությունները: Ընթացակարգն ավելի նեղ հասկացություն է. այն որոշումների գործառնմանն ուղղված տեխնիկական քայլերի ամբողջություն է, ավելին՝ ընթացակարգը որոշումներ ընդունելու գործընթացի մաս է: Որոշումներ ընդունելու ընթացակարգը հատկապես առավել կարևորություն է ստանում միջազգային կազմակերպություններում¹¹: Այս համատեքստում որոշումներ ընդունելու գործընթացի դիվանագիտական-բանակցային նախապատրաստումները, հնարավորինս անթերի մեթոդաբանության և մոդելավորման աշխատանքների կիրառումը նպաստում են արդյունավետ որոշումներ ընդունելուն: Ի դեպ, այս նախադրյալները կարևորվում են ոչ միայն միջազգային հարաբերություններում որոշումներ կայացնելու առումով, այլև ներպետական մակարդակում լավ կառավարում

¹¹ Reinalda 2004, 109.

իրականացնելու նպատակով: Մասնավորապես, օրենսդիր և գործադիր մարմիններում նույնպես որոշումներ կայացնելը որոշումներ ընդունելու հոգեբանական, ճանաչողական և կարգավորիչ լուծումները հաշվի առնելն է:

Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում մեթոդաբանական խնդիրները

Որոշումներ ընդունելու գործընթացն ուսումնասիրելիս հատկապես կարևոր նշանակություն են սկսում ձեռք բերել որոշումների ընդունման մեթոդները: Սա մասնավորապես կարևորվում է քաղաքական որոշումներ ընդունելիս: Մասնագիտական գրականության մեջ առկա է բազմաթիվ մեթոդների դասակարգում, որոնցից յուրաքանչյուրն առանձնահատուկ է բնութագրում որոշումների ընդունման մեթոդի կարևորությունը: Տարբեր հետազոտողներ որոշումներ ընդունելու գործընթացի տարբեր մեթոդներ են առաջարկում, իսկ եթե ընդհանրացնենք դրանք, ապա կարող ենք առանձնացնել որոշումների ընդունման հետևյալ հիմնական մեթոդները. Թոմաս Սաաթ՝ ֆորմալ, համակարգային, Լ. Սվեգ՝ գծային, ռացիոնալ, ազատական, և Ա. Դեկտյարով՝ դիսկրիպտիվ և պրեսկրիպտիվ մեթոդներ¹²: Սակայն մեկ բան հստակ է. անկախ այն հանգամանքից, որ որոշումներն իրենց բնույթով և քանակով տարբեր են, այնուամենայնիվ, դրանց ընտրությունը մեծ մասամբ պայմանավորված է իրավիճակով, արդյունավետության գնահատման և արժևորման չափանիշներով, կիրառման օբյեկտով և այլն: Կա որոշումների ընդունման մեթոդների պարզ դասակարգում՝ խմբային և անհատական որոշումներ ընդունելու մեթոդներ: Խմբային մեթոդներից հատկանշական են՝ 1) համաձայնության մեթոդը, 2) քվեարկության վրա հիմնված տարբեր մեթոդները, 3) դելֆի մեթոդը և այլն: Անհատական մեթոդներից են պարզ առաջնահերթության մեթոդը, բավարարման մեթոդը, ֆլիպիզմը, որոշումների ընդունման գործընթացի ավտոմատացված աջակցությունը և այլն:

Որոշումների ընդունման ինկրեմենտալ մեթոդն առաջարկել է ակադեմիկոս տեսաբան Հենրի Մինցբերգը: Մինցբերգը և նրա գործընկերները Մոնրեալի Մակ Գիլա համալսարանում տարբեր տեսանկյուններից քննարկել և դիտարկել են կազմակերպություններում որոշումների ընդունման

¹² Saaty, Vargas 2012, 333-337.

խնդիրները: Նրանք հետազոտել են կազմակերպություններում ընդունված որոշումների 25 օրինակներ և դրանց առանձնահատկությունները: Նրանց հետազոտությունը որոշումներ ընդունելու առումով կարևորում էր ցանկացած քայլում հետևողական գործունեություն իրականացնելը: Որոշումներ ընդունելու գործընթացում խնդրի այսպիսի մոտեցումը կոչվեց ինկրեմենտալ մեթոդ, ըստ որի՝ ուշադրությունը հիմնականում կենտրոնացված է ոչ թե Կարնեգիի մոդելի նմանությամբ քաղաքական ու սոցիալական գործոնների վրա, այլ որոշումներ ընդունելու ձգվածության ողջ ընթացքում գործողության կառուցվածքային հետևողականության վրա: Մինցբերգի ինկրեմենտալ որոշումների ընդունման հետազոտության կարևորագույն բաղադրիչներից մեկն այն է, որ հիմնական որոշում ընդունելը նախապես խարսխված է մի շարք «մանր որոշումների» վրա, որոնք էլ քայլ առ քայլ կայացվում են բուն որոշման դիրքերն ամրապնդելու նպատակով: Ինչպես նշում են հեղինակները, այսպիսի մանր որոշումները հաճախ առավել մեծ կարևորություն են ունեն, քան բուն վերջնական որոշումը: Ընդհատման որոշումները նշելով՝ Մինցբերգը¹³ հստակ ներկայացնում էր դրա բովանդակությունը՝ բացատրելով, թե դա ինչ է նշանակում: Նա նշում էր, որ պետությունը պետք է վերադառնա իր նախկին որոշմանը և իրավիճակը շտկելու նկատառումով, ամբողջ ցիկլը փոփոխելով, ընդունի այլ ընտրանքային քաղաքական նոր որոշումներ: Այդպիսի ցիկլերն իրականում պետություններում որոշումներ ընդունելու գործընթացի միջոցներից են, և դրա առկայության դեպքում կազմակերպությունը սկսում է հասկանալ, թե որքանով է հնարավոր այդ որոշումը կենսագործել¹⁴: Վերջնական որոշումը կարող է տարբերվել որոշման ընդունման սկզբնական տարբերակից, և դա որոշումներ ընդունելու ինկրեմենտալ փուլում բնականոն գործընթաց է, որը կատարվում է քայլ առ քայլ: Հ. Մինցբերգը նաև առաջարկել է որոշումներ ընդունելու գործընթացը բաժանել երեք փուլերի՝ խնդրի նույնականացում, կառավարչական որոշումների տարբերակների մշակում և կառավարչական որոշումների ընդունման ընտրություն ու գնահատում: Որոշումներ ընդունելու գործընթացի ռացիոնալ մեթոդը տրամաբանված իմացական որոշումների ընդունումն է քայլ առ քայլ մշակված գործընթացում: Այս գործընթացում շեշտը դրվում է բանական և կշռա-

¹³ Минцберг 2018, 46-49.

¹⁴ Simon 1976, 130-131.

դատված արդյունքներ ստանալու և գլխավոր որոշում կայացնելուց առաջ այլընտրանքային տարբերակներ առաջարկելու վրա: Մասնագիտական գրականության մեջ կան որոշումների ընդունման գործընթացի ռացիոնալ մեթոդի բազմաթիվ սահմանումներ¹⁵: Սակայն սա թերևս դրանց ընդհանրական բովանդակությունն արտահայտող սահմանումներից մեկն է: Ընդհանուր առմամբ, առանձնացվում են ռացիոնալ որոշման ընդունման մեթոդի հինգ քայլեր: Ոլորտի հետազոտողների վերլուծություններն ի մի բերելով՝ կարելի թվարկել դրանք՝ 1) հասկանալ իրավիճակը և որոշումն ընդունել անհրաժեշտաբար, 2) բոլոր կարևոր չափորոշիչները պետք է հստակեցված և քննարկված լինեն, 3) բոլոր հավանական իրավիճակները պետք է քննարկվեն, և համապատասխանաբար մշակվեն ելքային ռազմավարություններ, 4) բոլոր հավանական իրավիճակները պետք է քննարկել և հաշվի առնել, թե որից ինչ արդյունքներ կարելի է ստանալ, այնուհետև ընտրել լավագույն տարբերակը, 5) լավագույն տարբերակը միշտ ընտրելու հնարավորություն: Մի շարք տեսաբանների բնորոշմամբ՝ ռացիոնալ որոշումներն առավելապես կիրառելի են թիմերում, որտեղ ռացիոնալ որոշման կիրառումը թիմային արդյունավետ աշխատանք իրականացնելու կարևորագույն նախադրյալներից է: Իհարկե, պահանջվում են մեծ ջանքեր, հսկայական աշխատանք, տեղեկատվության առկայություն և այլն:

Մեթոդաբանության համատեքստում որոշումները կարող են ընդունվել քվեարկության և կոնսենսուսի միջոցով: Մինչ օրս մասնագիտական գրականության մեջ հստակ մոտեցում չկա, թե վերոնշյալը վերաբերում է որոշումների ընդունման մեթոդաբանությանը, տեխնիկային, ընթացակարգին, թե՞ որևէ այլ բնագավառին¹⁶: Հարցն այն է, որ միանշանակ պատասխաններ կարելի է տալ միայն քվեարկությամբ: Քվեարկության ժամանակ որոշումները կարող են ընդունվել պարզ և բացարձակ մեծամասնության սկզբունքների հիման վրա: Այս առումով քվեարկության և կոնսենսուսի միջև հստակ տարբերություն կա: Կոնսոցիատիվիզմի* դեպքում

¹⁵ Eisenführ, Weber, Langer 2010, 168-173.

¹⁶ Куликов 2000, 211-215.

* Հաճախ դիտարկվում է իշխանության կիսման ձև հասարակության ներսում: Կոնսոցիատիվիզմը նպատակաուղղված է հաշտեցնելու հասարակության հատվածական բաժանարարությունը և լուծելու դասակարգային և էթնիկ կոնֆլիկտները: Տեսության նպատակներն են կառավարման կայունությունը, իշխանության կիսումը, բռնությունից խուսափումը և ժողովրդավարության գոյատևումը: Կոնսոցիատիվիզմը

կարծես վերոնշյալ երկու հասկացությունները համակցվում են, երբ համամասնության ապահովման և փոխադարձ վետոյի մեխանիզմով փորձ է արվում ընդունել հասարակության ներդաշնակություն ձևավորող քաղաքական որոշումներ:

Որոշումների ընդունման միաձայնության սկզբունքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ որոշման կիրառման հարցում որոշում ընդունող բոլոր սուբյեկտներն իրենց վրա որոշակի պարտավորություն են վերցնում¹⁷: Միաժամանակ, նրանցից յուրաքանչյուրն ստանում է վետոյի կիրառման իրավունք: Այս սկզբունքն առավել հստակ և մշակված գործում է և հատկապես բնորոշ է կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդել որդեգրած պետություններին: Որոշումներ ընդունելու գործընթացը խորությամբ ուսումնասիրելիս պարզ է դառում, որ քվեարկողներն անմիջականորեն միշտ չեն արտահայտում իրենց շահերը և կարող են փոխզիջման գնալ հետագայում փոխհատուցում ստանալու ակնկալիքով: Օրինակ՝ խորհրդարանում այն կուսակցությունը կամ խումբը, որը, բավականաչափ փոքր լինելով, չի հավակնում նախարարների կաբինետ կազմելուն կամ խորհրդարանի նախագահ առաջադրելուն, կարող է նույնիսկ առանց նախնական պայմանավորվածության ապահովել իր օժանդակությունը մեծամասնություն ունեցող կուսակցությանը՝ հետագայում ակնկալելով վերջինիս օժանդակությունը սեփական շահերի իրականացման գործում¹⁸:

Այսպիսով, որոշումների ընդունման համատեքստում կոնսենսուսը հանդես է գալիս որպես քաղաքական գործընթաց և ընթացակարգային ապահովում, որոնք հաճախ պայմանավորված են միմյանցով: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է, որ կոնսենսուսը քաղաքական գործընթացի մի մասն է: Շատ տեսաբաններ (Մ. Հերցբերգ, Դ.Սմիթ¹⁹ և այլք) նշում են, որ կոնսենսուսը ազգային բնավորության գիծ է: Հասարակագետների շրջանում տարածված է նաև այն կարծիքը, որ ներկայումս մի շարք քաղաքական գործընթացների կառուցողական վարքաբանության մեջ անգնահատելի և վճռորոշ դեր ունի հենց կոնսենսուսը:

տեսական և բովանդակային առումներով շատ մոտ է «կոնֆեսիոնալիզմ» և «կորպորատիզմ» հասկացություններին:

¹⁷ Hodgkinson, Starbuck 2012, 324-326.

¹⁸ Շահգեղյան 1996, 7-9:

¹⁹ Smith 2020, 3-14.

Քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացում հատկապես կարևորվում է հաղորդակցային տեխնոլոգիաների՝ փաստարկման, բանակցության դերը: Բանակցությունները հիմնականում կարևորվում են այն դեպքում, երբ որոշումներ ընդունելու գործընթացում բոլոր սուբյեկտներն ունեն փոխադարձ վետոյի իրավունք: Հենց այս դեպքում է, որ կարևորվում են դիվանագիտական մոտեցումները: Ինչպես անել, որ խնդիրները լուծվեն բանակցային ճանապարհով, և ապահովվեն փոխշահավետ գոյակցության նախադրյալներ: Միաժամանակ, փոխընդունելի և արդյունավետ որոշումների կայացման գործընթացում նախատեսվում է որոշման կայացման գործընթացի փաստարկում. սա հնարավորություն է տալիս ոչ միայն հիմնավորելու որոշման անհրաժեշտությունը, այլև անդրադառնալու այն խնդիրներին, որոնք կողմերի շրջանում տարըմբռնումների տեղիք էին տալիս:

Ամփոփելով նշենք, որ քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացներում կարևոր խնդիրներից են ճգնաժամային և կոնֆլիկտային անորոշության պայմաններում ընթացակարգային և մեթոդաբանական առանձնահատկությունները²⁰: Մասնավորապես, եթե դիտարկենք բազմակազմ հասարակությունների (Լիբանան, Ադրբեջան, Կանադա, Հնդկաստան և այլն) օրինակները, կնկատենք, որ դրանցում ներսեգմենտային, խմբային և ինստիտուցիոնալ շահերի անհամադրելիությունը հաճախ ձևավորում է կառավարման ճգնաժամեր, որտեղ որոշումներ կայացնելու գործընթացը մեթոդաբանական, ընթացակարգային, մոդելավորման ակնթարթային թարմացումների կարիք ունի: Ուստի, ինչպես նշում է Նապոլեոն Առաջին Բոնապարտը, «ոչինչ այնքան դժվար չէ, որքան որոշում կայացնել կարողանալը»²¹: Իսկ սա հետևողական և գործիմաց աշխատանքային մոտեցումներ մշակելու անհրաժեշտություն է առաջացնում ոչ միայն որոշում կայացնողների, այլև համալիր գործընթացին առնչվող ցանկացած բաղադրիչի համար:

Եզրակացություններ

Որոշումների ընդունման գործընթացը, անկախ դրա տարածական և ժամանակային չափումներից, միշտ եղել է պետությունների և անհատների

²⁰ McLucas 2003, 6-8.

²¹ Winter 2020, <https://www.chesshistory.com/winter/extra/napoleon.html>.

ուշադրության կենտրոնում: Բոլորը ինչպես անհատական, այնպես էլ հավաքական մակարդակներում կայացնում են որոշումներ՝ նպատակ ունենալով լուծել իրենց առջև ծառացած խնդիրները և նշմարել տեսանելի ապագան: Քաղաքական որոշումների կայացման գործընթացը բավական բարդ գործընթաց է, որտեղ կարևորվում են ինչպես հիմնախնդրի ձևակերպումը, նպատակադրումը, փուլերը, որոշման արժեքավորումը և գնահատումը, այնպես էլ որոշման մոդելավորման և մեթոդաբանության հետ կապված հարցերը: Քաղաքական գործընթացների համատեքստում հատկապես կարևորվում է արդյունավետ որոշումների ընդունումը, որը նախատեսում է ոչ միայն մեթոդաբանական առանձնահատկություններ, այլև կիրառման փորձ և հմտություններ: Այս հարցերը հատկապես արդիական են Հայաստանի Հանրապետության դեպքում, քանի որ վերջին երեսուն տարիներին նկատելի են պետության լավ կառավարման, պետական ինստիտուտների գործառնման և անհրաժեշտ կադրային քաղաքականության հետ կապված քաղաքական մշակույթի հիմնախնդիրներ, որոնց ճիշտ լուծում տալը ժամանակի հրամայականն է և բարեկեցիկ պետություն ձևավորելու նախադրյալը:

Գրականություն

- Հայրապետյան Դ. 2010, Որոշումների ընդունման հոգեբանություն (տեսությունների վերլուծություն), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 39:
- Շահգեղյան Մ. 1994, Ուլքեր են ընդունում քաղաքական որոշումներ, Բանբեր Երևանի պետական համալսարանի, N 1 (82), Երևան, էջ 144-149:
- Շահգեղյան Մ. 1996, Քաղաքական որոշումների ընդունման մեթոդաբանական վերլուծություն (թեկնածուական ատենախոսություն), Երևան, էջ 7-9:
- Дегтярев А. 2004, Принятие политических решений, Москва, «Университет книжный дом», с. 218-229.
- Куликов А. 2000, Методы принятия решений в международных организациях и на международных конференциях, Московский журнал международного права, N 3, Москва, с. 211-215.
- Ланцова С., Ачкасова В. 2005, Мировая политика и международные отношения, Москва, «Питер», с. 240-248.
- Минцберг Г. 2018, Менеджмент: природа и структура организаций (город не указан), «Эксмо», с. 720.

- Cox R., Jacobson H. 1975, Anatomy of Influence: Decision Making in International Organization, p. 37-38.
- Duncan G. 1990, The Comparative Survey of Freedom: Experiences and Suggestions, Studies in Comparative International Development, N 25 (1), p. 25-50.
- Eisenführ F., Weber M., Langer T. 2010, Rational Decision Making, Springer Berlin Heidelberg, p. 447.
- Mu E., Pereyra-Rojas M. 2016, Practical Decision Making: An Introduction to the Analytic Hierarchy Process (AHP), Using Super Decisions V2, Springer International Publishing, p. 111.
- Pettigrew A. 2009, The Politics of Organizational Decision-Making, Routledge, p. 301.
- Reinalda B. 2004, Decision-Making within International Organizations, Routledge/ECR Studies in European Political Science, p. 109.
- Saaty T., Vargas L. 2012, Models, Methods, Concepts & Applications of the Analytic Hierarchy Process, p. 333-337.
- Simon H. 1976, From Substantive to Procedural Rationality, In S.J. Latsis (Ed.), Method and Appraisal in Economics, Cambridge, Cambridge University Press, p. 130-131.
- Simon H. 2000, Administrative Behavior (4th Edition), TFP, p. 369.
- Smith D. 2020, Structured Decision Making: Case Studies in Natural Resource Management, JHUP, 270.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նարեկ Գրիգորյան

Ամփոփում

Քաղաքական որոշումների կայացման գործընթացը միշտ եղել է պետությունների ուշադրության կենտրոնում: Սա ունի մի շարք տեսագործական դրսևորումներ, որոնք արտացոլում են որոշումների կայացման գործընթացի ամբողջ էությունը:

Պետության դեպքում որոշումների կայացման գործընթացի առանձնահատկությունը ավելի շուտ պայմանավորված է փոխադարձության և համամասնության կարևոր սկզբունքներով: Հիմնական նպատակը բոլորի մաս-

նակցությամբ արդյունավետ պետական քաղաքականության իրականացումն է, ինչպես նաև համատեղ փոխընդունելի որոշումների ընդունումը: Համատեղ որոշումների կայացումը սովորաբար հանգեցնում է նրան, որ որոշման արդյունքների և հետևանքների մեղավորը ոչ թե մեկն է, այլ բոլորը: Արդյունավետ որոշումների ընդունումը պայմանավորված է որոշումների կայացման փուլերով, որոնց ճիշտ մեթոդաբանությունը և մոդելավորումը որոշումների ընդունման գործընթացի հիմքն են:

Կարևոր խնդիրներից մեկը արտակարգ կամ կրիտիկական իրավիճակներում որոշում կայացնելու խնդիրն է, մի գործընթաց, որն ունի հատուկ ընթացակարգեր և տեխնոլոգիաներ: Կապի տեխնոլոգիաների դերը նույնպես կարևոր է, երբ որոշումների կայացման գործընթացն ուղեկցվում է դիվանագիտական կամ բանակցային գործիքների օգտագործմամբ:

Քանակի բառեր՝ քաղաքական որոշում, որոշումներ ընդունելու գործընթաց, բանակցություններ, մոդելավորում, փուլեր, մեթոդներ, դիվանագիտություն:

МЕТОДОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРОЦЕССА ПРИНЯТИЯ ПОЛИТИЧЕСКИХ РЕШЕНИЙ

Нарек Григорян

Резюме

Процесс принятия политических решений всегда был в центре внимания государств. В связи с этим существует ряд теорий и практических проявлений, которые отражают суть процесса принятия решений.

Специфика процесса принятия решений в условиях государства обусловлена, скорее, важными принципами взаимности и пропорциональности. Здесь основной целью является осуществление эффективной государственной политики при участии всех, а также принятие совместных взаимоприемлемых решений. Принятие совместных решений приводит к тому, что за результат и последствия ответственность будут нести все. Принятие эффективных решений обусловлено их поэтапностью и составляет основу данного процесса с соответствующей методологией и моделированием.

Одним из важных вопросов является вопрос принятия решений в чрезвычайных или критических ситуациях, что предполагает специальные

процедуры и технологии. При этом важна также роль коммуникационных технологий, когда процесс принятия решений сопровождается применением дипломатических или переговорных инструментов.

Ключевые слова – политическое решение, процесс принятия решений, переговоры, моделирование, этапы, методы, дипломатия.

METHODOLOGICAL ANALYSIS OF POLITICAL DECISION-MAKING PROCESS

Narek Grigoryan

Abstract

The political decision-making process has always been at the center of attention of states. In this regard, there are a number of theories and practical manifestations that reflect the whole essence of the decision-making process.

The specificity of the decision-making process in conditions of the state is rather due to the important principles of reciprocity and proportionality. The main goal here is the implementation of an effective state policy with the participation of all, as well as the adoption of joint mutually acceptable decisions. Making joint decisions leads to the fact that not one, but all will be blamed for the results and consequences. The adoption of effective decisions is conditioned by the stages of decision making, which form the basis of this process by appropriate methodology and modeling.

One of the important issues is the issue of decision-making in emergency or critical situations, a process that has special procedures and technologies. The role of communication technologies is also important, when the decision-making process is accompanied by the use of diplomatic or negotiation tools.

Key words – political decision, decision-making process, negotiations, modeling, stages, methods, diplomacy.

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Հասմիկ Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128
Էլ. հասցե՝ h.harutyunyan@live.ru

Մարիանա Քոչարյան

Տնտեսագիտության թեկնածու
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128
Էլ. հասցե՝ marianakocharyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 15.09.2020, գրախոսվել է 15.09.2020,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-102

Ներածություն

Թվային տնտեսությունում տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) աճող դերը նոր պահանջներ է ներկայացնում դրանց տեսամեթոդական և գործնական հայեցակարգերի գիտական հիմնավորմանը: Ժամանակակից տնտեսագիտական գրականությունում թվային տնտեսությանն առնչվող մի շարք հիմնահարցեր, որոնցից է նաև հանրային կառավարման համակարգի տեղեկատվայնացումը, դեռևս բավարար մակարդակով ուսումնասիրված չեն և հետագա ընդհանրացման ու կատարելագործման կարիք ունեն: Ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում հանրային կառավարման համակարգում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև համակարգի տեղակատվայնացման արդի վիճակը, դրա արդյունավետության վրա ՏՀՏ ազդեցության գնահատականը՝ կարող ենք մատնանշել այդ գործընթացների կատարելագործման ուղիների մշակումը:

Տեղեկատվայնացումն իրականացվում է հանրային կառավարման բոլոր մակարդակներում՝ պետական կառավարումից մինչև տեղական

ինքնակառավարման մարմիններ և առանձին կազմակերպություններ: Վերոնշյալ և մի շարք այլ հիմնախնդիրների հետազոտությունը, արդի գիտական մեթոդների և գործիքակազմի հաշվառմամբ երաշխավորությունների մշակումը կնպաստեն հանրային կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ հասարակության թվայնացման պայմաններում:

Ներկայումս ամբողջ աշխարհում գնալով մեծանում է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների դերը: Առանց դրանց հնարավոր չէ ընդունել արդյունավետ կառավարչական որոշումներ ո՛չ բիզնեսում, ո՛չ քաղաքականության մեջ, ո՛չ պետական կառավարման և ո՛չ էլ մարդու կենսագործունեության որևէ ոլորտում¹:

Թվայնացումը հանրային կառավարման համակարգում

Թվայնացումը, լայն իմաստով, ընդգրկելով գիտությունը, արտադրությունը, սոցիալական միջավայրը, կարող է ապահովել հասարակության անդամների բարեկեցության մակարդակը ու դրանով հնարավորություն ընձեռել հասարակության հետագա զարգացման ապահովման համար:

Հանրային կառավարման կատարելագործման հիմնական ջանքերը նույնպես միտվում են էլեկտրոնային կառավարման համակարգի ընդլայնմանը և քաղաքացիական հասարակության տեղեկատվական ակտիվության ապահովմանը: Պետության կայունության համար շատ կարևոր է կառավարման միասնական, անկախ համակարգի ձևավորումը, որի հիմնական նպատակը պետք է լինի գործունե կառուցակարգերի մշակումն ու կիրառումը հանրային կառավարման համակարգի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հանրային կառավարման միասնականությունը, ենթահամակարգերի փոխկապվածությունը, իշխանության մարմինների՝ միմյանց վրա ազդեցությունը հնարավոր է ապահովել տեղեկատվական համակարգերի միջոցով²:

Հանրային կառավարման համակարգի կատարելագործման խնդիրներից է արդյունավետ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) կիրառումը, որի կարևոր բաղադրիչներից են համակարգում տեղեկատվության համակարգերի ներդրումը և զարգացումը: Տեղեկատվության ապահո-

¹ Максимова 2020.

² Информационные технологии в государственном и муниципальном управлении: учебное пособие 2013.

վումը լուծում է հանրային կառավարման համակարգի ներսում դրա տեղեկատվության փոխանակման և ծառայության արդյունավետ կազմակերպման խնդիրները: Հանրային կառավարման տարբեր ենթահամակարգերի միջև տեղեկատվության փոխանակումը, ներցանցային համակարգի ստեղծումը մեծացնում են ծառայողների կողմից աշխատանքների կատարման արդյունավետությունը և դրանց վերահսկելիությունը: Տեղեկատվական համակարգերի ներդրումն առավելապես կարևորվում է պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքների կատարման առումով:

Այս նպատակով ՀՀ հանրային կառավարման համակարգում վերջին տարիներին ներդրվել են տեղեկատվության փոխանակման ապահովման տարբեր մեխանիզմներ՝ պետական կառավարման «Mulberry» համակարգը և համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ): Տեղեկատվության փոխանակման արդյունավետությունը պայմանավորված է նաև հանրային ծառայողների՝ ժամանակակից ՏՏ կիրառման կարողություններով, հմտություններով, ուստի անհրաժեշտ է ծառայողների համար (մասնավորապես՝ համայնքային) կազմակերպել ՏՏ ծրագրերով ուսուցման և վերապատրաստման դասընթացներ: Հանրային կառավարման մարմինները տեղեկատվական համակարգի միջոցով հասարակությանը իրազեկում են իրենց կատարած աշխատանքների մասին, իսկ հասարակությունը առցանց կարող է ապահովվել ծառայություններով և մասնակցել հանրային կառավարմանը: Տեղեկատվական համակարգերի արդյունավետ կիրառումը պետք է դառնա հանրային կառավարման միասնական համակարգի գործարկման առանցքային բաղադրիչներից մեկը:

Բավականաչափ բարդ է հանրային կառավարման գործընթացի և արդյունքների վերաբերյալ ամբողջական, հավաստի մեկնարկային տեղեկատվության ստացումը, որը ներկայումս հանրային կառավարման արդյունավետության գրավականն է: Հանրային կառավարման մարմինների կողմից կառավարման գործընթացում ՏՏ կիրառումը հնարավորություն կտա վերլուծելու և ընդհանրացնելու տեղեկատվությունը, բացահայտելու գործոնների փոխկապվածությունը և ազդեցությունները, ապահովելու արդյունավետ հետադարձ կապ, խթանելու տեղեկատվության փոխանակությունը և այլն: Այս ամենի իրականացումը հնարավոր է, եթե ծառայողները կարողանան տիրապետել վերլուծական աշխատանքի համար անհրաժեշտ ժամանակակից մեթոդներին ու եղանակներին:

Հանրային կառավարման համակարգի տեղեկատվայնացման նախադրյալները ՀՀ-ում

Չնայած այն բանին, որ ներկայումս առկա են SS ոլորտը կարգավորող օրենսդրանորմատիվային բազմաթիվ ակտեր, այնուամենայնիվ, կան մի շարք հարցեր, որոնք պետական կարգավորում են պահանջում: 2000 թ. ի վեր SS ոլորտը ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Այնուհետև 2001 թ. ՀՀ կառավարության հավանությանն արժանացան ՀՀ SS արդյունավետության զարգացման, իսկ 2008 թ.³ SS ոլորտի զարգացման հայեցակարգերը: 2001 թ. ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվել է SS զարգացմանն աջակցող խորհուրդ (SSՀԱԽ), որի նախագահը ՀՀ վարչապետն է: Խորհուրդը, որպես կառավարության և SS բիզնեսի, կրթական հաստատությունների, SS հասարակական, դոնոր և միջազգային կազմակերպությունների միջև կապող օղակ, կազմակերպում և իրականացնում է տեղեկատվական հասարակության կայացմանը և SS արդյունաբերության խնդիրների լուծմանը նպաստող քննարկումներ³:

Օրենսդրանորմատիվային փաստաթղթերի շարքում կարևորվում է նաև 2010 թ. փետրվարին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010-2012 թթ.)»⁴:

SS ոլորտի երկարաժամկետ զարգացման հիմքերը դրվեցին «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով», ըստ որի՝ ՀՀ ռազմավարական գերեկայություններից մեկը սահմանվեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը:

Ծրագրով նախատեսված՝ SS ներդրումն ապահովելու նպատակով սահմանվեցին առաջնահերթություններ. ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը և «էլեկտրոնային մասնակցության» խթանումը, համայնքներում SՀS ներդրման գործում պետական, մասնավոր և միջազգային ռեսուրսների ներգրավումը, համայնքներում SՀS ներդրման օրենսդրական, նորմատիվ

³ SS ոլորտի խթանման ծառայությունների 2010 թվականի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում՝ հաստատված 20.05.2010:

⁴ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010-2012 թթ.)՝ հաստատված 25.02.2010 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=129386>:

և մեթոդական կարգավորումը, տեխնիկական ենթակառուցվածքների ապահովումը, ՏԻՄ-երում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրումը⁵: Այս ամենն իրագործելու համար 2014 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության» հայեցակարգը⁶:

Ոլորտի կայուն զարգացումը ապահովելու նպատակով 2013-2019 թթ. ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի ընդունել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման առնչվող տարբեր ծրագրեր, որոնք ուղղվել են ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության շարունակական զարգացման ապահովմանը, գիտելիքահենք տնտեսության ձևավորմանն ու զարգացմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանմանն ու համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զարգացած տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացմանը⁷:

2017 թ. ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով սահմանվեցին ՏՏ ոլորտի խթանման միջոցառումների հետևյալ նպատակները՝ Հայաստանում տեղեկատվական հասարակության և զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացումը, աշխարհի առաջատար ՏՀՏ-ի երկրների շարքում Հայաստանը ՏՀՏ ուղղվածությամբ դասվելը, ոլորտի արդյունավետության աճի պահպանումը և զարգացումը, որակյալ աշխատուժի աճի շարունակական զարգացմանը նպաստելը: ՀՀ կառավարությունը ՏՏ զարգացումը դիտարկեց որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձ-

⁵ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված:

⁶ «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության» հայեցակարգ, ՀՀ կառավարության որոշում, հաստատվել է 19.03.2014 թ., https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/03/11-20_1ardz.pdf.

⁷ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը», Հավելված N 1, ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 29-Ն որոշում:

րացման հիմնական գործոն: Ակնկալվում էր պետական աջակցության միջոցով երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծում⁸:

ՏՀՏ ոլորտի զարգացման համար կարևորվեց «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով սահմանվեցին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հիմնական սկզբունքները, ինչպես նաև ՏՏ ոլորտում պետական աջակցության իրականացման համակարգի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները⁹: Օրենքով սահմանվեցին նաև ՏՏ ոլորտում պետական աջակցության հիմնական նպատակները, որոնցից կարևորվում են՝ ՏՏ ոլորտում մրցունակության բարձրացումը, արհեստավարժ աշխատուժի ներգրավումը, աշխատակիցների հմտությունների շարունակական բարձրացումը, մրցունակ աշխատավարձերի սահմանումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և այլն:

Կարևորվում է նաև «Թվային Հայաստան» հիմնադրամի ստեղծումը, որի նպատակներն են ՀՀ-ում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդյունավետության բարձրացումը, թափանցիկության և բարենպաստ բիզնես-միջավայրի ապահովման համար՝ տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիական հենքի վրա հիմնված՝ հանրապետական կառավարման բոլոր ոլորտներում միասնական թվայնացված միջավայրի ձևավորումը, թվային ենթակառուցվածքի կենտրոնացված համակարգումը և հսկումը¹⁰:

Տարեցտարի հեռահաղորդակցության միջոցների հասանելիությունը և քաղաքացիների կողմից համացանցի օգտագործման ծավալների մեծացումը հանգեցնում են համացանցով մատուցվող ծառայությունների պահանջարկի մեծացմանը, որը համապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին ստիպում է ակտիվորեն կիրառել համացանցը, քաղաքացիներին տրամադրել

⁸ «Հայաստանի հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին», Հավելված N 3, ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշում:

⁹ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 17.12.2014, ՀՕ-245-Ն:

¹⁰ «Թվային Հայաստան» հիմնադրամ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարություն որոշում, 03.08.2017, N 926-Ն:

արդիական տեղեկատվություն և առցանց ծառայություններ մատուցել: Համացանցի հասանելիության աստիճանի բարձրացմանը զուգահեռ՝ ավելանում է հանրային գերատեսչությունների քանակը, որոնք ակտիվորեն կիրառում են որակյալ և մշտական համացանց:

Պայմանավորված այն հանգամանքով, որ վերջին շրջանում թագավարակի գոյությունը ստիպեց բոլոր կազմակերպություններին, ինչպես նաև հանրային կառավարման մարմիններին կառավարման գործառույթի, գործավարության, փաստաթղթաշրջանառության զգալի մասը տեղափոխել առցանց տիրույթ, տրամաբանական է, որ SS զարգացման և էլետրոնային կառավարման տրամաբանությունը պետք է միտված լինի նախ և առաջ ՀՀ ազգային անվտանգության ապահովմանը: Այս առումով կարևորվեց 2020 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունը», որի հիմքում դրված է ազգային անվտանգության պլանավորման և ապահովման համազգային մոտեցումը¹¹:

Անվտանգ հանրային կառավարման ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման միասնական համակարգի, ինչպես նաև հասարակության ջանքերի մեկտեղում: Պատահական չէ, որ ռազմավարության անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից մեկը SS-ն է: Ժամանակակից աշխարհում ընթացող անվտանգային սպառնալիքներն ավելի հաճախ են դրսևորվում տեղեկատվական պատերազմների տեսքով՝ ներառելով կեղծ լուրերի և ապատեղեկատվության համալիր գործիքակազմեր:

Ներկայումս հասարակական կյանքի և կենսագործունեության տարբեր ոլորտներում տեղեկատվական հեռահաղորդակցային տեխնոլոգիաների կիրառման մակարդակի աճը հանգեցրել է ոլորտի զարգացմանը և նոր հնարավորությունների բացահայտմանը, սակայն դրան զուգահեռ մեծացել են վտանգներն ու մարտահրավերները՝ ուղղված անվտանգ հանրային կառավարմանը: Թեև ՀՀ տեղեկատվական անվտանգության քաղաքականության հիմնական նպատակը անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռումն ու պաշտպանությունն է, և SS զարգացումը հիմնվում է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության և ազատությունների իրացման վրա, սակայն պետք կարևորել նաև պետության ինքնիշխանության ապահովումը, ազգային արժեքների պահ-

¹¹Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն 2020:

պանությունը, քանի որ շատ հաճախ հենց դրանք են տեղեկատվական պատերազմների թիրախ դառնում: Այսպիսով, պարզ է, որ ինչպես անհատի և հասարակության, այնպես էլ պետության անվտանգությունը տեղեկատվական տիրույթում պաշտպանության կարիք ունի: Ուստի, մեր կարծիքով, ՀՀ հանրային կառավարման տեսլականը պետք է հիմնվի անվտանգ տեղեկատվական ենթակառուցվածքների ստեղծման և դրանց ժամանակակից կառավարման գործիքների ներդրման վրա:

Հանրային կառավարման անվտանգության և արդյունավետության բարձրացման տեսակետից կարևորվեց բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2020 թ. մարտի 11-ի 179-Ա հրամանը, որին կից հավելվածով¹², ի թիվս բազմաթիվ կրթական, գիտական, բիզնես նպատակների, առանձնացվեցին հետևյալ առաջնահերթությունները. տնտեսության և կառավարման համակարգերի մասշտաբային թվայնացումը, ռազմական արդյունաբերության զարգացումը՝ որպես բարձր տեխնոլոգիական բազմապրոֆիլային համակարգ: Այս նպատակների իրագործման համար էական է տարածքային համաչափ զարգացման ապահովումը՝ մարզերում ՏՏ արտադրական, ինժեներական և սոցիալական ենթակառուցվածքների ներդրման, հանրային ծառայողների և ոլորտի կադրերի վերապատրաստումների միջոցով: Սրանք, բացի իրենց բուն նպատակից, հնարավորություն կտան իրագործելու նաև Հայաստանի համար ռազմավարական նշանակության հետևյալ նպատակները՝ միգրացիայի կանխումը և ուրբանիզացիայի մակարդակի իջեցումը, մասնավորապես արհեստավարժ մասնագետների՝ արտերկիր մեկնումը և մարզերի բնակչության արտահոսքը դեպի Երևան, ինչպես նաև գործազրկության մակարդակի նվազումը:

Եզրակացություններ

Այս համատեքստում, ՏՏ ոլորտի զարգացման պետական քաղաքականության բացթողումները, ինչպիսիք են օրենսդրական դաշտի անկատարությունը, հանրային կառավարման մարմինների ոչ բավարար կարողությունները, ենթակառուցվածքների բացակայությունը, օտարածին տեխնոլոգիաների գոյությունը, ոչ թե պետք է մտահոգվելու տեղիք տան, այլ

¹² https://hti.am/edfiles/files/556_A.pdf

անհրաժեշտ է ստեղծել անհապաղ գործելու և ազգային տեխնոլոգիական հենքը զարգացնելու հնարավորություն:

Գրականություն

- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը՝ 17.12.2014, ՀՕ-245-Ն:
- «Թվային Հայաստան» հիմնադրամ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարություն որոշում, 03.08.2017, N 926-Ն:
- SS ոլորտի խթանման ծառայությունների 2010 թվականի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում՝ հաստատված 20.05.2010, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=58689> (ներբեռնման օրը՝ 08.09.2020).
- Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն 2020, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razma-varutyun-Final.pdf (ներբեռնման օրը՝ 03.09.2020).
- «Հայաստանի հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին», Հավելված N 3, ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշում:
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը», Հավելված N 1, ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 29-Ն որոշում:
- Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 –Ն որոշման հավելված:
- «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության» հայեցակարգ, ՀՀ կառավարության որոշում, հաստատվել է 19.03.2014 թ., https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/03/11-20_1ardz.pdf (ներբեռնման օրը՝ 05.09.2020).
- Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010-2012 թթ.)՝ հաստատված 25.02.2010 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=129386> (ներբեռնման օրը՝ 05.09.2020).

Информационные технологии в государственном и муниципальном управлении: учебное пособие 2013, М.А. Абросимова, 2-ое изд., Москва, «Кнорус», 248 с.

Максимова А.Ю. 2020, Информационные технологии в деятельности органов государственного и муниципального управления, <https://cyberleninka.ru/article/n/informatsionnye-tehnologii-v-deyatelnosti-organov-gosudarstvennogo-i-munitsipalnogo-upravleniya> (ներբեռնման օրը՝ 14.09.2020).

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հասմիկ Հարությունյան, Մարիանա Քոչարյան

Ամփոփում

Ժամանակակից տնտեսական և կառավարման համակարգերի ձևավորման վրա տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (SS) ազդեցության շնորհիվ XX դ. վերջին համաշխարհային տնտեսությունը արմատական կերպով վերափոխվեց:

Վերջին տարիներին տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաները տնտեսության ցանկացած բնագավառում առաջընթաց ապահովող կարևոր բաղադրիչներ են: XXI դարում ժամանակակից մարդը չի կարող իրականացնել արդյունավետ գործունեություն առանց ՏՀՏ-ի, քանի որ յուրաքանչյուր ոլորտում հաջողություն ապահովելու համար մեծապես կարևորվում են մարդկանց իրազեկվածությունը և տեղեկատվությունն արդյունավետ օգտագործելու ունակությունը, որն էլ տեղեկատվական հասարակության և թվային տնտեսության ստեղծման հիմքն է: Իսկ վերջիններիս ձևավորումը հնարավոր է տնտեսության հանրային կառավարման համակարգում ՏՀՏ ներդրմամբ, ոլորտի տեղեկատվայնացմամբ: Այլ կերպ ասած՝ թվային տնտեսությունում ժամանակակից տեղեկատվական հասարակությունը պահանջում է որակապես նոր հանրային կառավարման համակարգ, որի բարեփոխման կարևոր պայմաններից են ՏՀՏ ներդրումն ու կիրառումը:

Բանալի բառեր՝ թվային տնտեսություն, հանրային կառավարում, տեղական ինքնակառավարում, տեղեկատվայնացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն, տեղեկատվություն:

ПРОБЛЕМЫ ИНФОРМАТИЗАЦИИ СИСТЕМЫ ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В РА

Асмик Арутюнян, Мариана Кочарян

Резюме

В результате влияния информационных и телекоммуникационных технологий на формирование современных экономических и управленческих систем мировая экономика конца двадцатого века претерпела радикальные изменения. В последние годы информационные и телекоммуникационные технологии стали важными компонентами в развитии любой области экономики. В XXI веке современный человек не может эффективно работать без ИКТ, поскольку для достижения успеха в любой сфере важна осведомленность людей и умение эффективно использовать информацию, что является основой создания информационного общества и цифровой экономики. А формирование последних возможно с внедрением ИКТ в систему общественного управления, с информатизацией сферы. Иными словами, в условиях цифровой экономики современное информационное общество нуждается в качественно новой системе общественного управления, одним из важных условий реформирования которой является внедрение и применение ИКТ.

Ключевые слова – цифровая экономика, общественное управление, местное самоуправление, информатизация, информационные технологии, телекоммуникация, информация.

ISSUES OF INFORMATIZATION OF PUBLIC ADMINISTRATION SYSTEM IN THE RA

Hasmik Harutyunyan, Mariana Kocharyan

Abstract

As a result of the influence of information and telecommunication technologies on the development of modern economic and management systems, the global economy was radically transformed at the end of the 20th century.

Nowadays, information and communication technologies are important components of progress in any field of economy. In the 21st century, a modern person cannot perform effective work without ICT, because people's awareness and ability to use information effectively are highly important in order to ensure the success in every field, which is the foundation of the development of information society and digital economy. And the formation of the latter is possible with the implementation of ICT in the public administration system of the economy and with the informationization of the sector. In other words, in the digital economy the modern information society requires a qualitatively new public administration system, one of the most important factors for the improvement of which is the introduction and application of ICT.

Key words – digital economy, public administration, local government, informatization, Information Technology, telecommunication, information.

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒԲՈՒՐ/ՍՈՒԲԱՐՏՈՒ ԵՐԿԻՐՆ ԱԴԱԲԻ ԱՐՔԱ ԼՈՒԳԱԼ- ԱՆՆԵ-ՄՈՒՆԴՈՒԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Ռոբերտ Ղազարյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
Էլ. հասցե՝ rghazaryan@orient.sci.am

Ռուսլան Յականյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
Էլ. հասցե՝ rooslantsakanyan@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 24.08.2021, գրախոսվել է 03.09.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-114

Ներածություն

Վաղնջական Հայաստանի և նրա հարակից տարածքների վերաբերյալ թեև սուղ, սակայն միաժամանակ բավականին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում շումերական սեպագիր արձանագրությունները: Այդ արձանագրությունները, սակայն, և մասնավորապես՝ մ.թ.ա. III հազարամյակի Հայկական լեռնաշխարհի ու նրան հարող տարածքների վերաբերյալ տեղեկությունները հիմնականում քաղաքական ու պատմաաշխարհագրական տարաբնույթ հիշատակություններ են¹:

Մ.թ.ա. III հազարամյակում, Հայկական լեռնաշխարհի հարավում և նրա հարակից տարածքներում է գտնվել Սուբուր/Սուբիր երկիրը, որի բնակիչները, ընդունված տեսակետներից մեկի համաձայն, եղել են հիմ-

* Հոդվածը հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի «Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի Բ.ա. III հազարամյակի երկրորդ կեսի և II հազարամյակի առաջին կեսի գրավոր աղբյուրներում» թեմատիկ ծրագրի (ծածկագիր՝ 20TTSH-047) շրջանակում:

¹ Մովսիսյան 2005, 5-11, Մովսիսյան 2013, 49-50:

նականում խոտիները²: Նույն տեսակետի համաձայն՝ խոտիների բնակեցրած տարածքը շումերերեն կոչվում էր Սու-բիր, իսկ ակկադերեն՝ Սուբարտու կամ Շուբարտու: Մ.թ.ա. II հազարամյակի և I հազարամյակի սկզբների գրավոր աղբյուրներում Հյուսիսային Միջագետքի բնիկները կոչվում են շուբարեցիներ³:

Սուբուր երկրի տեղադրությունն ու ուսումնասիրության աստիճանը

Սուբուր երկրի անվանումը սեպագիր արձանագրություններում, շատ հաճախ, տարբեր կերպ է արձանագրվել՝ ŠUBUR, SU.BIR^{KI} (SU₆.BIR₄^{KI})SU, SU, SU.EDEN, SU.BAL.BIR^{KI}, SU.BAPPIR, SUBAR, աքքադերեն Š/SUBARTU(M)⁴, և այլն: Չի բացառվում, որ այս կամ այն տարբերակը գրչի կամայականության արդյունք լինի⁵:

Սուբուր երկրի ուսումնասիրությունը սկսվեց նախորդ դարի առաջին քառորդում, երբ Ա. Ունգնադը մի հոդված⁶ հրատարակեց, ապա և մենագրություն⁷, որտեղ տեղ գտած տեսակետները այսօր արդեն բավական հնացած կարելի է համարել: Շուրջ երկու տասնամյակ անց Ի. Գելը խնդրի վերաբերյալ հրատարակեց իր կոթողային և մինչև օրս արդիականությունը չկորցրած մենագրությունը⁸: Բավական լուրջ քննական հիմքերի վրա դրվեցին Սուբուր երկրի տարածքային ընդգրկվածության, էթնիկ ու լեզվական տարբեր խնդիրները:

Պետք է արձանագրել նաև, որ կան մասնագետներ, մասնավորապես Պ. Միխալովսկին, ըստ որոնց՝ Սուբարտուի վերաբերյալ տեղեկություններին պետք է վերաբերվել բացառապես որպես գեղարվեստական ու հորինված պատումի⁹: Գտնում ենք, սակայն, որ նմանատիպ մեկնաբանությունները չունեն լուրջ հիմնավորվածություն: Այսպես, Ֆառայից¹⁰,

² Հայ ժողովրդի պատմություն 1971, 147; Дьяконов 1983, 16-23; Дьяконов 1968, 14, հմմտ. նաև՝ Дьяконов 1967, 113-116; Хачикян 1985, 6.

³ Հայ ժողովրդի պատմություն 1971, 147:

⁴ Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie 2011-2013, 225-226, Ungnad 1936, 24-30, Gelb 1944, 28, Speiser 1948, 11, O'Callaghan 1948, 38, 42, Մովսիսյան 2005, 48-55:

⁵ Архипов 2002, 77.

⁶ Ungnad 1923, 3-16.

⁷ Ungnad 1936.

⁸ Gelb 1944.

⁹ Michalowski 1986, 129-155.

¹⁰ St'au Deimel 1924:

մ.թ.ա. XXVI-XXV դարերով թվագրվող և հիմնականում տնտեսական բնույթի բնագրերում սուբարեցիների անվան տակ իսկապես կարելի է հասկանալ Սուբարու/Սուբարտուի բնակիչներին (դպիրներ, դարապետներ, դարբիններ, այգեպաններ, հացթուխներ և այլք), որը հիմք է տալիս պնդելու այդ երկրի կամ համադաշնության գոյությունը¹¹:

Ինչևէ, հարկ է նշել նաև, որ Սուբուր երկրի տարածքային ընդգրկվածության վերաբերյալ Ա. Ունգնադի տեսակետը հետագայում կարծես թե համապատասխանում էր Ի. Գելբի տված տեղորոշման հետ, որն էլ ցայսօր չի կորցրել իր արդիականությունը: Այսպիսով, Սուբարտուն առնվազն տեղադրվում էր Հյուսիսային Միջագետքում՝ Տիգրիս գետի, Զագրոսյան լեռների ու Դիլալա գետի միջև ընկած բավական ընդարձակ տարածքներում¹² կամ Զագրոսյան լեռներից մինչև Ամանուսի լեռներ: Հետագայում նրա տեսակետներն ընդունեցին շատերը¹³:

Սուբուր երկիրը հայ պատմագրության մեջ

Հայ իրականության մեջ Սուբուր երկրի վերաբերյալ անդրադարձները հիմնականում հպանցիկ են եղել:

Սուբարտուի վերաբերյալ Ն. Ադոնցը նշում է. «Շուբարին չի կարող Շուպրիից տարբեր լինել: Շուբարի տերմինը սկզբում վերաբերում էր ամբողջ Միջագետքին»¹⁴: Մեծանուն գիտնականը անդրադարձել է նաև Սուբարտուի տեղորոշմանը, որը, ըստ նրա, ընդգրկել է Բուժե կամ Օպպումու և Կուլլիմերի քաղաքների շրջանը կամ անտիկ ժամանակաշրջանի Արգանեն¹⁵:

Ե. Քասունին գտնում էր, որ Սուբարտուն, որն ուներ բավականաչափ զարգացած քաղաքակրթություն, ո՛չ միայն տարածվել է Հայկական լեռնաշխարհով մեկ, այլև սուբարիներն ունեին կա՛մ փոքրասիական, կա՛մ կովկասյան ծագում¹⁶: Ըստ Ե. Քասունու, սուբարեական ցեղերի մոտ միասնություն չկար, որի պատճառով էլ նրանք չկարողացան մեկ միասնական պետություն ստեղծել¹⁷:

¹¹ Մովսիսյան 2005, 62, Gelb 1944, 31f.

¹² Ungnad 1936, 38f., Gelb 1944, 34.

¹³ Speiser 1948, 7f.

¹⁴ Ադոնց 1972, 52:

¹⁵ Ադոնց 1972, 26, 52, 56:

¹⁶ Քասունի 1950, 60:

¹⁷ Քասունի 1950 62:

Ըստ Վարդուհի Քալանթար Նալբանդյանի, Սուբարտուն տարածվել է Արբելայի ու Քիրքուքի միջև՝ մինչև Սինջարի բլուրները և Խաբուր գետի հովիտը՝ ներառելով հետագայի ամբողջ Ասորեստանն ու Հյուսիսային Միջագետքը¹⁸:

Հայաստանյան պատմագիտական դպրոցը, հանձին երջանկահիշատակ պատմաբան Արտակ Մովսիսյանի՝ լուրջ հիմքերի վրա դրեց մ.թ.ա. III հազարամյակի վաղնջական Հայաստանի ու Հայկական լեռնաշխարհի և նրան հարող տարածաշրջանների քննական պատմության ուսումնասիրությունը¹⁹: Ըստ Ա. Մովսիսյանի՝ Սուբուր երկիրն ընդգրկել է զգալի մեծ տարածք՝ Վանա լճի ավազանը (հարավում սահման ունենալով Թալմուս-Ազուխինում գիծը), և Ուրմիո լճի ավազանով աղեղնաձև ձգվել է Զագրոսյան լեռներով դեպի հարավ²⁰:

Ադաբի տիրակալ Լուգալ-Աննե-մունդուի արձանագրությունը

Պահպանված տեղեկությունների համաձայն՝ բացի վերը հիշատակված Ֆառայի բնագրերից, Սուբուր երկիրը հիշատակվում է նաև շումերական առաջին տիրակալներից Ադաբ քաղաքի²¹ հարստության արքա Լուգալ-Աննե-մունդուի (**Lugal-an-ne₂** (կամ **na**)-**mu-un-du₃** (կամ **du**) արձանագրության մեջ:

Հարկ է նշել նաև, որ Լուգալ-Աննե-մունդուի արձանագրությունը հայտնի է երկու պատճենների միջոցով, որոնք թվագրվում են հին բաբելական (մ.թ.ա. 1894-1595 թթ.) ժամանակաշրջանով (Աբի-Էս/շուխի (մ.թ.ա. 1711-1684 թթ.) և մեզ են հասել Ամմիծադուկայի (մ.թ.ա. 1646-1626 թթ.) ժամանակներից²²: Լուգալ-Աննե-մունդուի համար «Շումերական արքայացանկը» տալիս է կառավարման 90 տարի. «**18-23. Ադաբում Լուգալ-Աննե-մունդուն դարձավ թագավոր (և) իշխեց 90 տարի: Մեկ արքան իշխեց 90 տարի: Ադաբը պարսրվեց, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Մարի**»²³:

¹⁸ Քասունի 1950, 62:

¹⁹ Մանրամասն տե՛ս Մովսիսյան 1992, 1997, 2000, 2005, 2008:

²⁰ Մովսիսյան 2005, 32, Մովսիսյան 2013, 40, 48:

²¹ Գտնվել է ներկայիս Բիսմայա բնակավայրի մոտ, Թեյլ-Ֆառայից 9,7 կմ հյուսիս:

²² Frayne 1998, 31, Jacobson 1939, 102, not. 182, Liverani 2014, 112, Gadd 1971, 115, Hallo, Simpson 1998, 48ff.

²³ Մովսիսյան 2005, 109, Glassner 2004, 122-123, Jacobson 1939, 102f.

Ընդհանրապես, պատմագրության մեջ վերոնշյալ արքայի գահակալման ժամանակաշրջանի ձեռքբերումները համարվում են բավական համեստ, որպես փոքրիկ Ադաբ քաղաք-պետության տիրակալ, այլ ոչ այնպես, ինչպես նա է իրեն անվանում իր իսկ արձանագրության մեջ՝ «աշխարհի առասպելական նվաճող»²⁴:

Հարկ է նշել նաև, որ Լուգալ-Աննե-մունդուի 155-տողանոց արձանագրության համապատասխան տողերը լատինական տառադարձմամբ և հայերեն թարգմանությամբ ներկայացվում են առաջին անգամ:

Այսպիսով, Լուգալ-Աննե-մունդուն հայտնում է՝

«1. ^dNin-tu ama kalam-ma nin e₂-e dam GAL ^dEn-lil₂-la₂ nin ki-ag₂-ga₂-ni-ir

2. Lugal-an-na-mu-un-du₃ nita kal-ga

3. u₂-a NIBRU^{KI} LUGAL ADAB^{KI}-a-me-en

4. LUGAL LIMMU₂-ba x?-x?-me-en ...»²⁵

«1-4. Նինտուի²⁶, ազգի մոր, տաճարի թագուհու, մեծ կնոջ՝ Էնլիլի²⁷, նրա սիրելի տիկնոջ համար ես՝ Լուգալ-Աննե-մունդուս, ուժեղ մարդ, որն ապահովում է Նիպպուրը, Ադաբի արքա, և աշխարհի չորս կողմերի արքա...»:

Ըստ «Շումերական արքայացանկի»՝ Ադաբի արքան հաղթանակ է տարել Ուրի II հարստության նկատմամբ, ապա պարտություն կրել Մարիի տիրակալից²⁸: Ըստ իր իսկ արձանագրության՝ Լուգալ-Աննե-մունդուն ջախջախում է 13 ապստամբ տիրակալներին ու նրանց առաջնորդ Մարխաշի էնսի²⁹ Միգիր-Էնլիլին՝

«11. u₄-ba Mi-gir-^dEn-lil₂ ENSI₂ Mar-ḫa-ši^{KI}

12. ^{GIŠd}En-lil₂-ez-zu ENSI₂ Ub?^{KI}

13. ^{GIŠd}Seš-ke-e-el ENSI₂ Ke-e-el^{KI}

14. ^{GIŠ}Su-^dA-nu-um ENSI₂ Ka₂-gal-la^{KI}

15. ^{GIŠ}x-x-x-e-lum ENSI₂ Am-da-ma^{KI}

²⁴ Архипов 2002, 88, ИДВ 1, 196, 211.

²⁵ Frayne 1998, E1.1.8.; Michalowski 1986, 143ff.; Ungnad 1936, 31ff.; Poebel 1909, N 130, 123f.; https://cdli.ucla.edu/search/search_results.php?SearchMode=Text&ObjectID=P450160

²⁶ Նինտու (Nin-tu(r)) - շումերական դիցարանի աստվածների մայրը, նա նույնացվել է նաև Դինգիր-մալսի, Բելետ-իլիի և Արուրուի հետ, տե՛ս Frayne, Stuckey 2021, 276.

²⁷ Enlil, Il-il - շումերական դիցարանի երկրորդ աստվածը Անուից (երկնքի աստվածը, աստվածների հայրը) հետո: Փաստացի՝ աստվածների գործադիր ժողովի գերագույն աստվածը՝ Frayne, Stuckey 2021, 94ff.:

²⁸ Մովսիսյան 2005, 109, Jacobson 1939, 102f.

²⁹ Տիտղոսի վերաբերյալ տե՛ս Յականյան 2019, 116-118:

16. ^{GI}Š-l-bi-ma-ma ENSI₂ Ar-da-ma^{KI}
17. ^{GI}ŠNu-ur₂-šu-E-li ENSI₂ A-x-x^{KI}
18. ^{GI}Šd^IŠKUR-šar-rum ENSI₂ Na?-x-x^{KI}
19. ^{GI}ŠBa-ad-ga-nu-um ENSI₂ Zi?-x-x^{KI}
20. ^{GI}ŠZu-mur-ta-nu ENSI₂ [...] ^{KI}
21. ^{GI}ŠRi-im-šu-nu ENSI₂ [...] ^{KI}
22. ^{GI}ŠA-bi-ḫa-ni-iš? ENSI₂ [...] ^{KI}
23. ^{GI}ŠX-bi-ma-ra-ad-[da] ENSI₂ [...] x^{KI}
24. 1.U 3.GIŠ ENSI₂-^{me-eš} mu-x-[...]»

«11-24. Այդ ժամանակ, Մարխաշի էնսի Միգիր-Էնլիլը, Ուբի (?) էնսի Էնլիլ-Էզգուն, Կելի էնսի Շեշ-Կելը, Կագալայի էնսի Շու-Անունը, Ամդամայի էնսի ...-Էլումը, Արդամայի էնսի Իբբի-Մաման, Ա-... (?) էնսի Նուրշու-Էլին, Նա-... (?) էնսի Իշկուր-Չարրումը, Ջի-... (?) էնսի Բադգանումը, ... (?) էնսի Ջամուրտանուն, ... (?) էնսի Ռիմշունուն, ... (?) էնսի Աբի-Խանիշը, ... (?) էնսի X-բի-Մառադդան, 13 էնսիներ էին, որոնք արեցին...»:

Այս ամենից հետո նա իր իշխանությունը հաստատում է Ջագրոսյան լեռներից մինչև Միջերկրական ծով ընկած տարածքում՝ «10. NAM.LUGAL ki-šar₂-ra mu-un-ak-a»- «10. որն իր իշխանությունը տարածեց ամբողջ երկրի վրա»: Նրա ռազմարշավի ընթացքում նվաճվում և թալանվում, միգրացե նաև հարկատու է դառնում նաև Սուբարտու երկիրը:

Սուբարտու երկրի անվանումն արձանագրության մեջ հանդիպում է 40-րդ տողում՝ «40. [...] SU-BIR₄^{KI}-ke₄-ne», դեպի Գուտիում ու Ջուլում երկրներ արշավանքից հետո: Ապա և երեք անգամ (117-118, 135-136 և 152 տողերում) թվարկվում են բոլոր նվաճված երկրները՝

- «117. [suk]kal-maḫ KUR ^{GI}ŠERIN-na NIM^{KI} Mar-[ḫa-ši^{KI} Gu-ti-um^{KI} [...]Su-bir₄^{KI}
118. mar-tu Su-ti-um^{KI} [...]» -

«117-118. Մայրիների լեռների³⁰ սուկկալմախները³¹, Էլամի³², Մարխաշի, Գուտիումի, Սուբարտուի, Սուտիումի և...»:

- «135. [...] KUR ^{GI}ŠERIN-na NIM^{KI} Mar-[ḫa-ši^{KI} Gu-ti-um^{KI}
136. [...] x Su-bir₄^{KI} mar-tu Su-ti-um^{KI} KUR E₂AN.NA^{KI}-bi»

³⁰ Տեղադրության վերաբերյալ տե՛ս Մովսիսյան 2005, 62, ծնթ. 3:

³¹ Բառացի՝ «մեծ նախարար» (Գրեկյան 2013, 234):

³² ^{KUR}NIM^{KI} կամ ^{KUR}NIM.MA^{KI}-ին Էլամ պետության համար շումերական գաղափարագիրն է (Գրեկյան 2013, 227):

«**135-136.** ...Մայրիների լեռների, Էլամի, Մարխաշի, Գուտիումի, ... Սուբարտուի, Ամուրուի, Սուտիումի, և Էաննա Լեռան(?)»:

«**152.** *egir?-bi ENSI₂ KUR* ^{GIŠ}ERIN-na NIM^{KI} Mar-ḫa-ši^{KI} Gu-ti-um^{KI} Su-bir⁴^{KI} mar-tu Su-ti-um^{KI} KUR E₂AN.NA^{KI}-bi-da»

«**152.** Հետագայում(?), Մայրիների լեռների տիրակալներին, Էլամի, Մարխաշի, Գուտիումի, Սուբարտուի, Սուտիումի, կամ Էաննա լեռան»:

Արձանագրությունը հիմնականում վերաբերում է Մարխաշի գրավման, տաճարական համալիրի կառուցման ու բնակչության տեղահանությունների ու վերաբնակեցումների պատմությանը: Արձանագրության 117-128-րդ տողերի համատեքստից ակնհայտ է դառնում, որ վերոհիշյալ բոլոր երկրների՝ Մայրիների լեռների, Էլամի, Մարխաշի, Գուտիումի, Սուբարտուի, Սուտիումի, Էաննա լեռան տիրակալներն Ադաբի դեմ ռազմական խմբավորում են ստեղծել: Իսկ 135-142-րդ տողերից ակնհայտ է դառնում, որ, ինչպես արձանագրության մեջ է նշված՝ «*ոսկե գահերի վրա նստած*», վերոհիշյալ երկրների տիրակալներն են եղել նախահարձակվող կողմը: Եվ, ելնելով արձանագրության բավական պակասավոր հետևյալ տողերից՝ «**140-142.** *Նրանց ...Ադաբում, իմ ...ես եկել էի, և ...ես եկել էի ինձնից/իմ առաջ, ...շար ստեղծել եմ ...այնտեղ*», դժվար չէ կռահել, որ Լուգալ-Աննե-մունդու ղաշնակիցներին դիմավորել է Ադաբի պատերի տակ և հաղթանակ տոնել:

Եթե հավատալու լինենք արձանագրության 138 և 139-րդ տողերի հաղորդմանը՝ «Ոսկի ...ես դրեցի նրանց ձեռքերում, և ոսկե ...ես դրեցի նրանց ծնկներին» նշանակում է, որ ղաշնակից տիրակալները գերվել են Լուգալ-Աննե-մունդուի կողմից, ապա և 147-րդ՝ «. [...] ki-šar₂-ra u₃ ma-da-bi mi-ni-in-gur-eš-am₃»՝ «...ամենուր, և իրենց երկիր ես վերադարձրեցի» տողերի համաձայն, ամենայն հավանականությամբ՝ ազատ է արձակել ղաշնակից տիրակալներին ու այլ գերիներին՝ ամենամյա հարկ վճարելու պայմանով:

Շատ հետաքրքիր է, որ Լուգալ-Աննե-մունդուի արձանագրության գրագիրը, ինչպես տեսնում ենք, արձանագրության 117-րդ տողում օգտագործում է *սուկկալմախ* (**sukkalmah**) եզրը, իսկ 152-րդ տողում՝ *էնսի* (**ENSI₂**) եզրը, և երկու պարագայում էլ հավասարության նշան է դնում, որն էլ իր հերթին պետք է երկու պարագայում էլ հասկացվի որպես *տիրակալ*:

Ի դեպ, ելնելով արձանագրության համատեքստից, արձանագրության 118-րդ տողում՝ վստահաբար կարելի է վերականգնել «**KUR E₂AN.NA^{KI}-bi**» - «*Էաննա լեռների*»:

Ուշագրավ են նաև «**KUR E₂AN.NA^{KI}-bi**» տեղանվան նշանակությունն ու տեղորոշման խնդիրը: Ա. Մովսիսյանը հետևելով Ա. Ունգնադին ու Ի. Գելբին՝ այն ընկալում է որպես «Էաննա երկիր» և համապատասխանաբար տեղորոշում Ուրուկ քաղաքի շրջանում³³: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Ի. Արխիպովը, **KUR** (երկիր տեղանվան գաղափարագիրը) բառը, բացառությամբ առաջին և վերջին տեղանունների, այն է՝ **KUR** ^{GI5}**ERIN-na** (Մայրիների *լեռներ*) և **KUR E₂AN.NA^{KI}-bi** (*Էաննայի լեռներ*), բացակայում է մնացած բոլոր տեղանունների/երկրների անվանումներից առաջ, հետևաբար մենք գործ ունենք հենց Էաննայի լեռների, այլ ո՛չ Էաննա երկրի հետ³⁴: Կարելի է ենթադրել, որ խնդրո առարկա արձանագրության գրագիրը կոնկրետ երկրի անվանումը նշելիս միտումնավոր է բաց թողել **KUR** գաղափարագիրը՝ ըստ երևույթին այն ընկալելով որպես ինքնին հասկանալի երևույթ:

Աշխատանքը ամփոփենք Ա. Մովսիսյանի հետևյալ մեկնաբանությամբ. «...տեսնում ենք, որ Հայաստանին տրված հնագույն անվանումները՝ Արատտա-Արարատ/Ուրարատ-Ուրարտու, Ս/Շուբուր-Ս/Շուբարտու-Շուբրիա, Արման(ի/ում)-Արմի/ե-Արմինա-Արմենիա, Հայ (ա)-Հայասա-Հայաստան, իրենց տարբերակներով վկայված են Ք.ա. III հազարամյակի առաջին կեսից, երբ, ըստ լեզվաբանության տվյալների, հայերենը դարձել էր ինքուրույն լեզու, իսկ վաղնջահայերենի կրողները Ք.ա. III-II հազարամյակներում բնակվել են Հայկական լեռնաշխարհում»³⁵:

Եզրակացություններ

Անկախ այն հանգամանքից, թե պատմական կոնկրետ որ ժամանակահատվածում է գրվել Լուգալ-Աննե-Մունդուի վերոշարադրյալ արձանագրությունը և անկախ արձանագրության բովանդակությունից ու նրա գեղարվեստական կամ պատմական ժանրից, միևնույն է՝ այն չի հերքում Սուբյոր երկրի պատմական լինելու փաստը: Դեռ ավելին, ինչպես ցույց են տալիս հետագա փաստերը, այն առնվազն տեղանվան ու անվանաբանական առումով շուրջ երկու հազարամյակ գործածության մեջ է եղել և հստակ տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհի հարավում և հարակից տարածքներում:

³³ Մովսիսյան 2005, 62, Ungnad 1936, 36f.; Gelb 1944, 33f.

³⁴ Архипов 2002, 88, сн. 86.

³⁵ Մովսիսյան 2005, 62:

Գրականություն

- Ադոնց Ն. 1972, Հայաստանի պատմություն: Ակունքները X-VI դդ. մ.թ.ա.: Հայերի ծագումը: Հոգվածներ, Երևան, «Հայաստան», 432 էջ:
- Գրեկյան Ե. 2013, Էլամ: Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1, Հին շրջան, պատ. խմբագիր՝ Ա.Վ. Քոսյան, Երևան, էջ 227-260:
- Հայ Ժողովրդի պատմություն 1971, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, հ. I, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, խմբ. Ս.Տ. Երեմյան և ուրիշներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 992 էջ:
- Մովսիսյան Ա. 1992, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա (Ք.ա. 28-27-րդ դարեր), Երևան, «Հայ հեղափոխական դաշնակցություն», 80 էջ:
- Մովսիսյան Ա. 1997, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը. Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Երևան, «Ապոլոն», 32 էջ:
- Մովսիսյան Ա. 2000, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, «Գիտություն», 55 էջ:
- Մովսիսյան Ա. 2005, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ սեպագիր գրավոր աղբյուրների), Երևան, ԵՊՀ հրատ., 176 էջ:
- Մովսիսյան Ա. 2008, Հայոց պատմության աշխարհակալությունները (համառոտ տեսություն), Երևան, ԵՊՀ հրատ., 56 էջ:
- Մովսիսյան Ա. 2013, Միջագետքը Ք.ա. III հազարամյակում, Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1, Հին շրջան, պատ. խմբագիր՝ Ա.Վ. Քոսյան, Երևան, «Զանգակ», էջ 29-53:
- Յականյան Ռ. 2019, Արքայական տիտղոսաշարերն Աքքադում, Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիր, պրակ Ա, էջ 115-125:
- Քասունի Ե. 1950, Նախնական Հայաստան: Հայաստանի քննական պատմությունը նորքարային շրջանէն 600 ն.Ք., Բեյրութ, «Զարթոնք», Ի+752 էջ:
- Архипов И.С. 2002, Топоним «Субир/Субарту» в Месопотамии III - первой половины II тыс. до н.э., Вестник древней истории, N 4, с. 76-97.
- Дьяконов И.М. 1983, Типы этнических передвижений в ранней древности (с конца IV по начало I тыс. до н.э.), Древний Восток, N 4, с. 5-23.
- Дьяконов И.М. 1968, Предыстория армянского народа (история Армянского нагорья с 1500 по 500 г. до н.э.: хурриты, лувийцы, протоармяне), Ереван, АН СССР, с. 264, илл., карты.
- Дьяконов И.М. 1967, Языки древней Передней Азии, Москва, «Наука», 492 с., с карт., 1 таб.

- История древнего Востока 1983, Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Месопотамия, под ред. И.М. Дьяконова, Москва, «Наука», с. 534, с илл. и карт.
- Хачикян М.Л. 1985, Хурритский и урартский языки, Ереван, АН Арм ССР, 195 с.
- Deimel A. 1924, Die Inschriften Von Fara, III Wirtschaftstexte aus Fara, Leipzig, J.C. Hinrichs, 162 S.
- Gadd C.J. 1971, The Cities of Babylonia, The Cambridge Ancient History, vol. 1/2, 3rd edition., p. 93-143.
- Gelb I. J. 1944, Hurrians and Subarians, The Oriental Institute of the University of Chicago: Studies in Ancient Oriental Civilizations, No. 22, XV+128 p.
- Glassner J.-J. 2004, Mesopotamian Chronicles, Writings from the Ancient World, N 19 Atlanta, 388 p.
- Hallo W.W., Simpson W.K. 1998, The Ancient Near East. A History, 3rd ed., Harcourt Brace College Publishers, XI+324 p.
- Frayne D.R. 1998, Presargonic Period (2700-2350 BC), Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods 1, Toronto-Buffa-London, University of Toronto Press, p. LVI+384.
- Frayne D.R., Stuckey J.H. 2021, A Handbook of Gods and Goddesses of the Ancient Near East: Three Thousand Deities of Anatolia, Syria, Israel, Sumer, Babylonia, Assyria, and Elam, University Park, Pennsylvania: Eisenbrauns, 448 p.
- Jacobson T. 1939, The Sumerian King List, Assyriological Studies, N 11, Chicago, University of Chicago Press p. XVI+216; 1 plate, 2 tables.
- Liverani M. 2014, The Ancient Near East: History, society and economy, London-New York: Routledge, 644 p.
- Michalowski P. 1986, Mental Maps and Ideology: Observations on Subartu. In H. Weiss (Ed.), The Origins of Cities in Dry-Farming Syria and Mesopotamia in the Third Millennium B.C., Guilford, p. 129-156.
- O'Callaghan R.T. 1948, Aram Naharaim: A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C., Analecta Orientalia 26, Pontificum Institutum Biblicum, Roma, XV+164 pp., 38 pl. and 3 maps.
- Poebel A. 1909, Text A in Babylonian Legal and Business Documents from the Time of the First Dynasty of Babylon, BE VI 2, Philadelphia, Dept. of Archaeology, University of Pennsylvania, 349 p.
- Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie 2011-2013, Band 13. Spinnen-Tiergarten, Walter de Gruyter-Berlin-New York, 225-227 S.
- Speiser E. A. 1948, Hurrians and Subarians, Journal of the American Oriental Society, vol. 68, N 1, p. 1-13.

Ungnad 1923, Die ältesten Völkerwanderungen Vorderasiens. Ein Beitrag zur Geschichte und Kultur der Semiten, Arier, Hethiter und Subaräer, Kulturfragen, N 1, p. 3-16.

Ungnad A. 1936, Subartu, Beiträge zur Kulturgeschichte und Völkerkunde Vorderasiens, Berlin/Leipzig, Walter de Gruyter, XI+204 p.

ՍՈՒՐՈՒՐ/ՍՈՒՐԱՐՏՈՒ ԵՐԿԻՐՆ ԱԴԱԲԻ ԱՐՔԱ ԼՈՒԳԱԼ-ԱՆՆԵ-ՄՈՒՆԴՈՒԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ռոբերտ Ղազարյան, Ռուսլան Ֆականյան

Ամփոփում

Վաղնջական Հայաստանի և նրա հարակից տարածքների վերաբերյալ թեև սուղ, սակայն միաժամանակ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում շումերական սեպագիր արձանագրությունները: Վերոհիշյալ աղբյուրների համաձայն՝ մ.թ.ա. III հազարամյակում Հայկական լեռնաշխարհի հարավում և նրա հարակից տարածքներում է գտնվել Սուբուր/Սուբիր կամ ակկադերեն՝ Սուբարտուն կամ Շուբարտուն: Ըստ Ա. Մովսիսյանի, Սուբուր երկիրը ընդգրկել է բավականին մեծ տարածք՝ Վանա և Ուրմիո լճերի ավազանները: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ բացի Ֆառայի բնագրերից՝ Սուբուր երկիրը հիշատակվում է նաև շումերական առաջին տիրակալներից Ադաբ քաղաքի հարստության արքա Լուգալ-Աննե-մունդուի արձանագրության մեջ: Հոդվածում տրված՝ Լուգալ-Աննե-մունդուի 155-տողանոց արձանագրության համապատասխան տողերը լատինական տառադարձմամբ և հայերեն թարգմանությամբ ներկայացվում են առաջին անգամ:

Բանալի բառեր՝ Սուբու/իր, Սուբարտու, Հայկական լեռնաշխարհ, Շումեր, Ադաբ, արձանագրություն, Միջագետք:

СТРАНА СУБУР/СУБАТУ В НАДПИСИ ЦАРЯ АДАБА ЛУГАЛЬ-АННЕ-МУНДУ

Роберт Казарян, Руслан Цаканян

Резюме

Шумерские клинописные тексты содержат скудные, но в то же время весьма ценные сведения о древней Армении и ее сопредельных терри-

ториях. Согласно упомянутым источникам, в III тысячелетии до н.э. на юге Армянского нагорья, на прилегающих к нему территориях, находилась страна Субур/ Субир (на аккадском - Субарту или Шубарту). По дошедшим до нас данным, за исключением текстов из Фары, страна Субарту упоминается также в надписи царя Лугаль-Анне-Мунду из шумерского города Адаб. Этот шумерский текст, ставший объектом исследования настоящей статьи, впервые представлен на армянском языке с латинской транслитерацией.

Ключевые слова – Субу/ир, Субарту, Армянское нагорье, Шумер, Адаб, надпись, Месопотамия.

THE LAND OF SUBUR/SUBARTU IN THE INSCRIPTION OF KING ADAB LUGAL-ANNE-MUNDU

Robert Ghazaryan, Ruslan Tsakanyan

Abstract

Sumerian cuneiform texts contain information about ancient Armenia and adjacent countries, although scarce, but at the same time very valuable. According to the mentioned sources, in the III millennium BC in the south of the Armenian Highland, and in adjacent territories, existed the country of Subur/Subir (in Akkadian - Subartu or Shubartu). According to the existing information, in addition to the texts from Fara, the country of Subartu is also mentioned in the inscription of the king Lugal-Anne-Mundu from the Sumerian city of Adab. This is the first time that the Sumerian text cited in the article has been presented in Armenian with Latin transliteration.

Key words – Subu/ir, Subartu, Armenian Highland, Sumer, Adab, inscription, Mesopotamia.

ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱԼԺԻՐՈՒՄ. ԷՄԻՐ ԱԲԴ ԱԼ-ԿԱԴԵՐԻ ՀԱԿԱՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՓՈԽԸ (1844-1847 ԹԹ.)

Արամ Գասպարյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24 գ
Էլ. հասցե՝ mmcsar@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 14.04.2021, գրախոսվել է 15.06.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-126

Ներածություն

1843 թ. վերջը շրջադարձային էր ալժիրցիների հակաֆրանսիական պայքարի համար: Պատերազմի անհաջող ընթացքը, սմալայի¹ կործանումն ու մի շարք պարտություններն ստիպեցին էմիր Աբդ ալ-Կադերին լքել Ալժիրը և ապաստան գտնել Մարոկկոյում: Այստեղից էմիրը շարունակում էր համակարգել Ալժիրում մնացած իր բանակի գործողությունները, որի ղեկավարությունն ստանձնել էր նրա ամենահավատարիմ խալիֆներից մեկը՝ Բեն Ալլալը²: Անհրաժեշտ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ Աբդ ալ-Կադերի ճամբարը տեղակայված էր Մարոկկոյում, այնուամենայնիվ, նա հաճախակի գրոհներ էր իրականացնում Ալժիրում ֆրանսիական զորքերի դեմ:

Աբդ ալ-Կադերի պետության կործանումն Ալժիրի գեներալ-նահանգապետ Բյուժոյին վստահություն էր ներշնչում, որ պայքարը ըմբոստարարների դեմ գրեթե ավարտված է: Ֆրանսիացիները հպատակության բերված շրջաններում առանց հապաղելու հաստատեցին ռազմական վերահսկողություն: Ավելորդ չէ նշել, որ Բյուժոն այդ տարածքներում պահպանեց Աբդ ալ-Կադերի կողմից հաստատված գյուղատնտեսական հա-

¹ Աբդ ալ-Կադերի կողմից ստեղծված վոյանային քաղաք, որն ուներ շուրջ 40 000 բնակիչ: Սմալա՝ արաբերենից թարգմանաբար նշանակում է տնային տնտեսություն:

² Խալիֆ Բեն Ալլալը սպանվեց 1843 թ. նոյեմբերին՝ ֆրանսիական զորքերի հետ ընդհարումներից մեկի ժամանակ: Ալժիրցիներին բարոյագրկելու նպատակով ֆրանսիացիները մի քանի օր շարունակ խալիֆի կտրված գլուխը ցուցադրում էին տարբեր գյուղերում և բնակավայրերում: Marston, Petzon 2013, 45.

մակարգը: Տեղեկում նշանակվեցին մուսուլման պաշտոնյաներ, որոնք, սակայն, գտնվում էին ֆրանսիական զինվորական հրամանատարության անմիջական վերահսկողության ներքո: «Խաղաղության» բերված շրջաններն ակտիվորեն վերաբնակեցվեցին եվրոպացիներով: Դրա հետ մեկտեղ զինվորական վարչակազմը տարատեսակ ճնշումների և հալածանքների էր ենթարկում առանց այդ էլ չքավորության եզրին հայտնված ալժիրցիներին: Այս գործողությունները, իհարկե, ավելի էին բորբոքում տեղաբնիկների ատելությունը օտարերկրացիների հանդեպ:

Չնայած այն հանգամանքին, որ պատերազմը, փաստորեն, ավարտված էր, այդուամենայնիվ, ռազմական գործողությունները շարունակվում էին: Ալժիրյան բանակի մնացորդները դեռևս լարվածության մեջ էին պահում ֆրանսիական իշխանություններին, որոնք ստիպված էին կրկին կիրառել «թռչող զորասյունների» մարտավարությունը՝ հետապնդելով Աբդ ալ-Կադերին և նրա զինվորներին ինչպես Ալժիրում, այնպես էլ Մարոկկոյում:

Ֆրանս-մարոկկոյական պատերազմը

Անհրաժեշտ է նշել, որ դեռևս հակաֆրանսիական պայքարի սկզբից Մարոկկոյի իշխանությունները չէին թաքցնում իրենց թշնամական վերաբերմունքն Ալժիրում ֆրանսիական ներկայության հանդեպ և ֆրանսիական օկուպացիայի առաջին իսկ օրերից սկսեցին բարոյական ու նյութական օգնություն ցուցաբերել ալժիրցիներին: Եվ երբ Աբդ ալ-Կադերն Արևմտյան Ալժիրի ցեղերի մեծամասնության կողմից ընտրվեց որպես իրենց առաջնորդ³ և ստանձնեց հակաֆրանսիական պայքարի ղեկավարությունը, Մարոկկոյի սուլթան Աբդ ալ-Ռահմանը սատարեց վերջինիս: Էմիրն իր հերթին հավերժ հավատարմության ու բարեկամության երաշխիքներ տվեց սուլթանին:

Աբդ ալ-Ռահմանի աջակցությունը, անշուշտ, կենսական նշանակություն ուներ էմիր Աբդ ալ-Կադերի համար, քանի որ սուլթանի կողմից հատկացվող դրամական միջոցները էմիրի գանձարանի համալրման կարևոր աղբյուր էին, իսկ Մարոկկոյից ներկրվող զենքը, ռազմամթերքը և սպառազինությունը՝ Ալժիրի բանակի մատակարարման հիմնական միջոց: Բացի այդ, Մարոկկոյի հյուսիսարևմտյան նավահանգիստները պատերազմող Ալժիրին հնարավորություն էին տալիս առևտրական գոր-

³ Ланда 1976, 67.

ծարքներ իրականացնելու Արևելյան Եվրոպայի հետ, իսկ Ֆեզ և Տանժեր քաղաքներն Աբդ ալ-Կադերի համար դարձել էին արտաքին քաղաքական կապերի հաստատման կենտրոններ:

Ժամանակի ընթացքում, սակայն, Աբդ ալ-Ռահմանն սկսեց զգուշավորություն ցուցաբերել Աբդ ալ-Կադերի հետ հարաբերություններում: Պատճառը, թերևս, այն էր որ Մարոկկոյի արաբ բնակչության մեծամասնությունը հիացմունքով էր հետևում իրենց հարևանների ազատագրական շարժմանը և ցանկանում էր միանալ ալժիրյան ջիհադին: Միևնույն ժամանակ, Ֆրանսիան պահանջում էր, որ սուլթանը դադարեցնի օգնությունն Աբդ ալ-Կադերին: Անգլիան, իր հերթին, ցանկանալով ամեն գնով կանխել Ֆրանսիայի հնարավոր ներխուժումը Մարոկկո, ճնշումներ էր գործադրում Աբդ ալ-Ռահմանի նկատմամբ: Սակայն երկրում ստեղծված քաղաքական պառակտումը⁴ սուլթանին հնարավորություն չէր տալիս համաձայնվելու Ֆրանսիայի պահանջներին: Եվ չնայած նա շարունակում էր թույլատրել Աբդ ալ-Կադերի և նրա զինվորների ներկայությունն իր տարածքներում, այսուհանդերձ, լարվածությունը երկու առաջնորդների միջև գնալով աճում էր:

Մարոկկոյի իշխանությունների նման դիրքորոշումն ամենևին անսպասելի չէր Ալժիրում տեղակայված ֆրանսիացի բարձրաստիճան սպայական անձնակազմի համար: Վերջիններս հավատացած էին, որ քանի դեռ Մարոկկոն աջակցում է ալժիրցիներին, հակաֆրանսիական պայքարը երբեք չի դադարի: Հետևաբար, զարմանալի չէ, որ Ֆրանսիան, ի պատասխան Ալժիրի սահմանի մոտ Մարոկկոյի զորքերի կուտակմանը և Աբդ ալ-Կադերի՝ Մարոկկոյում ապաստանելուն, ներխուժեց Մարոկկո, որով և բաց ռազմական հակամարտության սկիզբը դրվեց: 1844 թ. հունիսին ֆրանսիական զորքերը, Ուջդ քաղաքի մոտ մարտի բռնվելով սուլթանի զորքերի հետ և պարտության մատնելով նրանց, նույն օրը ևեթ հետ քաշվեցին: Այդ պահից սկսվեց ֆրանս-մարոկկոյական պատերազմը:

Ֆրանսիացիները երկու ուղղությամբ հարձակում գործեցին Մարոկկոյի վրա: Մինչ ֆրանսիական ռազմածովային նավատորմը արքայազն Ժուլենվիլի գլխավորությամբ ռմբակոծում էր Տանժեր և Մոգադոր ծովափնյա քաղաքները, ֆրանսիական բանակը գեներալ Բյուժոյի գլխավորությամբ ներխուժեց Մարոկկո և օգոստոսի 14-ին Իսլի գետի մոտ տեղի ունե-

⁴ Այդ ժամանակահատվածում Մարոկկոյի արքունիքը բաժանվել էր երկու ճամբարի՝ Աբդ ալ-Կադերի աջակիցների և հակառակորդների:

ցած ճակատամարտում պարտության մատնեց սուլթան Աբդ ալ-Ռահմանի զորքերին⁵։ Ֆրանսիական բանակի սրընթաց հարձակումը, նրա հաջողություններն ու բացահայտ ռազմական առավելությունը Աբդ ալ-Ռահմանին հարկադրեցին բանակցություններ սկսել ֆրանսիացիների հետ։ 1844 թ. սեպտեմբերի 10-ին Տանժերում Մուհամմեդ Աբդ ալ-Ռահմանը և գեներալ-նահանգապետ Բյուժոն ստորագրեցին խաղաղության պայմանագիր։

Համաձայն պայմանագրի՝ սուլթանը պարտավորվում էր ցրել Ալժիրի սահմանների մոտ կուտակված զորքերը, հրաժարվել Ֆրանսիայի թշնամիներին աջակցելուց, չօժանդակել էմիր Աբդ ալ-Կադերին և ընդունել Ֆրանսիայի ներկայությունն Ալժիրում։ Բացի այդ, նա խոստացավ հետապնդել էմիրին Մարոկկոյում և բռնելու դեպքում վտարել երկրից կամ մեկուսացնել։ Ֆրանսիացիները, իրենց հերթին, խոստացան Աբդ ալ-Կադերին գերելու դեպքում հարգանքով և արժանապատվությամբ վերաբերվել նրան և իրենց զորքերը դուրս բերել Մարոկկոյից։

Սուլթան Աբդ ալ-Ռահմանը, սկսելով բանակցությունները ֆրանսիացիների հետ, հետապնդում էր որոշակի քաղաքական նպատակներ ևս։ Կանխագգալով Աբդ ալ-Կադերի մոտալուտ պարտությունը՝ նա ցանկանում էր հասնել իր գլխավոր նպատակին, այն է՝ սահմանափակել Ֆրանսիայի գաղութային նկրտումները Կենտրոնական և Արևելյան Ալժիրում՝ պահպանելով իր հսկողությունն ու ազդեցությունը Արևմտյան Ալժիրում։

Չնայած ֆրանսիական զորքերը կարողացան զգալի հաջողությունների հասնել Ալժիրը հպատակեցնելու և այնտեղ իրենց իշխանությունն ամրապնդելու գործում, սակայն տեղի բնակչության նկատմամբ նրանց կողմից շարունակվող ճնշումները, հետապնդումները, հողերի զավթումը, հարկային բեռի սաստկացումը, հանգեցրին հակազդության ժողովրդական ընդվզումների և ապստամբությունների, որոնցից ամենախոշորը բռնկվեց 1845 թ. սկզբին Արևմտյան Ալժիրում՝ Դահրայի լեռներում⁶։

1845 թ. շեյխ Բու Մազայի⁷ ապստամբությունը

Հակաֆրանսիական պայքարի ղեկավարությունն ստանձնեց շեյխ Բու Մազան՝ Մուհամմեդ բեն Աուդան, որն առավելապես հայտնի է Մու-

⁵ Ageron 1991, 19.

⁶ Օրանի շրջան։

⁷ Բու Մազա – արաբ.՝ մարդ այծի հետ, կամ այծի հայր։

համմեդ բեն Աբդալլահ անվամբ⁸: Լինելով Դերկավիյա կրոնական միաբանության անդամ՝ նա պնդում էր, որ ինքը փրկիչն է՝ մահդին⁹, և որ Աստված իրեն է ընտրել անհավատներին երկրից դուրս շարտելու համար¹⁰:

Մոտ երկու տարի տևած ապստամբությունը տարածվեց Դահրայից Ուրսենիս և Թիթերիից մինչև Քաբիլիյա՝ հասնելով Սահարա անապատի սահմանները¹¹: Հատկանշական է, որ Բու Մազայի ապստամբության սկիզբը կապված չի եղել Աբդ ալ-Կադերի անվան հետ և էականորեն տարբերվում էր Աբդ ալ-Կադերի պայքարի ոճից ու մեթոդներից: Այս ապստամբությունը կարելի է բնորոշել որպես ժողովրդական ըմբոստություն, որի մասնակիցներին միավորում էր ատելությունը գաղութարարների նկատմամբ, և որն ուղղորդվում և ոգեշնչվում էր սրբերի հանդեպ ավանդական հավատով:

Մոհամմեդ բեն Աբդալլահին Ալժիրի հին ընտանիքներից էր, որը սերում էր մարգարեի տոհմից¹²: Բեն Աբդալլահին ստացել էր տարրական կրթություն և չունեի բավարար ռազմական գիտելիքներ ու փորձառություն, սակայն երիտասարդ շեյխը դրանք հաջողությամբ փոխհատուցում էր ղեկավարական հմտություններով և անձնական արժանիքներով՝ անձնազոհ քաջությամբ ու ընդհանուր պայքարին իր նվիրվածությամբ¹³:

Ապստամբության առաջին մի քանի շաբաթվա ընթացքում բեն Աբդալլահին հաջողվեց իր շուրջը համախմբել ոչ միայն իր համերկրացիներին այլ նաև Օրանի շրջանի բազմաթիվ ցեղերի: 1845 թ. մայիսին (մեկ այլ տվյալով՝ մարտին)¹⁴ Բու Մազային հաջողվեց գրավել Օրլեանվիլ քաղաքը¹⁵: Այս հաղթանակի լուրը բարձրացրեց վերջինիս հեղինակությունը, և նրա ազդեցությունը տարածեց մինչև Շելեֆի դաշտավայր¹⁶: Ալժիրի տարբեր շրջաններից մարդիկ վերցրին իրենց զենքերը և միացան հակաֆրանսիական պայքարին հանուն մահդիի՝ Մոհամմեդ բեն Աբդալլահի:

⁸ <https://www.algerianembassy.org/about-algeria/Revolt-Sheikh-Bou-Maza.html>

⁹ Laremon Ricardo 1999, 56.

¹⁰ Marston, Petzon 2013, 46.

¹¹ Laremon Ricardo 1999, 56.

¹² Abou-Khamseen, Manssour 1983, 135.

¹³ Bellemare 1863, 299.

¹⁴ Хмелева 1973, 104.

¹⁵ Abou-Khamseen, Manssour 1983, 135.

¹⁶ Կենտրոնական Ալժիր:

Շեյխ Բու Մազան փորձում էր ստեղծել կանոնավոր բանակ, որը բաղկացած կլիներ հետևակից և հեծելազորից: Բացի այդ, նա իր ներկայացուցիչներին ուղարկեց տարբեր ցեղերի մոտ և ապստամբության կոչով դիմեց ալժիրցիներին: Նրա ջանքերով 1845 թ. հունիսին ընդվզեց Ուարսենիսի բնակչությունը¹⁷: Նա, ինչպես նախկինում Աբդ ալ-Կադերը, փորձեց պայքարի դուրս բերել նաև Քաբիլիայի բնակչությանը, սակայն աջակցություն չգտավ: Այսուամենայնիվ, ապստամբության աշխարհագրությունը մեծանում էր, իսկ աջակիցների թիվը աճում, որը լրջորեն անհանգստացնում էր գաղութային իշխանություններին:

Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ապստամբության բռնկման պատճառներն ու Մոհամմեդ բեն Աբդալլահի և Աբդ ալ-Կադերի հարաբերությունները: Չնայած այն բանին, որ երկու առաջնորդներն էլ հետապնդում էին միևնույն նպատակը, այսուհանդերձ, նրանք երբեք չմիավորեցին իրենց ուժերը և հանդես չեկան մեկ միասնական ճակատով: Սակայն պետք է նշել նաև այն հանգամանքը, որ երբեմն Բու Մազայի և Աբդ ալ-Կադերի կողմնակիցները գործում էին միասնաբար:

Ապստամբությանը ժամանակակից ֆրանսիացի հետախույզ Չարլզ Ռիչարդը պնդում էր, որ Բու Մազան գործում էր Ալժիրի թաիբիյա կրոնական միաբանության ղեկավար ալ-Հաջ ալ-Արբիի ուղղորդմամբ: Թաիբիյա միաբանության աջակցությունը Բու Մազային պայմանավորված էր Ալժիրում Աբդ ալ-Կադերի ազատագրական շարժումից անկախ ուժային կենտրոնների ստեղծման քաղաքական նպատակով¹⁸: Այս պնդումը կարելի է հնարավոր համարել, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ սուլթան Աբդ ալ-Ռահմանը թաիբիյա միաբանության ղեկավարն էր և ցանկանում էր պահպանել իր ազդեցությունն Արևմտյան Ալժիրում Աբդ ալ-Կադերի հնարավոր պարտությունից հետո: Աբդ ալ-Կադերը, փաստորեն, հրաժարվեց օժանդակել Բու Մազային, քանի որ չէր հավատում, որ վերջինս Աստծո ընտրյալն է և Ալժիրի փրկիչը:

1845 թ. աշնանը Աբդ ալ-Կադերն իր զորքի¹⁹ հետ Մարոկկոյից վերադարձավ Ալժիր և անմիջապես ստանձնեց հակաֆրանսիական պայքարի առաջնորդի դերը: Կարճ ժամանակ անց նա արդեն խոշոր հարձակում

¹⁷ Хмелева 1973, 104.

¹⁸ Lagemon 1999, 55-56.

¹⁹ Որոշ տվյալներով, զորքը բաղկացած էր 6000 հետևակից: Kiser 2008, 176.

կազմակերպեց Թաֆնայի դաշտավայրի ուղղությամբ: Հոկտեմբերի 15-ին²⁰ (դեկտեմբերի 20-ին)²¹ Աբդ ալ-Կադերը գլխովին ջախջախեց իր դեմ ուղարկված Զեմաա-Ղազաուաթի ֆրանսիական ռազմական հենակետի հրամանատար գնդապետ Մոնտանյակի 400-հոգանոց ջոկատը: Միայն 12 ֆրանսիացի զինվորների հաջողվեց վերադառնալ հենակետ²²: Մի քանի օր անց Թլեմսենի մերձակայքում արաբներին հաջողվեց շրջապատել և գերի վերցնել 200 ֆրանսիացի զինվորականի²³:

Ֆրանսիացիների պատասխանը Բու Մազայի ապստամբությանը և Աբդ ալ-Կադերի գործողություններին չափազանց կոշտ էր, որն իր դաժանությամբ աննախադեպ էր Ալժիրում ֆրանսիացիների տեղակայումից ի վեր և անջնջելի հետք թողեց Ալժիրի և Ֆրանսիայի պատմության վրա:

Առաջին շրջանի անհաջողություններից հետո վերակազմավորվելով՝ ֆրանսիացիները ապստամբած շրջանները վերածեցին ավերակների և առանց տարբերություն դնելու անխնա կոտորում էին թե՛ ռազմիկներին և թե՛ խաղաղ բնակչությանը: Իրենց դաժանություններով ֆրանսիացիներն առավելապես աչքի ընկան Դահիրայի լեռներում իրականացրած ոճրագործություններով: Այստեղի լայնարձակ քարանձավներում իրենց ընտանիքների հետ ապաստանել էին բազմաթիվ արաբներ: Հետապնդվելով ֆրանսիացիների կողմից՝ արաբները փակվում են այդպիսի քարանձավներից մեկում: Հրամանատար Պելիսիեն նրանցից պահանջում է հանձնվել: Մերժում ստանալով՝ կարգադրում է փայտերով փակել քարանձավի մուտքը և հրկիզել այն՝ չթողնելով փրկվելու որևէ հնարավորություն: Այս բարբարոսության հետևանքով խեղդամահ եղան (տարբեր տվյալներով) 600²⁴-800²⁵ ալժիրցի կանայք, երեխաներ, ծերեր:

Պելիսիեի «հաղթանակը» վրդովմունք առաջացրեց նույնիսկ Ֆրանսիայում, սակայն գեներալ-նահանգապետ Բյուժոն պաշտպանեց Պելիսիեին՝ հայտարարելով, որ նմանօրինակ միջոցները դաժան են, բայց անհրաժեշտ²⁶: Ավելորդ չէ նշել, որ դրանից հետո այս գործելաոճն ընդօրի-

²⁰ Хмелева 1973, 106.

²¹ Abou-Khamseen, Manssour 1983, 136.

²² Куропаткин 1877, 38.

²³ Куропаткин 1877, 38.

²⁴ Куропаткин 1877, 38.

²⁵ Ageron 1991, 20.

²⁶ Хмелева 1973, 105.

նակեցին մի շարք ֆրանսիացի սպաներ, որը հարյուրավոր ալժիրցիների դատապարտեց նույն ճակատագրին:

Անդադար շարունակվող ռազիան²⁷ քայքայում էր երկիրը: Ալժիրցիներից բռնազավթվում էին ոչ միայն հողերը, այլ նաև ընտանի կենդանիները՝ ոչխարներ, ուղտեր և այլն՝ նրանց մատնելով չքավորության և սովի: Գերեվարված կանայք փոխանակվում էին ծիերի հետ կամ վաճառվում, իսկ այն գյուղերը, որոնք համարձակվում էին ընդվզել ֆրանսիացիների գործողությունների դեմ, հիմնովին ոչնչացվում էին: Միաժամանակ, ֆրանսիացիները կաշառում էին ֆեոդալական վերնախավին: Կաիդներին և աղաներին հատկացվում էին խոշոր դրամական միջոցներ, և թույլատրվում էր յուրացնել հարկերի և տուրքերի մի մասը²⁸, և վերջիններս դառնում էին գաղութային իշխանությունների հավատարիմ ծառաներ:

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ այս գործողությունները տալիս են սպասված արդյունքը: Համատարած վախի մթնոլորտը և լավ կազմակերպված լրտեսական ցանցը թուլացրին առանց այն էլ անկում ապրող հակաֆրանսիական ապստամբությունը:

Աբդ ալ-Կադերի ապստամբության ձախողումը

1845 թ. վերջին Ֆրանսիան վերականգնել էր իր վերահսկողությունը մինչ այդ Աբդ ալ-Կադերի և Բու Մազայի ազդեցության տակ գտնվող շրջանների մեծ մասի վրա: Ֆրանսիական զորքերը դադարեցրին պատժիչ գործողությունները քաղաքացիական բնակչության նկատմամբ և իրենց ուժերն ուղղեցին Աբդ ալ-Կադերի ոչնչացմանը: 1846 թ. Ֆրանսիան Ալժիրում իր զորքերի թիվը հասցրեց 120 000-ի²⁹, որի մեծ մասը հետապնդում էր Աբդ ալ-Կադերի զորքին, որն այդ պահին չէր գերազանցում 5000-ը և սփռված էր ողջ երկրով մեկ: Այս ողջ ընթացքում Աբդ ալ-Կադերի զորքը խուսափում էր ֆրանսիական զորքերի հետ բաց ընդհարումներից և կռվի էր բռնվում միայն բարենպաստ պայմաններում: Պատահական չէ, որ ֆրանսիացիներին շուտով հաջողվեց ճնշել Բու Մազայի ապստամբությունը

²⁷ Ֆրանսիական բանակի հանկարծակի հարձակումները գյուղերի և բեդվինների կայանների վրա Ալժիրի պատմագրությունում ստացավ *ռազիա* անվանումը: Ռազիան վերցվել է արաբերեն *ղազիյա՝ ասպատակություն, արշավ* բառից:

²⁸ Хмелева 1973, 106.

²⁹ Churchill 1867, 243.

և կասեցնել Մարոկկոյից եկող օգնությունը, որն իր անխուսափելի ազդեցությունն ունեցավ էմիրի ձեռնարկած հետագա քայլերի վրա:

1846 թ. վերջին Աբդ ալ-Կադերն ստիպված էր կրկին նահանջել Մարոկկո, որը, սակայն, այս անգամ վերջինիս համար անվտանգ ապաստարան չէր կարող լինել, քանի որ ֆրանսիացիների ճնշմամբ սուլթան Աբդ ալ-Ռահմանի առաջնային նպատակը դարձել էր ալժիրցիների զորքի և ճամբարի հայտնաբերումը: Մարոկկոյի գինված ուժերին հաջողվեց ոչնչացնել Աբդ ալ-Կադերին հավատարիմ ալժիրյան երկու խոշոր ցեղախմբերի³⁰ դրանով իսկ էմիրին զրկելով այդքան անհրաժեշտ աջակցությունից: Աբդ ալ-Կադերը փորձեց բանակցել Մարոկկոյի սուլթանի հետ, սակայն դա որևէ արդյունքի չհանգեցրեց³¹:

1847 թ. սկզբին առավել ակնհայտ էր դառնում Աբդ ալ-Կադերի պարտվելու հավանականությունը: Իրավիճակն ավելի բարդացավ, երբ Ալժիրում գտնվող Աբդ ալ-Կադերի վերջին խալիֆ Ահմադ բեն Սալիմը ֆրանսիացիների հետ բանակցությունների միջոցով երաշխավորելով իր անվտանգությունը՝ հանձնվեց վերջիններիս և լքեց Ալժիրը³²: Ավելի վաղ նմանատիպ պայմանավորվածություն էր ձեռք բերվել նաև ֆրանսիացիներին գերի ընկած Մոհամմադ բեն Աբդալլահի հետ³³:

Այս ժամանակահատվածում Աբդ ալ-Կադերն իր զորքերի մնացորդի հետ դեռևս շարունակում էր գտնվել Մարոկկոյում՝ խուսափելով մարոկկոցիների հետ բաց ճակատամարտից: Անընդհատ հետապնդվելով Մարոկկոյի մեծաքանակ բանակի կողմից՝ էմիրը, ի վերջո, հարկադրված վերադարձավ Ալժիր, որտեղ թեև ավելի անվտանգ էր, սակայն ընդհանուր իրավիճակն անհուսալի էր:

Ալժիրյան զորքը, որի թիվը հասել էր մի քանի հարյուրի³⁴, բարոյագրված էր, ցեղերը հեռանում էին էմիրից, իսկ ճամբարում գտնվող կանայք և երեխաները քաղցած էին և թուլացած: Հակառակ դրան՝ ֆրանսիացիների դիրքերն Արևմտյան Ալժիրում այնքան էին ուժեղացել, որ Աբդ ալ-Կադերը պայքարը շարունակելու ոչ մի հնարավորություն չէր տեսնում:

³⁰ Marston, Petzon 2013, 49.

³¹ Churchill 1867, 257.

³² Buoyerdene 2012, 64.

³³ Kiser 2008, 187.

³⁴ Abou-Khamseen, Manssour 1983, 137.

Ալժիրի արաբական պետության հիմնադիրը կանգնել էր երկընտանյալ առջև. կա՛մ թողնել իր ճամբարը, հեռանալ Ալժիրի անապատային շրջաններ, վերակազմավորել ուժերը և շարունակել պայքարը, կա՛մ մնալ իր ժողովրդի հետ, կիսել նրա ճակատագիրը և հանձնվել ֆրանսիացիներին: Աբդ ալ-Կադերի պարագայում ընտրությունն առավել քան ակնհայտ էր: 1847 թ. դեկտեմբերի 23-ին նա հանձնվեց ֆրանսիացիներին՝ հետևյալ պայմաններով. նա և իր ընտանիքը կլքեն Ալժիրը և բնակություն կհաստատեն Եգիպտոսում: Այդպիսի հնարավորություն կտրամադրվի նաև Աբդ ալ-Կադերի հետ մեկնել ցանկացող զինվորներին և սպաներին: Երկրում մնացող զինվորականները չեն հետապնդվի և կպահպանեն իրենց ունեցվածքը:

Եզրակացություններ

1848 թ. հունվարին Աբդ ալ-Կադերն իր ընտանիքի և մի քանի տասնյակ մերձավորների ու համախոհների հետ տեղափոխվեց Տուլոն³⁵: Ֆրանսիացիները չկատարեցին իրենց խոստումը և ազատությունից զրկեցին էմիրին՝ նրան պահելով գերության մեջ: Աբդ ալ-Կադերն ազատվեց միայն 1852 թ. և 1855 թ. բնակություն հաստատեց Դամասկոսում³⁶, որտեղ և 1883 թ. կնքեց իր մահկանացուն³⁷:

Այսպիսով, չնայած ֆրանսիացիներին հաջողվեց հաղթանակ տանել իրենց ամենաոխերիմ թշնամու՝ Աբդ ալ-Կադերի նկատմամբ և վերջ դնել նրա պայքարին, այնուամենայնիվ, դեռ երկար ժամանակ Ալժիրի տարբեր վայրերում բռնկվում էին հակաֆրանսիական ապստամբություններ: Ֆրանսիային հաջողվեց գրավել Ալժիրը, սակայն չհաջողվեց հպատակեցնել ալժիրցիներին:

Գրականություն

- Куропаткин А.Н. 1877, Алжирия, С.-Петербург, Типография В.А. Политики, 309 с.
 Ланда Р. 1999, История Алжира. XX век, Москва, «Наука», 306 с.
 Хмелева Н.Г. 1973, Государство Абд аль-Кадир Алжирского, Москва, «Наука», 125 с.
 Abou-Khamseen, Manssour A. 1983, The First French-Algerian War (1830-1848), A Reappraisal of the French Colonial Venture and the Algerian Resistance, University of California, Berkeley, 309 p.

³⁵ Bellemare 1863, 363.

³⁶ Churchill 1867, 304.

³⁷ Buoyerdene 2012, 217.

- Ageron Ch.R. 1991, Modern Algeria, A History 1830 to the Present, Hurst and Company, London, 166 p.
- Bellemare A. 1863, Abd-el-Kader, sa vie politique et militaire, Editions Bouchene, Paris, 462 p.
- Buoyerdene A. 2012, Emir Abd El-Kader: Hero and Saint of Islam, World Wisdom, 286 p.
- Churchill Ch. H. 2010, The Life Of Abdel Kader: Ex-Sultan Of The Arabs Of Algeria (1867), Kessinger Publishing, 346 p.
- Kiser J. W. 2008, Commander of the Faithful: The Life and Times of Emir Abd el-Kader (1808-1883), Monkfish Book Publishing Company Rhinebeck, New York, 361 p.
- Laremon R. R. 1999, Islam and the politics of resistance in Algeria, 1783-1992, Africa World Press, 2000 p.
- Marston E., Petzon B. 2013, The Compassionate Warrior, Abd el-Kader of Algeria, Wisdom Tales, 195 p.
- <https://www.algerianembassy.org/about-algeria/Revolt-Sheikh-Bou-Maza.html> (ներբեռնման օրը՝ 22.10.2020).

ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱԼժԻՐՈՒՄ. ԷՄԻՐ ԱԲԴ ԱԼ-ԿԱԴԵՐԻ ՀԱԿԱՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՓՈԽԸ (1844-1847 ԹԹ.)

Արամ Գասպարյան

Ամփոփում

1840-ական թվականներն Ալժիրի հակաֆրանսիական պայքարի ամենածանր ժամանակաշրջանն էին: 1844 թ. ֆրանս-մարոկկոյական պատերազմը և Մարոկկոյի պարտությունը մեծ հարված էին Ալժիրում Աբդ ալ-Կադերի ազատագրական պայքարի համար: Այնուամենայնիվ, հակաֆրանսիական պայքարը շարունակվում էր: 1845 թ. Ալժիրում բռնկվեց շեյխ Բու Մազայի ապստամբությունը: Այս ժողովրդական շարժումը կարճ ժամանակում տարածվեց ողջ երկրով մեկ: Միևնույն ժամանակ, Աբդ ալ-Կադերը, վերադառնալով Մարոկկոյից, շարունակեց իր պայքարը: Ստեղծված իրավիճակը լրջորեն անհանգստացրեց ֆրանսիացիներին, որոնք դաժան ճնշումների ենթարկեցին ալժիրցիներին: Ալժիրի գեներալ-նահանգապետ Բյուժոյի քայլերը տվեցին սպասված արդյունքը: Բու Մազայի ապստամբությունը ճնշելուց հետո ֆրանսիացիները իրենց ողջ ուժերը նետեցին Աբդ ալ-Կադերի դեմ: 1847 թ.

վերջին Արդ ալ-Կադերը, հայտնվելով անելանելի վիճակում, վայր դրեց զենքը և հանձնվեց ֆրանսիացիներին:

Բանալի բառեր՝ Արդ ալ-Կադեր, Բու Մազա, Ալժիր, Մարոկկո, Ֆրանսիա, ապստամբություն, հակաֆրանսիական:

СИТУАЦИЯ В АЛЖИРЕ: ПОСЛЕДНИЙ ЭТАП АНТИФРАНЦУЗСКОЙ БОРЬБЫ АБД АЛЬ-КАДИРА (1844-1847 ГГ.)

Арам Гаспарян

Резюме

1840-е годы были для Алжира одним из самых тяжелых этапов антифранцузской борьбы. С 1844 года франко-марокканская война и поражение Марокко явились огромным ударом для освободительного движения Абд аль-Кадира в Алжире. Тем не менее антифранцузская борьба продолжалась. В 1845 году в Алжире вспыхнуло восстание шейха Бу Мазы. Это народное восстание за короткое время распространилось по всей стране. По возвращении из Марокко Абд аль-Кадир не прекращал антифранцузскую борьбу, что вызывало серьезную обеспокоенность французов. Действия Бюжо – генерал-губернатора Алжира – привели к ожидаемым результатам. Подавив восстание Бу Мазы, французы направили все свои силы против Абд аль-Кадира. В конце 1847 года Абд аль-Кадир, оказавшись в безвыходном положении, сложил оружие и сдался французам.

Ключевые слова – Абд аль-Кадир, Бу Маза, Алжир, Марокко, Франция, восстание, антифранцузский.

THE SITUATION IN ALGERIA: THE LAST PERIOD OF ABD AL-KADER'S ANTI-FRENCH STRUGGLE (1844-1847)

Aram Gasparyan

Abstract

The 1840s were one of the most difficult periods of anti-French struggle for the Algerians. The Franco-Moroccan war of 1844 and the defeat of Morocco was a huge blow for Abd al-Kader's liberation movement in Algeria. Nevertheless, the

anti-French struggle was still going on. In 1845 Sheikh Bou Maza's revolt broke out in Algeria. This popular uprising spread throughout the country in a short time. At the same period Abd al-Kader continued his struggle after returning from Morocco. This situation seriously disturbed the French. The latter acted harshly and cruelly. General Bugeaud's steps brought the expected results. After suppressing Bou Maza's revolt the French threw all their forces against Abd al-Kader. By the end of 1847 Abd al-Kader, being in a desperate situation, laid down his arms and surrendered to the French.

Key words – Abd al-Kader, Bou Maza, Algeria, Morocco, France, uprising, anti-French movement.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ՈՃԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ավարդ Խաչատրյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Երևանի պետական համալսարան

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1

Էլ. հասցե՝ alvard.khachatryan@ysu.am

Հոդվածը ներկայացվել է 30.03.2021, գրախոսվել է 29.06.2021,

ընդունվել է տպագրության 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-139

Ներածություն

Գրողի խոսքարվեստում առկա ոճական արտահայտչամիջոցները հատուկ նպատակով ընտրված բառախմբեր են, որոնք խոսքը պատկերավոր և արտահայտիչ դարձնելու միտում ունեն։ Այս կամ այն ընտրված բառախմբի, բառապաշարի ոճական տարբեր շերտերի և բառային զուգորդումների գեղագիտական արժեքն ի հայտ է գալիս համատեքստում։ Ուսումնասիրելով IX-X դդ. պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկում կիրառված ոճական արտահայտչամիջոցները՝ մեր նպատակն է վեր հանել լեզվական այդ միավորների հմտորեն գործածված նրբերանգները, բառախաղերի բազմազան իմաստավորումները¹։

Պատմագրությունը X դարում

Մեր թվարկության X դարը հայտնի է արաբական բռնակալության դեմ հայերի մղած ազատագրական պայքարով, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև մշակութային կյանքի զարգացմամբ։ Այս շրջանում ծաղկում է ապրում նաև հայ պատմագրությունը, որի ականավոր դեմքերից է Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին։ Պատմագիրը ծնվել է IX դարի կեսերին (845-850 թթ.), աշակերտել Մաշտոց Ա Եղվարդեցի կաթողիկոսին, որին հետագայում փոխարինելով՝ ստանձնել է հայրապետական պաշտոնը։

¹ Հովհաննես Դրասխանակերտցու աշխատության լեզվական շերտի վերաբերյալ տե՛ս նաև Սուսաննա Գրիգորյանի «Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզվաոճական առանձնահատկությունները» հոդվածը (Գրիգորյան 2020, 27-36)։

Ակտիվ մասնակցություն ցուցաբերելով քաղաքական կյանքում՝ փորձել է կանխել հայ ժողովրդին սպառնացող օտար զավթիչների բռնակալական հարձակումները, որի պատճառով անլուր հալածանքների է ենթարկվել: Իր «Պատմութիւն հայոց» երկը, որը հայ պատմագրության մեջ Բագրատունյաց և Արծրունյաց թագավորությունների պատմության սկզբնաղբյուրն է համարվում, գրել է Աշոտ Ա Բագրատունու և Գագիկ Արծրունու հորդոր-հրամանով, ուսումնասիրել է հայ մատենագրությունը, Աստվածաշունչը, օգտվել է դարի անանուն ժամանակագրությունից, այլ վկայաբանություններից, իր ժամանակակից Շապուհ Բագրատունու «գեղջուկ բանի» գրված պատմությունից: Երկը գրված է գեղեցիկ հայերենով և որպես դասագիրք գործածվել է նաև հայկական դպրոցներում (ԺԹ դ.):²

Լինելով X դարի հայտնի պատմագիր՝ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին փորձել է իր պատմությունը շարադրել քերթողական արվեստով, և ինչպես ինքն է հավաստում, պատմությունը, որ միաժամանակ ինքնակենսագրական տվյալներ է բովանդակում, գրել է խնդրողների հորդորով կամ թագավորների հրամանով: Այն սկսում է ջրհեղեղից և հասցնում մինչև X դարը՝ դառնալով իր ապրած ժամանակների պատմական իրադարձությունների մասնակիցը, ականատեսն ու վկան: Հովհաննես կաթողիկոսն այնպիսի հուզառատ տրամադրությամբ է նկարագրում հայ ժողովրդի թշվառությունը, նրա՝ անասելի տառապանքներով լի կյանքը, որ կարծես տեսնելիս ու լսելիս լինես այն վշտահար հեղինակին, որի հուզումներն ու ապրումներն անցնում են ընթերցողի սրտի միջով: Այս ամենը խոսում է հեղինակի գեղեցիկ պատմելու և գրելու արվեստի, պատմական անցքերը տեսանելի դարձնելու բարձր կարողության մասին: Հենց այս բացառիկ տաղանդի շնորհիվ ստեղծել ու կիրառել է յուրօրինակ մակդիր-որոշիչներ, դարձվածքներ, պատկերավոր արտահայտություններ ու համեմատություններ, ճարտասանական զանազան ձևեր ու ոճեր: Հ. Հարությունյանը, որ գեղարվեստական խոսքի ուսումնասիրողներից է, ուշագրավ դիտարկում է կատարում ոճի վերաբերյալ, գրելով՝ «բառը մի աշխարհ է, բայց լեզուն, առավել ևս ոճը բառ չէ, քերականական ձև չէ, շարահյուսություն է, բառերի կապակցություն, պատկերավորման և արտահայտչական միջոցների ամբողջական համակարգ: Մյուս կողմից՝ բառա-

² Մատենագիրք Հայոց, Ժ դար 2010, 317-318:

պաշարը պայմանավորվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են թեման, պատկերվող միջավայրը, ժամանակաշրջանը»³:

Ի տարբերություն հայերենի զարգացման դասական շրջանի՝ պատմագրի ապրած դարաշրջանում արդեն իսկ, ինչպես Արսեն Այտընյանն է նշում, գրական լեզուն հեռացել էր խոսակցականից, և քչերն էին, որ զգուշանալով «գեղջկաբանության արատից»⁴, զուտ գրաբար գրելու ծիրքով էին օժտված և պարզորոշ զանազանում էին գրաբար հայերենը ռամկերենից: Այտընյանը նշում է նաև, որ Ժ դարում գրաբարի թերակատար իմացությունն ու բարձր ոճով գրելու տենչանքն առաջ են բերում մի նոր լեզու, որին բնորոշ էին մտացածին ոճն ու հայերենին խորթ դարձվածքներն ու բառակերտումները, բառաձևերի ու բառիմաստների աղավաղումները, դրանց անհաջող ընտրությունը: Այս բնութագրումներից, մեր կարծիքով, զերծ են Հովհաննես Դրասխանակերտցու լեզուն և ոճը: Հայ մատենագիրներից տեղեկություններ քաղելով՝ նա իր պատմությունը շարադրել է տվյալ ժամանակաշրջանի լեզվամտածողությանը բնորոշ բառային, ձևաբանական և շարահյուսական իրողություններով, ոճական արտահայտչամիջոցների յուրօրինակ գործածության բանաձևումներով:

Ամենահաճախ օգտագործված արտահայտչամիջոցները Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկում

Ինչպես վերը նշեցինք, հին մատենագրությունը հետագա գրողների համար եղել է ընդօրինակման աղբյուր, որոնք ուսանում էին ոչ միայն նախորդների լեզուն, այլև ոճը, և որի ժամանակ երբեմն «քերթողաց արուեստի»⁵ նմանակումը խրթնաբանության պատճառ էր դառնում, սակայն X դարի գրական և խոսակցական լեզվի համախառն տիրույթում Դրասխանակերտցին աշխատել է գրել քերթողաբար, պարզ ու մատչելի ոճով՝ ընտրելով այնպիսի արտահայտչաձևեր, որոնք են համեմատությունը, մակդիրը, ավելադրությունը, կրկնությունը, փոխաբերությունը, ճարտասանությունը և այլն: Մեր քննության մեջ անդրադարձել ենք երկում տեղ գտած ամենահաճախ օգտագործված ձևերին միայն:

Ինչպես գիտենք, մակդիրները գոյական մակադրյալների հետ հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներից են, որոնք հեղինակի

³ Հարությունյան 1986, 31-39:

⁴ Այտընյան 1987, 131-137:

⁵ Աբեղյան 1968, 485:

գնահատողական վերաբերմունքն են արտահայտում նկարագրվող իրողության վերաբերյալ: Նման կապակցությունների եզրեր են դառնում հատկապես հավելյալ նրբիմաստներ բովանդակող ածական որոշիչները: Երկում գործածված այդպիսի խոսույն, ոչ սովորական իմաստների կիրառությամբ և քնարական երանգով են օժտված *խոր, չար, դառն, ողորմելի* և այլ նման ածական որոշիչները, որոնք հեղինակի՝ բարձր ոճով գրելու արվեստի կարևորագույն բաղադրիչներից են: Բնագրից քաղված այդ կարգի կապակցություններից առանձնացրել ենք հետևյալ օրինակները՝ *խոր խոռվութիւն* /266⁶/, *ի խոր աղքատութիւնս* /256/, *զանքան անասունս* /266/, *չար ամպրոպացն* /266/, *չար անջրպետ* /208/, *ի ճանապարհաց չարաց* /44/, *ողորմելի ճաշակքն* /264/, *զդառն առարկութիւն* /260/, *դառնաշունչ հողմ* /260/, *քաղցր և հեշտալի գարուն* /260/, *աստուածաշէն եկեղեցիս* /258/, *զսնորի խոստմունս* /256/, *ի հոգևոր պատերազմին* /250/, *ի խորս խաւարին սգոյ* /198/ և այլն: Այս մակդիրների տեղին գործածությամբ հեղինակը թանձր գույներով ավելի է խտացնում դառն ճշմարտությունը, քաղաքական ու բարոյական խարդավանքների անողորմ գործունեությունը, ժողովրդի սոցիալական ծանր դրությունը. *եւ այսպիսի խոր խոռվութիւն պատեր զքաղաքօք...*, *Իսկ ազապ մարդիկք այնպէս ուրացութեամբն ծաղեալք և հասեալք ի խոր աղքատութիւնս*, *մինչեւ ի դրունս տնանկաց շրջել և հաց մուրանալ...*, *...զի ապականեսցեն ի բաց զչարիմացութիւն չարին, և լուսացեն զկապուտակ ներկուածս նախանձու հակառակորդին, և հալոցեն զարմաւոս ագահութեան ի հոգևոր պատերազմին...*

Գեղարվեստական արտահայտչականության մեծ ներուժ ունեն հոմանիշներն ու հականիշները: Երկու կամ ավելի հոմանիշների միաժամանակյա գործածությամբ առարկայի հատկանիշը ձեռք է բերում սաստկական նշանակություն՝ առաջացնելով հույզերի հորդահոս տարափ: Գեղարվեստական խոսքի ոճավորման այս ձևերը, որոնք սփռված են ուսումնասիրվող երկում, ավելի հստակ են արտահայտում գրողի վերաբերմունքը պատերազմների ու խաղաղ օրերի, արդար ու անարդար, բազում հակասական և ոչ հակասական իրողությունների հանդեպ: Երկում տեղ գտած հոմանիշային հետաքրքիր շարքերից են, օրինակ՝ *ընծայս և պարգևս...* *առաքեր* /202/, *խոհեմ և ուշիմ թագաւորն* /304/, *թողուլ ողջանդամ և*

⁶ Տե՛ս Դրասխանակերտցի 1996 (երկից կատարված բոլոր մեջբերումների էջերը նշված են բնագրին կից):

անվնաս զՀասան /194/, *համախորհի և համական և համագործ...* ներքինապետն արքայի լինէր /190/, ոչ գիտելով *արդարամիտ* և *պարզ* սրտիւ այրն Աստուծոյ կաթողիկոսն /170/, *մէգ և մառախուղ* մեղաց և ստուերք մահու պատեսցէ զբոլոր անձնս /154/, որ էր այր *քաջանձնեայ և թիկնաւէտ, առոյգանձն և գեղեցիկ հասակաւ, կորովի և աջողակ* ի պատերազմունս /138/, գնայ ընդ առաջ նորա *ընծայիք և պատարագօք* /122/, ոչ տայր տեղի *չար և ապիրապ* բանից նորա /114/, շինէ զպայծառապաճոյճ եկեղեցին... *տնանկաց և աղքատաց* /94/, *նեղ և անձուկ* պողոտայիւ հետեւի .../82/ և այլն: Երկում գործածված հականշային շարքերն իրենց գործառական բեռնվածությամբ գրեթե չեն զիջում հոմանիշներին՝ եւ ի միասին հնձեալք լինէին ի ճիրանաց զազանաց անտի *պատրուականն և անարգն* /266/, ...զարնն եւ զանձրնն և զամենայն բարութիւնն ի միասին վայելեն *արդարք և մեղաւորք* /168/, *անջաւրից և անանջաւրից* ոչ անտեղեակ /104/, ի փախուստ ...դառնային *ռամիկն և անռամիկն* /248/ *ազաւրն և անազաւրն, ծերն և տղայն, մեծն և փոքրն մաւրնեցան ի ձեռս բռնադատ գերչացն...* /232/ և այլն:

Որպէս լեզվական յուրօրինակ արտահայտչամիջոցներ՝ գրաբարում լայն տարածում ունեն ավելադրությունները, որոնք նույնանիշ և հոմանիշ բառերի երկանդամ, եռանդամ, երբեմն բազմանդամ շարքեր են կազմում: Լեզվի բառապաշարից օգտվելու այս եղանակը, Առաքելյանի համոզմամբ, ձևի և իմաստի անհամաչափության հետ մեկտեղ ունի նաև առավելություն. այն հաճախ օգնում է «վերականգնելու հնացած և մթագնված բառերի իմաստը կամ ընթերցողին օգնում է հազվագյուտ ու անծանոթ, երբեմն էլ օտար բառերի իմաստը հասկանալու»⁷: Երկում տեղ գտած ավելադրություններն արտահայտված են՝ ա) բայի դիմավոր⁸ ձևերով, օրինակ՝ ...ապա ոստիկանն գումարտակ զօրու բազմի կազմեալ՝ *չուեալ խաղայ գայ հասանէ* յաշխարհ մեր /216/, բ) դերբայներով, օրինակ՝ *արկեալ և առեալ և տարեալ* յամրոցն Սևան /194/, *ելանել չուել գալ և մղծկեալ* սրտին զդառնութեան թոյնսն /192/, իսկ իմ *երթեալ չուեալ և համոզեալ* զտիկինն /194/, *Եւ այսպէս անմարդացեալ և անզաւակացեալ, խոպանացեալ և անշքեղացեալ* այնուիւրեւ աւանք և շէնք /258/ և այլն, գ) գոյականի սեռական հոլովով՝ *ահ երկիւղի* զնոսա *պարեալ* պաշարեալ էր

⁷ Առաքելյան 1981, 162:

⁸ Աբրահամյան 1976, 392:

/210/, գուժ **աղմկի աղաղակի** /210/ և այլն: Գ. Վահանյանի համոզմամբ՝ «ավելադրությունները խոսքին երկար շունչ են տալիս, ինչպես և որոշ արտահայտչականություն և համոզություն»⁹:

Ինչպես գիտենք, գրաբարում ածականը, հաճախ ստանալով -ուֆին ածանցը, վերածվում է վերացական գոյականի, որը դրվում է սեռական հոլովով¹⁰: Դիմելով վերացականը թանձրացականի փոխարեն գործածված այս արտահայտչամիջոցներին՝ Դրասխանակերտցին իր թախիժը, կյանքի ողբերգական ու լուսավոր կողմերը ներկայացնում է պատկերավոր մտածողության թանձր գույներով, կենդանի խոսքի շեշտակի շիկացումներով՝ *զմրուր դառնութեան* բառականաբար արբին /256/, ոչ բերաւ *ի խորհուրդս իմաստութեան* /204/, *ի խորհուրդս չարութեան* զօրս գումարէ /202/, ոչ ըստ արժանեաց ածայ *յաթոռ սրբութեան* /186/, *բարեխառնութիւն օղոց* /184/, եւ հատցեն *արմարս ազահութեան* ի հոգեւոր պատերազմին /250/, առաջ նորա *դրախտ փափկութեան*, եւ վերջ նորա դաշտ ապականութեան /260/, *սառնամանիք ցրտութեան* /308/, ընկալան ի Քրիստոսէ *զպսակն անեղծութեան* /126/ և այլն:

Ոճական արտահայտչականությամբ առանձնանում են նաև անձնական և ցուցական դերանունները՝ պայմանավորված տվյալ դերանվան համապատասխան հոդի կիրառությամբ: Հովհաննես Դրասխանակերտցու պատմության մեջ իրենց առատ գործածությամբ առանձնանում են հատկապես **դ** հոդի դիմորոշության և ցուցականության իմաստների արտահայտման ձևերը: Օրինակ՝ *...զի եթէ նուազ հովիւս հօրից բնակիցիմ ընդ հովանեաւ զօրածառ սուրբ նշանիդ* և *ընդ խնամակալութեամբ ինքնակալ թագաւորացդ* /284/, *ոսոխք գովելեացդ* կարասցեն երկիւղի շարժմանց լուծանել կամ դրժել *զԱրքայդ քրիստոսաւանդ...* /284/, *պերճ և պանծալի հզօր թագաւորութեանդ* /284/, *մի՛ զրկեր զիս ...յերկրպագութենէ աստուածընկալ նշանիդ* և *հանդիպման աստուածակարգ թագաւորացդ* /284/, *դուք՝ հաղորդեալքդ ի չարչարանս ընդ հօրից ձերոց, և հալածեալքդ և գանեալքդ և հարուածեալքդ յանօրէն ...զի՛նչ պարտ է և պարշաճ է լինիլ* /268/, *ի գութ ողորմութեան կոչել զամենակալն Աստուած քոյոյդ հօրիդ Հայոց .../268/* և այլն:

⁹ Վահանյան 1956, 22:

¹⁰ Ավետիսյան, Ղազարյան 2007, 140:

Զգայական տրամադրություններ ու հոգեվիճակ ստեղծելու, խոսքը երաժշտական դարձնելու համար Դրասխանակերտցին դիմել է նաև բաղաձայնային ոճական հնարանքին: Միևնույն բաղաձայնների կուտակման հնչյունախաղերով, խոսքի բարեհունչ ներդաշնակությամբ և իմաստային տարբեր նրբերանգներով շեշտադրում է ասելիքը՝ ստեղծելով զգայացունց պատկերներ: Օրինակ՝ *...ի վերայ ժամանեալ՝ ջողիրս քախջախս քարդոցաց ի վերայ զօրու նորա ածեր /300/, մեծամեծն փքայր քնջել, քարդել, քախդել, հարկանել խորտակել բազկել և ի միջոյ ի բաց կորուսանել և ի սուր սուսերի մաշել միանգամայն իսկ զփոհմ և զզարմ և զգաւակ/290/, ցրեալ ցնդեալ կային /264/, բազում զզգեստս և զարդս ոսկեճամուկս և ծիրանիս և բեհեզս նոցա մարուցանէր /254/, յաշեալ, մաշեալ փոր իմ ի լալոյ /222/ և այլն:*

Պատմիչը չի անտեսել նաև պատկերավորման այլ միջոցների որոշ կիրառություններ, որոնք այնքան էլ հաճախված չեն թեև, բայց գրողի ասելիքը դարձնում են առավել հատու, որտեղ ի հայտ են գալիս ժամանակագրի հույզերն ու ապրումները, վառ երևակայության ելևէջումները: Գեղարվեստի նուրբ դիտողականությամբ հյուսվում և կերպավորվում են պատմության ազդեցիկ դեպքերն ու երևույթները, որտեղ հեղինակի վիպասանական շնորհը նոր գույներ է ստանում ոճական այնպիսի հնարանքների գործածության ժամանակ, ինչպիսիք են **փոխաբերությունը՝** *Եւ յայսմ անենայնի ձեռն Ամաղեկայ ոչ վաստակեցաւ բազմախողխող երկաթն արեամբ արբուցանել /278/, Յեւր որոյ ապա ...փութամահ տանջանօք մարնեաց զնա ի սպառումն սրոյն ծարաւի 278/, դիակամբք լնուին զերեսս երկրի մերոյ /258/, կրկնությունը՝ առ սակաւ սակաւ զիրեանց ստացուածս վարնեալք ընդ աւուրն պարենի՝ ի վերջին տնանկութիւն հասանէին /262/, գունդք գունդք լինէին /216/, ստէպ ստէպ ապա յաւարի առեալ զորս ի ձեռն ըմբռնեցաւ.../210/, **ամ յամէ** առաքէր /202/, ընտիր ընտիր եկեալ /162/, ըստ **գաւառաց գաւառաց** շրջելով /122/, զմիոյ միոյ կարգացն /104/ և այլն, **համեմատությունը՝** *իբրև զոչխար ի սպանումն /254/, իբրև զառիւծ ...վարանէր վարնել վարարել զազգս /204/, իբր զճանապարհս օձի ի վիմի գնացելոյ /152/ և այլն, աստիճանականությունը՝ շինէին եկեղեցիս...ի մենաստանս և յաւանս և յագարակս /202/, երթեալ ունէր զկիրճսն և զնեղուցսն պողոտայիցն կողմանցն Աշոցաց և Տաշոց /198/ և այլն:**

Դրասխանակերտցու պատմության լեզվաոճական փայլուն բնութագրումներից են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ դարձվածքային

միավորները, որոնք իրենց իմաստակառուցվածքային առանձնահատկություններով էլ ավելի են թանձրացնում տվյալ ժամանակաշրջանի բարոյահոգեբանական, սոցիալական ու քաղաքական պատկերը: Դրանց հմուտ գործածությամբ պատմիչը հույժ տեսանելի է դարձնում թե՛ պատմական անցքերը, թե՛ նշանավոր մարդկանց ու հայ ժողովրդի տարակուսանքներն ու ծանր վիշտը, կենցաղն ու բարքերը, խառնակ ժամանակների շփոթը, մարդկային նենգամիտ հարաբերությունները: Օրինակ՝ *արեան ճապաղիս հեղուկ* /290/, *արկանել զսուր թշնամութեան* /10/, *բառնալ նինջ արտեանաց* /218/, *ընդ կրունկն դառնալ* /100/, *տալ կերակուր սրոյն* /25/, *մերկանալ մարօք* /364/, *հանգչել ի Քրիստոս* /186/, *մալուցանել զլսելիս* /10/, *տապախարշ լինել* /110/ և այլն:

Եզրակացություններ

Ոճական արտահայտչամիջոցները՝ իբրև ոճական հնարներ, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու երկում առանձնանում են կիրառության ինքնատիպ ու բազմազան դրսևորումներով: Գրողի ապրումների և այդ ապրումների արտահայտման ձևերի միջև ավելորդ բառային կուտակումներ չկան, բառերի վերաիմաստավորումներն ու ոճերի կրկնությունները, որոնք գալիս են դեռևս վիպասանական հայերենից, դառնում են խոսքի մեղեդայնության ընտիր բանադարձումներ, կառուցվածքային յուրօրինակ հանգեր ու չափեր: Այս ամենից պարզ է դառնում, որ հեղինակը պատմական փաստերը ոչ միայն սոսկ նկարագրում է, այլև գեղարվեստական խոսքի վարպետ գործածությամբ և ոճավորումների զանազան ձևերով հղկում, ամբողջացնում է պատումը:

Գրականություն

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 693 էջ:

Աբրահամյան Ա. 1976, Գրաբարի ձեռնարկ, Երևան «Լույս», 557 էջ:

Այտընյան Ա. 1987, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 131-137:

Առաքելյան Վ. 1981, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 302 էջ:

- Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ. 2007, Գրաբարի ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 299 էջ:
- Գրիգորյան Ս. 2020, Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզվաոճական առանձնահատկությունները, Հայագիտական հանդես, № 1 (46), Երևան, էջ 27-36:
- Հարությունյան Հ. 1986, Գեղարվեստական խոսք, Երևան, «Սովետական գրող», 286 էջ:
- Հովհաննես Դրասխանակերտցի 1996, Պատմութիւն Հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 397 էջ:
- Մատենագիրը Հայոց, Ժ դար, Պատմագրութիւն, ԺԱ հ, Անթիլաս-Լիբանան, 2010 թ., տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, Հայկական մատենաշար Գալուստ Կիլպենկեան հիմնարկութեան, 795 էջ:
- Վահանյան Գ. 1956, Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Երևան, Հայպետուամանկիրատ, 206 էջ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ՈՃԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ավարդ Խաչատրյան

Ամփոփում

Հովհաննես Դրասխանակերտցին X դարի հայտնի մատենագիր է: Իր «Պատմութիւն Հայոց» երկում կիրառել է ոճական ինքնատիպ արտահայտչամիջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, հակադրություն, աստիճանականություն և այլն: Դրասխանակերտցու «Պատմությունը», սակայն, առատ է հատկապես մակդիրներով, հոմանիշներով և հականիշներով, որոնք առանձնանում են իրենց գործածության յուրահատուկ դրսևորումներով՝ *խոր խռովութիւն, չար ամպրոպ, չար ճանապարհ, ողորմելի ճաշակ, դառն առարկութիւն, քաղցր գարուն, ողորմելի ճաշակ, դառնաշունչ հողմ, արդար և մեղաւոր, պապուական և անարգ, մէգ և մառախուղ, խոհեմ և ուշիմ* և այլն: Այս արտահայտչամիջոցների գործածությամբ պատումը դառնում է առավել պատկերավոր և հուզական:

Բանալի բառեր՝ Հովհաննես Դրասխանակերտցի, պատմագրություն, ոճական արտահայտչամիջոցներ, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, կրկնություն:

О СТИЛИСТИЧЕСКИХ ХАРАКТЕРИСТИКАХ ТРУДА ОВАНЕСА ДРАСХАНАКЕРТЦИ «ИСТОРИЯ АРМЕНИИ»

Алвард Хачатрян

Резюме

Ованес Драсханакертци – известный летописец X века, в своем труде «История Армении» использовал множество стилистических средств – сравнения, метафоры, противопоставления и т.д. «История Армении» Ованеса Драсханакертци изобилует эпитетами, синонимами и антонимами, которые отличаются своей уникальностью в плане их использования в контексте: խոր խռովութիւն - глубинный бунт, չար ամպրոպ - страшный гром, չար ճանապարհ - злой путь, ողորմելի ճաշակ - жалкий вкус, դառն առարկութիւն - горькое возражение, դառնաշունչ հողմ - лютая буря, քաղցր գարուն - сладкая весна, արդար և մեղաւոր - невинный и виновный, պատուական և անարգ - благородный и позорный, մէգ և մառախուղ - туман и мгла, խոհեմ և ուշիմ - благоразумный и сметливый и т.д. Эти стилистические средства придают повествованию необычайную экспрессию и эмоциональность.

Ключевые слова – Ованес Драсханакертци, историография, стилистические средства, эпитет, сравнение, метафора, повторение.

ON THE STYLISTIC CHARACTERISTICS OF THE WORK OF HOVHANNES DRASKHANAKERTTSI "HISTORY OF ARMENIA"

Alvard Khachatryan

Abstract

Hovhannes Draskhanakertcy is a famous historian of the 10th century. In his "History of Armenia" he used unique phrases, means of pictorial expressions, such as comparisons, metaphors, contrasts, etc. In history, however, the epithets, synonyms and antonyms stand out with their abundant use: խոր խռովութիւն - deep turmoil, չար ամպրոպ - evil thunder, չար ճանապարհ - evil way, ողորմելի ճաշակ - miserable taste, դառն առարկութիւն

- bitter objection, դառնաշունչ հողմ - bitter wind, քաղցր գարուն - sweet spring, արդար և մեղաւոր - just and sinful, պատուական և անարգ - honorable and disgraceful, խոհեմ և ուշիմ - prudent and alert, մէգ և մառախուղ - haze and mist etc. The skillful use of these means of expression makes the poem more visual and emotional.

Key words – Hovhannes Draskhanakertcy, historiography, stylistic means of expression, epithet, comparison, metaphor, repetition.

СРЕДСТВА РЕПРЕЗЕНТАЦИИ КОНЦЕПТА «ЗУБР» В РЕГИОНАЛЬНОМ КОММУНИКАТИВНОМ ПРОСТРАНСТВЕ

Инна Ильичева (Беларусь, Брест)

Кандидат филологических наук, доцент кафедры английской филологии
БрГУ имени А.С. Пушкина
224016, бульвар Космонавтов 21, г. Брест, Республика Беларусь, Учреждение
образования «БрГУ имени А.С. Пушкина»
Эл. адрес: ilicheva@list.ru
Статья представлена 09.09.2021, рецензирована 10.09.2021,
принята к публикации 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-150

Вступление

Концепт являет собой выражение этнической специфики мышления, и его вербализация обусловлена лингвокогнитивно- и этнокультурно маркированной ассоциативной компетенцией носителя концептуальной системы. По мнению Ю.С. Степанова, «концепты представляют собой коллективное наследие в сознании народа, его духовную культуру. Именно коллективное сознание является хранителем констант, то есть концептов, существующих постоянно или очень долгое время»¹.

Концепты как первичные культурные образования, которые существуют в культурно-историческом пространстве народа, определяют его менталитет и транслируются в разные сферы бытия человека как коллективные ментальные образования, фиксирующие своеобразие культуры (ментальная проекция элементов культуры)².

Каждый отдельный концепт демонстрирует существование в конкретной этнической культуре определенной ценности. Концепты, раскрывающие ценностные приоритеты культуры, объединяются в системы или в лингвокультурные доминанты. Культурный концепт в отличие от индивидуальных концептов тесным образом связан не с мыслительными и речевыми структурами индивида, а с культурой. Иссле-

¹ Степанов 1997, 7.

² Карасик 2005, 38.

дователи, которые изучают культурные концепты, пишут о концепте как об основной составляющей культуры. «Культура – это совокупность концептов и отношений между ними», – указывает Ю.С. Степанов³.

Единицей нашего исследования выступает концепт как фрагмент картины мира, как базовая единица культуры, как «архетип культуры», первосмысл, первообраз, который постоянно возобновляет духовные запасы народной ментальности. Концепты существуют так же реально, как и мельчайшие невидимые частицы, из которых состоят все окружающие предметы. В нашем сознании концепт предстает в своих содержательных формах: в образе, в понятии, символе.

Все процессы, связанные с передачей, хранением и переработкой информации в природе и обществе, как справедливо отмечает Н.Б. Мечковская, протекают с использованием знаковых систем или внесистемных знаков, т.е. являются семиотическими⁴. Вслед за Ю.С. Степановым, который рассматривает концепт как «пучок представлений, понятий, знаний, ассоциаций, переживаний, который сопровождает слово»⁵, и полагает, что концепты, будучи ментальными образованиями, «прячут» над словами и вещами, выражаясь как в тех, так и в других⁶, считаем целесообразным рассматривать выражение концепта «Зубр» во всей совокупности семиотических средств, прямо или косвенно иллюстрирующих, уточняющих и развивающих содержание данного концепта. Достижение цели исследования предполагает решение следующих задач: 1) систематизация основных направлений изучения концептов на современном этапе; 2) составление авторской картотеки контекстов употребления ключевой лексики; 3) выявление вербальных и невербальных средств объективации концепта «Зубр» в региональной концептосфере; 4) выявление особенностей манифестации концепта в рамках польской лингвокультуры.

³ Степанов 2007, 40.

⁴ Мечковская 2008, 6.

⁵ Степанов 1997, 40.

⁶ Степанов 1997, 41.

Этимология слова *зубр*, как отмечает Г.А. Крылов⁷, восходит к общеславянскому существительному *зубъ* в значении «рог», образованному добавлением суффикса *рь* (изначально *зуб* – «любое тело, имеющее форму зуба»). *Зубр* буквально значит «рогатый».

Мотив зубра встречается в произведениях многих белорусских и польских поэтов и писателей. О зубре писали: Г. Карцов, К. Врублевский, А. Курсков, В. Козлович, Ф. Кобринчук, М. Рудковский, В. Городей, Я. Карпинский, В. Милош, И. Мышлинская, П. Хейнш, В. Пол, С. Гроховяк, В. Линдеман, Х. Дуда и др. Одним из самых известных произведений, описывающих природу Беларуси и величие зубра, является поэма Н. Гусовского «Песнь о зубре». Произведение было написано на латинском языке в 1523 году по указу папы **Льва X Медичи**. Представляя в поэтической форме многогранную картину природы, Н. Гусовский центральное место уделяет зубру – его описанию и поведению в среде своего обитания: *Любо глядеть, как он легок в стремительном беге /И по полянам лесным, и по тропкам болотным. /С места рванет, как будто пращю подброшен*⁸. Поэма стала выдающимся памятником литературного наследия и духовного величия восточнославянских народов.

Анализ образов, актуализирующих концепт «Зубр» в лирике и прозе польских и белорусских авторов, позволяет выделить пять доминантных характеристик: редкое животное (*пасля вайны ў дзяржаўны запаведнік «Белавежская пушча» з Польшчы зноў завезлі 5 зуброў. У другі раз пачалося ўзнаўленне гэтага рэдкага звера ў пушчанскіх лясах*), властелин лесного пространства (*зубр ну волат, не іначай, /між пушчанскіх жыхароў! <... ...> зубр, зубр!/Мужны, лоўкі/я пра моц тваю пяю*), король леса (*szumi dębów chór/tłumem koron spiętrzonych jak dym./Stoiw troku żubr, /białowiejskich ostępów gospodarz*), живая легенда (*пушчанскае мора калышацца тысячагоддзі. /Зубры паміж хваляў жывымі легендамі*), символ первобытной мощи (*wszak to żubry ocieżyła/w marszu bardzo są wytrwałe, /ciężkie futra na swym grzbiecie /woząc niby żółw w karecie*).

⁷ Крылов 2005, 153.

⁸ Гусовский 2010, 8.

При описании данного концепта нельзя оставить без внимания описание Беловежской пушчи – среды обитания зубров. В общую образную и семантико-грамматическую концепцию ряда стихотворений органично вписаны описания реликтового леса сквозь призму человеческого восприятия. Деревья получают постоянные эпитеты, которые перерастают в символы: молчаливые летописцы, глухая древность и дыхание молодости, чудесное сокровище: 1) *Przeszłość puszczy w Białowieży/ wiekiem dębów trzeba mierzyć, /jak podobnych starych borów./To **milczący kronikarze**. /Słoję ich – mózgowa kora,/są odbiciem dawnych zdarzeń* (S. Grochowiak); 2) *Jest **starością głuchą** – przenikliwie widzącą/i **młodym głębokim oddechem**. Jest milczeniem, /o które rozbija się echo* (H. Duda); 3) *Wysoko, wysoko potężne konary/królują i dumnie się patrzą w błękity./ Pomiędzy splotami korzeni ukryty/zataił się **skarb przecudowny** – / prastary...* (W. Lindemann)⁹.

Н.Ф. Алефиренко пишет, что язык выступает как инструмент, обеспечивающий актам нашего восприятия и осмысления принципиальное подобие миру. Внутренняя форма языка скрыта в подсознании, но как только человек включается в процесс речемышления, она тотчас актуализируется, отображаясь в дискурсе стереотипами кристаллизующихся символов¹⁰.

Символ зубра по праву считается одним из самых древних, о чем свидетельствуют многочисленные археологические находки. В пещерной (наскальной) живописи эпохи палеолита он занимает ключевое место, являясь одним из самых почитаемых животных. Большинство наскальных изображений найдено в Европе, так как именно там древние люди были вынуждены жить в пещерах и гротах, спасаясь от холодов.

Самые впечатляющие наскальные картины были созданы в Альтамире в 14 500 году до нашей эры (рис. I), благодаря чему пещеру сравнивают с Сикстинской капеллой. Бизоны написаны охрой и углем, рядом с ними изображены лани. С 1985 года пещера является объектом всемирного наследия ЮНЕСКО и представляет собой самый мас-

⁹ <http://www.encyklopedia.puszcza-bialowieska.eu>.

¹⁰ Алефиренко 2020, 84.

штабный памятник первобытного изобразительного искусства, дошедший до наших дней (рис. II).



Рис. I. Наскальная живопись Альтамира




Рис. II. Репродукции изображений зубров из различных пещер магдаленской эпохи

В древности народы Кавказа поклонялись этим животным, олицетворяющим сокрушительные силы природы. К концу XX века зубры оказались на грани исчезновения. В славянской культуре зубр занимает особо важное место, являясь одним из самых почитаемых в славянской традиции животных.

В настоящее время в Беларуси обитает практически четверть мировой популяции зубров. Крупнейшие популяции зубров в Беларуси сосредоточены на пяти территориях: национальный парк «Беловежская пуща», где обитают 604 особи, Осиповичский опытный лесхоз (470), СПК «Озеры» Гродненского района (378), охотхозяйство «Красный Бор» в Верхнедвинском районе (190), Полесский радиационно-экологический заповедник (174). Лидером среди европейских зубродержателей является Беловежский Национальный парк Польши, в котором насчитывается 770 особей животных.

Зубр – важный спутник человека. Это прекрасно иллюстрируют белорусская и польская живопись и скульптура. В самом общем значении зубр – символ величия, монументальности и царственности. Шедевры славянского искусства разных веков демонстрируют именно эти символические черты животных, показывая также их «качества в движении» наряду с грацией и гармонией пропорций.

В целом ряде белорусских и польских пейзажных зарисовок воплощен концепт «Зубр». Рассмотрим несколько из них.

Уникальные полотна художницы Л. Жиженко из Гомеля представляют собой нефтеграфику. Используя разные оттенки нефти – от зеленоватого до темно-коричневого, Л. Жиженко наполняет свои картины духовным содержанием. На одной из картин автора представлены зубры. Важнейшим средством выражения замысла становится сложная светотеневая, как будто сплавленная живопись с коричневатым колористическим строем. Зубры (рис. III) представлены цветом черного шоколада, а закат – гречишно-медовый. Необычная на первый взгляд коричневая палитра не только ничуть не сковывает сюжет, а пространственно передает приближение рассвета.



Рис. III. Зубр Л. Жиженко (нефтеграфика)

Мотив Беловежской пушчи присутствует в ряде работ В. Брохоцкого. В 1885 году он посетил Беловежскую пушчу. Здесь он сделал около 10 рисунков, которые публиковались в еженедельных журналах «Kłosy» (№ 1060/1885) и «Wędrowiec» (№ 40/1897), издаваемых в Варшаве. В журнале «Kłosy» художник также опубликовал обширный этюд, посвященный лесу и его главному обитателю – зубру (рис. IV).



Рис. IV. Зубры (В. Брохоцкий)

Зубр представлен и в серии литографий польско-белорусского художника А. Каменского (рис. V).



Рис. V. Зубры (А. Каменский – литография)

Концепт «Зубр» достаточно устойчив в белорусской и польской скульптуре. В городе Каменец Брестской области вблизи Каменецкой башни в 1988 году был возведен монумент ее основателю (рис. VI) – великому волынскому князю Владимиру Васильковичу. Памятник представляет собой достаточно оригинальное композиционное решение: величественная фигура князя-основателя Владимира Васильковича показана в полный рост. В левой руке у него щит, где написано: «...сруби город, нареки имя ему Каменец, зане быть земле каменна...», правой рукой князь как бы благословляет город Каменец и всех его жителей. Неподалеку от князя изображен царственный зубр, который является символом Беловежской Пущи, непосредственно в окрестностях которой и расположен город Каменец.



Рис. VI. Памятник градорубу Алексе

18-22 сентября 2014 года в польской части Беловежской пуши на базе Беловежского национального парка прошли мероприятия, посвященные 85-летию восстановления популяции зубров в Беловежской пуше и 35-летию включения Беловежской пуши в Список объектов Всемирного наследия ЮНЕСКО. Одним из наиболее значимых событий в рамках празднования стало приуроченное к юбилею открытие памятника зубру (рис. VII). у дороги Гайновка-Беловеж в урочище Зверинец. Этот памятник – точная копия стоявшего некогда на этом же месте монумента, воздвигнутого в 1862 году в память о царской охоте 6-7 октября 1860 года, на которую приезжал Александр II.



Рис. VII. Открытие памятника зубру у дороги Гайновка-Беловеж в урочище Зверинец

Такое внимание к образу зубра в разных видах искусства свидетельствует о том, что «зубр» – концепт славянской культуры. Специфика отражения этого концепта различна, что обусловлено особенностями используемых изобразительных средств, т.е. семиотических систем данных видов искусства. Однако общим для разных видов живописи, скульптуры и литературы является использование цветовых палитр и звуковых ассоциаций. Система образов, находящихся в «историческом» ядре концепта, находит отражение в литературе, живописи и скульптуре. Эти образы дополняются чувственным опытом художников, несут на себе отпечаток эпохи.

Изображения зубра появлялись на денежных купюрах, памятных монетах в Беларуси, России, Украине и даже в южноафриканской стране Малави. Огромную статую зубра можно и сегодня встретить на трассе Минск – Брест и у Дворца культуры МАЗ в столице республики Беларусь.

Изображение зубра (рис. VIII) присутствует и в геральдике ряда стран, земель и городов: Гродненская и Брестская область, Гродненский район, город Свислочь (Беларусь); Мостовский район (Краснодарский край, Россия); город Зубржи (Чехия); город Тыкоцин, деревня Беловежа, село Наревка, город Замрув, город Сокулка Казимеж-Вельки, город Живец (Польша); герб Румынии и Молдовы, Калишского воеводства (Королевство Польское и Речь Посполитая, 1314–1793 гг.).



Рис. VIII. Зубр в геральдике

Герб Национального парка «Беловежская пуца» (рис. IX) включает в себя целый ряд составных частей, каждая из которых выполняет соответствующие функции. Центральным ядром является щит с гербовым изображением. Герб венчает корона, на вершине герба служит корона дуба, основание и корни которого упираются в подножие, представленное в виде травяной подстилки. Щитодержатели по обеим сторонам герба изображены в виде двух крупных животных, обитающих в Беловежской пуце – благородного оленя и зубра.




Рис. IX. Герб НП «Беловежская пушча»

В отличие от речевого высказывания, которое строится из слов, или спектакля, основанного на мизансценах, произведение изобразительного искусства, в данном случае геральдика, является целостной, законченной, креолизированной единицей. Не обладая протяженностью во времени, геральдика отображает статику мира. Ее восприятие происходит одномоментно. Семантика цвета и иконические знаки переходят в разряд символических и национально-значимых для носителей языка и культуры отдельного региона.

Заключение

Изучение национального языка и литературы в тесной связи с культурой и ментальностью, национальной самобытностью каждого народа неизбежно приводит исследователей к понятию концепта, реконструкция которого является одним из приоритетных направлений современных лингвистических дисциплин, таких как лингвокультурология и лингвоконцептология.

Сейчас ощущается необходимость в более глубоком изучении лингвокультурологических и когнитивно-дискурсивных особенностей регионального коммуникативного пространства как вербальнознаковой символизации культурного опыта человечества в целом и отражения национальной картины мира, менталитета конкретного народа в частности.

Таким образом, широкое распространение концепта «Зубр» в различных типах дискурсивной практики позволяет считать его одним из ключевых элементов региональной лингвокультуры. Языковое выражение лингвокультурного концепта «Зубр» самым тесным образом связано с мироощущением, мировосприятием, эмоциональной стороной творчества разных скульпторов и художников, изображавших это величественное животное. Язык подтверждает то, что есть в сознании и может быть реализовано знаками разных семиотических систем (звуками, красками).

Лингвокультурный концепт «Зубр», являясь прецедентным культурно-определенным и национально-обусловленным концептом, находит широкое отражение в поэтических и художественных текстах региона. Понятийная составляющая концепта представлена базовыми признаками, вычленяемыми на основе данных лексикографических источников, а также периферийными признаками, выделяемыми в художественных и поэтических текстах. Образная составляющая концепта представлена сетью взаимодействующих концептуальных метафор и сложных креолизованных комплексов.

Литература

- Алефиренко Н.Ф. 2020, Лингвокультурология. Ценностно-смысловое пространство языка. Учебное пособие, Н.Ф. Алефиренко, 6-е изд., Москва, «Флинта», 288 с.
- Карасик В.И. 2005, Иная ментальность, В.И. Карасик [и др.], Москва, «Гнозис», 352 с.
- Мечковская Н.Б. 2008, Семиотика: язык, природа, культура. курс лекций, 3-е изд., испр., Москва, «Академия», 432 с.
- Степанов Ю.С. 1997, Концепты. Словарь русской культуры. Опыт исследования, Москва, Школа «Языки русской культуры», Языки славянских культур, 824 с.
- Степанов Ю.С. 2007, Концепты. Тонкая пленка цивилизации, Ю.С. Степанов, Москва, «Языки славянских культур», 248 с.
- Крылов Г.А. 2005, Этимологический словарь русского языка, Г.А. Крылов, Санкт-Петербург, «Полиграфуслуги», 432 с.

Гусовский Н. 2010, Песня о зубре, Н. Гусовский, Москва, «Наш современник», 126 с.

Электронный ресурс удаленного доступа: Antologia Poezji Białowieskiej. Internetowa Encyklopedia Puszczy Białowieskiej, – Режим доступа: <http://www.encyklopedia.puszcza-bialowieska.eu>. (Дата доступа: 24.06.2019).

«ՎԱՅՐԻ ՑՈՒԼ» ԿՈՆՑԵՊՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Իննա Իլիչևա (Բելառուս, Բրեստ)

Ամփոփում

Կոնցեպտները ներկայացնում են աշխարհի պատկերի բազային միավորներ, որոնց մեջ արձանագրվում են ինչպես առանձին լեզվակիր անհատների, այնպես էլ, ամբողջությամբ վերցրած, լեզվամշակութային հասարակության արժեքները: Հետազոտության առարկան են «Վայրի ցուլ» («Ձուրք») լեզվամշակութային հասկացության ներկայացման միջոցները տարածաշրջանային հաղորդակցական տարածքում: Ուսումնասիրության ընթացքում կատարվել է բելառուս և լեհ հեղինակների չափածո և արձակ ստեղծագործությունների բովանդակային վերլուծություն՝ կոնտենտ-անալիզ կոնցեպտի իմաստների ճանաչողական-դիսկուրսիվ մոդելավորում Գ. Կարցովի, Վ. Կոզլովիչի, Ն. Գուսովսկու, Ն. Կորբինչուկի, Վ. Գորոդեյի, Վ. Միլոշի, Վ. Լինդեմանի, Խ. Դուդայի, Բ. Ռուսկոյի տարբեր նշանագիտական համատեքստերում (ընդամենը՝ 80 ստեղծագործություն): Այդ վերլուծության մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռում հայտնաբերելու և նկարագրելու «Վայրի ցուլ» կոնցեպտն ի ցույց հանելու տարբեր եղանակները հաղորդակցական տարածքում և արձանագրելու տարբեր նշանային համակարգերի նշանակալի դերը (գեղանկար, քանդակ, զինանշան)՝ որպես մարդու գործունեության անքակտելի բաղադրիչներ, որոնք առավել լիարժեքորեն են բացահայտում կոնցեպտի արժեքային բաղադրիչը: Բելառուսական և լեհական համատեքստերի հիման վրա ճանաչողական-դիսկուրսիվ մոդելավորման մեթոդի կիրառումը թույլ է տալիս բացահայտել կոնցեպտի բովանդակության ազգային և մշակութային առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ կոնցեպտ, կոնցեպտի ոլորտ, լեզվամշակութաբանություն, լեզվակոնցեպտաբանություն, նշանագիտական համակարգեր, խառնածին տեքստ, զինանշանագիտություն:

СРЕДСТВА РЕПРЕЗЕНТАЦИИ КОНЦЕПТА «ЗУБР» В РЕГИОНАЛЬНОМ КОММУНИКАТИВНОМ ПРОСТРАНСТВЕ

Инна Ильичева (Беларусь, Брест)

Резюме

Концепты представляют собой базовые единицы картины мира, в которых фиксируются ценности как отдельной языковой личности, так и лингвокультурного общества в целом. Предметом исследования являются способы репрезентации лингвокультурного концепта «Зубр» в региональном коммуникативном пространстве. В ходе исследования был проведен контент-анализ поэтических и прозаических произведений белорусских и польских авторов (когнитивно-дискурсивное моделирование смыслов концепта в различных семиотических контекстах Г. Карцова, В. Козловича, Н. Гусовского, Н. Кобринчука, В. Городей, В. Милоша, В. Линдемана, Х. Дуды, Б. Руско – всего 80 произведений). Использование метода контент-анализа дает возможность выявить и описать различные способы манифестации концепта «Зубр» в коммуникативном пространстве и констатировать значимость роли разных семиотических систем (живопись, скульптура, геральдика) как неотъемлемых компонентов человеческой деятельности, наиболее полно раскрывающих ценностную составляющую концепта. Использование метода когнитивно-дискурсивного моделирования на базе белорусских и польских контекстов позволяет выявить национально-культурные особенности содержания концепта.

Ключевые слова – концепт, концептосфера, лингвокультурология, лингвоконцептология, семиотические системы, креолизованный текст, геральдика.

MEANS OF REPRESENTATION OF THE "ZUBR" CONCEPT IN THE REGIONAL COMMUNICATIVE SPACE

Inna Ilyicheva (Belarus, Brest)

Abstract

Concepts are the basic units of the picture of the world, in which values are fixed, both of an individual linguistic personality and of a linguocultural society as a

whole. The article discusses the ways of representation of the linguocultural concept "Bison" in the regional communicative space. The theoretical basis of this research was formed by works in the field of linguoculturological conceptology (V.I. Karasik, V.A. Maslova, N.F. Alefirenko, Yu.S. Stepanov), semiotics (N.B. Mechkovskaya). In the course of the research, a content analysis of poetic and prose works of Belarusian and Polish authors, cognitive-discursive modeling of the meanings of the concept in various semiotic contexts was carried out. The material for the study was the texts that make up the creative heritage of G. Kartsov, V. Kozlovich, N. Gusovsky, N. Kobrinchuk, V. Gorodey, V. Milos, V. Lindemann, H. Duda, B. Rusco (80 works in total). Using the method of content analysis makes it possible to identify and describe various ways of manifestation of the concept "Bison" in the communicative space. The article resulted in conclusions about the significant role of different semiotic systems (painting, sculpture, heraldry), as integral components of human activity, most fully revealing the value component of the concept. The use of the method of cognitive-discursive modelling on the basis of Belarusian and Polish contexts makes it possible to identify the national and cultural features of the concept's content.

Key words – concept, conceptual sphere, cultural linguistics, linguoconceptology, semiotic systems, creolized text, heraldry.

THE PHENOMENA OF CULTURAL MEMORY AND TIME IN THE COMPOSITION "UNDER THE FIR TREE: REFLECTIONS IN THE BOSOM OF DESERTED NATURE" BY GHEVOND ALISHAN

Naira Hambardzumyan

PhD of Philology

Institute of Literature after Manuk Abeghian of NAS RA

15 Grigor Lusavorich Yerevan, Armenia

E-mail: nairahambardzumyan@yahoo.com

The article has been delivered on 23.02.2020, reviewed on 05.03.2020,

accepted for publication on 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-165

Introduction

The unified provision of history and philosophy, asserting that world history undergoes neither spontaneous nor cyclic development, but rather ensures objective regulations for the development of society and the natural-real progress of mankind towards the path of truth, is confirmed by manifestations specific to advanced nations, without which history might be distorted, presented unilaterally, or misunderstood; an assumption, however, which is not certain. The possibilities of succession of historical and cultural values, generational change, and information transfer in the field of history are also ambiguous, since their development is not horizontal-unilateral, and world history is an utterly contradictory process of common patterns. Within this context, the role of literature is observed in the areas of transmission of cultural memory (Literature in cultural memory) and other patterns of ideas, regarding literature as a means of cultural function or the functions of literary texts as a repository of cultural memory.

The Work of Alishan

The composition "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature" by Gh. Alishan is of great relevance in terms of carrying and transmitting cultural memory within the context of history, the interpretation of which is possible on the basis of a long-term cultural memory of the text, since Alishan creates his own vision of memory in the time domain. The aforementioned is simultaneously in the realm of social identification; as long as the hu-

man being is the subject of the memory, and the chain of social communications predetermines the content of the latter's memory. Within this context, Jungian perceptions of collective memory¹ and collective unconscious² are not just metaphors, as cultural memory is the collective memory of the bearers of culture, which includes the thoughts, ideas, and semantic networks that preserve culture. Oftentimes, collective memory does not coincide with history, but creates the interpenetrations of the past and the present, their interconnection, whereas history destroys them. History records the totality of facts recorded in the memory of society and begins when the tradition ends, when social memory fades or is destroyed. Historical memory unites these opposing perceptions in different poles, since in the realm of theorizing of the communication, culture emerges as a separate communicative process that balances the durations of human history and universal time.

In parallel with the discovery and legalization of intra-textual possibilities of Ghevond Alishan's composition "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature", the cultural memory given through experience is formed; and in the field of communication, there appear cycles of time and space and such layers of memory as are ancient Greek or Hellenistic (Hellas) ritual texts. Revival does not materialize or take shape as long as memory lives on. Consequently, the need to write the history of a period, a society, or a person arises when the eyewitnesses who preserve the memories gradually cease to exist, and the prospect of finding one's own identity becomes immaterial and intangible. And when we do not find an appropriate society to preserve the memory, our own memory, remaining unsupported, becomes obsolete, too. In other words, survival (as a subjective intrinsic sensation) does not develop into communication. But what is obvious is aporia, as long as the constitutionality of time in the matrix structure summarizes the author's intra-cultural presence, and time is defined by the trajectories of its elementary particles - the presents, accepting the interaction of the present with the past or the future within time and denying them as past or future (only Now), which is itself super-temporal and temporary only at the moment of self-creation (towards the past or future). Therefore, Lotman's understanding of 'culture is memory'³ is

¹ Юнг 1991, 45.

² Юнг 1999, 37.

³ Лотман 2010, 12-149.

seen as a collective non-hereditary memory: "The random model created by the author is presented to the reader as the language of consciousness. Randomness is replaced by universality. But that is not all. <...> All innovative writings are composed of traditional materials. If the text does not assist the memory with its traditional construction, its innovation ceases to be perceived⁴".

So when time refers to its own core, it also presupposes freedom, which is neither in the past, nor in the future, but rather as an inseparable manifestation of time, it is defined as 'Now' in the composition "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature" and is considered in the realms of the past or the future: "You are the only encouragement for the martyrs, a consolation for those who are grieved, advice for those who seek the truth, an amble for the new pilgrims, a necklace on the virgins' necks, a scepter for the elderly and helper for all ages. You are the one who overthrows the strongholds of delusions that crushed the temples of Aramazd and the altars of Astghik; that shattered the seats of the proud and lifted up the scorned and the humble of this world. You alone extinguished the vengeance and envy and the fire of numerous diseases from the furnace of the hearts, and there, within thorns and mounds, you sowed meekness and prudence and the kiss of peace⁵".

In the protection field of this cultural information, Alishan implements two different memories - informational and creative, in which the participation in existence is also the participation in the present, in the presence of the present, in the possible presence of existence. Therefore, existence is what exists, and the presence is considered on the basis of existence. Courtesy to the presence indicates the historical significance of memory, because the existence, the present, the now, and the mesosphere are semantically and fundamentally connected with the present. The unity of images of memory is remarkable in Plato's "Phaedrus"⁶: tradition is always related to the perceptions of the past, as it creates the illusion of unity and ideological quest by repeating and measuring the orientation of the intellectual skills of the past.

In his composition "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature", Alishan relates the vitality of collective memory to the present, which is infinite cosmic time, marking the ontological precondition of memory

⁴ Лотман 1998, 14.

⁵ Ալիշան 1874, 47:

⁶ Տե՛ս Платон 2007, 161-228:

as its bearer. That present also opens up the time which includes and preserves the measures of the past and the future: "And when the road is over, and the world full of a myriad of concerns disappears in the eyes of the great and the small, be that a king or a hermit, the same cross exalted and peaceful will be resting on hearts isolated from the joys of life, as a sign of victory over death and a future resurrection⁷".

This work of Alishan is a geography of cultural memory, memorability, and survival, which preserves the texts by memory and relates them to the present, since every culture defines its constant of remembering, preserving, and forgetting.

And when the bearers of culture change, so do the perceptions of *memory* and *oblivion*. Memory is established and preserved as the immediate past, which maintains the chain sequence of the living present, involving the contents of the author's individual memory which correspond to the inner capacities of collective memory, forming its cultural domain. Even though, such a metaphysical present is not physically possible since the flash of memory presupposes a certain duration which is lived and passed through: "Many have fallen by the sword, there are countless who have fallen with love. The first is just a stitch; the second is a wound. Such was the terror of the giant weakened in Delilah's arms; the wisest of all men enchained by the charms of Tyre's daughter; heroes won over by gentle maids..."⁸. Historical memory as a cognitive phenomenon of the past and an epistemological context, can be viewed in traditional interdisciplinary theories such as those of evolving systems or genetic-cultural development. Memory is capable of storing everything that is subject to the decay of time. Memory saves and preserves a human being from oblivion. The ancient Greek used one word - *mneme* - to call knowledge and memory; hence, the name of the goddess of memory - *Mnemosyne*. The past and the present denote the two existing time elements - the present, which does not cease to become past, and the past, which does not cease to be, and through the inner realm of which the present passes. In this case, the present and the past are not identical. The present is relevant because the author (Alishan) lives in it. The past and the present are phenomenological and are pre-

⁷ Ալիշան 1874, 41-42:

⁸ Ալիշան 1874, 16-17:

served in the conscious present of the author. This idea is noticeable in the presence of the author Alishan, although his subjectivity is manifested spontaneously, destroying its own time, consciousness, and differentiated experiments of self-expression. Although, the memory of the past is ontological, as well as surreal, at the same time it initiates the psychological memory, in the inner domain of which the past is the surviving present: "<...> the simplicity of the blue arches over as the vast sky bridges the sea and the land. There people live and sail from world to world, and leaving each other, pass away one by one⁹". Ontological memory does not include the present within the past, but the past in general: the past is not established in the present, since the already existing relations are constantly considered as the past. This is the main paradox of memory - the contemporaneity of the present and the past. In other words, every present returns to itself as to the past: "Remember, then, o my unknown soul, that what you see, what you feel, will all pass away, as it did for your ancestors¹⁰".

In his work "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature" Alishan emphasizes the temporality of the past, which becomes present through survival, and within in a certain space-time continuum, that belongs to the author and is based on the functions of time, unites the past and the present, making the way of present-past survival more visible: "Hither <...> like an insignificant island of Cyclops, or the vague land called Atlantis, glorified by the eloquent philosopher, that other expeditors seek and cannot find, - barely 400 years have passed, that it has appeared in our eastern hemisphere and has been called New World. Although old, it was called New World. Although it was equally old, and like ours, it had lived through countless human races for thousands of years, being their mother and nanny. Few of them left their traces of ancestry, like those of Mexicans and Beru inhabitants, on which archaeologists find patterns completely resembling those of the Libyan Nile peoples. And who knows the history of those nations from thousands of centuries ago¹¹?"

Repetition does not change anything in the text, but it does change the flashing memory to some extent, condenses the moments, and confirms the

⁹ Ալիշան 1874, 9:

¹⁰ Ալիշան 1874, 68:

¹¹ Ալիշան 1874, 12:

living present. In this context, continuity also presupposes contemporaneity, in the depths of which the past is superficial, because it is the time within itself, which is the irregularity of all times. And when the external unity of memory is based on the past, taking into account the contemporaneity, coexistence, preexistence, present and instincts, the past introduces itself in the realms of the psychological and ontological present, where the psychological past substantiates time and the pure ontology of the present substantiates the independent or ontological memory: "The amazing wonders of the Ethiopian and Egyptian peoples, whose fame was heard everywhere, are now slowly rising, scattering the dust of the centuries: their bodies embalmed by three thousand years of death come to light and are not alive, thus bearing witness to death, from the clutches of which they could not escape with all the subtlety of their art, and also witnessing an immortality which they had scarcely realized in the dim light of the past. "On their pyramids, on the huge, majestic stone structures of the sphinxes, on their shrines, on the facades of their palaces, and on their stone monuments, on the pavilions, the signs of poor and superstitious minds may be seen - images of cats and peacocks, reptiles and dung-beetles - and this on the tombs of the most powerful pharaohs¹²".

Plato principally includes the coordination of memory images in the physiological systems of the brain. He modernizes memory as a separate mental activity which regulates and applies the past in different spheres of knowledge - blood, air, fire¹³, because the brain communicates with the senses of hearing, sight, and admiration, through which memory and assumption are created, which, in their turn, fix the knowledge. The past relates to the two presents - the present to which the past opposes, and the present with which the relations are perceived as past. A paradox that hinders the belief in the past that does not exist, since the present is a pure existence that is always beyond its own limits and simply involves the localization of time on wider or narrower spatial levels.

Continuing the regulation of Plato's memory images, Aristotle includes in it epistemological systems in the realm of intelligence and external world relations: memory is mental and conditional; this is a universal sensory state

¹² Ціжман 1874, 13:

¹³ Платон 2007, 97-160.

because it is specific to the brain: "The main sense of the object of memory is what is possible to imagine even with coincidences that are not related to imagination¹⁴". The practicality of memory is the narrower or more deconstructed level of combining the present with the past, and the past is its weaker state. The present-past relations in Alishan's writing, as a misreading, are not enough, as they are beyond the criteria setting the textual time: cognition of time fixes the current image of the past in the super-temporal domain and forms the text framing chain. Alishan compares this perception of time with a closed circle, the image range of which always comes to meaning, comprehensively outlining also the space: "For a vast two thousand years, a tyrant forcibly seized another tyrant's scepter, only moving the royal capital by an irrevocable order – sometimes to Qaghan sometimes to Nineveh, sometimes to Babylon or Ecbatana, and sometimes to Susa: capital cities of cosmic luxury, where flowed and piled up all the wealth and splendor of the world as if a golden pipe, spreading its magic across hundreds of provinces of conquered nations and tribes <...> The richest and most powerful kings of Asia did not entrust us with anything more, either; they sometimes, as earthly gods, set their golden throne in the valleys of the Euphrates and Tigris, taking nations and distant worlds, mountains and plains, lands and seashores in their copper net"¹⁵.

In Alishan's work "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature", essentially, uniting, memory contrasts with the present, since the perception of time happens through the past. And when the text is secured in the circular time frame, the author returns to the present to complete another cycle where he will rediscover the ancestral memory: "Behold those fields where famous battles were fought from the days of Ninus to those of Napoleon; Pass through the armies of Xerxes, Alexander, Hannibal, Caesar, and thousands of Roman generals, through the camps of thousands of European and Asian tribes, through the Scythian and Tatar regiments wandering in the desert of the northern barbarians, through the innumerable armies of the first centuries, from the Middle Ages and the latest centuries, see how terrifically astonished you will be, that from ancient times till now the human soul has sought to dominate and kill more than to grow and give life¹⁶". Alishan finds

¹⁴ Аристотель 2004, 161-168.

¹⁵ Ալիշան 1874, 14:

¹⁶ Ալիշան 1874, 18-19:

the memory, finding the past in the present, and places the memory in another super-temporal time chain of image-memory, in which he encrypts the past. This transition of the present-past chain is revealed in different ends of the same chain and forms various complementary provisions of being: "O vain world! You amaze me with innumerable monuments, but you cannot satisfy me. Your great conquerors, Ramsesseses and Setis, yes, they left monuments as far as Taurus, as far as the Caucasus, but they did not leave in the hearts of the admirers. They are memories of death rather than life, and though, undeniably, many times they tried to portray immortality, they described the truth in such deep and dark colors that they could not or did not want to tear its gloomy veil and see the wonder face to face. Egypt and its neighbors are, for me, but a thunderous wind that passes in vain. And you, cities of waves, ladies of mermaids Tire and Sido, and you, in the power of Carcedon, dared to stand up, you who would tax the sea and the land, are now ruins sunk under the sea and the land, buried under the sand like broken jars, as a memorial to the sand and lodging for the poor¹⁷". This is why memory tells so little about the super-temporal past in the inner realm. Memory is disconnected from the experiential chain of time, and as a necessity of psychological memory, provides sub-contemporaneity: image memory does not tend to the past, but interprets the present, which is the same past. Alishan depicts the super-temporal past in the domain of uninterrupted memory, because the surreal memory is different from the experiential one, and in the border of experience, everything that slips out of attention is forgotten. It should be noted that continuing the tradition of including the phenomenon of memory in the temporal domain, Aristotle emphasized the importance of the image of memory-knowledge as a secret of the epistemological process in which the present relates to the past through memory and reaches the future: "...We acquire such cognition skills that we did not have before; how could we recognize without having foreknowledge?¹⁸". Hence the surreal memory preserves the impossibility of the past as the ontological past of all times which is discovered in the inner realm of the author's personal memory. The aforementioned form of memory differs from the experiential one since it is subjectively ontological. In other words, Alishan's surreal

¹⁷ Ալիշան 1874, 13-14:

¹⁸ Аристотель 1978, 315-346.

memory coincides with the ontological process of differentiation of being, which in its tardiness, is independent and claims the possible precondition of existence: "Even the artists considered most graceful-handed, Phidias and Apelles, Santi and Canova, are just duplicators of native nature; they were not even able to move one of the legs of the huge statue of Aramazd, who shook Olympus, nor blink blue-eyed Athena's eyelashes, let alone the heartbeat or strain of the nerves of their gods hardened by hammers' blows, where worms and mosquitoes roamed freely; but they only managed to form a fleeting trace of lifeless and motionless beauty in the shapeless mass, making an ephemeral impression on the viewers not perceptible for all¹⁹".

In the 1990s, the German Egyptologist Jan Asmann considered "cultural memory" as a theory and formulated its objects of study and assignments as a new scientific area - the "history of memory"²⁰.

Ontological memory is never present, so memory is only related to the process of remembering as a form of existence for the past, and when in the realm of oblivion, memory reflects the past, according to Heidegger's *aletheia*²¹, experience is encoded with the essence of oblivion. Experiential memory finds oblivion, since the measurement of memory is only possible through the existence of oblivion, which is principally substantiated in Alishan's work "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature": I admire and praise thee, O thou oft Atticus, those who bravely fell in the plains of Plataea, in Salamis, in Marathon, in Kerovna, those who fought valiantly everywhere, in every nation, I also mix my voice with the praises of orators and poets, I do not despise the arches of the martyrs of the homeland: I would like to proclaim them with an even more emotional soul, if in the distant world, where their soul rests, the glory of their name reached from this world²².

Ontology is the framework of reality and the useful; hence, when being comes to existence in the realm of memory, it is also preserved within itself. Alishan's ontological memory is within the present-past domain. Memory is also the ontological measure of Alishan's experience, not the past experience, and coincides with being with its irreversible incompleteness and always appearing

¹⁹ Ալիշան 1874, 22:

²⁰ Ассман 2004.

²¹ Хайдеггер 2007, 223.

²² Ալիշան 1874, 20:

but never existing past. Therefore, the provision that the infinity of the world is reasoned is not substantiated metaphysically but opposes to the existential close world, which is simultaneously the presence of the necessary, absolute and infinitely open world: "Like daring youths and skinny enemies, fighting against each other, one by one overthrew Assyria and Babylon, the Chaldea and Mar, Persia and Parthia, Hellene and Rome. Stomped and trampled by the ages' heel and pitiable nations, <...> you Babylon and Nineveh, Palmyra, Persepolis, Thebes, Memphis, Slake and Balbas, you - the refuge of the brave in thousands of languages, why are you so silent and standing so still? O great tombs of mighty nations! O futile works of peoples, abortions of centuries!²³".

Alishan returns the real substantiation of the text as memory and anticipation to the present which is still open as it was for the first time. And when the (sub-temporal) past, as an active time, identifies with memory, the latter is revealed in the subconscious domain, since the past is the unconsciousness of the reality and is always there, in the sup-temporal present; therefore, it is not ahead of the present, but is parallel to it: "Most of the monuments and statues left here by all the present nations, Egypt, Nineveh, and Rome represent wars, victory and defeat, captives and captors, generals and warriors; they, who brutally crushed crowds of people, are considered great by people²⁴". And possibly the past conditions the present, but not as a one-lined or phenomenological perception of time, and not as an agenda determining the consequences of the present, but as a super-temporal horizon of time. Within this context, the present and the past are contemporaneous, as heterogeneous forms of time. Therefore, when we withdraw from the present of the text and mark it as the author's present, i.e., condensed time, we do not think about the ontological contrast of body-soul or its heterogenesis, since in this case, there is no sequence between the past, as a pure form of time, and the present: "All the world, after a thousand years of time, as the Bible states, immersed into the abyss of water to drown and spoil all mankind, because they were made of flesh only, that is, they only cared for the pleasures of the flesh, neglecting the incorporeal and the spiritual²⁵".

²³ Ալիշան 1874, 15-16:

²⁴ Ալիշան 1874, 19:

²⁵ Ալիշան 1874, 16:

However contradictory it is, there are no ideological perceptions of the beginning or the end between the past and the future, because they take root and meaning only in the present and provide the one-line-phenomenological context of time. Suchlike sequence is real, as long as the perception of time exists: "Memories of centuries and nations, like the wreckage of a sunken ship, after floating on the waves for some time, die buried in the sand²⁶". Therefore, when the same refers to the world of facts existing in the text, the present itself is conditioned, established and supposed by an event, is not available in the domains of presence, corporeal, and ethereal, since the possible present-past coexistence provides spatial and depth measurements of images in the text, and any coexistence, in this case is noteworthy, since the past-present relationships are heterogeneous. Within this context, the past ensures the present by all means, verifies it rather than interpreting, since it is not the present articulated in the present, nor even the present in the present. In other words, memory is the ontological measure of experience, and not the memory of the past or experience. And the provision that the present includes and encompasses the past does not liberate the present from the linear-traditional, existential, and phenomenological perceptions of time: "Let us consider that the beautiful Academic inventions, the profound judgments of the philosophers, or the legends of Socrates and Pythagoras, or the laws and sermons of the Chinese, Indian, and Persian sages were widely spread and accepted, as there are numerous places where the laws and doctrines of the latter are preached and accepted, but what has the world gained from them and what is there for the world yet to gain from them?²⁷". And even if the present is the flipped past and it is perceived as a psychological and ontological domain, it is outside of spatial simultaneity: "Are they not the children of the bright East, that after over four thousand years, are still wandering in the darkness of ignorance, following their obsolete sages, the likes of Zarathustra, Manu, Compucius, the godly mixed existence and inexistence of Putta and Brahma²⁸".

Alishan's work "Under the Fir Tree: Reflections in the Bosom of Deserted Nature" and literature in general, as a vast repository of cultural memory, differs from the literary-fictional memory, and as a system of symbols, it

²⁶ Ալիշան 1874, 9:

²⁷ Ալիշան 1874, 24:

²⁸ Ալիշան 1874, 24:

refers to the levels and objectives set in the present research - the phenomena of cultural memory and time. The aforementioned is the perception of cultural memory and consideration of culture as a text, since in another domain, coincide the dialectic of memory and oblivion. The informational and communicative memories concentrate Alishan's cognitive perceptions, which a priori presuppose historical nature by their homogeneous and simultaneous measurement, since literary texts and their modernization do not coincide with the new formula, but are subject to the complex laws of the universal cultural movement.

Conclusion

The memory, as a traditional perception, may be also considered within the context of the modern intertextual and post-structural theories, where the dialogue is lead between literary memory and literature as a perception of collective memory. This is also noteworthy in the domains of inter-regulated theories, not with the wide range of fiction methodology - from rhetoric to neurophysiology and cultural studies. The axis of social memory and survival may be substantiated with the morality and ideology of collective memory, which demark the social groups and those of human imagination, whose interpenetration forms the social range of collective memory; only within this system is it possible to observe the individual memory, if it manages to survive. The aforementioned peculiarity is not only an outcome of the enforcement of scientific potential, but also a precondition of interpenetrating researches, as an inner perception of science, as a reflection of literary interactions, cultural memory, and inter-regulated intercultural dialogue.

Suchlike interpenetrations of memory and literature are considerable progress for the further research on *text-memory-time*, and are one of the most actual themes of western literary studies. Thus, the provision that cultural memory is a creative non-passive repository makes the inferring information available for modern research and studies.

Գրականություն

- Ալիշան Հ. Ղետնդ 1874, Ընդ եղենեալ յամայութեան բացավայրի. խորհրդածութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, Մխիթարեան տպագրութիւն, 71 էջ:
 Аристотель 1978, Сочинения в 4 т-х, т. 2, Вторая аналитика. Книга вторая, Москва, «Мысль», 688 с.

- Ассман Я. 2004, Культурная память: Письмо, память о прошлом и политическая идентичность в высоких культурах древности, Москва, «Языки славянской культуры», 368 с.
- Аристотель 2004, О памяти и припоминании, Вопросы философии, N 7, Москва, с. 161-168.
- Плотин 2004, Об ощущении и памяти, Вопросы философии, N 7, Москва, с. 169-173.
- Лотман Ю.М. 2010, Семиосфера, Москва, СПб., «Искусство-СПб.», 704 с.
- Лотман Ю.М. 1998, Об искусстве. Структура художественного текста. Понятие языка словесного искусства, СПб., «Искусство-СПб.», 285 с.
- Платон 2007, Сочинения: в 4 т-х, изд. Олега Бышко, т. 2, под общей ред. А. Ф. Лосьева и В.Ф. Асмуса, СПб., 626 с.
- Хайдеггер М. 2007, Время и бытие. Статьи и выступления, сост., пер. с нем. и комм. В.В. Бибикина, СПб., «Наука», 447 с.
- Юнг К.Г. 1991, Архетип и символ, Москва, «Ренессанс», 300 с.
- Юнг К.Г. 1999, Личное и сверхличное, или Коллективное бессознательное. Психологические типы, Москва, «Приор», 228 с.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՖԵՆՈՄԵՆՆԵՐԸ ՂԵԿՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԸՆԴ ԵՂԵՆԵԱՒ ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՎԱՅՐԻ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ» ԵՐԿՈՒՄ

Նաիրա Համբարձումյան

Ամփոփում

Մշակութային հիշողությունը կրելու և փոխանցելու համատեքստում ուշագրավ է Հ. Ղևոնդ Ալիշանի «Եղենիին տակ. խորհրդածության մենաոր բնութեան մէջ» երկը, որի մեկնությունը հնարավոր է տեքստի՝ որպես մշակութային երկարաժամկետ հիշողության հիմնավորմամբ: Ալիշանը ժամանակի տիրույթում ստեղծում է հիշողության իր տեսլականը: Նա մշակութային հիշողությունն առնչում է ներկային, որ անվերջ տիեզերական ժամանակն է, նշելով հիշողության գոյաբանական նախապայմանը, քանի որ դրա կրողն է: Այդ ներկայում է բացվում ժամանակը, որը ներառում և պահպանում է անցյալի և ապագայի չափումները: Այս առումով՝ չափազանց ուշագրավ է Հ. Ղևոնդ Ալիշանի «Ընդ եղենեաւ յամայութեան բացավայրի. խորհրդածության» երկը: Հիշողությունը՝ որպես ըմբռնում, դիտարկելի է նաև միջտեքստային և հետկա-

ռուցվածքաբանական տեսությունների համատեքստում: Հիշողության և գրականության այսօրինակ փոխներթափանցումները մեծ առաջընթաց են նաև տեքստ-հիշողություն-ժամանակ հետագա ուսումնասիրությունների համար և արևմուտքի գրականագիտության ամենաարդիական թեմաներից են: Ուստի դրույթը, թե՛ մշակութային հիշողությունը ստեղծագործական ոչ պասիվ պահեստարան է, դրանից բխող տեղեկատվությունը դարձնում է ուշագրավ ժամանակակից հետազոտողների համար:

Բանալի բառեր՝ գոյաբանություն, նեյրոֆիզիոլոգիա, ֆենոմենոլոգիա, էկզիստենցիալիզմ, ենթագիտակցություն, երևակայություն, մշակութային հիշողություն:

ФЕНОМЕНЫ КУЛЬТУРНОЙ ПАМЯТИ И ВРЕМЕНИ В СОЧИНЕНИИ ГЕВОНДА АЛИШАНА «ПОД ЕЛЬЮ. РАЗМЫШЛЕНИЯ НА ЛОНЕ БЕЗЛЮДНОЙ ПРИРОДЫ»

Наира Амбарцумян

Резюме

В контексте культурной памяти и ее передачи заслуживает внимания сочинение Гевонда Алишана «Под елью. Размышления на лоне безлюдной природы», которое можно толковать на основе рассмотрения текста как протяженной во времени культурной памяти. В пространстве времени Алишан создает свое видение (образ) памяти. Культурную память Алишан связывает с настоящим, являющим собой нескончаемое космическое время. При этом он отмечает онтологическое предусловие памяти, поскольку является ее носителем. В этом настоящем раскрывается время, которое охватывает и аккумулирует в себе пространственно-временные измерения прошлого и будущего. В данном сочинении Гевонда Алишана память как феномен рассматривается также в контексте интертекстуальных и постструктуралистских теорий. Подобные взаимопроникновения памяти играют весьма конструктивную роль в плане дальнейших исследований триады время-текст-память. Посему положение о том, что культурная память является не пассивным творческим резервом, превращает получаемую из этого информацию в «рабочий» материал для современных исследователей.

Ключевые слова – онтология, нейрофизиология, феноменология, экзистенциализм, подсознание, воображение, культурная память.

**THE PHENOMENA OF CULTURAL MEMORY AND TIME IN THE ESSAY OF
GHEVOND ALISHAN "UNDER THE FIR TREE. REFLECTIONS IN THE
BOSOM OF DESERTED NATURE"**

Naira Hambardzumyan

Abstract

In the context of cultural memory and its transfer, the essay of Ghevond Alishan "Under the fir tree. Reflections in the bosom of a deserted nature" can be interpreted on the basis of considering the text as a cultural memory extended in time. In the space o time, Alishan creates his vision (image) of memory. Alishan connects cultural memory with the present, which is an endless cosmic time. Meantime, he notes the ontological precondition of memory, since it is its carrier. In that present, the time, which encompasses and accumulates the space-time dimensions of the past and future, is revealed. In this particular essay (of Ghevond Alishan), memory as a phenomenon is also considered in the context of intertextual and post-structuralism theories. Such interpenetration of memory plays a very constructive role in terms of further research on the time-text-memory triad. Therefore, the proposition that cultural memory is a non-passive creative reserve turns the information obtained from this into a "working" material for the modern researchers.

Key words – ontology, neurophysiology, phenomenology, existentialism, subconsciousness, imagination, cultural memory.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՅՍԻ ԵՎ ՍՏՎԵՐԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հենրիկ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ henrikhovhannisyan1936@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 14.06.2021, գրախոսվել է 22.06.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-180

Ներածություն

Տեսանելի իրականությունն իր բոլոր գույներով լույսի ու ստվերի մեջ է, գիշերվա ու ցերեկվա անցումներում, և դրան են ենթարկված մեր հայեցումները: Մեզ ուղղորդում են լույսն ու մութը, ցերեկն ու գիշերը, սպասում ենք լուսաբացին ու հնազանդվում գիշերվան, մեր սպասելիքը վաղվա օրվա ստվերում: Մարդուս այս վիճակը սիմվոլացված է արվեստում ու գրականության մեջ, և սիմվոլների թիկունքում իրականությունից եկող հույզերն են: Խավարը դատարկ է, դատարկությամբ իսկ ծանր և լույս է խնդրում, իսկ լույսը՝ ստվեր: Եթե մթությունը երկյուղի ու տխրության զգացում է արթնացնում, ապա սև գույնը ներգործում է տարբեր կերպ, նայած ինչ տեղում է և ինչ հարաբերության մեջ: Սևը մթության մասնիկն է կամ նշանը, այլ դեպքում կրում է ամրության, ծանրության, ուժի, բռնության կամ վեհության խորհուրդը¹: Դրան հակառակ՝ լույսը ներշնչում է թեթևություն, զվարթություն ու հույս, իսկ սպիտակ թուղթը՝ սպասում, «տանջալից չգոյություն»՝ գրի և գծի բացակայությամբ²: Եթե լամպի լույսի տակ ստվեր է ընկնում ու պատկեր է ուրվագծվում, ապա լույսի ու ստվերի բաժանումը գծային է, և գիծը՝ պատկերի հենարանը: Այստեղից էլ՝ պատկերն ամրակայելու լուսազգացական եղանակը, որ կոչվել է լուսանկարչություն: Սա հայեցման շարունակությունն է ու փոխակերպումը, իրականության միջնորդավորված դիտում: Որքանո՞վ է այդ դիտումը գեղագիտական և որքանո՞վ մոտ ար-

¹ Бёрк 1979, 109.

² Башляр 2004, 182.

վեստի: Այս հարցը ծագել է լուսանկարչության գյուտից (1837 թ.) ու առաջին ցուցադրանքից (Լոնդոն, 1851 թ.) սկսած: Համեմատական է ընտրվել գրավյուրը՝ որպես անգույն գծապլաստիկա, և պատասխանը տվել է Հիպոլիտ Տենը: «Լուսանկարչությունն այն արվեստն է, որ հարթ ֆոնի վրա, գծերով ու երանգներով (լուսաստվերային – Հ.Հ.) վերարտադրում է առարկայի շրջագիծն ու մոդելավորումը, բայց նրա մտքով էլ չի անցնում նկարչության հետ համեմատության մեջ մտնելը»³: Այնուամենայնիվ, դա տեղի է ունեցել, և համեմատության խնդիրն առկա է:

Գիծը՝ որպես պատկերի հենարան

Եվրոպական ուշմիջնադարյան գրանկարներում, որոնք, ըստ էության, տեքստային հավելումներ են, գծապլաստիկան հուշում է գունային պատկերացումներ: Սևն ու սպիտակն այստեղ դատարկ չեն. գործում է գույնի գաղափարը հիշողությամբ ու որոնումով: Դա կառույցի ներքին բնական կարգավորումն է՝ «ճանապարհորդեալ հանդերձ երևակայութեամբ»⁴: Ճանապարհը, նկար լինի, քանդակ, թե կառուցվող շենք, գծից է սկսվում: Եթե «գեղագիտական ձևը գաղտնիք է ու գաղտնիք էլ մնալու է»⁵, ապա գաղտնիքի մի ծայրն այստեղ է, և «միտքը, – ինչպես ասել է Դելակրուան, – կհայտնվի մատիտի ծայրին»⁶: Ձևն այստեղ երբեմն պատկերի անավարտության մեջ է: Միջնադարյան գծանկարչի համար դա կա՛մ միջոցների սահմանափակում է, կա՛մ ձևի պայման: Նոր ժամանակներում դա գիտակցված է որպես ձևի պայման՝ ավարտվածություն «անավարտությամբ» (նկ. 1)⁷: Գիծն ուժգնանում է, երբ սևն առանձնանալով ծանրանում է ու հակադրվում սպիտակին: Սպիտակը հնչեղություն է ձեռք բերում գծի արտահայտչության շնորհիվ ու սևի ծանրացող ամրությամբ:

Գիծը խորն է թաքնվում վրձնի ու գույնի տակ և մնում է պատկերի հենարանը, նաև նկարչի ձեռքի հենարանը: Գիծը կարող է լինել ամուր ու կենդանի, ճկուն ու բեկբեկ, նայած ում ձեռքին է վրձինը կամ մատիտը: Հայտնի է Կարլ Բրյուլլովի «Պոմպեյի վերջին օրը» կտավը՝ թանգարանա-

³ Տեն 1936, 24:

⁴ Դալիթ Անյադթ 1960, 102:

⁵ Гартман 1958, 334.

⁶ Դելակրուա 2006, 182:

⁷ Սերվանտես 1934, 29:

յին լույսի տակ, կլասիցիստական ու բեմական մոնումենտալիզմով: Նկարիչը հանգիստ ու հավասարակշռորեն է իրականացրել իր երևակայած պատկերը, և գիծը նրա վրձնի տակ հանգիստ է, ծանր ու անշարժ: Բայց ինչպե՞ս է ապրվել թեման հղացման պահին, գրչանկար էսքիզում: Պարզ երևում է, որ ներշնչումով ու արագ է արված, գիծը փոթորկալից է, գալարուն հատումներով և թուփեղակա ցնցումի պատկեր է տալիս (նկ. 2)⁸: Զուտ պատմական տեղեկությունն ապրվել ու դրսևորվել է ձեռքի կրքոտ շարժումով: Իր վերացականությամբ իսկ գծապլաստիկան կարող է դրամատիկական հույզեր արթնացնել, անառարկա վիճակով էլ իմաստ արտահայտել: Ահա Վասիլի Կանդինսկու 1914 թվին արված գրավյուրներից մեկը (նկ. 3)⁹: Ցնցում ու դրոշմ, գիծը կտրատված է ծանր, սև հարվածներով: Թվում է՝ հասկանալի է, թե ինչ օր և ինչ պահի է ծնվել այս վերացական (իսկապե՞ս վերացական) պատկերը մետաղահատ գրչի լարված շփումների ու սեղմումների տակ: Գիծն այստեղ ուժ ունի, և դրա արտահայտությունը մի կողմից սեղմումն է, մյուս կողմից՝ թեթևությունն ու շարժման պոտենցիալը: Գիծը կարծես չեզոքանում է, երբ պատկերն այլևս ձեռքի գործ չէ, այլ տեխնիկապես միջնորդված դիտում՝ օպտիկական արտացոլանք, ասել է՝ այլ ձևաստեղծում: Գիծն այստեղ չի գծվում, այլ դիտվում է որպես կազմակերպիչ տարր. առարկաները սահմանավորվում են գծայնությամբ, լույսի և ստվերի հարաբերություններում: Սա լուսանկարչությունն է՝ միջնորդված հայեցում, գեղեցիկը փնտրող ու դրանով էլ արվեստին աղերսվող: Ի՞նչ է այդ և ի՞նչ հարաբերության մեջ է կյանքի ու արվեստի հետ:

«Կյանքում գոյանում են դատարկություններ, որ չեն լցվում արվեստով», - գրել է ռուս վտարանդի մտավորական Վլադիմիր Վելյուեն ու եզրակացրել, որ դրանք «լցվում են լուսանկարչությամբ»¹⁰: Այս խոսքն իր գեղագիտական ելակետն ունի, այն է՝ արվեստը կյանքի հայելի: Հնացած խոսք է: Եթե հայելու կոտրվելով գծերը խառնվել են, ո՞ր է ընկել արտացոլանքը: Ըստ Վելյուեի, գեղարվեստական ձևերի շրջափոխումները հանգեցրել են բովանդակության կորստին: Արտացոլանքը փոխաձևության է տրվել կամ վերացել, ու վայ ...«նկարիչը տարրալուծում է ոչ թե աշխարհը, այլ նկարը ...վերածում պարզ մակերեսների հարաբերության»¹¹: Սա, ըստ

⁸ Гнедич III 2004, 384.

⁹ Кандинский 2018, 154.

¹⁰ Вейдле 1996, 104.

¹¹ Вейдле 1996, 103, 106.

Վեյդլեի, արվեստի հոգեվարքն է, և լուսանկարչությունն էլ, որպես իրականության արտացոլում, փրկություն չէ, գալիս է սպանելու մահամերձին, բռնելու նրա տեղը: Բայց ի՞նչն ինչի՞ց էր դատարկվել: Սա գեղագիտության հարց չէ, բայց այդպես է խնդրին մոտենում հայելային արտացոլանք փնտրողը: Այն, ինչին ասվում է «դատարկություն», համաշխարհային առաջին պատերազմով սկսված հոգևոր ճգնաժամն էր կամ, ինչպես թվում էր, «ոգու մարմնավորման կորուստը»¹²: Վեյդլեն կրողն էր ռուս մտավորականի ողբերգության, վտարանդի հայրենիքից ու հայրենի մշակույթից, Արևմուտքին հոգեպես օտար: Նրան օտար են, մի կողմից, նորագույն ուղղություններն արվեստում (ներառյալ Ստրավինսկու երաժշտությունն ու Պիկասոյի գրավյուրները), մյուս կողմից, իրականության պատճենումը լուսանկարչության ազդեցությամբ, որ «խեղաթյուրում է աշխարհը»¹³: Վեյդլեի ժխտողականությունը տագնապալից է ու ծայրահեղ, իր ծայրահեղությամբ էլ ուշագրավ՝ որպես նեգատիվ տեսություն: Սա նման է այն մաքուր սևանկարին, որի միջով անցնող վայրկենական լույսն ի հայտ է բերում պոզիտիվ պատկերը: Խնդիրն այն է, թե որքանով է այդ պատկերն արվեստին մոտ, և որքանով է ճիշտ մեր վերաբերմունքն այս նեգատիվ տեսության հանդեպ:

Հայեցման և արտացոլման պայմանականացումը

Հասկացությանը տրված տարբեր ու հակասական սահմանումներից ընտրում ենք նախնականն ու ամենապարզը՝ հայեցումը՝ որպես իրականության տեսողական ընկալում, ինչպես ընթացք, այնպես էլ արդյունք: Հայեցումը հանգում է դիտման, երբ մեր հայացքն ականա ընտրում է էական ներկայացող հատված կամ որևէ ուշագրավ կետ տարածության մեջ: Նկատենք, որ հայեցումը ենթադրում է պասսիվ՝ անմասնակից և անվերաբերմունք վիճակ, իսկ դիտումը՝ որոնում և նկատառում, երբ օբյեկտը դուրս է բերվում իր միջավայրից՝ «քաղվում ու մեկուսացվում»¹⁴: Սա նշանակում է, որ դիտողը ենթագիտակցորեն իր պայմանն է թելադրում դիտվող առարկային: Դա նրա ուշադրության շրջանակն է, և կարելի է ասել՝ զգացական ձևատեղծման առաջին աստիճանը, նայած ով ինչ կետի է սևեղվում, ինչն է ընկալում որպես էական, և ինչպես է կարգավորում տեսա-

¹² Гильдебранд 1998, 77.

¹³ Вейдле 1996, 104.

¹⁴ Гартман 1958, 84.

նելին: Այստեղ է կոմպոզիցիայի գաղտնիքը զուտ հոգեբանական հիմքի վրա, և այստեղից են ծագում «տարածության պոետիկա», «տարածություն մեզանում» և նման հասկացությունները¹⁵: Տեսանելի պատկերի ամբողջացումը կամ սուբյեկտի յուրացումը, ինչպես նկատում ենք, ինքնին պայմանականացվող տարածության մեջ է: Դա կարող է սահմանավորվել շրջանագծով, քառակուսով կամ ուղղանկյունով: Խնդիրն արդեն պարզ է, և մոտենում ենք փորձառական գեղագիտության (էքսպերիմենտալ էսթետիկա) սահմաններին: Մեր դիտումն իրենով իսկ արդեն արտացոլում է, և արտացոլանքը կարող ենք քաղել՝ նայելով լուսամուտի շրջանակին: Շրջանակված պատկերն առանձնացված է իր միջավայրից ու հարաբերություններից, բայց որքանով է գեղագիտական: Պատասխանը սուբյեկտիվ է, և խնդիր չկա դրված: Բայց ահա վերցնում ենք նկարի ուղղանկյուն շրջանակը և իրականությունից քաղվող հատվածը տեղափոխում անտեղ, համաձայն մեր զգացականության: Ձևաստեղծման հաջորդ քայլը մասերի հարաբերությունը փոխելն է: Նույն պատկերը դիտում ենք հայելու ուղղանկյուն շրջանակում, և մեր ծանոթ աշխարհը դառնում է հեքիաթ: Շրջված է ամբողջ պատկերը, փոխված է կոմպոզիցիան, ու թարմ է, անծանոթ է ծանոթ պատկերը: Չլինի հայելու շրջանակը, լինի ջրափոս կամ լճակի հարթ մակերեսը, որ անդրադարձնում է, հեքիաթի է վերածում բնությունը.

Հող աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հող չեն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հող,
Երբ խաղաղ եք դու և օդ¹⁶:

Բնության պատկերը փոխատեղված է ու փոխաձևված, դուրս է բերված իր օրգանականությունից և հարաբերությունների շղթայից, շրջանակված է որպես նկարային ու բանաստեղծական ձև: Արդ՝ ինչպե՞ս է անդրադառնում մեր տեսածը մեր զգացողություններում, կամ ինչպե՞ս ենք մեզ տեսնում հայելում: Ճի՞շտ ենք տեսնում, երբ ականա սկսում ենք ներկայանալ, տեղավորվել շրջանակում: Այլ է, եթե պատահաբար ենք հանդիպում մեր հայելային արտացոլմանը: Մենք ենք, ու մենք չենք, մեր պատկերը շրջված է աջից ձախ՝ հակառակ է մեր ընթերցման ուղղությանը, ընկած

¹⁵ Башляр 2004, 162.

¹⁶ Դուրյան 1932, 42:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6

է այլ կարգավորման մեջ, գրեթե շփոթեցնող: Որտե՞ղ է ճշմարտությունն իր ճշգրտությամբ, եթե շփոթության է տրված մեր հայացքը: Հայելին որքանո՞վ է անկեղծ: Տարբեր է լուսանկարը, բայց սա էլ շատ անկեղծ չէ: Լուսանկարում, նաև հեռուստատեսկրանին, պատկերը չի շրջվում, բայց գործում են պայմանականություն ստեղծող այլ հանգամանքներ՝ սկսած տարածական խաբկանքից, լույսի ու ստվերի հարաբերությունից և շրջանակի թաքնված, արտաերկրաշափական կառուցվածքից:

Լուսանկարչությունը տեսողական ձևաստեղծման հաջորդ աստիճանն է, որ իր երկակի միջնորդավորումով (դիտում և հայտածում) մոտեցնում է բուն խնդրին և արտացոլման գեղագիտությանը: «Լուսազգայուն թանթը (пластинка), - գրում է Վեյդլեն, - տալիս է տեսանելի աշխարհի երկչափ ու գունազուրկ, **ամբողջապես պայմանական պատկերը**»¹⁷ (ընդգծումն իմն է - Հ.Հ.): Պայմանականը, այն էլ **ամբողջապես** (вполне), շատ բան է խոստանում: Դա նշանակում է ոչ թե պարզ արտացոլում, այլ անդրադարձ և ձևի փոխարկում (տրանսֆորմացիա), անկախ նրանից, թե որքանով է այդ փոխարկման արդյունքը գեղագիտական: Այստեղ պայմանականության դրսևորումներ են դիտվում երկչափությունն ու գունազրկությունը: Մղվում ենք ամենապարզունակ հարցին. լա՞վ է, թե՞ վատ: Պատասխանը գտնում ենք անցյալ դարի 20-ական թվականների դեռ անկատար լուսանկարչությանը վերաբերող դատողություններում: «Լուսանկարչության «թերությունը» նրա արժանիքն է՝ էսթետիկական որակը»¹⁸, գրել է Յուրի Տինյանովը Վեյդլեից տասնմեկ տարի առաջ (1926 թ.): «Լուսանկարչության նախադրյալ սկզբունքը (установка), - շարունակում է Տինյանովը, - նմանողականությունն է: Նմանողականությունը վիրավորական է. մենք վիրավորվում ենք լուսանկարչության ծայրահեղ նմանողականությունից, ուստի լուսանկարչությունը ծածուկ (втайне) փոխաձևում է նյութը: Բայց փոխաձևումն այստեղ ենթակա է իր նախադրյալին, որ նմանողականությունն է: Լուսանկարիչն ինչպես էլ փոխաձևի բնորդի տեսքը՝ դիրքով, լուսավորությամբ և այլն, այդ ամենն ընդունվում է ընդհանուր լուռ համաձայնությամբ, եթե դիմանկարը համախոս է բնորդին: Հիմնական նախադրյալի՝ նմանողության տեսակետից փոխաձևումը «թերություն է, նրա գեղագիտական դերը որպես թե ապօրինի է»¹⁹: Հարցը, ըստ Տինյա-

¹⁷ Вейдле 1996, 105.

¹⁸ Тынянов 1977, 335.

¹⁹ Тынянов 1977, 335.

նովի (դա ժամանակի երկդիմի վերաբերմունքն է), հակասական է. արտացոլում և նմանողություն՝, թե՛ գեղարվեստական ձևաստեղծում:

Այս է, որ տագնապի է մատնել ռուսական ռեալիզմով նախապաշարված արվեստագետ Վեյդլեին, թե լույսի ու ստվերի արվեստն արդյոք չի՞ գալիս ասպարեզից հանելու արվեստագետ նկարիչներին: Նա այն մտքին է, թե լուսանկարչությունը որքան շատ է դիմում գեղարվեստական միջոցների, այնքան վտանգավոր է՝ շփոթություն է ստեղծում, տակնուվրա է անում մարդու էթնոտիկական դատողունակությունը: «Տեղի է ունեցել **չափազանց վտանգավոր մերձեցում** (весьма опасное сближение) լուսանկարչության և արվեստի միջև» - գրում է նա²⁰: Դա արտացոլման և արտահայտության հարաբերությունն է, երբ լուսանկարիչները, իրենց դիտումը կարգավորելով, դիմել են լուսաստվերային խաղերի, և նկարիչներն էլ ազատագրվել են վավերագրողի ականա պարտավորությունից: Վեյդլեի և Տինյանովի ժամանակ (20-30-ական թվականներ) կարծես ուշադրություն չի դարձվել ընդունված տեսակետին, որ «նրա (լուսանկարչության – Հ.Հ.) մտքից էլ չի անցնում նկարչության հետ համեմատության մեջ մտնելը»²¹: Դա անցնելու էր «արվեստի հոգեվարքը» ողբացողի մտքից, որի համար արվեստի ձևային բովանդակության բացարձակացումը մերժելի էր, հավասար էր բովանդակագրության, իսկ իրականության պատճենումը՝ մահվան: Վեյդլեն իր «հոգեվարքով» անուղղակիորեն ծայնակցում էր իր հայրենիքում «ֆորմալ դպրոցի» դեմ սկսված մերժողական, գաղափարաձև քննադատությանը: Հետևաբար՝ ա՛յս կողմ, թե՛ այն, եթե «լուսանկարչությունն ու կինեմատոգրաֆը կորցնում են բոլոր կապերն արվեստի հետ»²², իսկ մյուս կողմում, գրում է Վեյդլեն, լուսանկարչի տնօրինությանն են ենթակա «արվեստի բոլոր հնարներն ու միջոցները: Պայմանականություններին, - գրում է Վեյդլեն, - (իսկ առանց պայմանականության չկա արվեստ), որոնք նրան ընձեռում է ձեռքի սարքը, ավելանում են իր ձեռքբերումները...»²³:

Պայմանականություններն անխուսափելի են մեր հայեցումներում, առավել ևս տեսանելի իրականության դիտումներում, թեկուզ ոչ նպատակամետ: Դիտվող օբյեկտի առանձնացումն իր միջավայրից արդեն պայ-

²⁰ Вейдле 1996, 106.

²¹ Տեն 1936, 24:

²² Вейдле 1996, 105.

²³ Вейдле 1996, 105.

մանականություն է ու մոտ բովանդակային միջամտության: Մնում է տեսնել այդ միջամտության գեղարվեստական արդարացումը: Փնտրելով արվեստի հետ ունեցած կապը, Վեյդլեն դիմում է գծապլաստիկային և կանգ առնում XIX դարավերջի գրավյուրային արվեստի առջև. ահա գծի ու լույսի, սևի ու սպիտակի արտահայտչականությունը: «Հնում, - գրում է նա, - գրավյուրը եղել է ամենից առաջ «վավերագրություն» ...և ծառայել է այն նպատակներին, ինչ լուսանկարչությունը ներկայումս ...տարբերությունը ոչ այնքան ելակետի ու նպատակակետի մեջ է, որքան այն ճանապարհի, որին նրանք հետևում են. մեկն անցնում է ամբողջապես **մարդկային հոգու միջով**, մյուսը՝ **մարդու կողմից ղեկավարվող մեխանիզմով**»²⁴ (ընդգծումներն իմն են - Հ.Հ.): Ինչպիսի՞ տարբերություն է սա: Ձեռքի ներզգացական շարժում՝ սահունթաց սեղմումով գունազուրկ մետաղի մակերեսին: Սա գրավյուրն է, արդյունքում համեմատելի գրաֆիկայի հետ, որտեղ գրիչը կամ մատիտն են թղթի մակերեսին: Սա կարծես առարկայամետ մոտեցումն է: Իսկ ինչպե՞ս է դիտվում ու կարգավորվում պատկերը, եթե հարցնենք նրան, որի ձեռքին ասեղը, գրիչը կամ մատիտը չէ, այլ սարքը: Պատասխանը կարծես պատահաբար արտասանված մի խոսքում է.

- Իմ աչքն իմ ձեռքին է, - ասում է լուսանկարչուհի Ազատուհի Մնացականյանը²⁵:

Այս թեթև խոսքը լուրջ մեկնություն է խնդրում: Այստեղ է լուսանկարչության գեղագիտական արդարացումը: Ամեն ինչ սկսվում է անկեղծ հայեցումից. ինչպես ենք տեսնում, ինչպես ենք գտնում տեսանելին՝ իր լույսով և ինչ անկյան տակ: Օպտիկական սարքն ուղղվում, հարմարեցվում է օբյեկտին և կարգավորում այն, ձևաստեղծում պատկերը գծային և լուսաստվերային դիտվող ու մտածվող հարաբերություններով: Դիտելով Անդրանիկ Քոչարի մի շարք լուսանկարներ՝ Վարդան Աճեմյանն ասել է. «Քո արվեստն ինձ մի անգամ էլ համոզեց, որ ոչ նյութը, ոչ էլ միջոցը էական չեն արվեստի համար, այլ էական են դիտողի, կերտողի, ստեղծողի հույզը, միտքը, աչքը...»²⁶: Իսկապես, միտք ու աչք էր պետք տեսնելու համար գիշերվա մթնում լուսնի կիսատ լույսն ու շնչող սև գույնը, որ հանգստություն է տալիս ու խոհի մղում, մի վիճակ, որ առնչություն չունի արդեն ար-

²⁴ Вейдле 1996, 104.

²⁵ Hovhannisyan2019, 148.

²⁶ Առաքելյան 2018, 124:

տացուվող նյութի հետ (Գոմեշներ, նկ. 4)²⁷: Անաստղ գիշեր է, սևի թագավորություն, և իշխում է լույսի գաղափարը: Պատկերն իմաստավորված է լույսով, որ գուցե արվեստական է, կամ լուսնի լույսով են դիտված գետակի ափին մրափող կենդանիները: Լույսը մեղմ է, գետակի ափքներում թույլ կայծկլտող, զովություն է, հանգստություն ու կշիռ. երկիրը խաղաղ շնչում է: Որտե՞ղ է նյութը, և որտե՞ղ է ձևը: Պատկերը դիտողին խոհականության է մղում նյութից ազատ: Այստեղ ներգործում է ոչ թե օբյեկտն իր նյութականությամբ, այլ դիտումը՝ որպես ձևաստեղծում: Բոլոր միջոցներն այստեղ ենթակա են դիտողի հայացքին ու ձեռքի ներզգացական շարժմանը: Միջոցները սահմանափակ են, և դա ոչինչ չի նշանակում. ձևն այդտեղ չէ, այլ դիտողի ներքին տեսողության մեջ, Արիստոտելի ասած **էստեթիկան**: Տարբերությունը գրավյուրից ու գրաֆիկայից զուտ տեխնոլոգիական է, ոչ գեղագիտական: Այս արվեստը մերժողին գրգռել է ոչ միայն ստեղծման արտաէսթետիկական եղանակը, այլև, որ առնվազն տարօրինակ է, պայմանական հնարների միտումն առ արվեստ: Օրինակ. ինչո՞ւ է առարկան դիտվում տարբեր՝ սուբյեկտիվորեն ընտրվող դիրքերից, ինչո՞ւ է փնտրվում տրամադրող կետը կամ հատկանիշը լույսի և ստվերի հարաբերությամբ, երբեմն էլ ոչ լույսի ուղղությամբ, այլ «լույսի դիմաց»²⁸: Այս և նման մոտեցումները Վեյդլեն համարում է «պատկերի կամայական մշակում»²⁹: Թեկուզ և այդպես, եթե դա գեղարվեստորեն հետաքրքիր է և այնքանով կամայական, որքանով կամայական կարելի է համարել մարդու ակամա հայացքը տեսանելի աշխարհի հանդեպ, ցերեկը, թե երեկոյան մթնում, հաճախ լույսի դիմաց, երբ առարկաներն այլ կերպ են երևում, այլ իմաստ ձեռք բերում: Սա Վեյդլեի նեգատիվ դրույթներից ամենաուշագրավն է ու միտք է տալիս:

Լույսի ուղղությամբ և լույսի դիմաց

Ի՞նչ իմաստ է հաղորդում լույսը նկարի ներսում ու դրսից: Անսովոր է թվում այստեղ Հիպոլիտ Տենի տպավորությունը Ռեմբրանտի նկարներից: «Նկարի գլխավոր հետաքրքրությունը, - գրում է նա, - մարող, ցրված, դողդոջուն, ստվերի ներխուժման դեմ անընդհատ նահանջող լույսի ողբեր-

²⁷ Առաքելյան 2018, 95:

²⁸ Вейдле 1996, 105.

²⁹ Вейдле 1996, 106.

գոյությունն է»³⁰: Սա փորձված աչքի դիտումն է ու այնքանով հետաքրքիր, որքանով լույսի և ստվերի հարաբերությունն իրականության մեջ կամ արվեստում, առավելապես բեմում, որ հարուցում է դրամատիկորեն հակասական զգացմունքներ: Լույսի դիմաց կանգնելն արդեն դրամատիկական վիճակ է դիտողի համար, և նայած ինչն ինչպես է տեսնվում: Այսպես՝ աղավիններ են ճախրում լուսավոր երկնքում, և լուսանկարիչ Անդրանիկ Քոչարն այս պատկերն անվանել է «Սպիտակ հրավառություն» (նկ.5)³¹: Լույսի դիմաց աղավինները սև են երևում, սպիտակը հետին պլանում է, աղավինների երամը թռչում է դեպի շրջանակի վերին ծախ անկյունը, և սա սևի նահա՞նջն է սպիտակի դիմաց: Նկարը դրամատիզմ է թելադրում ու հակասական հույզեր, մի կողմից, թեթևություն, երբ երկնքի սպիտակ ֆոնին ենք նայում, մյուս կողմից, թախիժ են արթնացնում գետնին տարածված ստվերները, որ անշարժ են: Հեղինակը լույսի ճախրանք է տեսել իրականության մեջ, սևանկարում ստացել այդ, բայց երկրորդ հայտածումը բերել է այն, ինչ հաղորդել է միջնորդ ոսպնյակը: Սա դիտողի ու միջնորդի հարաբերությունն է, որ թելադրում է պայմանականացման յուրահատուկ հնարներ: Սա նաև լույսի որոնումն է բնության մեջ ու սենյակային պայմաններում, առանց հեռանալու լույսի բնական աղբյուրներից: Սենյակային պայմաններում Անդրանիկ Քոչարը միշտ ընտրել է պատուհանից ընկնող լույսը, տաղավարային արվեստականությունից ու կեղծ թատերանությունից հեռու, անկեղծության սրբազան սահմանում:

Հետևելով արվեստագետ լուսանկարչի «կամայականությանը»՝ կանգ ենք առնում լուսաստվերային անսպասելիությունների՝, թե՛ օրինաչափությունների առջև. լույսը նահանջո՞ւմ է, թե՛ իշխում, անկախ նրանից՝ որքան է նրա տեղը շրջանակում: Սևը վեհի ու ողբերգականի ակնարկն է, եթե հակադրությունն սպիտակի հանդեպ սրված է, առավել ևս գծված ու ամուր: Թվում է՝ նման խնդիր է դրել Քոչարը «Արմին Վեգներ. Եղեռնի հուշարձանում» լուսանկարում: Սևը զբաղեցնում է ամբողջ շրջանակը, ծանրացնում ներքևի աջ անյունը, սպիտակը «հալածված» է, նայում է դրսից, թեթև անդրադարձ ունի դեպի վերին աջ անկյունը, և այստեղ չէ նրա խորհուրդը: Դա ներքևում ծնրադիր խոնհարված մարդն է լույսի փոքր շրջանակի առջև ու փոքր-ինչ հեռու վառ առկայծող, փոքր ծաղկեփունջը

³⁰ Տե՛ս 1936, 482:

³¹ Առաքելյան 2018, 86:

կրակի նման³² (նկ. 6): Լույսի տեղը շրջանակում փոքր է, բայց լույսն է իշխողը կոմպոզիցիոն կառուցվածքում: Պատկերը խորհրդածության է մղում, ու կարևոր չէ՝ դիտողը ծանոթ է թեմային. թե՞ ոչ: Թեմատիկ նյութն ու մեր իմացությունը, առավել ևս դրա քննությունը, արվեստագիտությունից դուրս են:

Նյութի և ձևի հարաբերության մեջ թեմատիկ նյութն իր դերն ունի (այդպես է գրականության մեջ և թատրոնում), ձևային տարրերից մեկն է և տեսողական արվեստում որոշիչ չէ: Առարկայական լինի, թե վերացական «շրջադարձն առ հոգևոր»³³, միևնույն է: Արվեստը, ինչպես մաթեմատիկական, «փոխում է մեր հասկացական գործունեությունը»³⁴, հեռացնում է իրականության առարկայական ընկալումից: Արվեստագետ լուսանկարիչն ինչ կողմ էլ ուղղի իր օպտիկական սարքը, ինչ զգացումով էլ հաշտեցնի հայեցականն ու հասկացականը, զբաղված է ձևաստեղծումով: Ինչ է այդ, եթե ոչ գեղարվեստական նպատակի բացահայտում, ոչ այնքան «ինչ», որքան «ինչպես»: Օրինակ. նկարում դիտվող կենդանին՝ դաշտում արածող ձի, փողոցում թափառող շուն և այլն, իրականության տարբեր սիմվոլացումներ են, դրսևորումներն «ինչպես»-ի: Սարյանի բնանկարներում քայլող գոմեշը ոչ թե երկրի սիմվոլն է (ինչպես թվացել է ոմանց), այլ ձևի կենդանության տարր: Դժվար է իմանալ՝ թեմատիկ ակնա՞րկը, թե՞ զգացականությունն է փոխանցվել հետագա ու մեր ժամանակակից նկարիչներին: Պատասխանը, կարծում ենք, պարզ է. ձևը չեզոքացնում է նյութականության գաղափարը, դիտվող պատկերը հանգում է սիմվոլի, և այստեղ է իրականության գեղարվեստական յուրացման կարևոր պահերից թերևս ամենաէականը: Մարդս հակված է սիմվոլացնելու, անգամ խորհրդապաշտության ենթարկելու տեսանելի ու անտեսանելի աշխարհը, նաև իր անձը լուսանկարային արտացոլանքում և ինքնօտարման ականա մղումներում:

Առանց Դիոգենեսի լապտերի

Օրը ցերեկով, անցուդարձի ու ամբոխի մեջ, ձեռքիդ ինչ լապտեր էլ լինի, չես տեսնելու մարդուն: Նա մասն է ամբողջության ու եթե հարմար է

³² Առաքելյան 2018, 117: Լուսանկարչի այս գործը 1967 թվականին Հոլանդիայի ցուցահանդեսում, մի շարք գործերի հետ միասին, արժանացել է մրցանակի:

³³ Кандинский 2018, 101.

³⁴ Витгенштейн 1994, 198.

զգում այդպես, չգիտե, որ զրկված է իր ներքին տարածությունից: Ընդհանուր լուսանկարներում նրա հայացքն անորոշ է, չի խոսում, ուստի փնտրում ենք նրան իր մենակության մեջ: Դա որքանո՞վ է հնարավոր: Դիմանկարիչն այդ է փնտրում, անկախ նրանից՝ վրձին է ձեռքին, թե օպտիկական սարք: Եթե նա խոսում է դիմացինի աչքերին նայելով՝ փնտրում է կենդանի մի պահ և ո՞ւմ կամ ի՞նչ է փնտրում պահի ու իր որոշած պայմանական տարածության մեջ:

- Դուք օբյեկտիվացնո՞ւմ եք բնորդի անձը, - հարցնում եմ, ու դժվար է դա կռահել լուսանկարչուհի Ազատուհու հայացքից: Նա փնտրում է քե՞զ, թե՞ ինչ-որ կերպարային հատկանիշ, որ քո ներկայությունն է հուշում կամ իր սուբյեկտիվ տպավորությունն առանց Դիոգենեսի լապտերի:

- Դուք փնտրում եք մարդուն իր տեղում, - ասում եմ, - իր ներքին բեռով ու գաղտնիքով: Ի՞նչ լույս է արձակում ձեր լապտերը:

- Ես տեսնում եմ լույսը նկարում և իրականության մեջ, ոչ թե տաղավարում³⁵:

Կարծես հիմնովին բացառվում է արվեստականությունը, բայց խոսքը նաև օպտիկական տեսողությանն է վերաբերում ու լույսի ճառագայթակալմանը (ֆիլտրացիա), որ թերևս համեմատելի է գունային որոնումների հետ: Սա պայմանական տարածության կենդանացումն է՝ տեսողական արվեստի «գաղտնիքներից» մեկը քառակուսու թաքնված կառուցվածքում, Ռուդոլֆ Արնհայմի ասած «տարածության մոբիլիզացիան»³⁶:

Հետևում ենք արվեստագետ լուսանկարիչների գործերին, հիմնականում դիմանկարներին, առավելապես թատերական դիմանկարներին, ու կանգ առնում տաղավարային լույսի առջև, որտեղ իրենց արտիստական կերպարն են «հավերժացրել» եվրոպական բեմի վարպետները: Այս մասին զսպված հեգնանքով գրել է Ռուլան Բարտը՝ նկատի ունենալով փարիզյան մի քանի թատերական լուսանկարչատներ, ապա ամենահայտնին ու ընդունվածը՝ Արկուրի լուսանկարչատունը: Ո՞վ է դերասանը բեմից դուրս, հասարակական միջավայրում և քաղքենի հանդիսականի հայացքում, «արտաժամանակային էություն», «իր ներքին արժանապատվությամբ հղկված», «իր գեղեցկայնության բարձունքում հավերժորեն երիտասարդ», և ո՞վ է նա մարդկային առումով. ոչ մի կապ իր իրական անձի ու խաղա-

³⁵ Hovhannisyan 2019, 148.

³⁶ Арнхейм 1974, 28.

ցած դերերի հետ³⁷: Այսպես էլ «անմահացել» են ինքնահիացումով տառապող շատ դերասաններ տաղավարային լուսակարգման մեջ: Բայց Արկուրի Ժամանակն անցել է, երբ փոխվել են պատկերացումներն ու հայացքները դերասանի ու թատրոնի հանդեպ: Դարի երկրորդ կեսի թատերական լուսանկարիչները (Թերեզա Լեպրա, Անյա Վարդա և այլք), տաղավարում թե տաղավարից դուրս, ջանացել են հնարավորինս մոտ լինել մարդկային ճշմարտությանը և հեռու թատրոնի ու դերասանական անձի քաղցնի պատկերացումներից: Տաղավարն իր պայմանական լույսով երկխոսության պայման չի ստեղծում, կեղծ վիճակի մեջ է դնում մարդուն, կյանքից դուրս, որքան էլ նա նշանակալից երևա: Այլ են 50-60-ական թվականների ֆրանսիական բեմի վարպետների (Լուի Ժուլե, Ժան Լուի Բարրո, Ժան Վիլար) դիմանկարները բեմից դուրս. բովանդակալից են ու ճշմարիտ: Այստեղ դեր են ունեցել նաև վարկային նորմերի ու բեմական ոճի բարեշրջումները. կեցվածքայնությունը դուրս է եկել կյանքից ու բեմից, և լուսանկարչական տաղավարը կամ պիտի մերժվեր, կամ վերանայվեր:

Հետևում ենք արվեստագետ լուսանկարիչների (Հովսեփ Քարշ, Իդա Քար և այլք) գործերին ու այդ համատեքստում Ազատուհու նկարաշարքին: Այստեղ տաղավարը բացառված է, չկան լուսային արվեստականությանը հարմարեցված դիտումներ, մարդն իր տեղում է իր ինքնությամբ ու ներքին ազատությամբ և դուրս չի նայում, չի ներկայանում, այլ ներկա է: Այստեղ են իմաստասերն ու աստվածաբանը, հետազոտողն իր մտքի ոգորումներով, նկարիչն իր չիրականացված տեսիլքի առջև, մեկը բացել է ձեռագիր մատյանը, գիտե՝ ինչ է փնտրում: Ամեն մեկն իր նոսաֆերայում է, և ահա երաժիշտը... Կանգ ենք առնում կոմպոզիտոր Ստեփան Շաքարյանի դիմանկարի առջև ու մտածում, թե ինչ ասել է՝ «ես լույսը տեսնում եմ...»: Դա լո՛ւյսն է լույսի մեջ, թե՛ հնչյունը: Նկարի ներքևի ձախ անկյունը ծանրացված է, և այնտեղից մարդու հայացքն ու դաշնամուրից ցնցումով պոկված ձեռքն ակոսում են սպիտակն անկյունագծով դեպի վերին աջ անկյունը: Հնչյունն այդ չգծված անկյունագծի վրա է և, եթե մեզ չի խաբում մեր զգացումը, դա կոմպոզիցիայի առանցքն է ու կենտրոնը (նկ. 7): Հնչյունը պոկվել է մարդու մատների ծայրից, օդը ցնցվել է, դատարկությունը լցվել, սպիտակը լարված է ու հնչում է, եթե անգամ հանենք նկարից ներքևի աջ անկյունն զբաղեցնող դաշնամուրի ստեղնաշարը: Ի՞նչ է տեղի ունեցել:

³⁷ Барт 1996, 72, 289:

Լուսանկարչուհին լսելով դիտել է ու բռնել պահը երաժշտական շեշտի հետ: Դիտել է լսելով, թե՞ լսել դիտելով: Եվ ի՞նչ անվանենք սա, ձևի փոխակերպում, թե՞ հայտնագործում այլ ձևից ստացած ներշնչումով:



Նկ. 7

Այս նկարը վերստին մտածել է տալիս, թե ինչ իմաստներ կարող է կրել լույսն արվեստում, և որտեղ է նրա տեղը, հակադրվածությամբ, թե՞ համադրվածության մեջ: Հին հունական արվեստն ամբողջապես լույսի մեջ է, նրա մարմարե բեկորներն իրենց միջավայրից պոկված, լուսանկարիչները նրանց շուրջը, և ինչպես բանաստեղծը կասեր՝ «օ՛, մարմարյա քույրեր թանգարաններում մրսող...»³⁸: Թանգարանային լույսը չի փոխարինում արևին, ծովի ու երկնքի կապույտին, որոնցում կյանք է առել մարմարի կաթնագույնը: Այստեղ գեղագիտական էտալոն է ընդունված միլիոյան Աֆրոդիտեն, լուսանկարներում կավճի ճերմակություն սև ֆոնի վրա, փոքր-ինչ ներքևից դիտված, մոնումենտալության թեթև ակնարկով: Բոլոր լուսանկարներում պատկերը գրեթե նույնն է: Խնդիրը նույնն է եղել՝ ընդունել սիմվոլը որպես սիմվոլ: Ոմանք ներշնչվել են մարդկայինի գաղափարով,

³⁸ Չարենց 2007, 68:

այդ թվում՝ ռուս գրող Գլեբ Ուսպենսկին, որ բարություն ու առաքինություն է տեսել այս կերտվածքում, ավելի հանգստություն, քան հպարտություն, որ լուսանկարներում է: Այդ լուսանկարները մերժողը ֆրանսիացի քանդակագործ Արիստիդ Մայոլն է: Նա մտերմություն է փնտրել արձանի դիրքում, մի բան, որը նկատելի չէ լուսանկարիչների դիտումներում: Մայոլի կարծիքով, արձանը սխալ տեղում է դրված, լույս չի տալիս, և լուսանկարները չեն մոտենում էությանը: «Նրան մի անգամ եմ տեսել իր տեղում՝ պատուհանի մոտ, - ասում է քանդակագործը, - լույսը լույսի վրա կուրացնում էր արևի նման ...Այս արձանի գլուխը զարմանալիորեն կենդանի է, կարծես շարժվում է դեպի քեզ: Լուսանկարներում նա մեռած է ու դատարկ, նրան պետք է մոտենալ լիակատար լուսավորության մեջ, անստվեր տեղում»³⁹, ու կտեսնենք, որ կաթնագույն է, չկա լուսանկարների անկենդան կավճե սպիտակը:

Լույսի ու ստվերի խնդիրն այլ բովանդակություն է ձեռք բերում, երբ արվեստագետ դիտողն արվեստի գործի առջև է: Բանաստեղծը, արձակագիրը, քանդակագործը տարբեր հայեցումներով են ընդունում գեղեցիկը, և ոչ մեկի դիտումով չի երկրորդվում արվեստի գործը: Գրվում են ներշնչված տողեր, կերտվում աֆրոդիտեններ, հայտածվում պատկերներ, տրվում մեկնություններ, և ամենահամեստ, բայց կենտրոնական տեղում է լուսանկարչությունը, որպես անաչառ, օբյեկտիվ բովանդակությանը հետամուտ հայացք: Նա այստեղ մոտ է իր նախնական դերին, այն է՝ մոտ լինել արվեստի այն ճշմարտությանը, որին ասում են իրի շրջափելիություն (ըստ Հայդեգերի): Սա յուրահատուկ գեղագիտական դիտում է, որտեղ «իրը պետք է թողնվի իր ներսում»⁴⁰: Լուսանկարչությունն այստեղ հավատարիմ է ու մոտ իր լուսաստվերային պայմանական հայեցմանը և դրանով իսկ իր գոյահիմքին (սուբստանց), որքան էլ տարբեր լինի ընկալվող օբյեկտը՝ իրականության, թե արվեստի սահմաններում:

Եզրակացություններ

Մարդս իր հայեցման մեջ ձգտում է ըմբռնել տեսանելին իր միջավայրում, փնտրել էականը, ի հայտ բերել հատկանիշը որևէ կետում և սահմանավորելով առանձնացնել, այն է՝ տեղավորել իր զգացական դիտման շրջանակում: Սա դիտվող պատկերի ենթագիտակցական պայմանա-

³⁹ Фреп 1982, 79.

⁴⁰ Хайдеггер 2008, 101.

կանացումն է ու ձևաստեղծման սկիզբը տեսողական արվեստներում: Այս ծանոթ խնդրի վերարծածումը հանգեցնում է արտացոլման տեսությանը և իրականության ընկալման այն բնական պայմանին, որ տալիս է լույսի ու ստվերի հարաբերությունը: Լուսանկարչությունը, որպես օպտիկական միջնորդավորում դիտողի ու առարկայի միջև, ի հայտ է բերում ձևի ու նյութի յուրահատուկ հարաբերություններ: Սա մի դիտում է պատկերի առարկայականության ու վերացականության առնչություններում, մի արվեստ, որ միտված է վավերականության և պայմանականացնում է այն իր արտահայտչամիջոցների (գիծ, լույս, ստվեր) սահմանափակությամբ: Այն բերում է իր զգացական լարվածքն ու իր բնագանցությունը և մղում է արվեստի հոգեբանության որոշ էական խնդիրների վերարծարծմանը:

Գրականություն

- Առաքելյան Գ. 2018, Անդրանիկ Քոչարի լուսանկարչական արվեստը, Երևան, «Տիգրան Մեծ», 143 էջ:
- Դալիթ Անյադթ 1960, Սահմանք իմաստասիրության, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 169 էջ:
- Դուրյան Պ. 1932, Տաղեր, Երևան, Պետհրատ, 88 էջ:
- Դելակրուա Է. 2006, Երկեր արվեստի մասին, Երևան, «Հայգիտակ», 338 էջ:
- Զարենց Ե. 2007, Վերջին խոսք, Երևան, «Հանրագիտակ», 326 էջ:
- Սերվանտես 1934, Դոն Կիխոտ, Երևան, Պետհրատ, 190 էջ (Մ. Արուսյանի նկարազարդումով):
- Տեն Հ. 1936, Գեղարվեստի փիլիսոփայություն, Երևան-Մոսկվա, Պետհրատ, 534 էջ:
- Арнхейм Р. 1974, Искусство и визуальное восприятие, Москва, «Прогресс», 392 с.
- Барт Р. 1996, Мифологии, Москва, изд. имени Сабашниковых, 314 с.
- Башляр Г. 2004, Избранное: поэтика пространства, Москва, изд. РОССПЭН, 375 с.
- Бёрк Эд. 1979, Философское исследование о происхождении наших идей возвышенного и прекрасного, Москва, «Искусство», 237 с.
- Вейдле В. 1996, Умирание искусства, СПб., изд. АХИОМА, 333 с.
- Витгенштейн Л. 1994, Философские работы, Москва, «Гнозис», 207 с.
- Гартман Н. 1958, Эстетика, Москва, изд. ИИ, 692 с.
- Гильдебранд Д. 1998, Новая вавилонская башня, СПб., «Алетейя», 314 с.
- Гнедич П. 2004, История искусств, т. III, Москва, «ОЛМА-ПРЕСС», 638 с.

- Кандинский В. 2018, О духовном в искусстве, Москва, изд. «РИПОЛ классик», 250 с.
- Тынянов Ю. 1977, Поэтика. История литературы. Кино, Москва, «Наука», 574 с.
- Фрер А. 1982, Беседы с Майолем, Ленинград, «Искусство», 192 с.
- Хайдеггер М. 2008, Исток художественного творения, Москва, «Академический проект», 525 с.
- Hovhannisyan H. 2019, Without the Diogenes Lantern, Washington, Cross-Cultural Studies, v. 4, 150 p.

ԼՈՒՅՍԻ ԵՎ ՍՏՎԵՐԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հենրիկ Հովհաննիսյան

Ամփոփում

Շրջապատող աշխարհի տեսողական ընկալումը հանգեցնում է առանձին կետերի, հատվածների ու առարկաների տեսազգացական առանձնացման, երբեմն էլ գեղագիտական մեկուսացման: Մարդկային հայացքը բնությունից օժտված է պայմանաձևերի (մոդելներ) ստեղծման և տեսանելի իրականության անսպասելի կարգավորումների: Արտացոլումը, որպես գեղարվեստական երևույթ, հաճախ սկիզբ է առնում վայրկենական հայացքից, և այստեղից էլ՝ լուսանկարչությունն իր գեղագիտական դիտումներով ու նմանողության մղումով. դիտակետերի ընտրություն, լույսի հետ ու լույսին հակառակ, մղում առ անտեսանելին, հայեցման ու վերապրումի նույնացում, որտեղ չեզոքանում է տեսանելի աշխարհի առարկայականությունը, և առարկաները մոտեցվում են մարդուս հոգևոր աշխարհին:

Բանալի բաներ՝ անգունություն, արտացոլում, գրավյուր, գիծ, հայեցում, ձև, պայմանականություն:

ЭСТЕТИКА СВЕТА И ТЕНИ

Генрих Оганесян

Резюме

При зрительном восприятии окружающего мира происходит эстетическое выделение отдельных точек или фрагментов, воображаемое изо-

лирование предметов от реальных соотношений. Человеческий взгляд по сути обладает способностью предвосхищения, свойственного художникам, – создавать модели, что приводит к неожиданному оперированию картинами реальности. Отражение как художественное явление есть результат мимолетного взгляда. В этом смысле искусство фотографии с его поиском ракурсов, соотношением тени и света, отражая сходство с объектом, являет собой связь между созерцанием и переживанием, где исчезает предметность видимого мира. Оптическая опосредованность при творческом подходе проникает во внутренний духовный мир человека.

Ключевые слова – бесцветность, отражение, гравюра, линия, созерцание, форма, условность.

THE AESTHETICS OF LIGHT AND SHADE

Henrick Hovhannissian

Abstract

The visual perception of the surrounding world takes place via imaginary highlighting of certain dots and fragments, which sometimes brings to aesthetic isolation. The human vision is by nature endowed with anticipation of visible models, which may bring to most unexpected arrangement of the visible reality. Reflection, viewed as an aesthetic phenomenon, quite often originates at a glance. Hence, the photography with its aesthetic observation and aspiration for resemblance. It's all about the observant eye, being with and without light, craving for the invisible, and this instant link between contemplation and anxiety, the very point at which the significance of the visible reality vanishes, and things around us smoothly get closer and closer to man's spiritual life through optical mediation.

Key words – colourlessness, engraving, line, reflection, contemplation, form, conditionality.

ՏԱՐՈՆ ԱՇԽԱՐՀԻ ՐՈՒՐԻՆԵՐ

Անի Հակոբյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ anifolkmusicologist@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 30.03.2020, գրախոսվել է 10.03.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-199

Ներածություն

Օրորոցային երգը մարդու կենսագործունեության կարևորագույն իրողություններից է՝ անկախ ազգությունից, ժամանակաշրջանից, կրոնական և այլ պատկանելությունից: Երեխային քնեցնելու նպատակով օրոր են երգել հազարամյակներ առաջ, երբ չկար նույնիսկ ազգ (ազգություն) հասկացությունը, իսկ այս երևույթի ձևավորումից հետո այն դարձել է տեսակի պահպանման երաշխիքներից մեկը, հատկապես փոքր կամ ծովման վտանգ ունեցող ազգերի պարագայում: Հայտնի են դեպքեր, երբ օրորոցում լսած և ենթագիտակցության մեջ պահպանված երգով իրար վերագտել են հարազատներ: Կարմիր խաչի տեղեկագրի էջերից մեկում¹ նման մի դեպքի արձանագրություն կա, ըստ որի, հայ մորից գողացված մանկիկը, որին մեծացրել էր թուրք ընտանիքը, օրորոցայինով ճանաչում է իր իսկական մորը: ««Օրորոցայինը փրկում է երեխային թուրքից»»: մի երեխայի կյանքի պատմություն» վերտառությամբ այս չափազանց հուզիչ նյութը հրապարակվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայքում²: Օրորոցայինը շատ դեպքերում իբրև «ազգապահպան» երևույթ է ներկայացված նաև ազգությամբ հայ էթնոերաժշտագետ Մելիսա Բիլալի թեկնածուական ատենախոսության մեջ, որում հեղինակը դրա ազդեցության հոգեբանական, ազգաբանական ու մարդաբանական կողմերը քննում է թուրքական միջավայրում, որն ամենից խոցելին եղավ հայ ժողովրդի պատմական կյանքում³:

¹ Կարմիր խաչի տեղեկագիր 1919, 1:

² http://www.genocidemuseum.am/arm/13.07.2010.php?fbclid=IwAR0fdWK5v3241IRx_QpPmN Xoh2MgDGnVndQeWojWW4fR-zD4NBU8L9QRm1E

³ Bilal 2013.

Նշանակում է՝ օրորը դարձել է ազգային, ավանդական, տիպական երաժշտամտածողությամբ առանձնացող և իրենում այդ տիպականը խիտ «գույներով» արտահայտող ժանրերից մեկը: Սերունդներին իբրև ավանդ փոխանցվող *կայուն*⁴ օրորները հատկապես արտացոլում են այն մշակույթը, որից սերում են: Լինելով համամարդկային ֆենոմեն, ունենալով բազմաթիվ ընդհանրություններ՝ յուրաքանչյուր ազգի օրորոցային տվյալ ժողովրդի մշակութային ինքնության խորհրդանիշն է:

Երաժշտական բարբառ

Երաժշտական ֆոլկլորագիտության մեջ չափազանց կարևոր, միևնույն ժամանակ, համապարփակ ուսումնասիրության կարոտ ուղղություն է համարվում երաժշտական բարբառների խնդիրը: Կան որոշակի փորձեր՝ այս կամ այն շրջանին վերաբերող հոդվածներ, ուսումնասիրություններ (օրինակ, դիպլոմային աշխատանքներ՝ նվիրված կոնկրետ ազգագրական գոտու, ինչպես՝ Մ. Մուրադյան, «Շատախի երաժշտական բարբառը», Ա. Հակոբյան, «Իջևանի տարածաշրջանի ժողովրդական երգերն ու նվագները» ԵՊԿ ավարտական դիպլոմային աշխատանքներ): Երաժշտական բարբառների ուսումնասիրման մեկ այլ հնարավոր հարթակ են վերջին շրջանում հատկապես ԵՊԿ ֆոլկլորագիտության ամբիոնի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի կողմից պարբերաբար լույս ընծայվող ազգագրական գոտիների նյութ պարունակող ժողովածուների (28 նոր ժողովածու) նախաբաններն ու ծանոթագրությունները, որոնք, հագեցած լինելով գիտական տեղեկություններով, թույլ են տալիս պատկերացում կազմել տվյալ շրջանին հատուկ երաժշտամտածողության մասին: Երաժշտական բարբառի հարցին է նվիրված երաժշտագետ Ալինա Փահլևանյանի «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության խնդիրները»⁵ աշխատության IV գլուխը, որը Մուշ-Սասուն ազգագրական գոտու բարբառային հետազոտություն է. հեղինակն այն համեմատում է հարևան Մոկս-Շատախ-Վասպուրական աշխարհի հետ:

Մեր խնդիրն է դուրս բերել մեկ ժանրի, այն է՝ *օրորի* պարագայում որոշակի ազգագրական գոտու բարբառային դրսևորումները⁶: Դա հնա-

⁴ Օրորի կայուն և *հանպարտասպից* կարգաբերվող ենթաժանրերի մասին հմմտ. Hakobyan 2019:

⁵ Пахлеванян 2005.

⁶ Հակոբյան 2018, 116-123, Հակոբյան 2019, 130-142:

րավորություն կտա ստանալու որոշակի պատկեր՝ դուրս բերել ժանրի համար ընդհանրականը, տիպականը և, մյուս կողմից՝ «տեսնել» տվյալ ազգագրական գոտու «կնիքը» ժանրի վրա:

Երաժշտական բարբառների հարցին որոշակի անդրադարձ ունի Կոմիտասը «Հայ գեղջուկ երաժշտություն» աշխատասիրության մեջ⁷: Գիտակցելով աշխատանքի մեծ ծավալը՝ նա ցավով փաստում է, որ հարցը առանձնակի ուսումնասիրության է կարոտ, և հույս հայտնում ապագայում վերադարձ կատարել այս կարևորագույն խնդրին⁸: Ահա թե նա ինչով է պայմանավորում «երաժշտական բարբառ» երևույթը. «Ժողովրդական եղանակները սերտ առնչություն և բնական կապ ունին տեղական պայմանների հետ, որոնք ծնում են միջավայրին հատուկ ոճեր. ուստի մի երաժշտական միտք այլ և այլ տեղերում ստանում է տեսակ-տեսակ բնորոշ արտահայտություն», և ավելացնում է. «Տեղական եղանակներից ծագում են երաժշտական գավառական բարբառներ, որոնք այնքան որոշ են, որ գյուղացին ջոկում է միշտ մյուսից աշխարհագրական անուններով»⁹:

Օրորի ժանրը Տարոն աշխարհում

Հայտնի է, որ օրորոցային ժանրը հաճախ իր «տեղային» անունը ստանում է կրկնակ բառով: Տարոն աշխարհի¹⁰ օրորներից շատերը անվանում ենք «րուրիներ», հազվադեպ նաև «հեյրուրներ», որը, իհարկե, հնչյունաբանորեն հարում է օրոր, հայրուր, այեր, լուրի կրկնակ բառերին¹¹: Հր. Աճառյանի Արմատական բառարանում նշված է միայն *օրոր* բառի ստուգաբանությունը¹²: Մեկ այլ՝ բարբառային բառարանում էլ գտանք լուրի բառի լուռ իմաստային բացատրությունը. այն առաջացել է ո>ր տառադարձման հետևանքով¹³:

⁷ Կոմիտաս 1941, 15-29:

⁸ Կոմիտաս 1941, 27:

⁹ Կոմիտաս 1941, 26:

¹⁰ *Տարոն աշխարհ* ասելով՝ նկատի ունենք Խնուս, Վարդո, Մշո դաշտ, Բուլանըխ, Մանազկերտ, Սղերդ, Խլաթ, ինչպես նաև ժամանակին պատմական Աղձնիքի մաս կազմած Սասուն տեղանուններով տարածքը, որը շատ ավելի մեծ է պատմական Մեծ Հայքի Տուրուբերանի Մուշ կենտրոնով Տարոն գավառից (հմմտ. [http://hpj.asj-oa.am/4796/1/1999-2-3\(147\).pdf](http://hpj.asj-oa.am/4796/1/1999-2-3(147).pdf)):

¹¹ Ժանրը կոչում են Հայաստանի այս կամ այն ազգագրական գոտում նշված անուններով:

¹² Աճառյան 1979, 620-621:

¹³ Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, 255:

Վերլուծելով ու միմյանց հետ համեմատելով Տարոն աշխարհի մեզ հայտնի թուրիները՝ փորձենք ներկայացնել ժանրի երաժշտական բարբառային առանձնահատկությունները:

N 1 «Գըսը, թուրի» կամ «Րուրի» ավանդական օրորը առաջին անգամ Ա. Փահլանյանի վերձանությամբ ներկայացվել է Մ. Բրուտյանի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» դասագրքում¹⁴: Երգը ծայնագրվել է ԵրՊԻ-81¹⁵ փառատոնի ժամանակ Երևանում Թալինի շրջանի Ն. Բազմաբերդ գյուղի երգի ու պարի ազգագրական խմբի անդամ Հայկանուշ (Հարգո) Գրիգորյանից: Վերջինս «Հայ ազգագրություն և բանահյուսություն Հ. 19, Թալին» աշխատության նախաբանում հիշատակված է իբրև հարսանեկան «ծաղկոց» և հրաժեշտի երգերի բանասաց, որն աչքի էր ընկնում ժողովրդական երգի բացառիկ զգացողությամբ և կատարման վարպետությամբ¹⁶: Հեղինակը չի նշում այն փաստը, որ Հարգոն 1980 թ. կատարել է նաև մեկ օրորոցային, որի միայն տեքստն¹⁷ ու արխիվում անձնագրային տվյալներն¹⁸ են հրապարակվել: Բացի Բրուտյանի դասագրքից, երգը հրատարակվել է ևս երեք անգամ¹⁹:

Նմուշը հայ ազգագրության մեջ հաճախ հանդիպող, հայ ժողովրդի պատմաքաղաքական ճակատագրով պայմանավորված «գրառման վայրի» և «նյութի հայրենիքի» տարբեր լինելու վառ դրսևորումներից է²⁰: Այն

¹⁴ Բրուտյան 2004, 198:

¹⁵ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կազմակերպած ազգային երգի ու պարի ամենամյա փառատոնն իրականացվում էր 1979 թ. սկսած:

¹⁶ Խաչատրյան 1999: Նրա և մյուս բանասացների մասին մանրամասն տեղեկություններ են ներկայացված հատորյակի «բանասացների կենսագրություններ» բաժնում (էջ 245). «Հայկանուշ (Հարգո) Գրիգորյանը ծնվել է 1915 թվականին Սասնո Խուֆ գավառի Կնոտ գյուղում: 1922 թվականին վերաբնակվել է Թալինի շրջանի Ն. Բազմաբերդ գյուղում: Հայկանուշ Գրիգորյանը երգել է բազմաթիվ երգեր, ունի ժողովրդական երգի բացառիկ զգացողություն և կատարման վարպետություն: Նրա երգացանկը շատ հարուստ է. ամբողջական երգահատվածներ է երգում նաև սիրավեպերից, որոնք չեն ընդգրկվել սույն ժողովածուում: Պատմել է նաև մի քանի իրապատում, կենցաղային հեքիաթներ... Երգասաց Հոռոմ Հարությունյանի հետ (Սասունի Արուք գյուղից), որը նույնպես ժող. երգի լավագույն կատարողներից է, բազմիցս մասնակցել են ազգագրական փառատոների և մրցանակներ շահել»: Տե՛ս «Գուֆան» երգի-պարի փառատոնի տեսաֆիլմը. <https://www.youtube.com/watch?v=DV1FWGZl6cl>.

¹⁷ http://serials.flib.sci.am/openreader/azgagruyun_19/book/index.html#page/154/mode/2up

¹⁸ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ռ. Խաչատրյանի ֆոնդ (FRI:0001-4566), FRI:0481-0484:

¹⁹ Փահլանյան, Սահակյան 1984, 78, Պապայան 2015, 12, Հարությունյան 2019, 25-26:

²⁰ Խաչատրյան 1999, 8:

Տարոն աշխարհին հատուկ՝ փոքր ծայնածավալում մեծ էներգիա պարունակող, հմայական-մեղիտատիվ բնույթով ստեղծագործություն է, ինչը ցայտուն արտահայտված է, օրինակ, նույն տարածաշրջանի երգատեսակ «գորանիներում»։ Երգը զուգադրելի է նշված արխաիկ երգատեսակի հետ նաև իր 5/8 մետրով, որը խախտվում է հազվադեպ, այն էլ միայն կրկնակային հատվածներում և երաժշտական ֆրազների ավարտներում, իսկ բուն տեքստ ներկայացնող հատվածներում²¹ երբեք։ Հետաքրքրական է երգի ծայնակարգը, որն ամբողջ ընթացքում ծավալվում է էոլական²² e-fis-g տրիխորդի «շուրջ» և միայն վերջնամասում է հաստատում «թվացյալ» տոնիկայից վար d հիմնածայնը, որով կառուցվում է միքսոլիդիական տետրախորդ։ Երևույթը, երբ ողջ երգը ծավալվում է ծայնակարգային մեկ ոլորտում և վերջում ավարտվում է մեկ այլում՝ դիտարկելի է նաև ուրիշ օրորոցայիններում²³։

N 2 «Բուրի բուրին»²⁴, մի կողմից, նախորդ նմուշին հարող՝ ավանդականի, տիպականի առանձնահատկությունները կրող, մյուս կողմից՝ ավելի համեստ տարբերակ է։ Հստակ ու անխախտ է ծայնակարգը՝ տերցիային օժանդակ հենակետով էոլական տետրախորդ, մետրիկան՝ նախորդի նման տարածաշրջանին բնորոշ 5/4 չափում է, որն այստեղ էլ երբեմն-երբեմն ընդմիջվում է կրկնակ բառերի վրա՝ շունչն ու մտքերը ի մի բերելու, նոր մտքի տեղափոխվելու նպատակով։ Երգը գրի է առել ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ռաիսա Խաչատրյանը 1986 թ. Թալինի շրջանի Պարտիզակ գյուղում (արմատներով Սասունի Արուք գյուղից) Հոռոմ Հարությունյանից²⁵։ Ինստիտուտի կողմից 1970-1980-ական թթ. իրականացվել է երկու գիտարշավ դեպի Թալին՝ ծայնագրելով շուրջ 20 նմուշ օրոր²⁶, որոնցից վերծանվել և այդ

²¹ «Հարաֆը քամին գբի օրորը», «քողի օջևար քի ձիձի դա», «բուրիգ էնիմ կըրգանոցին» և այլն։

²² Քանի որ ծայնակարգերի անվանման սկզբունքը մեզ համար քուշնարյանական համակարգն է, ուստի այդ ծայնակարգն անվանում ենք էոլական՝ իբրև էոլական տոնիկայով։

²³ Հարությունյան 1958, «Վանի օրորոցային»։

²⁴ Խաչատրյան 1999, 150-151 երգի տեքստ, 209-210, նաև մեղեդին՝ Աշոտ Մուրադյանի վերծանությամբ։

²⁵ Ծնված 1918 թ. Շիրակի մարզի Հոռոմ գյուղում, Սասունից գաղթածների ընտանիքում։ Տե՛ս «Գութան» երգի-պարի փառատոնի տեսաֆիլմը. <https://www.youtube.com/watch?v=JSn1h2laPQ4>

²⁶ Խաչատրյան 1999, 9։

չափազանց արժեքավոր հատորյակում ներառվել է միայն երկու նմուշ՝ վերը քննարկված և հաջորդ թուրինները (N 2 և N 3):

N 3 «Այիգ էնը»²⁷ ավանդական օրորը կատարել է կրկին արմատներով սասունցի Եպրաքսյա Ոսկանյանը²⁸: Մի երգ, որ այսօր, իբրև ավանդական երգի փայլուն նմուշ, լիիրավ համերգային կյանք ունի, հետևաբար նաև ժողովրդի մեջ տարածվելու, սիրվելու ու նրան «վերադարձվելու» ճանապարհին է: Տարոնի երգամտածողության կնիքը կրող այս օրորոցայինը ծավալվում է առանց հիպո հատվածի տերցիային օժանդակ հենակետով լոկրիական տետրաֆորդում, որը, ըստ Ք. Քուշնարյանի, հատկապես բնորոշ է հնագույն ծագման մոնոդիաներին²⁹:

N 4 «Օրորոցային»³⁰ վերնագրված երգը մեզ է փոխանցել «Մարաթուկ» երգի-պարի ավանդական խմբի հիմնադիր, հայ ավանդական արվեստի նվիրյալ Հովհաննես-Մկրտիչ Սարգսյանը³¹՝ նույն ինքը Մգրոն³²: Նմուշը նախորդ երգի տարբերակ է՝ ժողովրդական արվեստին բնորոշ տարբերակայնության բոլոր հնարքներով³³: Դրանցում ընդհանուր են թե՛ բանաստեղծական տեքստը և թե՛ մեղեդու ծավալման տրամաբանությունն

²⁷ Խաչատրյան 1999, 211-213: Տե՛ս նաև «Վերապրած երգեր» ֆիլմի 11:59-րդ ռոպեից. <https://www.youtube.com/watch?v=-V4Pb3bdrss&t=3s>: Սա էլ է այդ օրորի ժամանակակից, ըստ իս, հաջողված մշակումներից՝ <https://www.youtube.com/watch?v=cgaONfQmoYc>

²⁸ «Ծնվել է 1933 թ. Թալինի շրջանի Վ. Սասնաշեն գյուղում: Ծնողները գաղթել են Սասնո Բերդանք գյուղից և 1920 թ. վերաբնակվել Վ. Սասնաշենում: Ե. Ոսկանյանն ունի նուրբ ձայն և կատարողական բարձր արվեստ: Նա երգում է Վ. Սասնաշենի «Ծովասար» ազգագրական համույթում, որը սկզբում գործել է ընտանեկան կազմով, այնուհետև համալրվել դպրոցականներով ու ուսուցիչներով: Վերջինիս ղեկավարն էր ժող. երգի հմուտ գիտակ, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Գևորգ Հակոբյանը, որի կատարմամբ գրանցել ենք «Խորոտիկ» և «Մշո հարսներ» երգերը, իսկ Ոսկանյան քույրերի կատարմամբ՝ տասնութ երգեր...»: Խաչատրյան 1999, 246:

²⁹ Քուշնարյան 2008, 352:

³⁰ Սարգսյան 1998, 205:

³¹ Մասնագիտությամբ քիմիկոս, ավելին՝ գիտությունների թեկնածուն գրում է. «Մանուկ հասակից մեր ժողովրդական երգերին հաղորդակցվել եմ հորս միջոցով: Հայրս՝ Գրիգոր Մարգարի Սարգսյան, ծնվել է 1902-ին Մուշ քաղաքից դեպի հարավ 7-8 կմ հեռավորության վրա գտնվող Սիմ (Կապուտան կամ Կուրտլը) լեռան ստորոտին ծվարած Փեթար գյուղում: Իր բազմանդամ ընտանիքը և հայրենիքը կորցրած հայրս, Մեծ եղեռնից մազապուրծ իր բախտակիցների հետ, մեծ փորձություններից հետո, հանգրվանեց Թալինի շրջանի Կաթնաղբյուր գյուղում...»: Սարգսյան 1998, 8:

³² Տեսաֆիլմ Մգրոյի մասին. <https://bestofarmenia.com/en/music/armenian-folk-music/176-mkrtych-sargsyan-mgro>

³³ Հմմտ. Փախլանյան 2018, 40: Տե՛ս նաև Աթանասյան 2015, 145-155:

ու ծայնաձավալը: Այստեղ տարբերությունը արտահայտվում է ծայնակարգային դաշտում³⁴. նախորդը՝ տերցիային օժանդակ հենակետով *լոկ-րիական* տետրախորդում էր, սա՝ ևս տերցիային օժանդակ հենակետով, սակայն՝ *էոլական* տետրախորդում: Ինչպես վերը նշվեց, բանաստեղծական տեքստը թե՛ կրկնակային և թե՛ «սյուժետային»³⁵ հատվածներում նույնն է, սակայն քանի որ գործ ունենք փայլուն կրողի, և իր առօրյայում այդ երգերի կենցաղավարումը հնարավորինս պահող՝ կատարողից մեզ հասած տարբերակի հետ, որը նաև ավանդական երգը կատարելությամբ սերունդներին փոխանցելու մտայնությունն ուներ, հետևաբար, այս տարբերակում տեքստն ավելի լիակատար է ու ամբողջական: Մեր առջև ունենք 3 քառատող տնով և վեցատող կրկնակով ամբողջական երգի տեքստ, որը նաև իր կառուցվածքով է կատարյալ³⁶: Երեք տներից երկուսն իրենց բովանդակությամբ գովք-տեքստեր են՝ ուղղված փոքրիկին՝ նրան որպես խաղընկերներ ու խնամող «արժանի» բնության երևույթների, կենդանիների հիշատակությամբ³⁷, օրորի ժանրում կարելի է ասել «թափառող սյուժեներ», որոնք հանդիպում են նաև այլ ժողովուրդների ավանդույթում ևս³⁸, իսկ վերջին՝ երրորդ տունը՝ պատմական փաստեր արձարծող³⁹, բանագետ Հասմիկ Մատիկյանի բնորոշմամբ, հուշ-օրոր է⁴⁰:

N 5 Թալին ժողովածուում ընդգրկված «Րուրին»⁴¹ մեզ է փոխանցել աշնակցի Վարդանուշ Ղուկասյանը: Այն ազատ մետրադիմով, տարերայնորեն ստեղծված՝ հանպատրաստից հորինվածք է, որի կաղապարն ու մտածողությունը հիմնված են Տարոն աշխարհի օրորների ծավալման սկզբունքների վրա. փոքր ծայնաձավալի սահմաններում կրկնակ բառի

³⁴ Դրանց «խառնուրդ» մշակում կարելի է համարել Ինգա և Անուշ Արշակյանների համերգներից մեկի ժամանակ հնչած տարբերակը՝ <https://www.youtube.com/watch?v=i9hRTv6Vem0>, 0:50-րդ րոպեից...

³⁵ Նկատի ունենք երեխայի գովք, ինչպես նաև պատմական անցքեր արտացոլող բուն տեքստի հատվածները:

³⁶ Ամբողջը 8-վանկանի կառույց է:

³⁷ Աստղունք, մեկիկ Աստված քրդի պահե, վերու է՞ գա քրդի անուշ ծծիգ իտա, իմ անուշ գառ, և այլն:

³⁸ Մատիկյան 2019:

³⁹ Քու հեր զարկվե վըր Անդոկին,
Արուն կերթա քար ու քըռին,
Դուժման բռնե զծորեր բոլոր,
Հայ հարսներն ին մացե մոլոր:

⁴⁰ Մատիկյան 2019, 84:

⁴¹ Փահլանյան, Սահակյան 1984, 79:

անդադար կրկնություններով ստեղծված մեդիտատիվ, թմրեցնող բնույթով մեդիտիական դարձվածք և դրա «շահարկում»: Տարածաշրջանին ու առհասարակ օրորի ժանրին հարազատ է նաև երգի ձայնակարգը. տերցիային օժանդակ հենակետով էոլական տետրախորդ, որին միայն մեկ անգամ հիպո հատվածում միանում է տրիխորդ, որն ավելի է «ընդգծում» հիմնաձայնի դերը:

N 6 «Բուրի, թուրին»⁴² ևս ավանդական արվեստի՝ ժողովրդին «վերադարձած» նմուշ է⁴³, քանի որ այսօր երգն «ապրում» է համերգային գործուն կյանքով⁴⁴: Այս ավանդական օրորերգի ամենակարևոր առանձնահատկությունը ազգագրական գոտուն չափազանց բնորոշ, երաժշտական բարբառի յուրահատկություն համարվող էոլական ձայնակարգում 2-րդ աստիճանի կես տոնից պակաս չափով իջեցվածությունն է, որն Ա. Փահլևանյանն անվանում է «տարոնական»⁴⁵ ձայնակարգ: Ուսումնասիրվող տարածաշրջանից «գաղթած» երգերում երևոյթին կարելի է հաճախ հանդիպել, սակայն միայն այն դեպքում, երբ կատարումը պատկանում է ավանդական մշակույթը կրողի, քանի որ ժամանակակից եվրոպական տեմպերացիայի օրենքներով սահմանված երաժշտական կրթությամբ, նույնիսկ ավանդականի լավ զգացողությամբ, կատարողը չի արտաբերում նշված նրբերանգը: Այս դեպքերում է, որ հետազոտողի համար անգնահատելի արժեք է դառնում բանասացից ժամանակին ձայնագրված տարբերակների առկայությունը: Այդպիսիներից են 1977 թ. նկարահանված «Գորանի» ֆիլմում հնչող երգերը, որոնցում քննարկվող օրորը հնչում է ներքին բազմաբերդի Հայկանուշ (Հարգո) Գրիգորյանի կատարմամբ՝ ձայնակարգային վերը նշված «տարոնական» դրսևորմամբ⁴⁶: Երգը հնչում է էոլական տետրախորդում, այս տարածաշրջանին հատուկ 5/8 չափով, բանաձևային տեքստով⁴⁷:

⁴² «Աղբյուր» մանկապատանեկան հանդես 1998, 9:

⁴³ Բանասաց՝ Հոռոմ Հարությունյան, ծնված 1918 թ., Շիրակի մարզ, գյուղ Հոռոմ: Տեսաֆիլմ Հոռոմ Հարությունյանի մասին. <https://www.youtube.com/watch?v=JSn1h2laPQ4>

⁴⁴ «Հ. Մուրադյան մանկական ավանդական երգի-պարի անսամբլ», ղեկ.՝ Հ. Հարությունյան <https://www.youtube.com/watch?v=uMcGYSHLN6k>, «Ձուլալ» <https://www.youtube.com/watch?v=3LZsn89hDhc>, «Ալեակ ֆոլկ եռյակ» 8:37-րդ վայրկյանից <https://www.youtube.com/watch?v=QtyhNquVwzU>

⁴⁵ Փահլևանյան 2018, 132:

⁴⁶ «Երևան» ստուդիա 1977 թ., փ/ֆ «Գորանի»:

⁴⁷ Բուրի գենիմ՝ դու զորենաս,
Դու պըզդիկ իս, բարով մեծնաս:
Բուրի գենիմ իմ պըզդիկին,

N 7 «Տարոնի հեյրուրը»⁴⁸ մեզ է փոխանցել «Ակունք» ավանդական երգի-պարի խմբի մենակատարներից Վարդուհի Հեթոյանը⁴⁹, որը զրույցի ժամանակ պատմեց, որ երգը սովորել է մորից՝ Դավալ Հեթոյանից (ծնվ. 1907 թ. Խուֆ գյուղում): Նա ավելացրեց նաև, որ հորեղբայրը ևս լավ երգող էր՝ գյուղի քահանան⁵⁰: Նմուշը քննարկվող նյութերից տարբերվում է այն կարծես Տարոն և Շատախ աշխարհների երաժշտամտաճողության «խառնուրդ» է՝ Խուֆը տարածքային առումով սահմանակից է Վասպուրականին: Տարոնի օրորների համեմատ այլ են մեղեդու ծավալման՝ վիպականին «հարող» տրամաբանությունը, ձայնաձավալը, նկատենք նաև, որ կրկնակ բառը՝ «հեյրուրը», Շատախի օրորների «ցուցիչ» է⁵¹: Մյուս կողմից՝ Տարոն աշխարհի ամենաբնորոշ էղլական-լոկրիական ձայնակարգային «խաղը» մեզ հուշում է երգի ծագման բուն հայրենիքը: Այսպիսով, այս շքեղ, ավանդական նմուշը իր մեջ խտացրել է միանգամից երկու լավագույն ազգագրական գոտիների տիպական՝ մյուսներից առանձնացող հատկանիշները: Առանձին խոսենք ձայնակարգի մասին, որը, ինչպես նշվեց, մեկ էղլական, մեկ լոկրիական է (2-րդ աստիճանի տատանման շնորհիվ), բացի այդ, հեքսախորդ ընդգրկող հնչյունաշարում բացակայում է 6-րդ «որոշիչ» աստիճանը՝ այդպիսով ստեղծելով նաև էղլական-դորիական «խաղ». երևույթին՝ իբրև Տարոն աշխարհի երաժշտական բարբառի առանձնահատկությանը, անդրադարձել է Ա. Փահլևանյանը⁵²: Ամբողջական, կատարյալ է նաև երգի բանաստեղծական տեքստը, որը քառատող է՝ կրկնակային «հեյրուրով» եզրավորված, ութավանկ երկտող⁵³:

Անդրանիկի քաջ զինվորին:

Հարավ քամին գքի օրորը,
Բուրի, բուրի, բուրի լառ:

Վերին Աստված, կարիմի արև,
Զքի հով էնը, բուրի լառ:

⁴⁸ Պապայան 2015, 9, Հարությունյան 2019, 46:

⁴⁹ <https://www.youtube.com/watch?v=FcbMmf7YIXg>

⁵⁰ 14.09.2019 թ. անձնական զրույց, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում:

⁵¹ Հակոբյան 2019, 130-142:

⁵² Пахлеванян 2005, 118-119.

⁵³ Հեյրուր, հեյրուր, հեյրուր, հեյրուր,
Բուրի գենիմ, դու բուրենաս,
Դու պըզդիկ իս, շուտ զորանաս,
Հեյրուր, հեյրուր, հեյրուր, հեյրուր:

N 8 «Տարոնի օրոր»⁵⁴, որը, թեպետ մինչև վերջերս համերգային կյանք ունեցող նմուշ էր, սակայն անտիպ էր: Բանահավաք ու կատարող Հասմիկ Հարությունյանի մեծ ջանքերի շնորհիվ այս և մի շարք օրորոցային գոհարներ հետազոտողների և կատարողների սեղանին դրվեցին նոտագրություններ և ձայնասկավառակ պարունակող գրքի տեսքով: Ըստ հեղինակի՝ նոտաների վերևում նշված Մուշ-Մարտունի ցուցման, ենթադրում ենք, որ նմուշը գրի է առնվել Մուշից գաղթած և Մարտունիում հաստատված տոհմի ներկայացուցչից⁵⁵: Երգը Տարոն աշխարհին բնորոշ, բավական հետաքրքրական նմուշ է, հատկապես ձայնակարգային առումով՝ էոլական-լոկրիական «խաղ» է տեղի ունենում, որն ըստ էության, վերը հիշատակված քառորդ տոների առկայության հետևանք ու գուցե հենց «տարոնական» կոչված ձայնակարգի արդյունք է⁵⁶: Երգի սկզբնամասը, և ըստ էության՝ կրկնակային «օրոր, օրոր» հատվածը, անկասկած, երկօղակ էոլական կառույց է. դիփտորդ+տրիփտորդ՝ տետրափտորդ ձայնաձավալով: Միջնամասում կարծես իրար են հաջորդում մեկ էոլական, մեկ լոկրիական նույն ձայնաձավալով և օղակներով կառույցներ: Ավարտը լոկրիական տրիփտորդի հաստատումով է: Տիպական է նաև երգի 5/4 չափը:

Երգի ամբողջական և ծավալուն տեքստը հասել է մեզ, որում հստակ է կրկնակ բառի և հիմնական տների հարաբերակցությունը⁵⁷: Այն հազվագյուտ դրսևորումներից է, երբ «օրոր» ասողը բուն գործառույթից չի

Հեյրուր, հեյրուր, հեյրուր, հեյրուր,
Հեյրուր էնիմ իմ պըզդիկին,
Հեյրուր էնիմ ու օրորիմ,
Հեյրուր, հեյրուր, հեյրուր, հեյրուր:

⁵⁴ Հարությունյան 2019, 45:

⁵⁵ Մենք փորձեցինք դա ճշտել գրառողից, սակայն, ցավոք, նա բանասացի անունը չէր հիշում:

⁵⁶ Դա հնարավոր կլինի պարզել միայն այն դեպքում, երբ կունենանք կրողի կատարման ձայնագրությունը:

⁵⁷ Օրոր, օրոր,
Օրոր ասեմ օրորոցին,
Անուշ քուն գա գըրկանոցին:

Օրոր, օրոր,
Ամպերու մեջ լուսնակ շողեր,
Իմ բալիկին կըօրորեր...

«շեղվում» և հարակից կամ հեռահար թեմաներ տեքստում չկան՝ չնայած հինգ ամբողջական տան առկայությանը:

N 9 «Հա ձցում»⁵⁸ խնոցու երգ հիշեցնող կրկնակով այս օրորոցայինը առաջին անգամ հրատարակվել է 1978 թ.՝ երաժշտագետ Յիցիլիա Բրուտյանի խմբագրությամբ և Լևոն Աստվածատրյանի վերծանումներով, «Տարոնի ժողովրդական երգեր» ժողովածուում, սակայն լայն հանրությանը այն ճանաչելի դարձավ Հասմիկ Հարությունյանի շնորհիվ: Նշված ժողովածուն ներկայացնում է բանասաց, ծագումով մշեցի Արմենուիի Գևոնյանի⁵⁹ կատարումների հավաքածուն, որը մոր ու ընտանիքի մի քանի անդամների հետ կարողացել է խուսափել թուրքի յաթաղանից՝ հաստատվելով Փարիզում: Մինչ այնտեղ մեկնելը նա Պոլսում մասնակցել է Կոմիտասի կազմակերպած «Գուսան» երգչախմբի գործունեությանը, իսկ Արշակ Չոպանյանը նրան խորհուրդ էր տվել լրջորեն զբաղվել ծայնի մշակմամբ և դիմել Կոմիտասի բարեկամ, փարիզաբնակ երգչուհի Մարգարիտ Բաբայանին:

Հետաքրքրական է երգում ժանրային զուգադրումը. այն ոչ թե պատմականի, սիրայինի, ողբի կամ հաճախ հանդիպող որևէ ժանրի ու օրորի, այլ առտնին աշխատանքային խնոցու ու երեխային քնեցնելու երգերի համակցություն է: Այս համադրության մեջ օրորոցայինը, պահպանելով իր գերակա, գործառութային նշանակությունը, բնույթը, բացի կրկնակային երկտողից, ողջ բանաստեղծական կաղապարը «վերցնում» է խնոցու երգերին բնորոշ ոչ միայն «ձցում» (խնոցի)⁶⁰ կամ «հա ձցում» կրկնակ բառի մասով, այլ ամբողջական քառատող կրկնակով⁶¹: Ուշագրավ է երգի ծայնա-

⁵⁸ Աստվածատրյան 1978, 54, Հարությունյան 2019, 47:

⁵⁹ <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/moushlocalcharacteristics/moushsongarmenouhikevonian.html>

⁶⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, 341:

⁶¹ Նընջիր լառ, քամին էլավ, վույ,
 Նընջիր լառ, բուք-բորան է, վույ:
 Հա ձցում, հա ձցում,
 Շալկիմ սարեր օլոցում,
 Հորքուր իգա՝ չը ցուցում,
 Մորքուր իգա՝ չը ցուցում:
 Նընջիր լառ, քամին էլավ, վույ,
 Նընջիր լառ, բուք-բորան է, վույ:
 Հա ձցում, հա ձցում,
 Շալկիմ սարեր օլոցում,
 Պապոն իգա՝ չը ցուցում,
 Մամոն իգա՝ կը ցուցում:

կարգը՝ բարձրացված 3-րդ աստիճանի շնորհիվ լոկրիական հիմնաձայնով հարմոնիկ պենտախորդ, որում չափազանց կարևորված է կվարտային օժանդակ հենակետը: Մեղեդիական կառույցը, ինչպես և բանաստեղծականը, ունի երկու հատված՝ R կրկնակային, որ բանաստեղծականում օրորոցային է, և բուն տեքստային՝ A և B, որ բանաստեղծական տեքստում խնոցի հարելու թափառող կառույց է: Դրա մեղեդիական և բանաստեղծական կառույցը հետևյալն է՝ R A R B:

N 10 «Բուրի, բուրի»⁶² ավանդական օրորոցայինը դեռևս չիրատարակված, սակայն ձայնասկավառակով և համացանցում լիիրավ շրջանառվող նմուշ է: Հ. Հարությունյանի youtube-յան էջում գտանք բանասացի անունը: Այս օրորոցայինը գրավել է 1984 թ. ԵՊԿ ֆոլկլորագիտության ամբիոնի հերթական գիտարշավներից մեկի ժամանակ, Բաղրամյանի շրջանի Երվանդաշատ գյուղում բնակվող, ծագումով մշեցի Սարգիս Ավետիսյանից, որը հայտնել էր, որ երգը ժամանակին սովորել է պապից: Ազգագրական գոտու օրորոցային ժանրի երաժշտական մտածողության բոլոր վերը դիտարկված ցուցիչներով ևս երգը լիովին ավանդական է: Այդ ցուցիչներն են մեղեդու ծավալման ընթացքը, դրա փոքր ձայնաձավալում արտահայտված մեղիտատիվ, կրկնվող բնույթը, 5/8 չափը, ձայնակարգը՝ կվարտային օժանդակ հենակետով լոկրիական տետրախորդ, բանաստեղծական տեքստի կայուն 8-վանկանի կառույցները: Օրորի ստեղծման հիմքում, ինչպես կարելի է կոսիել տեքստից⁶³, կոնկրետ պատմական դեպքերի նկարագրություն է, որում Մշո դաշտից գաղթածը օրոր է երգում հորն ու մորը կորցրած երեխայի համար: Մեզանում տարածում ստացած այս անտիպ նմուշը վերծանել ենք ու հետագայում կընդգրկենք նաև սույն ժանրի համահավաք ժողովածուում:

⁶² <https://www.youtube.com/watch?v=pHqsvzBkDoA> (28.01.2020).

⁶³ Հմմտ. նոտագրությունը:

Րուրի, լառ

Բանաստեղծ՝ Սարգիս Ավետիսյան
Բաղրամյանի շրջան, գյուղ երվանդաշատ
Չայնագրությունը՝ Հասմիկ Դարությունյանի
վերծանությունը՝ Անի Հակոբյանի

Ա՜խ
Րուրի, Րուրի, Րուրի, Րուրի, լառ...

Իմալ եմիմ, ճար ա չըկա,
Րուրի, Րուրի, Րուրի, լառ...
Բրինձարին, դարման չըկա,
Րուրի, Րուրի, Րուրի, լառ...
Րուրիկ եմիմ, պըզդիկ տղիմ,
Ամուշ քնի, մըջ օրոցիմ,
Գիշերն ընցավ, եղավ կեսըն,
Թուրքերն էկան, լըցվան կեղըն,
Աղոթքան, մոր էր բացվե,
Ամեն մէ տուն, լաց ու կոծ էր,
Հավարն էկավ, կոտորում են,
Ես իմալ զուլում աշխարի է,

Հեսիր, տարան քու հորն ու մոր,
Րուրի, Րուրի, Րուրի, լառ...
Աշխըրի մեջ մացիմք անդեր,
Րուրի, Րուրի, Րուրի, լառ...
Փայխանք ընգանք վերան չղեր,
Րուրիկ եմիմ, պըզդիկ տղիմ,
Րուրի կենիմ, դու Րուրեմաս,
Բարով-խերով շուտ մեծընաս,
Քու հորն ու մոր չըմոռանաս,
Արև դիպավ մոր էրթրկիմ,
Կարոտ մանցիմք Մըջո դաշտիմ,
Րուրի, Րուրի, Րուրի, լառ...

Բրինձար - թրով վիրավոր
Հեսիր - գերի

Եզրակացություններ

Այսպիսով, այս պահին մեր ձեռքի տակ ունենալով մեկ ազգագրական գոտու 10 նմուշ, որոնք հետագայում ենթակա են համալրման, կարող ենք անել որոշակի եզրակացություններ.

- դրանց մեծ մասը, 10-ից առնվազն 9-ը, ավանդաբար փոխանցված, օրորի ժանրի *կայուն* նմուշներ են, ունեն՝

- փոքր ծայնածավալ
- դրանից բխող մեղիտատիվ բնույթ
- 5/4 կամ 5/8 չափ
- Էոլական կամ լոկրիական ծայնակարգերի գերակշռություն
- Այդ երկուսի մեկտեղում՝ «տարոնական» ծայնակարգ
- Էոլական ու դորիական ծայնակարգերի «խաղ»:

Գրականություն

Աթանասյան Ն. 2015, Հայ երաժշտական բանավոր մշակույթի տարածման և տարբերակման մասին («Զուլո» ժողովրդական երգի տարբերակների

- համեմատական վերլուծության օրինակի հիման վրա), Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, N 2 (63), Երևան, էջ 145-155:
- «Աղբյուր» մանկապատանեկան հանդես 1998, Երևան, N 9-10:
- Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 676 էջ:
- Աստվածատրյան Լ. 1978, Տարոնի ժողովրդական երգեր, Երևան, «Սովետական գրող», 64 էջ:
- Բրուտյան Մ. 2004, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, «Ամրոց գրուպ», 255 էջ:
- Խաչատրյան Ռ., 1999, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Թալին, էջ 280:
- Կարմիր խաչի տեղեկագիր 1919, Վաշինգտոն, օգոստոսի 18, հ. III, N 34, էջ 1:
- Կոմիտաս 1941, հավաքեց Ռ. Թերլեմեզյանը, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, «Հայպետհրատ», 199 էջ:
- Հակոբյան Ա. 2018, Վայոց Ձորի օրորների երաժշտական բարբառի հետազոտության փորձ՝ 33 և մեկ օրորերգի օրինակով, Երիտասարդ արվեստաբանների գիտական XII նստաշրջանի նյութեր, Երևան, «Գիտություն», էջ 116-123:
- Հակոբյան Ա. 2019, Շատախ աշխարհի հայրուրներ, ՀՊՄՀ, Հայագիտական հանդես, N 3 (45), էջ 130-142:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, հ. Բ, Երևան, «Գիտություն», 451 էջ:
- Հարությունյան Հ. 1958, Մանյակ ժողովածու հայ ժողովրդական երգերի, Երևան, «Հայպետհրատ», 103 էջ:
- Հարությունյան Հ. 2019, Օրորներ, գիրք և CD, Երևան, հեղինակային հրատ., 67 էջ:
- ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ռ. Խաչատրյանի ֆոնդ (FRI:0001-4566), FRI:0481-0484:
- Մատիկյան Հ. 2019, Անգլալեզու օրորոցային տեքստի լեզվա-բանագիտական քննություն (Հայ բանահյուսական նյութի զուգադրությամբ), ատենախոսություն, Երևան, 142 էջ:
- Պապայան Ա. 2015, Հայ օրորոցային գոհարներ, CD և գրքույկ, «Արևիկ», 29 էջ:
- Սարգսյան Մ. 1998, Տաղք հայրենյաց, Երևան, «Հայինֆո գործակալություն», 320 էջ:
- Փահլևանյան Ա., Սահակյան Ա. 1984, «Թալին» Հայկական ժողովրդական երգեր և նվագներ, Երևան, «Սովետական գրող», 216 էջ:
- Փահլևանյան Ա. 2018, Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի խնդիրները, Երևան, «Ամրոց գրուպ», էջ 175:

- Քուշնարյան Բ. 2008, Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Երևան, «Ամրոց գրուպ», 511 էջ:
- Пахлеванян А. 2005, Вопросы армянской музыкальной фольклористики, Ереван, изд. ЕГК, 186 с.
- Bilal M. 2013, Thou Need'st not weep, For i have Wept full Sore: an Affective Genealogy of the Armenian Lullaby in Turkey//Chicago Univercity, էլեկտրոնային տարբերակը՝ <https://www.worldcat.org/title/thou-needst-not-weep-for-i-have-wept-full-sore-an-affective-genealogy-of-the-armenian-lullaby-in-turkey/oclc/875700977> (ներբեռնման օրը՝ 4.02.2019).
- Hakobyan A. 2019, The formation and subtypes of Armenian traditional lullaby genre, անտիպ զեկույց՝ «Կոմիտաս և Թումանյան 150» միջազգային գիտաժողով, 20-22 սեպտեմբեր 2019:
http://www.genocidemuseum.am/arm/13.07.2010.php?fbclid=IwAR0fdWK5v3241IRx_QpPmNXoh2MgDGnVndQeWojWW4fR-zD4NBU8L9QRm1E (ներբեռնման օրը՝ 20.05.2020).
- <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispaghashvilayet/kazafomush/%20moushlocalcharacteristics/moushsongarmenouhikevonian.html> (ներբեռնման օրը՝ 25.12.2019).
- http://serials.flib.sci.am/openreader/azgagrutyun_19/book/index.html#page/154/mode/2up (ներբեռնման օրը՝ 18.09.2020).

ՏԱՐՈՆ ԱՇԽԱՐՀԻ ՐՈՒՐԻՆՆԵՐ

Անի Հակոբյան

Ամփոփում

Տարոն աշխարհի օրորները հիմնականում գրառվել են այդ երգերի ստեղծման պատմական հայրենիքից դուրս, սակայն արտացոլում են սույն տարածաշրջանի երաժշտական բարբառի առանձնահատկությունները: «Տարոն» ասելով՝ նկատի ունենք Մուշ-Սասուն ամենաերգեցիկ շրջանները, որտեղից գաղթականների մեծ հոսք է եղել ներկայիս ՀՀ Արագածոտնի և Շիրակի մարզեր: Այս շրջաններում գրառված 10 նմուշից ինը հրատարակվել են տարբեր ժողովածուներում, իսկ բանավոր կերպով շրջանառվող, սակայն անտիպ մեկ նմուշ էլ ինքներս ենք վերծանել:

Դրանց հետազոտությունը վկայում է ազգագրական գոտու ինքնատիպ երաժշտամտածողության մասին, որն արտահայտվում է երգերի ծայնակար-

գի, ինտոնացիայի, դիապազոնի, մետրադիթմի, մեղեդու և տեքստի ամուր կապի մասին:

Այսպիսով, մեր ձեռքի տակ ունենալով մեկ ազգագրական գոտու 10 նմուշ, որոնք հետագայում կարող են լրացվել, կարծում ենք, որ՝

- դրանց մեծ մասը օրորի ժանրի *կայուն* նմուշներ են
- ունեն փոքր ձայնաձավալ
- դրանից բխող մեղիտատիվ բնույթ
- 5/4 կամ 5/8 չափ
- էոլական կամ լոկրիական ձայնակարգերի գերակշռություն
- էոլական կամ լոկրիական ձայնակարգերի մեկտեղում, որն ընդունված է անվանել «տարոնական» ձայնակարգ

Է անվանել «տարոնական» ձայնակարգ

- էոլական ու դորիական ձայնակարգերի «խաղ»:

Քանալի բառեր՝ օրորոցային, ավանդական, Տարոն, Թալին, ձայնակարգ, երաժշտական բարբառ, ազգագրական գոտի:

КОЛЫБЕЛЬНЫЕ ТАРОНСКОГО РЕГИОНА

Ани Акопян

Резюме

Колыбельные исторического Тарона отражают особенности музыкального диалекта данного региона, в частности, речь идет о районах Муш-Сасун, откуда большой поток беженцев переселился в современные Арагацотн и Ширак. В результате полевых исследований, проведенных рядом специалистов, было собрано 10 образцов колыбельных из упомянутых регионов, девять из которых были опубликованы в разных сборниках, и один неопубликованный образец нами был декодирован.

Эти образцы являются отражением уникального музыкального мышления этнографического региона, что нашло выражение в модусах, интонации, диапазоне, метраритме и во взаимосвязи мелодии и текста.

Исследование рассматриваемых образцов приводит к заключению, что:

• большинство из них являются *традиционно передаваемыми* образцами жанра

- в этих образцах отмечается небольшой диапазон, чем обусловлены:
- медитативность

- размер 5/4 или 5/8
- распространенность эолийских или локрийских звукорядов
- совместимость эолийских или локрийских модусов, которую принято называть «таронским» ладом
- «игра» эолийских и дорийских модусов.

Ключевые слова – колыбельная, традиционный, Тарон, Талин, звукоряд, музыкальный диалект, этнографический регион.

THE LULLABIES OF TARON REGION

Ani Hakobyan

Abstract

The article examines the lullabies of one ethnographic zone, the historical Taron. Many of the lullabies were recorded outside the historical homeland of songwriting, but clearly express the features of the region's musical dialect. When we say "Taron", we mean, first of all, the most musical areas of Mush-Sasun, from where there was a large migration into modern Aragatsotn and Shirak. As a result, we collected 10 samples from the mentioned regions, nine of which were published in different collections, and one sample, which was distributed orally, but in an unpublished state, was decoded by us.

The studies of these samples confirmed the unique musical thinking of the ethnographic region, which is reflected in the modes, intonation, range, metrhythm, and the connection of the melody and the text in them.

Thus, at the moment, having 10 samples of the zone of interest, which may be replenished in the future, we can draw some conclusions:

- most of them are *traditionally transmitted* examples of the genre, which have
- small range (diapason), arising from this
- meditative nature
- size 5/4 or 5/8
- prevalence of Aeolian or Lokrian mods
- compatibility of these two: what is commonly called the "taron" mode
- "game" of the Aeolian and Doric modes.

Key words – lullaby, traditional, Taron, Talin, scale (mode), musical dialect, ethnic region.

ՀԱՖԵԶԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ ԱՅԴԻՆ ԱՂԴԱՇԼՈՒԻ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Զահրա Մալեքի (ԻԻՀ, Շիրազ)

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4
Էլ. հասցե՝ sepide_825@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 29.3.2021, գրախոսվել է 2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-216

Ներածություն

Պարսից դասական պոեզիան մարմնավորվեց Իրանի ժամանակակից նկարիչների արվեստում՝ նրանցից ոմանց համար դառնալով գեղարվեստական ներշնչման հիմնական աղբյուրը:

Մեր նպատակն է պարսիկ դասական բանաստեղծների և արդի նկարիչների ստեղծագործական ներքին կապը ուսումնասիրել՝ Հաֆեզի և իրանցի ժամանակակից նկարիչ Այդին Աղդաշլուի օրինակով, քանի որ արվեստագետի կտավներն ամբողջապես սերում են պոեզիայից, և դրանցից լավագույնները կերպարվեստի բարձրարժեք նմուշներ են:

Խոջա Շամս ադ-Դին Մուհամմեդ Հաֆեզ Շիրազի

Խոջա Շամս ադ-Դին Մուհամմեդ Հաֆեզ Շիրազին (1352-1389) XVIII-XIX դդ. թարգմանվել է եվրոպական մի շարք լեզուներով և հռչակ ձեռք բերել արևմտյան գրական շրջանակներում: Հաֆեզի դիվանը կամ գազելների ժողովածուն պարունակում է 500 բանաստեղծություն: Հաֆեզը՝ պարսից գրականության խոշորագույն գազել երգողը, իրար շաղկապեց Ռումիի (Մոլանայի) միստիկ բանաստեղծությունը և Սաադիի սիրային գազելները՝ իր գազելներում ներմուծելով փայլուն նորարարություն: «Գերմանացի հանճարեղ գրող Գյոթեն իր հանրահայտ «Արևմտյան-արևելյան դիվանը» գրել է Հաֆեզի ազդեցությամբ և գրքի երկրորդ գլուխը վերնագրել է «Հաֆեզնամե», որտեղ բանաստեղծություններ է նվիրել Հաֆեզի մեծարմանը»¹: Գերմանացի հայտնի բանաստեղծ ու փիլիսոփա Նիցշեն ևս, իր

¹ Խորամշակի Բահադին 2006, 36:

«Իսրաւներ և գրույցներ» գրքում, «Հաֆեզին» վերնագրով բանաստեղծություն է նվիրել գազելների արքային:

Իրանում շատերը Հաֆեզին ճանաչում են որպէս սուրբ մարդ, իսկ նրա շիրմին այցելությունը համարում ուխտագնացություն. «Այցելությունը նրա շիրմին կատարվում է կրոնական հատուկ ծիսակարգով»²:

Հաֆեզի բանաստեղծական աշխարհը սպիրիտուալ/ոգեղէն է և փիլիսոփայական, հետևաբար դժվար է այն արտահայտել պատկերմամբ, քանի որ փոքր-ինչ հեռու է կերպարվեստի աշխարհից: Հաֆեզի բանաստեղծությունների պատկերումը հնարավոր է կատարել միայն մտքում: Նրա գազելների բառերը բազմանշանակ են և ընդհանուր, անորոշ իմաստներ ունեն. ամեն ոք նրա տողերի իր մեկնաբանությունն ու ընկալումն ունի: Իրանական պոետիկայի տեխնիկաներից մեկը բազմիմաստ ու բազմանշանակ խոսելն է, այսինքն՝ մի բառից կարելի է տարբեր իմաստներ ընկալել: Այս տեխնիկան շատ է օգտագործել Հաֆեզը: Նրա պոեզիայի առանձնահատկություններից են նաև թեմաների ընդարձակությունը և լայն ընդգրկումները մեկ գազելի շրջանակում:

«Հաֆեզը ուշադրությամբ էր գրում իր գազելները, և նրա համար մեծ նշանակություն ունեին ուրիշների վերլուծությունն ու մեկնաբանությունը: Նա ցանկանում էր, որ իր գործերը լինեն բացառիկ և ուժեղ: Բանաստեղծն ապրում էր իր հայրենի քաղաքի և մարդկանց շրջանում, երբեք իր կյանքում դուրս չի եկել Շիրազից»³:

Այդին Աղդաշլունի «ճմռթված մանրանկարչությունը»

Հաֆեզի բանաստեղծությունների միջոցով Իրանի ժամանակակից կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչ Այդին Աղդաշլուն իրանական դիմանկարում և մանրանկարչության մեջ ներմուծեց սյուրռեալիստական ոճը և ստեղծեց նոր ոճ՝ «ճմռթված մանրանկարչություն»: Ի պատասխան այն հարցին, թե ինչո՞ւ է ճմռթում իր մանրանկարները, արվեստագետը պատասխանել է. «Ես հետաքրքրվում և սիրում եմ դիմանկարը, ուստի ընտրել եմ այս արժեքավոր թեման, գուցե մեկ այլ արվեստագետ ուրիշ չափանիշով է ընտրել այն: Եթե արվեստագետը ցանկանում է խոսել անցյալում ձեռք բերված գեղեցկության մասին և ափսոսանք հայտնել նրա

² Խորամշախի Բահադին 2006, 40:

³ Նիագբերմանի Սաիդ 1985, 46:

վերանալուց ու ճմռվելուց, գուցե ընտրի գեղագրություն, դիմանկար կամ փորագրություն: Ընտրության չափանիշը կախված է ժամանակակից արվեստագետից»⁴:

شعر: غنيمت دان و می خور..حافظ غزل شماره

*Առիթը պատերի համարիր ու գինի ըմպիր ծաղկաստանում,
Քանի որ հաջորդ շաբաթ ծաղիկն այլևս չի լինելու:*

Աղդաշլուն ճմռվել է Ռեզա Աբբասիի կտավը (նկ. 1): Դեղին ֆոնի վրա պատկերված է կապույտ հագուստով երիտասարդ՝ կապույտ ու կանաչ գոտիով և գունային բացառիկ գեղեցիկ ներդաշնակությամբ: Ձախ ձեռքում կուծ է բռնել, աջ ձեռքում՝ գինու գավաթ: Ֆիգուրը նստած է դեղին ֆոնի վրա: Դեմքը եռակողմ թեքություն ունի՝ ամենայն գեղեցկությամբ, հանդարտությամբ ու վեհությամբ: Աղդաշլուն նկարել է Ռեզա Աբբասիի կտավն իր բոլոր մանրամասնություններով, նրբագեղությամբ և ճմռված ձևով: Ռեզա Աբբասիի այս ստեղծագործությունը, որ պետք է հարթ ու կոկիկ կերպով դրվեր թանգարանում և պահպանվեր հատուկ ուշադրությամբ, այստեղ դրված է անկարգ ու ճմռված վիճակում: Ոսկյա մի գիծ է անցնում աջ կողմի անկյունից դեպի վերև և դիտողի աչքը ներքևից ուղղորդում դեպի վերև: Լույսի աղբյուրը վերևից է՝ նկարի աջ կողմից: Նկարի շրջանակի վերևի հատվածում կանաչի մեջ Հաֆեզի գազելներից մեկ տող գրված է դեղինով, կապույտով և մանուշակագույնով՝ ստեղծելով հաճելի համադրություն: Մեր կարծիքով, այս ստեղծագործության երանգավորումը չափազանց գեղեցիկ է և ունի առանձնահատուկ գրավչություն, այն ունի ավելի խոր իմաստ, քան մեր մեկնաբանությունը:

Սակայն մյուս գործում (նկ. 2) գույների հակադրությունն ավելի թույլ է արտահայտված, և ամբողջ կտավում գերակայում է մոխրագույնը: Կտավի չեզոք գույների՝ մոխրագույնի և բեժի ֆոնի վրա երևում են ֆիգուրի հագուստի նարնջագույնը և կապույտ կադրը, որի մեջ գրված է մի տող բանաստեղծությունից: Ասես, խամրած պատկերին շունչ է հաղորդվել այդ գույներով:


(شعر: در زلف چون ... (նկ. 3)

*Ո՛վ սիրտ իմ, մի՛ խճճվիր որսապարանի պես նրա վարսերում,
Այնպեղ հաղված գլուխներ կտեսնես՝ անմեղ ու առանց հանցանքի:*

⁴ Նկարչի հետ անձնական զրույցից:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3




Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8

Սա ևս մեկ այլ ստեղծագործություն է Աղդաշլուի «Կործանման հուշեր» շարքից և սակավաթիվ գործերից մեկն է, որտեղ արվեստագետը ամենայն մանրամասնությամբ է նկարել ֆոնը, մինչդեռ Աղդաշլուի գործերում հաճախ այն միագույն է լինում: Այստեղ գունավորման եղանակը և գրչանկարը նմանվում են Ռեզա Աբբասիի նկարներին: Ֆիգուրները կադրի մեջտեղում են նկարված և քիչ թեքված են մեկը մյուսի կողմը: Հաֆեզի բանաստեղծություններին համահունչ՝ «Ձեռքերն ինչպես գոտի օղակվել են սիրեցյալի մեջքին, և գլուխները կորցրել են ինքնությունը»:

Նկարի ներքևում հեղինակն իր ստորագրության և թվականի կողքին գրել է. «Նկարվել է տրամադրության խառնաշփոթությամբ»: Այս նկարում տեսնում ենք սիրահարին ու իր սիրեցյալին, դաշտը, ծառը, գինու գավաթը և սիրեցյալի մեջքին օղակված թևը: Կտավում մեր ուշադրությունը գրավում է առաջին հերթին ֆիգուրների կանգնելու ձևը: Կինը յուրահատուկ ձևով կանգնել և ձեռքերը բարձրացրել է իր գլխի շուրջ: Գոտկատեղում նրբությամբ երևում են հագուստի կտորի ծալքերը, որ առաջացել են սիրահարի ձեռքի հպումից:

Ձեռքերի և մատների հանգույցները պատկերված են գեղեցիկ և համամասնությամբ: Պատկերի ծախ կողմում տեսնում ենք գինու ապակե սափոր, որի վրա նկարված է չինական զարդապատկեր՝ լեռներում թռչող վիշապ: Սիրեցյալի գույնը կապույտ է, սիրահարինը՝ դեղին: Երկինքը կապույտ է, իսկ հողը կրեմագույն և դեղին՝ երկնային և երկրային սեր: Կնոջ հագուստը ցերեկային երկնքի պես պարզ է և մաքուր, առանց որևէ նախշի ու զարդի, միայն ծալքերի վերջնամասում մի փոքրիկ հատվածում դառնում է կարմրավուն: Տղամարդու հագուստը, ընդհակառակը, հողագույն կամ բեժ է և նախշազարդված է տարբեր բույսերի ու կենդանիների մանր հարդարանքներով: Ամեն ինչ նկարված է մանրամասնությամբ և անթերի, միայն դեմքերը քերթված են և անէացած, որպեսզի անհետանան:

Իրանական դիմանկարում դեմքը ամենակարևոր մասն է: Խայամի ու Հաֆեզի բանաստեղծություններում բազմիցս գովերգվում է սիրեցյալի երեսը, դեմքը: Աղդաշլուն ոչ միայն անհետացրել է յարի դեմքը, այլ նաև ֆեմինիստական դիտանկյունից յարը մշտապես կին չէ, այլ կարող է լինել նաև տղամարդ: Գուցե հարց առաջանա, թե ինչո՞ւ անհետացնել, ինչո՞ւ թաքցնել, դեմքերն ինչո՞ւ պետք է խաթարվեն: Այստեղ պետք է հիշեցնենք իսլամական դիմանկարի մի առանձնահատկություն՝ դա կրոնավոր սրբերի դիմանկարի պատկերման արգելքն է:

Երկու կտավները (նկ. 4/5) մոտավորապես իրար նման են, այստեղ ևս թուղթն օդում ճմռված է: Կադրի վերևում գրված է Հաֆեզի գազելներից մեկ տող: Ֆիգուրները նկարի մեջտեղում են և հակված են դեպի ներքև: Կապույտ ֆոնը դիտողի մոտ տպավորություն է ստեղծում, թե ֆիգուրն ասես օդում ճախրում է: Գույներն ամբողջովին բնորոշ են իրանական-իսլամական արվեստին, որոնք կապույտի ու դեղինի գունային գամմայում են: Այս գործում ինչ-որ տեղ նկատելի է նաև անգլիացի էքսպրեսիոնիստ նկարիչ Ֆրենսիս Բեկոնի գործերին հատուկ կոպտությունը/ագրեսիան:

Մյուս երեք գեղանկարներում (նկ. 6, 7, 8) մեջբերված է միևնույն բանաստեղծական տողը, այսինքն՝ գեղանկարչությունը զուգակցվել է վայելչագրությանը, իսկ գրությունը երիզված է զարդանախշերով: Նախշերիզները կամ զարդանախշ երիզները («թագիիբը») նրբագեղ նախշեր են, որոնք շրջանակի պես դրվում են կրոնական, գիտական, մշակութային, պատմական, բանաստեղծական գրքերի էջերում՝ տեքստի շուրջ: Այս արվեստը տարբեր ձևերով առկա է բազմաթիվ երկրներում և շատ ժողովուրդների մոտ, օրինակ, Եվրոպական մատյանների զարդանախշերն ու հարդարանքները շատ տարբեր են իրանականից: Եվրոպական մատյանների զարդանախշերում կարելի է տեսնել կենդանական-բուսական հարդարանք (խաղողի վազ և գունավոր տերևներ, երբեմն՝ նաև թռչուններ, կենդանիներ), մարդկանց տարբեր դիմապատկերներ, ֆիգուրատիվ նկարներ և բնության տեսարաններ:

Այստեղ տեսնում ենք, որ լույսը վերևից իջնում է նկարի վրա: Գծանկարները ճմռված են, պատռված և այրվում են: Երեք շրջանակում էլ թուղթն օդում առկախ վիճակում է, կադրի կենտրոնում, նկարների այրվելն ու վերացվելը մեզ հիշեցնում են Խայամի կժերն ու գինու գավաթները, որոնք գեղեցկության բարձրակետում մեկ հարվածով փշրվում են ու հողի վերածվում:

Բացի մեկ գործից, որը նման է Ռեզա Աբբասիի գեղանկարներին, մյուս երկու պատկերներում Աղդաշլուն իր դիտողին ներկայացնում է այլ պատկեր: Այստեղ ուղղակի ներառված է բանաստեղծական մեկ տող, և այն տեղադրված է ճմռված ու այրվող կադրում, որ բաց է թողնված օդում: Իհարկե, դրանք տձև ու տգեղ կերպով չեն ճմռվել:

Այդին Աղդաշլուի մյուս գործերում Հաֆեզի և Խայամի բանաստեղծական տողերը պատկերված են ուրիշ արվեստագետների՝ Եվրոպացի նկարիչների կամ Ռեզա Աբբասիի գործերով, սակայն այստեղ Աղդաշլուն

ուղղակիորեն է օգտվել Հաֆեզի բանաստեղծական տեքստից և մեկ տող ներառել իր կտավում:

Եզրակացություններ

Պարսից դասական պոեզիան մարմնավորվեց Իրանի ժամանակակից նկարիչների արվեստում՝ նրանցից ոմանց համար դառնալով գեղարվեստական ներշնչման հիմնական աղբյուրը: Ոգեշնչվելով Հաֆեզի պոեզիայից՝ իրանցի ժամանակակից նկարիչ Այդին Աղղաշլուն ստեղծեց ամբողջապես պոեզիայից սերող կտավներ, որոնցից լավագույնները կերպարվեստի բարձրարժեք նմուշներ են: Հաֆեզի բանաստեղծությունների միջոցով Այդին Աղղաշլուն իրանական դիմանկարի և մանրանկարչության մեջ ներմուծեց սյուրռեալիստական ոճը, և ստեղծվեց նոր ոճ՝ «ճմրդված մանրանկարչություն»:

Գրականություն

Խորամշակի Բահադին 2006, Հաֆեզ-նամեհ՝ Հաֆեզի բառերի, նշանների, հանգուցային հասկացությունների և դժվար տողերի բացատրություն, Ա գիրք, Թեհրան, Գիտական ու մշակութային հրատ., 36 էջ:

بهاء الدين خرمشاهی حافظ نامه، شرح لغات، علایم، مفاهیم کلیدی و ابیات دشوار حافظ، بخش اول. تهران. انتشارات علمی و فرهنگی. 2006. کل صفحات 764. ص 36.

Նիագբերմանի Սաիդ 1985, «Հաֆեզագիտություն», Թեհրան, «Փաժանդ» էջ 46:

سعید نیازکرمانی «حافظ شناسی». تهران. نشر پاژند. 1985. صفحه 46. کل صفحات 173.

ՀԱՖԵԶԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐՏԱՅՈՒՆՈՒՄՆ ԱՅԴԻՆ ԱՂԴԱՇԼՈՒԻ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Զահրա Մալեքի (ԻԻՀ, Շիրազ)

Ամփոփում

Պարսից դասական պոեզիան մարմնավորվել է Իրանի ժամանակակից նկարիչների արվեստում՝ նրանցից ոմանց համար դառնալով գեղարվեստական ներշնչման հիմնական աղբյուրը: Ուսումնասիրելով պարսիկ դասական բանաստեղծների և ժամանակակից նկարչների ստեղծագործական ներքին կապը Հաֆեզի և իրանցի ժամանակակից նկարիչ Այդին Աղղաշլուի օրինակով՝ ակնհայտ է դառնում, որ վերջինիս կտավներն ամբողջապես սերում են պոեզիայից, և դրանցից լավագույնները կերպարվեստի բարձրարժեք նմուշներ

են: Հաֆեզի բանաստեղծությունների միջոցով Այդին Աղդաշլուն իրանական դիմանկարի և մանրանկարչության մեջ ներմուծեց սյուրռեալիստական ոճը, և ստեղծվեց նոր ոճ, «ճմռված մանրանկարչություն»:

Բանալի բառեր՝ Հաֆեզ, Այդին Աղդաշլու, պարսից դասական պոեզիա, իրանի ժամանակակից կերպարվեստ, իրանական դիմանկար, իրանական մանրանկարչություն, «ճմռված մանրանկարչություն»:

ОТОБРАЖЕНИЕ ПОЭТИЧЕСКОГО МИРА ХАФЕЗА В КАРТИНАХ АЙДИНА АГДАШЛУ

Захра Малеки (ИРИ, Шираз)

Резюме

Классическая персидская поэзия, воплотившись в искусстве современных художников Ирана, служила для них основным источником художественного вдохновения. Современный иранский художник Айдин Агдашлу создал ценнейшие образцы изобразительного искусства на основе творчества Хафеза – талантливого представителя классической персидской литературы. Поэзия Хафеза вдохновила Айдина Агдашлу на привнесение в портретную живопись и миниатюру сюрреалистического стиля, способствовавшего рождению нового стиля «мятой миниатюры».

Ключевые слова – Хафез, Айдин Агдашлу, персидская классическая поэзия, современное иранское изобразительное искусство, иранский портрет, иранская миниатюра, «мятая миниатюра».

REFLECTION OF HAFEZ'S POETIC WORLD IN THE PAINTINGS OF AYDIN AGHDASHLOO

Zahra Maleqi (IRI, Shiraz)

Abstract

Classical Persian poetry, when embodied in the oeuvre of the contemporary artists of Iran, was becoming for some a major source of artistic inspiration. The article analyzes the inner creative bond between classical Persian poets and present-day artists, exemplified by Hafez and the modern Iranian painter Aydin

Aghdashloo, whose all canvases stem from poetry, and the best of them are considered among the most valued achievements of visual arts. Hafez's verses were conducive to introducing surrealist style to Iranian portrait and miniature by the painter Aydin Aghdashloo, who has created thereby a new style of "crumpled miniature".

Key words – Hafez, Aydin Aghdashloo, classical Persian poetry, contemporary Iranian fine art, Iranian portrait, Iranian miniature, "crumpled miniature".

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՐԱՐԱՔԱՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՈՒՍԱԳՈՏԻՆԵՐԸ

Բենիկ Վարդանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ vbenik@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 23.02.2021, գրախոսվել է 19.06.2021,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-226

Ներածություն

Կուրարաքայան միջագետքը բնակեցնող հասարակությունների կյանքում բրոնզի դարում տեղի ունեցած տեղաշարժերը հանգեցնում են ռազմական վերնախավի ձևավորմանը:

Կախված համայնքից և ռազմական վերնախավի աստիճանակարգից՝ առանձնաշնորհյալներն ունեին հանդերձանքի, ունեցվածքի տարբերակման խորհրդանշանների համակարգ, որոնց թվում էր ուսագոտին¹: Այն ռազմական վերնախավի տոնական հանդերձանքի մասն էր կազմում՝ խորհրդանշելով կրողի առանձնաշնորհությունը:

Ուսումնասիրության պատմությունը և ժամանակագրական ընդգրկումը

Քննվող տարածքների ուսագոտիներն առանձին հետազոտության չեն ենթարկվել: Սույնով ուսումնասիրվում են Հարավային Կովկասի և Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական համալիրներում վավերագրված ուսագոտիները:

¹ Լանջակապը սահմանվում է որպես «համազգեստի վրա ուսից լանջով շեղակի (ծախից աջ կամ հակառակը) ձգվող ժապավեն կամ գոտի» (Աղայան 1976, 515), իսկ լանջագոտին և ուսագոտին նույնն են, ինչ ուսափոկը: Ուսափոկը սահմանվում է որպես «(1) սուր՝ ատրճանակ ևն կրելու փոկ, որը կախում են ուսից» (Աղայան 1976, 1498): Ուսակապը «ուսին ամրացվող՝ ուսի վրայով ձգվող կապ՝ ժապավեն, երիզ» է, նաև (2) ուսի վրայով զգվող ժապավեն՝ որպես տարբերանշան (Աղայան 1976, 1498):

Հետազոտության ժամանակագրական սահմանները ընդգրկում են մ.թ.ա. III հազարամյակի վերջերից մինչև մ.թ.ա. I հազարամյակի կեսերը (XXIII-VII դ. մ.թ.ա.):

Ուսագոտիների պատկերման և հայտնաբերման հնագիտական համատեքստը

Ուսագոտիների հնագիտական փաստագրումներ կամ պատկերներ են հայտնի՝ **ա)** թաղման ծեսի համատեքստում՝ դամբանային համալիրներից, **բ)** բրոնզե անոթներից, **գ)** բրոնզե (գ-1), քարե (գ-2) և կավե մարդակերպ արձանիկներից (գ-3):

Ըստ հայտնաբերման հանգամանքների՝ ուսագոտիները փաստագրվել են դամբանային համալիրներում իրենց նախնական տեղում (*insitu*) և/կամ թաղմանն ուղեկցող գույքի պատկերագրության մեջ (I), «սրբավայրերում»՝ որպես նվիրատվական (ոտիվային) առարկա (II), առարկաներ, որոնց հայտնաբերման հանգամանքներն անհայտ են (III):

Ուսագոտին՝ որպես թաղումն ուղեկցող գույք

Ա) Ուսագոտու վաղագույն օրինակներից մեկը հայտնաբերվել է Շիրակավանի N 44 ՌԻԲ դամբանում: Դամբանախցի երկայնական պատերի միջակայքում հայտնաբերվել է փոխադրամիջոցի փայտե քառանկյուն թափք, որի վրա կծկված վերջույթներով, գլխով դեպի հյուսիս, թաղված էր աջ կողքի վրա պառկած մի աճյուն² (հավանաբար՝ տղամարդ) (նկ. 1): Վերջինիս կրծքավանդակին դրված էր բրոնզե կոճգամերով զարդարուն կաշվե առարկա, որը պեղող հնագետները բնորոշել են որպես գոտի³ (նկ. 1-2): Սպառազինության մաս էին կազմում կաշվե առարկայի տակ բրոնզե ծայրապանով փայտե պատյանի մեջ դրված բրոնզե դաշույնը և որպես «դանակ-քերիչ» բնորոշված բրոնզե մի առարկա⁴:

Դամբանից հայտնաբերված կաշվե իրի հետագա ուսումնասիրությունը մեզ նոր ենթադրությունների հիմք տվեց:

² Թորոսյան և այլք 2002, 33-34:

³ Թորոսյան և այլք 2002, 33, 45:

⁴ Թորոսյան և այլք 2002, 34:

ՀԱԱՊՊ⁵ թանգարան հանձնված առարկան բեկորային է, մինչդեռ պահպանված երկարությունը 50-55 սմ է (ՀԱԱՊՊԹ 5973/64): Այն երկշերտ կաշվե թիթեղից բաղկացած, եզրային հատվածներում միմյանց կարելու համար նախատեսված փոքր անցքերով առարկա է, որի վերին շերտին ագուցված են տարբեր տրամաչափի բրոնզե կոճգամեր: Առարկայի եզրերը նույնպես զարդարված են երկու շարք կոճգամերով, որոնց միջակայքում նույն տեխնիկայով արված են տարբեր պատկերներ. ռոմբ, եռանկյունի, կեռխաչ և այլն (նկ. 2):

Թեև այն բնորոշվել է որպես գոտի⁶, սակայն, դատելով դամբանախցում այդ առարկայի դիրքից, դրա տակ գտնված բրոնզե դաշույնի և անվաճկ զարդի առկայությունից, հավանական էմ համարում, որ այն եղել է *ուսագոտի*⁷: Հաշվի առնելով խցում աճյունի դիրքը (նկ. 1), ուսագոտին կապված է եղել աջ ուսից դեպի ձախ թևատակ, որտեղ էլ, ըստ երևույթին, կտորից գոտու տակ ամրացված են եղել բրոնզե դաշույնն ու «դանակ-քերիչը» և անվաճկ պոչուկավոր բրոնզե իրը (նկ. 1):

Դամբանային համալիրից ևս մեկ ուսագոտի հայտնաբերել է Հ. Մնացականյանը Մարտունու շրջանի Աստղածոր գյուղի դպրոցի բակում պեղված N 1 դամբանից:

Առաջին դամբարանում բացվել էր 13 մարդու կմախք, որոնք թաղվել են նստած դիրքով: Սրանցից ոչ մեկի մոտ բրոնզե զենքեր, զործիքներ, զարդարանքի պարագաներ չեն հայտնաբերվել, բացառությամբ երկու կմախքից, որոնցից մեկի գանգի մոտից հավաքվեցին մի քանի ուլունքներ, իսկ մյուս կմախքի ձախ թևի բազուկին առկա էր մեկ ապարանջան, մատին՝ հասարակ մատանի: Հակառակ դրան, դամբանի կենտրոնում պառկած կմախքի շրջապատից գտնվել են բրոնզե զենքեր, մի քանի ապարանջաններ, մեծ քանակությամբ ուլունքներ: Կմախքի մեջքին կապած էր բրոնզե գոտի, իսկ երկրորդ գոտին գցած էր աջ ուսին, որի մի կողմը անցել էր ձախ թևատակ (գոտին հագել էր շեղակի): Կենտրոնում պառկած կմախքի շրջապատից և նրա ոտքերի կողմից գտնվեցին ավելի

⁵ Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան (ՀԱԱՊՊԹ):

⁶ Թորոսյան և այլք 2002, 33, 45:

⁷ Խորին երախտագիտություն եմ հայտնում պ.գ.թ. Լ. Պետրոսյանին՝ Շիրակավանի պեղումների լուսանկարչական արխիվը տրամադրելու և օգտվելու թույլտվության համար:

քան 13 մեծ ու փոքր կավամաններ⁸: Ստացվում է, որ բրոնզե երկու գոտիներից մեկը հանդիսանում է գոտի, մյուսը՝ ուսագոտի: Հատկանշական է, որ այս դամբանից հայտնի են զենքի մի քանի նմուշներ՝ կլոր կոթառով բրոնզե երեք նիզակ (ՀՊԹ 1908/39, 56-57), սուր և դրա դաստակները (ՀՊԹ 1908/39, 44), բրոնզից և երկաթից տասնմեկ դաշույնները (ՀՊԹ 1908/40, 46-55), նետասլաք (ՀՊԹ 1908/43): Ակնհայտ է, որ գործ ունենք առանձնաշնորհյալ կարգավիճակով զինվորական անձի թաղման համալիրի հետ:

Հավանական է, որ ուսագոտի է եղել նաև Հասանլուի IV շերտի SK 105-106 դամբանում հայտնաբերված մետաղական առարկան (մ.թ.ա. X-IX դդ.): Խցում թաղված էին երկու աճյուն: Կծկված դիրքովը տղամարդ էր, որի գանգից 35 սմ հյուսիս դրված էր մետաղական առարկաների խումբ՝ երկու բրոնզե գոտի (մեկը՝ կոճգամներով զարդարված, մյուսը՝ անզարդ), գոտիների կապողակներ, կոճգամներ, մեխեր, բրոնզե թերի դաշույն, ունեղի և այլ իրեր (նկ. 3): Բրոնզե գոտիները դրված էին սրի տակ⁹: Անզարդ գոտին (98x14.25սմ) եզրերին ուներ կաշվե կամ կտորի վրա ամրացման համար անցքեր: Երկրորդ գոտին (ուսագոտին, 65x5.5սմ) զարդարված էր չորս շարք կոճգամներով (նկ. 3, A, C): Գանգի հարևանությամբ դրված էր բրոնզե մի քրեղան, իսկ ձեռքի հատվածում՝ մեկ մետաղական անոթ (նկ. 3, E, F): Հեղինակները հավանական են համարում գոտիներից մեկի լանջակապ/ուսագոտի լինելը, սակայն չեն բերում դրա համար բավարար հիմնավորումներ¹⁰:

Այն, որ Հասանլուի նշված դամբանում դրված գոտիներից մեկը կարող էր իրոք ծառայել որպես ուսագոտի, հուշում է Շիրակավանի և Աստղածորի «զինվորի», Կերենի «քրմական» դամբանից և Մելաանիից հայտաբերված տղամարդու կավե արձանիկների պատկերագրության վերլուծությունը: Արձանիկների ուսերին պատկերված են ուսագոտիներ, իսկ գոտկատեղում՝ գոտի: Հավանաբար, Հասանլուի պարագայում ևս, բրոնզե առարկաներից մեկը ծառայել է որպես ուսագոտի, մյուսը՝ գոտի, որոնց միացման հատվածում եղել է կախված զենք:

⁸ ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 341, 30-31:

⁹ Danti, Cifarelli 2015, 99-101.

¹⁰ Danti, Cifarelli 2015, 99.

Ուսագոտին Քարաշամբի գավաթի պատկերագրության մեջ

Բ) Ուսագոտու պատկերումներ տեսնում ենք մ.թ.ա. XXIII-XXII դարերով թվագրվող Քարաշամբի Մեծ դամբանաբլուրից հայտնաբերված արծաթյա պատկերազարդ գավաթի երրորդ երիզի կերպարների վրա (նկ. 4)¹¹: Այստեղ պատկերված է նիզակակիրների կողմից խոցված սուսերակիր զինվոր: Պատկերագոտու երկրորդ տեսարանում առյուծը հոշոտում է ցլին, իսկ երրորդում պատկերված են *կենդանու «պոչերով»* գլխատված զինվորներ: Այս պատկերախումբն ավարտվում է առյուծի գլխով արծվի մարմնով և գիշատչի վերջույթներով կենդանու (Անգուդ) պատկերով: Երրորդ երիզի չորրորդ պատկերախումբը մահապատժի տեսարան է, որտեղ *կենդանապոչ* ծնկաչոք մարտիկը պատկերված է թևատարած դիրքով, որի սաղավարտը կամ դիմակը հաղթանակած զինվորի նիզակի հարվածից թեքվել է մի կողմ: Այս երիզի վերջին մասը գահավորակին բազմած «արքայի» տեսարանն է, որի գլխավերևում արևի սկավառակն է: «Արքան» ձեռքում սակր է բռնել, իսկ նրա առջև տեսնում ենք սպանված զինվորների գլուխների կույտը և զենքի ռազմավարը¹² (նկ. 4): Գլխատված զինվորների կրծքավանդակներին պատկերված են խաչաձև կապված ժապավեններ (ուսագոտի), իսկ գոտկատեղին ընդգծված են գոտիները: Այն, որ գավաթի պատկերագրության չորրորդ գոտում սուսերակիր զինվորների կրծքավանդակներին խաչաձև կապված ժապավենը չի խորհրդանշում վերջիններիս գերության մեջ հայտնվելու և/ կամ կապվելու հանգամանքը, վկայում է պատկերագոտու աջակողմյան տեսարանը, որտեղ դեռ մարտի մեջ գտնվող սուսերակիր զինվորը գլխատված չէ: Նիզակակիր զինվորն այստեղ պատրաստվում է խոցել սուսերակիր մարտիկին, որը կրծքավանդակին ունի խաչաձև կապված ժապավեններ, իսկ գոտկատեղին՝ գոտի: Նիզակակիր զինվորի առաջ ծնկաչոք սուսերակիր զինվորը, որի սաղավարտը նիզակի հարվածից թեքվել է մի կողմ, կրկին կրում է խաչաձև կապված ժապավեններ: Նույնը տեսնում ենք արդեն գլխատված զինվորների հանդերձանքում: Խաչաձև կապված ուսագոտիները, գոտկատեղում կապված գոտիների համադրությամբ, ճիշտ է, հան-

¹¹ Оганесян 1993, Ավետիսյան, Փիլիպոսյան 2007:

¹² Ավետիսյան, Փիլիպոսյան 2007, 89-91:

դիպում են հազվադեպ, սակայն ակնհայտ է, որ դրանք զինվորական հանդերձանքի մաս են կազմում¹³:

Ուսագոտին արձանադրոշների և արձանների համատեքստում

Մարդակերպ բրոնզե արձանադրոշների և արձանների վրա ուսագոտու պատկերներ հանդիպում են Կուրարաքայան միջագետքի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի համալիրներում (Շիրակավան, Լճաշեն, Շիլդա, Մելասանի):

Գ-1. ա) Շիրակավանի N 17 դամբանում բացվել է աջ կողքի վրա պառկած աճյուն: Խցի հարավարևելյան անկյունում դրված էր բրոնզե կաթսա, մեջը՝ խոշոր եղջերավոր անասունի ոսկորներ և մեկ սափոր: Կմախքի աջ ձեռքի մոտ էր դրված զինվորի, առյուծի և թռչունների պատկերով արձանադրոշը, իսկ ձախ ձեռքի վրա՝ բրոնզե մի թաս¹⁴:

Արձանիկի բարձրությունը 24 սմ է (նկ. 5), որից միայն պատվանդանը՝ 11.6 սմ: Պատվանդանը պատրաստված է քառակող ձողից (1.8x1,5 սմ), որը յուրաքանչյուր կողմից զարդարված է ուղղահայաց գծերով: Պատվանդանի ստորին մասում առկա է հորիզոնական կտրվածք, որով այն երկճյուղվում է՝ ստանալով 7.5 սմ երկարության խարսխածն հատված, որն ունի 3.3 սմ բարձրությամբ ելուստներ: Այդ երկու ելուստների ծայրերին տեղադրված են թռչունների քանդակներ: Աջակողմյան ճյուղին լայն բացված չանջերով, արտահայտիչ բաշով առյուծի քանդակն է: Կենդանու աչքերը պատկերված են փոսիկներով, որոնք լցված են եղել կապույտ նյութով: Առյուծի ձախ ականջի մոտ առկա է կապողակ (նկ. 5): Արձանիկը թվագրվում է մ.թ.ա. XV-XIV դարերով:

Հաջորդ քանդակը (բարձր.՝ 12 սմ) պատկերում է տղամարդու, որը կրում է գոտի և ուսագոտի (նկ. 5): Վերջինս սպառազինված է եռանկյունաձև ծայրը մինչև ծոծրակին հասնող սաղավարտով, վահանով, ձախ թևատակում՝ անորոշ բնույթի մի զենքով (նկ. 5, բ, դ): Տղամարդու հայացքն ուղղված է վեր, ունի շրջանաձև փոսիկավոր աչքեր, որոնք, ինչպես և՛ առյուծինը, լցված են եղել կապույտ նյութով: Աջ ձեռքով տղամարդը բռնել է վահան, որը թերի է (այժմ վերականգնված է): Կետանախշերով

¹³ Այլ ուսումնասիրողների կողմից նախկինում նույնպես նշվել է, որ սուսերակիր մարտիկների կրծքավանդակին պատկերվածը խաչաձև ուսագոտի է (գերմ.՝ „kreuzförmig angeordnete Schulterriemen“) (Boehmer, Kossack 2000, 22):

¹⁴ Թորոսյան և այլք 2002, 31, աղ. XIV, 1-4.

զարդարված վահանն *ումքոնավոր է*: Ձախ ձեռքի արտաքին կողմում առկա է կապողակ: Արձանիկն ունի ընդգծված ֆալ: Ուտքերը բացված են ուսերի լայնությամբ, ունեն բարձր քթով կոշիկներ¹⁵: Ձեռքը բռունցք է արված: Տղամարդու աջ ուսից դեպի ձախ թևատակ է իջնում ուսագոտին, որը զարդարված է իրար միացող գալարապարույրներով¹⁶: Գոտկատեղում երևում է գոտին, որի եզրային մասերում արված են երկու գծեր, իսկ դրանց միջակայքում՝ գալարապարույրներ: Ըստ պեղող հնագետների, ձախ թևատակում, ուսագոտու և գոտու միացման մասում պատկերվածը կապարճ է¹⁷, իսկ ըստ Օ. Բոիլայի՝ անորոշ զենք, հավանաբար, ծավալած աղեղ (նկ. 5, ք-1)¹⁸:

Այս առարկայի հանգամանալից զննումով հնարավոր է առանձնացնել մի քանի մանրամասներ: Վերին մասում այն օժտված է օվալաձև ելուստով, որից առիշեղ և վար պատկերված է նեղ, ստորին մասում լայնացող, երկարավուն առարկա: Լայնացող մասին ամրացված է բոլորակվող գլանիկ: Այն, որ այս առարկան չէր կարող լինել կապարճ կամ ծավալած աղեղ, վկայում է նաև համաժամանակյա և համանման արձանիկներում ուսագոտի կրող արձանիկների սպառազինությունը, որտեղ վահանակիր և սաղավարտակիր զինվորների մոտ բացակայում են նետն ու աղեղը, մինչդեռ դաշույնը կամ սուրը կազմում են սպառազինության հիմնական մասը: Այս պարագայում, կարծում եմ, զինվորի ձախ թևատակում պատկերվածը դաշույնի պատյան է, իսկ բռունցքում եղել է դաշույն (նկ. 5, ք-1)¹⁹:

Գ-1. ք) Ուսագոտիների պատկերներ են առկա Լճաշենից հայտնաբերված մարտակառքի բրոնզե քանդակների՝ տղամարդականց արձանիկների վրա (նկ. 6): Մասնավորապես՝ Լճաշենի N 1 դամբանաբլուրի մարտակառքի բրոնզե արձանադրոշն ունի 22.5 սմ բարձրություն: Մարտակառքի թափքին կանգնած են երկու տղամարդ (արձանիկների բարձրությունը՝ 7.2 սմ): Զինվորներից մեկն ունի կատարածև սաղավարտ, իսկ

¹⁵ Թորոսյան և այլք 2002, աղ. XIV, 1:

¹⁶ Նշվել է, որ աջ ձեռքի տակ գտնվող կապարճը պահվում է ուսով անցնող «վազող պարույրներով» զարդարված փոկով (Թորոսյան և այլք 1979, 64):

¹⁷ Թորոսյան և այլք 2002, 46:

¹⁸ Брилева 2012, 121.

¹⁹ Առարկայի վերին օվալաձև ելուստի և գլանակի միացման հատվածն օժտված է պարկի նմանվող հավելումով, որը մեզ հիշեցնում է Շիրակավանի N 44 աճյունի մոտակայքից գտնված կաշվե տոպրակը, որի մեջ դրված էր բրոնզե գուրգ (Թորոսյան և այլք 2002, 33-34):

մյուսը կա՛մ չունի, կա՛մ այն դժվար նշմարելի է (նկ. 6): Ձախակողմյան կերպարն ունի ուսագոտու տակ դրված դաշույն: Աջակողմյան զինվորն անգեն է (ՀՊԹ 2007/1)²⁰: Ճիշտ է, Լճաշենի NN 9-10 դամբանաբլուրներից հայտնաբերված մարտակառքի բրոնզե արձանադրոշների վրա ևս պատկերված են ձախ կողմում մեկական դաշունակիր զինվորների արձանիկներ, սակայն մետաղի վրա գոյացած շերտի պատճառով, վերջիններիս վրա չի նշմարվում ուսագոտին, սակայն դրանց առկայությունը տրամաբանական և խիստ հավանական են համարում:

Գ-1. գ) Շիլդայի սրբավայրը (Կվառելի շրջան, Վրաստան), Ալազանի գետից հյուսիս, ուսումնասիրվել է 1977-1978 թթ.: Քննվող արձանիկը (բարձր.՝ 4.4 սմ) ձեռքերն առաջ պարզած տղամարդ է, որը գոտկատեղում կրում է գոտի և գոտկատեղիի աջ հատվածից սկսվող, աջ ուսով թիկունք անցնող ուսագոտի, որը թիկունքում միանում է գոտուն²¹ (նկ. 7): Այստեղ պատկերված է նաև դաշույնը կախելու հարմարանք: Համալիրը թվագրվում է մ.թ.ա. XIV-XII դարերով:

Գ-1. դ) Համանման մի արձանիկ է հայտնի նաև Կաչրետիից: Արձանիկն ունի սեպաձև քիթ, արտահայտիչ, շրջանաձև աչքեր: Վզին առկա է մեկ օղակից բաղկացած մանյակ: Աջ պարանոցից դեպի ձախ թևատակ է իջնում ուսագոտին: Գոտկատեղում առկա է գոտի, որի աջակողմում ամրացված է դաշույն (նկ. 8)²²:

Գ-1. ե) Մելանիիից հայտնաբերված բրոնզե արձանիկի դեմքը հարթ է (բարձր.՝ 18.7սմ, նկ. 9): Աչքերը և բերանն արված են փոսիկների և ուղղահայաց ակոսի միջոցով: Նա գլխին կրում է կտրված կոնաձև գլխազարդ, իսկ վիզը զարդարված է եռաշրջան մանյակով: Կուրծքը պատկերված է երկու փոսիկների միջոցով: Աջ ուսից դեպի ձախ թևատակ իջնում է ուսագոտի, որից կախված է դաշույն (նկ. 9)²³: Արձանիկը թվագրվում է մ.թ.ա. XIV-XIII դարերով²⁴:

Գ-1. զ) Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Իրանից (հավանաբար, Խուրվինից) գտնված բրոնզե արձանախումբը (բարձր.՝ 11

²⁰ Առարկայի մանրամասն նկարագրությունը հմնտ. Мнацаканян 1957, рис. 8, Есаян 1980, рис. 39, Брилева 2012, 117:

²¹ Майсурадзе, Инанишвили 2004, рис. 9.1, Брилева 2012, 41, кат. 11, 262.

²² Шаншашвили и др. 2014, 266, LXVI, 3.

²³ Նկարագրությունը տե՛ս Пицхелаури 1965, табл. XVI. գծանկարը՝ Брилева 2012, 56:

²⁴ Առկա է նաև արձանիկի ավելի ուշ՝ մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրություն: Հմնտ. Miron, Orthmann 1995, Fig. 201, p. 273:

սմ, լայն.՝ 4.2 սմ): Կատարածև սաղավարտով երկու տղամարդկանց արձանիկները մի ձեռքով բռնել են միմյանց, իսկ մյուս ձեռքերը կախված են ներքև: Արձանիկներն ունեն ուսից դեպի գոտկատեղ իջնող երեք գծերով պատկերված ուսագոտի, որոնք միանում են գոտկատեղիին ամրացված գոտուն (նկ. 10)²⁵:

Ուսագոտիները քարե մարդակերպ արձանների վրա

Ուսագոտիների պատկերումը բնորոշ էր նաև Հայաստանի երկաթեդարյան քանդակագործությանը: Մասնավորապես, այդպիսիք հայտնի են Մրգավանից (Արարատի մարզ), Ջուջևանից (Տավուշի մարզ)²⁶:

Գ-2.ա) Մրգավանի բազալտյա մարդակերպ քանդակի (երկ.՝ 135 սմ) գոտկատեղիում առկա է ռելիեֆ գոտի, որին ամրացված է սուր: Կրծքավանդակին պատկերվածը լայն ուսագոտի է: Քանդակի գլուխը կոտրված է²⁷: Ուսագոտին անցնում է արձանի ձախ ուսից դեպի գոտկատեղի (նկ. 11, ա):

Գ-2.բ) Ջուջևանի արձանի գլուխը կոտրված է: Կրաքարից մարդու այս արձանն ունի ուղիղ, հարթ իրան: Ձեռքերը ծավված են կրծքին: Ձեռքերի միջակայքում, անցնում է ոչ լայն ուսագոտի, որից ինչ-որ առարկա է կախված²⁸: Ուսագոտին անցնում է աջ ուսից դեպի ձախ գոտկատեղի (նկ. 11, բ):

Ուսագոտիները կավե մարդակերպ արձանների վրա

Քննվող տարածաշրջանի երկաթեդարյան հուշարձաններից հայտնաբերված կավե առարկաների մեջ առանձնանում են մարդակերպ արձանիկները, որոնցից հիշատակելի են Կերենի «քրմի» դամբանից և Կապանից հայտնաբերվածները:

Գ-3.1) Կապանից հայտնաբերված կավե մարդակերպ արձանիկն ունի լայն բացված ոտքեր, կողքի պարզած ձեռքեր: Աջ ուսից կրծքավանդակի վրայով ձախ թևատակ անցնում է գծազարդ ուսագոտի: Թևատակերով անցնում է ուսագոտու ևս երկու ժապավեն: Գոտկատեղով է անցնում նույն տեխնիկայով արված գոտին (նկ. 12, ա)²⁹:

²⁵ Curtis, Kruszyński 2002, 67, Pl. 163.

²⁶ Есаян 1980, табл. 47, 1-2, 51, 4.

²⁷ Есаян 1980, 56, табл. 47.1.

²⁸ Есаян 1980, 56, табл. 47.2.


²⁹ Есаян 1980, 57, табл. 51, 4.




Նկ. 1 Շիրակավանի N 44 դամբանի աճյունի դիրքը (Լ. Պետրոսյանի լուսանկարչական արխիվ, N 1 նեգատիվ)




Նկ. 2 Զարդարուն ուսագոտին հայտնաբերման պահին (Լ. Պետրոսյանի լուսանկարչական արխիվ, N 2 նեգատիվ)




Նկ. 3 Հասանլուի SK 105 դամբանի իրավիճակը և ուղեկցող գույքը (Danti, Cifarelli 2015, fig. 18)




Նկ. 4 Քարաշանքի գավաթի երրորդ գուտու պատկերագրությունը (Boehmer, Kossack 2000, Beilage 1)




Նկ. 5 Շիրակավանի N 17 դամբանի բրոնզե արձանադրոշը (Брилева 2012, кат. 326)




Նկ. 6 Լճաշենի N 1 դամբանաբլուրի բրոնզե մարտակառքը (Брилева 2012, кат. 322)




Նկ. 7 Շիրլայից հայտնաբերված բրոնզե արձանիկը (Брилева 2012, кат. 11)




Նկ. 8 Կաչտետիից հայտնաբերված բրոնզե արձանիկը (Шаншашвили и др., 2014, LXVI, 3)




Նկ. 9 Մելանիից հայտնաբերված բրոնզե արձանիկը (Брилева 2012, кат. 24)



Նկ. 10 Իսուրվիից (Իրան) հայտնաբերված բրոնզե արձանախումբը (Curtis, Kruszyński 2002, Pl. 163)



Նկ. 11 Երկաթեդարյան մարդակերպ կոթողներ՝ ա) Մրգավան, բ) Ջուջևան (Есаян 1980, табл. 47, 1-2)



Նկ. 12 Ուշերկաթեդարյան կավե մարդակերպ առարկաներ՝ ա) Կապան (Есаян 1980, табл. 51, 4),
բ) Կերեն (Գնունի 2006, նկ. 1)

Գ-3.2) Կերենում N 64 քարարկղային դամբանի (3x0.8 մ) կենտրոնում հայտնաբերվել է տղամարդու կավե արձանիկ³⁰: Արձանիկի վզին և ձեռքերին առկա է կետագարդ, կրծքին՝ մանյակ, ուսին՝ լանջագոտի, գոտկատեղին՝ գոտի (նկ. 12, բ): Արձանիկը բնութագրվում է հարթ դեմքով, ելուստավոր ճակատով և քթով, իսկ աչքերը և բերանն ընդգծված են խոր անցքով: Նրա ուսին պատկերված լանջագոտին փորագրված է երկու զուգահեռ գծերով, որոնց միջակայքում արված են արևային պատկերներ³¹ (նկ. 12, բ): Ըստ Ա. Գնունու, հավանական է, որ այստեղ պատկերված է բրոնզե վահանիկներով զարդարված կաշվե լանջագոտի: Դամբանը թվագրվում է մ.թ.ա. VII-VI դարերով³²: Ուսագոտիների այլ պատկերներ և փաստագրումներ քննվող տարածաշրջանում մեզ հայտնի չեն:

Քննարկում

Ըստ հիշատակված հնագիտական համալիրների և արտեփաստերի տվյալների, ուսագոտիները եղել են՝ ա) կրծքավանդակին խաչաձև կապված (ՄԲ խումբ), բ) աջ ուսից ձախ գոտկատեղ/թևատակ իջնող, գ) ձախ ուսից աջ գոտկատեղ/թևատակ իջնող (ՈԻԲ խումբ), դ) թևանցուկ (ՈԻԵ խումբ):

Կրծքավանդակին խաչաձև կապված ուսագոտիների պատկերումներ հազվադեպ են հանդիպում: Մասնավորապես, հիշելի են մ.թ.ա. III հազարամյակի վերջերով թվագրվող³³ Գյումուշհաչիքոյի (Gümüşhacıköy, Ամասիայի շրջան, Թուրքիա) երկու մարդակերպ օրինակները³⁴, իսկ մ.թ.ա. II հազարամյակին վերաբերող խաչաձև կապված ուսագոտիների օրինակներ մեզ հայտնի չեն: Նինվեի F սրահի հարավարևմտյան պատի պատկերաքանդակի երկրորդ գոտում պատկերված ձիապանը կրում է խաչաձև ուսագոտի, իսկ գոտու տակ դրված է երկար սուր³⁵:

³⁰ Գնունի 2006, 215:

³¹ Գնունի 2006, 216:

³² Ուսագոտու վրա արված շրջանակների առկայությունից ելնելով, հավանական է, որ փոքր սկավառակ-վահանիկները, որոնք բնորոշվել են որպես հագուստի մաս, եղել են կաշվե ուսագոտու զարդամաս, որոնց կաշվե մասերը կա՛մ չեն փաստագրվել, կա՛մ չեն պահպանվել: Հավանական է, որ Կերենի մարտիկի զարդարուն ուսագոտու նման, կաշվից ուսափոկի մասեր են եղել Կարամուրադի N 11 դամբանի սկավառակները (Nagel, Strommenger 1985, 95, Taf. 64, 3):

³³ Dönmez 2014, 184, 15.

³⁴ Dönmez 2014, 182-197, pl. 1, fig. 1-3.

³⁵ Barnett 1976, Pl. XIX, BM 124935-7. Հմտ. L սրահի BM 124925-6 բարձրաքանդակի, ասորեստանյան հետևակի, հեծելազորի և կառամարտիկների՝ արաբների վրա

Միջին բրոնզի դարում ռազմականացված առաջնորդության ի հայտ գալով³⁶, փաստորեն, ձևավորվում են նաև առաջնորդի տոնական/հաղթական հանդերձանքի որոշակի սկզբունքներ, որի կարևոր բաղադրիչն էին սուրը (դաշույնը), գոտին և ուսագոտին:

Քննվող ուսագոտիների զգալի խումբը պատկանում է ուշ բրոնզի դարին, որտեղ հասարակության ռազմականացումը, առանձնաշնորհյալների դասի ձևավորումն արդեն կասկած չի թողնում: Լճաշենյան ռազմիկ-առաջնորդների տոնական հանդերձանքի մասին մեր պատկերացումները դեռևս հեռու են ամբողջական լինելուց՝ նյութերի մասնակի հրատարակության պատճառով, սակայն դատելով մարտականքերի բրոնզե մանրակերտերի վրա պատկերված կերպարների հանդերձանքներից՝ կարող ենք ենթադրել, որ տոնական միջոցառումների ժամանակ ռազմական վերնախավի ներկայացուցիչները համայնքին են ներկայացել սաղավարտով, ուսագոտով և գոտով³⁷:

Ռազմական առաջնորդների տոնական հանդերձանքի մասին առավել ամբողջական պատկերացում ենք կազմում Շիրակավանի N 44 դամբանի նյութերով: Այսպես՝ զինվոր-առաջնորդը աջ ուսից դեպի ձախ թևատակ, կրել է կաշվից, բրոնզե կոճգամներով զարդարված ուսագոտի (նկ. 5): Ուսագոտու՝ թևատակին միացող հատվածում, հավանաբար, կտորից գոտու տակ, զինվոր-առաջնորդը կրել է բրոնզե ծայրապանով զարդարված փայտե պատյանով դաշույն և «դանակ-քերիչ»:

Գոտու, ուսագոտու համադրությամբ հանդերձանքով և դաշույնով զինված կերպարներ առկա են նաև ասորեստանյան պատկերագրության մեջ: Նինվեի երկրորդ սրահի մուտքի աջակողմյան պատկերաքանդակի

հարձակման տեսարանում երկրորդ գոտու աջակողմում վահանով և տեգով զինված սաղավարտակիր զինվորի հանդերձանքը, որը խոցում է ուղտին նստած արաբին (Barnett 1976, Pl. XXXIII): Իսաչաձև ուսագոտիները լայնորեն տարածված էին նաև XVII-XX դարերի եվրոպական տարբեր երկրների զինված ուժերում, որտեղ հետևակը (այդ թվում՝ թեթև), հրացանավորները, գրենադները, խաչաձև ուսագոտին կրում էին մի դեպքում փամփշտակալով, մյուս դեպքում՝ սրով (այս գոտիները կոչվում էին նաև «սրի գոտի» (անգլ.՝ swordbelt): Սպաներն իրավունք ունեին կրելու միայն ուսագոտի, եթե ունեին ատրճանակ, իսկ թեթև հեծելազորի զինվորը իրավունք ուներ նաև կրելու սուր (Farrow 1918, 555):

³⁶ Ավետիսյան 2014, 9, 12, 60-61:

³⁷ Հավանաբար, ռազմիկ-առաջնորդի տոնական հանդերձանքի բաղադրիչ են կազմել սուր ծայրը վեր ուղղված կոշիկները: Հոդվածի ընտրությամբ այդպիսի կոշիկներ կրում են Քարաշամբի գավաթի գրեթե բոլոր կերպարները և Շիրակավանի N 17 դամբանի արձանիկը (նկ. 5, դ):

առյուծի գլխով և ոտքերով, մարդու մարմնով կերպարը մերկ մարմնին կրում է ուսագոտի, որը միացված է գոտուն: Միացման հատվածում առկա է դաշույնի պատյան: Կերպարը դաշույնով ձեռքը վեր է պարզել, իսկ մյուս ձեռքում բռնել է գուրգ³⁸: Շ սրահի հյուսիսարևելյան պատը զարդարող պատկերաքանդակում թագավորի կառքի մոտ կանգնած են դաշունակիր, ուսագոտու և գոտու համադրությամբ երեք տղամարդ³⁹: Ուսագոտի կրելը հատուկ ընդգծված էր նաև նույն սաղավարտակիր, վահանակիր և նիզակակիր զինվորների պարագայում⁴⁰:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թագավորական որսի տեսարանը, որտեղ արքան, կանգնած կառքի վրա, նետահարում է վիրավոր առյուծին: Արքան կրում է թագավորական խույր, ուսագոտի, գոտի և տունիկա: Գոտու տակ դրված է զարդարուն բռնակով սուր⁴¹: Հատկանշական է, որ արքային ուղեկցող զինակիրները չունեն սաղավարտ, գոտի և ուսագոտի: Այս բարձրաքանդակն իր բովանդակությամբ հիշեցնում է Շիրակավանի արձանիկը, որտեղ վահանով զինված, ուսագոտով, գոտով և գոտու տակ դաշույնով ռազմիկ-աստված-առաջնորդը պատկերված է առյուծի հանդեպ հաղթանակած (կամ հավասար) դիրքով:

Կարքեմիշի պալատի պատկերաքանդակներում նույնպես տեսնում ենք զինվորների, որոնք կրում են երկար տունիկա, աջ ուսից դեպի ձախ գոտկատեղ իջնող ուսագոտի և գոտի, որոնք մի դեպքում զինված են վահանով, սրով և նիզակով, մյուս դեպքերում՝ գուրգով և սրով⁴²:

Ուսագոտիների գործառնություն

Ելնելով վերը ներկայացված իրողություններից՝ կարող ենք նշել, որ ուսագոտիները հին աշխարհի տարբեր հանրություններում ունեցել են կիրառության համընդհանուր բնույթ: Դրանք ունեցել են գործնական նշանակություն, այն է՝ զինվորի հանդերձանքում դաշույն կամ սուր կրելը⁴³, որը հեշտացնելու էր զենքի հասանելիությունը պատեհ ժամանակ⁴⁴:

³⁸ Barnett 1976, Pl. IV, BM 118917.

³⁹ Barnett 1976, Pl. V, BM 124858-9.

⁴⁰ Barnett 1976, Pl. VI, BM 120860-3.

⁴¹ Barnett 1976, Pl. VIII, BM 124866-8. Հմմտ. նաև Pl. IX, 128450-1-ը: Առյուծի դեմ հաղթանակած արքան կրում էր ուսագոտի:

⁴² Hogarth 1969, Pl. B. 5 a-b. Pl. 7 a.

⁴³ Հռոմեական բանակում մարտիկների զինվորական հանդերձանքում կիրառվում էր երկու տեսակի գոտի՝ ա) գոտկատեղին ամրացվող (cingulum), բ) ուսագոտի (balteus):

Ուսագոտին՝ որպես ռազմական առաջնորդության խորհրդանիշ

Հին հասարակություններում համայնքների առաջնորդներն իրենց առանձնաշնորհությունը ցուցադրում էին նաև համայնականների հանդերձանքից, սպասքից էականորեն տարբերվող հատկանիշներով: Կարծում եմ՝ ռազմական վերնախավի հանդերձանքում, որպես տարբերակման հատկանիշ, սկսած միջին բրոնզի դարաշրջանից, ի թիվս այլ առարկաների, հանդես է գալիս նաև ուսագոտին, որը ռազմիկ-առաջնորդը կրում էր տոնական արարողությունների, հաղթարշավների ժամանակ: Հատկանշական է, որ ուսագոտիների պատկերումների ի հայտ գալը քննվող տարածաշրջանում համընկնում է լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածներում մ.թ.ա. XXIII/XXII դարերում «սոցիալական լանդշաֆտում» նկատվող փոփոխությունների և տեղաշարժերի հետ (վաղ պետական կազմավորումների սաղմնավորման և արմատավորման փուլ), որոնք հանգեցրել են վաղագույն պետական կազմավորումների մասին վկայող բազմաբնույթ տվյալների դրսևորմանը⁴⁵:

Եզրակացություններ

Բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի ուսագոտիները հանդես են գալիս հնագիտական տարբեր համատեքստերում (դամբաններում աճյունի հետ, արձանիկների պատկերագրության մեջ, մարդակերպ արձանների վրա և այլն): Ուսագոտիները պատրաստված են եղել կաշվից և բրոնզից, առկա են նաև երկուսի համադրությամբ օրինակներ: Ուսագոտիները մարմնին ամրացվել են խաչաձև կապված (միջին բրոնզի դար), աջ ուսից դեպի ձախ թևատակ, ձախ ուսից դեպի աջ թևատակ (ուշ բրոնզի և

Վերջիններիս գործառույթը սուրը կրելն էր (Oldenstein 1976, 226-234, Junkelmann 1991, 161-162, 182-184):

⁴⁴ Բազմաթիվ են դեպքերը, երբ դաշույնը (կամ սուրը) փաստագրվում են գոտու հետ կամ գոտու տակ: Հայտնի են նաև այնպիսի օրինակներ, որտեղ դաշույնը դրված է աճյունի կրծքավանդակին, իսկ հագուստին ամրացնելու հարմարանքները փաստագրված չեն խցում: Մարմնին գեղքի ամրացման հարմարանքները կարող էին լինել կաշվից կամ կտորից, այդ է պատճառը, որ հնագիտորեն չեն փաստագրվել, սակայն հայտնի են մետաղական առանձին մասեր, որոնք ծառայել են որպես ուսագոտու ճարմանդ և/կամ դրանց ոճավորման զարդարանքներ: Այդ առարկաներից են, օրինակ, օղակները, ձողերը, որոնց մի ծայրը օղակ է, ճարմանդ-փականները, կախիկները, վահանիկները և այլն: Սույն ուսումնասիրության ծավալներից ելնելով՝ այստեղ չենք անդրադառնա դաշույնի՝ ուսագոտու միջոցով հագուստին միացման հարմարանքներին:

⁴⁵ Ավետիսյան 2014, 67:

վաղ երկաթի դար) կամ թևանցուկ (ուշ երկաթի դար): Ուսագոտիների կիրառական նշանակությունը եղել է սպառազինության առանձին մասերի (դաշույն, սուր և/կամ, հավանաբար, կապարճ) կրումը: Հնագիտական տարատեսակ համատեքստերում ուսագոտիները վկայված են գոտու հետ համատեղ, որոնց միացման մասում ամրացված են դաշույն և/կամ այլ զենքեր: Ուսագոտիներն ուշ բրոնզի դարից մինչև ուշ երկաթի դար վկայված են նաև մարդակերպ բրոնզե քանդակների պատկերագրության և համայնքներում առանձնաշնորհյալների տոնական/հաղթական հանդերձանքի մեջ: Գոտևորված զինվոր-աստված-առաջնորդների քանդակներում ուսագոտին հագուստի մշտապես հանդիպող պարագա է:

Գրականություն

- Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:
- Ավետիսյան Պ. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Գիտական զեկուցում, Երևան, 92 էջ:
- Ավետիսյան Պ., Փիլիպոսյան Ա. 2007, Քարաշամբ, Հայաստանի ոսկին վաղ և միջին բրոնզի դարաշրջաններում, Հին Հայաստանի ոսկին (գլխ. խմբ. Ա. Քալանթարյան), Երևան, «Գիտություն», էջ 89-99:
- Գնունի Ա. 2006, Կերենի «քրմական» դամբարանի պեղումները, Բանբեր Երևանի Համալսարանի, N 3, Երևան, էջ 515-518:
- Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. 1979, Նախնադարյան արվեստի եզակի նմուշներ, Սովետական արվեստ, N 1, էջ 43:
- Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. 2002, Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, «Գիտություն», 259 էջ:
- Մնացականյան Հ., Լճաշենի դամբարանադաշտը (առաջին տեղամաս). գտնված նյութերի, դամբարանների նկարագրությունները (1956-1957 թթ.), Հայաստանի պատմության թանգարան, արխիվ. ֆոնդ 1, ցուցակ 6, գործ 341, էջ 30-31:
- Брилева О. 2011, Иллюстрация одного мифа на примере изображений воина и льва на штандартах XVI-XIV вв. до н.э. Древность: историческое знание и специфика источника, Материалы международной научной конференции, посвященной памяти Эдвина Арвидовича Грантовского и Дмитрия Сергеевича Раевского, вып. V, Москва, «ИБ РАН», с. 60-63.

- Брилева О. 2012, Древняя бронзовая антропоморфная пластика Кавказа (XV в. до н.э.- X в. н.э.), Государственный музей искусства народов Востока, Москва, «ТАУС», 424 с.
- Есаян С. 1980, Скульптура Древней Армении, Ереван, изд. Ан Арм. ССР, 75 с.
- Майсурадзе В., Инанишвили Г. 2004, Святилище Шилда, культовый памятник из Кахетии, Российская археология, N 4, с. 38-51.
- Мнацаканян А. 1957, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., Советская археология, N 2, с. 146-153.
- Оганесян В. 1993, Раскопки Карашамбского могильника в 1987 г., Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները) (պատ. խմբ.՝ Գ.Ա. Տիրացյան, Ա.Ա. Քալանթարյան, Գ.Ե. Արեշյան), հ. I, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., с. 26-36, табл. XXII-XXXII.
- Пицхелаури К. 1965, Древняя культура племен, населяющих территорию Иоро-алазанского бассейна по археологическим материалам доантичной эпохи, Тбилиси, «Мецниареба», 140 с. (на грузинском языке).
- Шаншавили Н., Нариманишвили Г., Нариманишвили Г. 2016, Торговля и торговые пути между Южным Кавказом и Ближним Востоком (3-1 тысяч), Тбилиси, «Mtsignobari», 200 с.
- Barnett R. 1976, Sculptures from the North Palace of Ashurbanipal at Nineveh (668-627 B.C.), The Trustees of the British Museum, London, 75 p.
- Boehmer R.M., Kossack G. 2000, Der figürlich verzierte Becher von Karašamb, Variatio Delectat, Iran und der Westen, Alter Orient und Alter Testament, Band 272, Ugarit-Verlag, Münster, pp. 9-71.
- Curtis J., Kruszyński M. 2002, Ancient Caucasian and Related Material in The British Museum, The British Museum Occasional Paper, Number 121, British Museum Press, London, 121 p.
- Curtis J.E., Reade J.E. (eds) 2008, Art and Empire. Treasures from Assyria in the British Museum, British Museum Press, 224 p.
- Danti M., Cifarelli M. 2015, Iron II Warrior Burials at Hasanlu Tepe, Iran, Iranica Antiqua, vol. L, pp. 61-157.
- Dönmez S. 2014, Early bronze age metallurgy in Amasya Province, North-Central Anatolia, International conference, Problems of early metal age archaeology of Caucasus and Anatolia, November 19-23, Georgia, Tbilisi, pp. 182-197.
- Farrow Ed. 1918, Dictionary of Military Terms, Thomas Crowell Company, 582 p.
- Hogarth D.A. 1969, Carchemish 1, Introductory, Reprint, 65 p.

- Junkelmann M. 1991, Die Legionen des Augustus. Der römische Soldat im archäologischen Experiment, Kulturgeschichte der antiken Welt, 33, Mainz, 313 S.
- Miron A., Orthmann W. 1995, Unterwegs zum Goldenen Vlies: Archäologische Funde aus Georgien, Saarbrücken, Saarlandischer Kulturbesitz, 343 S.
- Nagel W., Stromennger E. 1985, Kalakent, Früheisenzeitliche Grabfunde aus dem Transkaukasischen Gebiet von Kirovabad/Jelisavetpol, Berliner Beiträge zur Vor- und Frühgeschichte, Neue Folge, Band 4, Berlin, Volker Spiess, 272 S.
- Oldenstein J. 1977, Zur Ausrüstung römischer Auxiliareinheiten, Studien zu Beschlägen und Zierart an der Ausrüstung der römischen Auxiliareinheiten des obergermanisch-raetischen Limesgebietes aus dem zweiten und dritten Jahrhundert n. Chr., Bericht der Römisch-Germanischen Kommission, 57, S. 49-284.

ԿՈՒՐԱՐԱՔՍՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ՈՒՍԱԳՈՏԻՆԵՐԸ

Բենիկ Վարդանյան

Ամփոփում

Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի բրոնզի և երկաթի դարերի տարբեր հուշարձաններում հայտնաբերվել է առարկաների մի խումբ (կամ դրանց պատկերներ), որոնք բնորոշվել են որպես ուսագոտի: Այն հայտնի է որպես դամբանային համալիրներում թաղմանն ուղեկցող գույք, ինչպես նաև բրոնզե անոթների և քարից, բրոնզից, կավից մարդակերպ արձանիկների վրա առկա պատկերների տեսքով:

Ուսագոտիներից էր ամրացվում զենքի որևէ տեսակ (դաշույն կամ սուր), հետևաբար առարկայի գործառույթը զենքի հասանելիությունն ապահովելն էր մարտի ժամանակ: Ուսագոտիները հին հասարակություններում խորհրդանշում էին նաև ռազմական առաջնորդությունը և առանձնաշնորհությունը: Դրանց առաջացումը և պատկերումների ի հայտ գալը առանձնաշնորհություն ենթադրող անձանց թաղումներում համընկնում են վաղ պետական կազմավորումների մասին վկայող փոփոխությունների հետ: Այդպիսով ուսագոտին ռազմական առաջնորդների տոնական հանդերձանքի մասն էր կազմում:

Բանալի բառեր՝ Հայաստան, Վրաստան, ուսագոտի, ռազմական հանդերձանք, արձանադրոշ, իշխանության խորհրդանիշ, միջին և ուշ բրոնզի դար:

ПЕРЕВЯЗЬ В ЭПОХУ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА КУРО-АРАКССКОГО МЕЖДУРЕЧЬЯ

Беник Варданян

Резюме

В памятниках Армянского нагорья и Южного Кавказа были обнаружены предметы, характеризующиеся как перевязь.

По своей функциональности эти предметы служили в качестве перевязи, к которой крепилось оружие (кинжал или меч). Перевязь обеспечивала доступность оружия во время боя. В древних обществах наличие перевязи указывало на привилегированность членов военной аристократии.

Изображение перевязи на инвентаре являлось отражением изменений в социальном ландшафте и зарождения ранних государственных образований (средний бронзовый век). Эти изменения в социальном строе генерировали формирование милитаризованного сословия привилегированных, военная униформа которых включала в себя также перевязь. Об этом свидетельствуют множественные изображения воинов-предводителей в виде статуэток-штандартов и скульптур эпохи бронзы и железа. Развитие формы и функции перевязи прослеживается также на бронзовых и глиняных сосудах.

Ключевые слова – Армения, Грузия, перевязь, военная и парадная форма, статуэтки-штандарты, символ власти, эпоха средней и поздней бронзы.

SHOULDER STRAPS IN THE BRONZE AND IRON AGE IN THE TERRITORY OF KURA-ARAXES INTERFLUVE

Benik Vardanyan

Abstract

An object type characterized as a shoulder strap was found in archaeological sites of the Armenian Highland and the South Caucasus.

They served as a strap from which weapons (blade or sword) were mounted. Their purpose was to ensure quick accessibility to the weapon during combats.

In ancient societies, shoulder straps symbolized the privileged status of the military aristocracy. The emergence and depiction of the straps on the inventory coincide with a transformation in the social landscape on the one hand and with the early state formation processes on the other hand. Social changes led to the formation of a militarized class of the privileged who, as part of their military uniform, possessed also the shoulder strap. This is evidenced by the multiple images of warrior-predecessors in the form of statuettes-standards and sculptures of the Bronze and Iron Age, as well as on bronze and clay vessels, which show the development of the form and function of the lash.

Key words – Armenia, Georgia, shoulder strap, military uniform, statuettes-standards, symbol of power, Middle and Late Bronze Ages.

ՏՈՆԸ ԱՌԱԾԱՅԻՆ ԼԵԶՎՈՒՄ

Գոհար Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ gogstep@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 02.06.2020, գրախոսվել է,
ընդունվել է տպագրության 15.10.2021
DOI: 10.53548/03208117-2021.3-247

Ներածություն

Արամ Ղանալանյանի Առաձանիում¹ որոշակի թիվ են կազմում առաձաները, որոնցում հիշատակվում են հայ ավանդական տոները: Հիմնվելով գերազանցապես Առաձանու վրա՝ ներկա հետազոտության առարկա են դարձել նաև դրանից դուրս գտնվող և այս կամ այն ձևով տոներին առնչվող առաձ-ասացվածքները, ինչպես և առհասարակ ասության միավորները (նշանակներ, հավատալիքային, խնդրանքային բանաձևեր և այլն): Մեր նպատակը տոների առաձային լեզվի քննությունն է. դրանք ինչպես են մուտք գործում առաձների մեջ, ինչ այլաբանական կամ ուղղակի իմաստով են դառնում առաձների մաս, տոնի՝ առհասարակ և առանձին տոների՝ մասնավորաբար, ո՛ր բնորոշ գիծը/գծերն են դառնում որոշիչ առաձային լեզվում: *Տոնական* առաձները (իմա՝ տոնական անդրադարձներ ունեցող առաձներ) Առաձանիում ցրված են թեմատիկ տարբեր բաժինների ու ենթաբաժինների, ինչպես և դրանց հավելվածային մասերի մեջ: Ի մի բերելով դրանք՝ առաջարկում ենք *տոնական* առաձ-ասացվածքները² միավորել երկու խմբում. առաձ-ասացվածքներ, որոնց հիմքում ա) ժամանակ – տոն առնչությունն է, բ) տոների այս կամ այն բնութագրիչը:

¹ Ղանալանյան 1960: Տողատակերը չձանրաբեռնելու մտայնությամբ՝ մենք կիդենք միայն Առաձանու մեջ չընդգրկված ասության միավորները:

² Այդ ամենը քննարկում ենք առաձային լեզվի համատեքստում՝ հաշվի առնելով նախ այն, որ երբեմն դժվար է հստակ ժանրային սահմաններ դնել դրանց միջև առհասարակ, հմմտ. Пермяков 1988, 13-14, և, երկրորդ, քանի որ դրանց մեծ մասն ընդգրկված է հետազոտության համար հիմք ծառայած Առաձանիում:

Ժամանակը տոնական առաձանիում

Տոնական առաձների մի զգալի մասը հատկանշական կերպով կապվում է ժամանակի գաղափարի հետ: Որոշների պարագայում խոսքն ուղղակի ժամանակի, ժամանակի զգացողության մասին է, որ գործում է ամեն ինչի՝ իր ժամանակն ունենալու իմաստային համատեքստում, իսկ մյուսների դեպքում՝ ժամանակի ընթացքի՝ սեզոնային-կլիմայական փոփոխությունների մասին: Առաջիններից *Կարմիր ձուն Զարկին կը սագի; Զաղգից հեղո գարմիր հավգիտ, էղած-չեղած մէ հաշիվ ը*³. (*Հեյր Զարկին, հավան է ժանագին. Տրին տարին Զարկի չի ըլալ* ասացվածքներում գործ ունենք այլաբանության հետ. դրանցից երեքում տոնի ուսեստային խորհրդանիշները՝ կարմիր ձուն և հավան, իսկ չորրորդում բուն տոնը՝ Զատիկը՝ որոշակի կոնկրետ ժամանակի հետ իրենց կայուն կապով (խորհրդանիշները՝ Զատիկի տոնի, իսկ Զատիկն էլ ոչ թե հեթանոսությունը խորհրդանշող աստվածներից մեկի՝ Տրիի տարվա, այլ քրիստոնեության շրջանի հետ) դառնում են ամեն ինչի՝ իր ժամանակն ունենալու իմաստի արտահայտչամիջոցները: Այս շարքի առաձների երկրորդ խումբը հիմնված է էկոլոգիական⁴ այն գիտելիքների վրա, որոնք մի զգալի չափով ամբարված են տոնական ավանդույթում: Անմիջականորեն կապված լինելով անցումների և, մասնավորապես, սեզոնային/եղանակային անցումների հետ՝ տոներն իրենք դառնում են այդ անցումների նշանավորումները կամ ամրագրումները, այդպիսով նաև ներկայանում որպես ժամանակի հաշվարկի լավագույն միջոց: Սա հատկապես բնորոշ է ագրարային կենցաղով ապրող հասարակություններին, որոնք սեզոնային անցումները պայմանավորում էին ոչ այնքան օրացուցային ամսաթվերով, որքան տոնական տարեկան պարբերաշրջանով: Մշակութային այս իրողությունը, որ, թերևս, համընդհանուր բնույթ ունի, ծնունդ է տվել նաև տոնական նախանշանների կամ նշանակների: Առհասարակ նշանակները՝ որպես բանավոր բանաձևեր, ևս դասվում են մանր բանագիտական ժանրին՝ գերիշխող կանխատեսման գործառնություն, որոնց իմաստը ապագայի կանխատեսումն է⁵: Որոշ հետա-

³ Խաչատրյան 1999, 227:

⁴ *Էկոլոգիա* կամ *էկոլոգիական գիտելիք* եզրույթը մենք կիրառում ենք լայն իմաստով, որպես օրգանիզմների՝ միմյանց և շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների ուսումնասիրության բնագավառ: Տե՛ս Smith, Pimm Ecology//Encyclopedia Britanica, <https://www.britannica.com/science/ecology>[31.05.2019]:

⁵ Пермяков 1975, 247-274.

զոտողներ ավելի ընդլայնեցին նախանշանների իմաստային դաշտը՝ որպես նշաններ, որոնց մեկնաբանությունն ընդհանուր առմամբ մոդելավորում է մարդկանց վարքը՝ այս շարքում ներառելով ինչպես ապագայի կանխատեսմանն ուղղված (նշանակ-պրոգնոզներ), այնպես էլ արդեն կատարված իրողությունների մասին մարդուն տեղեկություն տվող (նշանակ-մեկնություններ) նշանակները⁶։ Տոնական նշանակների զգալի մասը Ա. Ղանալանյանը զետեղել է Առաձանիում։ Առաձ-ասացվածքների ու նշանակների միջև խիստ սահմաններ չդնելու այս միտումը հատուկ է շատ հեղինակների⁷։ Տոնական նշանակների դիտարկվող խումբը եղանակային/կլիմայական փոփոխությունների կանխատեսումներ են, որոնցից որոշները երբեմն-երբեմն լսելի են նաև մեր օրերում։ Այսպես, Տրնդեզի հետ կապված կայուն կերպով գործում է պատկերացումը, թե տոնից հետո ձմեռը սկսում է նահանջել՝ իր տեղը զիջելով գարնանը, թեև որպես անշարժ տոն այն նշվում է օրացուցային ձմեռվա ընթացքում՝ փետրվարի 13/14-ին։ Այս պատկերացումն ավանդական կյանքում նաև ասութային ձևակերպում էր ստացել, ի դեմս *Մենծ գոլն ընկավ*⁸ նշանակի։ Եթե ժողովրդական էկոլոգիական գիտելիքներով Տրնդեզից հետո *Մենծ գոլն էր ընկնում*, ապա Զրօրինեքից հետո՝ Փոքր կամ Պզտիկ գոլը։ *Պզտիկ գոլն ընկավ*⁹, երբ *Օրը մի գարու հալի չափ երկարում է*¹⁰։ Հայերիս շրջանում ձմեռվա և ցրտի բացասական ընկալումն է (հմմտ. *Աշուն շուն, գարուն նախշուն, ամառ ամիրա, ձմեռ պեխեր ա* ասացվածքը¹¹) ըստ ամենայնի

⁶ О. Христофорова, К вопросу о структуре приметы, Фольклор и постфольклор: структура, типология, семиотика, <http://www.ruthenia.ru/folklore/hristoforova2.htm>: Ընդունված է նաև նշանակները, որոնց հիմնական գործառույթը եղանակի կանխագուշակումն է, խմբավորել *եղանակային առաձների* ներքո։ *եղանակային առաձների* խնդրահարույց լինելուն է անդրադառնում Վ. Միդերը՝ բերելով այն փաստարկը, որ եթե առաձներն ընդհանուր առմամբ կիրառելի են բազմազան համատեքստերում, ապա *եղանակային առաձների* մեծ մասը պրոգնոստիկ նշաններ են և չունեն այլաբանական իմաստ։ Հմմտ. Mieder 2004, 25-27:

⁷ Пермяков 1975, 255.

⁸ Մխիթարեանց 1901, 258:

⁹ Մխիթարեանց 1901, 258:

¹⁰ Մխիթարեանց 1901, 258:

¹¹ Օրացուցային միավոր եղանակների՝ նման՝ էթիկական մեկնության օրինակներ հայտնի են նաև այլ մշակույթներից ի թիվս տարիքային (մարդու տարիքի հետ եղանակների զուգորդումներ), գունային, մարմնական և այլ մեկնությունների, Брагинская 1991, 614: Մեզանում, օրինակ, գունային մեկնության օրինակներ կան հանելուկային

հիմք տվել առաձների մի շարքի, որն իմաստաբանորեն կապվում է ձմեռային (Նոր տարի, Ս. Ծնունդ/Մկրտություն) և ամառային (Վարդավառ) արևադարձերի, օրերի երկարելու և կարճանալու, տաքանալու և ցրտելու, ընդհանուր առմամբ՝ տարվա կտրվածքով որոշակի կոնկրետ ժամանակամիջոցների հետ, որոնց լավագույն բնութագրիչներ են դառնում տոները. *Լավ է Կաղանդը, քանց Վարդավառը. Լավ է ցոնը (Ծնունդ), քան Վարդետորը. Երանի Ջրօհներին, ո՛չ երանի Վարդևորին. Առաջըս Վըրթիվոր, հեպըս՝ Ջիրօրհներ*: Չի բացառվում, որ ասացվածքների այս շարքում իր արձագանքն է գտել տարին երկու կեսերի բաժանելու հնագույն ավանդույթը՝ վկայված դեռ շումերական գրական տեքստերով¹²: Հատկանշական է, որ տարվա ամառային (գարուն-ամառային) կեսի համար, որպես կիզակետ առաձային լեզվում ներկայանում է բացառապես Վարդավառը: Ըստ ամենայնի, էական է Վարդավառի կապն ամառային արևադարձի հետ և վարդավառյան տոնակատարությունների՝ բարձունքներում՝ ամենաբարձր սարերում, կտուրների վրա ծավալելու տարածական սկզբունքը՝ հնարավորինս մոտ իր բարձրակետում գտնվող արեգակին: *Վարդևորին-կտեր ծերին* ասացվածքն այս առումով շատ հատկանշական կարող է լինել, որ իր առաջնային իմաստով, անշուշտ, վկայում է կտուրներին ծավալվող ուրախ տոնակատարությունների մասին, բայց ամփոփում է նաև Վարդավառի՝ տարվա ամառային կեսի բարձրակետը լինելու ընկալումը, որից հետո ամառը (ինչպես և արեգակը) սկսում է իր անկումային ընթացքը: Առհասարակ, առաձային լեզվին բնորոշ է նման *կիզակետային մտածողությունը*, որևէ իրողություն հնարավորինս պատկերավոր ներկայացնելու համար ընտրելը որոշակի *խտացված կտեր*:

Առաձային սեղմ ու պատկերավոր լեզուն, այսպիսով, սեզոնային և աշխատանքային փուլերի անցումներում գերապատվությունը տալիս է տոնական պարբերաշրջանին: Ի տարբերություն արդի քաղաքային կյանքի, որում, օրինակ, սեզոնային անցումները նշանավորող օրացուցային ամսաթվերը երբեմն հիմք են դառնում տոնական ձևակերպումների համար, ավանդական ագրարային հասարակություններում տոներն իրենք նշանավորում են այդ սեզոնային անցումները կամ, ինչպես Վ. Թերներն է ձևա-

լեզվում, իսկ առաձային լեզուն, փաստորեն, նախապատվությունը տվել է էթիկական մեկնությանը:

¹² Емельянов 2012.

կերպել՝ «...ապահովում են եղանակների ճիշտ անցումները և մարդկանց որոտորդական ու երկրագործական ակնկալիքները դրանցից»¹³:

Տոնական բնութագրիչները առաձային լեզվում

Առաձների մի ամբողջ շարք էլ հիմք է դարձրել տոների՝ առաջնային զուգորդումները կամ դրանց ամենաբնորոշ, ժողովրդական մտապատկերում տպավորված բնութագրիչները: Բարեկենդանի պարագայում, օրինակ, ասութային մակարդակում որոշիչ է տոնական շատակերությունն ու խենթությունը. *Բարեկենդան, փորեկենդան/ Բարեկենդան օրեր է, խելքս գլխես կորեր է*¹⁴: Առաձներում դրսևորվող Բարեկենդանի հետ կապված մյուս զուգորդումը աներեսությունն է, անամոթությունը, որ միանգամայն ընդունված վարքային դրսևորում էր տոնի ուրախ, ցոփ ու շռայլ օրերին. *Բարև րաս՝ Բարիկենդան կուգա. Բարով ասողի րունը բարկենդանք կերթա* առաձները լավագույնս բնորոշում են տոնի այդ հատկանիշը: Առաձների քննարկվող խմբի մաս է կազմում Սուրբ Խաչին վերաբերող մի նմուշ, որտեղ հստակորեն արտահայտված է տոնի սգային բնույթը. *Հարսնիքն իմն ըլնի, սըբ խեչը՝ պապինս*: Այս առաձի մյուս տարբերակներում հարսանիքը՝ որպես ուրախության կիզակետ պահպանվում է անփոփոխ, իսկ Սուրբ Խաչին մի դեպքում փոխարինում է հոգեհացը (*Հարսնիքն ախպորս պեպք է, հոգու հացը՝ հորս*), իսկ մյուսում՝ պատարագը (*Պատարագը պապինս ըլնի, հարսանիքը՝ ախպորս*):

Եզրակացություններ

Առաձային/ասութային լեզվում փոքր թիվ չեն կազմում անդրադարձները տոներին: Ըստ ամենայնի, որոշիչ են տոների պատկերավորությունն ու ինքնատիպությունը, որ միանգամայն համապատասխանում են այս կամ այն միտքը հակիրճ ու բովանդակալից ներկայացնելու առաձային և, ընդհանուր առմամբ, ասութային լեզվի պահանջին: Ժողովրդական մտածողության մեջ տոնի և ծեսի սերտությունը ժամանակի ընթացքի (սեզոնային, աշխատանքային անցումների) հետ և այս իմաստով նրա՝ գործնական՝ կարգավորող գործառույթը տնտեսական և էկոլոգիական բնագավառներում, պայմանավորել են նրա ներգրավումը և կիրառումը խիստ

¹³ Turner 1974, 64.

¹⁴ Լալայան 1983, 272:

գործնական առաձների, ասացվածքների և նշանակների մեջ: Այս համատեքստում է պահպանվել և էկոլոգիական գիտելիքը սեզոնային անցումների, կլիմայական կանխատեսումների, աշխատանքային փուլերի, երկրագործական տարվա նախանշանների և այլնի մասին:

Առաձային (ասութային) լեզուն լավագույնս վկայում է այն մասին, որ ժողովրդական ընկալումներում տոները ոչ միայն ներկայանում են որպես ժամանակի հաշվարկի միջոց՝ ազդարարելով ժամանակային/սեզոնային փուլերի սկիզբն ու վերջը, այլև դառնում են այդ նույն փուլերի առօրյա ընթացքի ցուցիչները: Այսպես, տարվա ամառային ողջ սեզոնը խտացվում է Վարդավառի, իսկ ձմեռային սեզոնը՝ Ամանոր/Ս.Ծնունդ-Ջրօրհների կամ Տրնդեզի մեջ:

Առաձների սերտ կապը կենցաղի, սոցիալական կյանքի, մարդկային բարքերի հետ պայմանավորել է և գերազանցապես տոների աշխարհիկ կողմին, դրանց արտաքին դրսևորումներին անդրադարձները առաձային լեզվում:

Գրականություն

- Լալայան Ե. 1983, Ջավախք, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 457 էջ:
Խաչատրյան Ռ. 1999, Թալին, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Երևան, «Գիտություն», 279 էջ:
Ղանալանյան Ա. 1960, Առաձանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 396 էջ:
Մխիթարեանց Աղ. 1901, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի (Մոսկվա) հրատ., 161 էջ:
Брагинская Н. 1991, Календарь, Мифы народов мира, т. 1, Москва, «Советская Энциклопедия», с. 612-615.
Емельянов В. 2012, Сезоны года в шумерских литературных текстах, <https://www.youtube.com/watch?v=xTHacr-rfS4>, 28.08.2012 (ներբեռնման օրը՝ 14.06.2019).
Пермяков Г.Л. 1975, К вопросу о структуре паремиологического фонда, Типологические исследования по фольклору: Сб. статей памяти В.Я. Проппа, Москва, «Наука», с. 247-274.
Христофорова О. К вопросу о структуре приметы. Фольклор и постфольклор: структура, типология, семиотика, <http://www.ruthenia.ru/folklore/hristoforova2.htm> (ներբեռնման օրը՝ 18.10.2021).
Mieder W. 2004, Proverbs: A Handbook, London, Greenwood Press, I-XVI+295 p.
Smith R.L., Pimm L.S. Ecology, Encyclopedia Britanica, <https://www.britannica.com/science/ecology> (ներբեռնման օրը՝ 31.05.2019).

Turner V. 1974, Liminal to Liminoid, in Play, Flow, and Ritual: An Essay in Comparative Symbology, Rice University Studies, 60, no. 3, p. 53-92.

ՏՈՆԸ ԱՌԱՇԱՅԻՆ ԼԵԶՎՈՒՄ

Գոհար Ստեփանյան

Ամփոփում

Արամ Ղանալանյանի Առաձանիում որոշակի թիվ են կազմում առաձաները, որոնցում հիշատակվում են հայ ավանդական տոները: Առաձանիում թեմատիկ տարբեր բաժինների ու ենթաբաժինների, ինչպես և դրանց հավելվածային մասերի մեջ ցրված տոնական անդրադարձներ ունեցող առաձաներն առաջարկում ենք միավորել երկու խմբում. առաձ-ասացվածքներ, որոնց հիմքում ա) ժամանակ – տոն առնչությունն է, բ) տոների այս կամ այն բնութագրիչը: Ժամանակին առնչվող առաձ-ասացվածքների մի մասում խոսքն ուղղակի ժամանակի մասին է՝ ամեն ինչի՝ իր ժամանակն ունենալու իմաստային համատեքստում, իսկ մյուսների դեպքում՝ ժամանակի սեզոնային-կլիմայական փոփոխությունների մասին: Վերջիններս, որոնց համար հիմք է դարձել տոնական ավանդույթում ամբարված ժողովրդական էկոլոգիական գիտելիքը, տոների՝ ժամանակի հաշվարկի միջոց լինելու ժողովրդական ընկալման բացառիկ վկայություններ է ընձեռում: Առաձների մյուս շարքը ներկայացնում է տոների հետ կապված առաջնային զուգորդումները՝ տոների այս կամ այն բնութագրիչները, որոնք, որպես կանոն, ավելի շատ դրանց արտաքին, պրոֆան, քան խորքային առասպելաբանական կողմին են առնչվում:

Բանալի բառեր՝ ասութաբանություն, նշանակ, առաձ, ժամանակ, էկոլոգիական գիտելիք, կլիմայական կանխատեսում, տոնական բնութագրիչներ:

ПРАЗДНИК В ЯЗЫКЕ ПОСЛОВИЦ

Гоар Степанян

Резюме

В сборнике армянских пословиц Арама Ганалаяна определенное место занимают пословицы, в которых упоминаются армянские традиционные праздники.

Пословицы, относящиеся к праздникам и представленные в разных тематических разделах и подразделах, а также в приложении сборника А. Ганалаяна, на наш взгляд, целесообразно представить двумя группами: 1 группа – это пословицы-поговорки, в основе которых лежит понятие времени и его взаимосвязи с праздником. Вторая группа – это пословицы, связанные с тем или иным атрибутом праздника и касающиеся скорее их внешней, профанной, нежели глубинной мифологической стороны.

Ключевые слова – паремиология, примета, пословица, время, экологические знания, климатический прогноз, праздничные атрибуты.

THE HOLIDAY IN PROVERBIAL LANGUAGE

Gohar Stepanyan

Abstract

In the Collection of Armenian proverbs by Aram Ghanalayan the proverbs in which the Armenian traditional holidays are mentioned constitute a certain number.

We suggest uniting in two groups the proverbs, which have holiday references, diffused in different thematic sections and chapters, as well as in the appendices of the collection of proverbs. These two groups include: sayings-proverbs, which are based on a) interrelation of the time and holiday, and b) one or another attribute of the holidays. In a part of sayings-proverbs, referring to time, the question is directly about the time in the semantic context, according to which everything has its time. In case of other proverbs, the question refers to the seasonal-climatic changes of the time. The latter are based on the folk ecological knowledge, preserved in the feast tradition. In this group of proverbs the holidays play a role of the real medium of time calculation. The following series of proverbs present primary associations, connected to the feast, specific descriptors of the holidays, which are, as a rule, more connected to their external, secular, rather than deep mythological aspect.

Key words – paremiology, predictive sayings, proverb, time, ecological knowledge, weather signs, festive features.

ՈՒՇԱԳՐԱՎ ԹԱՂՈՒՄ ԲՈՎԵՐ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ

Անի Սարատիկյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ anisaratikyaniae@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 04.02.2021, գրախոսվել է 22.03.2021,

ընդունվել է տպագրության 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-255

Ներածություն

Վերջին տարիներին Հայաստանում և հարևան երկրներում իրականացվող պեղումներն ընդլայնում են նաև հավատալիքներին ու պաշտամունքին առնչվող մեր ունեցած պատկերացումները: Այս առումով ուշագրավ են «սրբազնացված կենդանիները», որոնք հայտնաբերվել են դամբանային համալիրներում: Հատկանշական է, որ տարբեր կենդանիների հանդեպ առանձնակի հատուկ վերաբերմունքը նկատելի է դեռևս էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան ժամանակներից և տևական շարունակություն ունի¹: Այս երևույթի տիպական օրինակն է ոչ միայն նրանց՝ անհատի դամբարանում որպես ուղեկցող նյութ գտնվելը, այլև այնտեղ առանձին դամբարանում թաղելը:

Անցումային ծեսերի շարքում դրսևորման բազմազանությամբ առանձնանում են հատկապես թաղման ծեսերը: Հավատալիքների ու արարողակարգերի բազմազանությունն արտահայտվում է ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների թաղման պարագայում:

N 45 դամբարանի շան թաղումը

Երկաթի դարի վաղ փուլը նշանավորվում է մի շարք սոցիալ-մշակութային փոփոխություններով: Մասնագիտական գրականության մեջ այն առավել հայտնի է որպես «ռազմականացված» հասարակության ժամանակաշրջան². անշուշտ, ընդգծված սոցիալական շերտավորումից զատ, այս հասարակությունը աչքի է ընկնում նաև պաշտամունքային մի նոր դիմագծով:

¹ Абибуллаев 1982, 46.

² Есаян 1966, 11.

Եթե մինչ այդ դամբանային համալիրներում առկա էին տարբեր կենդանիների՝ մանր եղջերավոր անասունների, աղվեսի, գայլի, շան, գիշատիչ թռչունների և այլ կենդանիների մնացորդներ³, ապա մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ ընկած ժամանակահատվածում տարածաշրջանում ի հայտ են գալիս նաև շան առանձին թաղումներ⁴:

Այդ են վկայում նաև ՀՀ Լոռու մարզի, Շնող գետի ավազանի տարածքում գտնվող Բովեր հնավայրում 2012 թ. իրականացված պեղումները⁵: Պեղումների շնորհիվ մեզ հայտնի դարձավ, որ N 45 դամբարանը կենդանու թաղման մի հետաքրքիր օրինակ է: Արևելք-արևմուտք ուղղվածությամբ դամբարանը մասամբ խաթարված էր, սակայն քարերի շարվածքը նկատելի էր (տե՛ս նկ. 2, 3)⁶: Դամբարանի արևմտյան անկյունում կար մասամբ կտրոնված խեցանոթ (տե՛ս նկ. 1), որը հնարավորություն է տալիս դամբարանը թվագրելու երկաթի դարի վաղ փուլով (մ.թ.ա. XI-IX դդ.)⁷:

Վաղ երկաթի դարում դամբանային համալիրներում շան առկայության մասին տվյալներ մեզ հայտնի են ինչպես Հայաստանի⁸, այնպես էլ տարածաշրջանի այլ հնավայրերից⁹, որոնք ժամանակագրորեն կամրջվում են՝ ընդհանուր պատկեր ստեղծելով: Որոշ հետազոտողներ կարծում են, որ շներին պատահականության սկզբունքով չէին թաղում. այս թաղումները սովորաբար լինում էին կացարանների մեջ, դռների մուտքերի մոտ կամ հատուկ նշանակության այլ վայրերում¹⁰: Երկաթեդարյան այդպիսի մի քանի թաղումներ՝ բնակավայրի տարածքում, հայտնի են Վանի տարածքից, այնտեղ մեծ մասամբ մարդկային թաղումներին ուղեկցում են շան թաղումները¹¹: Ուշագրավն այն է, որ նրանք, իրական կյանքում լինելով մարդու կենցաղավարության կարևոր բաղկացուցիչը, հանդերձյալ կյանքում նույնպես ուղեկցել են նրան:

³ Տե՛ս, օրինակ, Թումանյան 1993, 8, Թորոսյան և այլք 2002, 99, Poulmarc'h et al 2016, 953-972:

⁴ Onar 2005, 495, Belli, Konyar 2001, 150, Boessneck, Driesch 1984, 327.

⁵ Արշավախմբի ղեկավար՝ պ.գ.թ. Ս. Հոբոսյան:

⁶ Խորին շնորհակալություն ենք հայտնում արշավախմբի ղեկավար Ս. Հոբոսյանին և ճարտարապետ Լ. Տեր-Մինասյանին՝ պեղումների վերաբերյալ նյութը և չափագրությունները տրամադրելու համար:


⁷ Տե՛ս, օրինակ, Avetisyan 2009, fig. 6 (1-3), Badalyan, Avetisyan 2007, 258:

⁸ Մնացականյան 1954, 90, Եզանյան 1998, 43-56:

⁹ Onar 2005, 495-498, Belli, Konyar 2001, 150-156, Boessneck, Driesch 1984, 327-333:

¹⁰ Crockford 2009, 7.


¹¹ Onar 2005, 496, Belli, Konyar 2001, 151.



Նկ. 1 Կավանոթ (XI-IX դդ.), դամբարան N 45



Նկ. 2 Դամբարան N 45, արտաքին տեսքը



Նկ. 3 N 45 դամբարանի չափագրությունը, ճարտարապետ՝ Լիլիթ Տեր-Մինասյան

Հայաստանում նմանատիպ թաղում հայտնի է Սևանի ավազանից: Հ. Մնացականյանը Ցամաքաբերդի պեղումների վերաբերյալ իր հոդվածում նշում է, որ, ի թիվս հնագիտական այլ գտածոների, պեղվել են նաև կենդանական ոսկորներ և շան գանգ (վերաբերում է մ.թ.ա. VII դարին)¹²: Նմանատիպ թաղումներ ավելի ուշ շրջանում նույնպես հանդիպում են՝ ընդհուպ մինչև անտիկ ժամանակաշրջան¹³:

Հանդերձյալ կյանքի հետ կապվող շան պաշտամունքի վաղագույն օրինակներ մեզ հայտնի են թե՛ հնագիտական աղբյուրներից¹⁴, թե՛ բանագիտական¹⁵ ու ազգագրական տարբեր վկայություններից¹⁶, և առկա են տարբեր ժողովուրդների մոտ:

Առասպելաբանության մեջ հատկապես հիշարժան է հին Եգիպտոսից հայտնի Անուբիսի՝ շնագայլի գլխով մարդու կերպարը¹⁷: Այս համեմատությունը խորհրդանշական է պեղված նյութի համատեքստում, քանի որ Անուբիսը համարվում էր հանգուցյալներին այս աշխարհից դեպի մեռյալների աշխարհ տեղափոխողը¹⁸: Խեթական աշխարհում՝ հանդերձյալ կյանքի հետ կապված առասպելներում նույնպես գայլ-շուն զուգահեռը մշտապես առկա է¹⁹: Նմանատիպ հավատալիք պահպանվել է նաև հայոց մեջ՝ միջնադարում, համաձայն որի եղել է Առնակ անունով մի հոգեառ, բանավոր խոսքում պահպանվել է նրա շնակերպ լինելը կամ շուն ուղեկիցներ ունենալու պարագան²⁰:

Շան կերպարը դեկորատիվ-կիրառական արվեստում

Բազմաթիվ են այն գտածոները՝ դրվագազարդ անոթները և հարդարանքի մաս կազմող իրերը, որոնցում կարելի է տեսնել շան կամ գայլի պատկեր: Դեկորատիվ-կիրառական արվեստը գալիս է հաստատելու այն միտքը, որ գայլի և շան առկայությունը մշտապես փոխկապակցված է: Այդ են վկայում մեզ հասած քանդակային կամ պատկերազարդ հորինվածք-

¹² Մնացականյան 1954, 85-94:

¹³ Литвинский, Седов 1984, 161.

¹⁴ Crockford 2009, 7-13.

¹⁵ Այս մասին հանգամանորեն տե՛ս Հարությունյան 1989, 156-166, Մկրտումյան 2017, 32:

¹⁶ Լալայան 1928, 82:

¹⁷ Ritner, Scalf 2019, 185-212.

¹⁸ МНМ 1991, 89.

¹⁹ Арешян 1988, 94, 95, 101.

²⁰ Հարությունյան 1989, 158:

ները: Պատկերագրության մեջ այս ավանդույթն ունի վաղ ակունքներ և տևական ժամանակ շարունակվում է՝ ընդհուպ վաղ միջնադարյան բարձրարվեստ քանդակագործություն²¹: Միջին բրոնզեդարյան շրջանի կիրառական արվեստի ամենացայտուն օրինակներից մեկը Քարաշամբի արձաթե գավաթն է, որտեղ դրվագագարդ գոտիներից հենց առաջինում զինվորի թիկունքում պատկերված է շուն²²: Խեցեգործության մեջ նույնպես գայլի և շան պատկերագրության նմուշներ Հայաստանի տարբեր վայրերից հայտնի են²³: Ուշագրավ են Այրումից և Պառավաքարից գտնված շան և գայլի պատկերներով բրոնզաձուլ արձանիկները (մ.թ.ա. I հազ. սկզբից մինչև մ.թ.ա. I հազ. կեսեր)²⁴: Ինչպես նշում է Ս. Եսայանը, այդ խիստ ոճավորված արձանիկներից որոշները ունեն կախելու համար նախատեսված անցքեր, հավանաբար դրանք եղել են հմայիլներ²⁵: Հմայիլները ոչ միայն ոճավորվում էին շան կամ գայլի պատկերով, այլև շատ հաճախ պատրաստվում էին հենց այդ կենդանիների ոսկորներից: Այդպիսի կախիկ-հմայիլներ հանդիպում են ինչպես վաղ բրոնզեդարյան, այնպես էլ երկաթեդարյան դամբարաններում²⁶:

Եզրակացություններ

Բովերում պեղված շան թաղումով դամբարանը գալիս է փաստելու, որ վաղ երկաթի դարում տարածաշրջանի հասարակությունների հավատալիքներում շանն առանձնահատուկ տեղ են հատկացրել: Չնայած այն բանին, որ տարբեր վայրերից շան թաղումների ավելի վաղ օրինակներ հայտնի են գիտական հանրության, և դրանք բազմիցս քննարկվել են²⁷, այստեղ հատկանշականն այն է, որ թաղումը փաստագրվել է հենց դամբարանադաշտի տարածքում: Շանն առանձին դամբարան հատկացնելը և նրա հետ թաղման գույքի առկայությունը փաստում է շան հանդեպ առանձնահատուկ վերաբերմունքը: Այս գործընթացի հնագիտական փաս-

²¹ Ղազարյան 2008, 92, Հակոբյան 2016, 20:

²² Оганесян 1993, 30, табл. XXX-XXXI.

²³ Քալանթարյան, Խաչատրյան 1969, 75-77:

²⁴ Եսայան 1976, աղ. 152, 149:

²⁵ Եսայան 1976, 240:

²⁶ Տե՛ս օրինակ Poulmarc'h et al 2016, 953-972, Արտանիշ 29 դամբարան N 1-ից գտնվել է գայլի նախադաստակից պատրաստված կախիկ: Նույնականացումը՝ կ.գ.թ. Ն. Զարիկյանի, արշավախմբի ղեկավար՝ պ.գ.թ. Ա. Բորիսյան:

²⁷ Street et. al 2015.

տագրումները շարունակվում են ավելի ուշ ժամանակներում նույնպես, ինչը մի առումով թույլ է տալիս եզրակացնել, որ այս թեմայի հետ կապվող առկա բանագիտական-ազգագրական աղբյուրները արտացոլել են տարածաշրջանի հնագիտական համատեքստը:

Գրականություն

- Եգանյան Լ. 1998, Շունը և ձին անտիկ Բենիամինի թաղման ծեսում, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, N 1, էջ 43-56:
- Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա. 2002, Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, «Գիտություն», 208 էջ:
- Թումանյան Գ. 1993, Ջրվեժի վաղբրոնզեդարյան N 1 դամբարանի պեղումները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները) I, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., էջ 7-12:
- Լալայան Յ. 1928, Հուղարկավորության յեվ գերեզմանների զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր Հ.Ս.Խ.Հ., Գիտության և արվեստի ինստիտուտ, N 3, Յերեվան, էջ 82-84:
- Հակոբյան Զ. 2016, Հայկական վաղ միջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր), Երևան, ԵՊՀ հրատ., 170 էջ:
- Հարությունյան Ս.Բ. 1989, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., էջ 156-166:
- Ղազարյան Դ.Գ. 2008, Բարեկամականի հուշարձանը. Ճարտարապետական հորինվածքը, արտաքին ու ներքին հարդարանքը մինչև վերակառուցումը և վերակառուցումից հետո, Էջմիածին 2008, Ա, էջ 87-95:
- Մնացականյան Հ.Հ. 1954, Հնագույն դամբարանադաշտ Ցամաքաբերդ գյուղի մոտ, Տեղեկագիր, N 5, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., էջ 85-94:
- Մկրտումյան Լ. 2017, Կենդանակերպ տրիքստերի շուրջ միավորված հայկական հեքիաթների բովանդակային-կառուցվածքային առանձնահատկությունները, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, N 1 (22), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 29-41:
- Քալանթարյան Ա.Ա., Խաչատրյան Ժ.Դ. 1969, Հնագիտական հազվագյուտ հայտնագործություն Սևանի Ավազանից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 75-77:

- Абибуллаев О.А. 1982, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, «Элм», 314 с.
- Аресян Г.Е. 1988, Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тыс. до н.э., Вестник древней истории, N 4, с. 84-102.
- Литвинский Б.А., Седов А.В. 1984, Культы и ритуалы кушанской Бактрии, Москва, «Наука», 240 с.
- Есаян С.А. 1976, Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван, изд. АН Арм. ССР, 269 с.
- Есаян С.А. 1966, Оружие и военное дело древней Армении, Ереван, изд. АН Арм. ССР, 157 с.
- Мифы народов мира 1987, ред. С.А. Токарев, т. 1, Москва, «Советская энциклопедия», 671 с.
- Оганесян В.Э. 1993, Раскопки Карашамбского могильника в 1987 г., Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները) I, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., էջ 26-35:
- Avetisyan P.S. 2009, On Periotization and Chronology of the Iron Age in Armenia, «Aramazd», vol. IV, N 2, Yerevan, p. 55-76.
- Badalyan R., Avetisyan P. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its Surrounding Region. BAR International Series 1697, Oxford, 319 p.
- Belli O., Konyar E. 2001, Excavations of Van-Yoncatepe Fortress and Necropolis (1997-1999), Istanbul University's Contributions to Archaeology in Turkey (1932-2000), Instambul (edited by Oktay Belli), p. 150-156.
- Boessneck V.J., Driesch A. 1984, Die zoologische Dokumentation der Reste von vier Pferden und einem Hund aus einem mykenischen Schachtgrab in Kokla bei Argos (Peloponnes), Spixiana, N 7, München, p. 327-333.
- Crockford S.J. 2009, A Practical Guide to in situ Dog Remains for the Field Archaeologist, Pacific Identifications Inc., Victoria BC, 146 p.
- Onar V. 2005, Estimating the Body Weight of Dogs unearthed from the Van-Yoncatepe Necropolis in Eastern Anatolia, Turkish Journal of Veterinary and Animal Sciences, vol. 29, N 2, p. 495-498.
- Poulmarc'h M., Christidou R., Bălăşescu A., Alarashi H., Le Mort Francois, Gasparian B. & Chataigner C. 2016, Dog Molars as Personal Ornaments in a Kura-Araxes Child Burial (Kalavan-1, Armenia), Antiquity, Online, p. 953-972.
- Ritner R.K., Scaif F.D. 2019, Anubis, Archer Figures and Demotic Magic, Göttinger Miszellen (259), p. 185-212.

Street M., Napierala H., Janssens L. 2015, The Late Palaeolithic Dog from Bonn-Oberkassel in Context, The Late Glacial burial from Oberkassel revisited (L. Giemsch, R.W. Schmitz eds.), Rheinische Ausgrabungen, N 72, p. 253-274.

ՌԻՇԱԳՐԱՎ ԹԱՂՈՒՄ ԲՈՎԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ

Անի Սարատիկյան

Ամփոփում

Բովեր դամբարանադաշտը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Շնող և Թեղուտ գյուղերի միջնամասում՝ Բովեր եկեղեցու կենտրոնական մասից արևմուտք, ծովի մակարդակից 930 մ միջին բարձրության վրա: 2012 թ. պեղումների արդյունքներից պարզ դարձավ, որ N 45 դամբարանը պաշտամունքային թաղում-դամբարան է: Մ.թ.ա. I հազ. սկզբով թվագրվող, մասամբ խաթարված այդ դամբարանում թաղված էր մի շուն: Ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի համաժամանակյա հնագիտական նյութը ցույց է տալիս, որ համանման թաղումները բնորոշ էին հիշյալ ժամանակաշրջանին և շարունակվում են նաև հետագայում:

Բանալի բառեր՝ երկաթի դար, շուն, թաղում, դամբարան, խեցեղեն, պաշտամունք, Բովեր:

УНИКАЛЬНОЕ ЗАХОРОНЕНИЕ ИЗ МОГИЛЬНИКА БОВЕР

Ани Саратикян

Резюме

Могильник Бовер расположен на территории между селами Шнохи Техут Лорийской области Республики Армении, к западу от центральной части церкви Бовер, на высоте 930 м над уровнем моря. Раскопки могильника N 45 в 2012 году показали, что данное захоронение является культовым, с характерной ритуально-сакральной составляющей. В частично поврежденной гробнице была захоронена собака, здесь же был найден погребальный инвентарь. Археологические материалы параллельных периодов как в Армении, так и в регионе свидетельствуют о том, что по-

добные захоронения были типичными для указанного периода. Они, безусловно, связаны с этнографическими особенностями региона, что способствует выявлению археологического контекста.

Ключевые слова – железный век, собака, захоронение, гробница, керамика, культ, Бовер.

A REMARKABLE BURIAL FROM BOVER CEMETERY

Ani Saratikyan

Abstract

Bover cemetery is located in the middle of the villages of Shnogh and Teghut of the Lori region of the Republic of Armenia, to the west of the central part of Bover church, at an average altitude of 930 m above sea level. According to the results of excavations in 2012, it turned out that the tomb No. 45 is a cult-burial tomb. A dog was buried in that partially damaged tomb (beginning of the 1st millennium BC).

The contemporary archaeological material both from Armenia and the surrounding regions shows that such burials were typical of the mentioned period. The archaeological materials, are certainly linked to ethnographic narratives, which make it possible to draw up a general picture of this phenomenon.

Key words – Iron Age, dog, burial, tomb, pottery, cult, Bover.

ТЕНДЕНЦИИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ФОРМАТОВ ТЕЛЕКАНАЛОВ НА АРМЯНСКОМ МЕДИАРЫНКЕ

Эмине Рухкян

Соискатель кафедры журналистики Российско-Армянского университета

Эл. адрес: emineh.rukhkian@yandex.ru

Статья представлена 12.05.2021, рецензирована 18.09.2021,

принята к публикации 15.10.2021

DOI: 10.53548/03208117-2021.3-264

Вступление

В сегодняшней телевизионной реальности очень много споров относительно такого понятия как «*формат телеканала*». По утверждению некоторых медиаэкспертов, ряд общедоступных телеканалов не вызывает интереса у зрительской аудитории. Из-за этого число нишевых неэфирных телеканалов будет возрастать, привлекая в этот сегмент заинтересованных рекламодателей. А, как мы знаем, «Большая тройка» интересуется, в большинстве своем, пожилую аудиторию, не представляющую интереса для рекламодателя. Что касается эфирных и неэфирных телеканалов, то они популярны среди молодой аудитории, т.е. платежеспособной, следовательно, важной и значимой для рекламодателя.

Следует также обратить внимание на тот немаловажный факт, что нишевое телевидение – это не только та площадка, которая выгодна рекламодателю, но и сегмент в плане влияния на общественное мнение. Яркий тому пример – телеканал «Azatutyun TV»¹, который, в целом, беспристрастно освещает те или иные события.

Акцентируя свое внимание на появляющихся *форматах* и *подформатах* в современной телевизионной журналистике, можно заключить, что активно будет продолжаться развиваться именно развлекательный вектор современного телевидения. И этому есть научное обоснова-

¹ Электронный источник. Доступно на: <https://www.azatutyun.am/p/3148.html/>

ние: предпочтения телезрителя, вопреки возрастающему процессу дробления, за последние годы остаются почти что неизменными. Это говорит о том, что вряд ли можно ожидать кардинальных изменений в предпочтениях телезрителя в ближайшем будущем. Современное телевидение подвергается функциональному перекосу относительно контента. Развлекательная функция, бесспорно, доминирует, причем это является общей тенденцией для всей медиасферы, а не только современного армянского телевидения.

Подобное возрастание интереса к развлекательному контенту, конечно же, зависит от предпочтений целевой аудитории. Современный телезритель практически не имеет каких-либо явных отличий от телезрителя, скажем, пятилетней давности. Он также большую часть своего времени уделяет просмотру телесериалов, шоу и телепередач развлекательного характера, меньше интересуясь новостным блоком и художественными фильмами.

Если количество *форматов* в ближайшем будущем вряд ли подвергнется кардинальным изменениям, то потребность в качественной содержательной структуре будет возрастать. Вещатели делают акцент не на том, чтобы освоить новую нишу, а, скорее, укрепить свои позиции в уже имеющихся. Такая тенденция отражается в том, что продюсеры телепрограмм, занимая ключевые ниши на медиарынке, получают при этом возможность иметь сильные переговорные позиции при заключении сделок с каналами.

Еще одним неперменным трендом в развитии форматного телевидения, естественно, будет плавное воссоединение с глобальной сетью, заимствование новых жанровых форм из Интернета. Кстати, эту тенденцию можно заметить и сегодня на российском телевидении. Например, еще в 2011 году на телеэкраны пришел «человек из Интернета» – Максим Голополосов, ведущий популярной программы «+100500»², целью которой было представление самых ярких и интересных видеороликов из Интернета. Это явилось следствием большого успеха идеи

² Электронный источник. Доступно на: <https://www.youtube.com/watch?v=OYdPMVul9wo>

интернет-видеошоу российского телеканала «Перец»³. Многие выпуски имели по несколько миллионов просмотров, хотя следует отметить, что грандиозный успех подобный формат имел не сразу. Многие даже высказывались отрицательно насчет такого переноса интернет-передачи на телевидение. В первые месяцы аудитория у программы была очень маленькой. Но с течением времени программа начала набирать обороты и закрепила за собой огромный успех, что повлияло и на рейтинг телеканала в целом. Ведь многие абоненты подписывались на кабельное телевидение, учитывая также наличие телеканала «Перец» в списке всех остальных.

Заключение

Дискуссии по поводу того, что именно Интернет станет основной опасностью уже через пару лет, а не конкретные телеканалы, не утихают. Так, Т.С. Соколова отмечает, что «в сети все настолько мультимедийно, изменчиво, что о форматах говорить не приходится. Все может меняться, «переформатироваться» каждую минуту»⁴. С подобными преобразованиями телевидению вряд ли удастся справиться и выдержать конкуренцию. Хотя оптимисты утверждают, что вряд ли этот процесс произойдет так быстро, учитывая также и то, что часть телеаудитории (по крайней мере, взрослое поколение) в любых случаях в ближайшее время сохранит свою преданность именно телеканалам. Во всяком случае, современные условия гибридизации потокового и нелинейного телевидения, а также ускоренное развитие новейших технологий предоставляют телезрителю уникальную возможность самому выбирать не только контент, но и время его просмотра. А это говорит о том, что необходимо с самого начала в правильном русле создать собственный формат, привлекая «своего» телезрителя.

Что касается армянского телевидения, то здесь не все так однозначно. В результате опроса экспертов нам удалось выявить одну зако-

³ Электронный источник. Доступно на: <https://megogo.net/ru/tv/channels/2369121-perec-i-online.html>

⁴ См.: Телевидение в России 2013, 74.

номерную особенность: размышляя о будущем форматного телевидения, многие исследователи склонны предполагать, что в ближайшее время на армянском телевидении вряд ли появятся новые форматы. Наверняка, в уже имеющихся *форматах* возникнут новые формы, т.е. *форматы* будут подразделяться, пересекать друг друга, и в итоге возникнут новые *подформаты*. Кстати, такой процесс можно заметить и сегодня, причем он будет нарастать с каждым годом, в частности, это скажется на развлекательном сегменте.

Согласно С.С. Ерицяну, армянские каналы носят в основном общий характер, охватывая ключевые тематические направления. По его мнению, выделяется канал «ArmNews»⁵, который заявил о себе как информационный и продолжает развиваться в этом направлении. Вместе с тем есть и другие форматные каналы, но трудно говорить об их самостоятельности и целостности, поскольку они демонстрируют, главным образом, старые и повторяющиеся материалы с записями, сделанными десятки лет назад⁶.

Таким образом, можно заключить, что армянским каналам следует искать форматы, которые будут способствовать расширению аудитории, с одной стороны, а с другой – работать в направлении развития каналов, имеющих общие форматы.

Литература

- Качкаева А.Г. 2010, Жанры и форматы современного телевидения. Последствия трансформации, Вестник Московского университета, серия 10. Журналистика, N 10, с. 42-50.
- Телевидение в России 2013, Состояние, тенденции, перспективы развития: отраслевой доклад, под ред. Е.Л. Вартановой, Москва, Федеральное агентство по печати и массовым коммуникациям Российской Федерации, 100 с.
- Телеканал “AzatutyunTV”. Доступно на: <https://www.azatutyun.am/p/3148.html> (Дата обращения: 10.06.2020).

⁵ Электронный источник. Доступно на: <https://gisher.org/services/armtv.html?tv=armnews>

⁶ Интервью с д. филол. н., профессором С.С. Ерицяном.

Телеканал “ArmNews”. Доступно на: <https://gisher.org/services/armtv.html?tv=armnews> (Дата обращения: 11.06.2020).

Телеканал «Переc». Доступно на: <https://megogo.net/ru/tv/channels/2369121-perec-i-online.html> (Дата обращения: 11.06.2020).

<https://www.youtube.com/watch?v=OYdPMVuI9wo> (Дата обращения: 10.06.2020).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԴԻԱՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԵՌՈՒՍԱԿԻՔՆԵՐԻ ՁԵՎԱԶԱՓԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Էմինե Ռուխկյան

Ամփոփում

Այսօրվա հեռուստատեսային իրականությունում շատ հակասություններ կան «ձևաչափային հեռուստատեսություն» հասկացության վերաբերյալ: Այսօր հայաստանյան (ի դեպ, նաև ռուսական) լրատվամիջոցների ամենաարագ աճող հատվածը ոչ թվային հեռուստատեսության արտադրանք է, որը ներառում է արբանյակային, կաբելային և IPTV հատվածները: Այսպիսով, հեռուստաալիքները ակտիվորեն փորձում են գտնել իրենց «դեմքը» և, համապատասխանաբար, իրենց ձևաչափը:

Բանալի բառեր՝ ժամանակակից հայաստանյան հեռուստատեսություն, ձևաչափ, հեռուստադիտող, լսարան, մեդիաշուկա, ժանր, հեռուստաալիք:

ТЕНДЕНЦИИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ФОРМАТОВ ТЕЛЕКАНАЛОВ НА АРМЯНСКОМ МЕДИАРЫНКЕ

Эмине Рухкян

Резюме

В сегодняшней телевизионной реальности очень много споров относительно такого понятия как «формат телеканала». Сегодня самый быстрорастущий сегмент армянского медиарынка (кстати, равно, как и российского) – это рынок неэфирного телевидения, который включает спутниковый, кабельный и IPTV-сегменты. Так, аудитория постепенно разграничивается, а это приводит к тому, что вещатели в активном поиске пытаются найти свое «лицо» и, соответственно, свой формат.

Ключевые слова – современное армянское телевидение, формат, телезритель, аудитория, медиарынок, жанр, телеканал.

TRENDS AND PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF TV CHANNELS FORMATS IN THE ARMENIAN MEDIA

Emine Rukhkyan

Abstract

In today's television reality, there is a lot of controversy regarding such a concept as "TV channel format". Today, the fastest growing segment of the Armenian media market (by the way, as well as the Russian one) is the non-terrestrial television market, which includes satellite, cable and IPTV segments. Thus, the audience is gradually delineated, which leads to the fact that broadcasters in an active search are trying to find their "face" and, accordingly, their format.

Key words – modern Armenian television, format, TV viewer, audience, media market, genre, TV channel.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Կոմունիստական դարաշրջանի ավարտից և Հայաստանի անկախացումից հետո տարբեր բնագավառներում, այդ թվում նաև գիտության մեջ, օրակարգային էին արմատական վերափոխումներ անելու հարցերը: Ստորև հրապարակում ենք գիտության բնագավառում վերափոխումների՝ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի հեղինակած ուշագրավ մի փաստաթուղթ՝ «Հուշագիր՝ հասարակական գիտությունների ազգային կենտրոն ստեղծելու վերաբերյալ» վերնագրով, որը պահվում է Հայաստանի ազգային արխիվում¹:

Փաստաթուղթը գրվել է 1992 թ. սկզբին՝ քննարկվող բարեփոխումների քաղաքական օրակարգի շրջանակում²: Այն մասնավորեցված է հասարակական գիտությունների, հատկապես պատմագիտության, հայագիտության բնագավառների համար (որպես մոդել առաջարկվելով նաև գիտության այլ բնագավառներում օգտագործվելու): Նպատակը՝ «բարձրացնել այդ գիտությունների և, առաջին հերթին, հայագիտության ստատուսը»՝ խթանելու համար նրա զարգացումը: Այսինքն, այստեղ ոչ թե գիտնականի հրապարակախոսական մտորումներ են, այլ համակարգային վերափոխումների ընդհանուր օրակարգում գիտության ասպարեզը վերափոխելու գործնական ու որոշակի ծրագրի մի էսքիզ, հիմք: Հեղինակը՝ որպես XX դ. ամենաբարձրակարգ պատմաբաններից ու գիտության հմուտ կազմակերպիչներից մեկը, լավագույնս է տեսել ու զգացել, թե ինչն է խանգարել կամ կաշկանդել գիտության, մասնավորապես իրեն ավելի քաջաճանոթ՝ հասարակական գիտությունների բնագավառի զարգացմանը, ազդել դրա որակական հատկանիշների վրա, և **ինչ պետք է անել**՝ կաշկանդող ու խանգարիչ այդ հանգամանքները վերացնելու, գիտության զարգացումը բնականոն ու բանական ուղու վրա դնելու համար: Եվ քանի որ այս բնագավառում արմատական ու համակարգված բարեփոխումներ, հանգամանքների բերմամբ, այդպես էլ չիրականացան, և այսօր էլ դա օրակարգային է, հիշյալ փաստաթուղթը չի կորցրել իր այժմեականությունն ու գործնական նշանակությունը, արժանի է հատուկ ուշադրության: Նշյալ «**ի՞նչ**

¹ ՀԱԱ, Լևոն Տեր-Պետրոսյանի ֆոնդ, 1800, ց. 1, գ. 133/09.02.1992:

² Շրջանառության մեջ կար այս բնագավառի բարեփոխման ևս երկու նախագիծ՝ կազմված ՀՀ ԳԱԱ-ի և ՀՀ կառավարության կողմից (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 14.08.1992):

պետք է անել» հարցադրումը կամ պատմագիտության բարեփոխումը, լայն իմաստով, Գագիկ Սարգսյանի համար ունի երկու տեսանկյուն կամ բաղադրիչ.

1. **Ներգիտական**, այն է՝ ազատել գիտությունը «խորհրդային մարքսիզմի» գաղափարախոսական պարտադրված ազդեցություններից, կապանքներից ու հետևանքներից: Սրանում հիմնական անելիքը գիտնականներինն է, իսկ իշխանության գործառույթը՝ ընդամենը պետք է բացառի նմանօրինակ որևէ այլ գաղափարախոսական պարտադրանք: Ուստի և՛ իշխանությանն ուղղված հիշյալ փաստաթղթում այս մասը հակիրճ է, այն ավելի շատ կոչ կամ պատգամ է՝ ուղղված մասնագետ հետազոտողներին:

2. **Կազմակերպական վերակառուցման** մասը «Հուշագրում» հանգամանալից է ներկայացված, այն ենթադրում է կառուցվածքային վերափոխումներ, օրենսդրական կարգավորումներ, այսինքն՝ այն, ինչն իշխանության գործն է, կամ անհրաժեշտ է նրա նախաձեռնողական ակտիվ միջամտությունն ու դերակատարությունը:

Նշյալ երկու բաղադրիչները, սակայն, օրգանապես կապված են միմյանց. ոլորտի կառուցվածքային-կազմակերպական վերափոխմանը պետք է զուգակցվեր ներգիտական վերափոխումը, որով այս բարեփոխումը կտար ցանկալի արդյունք: Ահա թե ինչու, մի քանի ամիս անց տպագրված՝ «Մեր օրերի իմ ընկալումները» վերնագրով հրապարակախոսական իր ընդարձակ հոդվածում Գ. Սարգսյանը ևս մեկ անգամ հատուկ անդրադարձել է այս զույգ խնդիրներին, որտեղ արդեն ավելի հանգամանորեն է խոսում իր պատկերացրած ու առաջարկած բարեփոխման առաջին՝ **ներգիտական** բաղադրիչի մասին³: Նկատի ունենալով, որ հիշյալ հոդվածի տվյալ հատվածը որպես հասարակական գիտությունների բնագավառում բարեփոխման անքակտելի մաս, լրացնում, ամբողջացնում է գիտնականի ասելիքն ու պատկերացումները, ներածական այս խոսքում կներկայացնենք դրա հիմնական դրույթները և մեր մեկնաբանություններում ու արձանագրություններում կհենվենք դրանց վրա⁴:

Արդ, որո՞նք են բարեփոխման **ներգիտական** բաղադրիչի հիմնական խնդիրները, ինչի՞ց պետք էր ազատել գիտությունը և ի՞նչ ապահովել նրա համար:

Ա) ԽՍՀՄ-ը գաղափարախոսականացված քաղաքական համակարգ էր: Հայտնի է, որ այդօրինակ պետական համակարգերում հասարակական գիտությունները և, առաջին հերթին, պատմագիտությունը, ենթարկվելով իշխող

³ Սարգսյան Գ., Մեր օրերի իմ ընկալումները, Հայաստանի Հանրապետություն, 14.08 – 15.08.1992:

⁴ Մեր խոսքում չակերտված մեջբերումները այդ հոդվածից են:

գաղափարախոսության ակտիվ ներգործությանը՝ որպես սպասավոր-քարոզչամիջոց ծառայեցվում է տվյալ քաղաքական համակարգի շահերին: Այդ ներգործությունը դրսևորվում է օբյեկտիվ պատմությունը կաղապարների մեջ դնելու, փաստերն ու իրողությունը միայն որոշակի ուղղությամբ մեկաբանելու, ըստ հարկի՝ նաև ձևափոխելու, խեղելու, որոշ դրվագներ ու փաստեր անտեսելու, նսեմացնելու, ուրիշները՝ ուռճացնելու, ընդհուպ կեղծելու միջոցով: Հենց այդպես է եղել խորհրդային համակարգում, և այդ իրողությունը ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը պատկերավոր, բայց շատ հստակ արձանագրել ու բանաձևել է հետևյալ կերպ. «**Իշխող քաղաքական դոկտրինայի թույնը, հոսելով հին պարմությունից դեպի նորը, հեղափոխելով ուժեղանում էր, իսկ հասնելով նորագույնին, պարզապես կազմալուծում այն: Բայց միայն սա չէր դրա վրանգը: Այն իր օրինակով սովորեցնում էր բոլոր պարմաշրջաններին մերձեցողներին պարմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիությունը, նաև այնպիսի դեպքերում, երբ այդ արվում էր ոչ թե իշխող դոկտրինայի հունով, այլ ցանկացած «բարձր» քաղաքական, կեղծ հայրենասիրական, ազգային, խմբակային կամ որևէ այլ նպատակով» (ընդգծումներն իմն են, - Ա.Ս.):**

Այս տխուր իրողությունը, բնականաբար, վերաբերում է ոչ միայն հայ, այլ նաև խորհրդային մյուս ժողովուրդների պատմագրություններին և հասարակական գիտություններին, որը և նա հատուկ արձանագրում է⁵:

Այսինքն՝ ազատվելով գաղափարախոսական կապանքներից, պարտադրանքներից և գայթակղություններից՝ պատմագրությունը ազատվում է կեղծիքների հիմքերից, դառնում առավել օբյեկտիվ, հավաստի և գիտական:

Նույնպիսի կործանարար ներգործություն հասարակական գիտությունների վրա անխուսափելիորեն պետք է ունենա ցանկացած այլ, պետական մակարդակի բարձրացված (կարևոր չէ՝ ֆորմալ, թե ոչ ֆորմալ) «դոկտրին»: Այսինքն՝ այս բնագավառի զարգացման ու պատշաճ գիտականության ապահովման **առաջին խնդիրը** կամ նախապայմանը որևէ գաղափարախոսության խնամակալության կամ պարտադրանքի բացառումն է:

⁵ «Ռուսաստանում այդ շիթը (պատմության նենգափոխման - Ա.Ս.) սթափ գլուխները զավեշտով բնութագրում էին «Ռուսաստանը՝ փղերի հայրենիք» արտահայտությամբ: Նույն երևույթը հատուկ էր և մնացյալ բոլոր «եղբայրական» հանրապետություններին և հատկապես ուժեղ էր Վրաստանում (նախնիների սփռումը ամբողջ Եվրասիայով մեկ, Կովսիդայի գերիզոր թագավորություն և այլն) և Ադրբեջանում (նորաթուփ թուրքալեզու ժողովրդին շումերական, մեդական և էլ ինչ սեսե ծագում վերագրելու, Աղվանքին պատմականորեն տիրանալու և այլ փորձեր): Անմասն չի մնացել և Հասստանը (ուրարտամերժություն, պետություն՝ մ.թ.ա. 3-րդ հազ. և այլն):»

Բ) Արդյո՞ք բոլորն էին զգում «իշխող քաղաքական դոկտրինի» շրջանակների կաշկանդիչ լինելը, թելադրանքը և դրա կործանարար ազդեցությունը գիտության վրա, և բոլո՞րն ազատ շունչ քաշեցին խորհրդային համակարգի տապալմամբ դրանից ազատվելու առիթով: Կարծես թե ոչ, և ակադեմիկոս գիտնականը նշում է, թե ինչու. «Տասնամյակներ շարունակ արտագիտական-քաղաքական ոլորտից պատմագիտության մեջ ներարկվել է որոշակի, շատ պարզունակ, և դրանով էլ **վարակիչ ու գրավիչ** «խորհրդային մարքսիզմի» առանցքազաղափարը (կոնցեպցիան)» (ընդգծումն իմն է - Ա.Ս.):

Այն «վարակիչ ու գրավիչ» էր առաջին հերթին այն հանգամանքով, որ նաև դյուրություններ էր ստեղծում միջին հետազոտողի համար: Միայն առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, սակայն շատ ավելի հեշտ է աշխատել տրված կաղապարներով, քան ազատության մեջ, երբ հետազոտողը զրկվում է «վարակիչ ու գրավիչ» մի հայեցակարգերով առաջնորդվելու ու նրա տված դյուրություններից օգտվելու հնարավորությունից: Շատ ավելի հեշտ է ու ապահով՝ գնալ տրված պատրաստի հունով՝ փաստերն ու իրողությունները անգամ խեղաթյուրելու գնով հարմարեցնելով դրան, քան փաստերի և հաճախ իրարամերժ տեղեկությունների հոժանուտում ինքնուրույն հուն բացել, համակարգ կառուցել, ինքնուրույն ներքին տրամաբանական կապեր ստեղծել: Գաղափարախոսական հանձնարարելի կամ պարտադրված շրջանակների պայմաններում, այսպիսով, հետազոտական աշխատանքի համար թույլատրելի են դառնում շատ ավելի մատչելի և դյուրին, բայց ոչ գիտական մեթոդները: Այսինքն, «վարակիչն ու գրավիչը», մատչելին ու դյուրինը, որպես յուրատեսակ մի թմրանյութ, շատերին յուրատեսակ մի կախվածության էր բերել, վարժեցրել աշխատանքի մի մեթոդի, որի դեպքում հետազոտողն իջնում է արհեստավորի, գիտական-հետազոտական աշխատանքը՝ արհեստավորական արտադրանքի մակարդակի, ինչը և ակադեմիկոս պատմաբանը համարում է «իրեշավոր».

*«Մենք չափ ենք քննադատում մեր նախորդ հասարակարգը, ոմանք էլ, ընդհակառակը, կարողով են հիշում այն, մասամբ մոռանալով, որ այսօրվա չարքաշ վիճակը նրա ցանած սերմերի պտուղն է: Երկու մոլեցումներն էլ, սակայն, հիմք ունեն՝ անցածի մեջ վապն էլ է եղել, լավն էլ: Բայց մի բան կա, որ լավի ու վարի այն կողմն է, որը պարզապես **իրեշավոր է**. դա այն է, որ այդ հասարակարգը **գողացել է ՀԱՅԻՑ թասիբով** (ներողություն) **աշխատելու ունակությունը**»:*

Միջազգային մասշտաբով առաջնակարգ հայ պատմագրությանն ու պատմագիտությանը նա անհարիր է համարում այդ վիճակը՝ հայ գիտնականին «թասիբով» աշխատելու հնարավորությունից զրկելը. «Մեր՝ *խորենացու և Ադոնցի հեղուորդների համար հարկապես անպապշաճ էր այդ «միդինգային*

գիտության» այդչափ ուժեղ ծփումը, որը, ի դեպ, տրակավին չհանդարտվեց նոր պարագաներում»:

ԽՍՀՄ քաղաքական համակարգի վերացմամբ ինքնաբերաբար չէր լուծվելու նրա՝ տասնամյակներ շարունակ գործած «քաղաքական դոկտրինի թույնի» այդ կախվածությունից պատմագիտության ազատման խնդիրը: Ժամանակ էր պետք, որ նոր՝ ազատության պայմաններում պատմաբան հետազոտողները, մասամբ՝ յուրօրինակ մի «ինքնավերապատրաստում» անցնելով, մասամբ՝ սերնդափոխության հանգամանքով վարժվեին ուսումնասիրման նոր, իրական գիտական մեթոդի, «թասիբով» աշխատելու ունակության: Սա է Գ. Սարգսյանի պատկերացրած բարեփոխման ներգիտական բաղադրիչի արձանագրած **երկրորդ խնդիրը**՝ որպես պատմագիտության զարգացման և պատշաճ մակարդակի ապահովման մի գրավական:

Գ) Այնպես չէ, որ Գագիկ Սարգսյանը մերժում է մարքսիստական պատմագրությունն ամբողջապես և դրա մեջ ոչինչ արժեքավոր չի տեսնում: Նա մերժում է «խորհրդային մարքսիզմը», ոչ թե պատմագիտության մարքսիստական հիմքն ընդհանրապես. «*Բայց մարքսիզմի (առանց «խորհրդայինի») տեսությունը և պրակտիկան եղել են, կան և կմնան: Իսկ մարքսիզմը, եթե խոսում ենք պայմանական մասին, ապա՝ պայմական մատերիալիզմը, իր մեջ շարքան ունի կուրակած համաշխարհային պայմագիտական մտքի նվաճումներից: Դեն ներկելով այդ բոլորն ամբողջությամբ՝ մենք ծայրահեղ կոնցեպտուալիզմից անցնում ենք անկոնցեպտուալ պայմագրության, որովհետև անհնարին է միանգամից պայմանական զարգացման նոր կոնցեպցիա մշակել, կամ էլ կողմնորոշվել աշխարհում առկա բազմաթիվ կոնցեպցիաների մեջ, կամ էլ զարել պայմական մատերիալիզմից ընդունելին»:*

Մերժելով «խորհրդային մարքսիզմի ծայրահեղ կոնցեպտուալիզմը», բայց նաև ճիշտ չհամարելով անցումը «անկոնցեպտուալ պատմագրության», Գ. Սարգսյանը, որպես ուղենիշ, առաջարկում է միակ ընդունելի և ապահով լուծումը. «...*հիմնական ուշադրությունը սևեռել պայմական փաստերին հարազատ մնալուն: Վերադարձնենք փաստին նրա իրավունքը՝ լինելու հետազոտության հաստատուն հիմք՝ իր բնական, անաղարտ, չենեզափոխված, չպոչարված և անհավելուն տեսքով* (ընդգծումն իմն է - Ա.Ս.): *Չզոհաբերենք փաստը ոչ մի, նույնիսկ ամենագեղեցիկ և ամենաազնիվ նպատակի»:*

Ահա սա էլ կարելի է համարել հասարակական գիտությունների բնագավառում բարեփոխման «ներգիտական» բաղադրիչի **երրորդ խնդիրը** կամ հենապունը:

Տասնամյակներով ձևավորված մտածողության, առաջացած կարծրատիպերի, ընտանի դարձած արհեստավորական աշխատաձևի և աշխատառճի

ինքնիշխան հաղթահարելու խնդիրը, ժամանակի ընթացքում, իհարկե, կլուծվեր ի նպաստ «փաստի իրավունքի», գիտականության որակի բարձրացման: Բայց դրան խանգարեցին երկու հանգամանք: **Առաջին՝** հետկոմունիստական Հայաստանի ապագադափարախոսականացված շրջանի կարճատևությունը (ընդամենը՝ 1991-1998 թթ.): **Երկրորդ՝** հայ իրականության մի յուրահատկությունը, այն է՝ տևական շրջան «խորհրդային մարքսիզմին» այլընտրանք և «ազգային դոկտրինի» («ազգային գաղափարախոսության») կարգավիճակի հավակնող հայդատականություն-պահանջատիրությունը⁶: Եվ, ինչպես ասում են, «սուրբ տեղը դատարկ չմնաց»: Կոմունիստական գաղափարախոսական «վարակիչ ու գրավիչ» կադապարներին շատ արագ փոխարինեցին «ազգային» և «հայրենասիրական» կեղծ համարում ունենալու հանգամանքով ավելի հեշտալի ու գայթակղիչ, իսկ 1998 թվականից ի վեր նաև «իշխող քաղաքական դոկտրինի» վերածված՝ հայդատական-պահանջատիրական գաղափարախոսական կադապարները: Կարևոր չէ, որ այն բովանդակային ոչ մի կապ չունեն իր նախորդի հետ. որպես մի «դոկտրին», և այն էլ՝ «ազգային», դրա բացասական արդյունքը, անխուսափելիորեն, պետք է լիներ նույնը և շատ ավելի աղետալի. հիմա էլ այս «**իշխող քաղաքական դոկտրինի թույնը**», ապահովելով «**պատմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիությունը**», հանուն կարծեցյալ «բարձր» քաղաքական, կեղծ հայրենասիրական, ազգային, խմբակային... նպատակի» պիտի նույն կերպ կազմալուծեր պատմության, հատկապես նրա նոր և նորագույն շրջանի իրողությունները: Հասարակական գիտությունները, անխուսափելիորեն, պետք է դառնային այդ նոր դոկտրինի ու դրա վրա հենվող վարչակազմի սպասավորները:

Դժար չէ նկատել, որ հասարակական գիտությունների բնագավառում բարեփոխման իրականացման «ներգիտական» բաղադրիչի՝ վերն առանձնացված երեք խնդիրներն էլ ունեն մի «ընդհանուր հայտարար»-գերխնդիր՝ **պատմության կեղծման, նենգափոխման կանխումը:**

Ինչո՞ւ է այս խնդիրն այդքան կարևոր:

⁶ Հայ դատ - միջազգային Cause Armenienne (Armenian Cause) եզրույթի բառացի հայերեն թարգմանությունն է, որ նշանակում է «Հայկական հարց»: Ծագելով 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո որպես միջազգային հարցի անուն՝ այն նախապես բոլորովին այլ իմաստ է ունեցել, այն է՝ Օսմանյան կայսրության հոծ հայկական բնակչությունն ունեցող նահանգներում եվրոպական գերտերությունների վերահսկողությամբ բարենորոգումներ անցկացնելու ծրագիր: 1923 թ. Լոզանի կոնֆերանսից հետո, երբ նշված ծրագիրը վերջնականապես թաղվեց, «Հայ դատ» եզրույթը հայկական միջավայրում վերաիմաստավորվեց, և վաղուց դրա քաղաքական էությունը այլ բան չէ, քան **պահանջատիրությունը**, որի միջազգային մոտավոր համարժեքը irredentism բառն է:

Հարցի պատասխանը, գիտական բարեխղճությունից զատ, ավելի շատ քաղաքական հարթության վրա է: Երբ օտարներն են կեղծում ու նենգափոխում մեր պատմությունը, դա արվում է հստակ քաղաքական նպատակներով. հայ պատմաբանները, գիտակցելով դրա վնասն ու վտանգը, պայքարել ու պայքարում են, մասնավորապես, թուրքական և ադրբեջանական կեղծարարների դեմ: Սակայն տասնապատիկ ավելի մեծ են այդ վնասը և վտանգը, երբ մենք ենք կեղծում, խեղաթյուրում, նենգափոխում մեր իսկ պատմությունը: Եվ դա՝ անկախ այն բանից, թե ինչ շարժառիթով է արվում՝ «բարձր» քաղաքական, «հայրենասիրական», ազգային, խմբակային, հանուն «ամենագեղեցիկ և ամենաազնիվ նպատակի»⁷: Սեփական պատմության կեղծման ու նենգափոխման ամենամեծ վտանգը անմիջապես առնչվում է այդքան շատ կրկնվող «պատմության դասերի» հետ. ճշմարիտ պատմությունը ճշմարիտ և օգտակար դասեր է տալիս՝ ազգի գոյատևման և զարգացման համար հուշելով ճիշտ կեցվածք ու վարքագիծ⁸, կեղծվածը (մասնավորապես՝ կեղծ հայրենասիրության հիմքով) կեղծ դասեր է տալիս՝ մղելով արկածախնդրության և հանգեցնելով աղետների:

Ահա թե ինչու Գ. Սարգսյանի արձանագրած՝ պատմագիտության և, ընդհանրապես, հասարակական գիտությունների բնագավառում արմատական բարեփոխման խնդիրն ամբողջությամբ՝ իր «կազմակերպական» և մասնավորապես «ներգիտական» բաղադրիչներով շարունակում է մնալ նույնքան արդիական, որքան 1992 թվականին էր:

Ինչ վերաբերում է առաջարկվող բարեփոխման **կազմակերպական բաղադրիչին**, ապա հրապարակվող փաստաթուղթը լրացուցիչ մեկնաբանու-

⁷ Դրա վառ օրինակը 1988-ից ծայր առած Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման ու դրան հաջորդած պետականության շրջանի պատմության ուրացումն ու կեղծումն է (տե՛ս **Սարգսյան Ա.**, Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը, Երևան, 2015): ԽՍՀՄ փլուզման՝ համաշխարհային պատմության համար շրջադարձային նշանակություն ունեցող աշխարհաքաղաքական իրադարձություններում Հայկական շարժումն առաջնային գործոն էր: Այլ խոսքով՝ երկար, շատ երկար ընդմիջումից հետո Հայաստանը մի քանի տարի որոշակիորեն ազդում էր համաշխարհային պատմության ընթացքի վրա (ժամանակին անգամ օտարներն են նման արձանագրումներ արել): Այսօր այդ կարևոր շրջանի հետ կապված միջազգային պատմագիտության մեջ Հայաստանն անգամ չի հիշատակվում: Հայ պատմագիտության խնդիրն էր դրա ապահովումը, մինչդեռ կատարվել է ճիշտ հակառակը՝ ամեն կերպ նեմացվել, արժեզրկվել, ուրացվել է այդ տարիների պատմությունը:

⁸ Ճշմարիտ պատմության այս հավատամքը առաջնային է եղել պատմահայր Մովսես Խորենացու համար դեռ V դարում:

թյան կարիք չունի, այն, ինչպես սկզբում ասացինք, որպես հիմք, կարող է մեծապես օգտակար լինել ինչպես Ազգային ակադեմիային, այնպես էլ իշխանությանը՝ համապատասխան բարեփոխումներ իրականացնելու համար:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՈՒՇԱԳԻՐ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախորդած շրջանում հասարակական գիտությունների դերը թե՛ հանրապետության մեջ և թե՛, մասնավորապես, Գիտությունների ակադեմիայում, նսեմացված է եղել: Դրա պատճառներն էին. մի կողմից՝ տեխնոկրատիայի ճնշումը, մյուս կողմից՝ ծայրահեղ այն գաղափարականացումը, որ համակել էր հասարակական գիտությունների մի էական մասը: Բազմաթիվ ցուցանիշներով այդ գիտությունները և նրանց մեջ հայագիտությունը հետին տեղ էին գրավում (մնացորդային ֆինանսավորում, տեխնիկայի բացակայություն, շենքերի ողորմելի վիճակը, կադրերի պատրաստման սահմանափակումներ, պլանների, հաշվետվությունների, այլապլ թվարկումների մեջ վերջին տեղեր և այլն): Այս վիճակից տուժում էին նաև գաղափարականացումից զերծ մնացած հայագիտական այն հազվագյուտ մասնագիտությունները, որոնց զարգացումը կապված է լեզուների և այլ հատուկ գիտելիքի հետ:

Այժմ հասարակական գիտությունների դերը արմատապես փոխվում է: Մի կողմից՝ նրանք ազատագրվում են բռնի գաղափարականացումից, ստանում ազատ զարգացման հնարավորություն, մյուս կողմից՝ նրանց ներկայացուցիչները խորհրդային գիտության հանրապետական «ջոկատներից» վերածվում են, թեև փոքր, բայց ինքնուրույն բանակի, անկախ պետությանը պատշաճ իր գիտական չափանիշներով, նախասիրություններով ու մոտեցումներով (մերոնք, իհարկե, դեռ պետք է մշակվեն և բյուրեղանան):

Այս բոլորը պահանջում է բարձրացնել այդ գիտությունների, և նրանց շարքում առաջին հերթին հայագիտության ստատուսը Հայաստանի գիտական համակարգի մեջ, տալ նրանց եթե ոչ առաջնություն, ապա, համենայն դեպս, ինքնուրույնություն բնական գիտությունների նկատմամբ:

Այս կապակցությամբ նպատակահարմար է Գիտությունների ակադեմիայի երկու հասարակագիտական բաժանմունքների և նրանցում ներգրավված գիտական հիմնարկների հիմքի վրա, ներառելով նաև հանրապետության մյուս կարող ուժերը, ստեղծել **Հասարակական գիտությունների**

ազգային կենտրոն: Կենտրոնը կարող է լինել լիովին ինքնուրույն, կարող է և ձևավորվել ՀՀ գիտությունների ակադեմիայի կազմում, սակայն այդ դեպքում դարձյալ բավարար ինքնուրույնություն ունենալու պայմանով:

Կենտրոնի հիմնական նպատակը կլինի բարձրացնել հասարակական գիտությունների դերն ու կշիռը հանրապետության և համայն հայության կյանքում: Սրա միջոցներից են.

1. Օժանդակել հասարակական գիտությունների՝ նախորդ շրջանի գաղափարական կապանքներից ազատագրմանը, մի կողմից՝ վերականգնելով հայագիտության լավագույն ավանդույթները, առաջին հերթին՝ փաստերի գնահատման գիտական օբյեկտիվությունը, մյուս կողմից՝ որդեգրելով և արմատավորելով ժամանակակից համաշխարհային գիտության հետազոտական կերպերն ու ձևերը (հաշվիչ մեքենաներ, տվյալների բանկեր և այլն):

2. Իրականացնել հասարակական գիտությունների ստրատեգիական կողմնորոշումը և կազմակերպումը, մշակելով և կենսագործելով կարևորագույն ուղղությունների ու մասնագիտությունների առաջնահերթ զարգացման, ինչպես և պրոբլեմային մի շարք հիմնարար կոլեկտիվ աշխատությունների ծրագրեր և, միևնույն ժամանակ, հովանավորելով առանձին գիտական օղակների և գիտնականների խոստումնալից նախաձեռնությունները:

3. Զարգացնել միջազգային համապատասխան գիտական կենտրոնների հետ գոյություն ունեցող գիտական կապերը և ստեղծել նորերը՝ ամրապնդելով Հայաստանի ձեռք բերած՝ հայագիտության գլխավոր կենտրոնի դերը: Շարունակելով միջազգային գիտաժողովներ հրավիրելու և այդպիսիներին մասնակցելու գործը, ծավալել արտասահմանի օտարազգի և հայ գիտնականների հետ համատեղ հետազոտություններ տարբեր բնագավառներում:

4. Օժանդակել արդի իրականության մեջ հսկայական դեր կատարող, բայց հանրապետությունում դեռևս սաղմնային վիճակում գտնվող և անցյալում թերագնահատված ու նենգափոխված այնպիսի գիտությունների հասունացումը, ինչպիսիք են հոգեբանությունը, իրավագիտությունը և այլն: Հատուկ ուշադրություն դարձնել հայագիտության հետ կապված հազվագյուտ մասնագիտությունների վերածնման և զարգացման վրա (հին, այդ թվում դասական, արևելյան լեզուներ, հնագրություն, դիպլոմատիկա, սֆրագիստիկա, դրամագիտություն և այլն):

5. Կիրառել գիտական կապերի պատրաստման նոր միջոցներ, ներքին հնարավորությունների հետ մեկտեղ ուսանողներ, ասպիրանտներ և փորձնակ հետազոտողներ ուղարկելով, բացի Ռուսաստանից, նաև արտասահմանյան այլ գիտական կենտրոններ: Թվում է, թե այս նպատակով սփյուռքահայության օժանդակությունն ստանալը համեմատաբար ավելի դյուրին կլինի: Խորհել

կենտրոնին կից հայագիտական ճեմարան ստեղծելու նպատակահարմարության մասին:

6. Ամուր հիմքի վրա դնել Հանրապետությունում գրեթե բացակայող կամ ձևական բնույթ կրող փորձագիտական աշխատանքը հասարակական գիտությունների բնագավառում: Գիտական աշխատանքների ֆինանսավորումը սերտորեն կապել փորձագիտության արդյունքների հետ:

7. Վերականգնել ու զարգացնել կազմալուծված հրատարակչական գործը:

Հասարակական գիտությունների ազգային կենտրոնը կարող է ունենալ մոտավորապես այսպիսի կառուցվածք.

1. Ընտրովի նախագահ: Կենտրոնի՝ ՀԳԱ կազմում ձևավորվելու դեպքում նախագահին ի պաշտոնե հանդիսանում է ԳԱ փոխպրեզիդենտ և ՀԳԱ նախագահության անդամ:

2. Կենտրոնի կոլեգիան բաղկանում է համապատասխան գիտական հիմնարկների ընտրովի տնօրեններից, գիտությունների դասերի (նախկին բաժանմունքների) ընտրովի նախագահներից և ընտրովի խորհրդականներից: Կոլեգիան ղեկավարում է գիտական հիմնարկների աշխատանքը և իրականացնում նրանց ֆինանսավորումը պետական գիտական ֆոնդից ստացվող գումարների հաշվին:

3. Գիտությունների դասերը կազմավորվում են ըստ առանձին գիտությունների կամ էլ հարազատ գիտությունների փնջերի, ղեկավարվում են դասերի նախագահների կողմից և ներառում են հանրապետության առաջավոր գիտնականներին: Իրենց կցված մասնագիտական գիտխորհուրդների օգնությամբ դասերը իրականացնում են հիմնականում.

Ա) տվյալ գիտության կամ փնջի ստրատեգիական կողմնորոշումը,

Բ) հասարակական գիտությունների գծով փորձագիտական աշխատանքը և հանձնարարություններ տալիս Կենտրոնի կոլեգիային մրցութային հիմունքով առաջադրվող գիտական թեմատիկայի ֆինանսավորման վերաբերյալ,


Գ) գիտական ատեստավորման (գիտական աստիճանների ու կոչումների շնորհում) գործը:

Գիտությունների դասերը իրականացնում են Ակադեմիայի անդամների ընտրությունները, որոնց անցկացման կարգը կարոտ է վերանայման:

Ծանոթություն. ՀԳԱ բնական և ֆիզմաթետիկական գիտությունները ևս կարող են ընդգրկվել համանման կենտրոնների մեջ:

БИОГРАФИИ УЧЕНЫХ В ДОКУМЕНТАХ

АШХАРБЕК КАЛАНТАР*



Видный археолог, востоковед, исследователь клинописных надписей, один из организаторов изучения и охраны исторических памятников Армении, профессор Ашхарбек Лору Мелик-Калантар родился 11 февраля 1884 г. в селе Ардви Лорийского уезда. В 1903 г. окончил тифлисскую школу Нерсисян. В 1905-06 гг. преподавал в Ахалцихской армянской школе. В 1907-11 гг. учился на факультете восточных языков Петербургского университета по специальности армяно-грузинская филология и история. Будучи студентом, а также после окончания университета, до 1917 г., активно участвовал в раскопках г. Ани под руководством академика Н.Я. Марра, в археологическом изучении района г. Вана.

Приехав в Армению в 1919 г., А. Калантар развернул плодотворную научно-организационную и преподавательскую деятельность: в 1921 г. был приглашен в Ереванский госуниверситет и до 1938 г., будучи доцентом и профессором (с 1929 г.), преподавал историю материальной культуры, доклассового

* Фотография ученого предоставлена археологом Григором Караханяном.

общества, Древнего Востока, Армении древнего периода. Калантар являлся ученым-секретарем Комитета охраны древностей Армении, председателем которого был академик А. Таманян.

19 марта 1938 г. А. Калантара арестовали по вымышленному «Делу профессоров и преподавателей» в качестве руководителя якобы созданной им в 1923-24 гг. в ЕГУ нелегальной дашнакской антисоветской организации из националистически настроенной интеллигенции, которая ставила перед собой следующие задачи: «1. Организовать дашнакские ячейки на местах. 2. Подготовиться к вооруженному выступлению с целью свержения советской власти. 3. Совершить террористические акты над руководителями КПСС и Советского правительства. 4. Заниматься шпионажем, диверсией и вредительством». В процессе следствия было «установлено», что А. Калантар «по заданию загранбюро дашнаков установил связь в 1925 г. с английской разведкой и систематически давал материалы шпионского характера...». На допросе от 10-20 апреля 1938 г. Калантар подтвердил, что в чине подполковника служил в армянском добровольческом отряде полководца Андраника с апреля по август 1915 г., выполнял обязанности советника, близко познакомился с генералом Т. Назарбеком. В феврале 1939 г. следствие было закончено, и дело А. Калантара и других (всего 18 человек) было направлено на рассмотрение Военного трибунала Закавказского военного округа, а Военная коллегия Верховного суда СССР решением от 17 марта 1940 г. отменила приговор Военного трибунала ЗакВО в отношении всех осужденных и вернула дела на доследование по мотивам недоказанности предъявленного обвинения.

После нескольких судебных разбирательств и волокиты Особое совещание при НКВД СССР постановлением от 3 сентября 1941 г. осудило А. Калантара к заключению в исправительно-трудовой лагерь сроком на 8 лет. А. Калантар умер по дороге в Челябинск 2 июля 1942 г. Лишь 2 апреля 1955 г. Военная коллегия Верховного суда СССР, рассмотрев материалы дела и обсудив протест Генерального прокурора СССР, вынесла решение отменить постановление от 3 сентября 1941 г. и дело в отношении А. Калантара за отсутствием состава преступления прекратить.

Ниже впервые публикуются письмо академика Н.Я. Марра к А.А. Калантару и автобиография Ашхарбека Калантара.

СТЕПАН ГАРИБДЖАНЫН

Кандидат исторических наук

**УЧЕНОМУ СЕКРЕТАРЮ КОМИТЕТА ПО ОХРАНЕ ПАМЯТНИКОВ АРМЕНИИ
А.А. КАЛАНТАРУ**

22 сентября 1926 г.

Государственная академия истории материальной культуры и Яфетический институт Академии наук СССР, осведомленные из Ваших телеграмм на моё имя, приветствуют результаты Ваших археологических работ последнего времени и желают Вам полного успеха в дальнейших научных изысканиях.

В Вашей телеграмме упоминается об обнаружении загадочных надписей. Означенные надписи представляют тем больший интерес, что вопрос о чтении их остаётся по сей день открытым и хотя новый материал тоже не привел к окончательным положительным результатам, я все же буду Вам крайне признателен, если Вы дадите мне возможность ознакомиться с ним присылкою снимков или фотографий. Весьма желательно было бы, в виду особого характера памятников, которыми я давно занимаюсь, и более подробное ознакомление с новыми вишапами, об открытии которых Вами упоминается.

Академик Н. Марр

**Архив Академии наук Армянской ССР, ф. 1, оп. 1, д. 130, л. 6.
Заверенная копия. Машинопись**

АВТОБИОГРАФИЯ АШХАРБЕКА КАЛАНТАРА

10 декабря 1935 г.

Родился в сел. Ардви (Лори, ССРА) в 1886 году 14 февраля. Среднее образование получил в Тифлисе (в связи с тем, что отец мой служил там в городской водопроводной сети) – окончил семинарию Нерсисян (1903 г.) и экстерном классическую гимназию (1906 г.), в 1906 г. состоял преподавателем средней школы в Ахалцихе.

Высшее образование получил на Восточном факультете Петербургского университета по разряду Армяно-грузинской филологии (школа акад. Н.Я. Марра) (с 1907 г. по 1911 г.), который окончил дипломом первой степени. Одновременно состоял студентом Петербургского Археологического института, который окончил в 1912 г. со званием действительного члена института. В

1913 г. сдал все зачёты по историческому отделу историко-филологического факультета названного университета (работая главным образом в семинариях академиков Б.А. Тураева и Я.И. Смирнова).

В 1913 г. был оставлен при университете – у Марра для приготовления к профессорскому званию. В том же году представил в факультет кандидатскую работу на тему «Лори при Корикаях (культурно-политический расцвет Северной Армении в X-XII вв.)», которая по отзыву академика Марра была признана адекватной степени доктора Германских университетов.

Как в бытность студентом, так и после завершения высшего образования принимал активное участие в археологических кампаниях акад. Марра по раскопкам Ани, сначала в качестве практиканта и ассистента, а в XIII-ую кампанию (1914 г.) в качестве руководителя.

В 1916 г. сдал экзамен на степень магистра армяно-грузинской филологии и представил диссертацию на тему: «Политические партии в Армении перед возвышением Багратидов», которая по отзыву акад. Марра и проф. Адонца была принята к печати (осталась не напечатанной).

В 1912-1915 гг. состоял сотрудником Русского музея по Этнографическому отделу, а в 1914-1916 гг. – ученым хранителем Азиатского музея Академии наук.

В 1917 г. принимал участие во II-й Ванской Археологической экспедиции Академии наук и Археологического общества. Ввиду прекращения связи Закавказья с Россией с конца 17-го года лишен был возможности вернуться в Петроград.

Весною 1918 г. осуществил эвакуацию экспонатов (до 6000) Анийского музея древностей, лаборатории, библиотеки, которые ныне находятся в Эривани.

В 1918-19 гг. читал в Закавказском университете, в качестве доцента, историю Востока, историю Армении и историю Грузии.

В 1919 г. армянскими научными кругами Тифлиса был выдвинут в члены Комиссии по организации Университета в Армении, куда входили кроме меня еще профессора Юрий Ст. Гамбаров, Харазов, Д. Завриев и лектор Р. Абрамян.

Летом 1919 г. в связи со слухами о гибели Анийского музея переехал в Армению и взял на себя инициативу организации охраны памятников древности, что послужило основанием для создания специального органа по охране, существующего в Армении под различными названиями с 1921 г. по сие время.

С основания Университета Армении состоял последовательно доцентом

и профессором названного Университета, одновременно заведующим кафедрой, а недавно также директором Кабинета им. Н.Я. Марра. В течение указанного времени читал следующие курсы: Историю Древнего Востока, Историю Армении – древнейший период, Историю армянской архитектуры, Историю материальной культуры, Историю доклассового общества.

В 1925 г. имел научную командировку в Ленинград для получения квалификации на звание профессора, каковая была мне дана, согласно отзыву акад. Марра, Научно-исследовательским институтом сравнительного изучения литературы и языков Запада и Востока при Ленинградском государственном университете, после чего последовало постановление Госуниверситета Армении, утверждённое коллегией НКП ССРА об утверждении меня в должности профессора Госуниверситета Армении.

В течение всей своей научной деятельности в Советской Армении руководил многочисленными экспедициями по Армении, по раскопкам, обследованию и изучению памятников материальной культуры, между прочим, в массе случаев в связи с разрушением памятников или в связи с новостройками.

Раскопки: – На месте стройки Эриванской гидростанции (открытие верхнего палеолита) (1925 г.), Караклисской (Кировакан) гидростанции – 1925 г., Аванской каменоломни – 1926 г., в районе Звартноца – 1926 г., в г. Эривани на ул. Гнуни, на р. Гетаре – 1927, 1930-31 гг., на Ширканале – 1927 г., в Ленинанкане – 1928 г., Дилижане при постройке санаториума – 1929 г., Ани – Пемза (Ереруйк) – 1930 г., при постройке винного склада при Рипсимии (Вагаршапат) – 1930 г., на месте стройки Нардома (Эривань) – 1930-31 гг. при проведении канала для орошения Киров в Азатаване и др. местах – 1930 г. по 1932 г., в Эривани в различных местах – 1929 г. до 31 г., в совхозе Памбак – 1931 г., раскопки древнего Вагаршапата – 1931 г., на месте стройки мяскомбината в Ленинанкане – 1934 г. и пр.

Экспедиции: – По обследованию отдельных районов Армении: Текора – 1920 г., Арагаца – 1924 г., Лори – Дилижана – 1924 г., Севанского озера – 1926 г. и 1928 г., Айриванка – 1929 г., а также (работы, предпринятые персонально) по изучению Зангезура – 1921 г., Лори – 1922, 24, 26, 28 и 31 гг., Арагаца – 1924 г., 26-31 гг., 1934 и 35 гг., Гарни – Гегарда – 1926, 28, 30 гг., Талина – 1926 г., Креруй – 1926 г. по 1929 г., Зейвы – 1926, 1928 – 29 гг., Армавира – 1928 – 29 гг., ущелье Занги, Котайка, ущелье Касаха, Ованнаванка и др. 1928 – 29-31 гг. хребет Агманган – 1928 и 1933 гг. и др.

Результаты, в виде экспонатов материальной культуры и материалов научной фиксации (описания, фотографии, обмеры, чертежи, зарисовки, эс-

тампажи, гипсовые слепки и проч.) в количестве 69.051 единиц, находятся в соответствующих музеях и научно-исследовательских институтах Советской Армении.

В процессе всей этой научно-исследовательской работы мною впервые выдвинуты и разработаны следующие основные проблемы по изучению истории и истории материальной культуры Армении:

Каменного века в Армении – 1925 г.

Мегалитической культуры – с 1925 г. по 1927 г.

Палеолита в Армении (открытие «Цицернакабердского человека»).

Проблема вишапов (в связи с открытием новой группы их на Алагеше).

Культа воды и экономической основы этого культа.

Символических знаков на скалах культового значения и скалописи.

Иероглифические письменности древней Армении.

Культы древней Армении дохалдского периода.

Оросительные системы эпохи вишапов.

Ирригационных систем Армении.

Пещерных жилищ Армении (для беднейшего слоя населения), а также чтение на местах, скопирование и подготовка к изданию эпиграфической летописи Армении (клинописной, армянской и других).

На основе этих данных, древнейший период истории Армении получает совершенно новое освещение и значение, далеко выходящее за пределы Армении.

Некоторые дополнительные сведения о научно-общественной работе

В 1925 г. был командирован в Ленинград для научной работы на 3 месяца (где имел 2 доклада в ГАИМК о результатах археологической работы в Армении), а также в 1932 г. на 9 месяцев.

Участвовал в качестве делегата от Армении на II съезде краеведов Черноморского побережья Западного Кавказа в Батуме в 1925 г. в сентябре (имел 2 доклада), а также на конференции археологов и этнографов в Ленинграде в 1932 г. созванной ГАИМК.

Был делегатом на III Международном конгрессе по Иранскому искусству в 1935 г., в сентябре в Ленинграде, где выступал с докладом.

В течение последних 17 лет в бытность в Советской Армении состоял и состою членом (по избранию) различных научных и общественных организаций: – действительный член, ученый секретарь и председатель (1922 г.) Ко-

митета охраны древностей Армении с 1919 по 1932 гг., действительный член Института науки и искусства Армении, Института наук ССРА, Института истории культуры, Института истории и литературы, член Ученого совета АрмФАНа, член – корреспондент Института кавказоведения ГрузФАНа, член Ученого совета и член правления ОПТЭ, действительный член и член правления Географического общества Армении.

Руководил многочисленными экскурсиями студентов, рабочих организаций, туристов, между прочим был научным руководителем «похода 1000» на Алагез в августе 1935 г. Имею звание «альпиниста», благодарность, почетную грамоту Республиканского совета ОПТЭ. Имею звание ударника за каждый год от 1932 по 1935 годы. Несколько раз был премирован.

Проф. Ашхарбек Калантар

Архив Академии наук Армянской ССР, ф. 1, оп. 1, д. 130, л. 7-16.

Заверенная копия. Машинопись

ЕВГЕНИЙ БАЙБУРТЯН*



Видный армянский ученый-археолог Евгений Арутюнович Байбуртян является одним из ярких представителей археологической науки Советской Армении 1920-1930-х годов. Родился 6 сентября 1898 г. в городе Нахичевани-на-Дону, в семье учителя математики. В 1918 г., окончив 8 классов Ростовской казенной гимназии, отправился в г. Карс, на турецкий фронт, однако в июне того же года вернулся обратно, в Ростов, и поступил в Донской университет, на историко-филологический факультет. В 1919 г., чтобы избежать мобилизации в белогвардейскую армию, уехал в Батуми, где работал в различных учреждениях. Весной 1921 г., с освобождением Ростова от белых, вернулся на родину. В 1921 г. поступил в Донской археологический институт и на службу в Единое потребительское общество, одновременно посещал художественную школу.

В 1922 г. Е. Байбуртян переехал из Ростова в Махачкалу, где работал библиотекарем на 54 пехотных командных курсах. Осенью 1922 г. был командирован в Москву в I-й Московский государственный университет на отделение археологии и искусства. Там жил сначала на госстипендии, а с 1924 г. – на

* Фотография взята из Краткой Армянской Энциклопедии, т. 1, Ереван, 1990, с. 475.

стипендии Закавказского краевого комитета. В 1925 г. окончил отделение археологии и искусства, переименованное в этнологический факультет. Весной 1926 г. защитил дипломную работу (свидетельство за N 1932 от 24 июля 1926 г.).

В мае 1926 г. Е. Байбуртян был командирован в г. Ереван в распоряжение Народного комиссариата просвещения ССР Армении, поступил на работу в Государственный исторический музей Армении, где до 1928 г. числился старшим научным сотрудником. С 1928 по 1933 г. временно исполнял обязанности заведующего историко-археологическим отделом музея. С назначением А. Шахназаряна заведующим отделом был переведен на штат старшего научного сотрудника. Согласно постановлению центральной квалификационной комиссии при Наркомпросе ССР Армении от 25 декабря 1935 г. Е. Байбуртяну было присвоено ученое звание старшего научного сотрудника кафедры археологии. С 1938 г. на него вновь были возложены обязанности заведующего историко-археологическим отделом музея.

В годы учебы в Московском госуниверситете Е. Байбуртян каждое лето принимал участие в археологических раскопках под руководством профессора В.А. Городцова в Московской, Рязанской, Владимирской, Костромской, Ульяновской и Самарской губерниях. После переезда в Ереван ежегодно принимал участие в археологических работах Комитета по охране исторических памятников. В 1928 г. проводил самостоятельные раскопки в Котайке, в 1929 г. – у станции Памбак и Ленинакане, с 1935 г. – в Ереване (Муханнаттапа, Шенгавитского поселения), а также в Шреш-Блуре и Кировакане.

Е. Байбуртян является автором ряда ценных научно-исследовательских статей, опубликованных в журналах «Проблемы истории материальной культуры», «Проблемы истории докапиталистических формаций», «Советская археология», «Известия Института истории и литературы ССР Армении». Среди них – «Псевдонеолитические поселения Армении» (1933), «Глиняные подставки из Армении» (1934), «Проблема крашенной керамики Армении» (1937), «По поводу древней керамики из Шреш-Блура» (1937), «Культовый очаг из раскопок Шенгавитского поселения в 1936-1937 г.» (1938), «Халдская бронзовая статуэтка», «Два римских погребения из Вагаршапата», «Раскопки древних гробниц в г. Ленинакане», «Орудия труда в древней Армении» (1938) и др. Основная работа Е. Байбуртяна «Последовательность древнейших культур Армении на основании археологического материала» вышла в свет лишь после его смерти, десятилетия спустя (Ереван 2011, Музей истории Армении, ред. Р.С. Бадалян, о его биографии и научной деятельности, там же, с. 5-9).

В конце 1930-х годов Е. Байбуртян работал над завершением кандидатской диссертации на тему «Шенгавитская культура».

В годы культа личности Е. Байбуртян стал жертвой сталинских репрессий. 29 декабря 1939 г. он был необоснованно арестован и осужден сроком на 7 лет, с поражением избирательных прав на 3 года. Отбывая наказание, Байбуртян умер в местах заключения 4 сентября 1941 г. Лишь годы спустя, 18 ноября 1957 г. Президиумом Верховного суда Армянской ССР был рассмотрен протест в порядке надзора заместителя прокурора АрмССР. Приговор Судебной коллегии по уголовным делам Верховного суда АрмССР от 28 декабря 1939 г. по делу Байбуртяна Евгения Арутюновича был отменен, и дело, за отсутствием состава преступления (см. Национальный архив Армении, ф. 571, оп. 5, д. 1605, л. 9-10), было закрыто, тем самым Е. Байбуртян был полностью реабилитирован посмертно (см. также <http://memory.pvost.org/pages/baiburtian.html>, 21.09.2021).

Ниже впервые публикуется протест в порядке надзора заместителя прокурора Армянской ССР Ю.С. Гукасяна в Президиум Верховного суда Армянской ССР по обвинению Е.А. Байбуртяна, который хранится в фонде Прокуратуры АрмССР Национального архива Армении (НАА, ф. 571, оп. 5, д. 1605, л. 5-7, копия).

СТЕПАН ГАРИБДЖАНЫН

Кандидат исторических наук

В ПРЕЗИДИУМ ВЕРХОВНОГО СУДА АРМЯНСКОЙ ССР ПРОТЕСТ В ПОРЯДКЕ НАДЗОРА

По делу № 8458 по обвинению Байбуртяна Евгения Арутюновича по ч. I ст. 67 УК. Арм. ССР.

Приговором Судебной коллегии по уголовным делам Верховного суда Армянской ССР от 29 декабря 1939 года был осужден на основании части I ст. 67 Уголовного Кодекса Арм. ССР к лишению свободы сроком на 7 лет, с поражением избирательных прав на три года – Байбуртян Евгений Арутюнович, 1898 года рождения, уроженец города Нахичевань-на-Дону, житель города Ереван, по национальности армянин, беспартийный, с высшим образованием, зав. Археологическим отделом Ереванского Гос. Исторического музея.

Отбывая наказание, осужденный Байбуртян умер 4 сентября 1941 года в местах заключения (нет реальной проверки, лист I).

Данный приговор по делу Байбуртяна не может быть оставленным в силе и подлежит отмене по следующим обстоятельствам.

Байбуртян был признан виновным в том, что он, «...являясь антисоветски настроенным, вел систематическую контрреволюционную агитацию против советской власти, делая при этом контрреволюционные выпады по адресу вождя партии, руководителей партии и правительства СССР...».

Из материалов дела усматривается, что к числу инкриминированных в вину Байбуртяна антисоветских высказываний относились: проявления ненависти и к Берии за то, что последний умалил роль большевиков Армении в брошюре «К вопросу об истории большевистских организаций Закавказья»; заявление о том, что наше правительство уделяет больше внимания Грузии, чем Армении, в связи с тем, что глава правительства по национальности грузин; предположение того, что необходимо потребовать от Грузии возврата земель, ранее принадлежавших российской империи, предположение о том, что советская интеллигенция является колеблющейся; неверие в силу и мощь Советского Союза в вопросе проведения коллективизаций сельского хозяйства, заявление о том, что грузинская интеллигенция слабее армянской и поэтому Берия уничтожает армянскую интеллигенцию и т.д. и т.п.

Произведенной по данному делу в порядке ст. 341 УПК Арм.ССР проверкой установлено, что в деяниях Байбуртяна не имеется состава преступления, предусмотренного диспозицией статьи 67 Уголовного Кодекса Армянской ССР, ибо, во-первых, отдельные случайные высказывания его не носили определенный характер агитации или пропаганды, а во-вторых, у него не было контрреволюционного умысла, что необходимо для юридической квалификации подобных деяний указанной статьей.

Установлено, что БАЙБУРТЯН был хорошим и видным научным работником, всецело поглощенным своей работой, вследствие чего мало интересовался политикой, плохо разбирался в политических вопросах, являясь даже несколько аполитичной личностью, и именно поэтому, в силу неправильного понимания отдельных вопросов, допускал во время бесед с сослуживцами неправильные трактовки по этим вопросам и изложил их с чисто субъективной точки зрения.

Одновременно БАЙБУРТЯН отличался беспринципностью в своих взглядах и наивностью. Так, например, он состоял в группе сочувствующих, подал в парторганизацию заявление о желании вступить в ряды ВКП/б/ и при этом на

партийном собрании заявил, что сестра его не рекомендует вступать в ряды ВКП/б/ и поэтому он не знает как поступить (см. Материалы проверки, листы 6, 9, 12, 14).

Таким образом, исключая отдельные неправильные чисто субъективные трактовки по тем или иным вопросам, со стороны БАЙБУРТЯНА не имели места факты явных антисоветских высказываний. Это подтвердили допрошенные вновь в ходе проверки свидетели: АРАКЕЛЯН, КОЧОЯН и др., которые одновременно заявили, что их первоначальные показания в органах НКВД Арм. ССР несколько преувеличены, записаны тенденциозно с обвинительным уклоном и при этом, как говорят, «сгущены краски» путем употребления фраз «контрреволюционный», «антисоветский» и т.д. и что все это делал следователь МУРАДЯН, который производил их допрос в обстановке определенного психического воздействия на допрашиваемых свидетелей (см. Материалы проверки, листы 12-об, 13, 16).

Объективно это подтверждается тем, что принимавшие участие в расследовании и в оформлении дела по обвинению БАЙБУРТЯНА бывшие сотрудники НКВД Арм. ССР – АРОЯН и МУРАДЯН ныне арестованы и привлечены к следствию за извращение социалистической законности и фальсификацию следственных дел (см. Материалы проверки, лист 25).

Являются несостоятельными и не имеют доказательной силы и приобщенные к делу копии протоколов допросов обвиняемых по другим делам СТАМБОЛЦЯНА Гургена, АБРАМЯНА Павла (Ионеса) и ГЮЗАЛЯН Евгении (л.д. 30-43), ибо по делу первых двух Следственным отделом КГБ при СМ Арм. ССР в 1995 году была произведена проверка в порядке ст. 341 УПК и при этом установлено, что никакой антисоветской подпольной организации с участием СТАМБОЛЦЯНА и АБРАМЯНА не было и что дело это было искусственно создано провокационным путем бывшим сотрудником НКВД Арм. ССР – АРУТЮНЯНОМ Рубеном, который в дальнейшем был осужден за извращение методов следствия, производство необоснованных арестов и фальсификацию следственных дел, поэтому дела СТАМБОЛЦЯНА и АБРАМЯНА представлены в Главную военную прокуратуру с заключением об их реабилитации.

Дело же по обвинению ГЮЗАЛЯН Евгении истребовано Главной Военной Прокуратурой в процессе производства следствия по делу бывших сотрудников НКВД Арм. ССР – АРОЯНА и МУРАДЯНА, следовательно и дело ГЮЗАЛЯН Е. также сфабриковано (см. Материалы проверки, листы 19-22).

Проверкой установлено также, что БАЙБУРТЯН был ценным специалистом и все знавшие его хорошо лица дали о нем положительный отзыв (см. Материалы проверки, листы 23-24, 2, 6, 11, 14-15).

На основании изложенного и ст. 25 «Положения о прокурорском надзоре в СССР»

ПРОШУ:

Приговор Судебной Коллегии по уголовным делам Верховного Суда Армянской ССР от 28 декабря 1939 года по делу БАЙБУРТЯНА Евгения Арутюновича отменить и дело прекратить на основании п. 5 ст. 4 УПК Арм. ССР за отсутствием в деяниях БАЙБУРТЯНА состава преступления, предусмотренного ст. 67 ч. 1 УК Арм. ССР.

Зам. Прокурора Армянской ССР

Старший советник юстиции

/ГУКАСЯН Ю.С./

СПРАВКА: дело проверено по жалобе сестры осужденного – гражданки БАЙБУРТЯН НУНО АРУТЮНОВНЫ, проживающей в городе Ростов н/Дону, ул. Петровская дом Ц253, кв. 2.

ИЗ НАУЧНОГО НАСЛЕДИЯ ВАРДАНА АЙРАПЕТЯНА

Вардан Айрапетян (1948–2019), филолог-русист и герменевт, родился и большую часть жизни провел в Ереване, но по роду своих занятий больше известен за пределами Армении. В 1972 году окончил русское отделение филологического факультета Ереванского университета, несколько лет служил редактором в Историко-филологическом журнале Академии наук Армении. В 1994–2000 жил в Дании, с конца 2000 до середины 2001 – сотрудник Института высших гуманитарных исследований при Российском государственном гуманитарном университете (Москва). Уволившись, вернулся в Ереван и в 2006–08 преподавал русскую герменевтику в ЕГУ. Его книга «Толкуя слово: Опыт герменевтики по-русски» (Москва, 2001) удостоена премии Андрея Белого за 2002 год. Второе, значительно дополненное издание этой книги в двух частях и с энциклопедически богатым указателем вышло в 2011 году. Последнее десятилетие жизни ученого было омрачено полной утратой зрения и вынужденным отходом от активной научной работы. Но он продолжал продумывать темы своей главной книги и вносить дополнения в нее. Несколько подборок таких дополнений было опубликовано в разных изданиях. Остается неопубликованной последняя подборка, выдержки из которой мы предлагаем читателям журнала. Эта публикация готовилась при участии автора и предназначалась для не состоявшегося сборника в честь, а затем в память замечательного лингвиста А.Б. Пеньковского. Ввиду того что орфография, пунктуация и все другие средства оформления научной работы (виды и размеры шрифтов, способы выделения, цитирования, подачи ссылок и сокращений) были для В.А. предметом пристального внимания и органически вытекали из его филолого-герменевтических идей, в настоящей публикации по возможности сохранены основные (к сожалению не все) формальные особенности авторского текста.

Армен Григорян (РФ, Москва)

ТОЛКУЯ СЛОВО*

Из последних дополнений

Вардан Айрапетян

Памяти Александра Борисовича Пеньковского
и Ирины Степановны Приходько

а34: Знак *значит* своей *значью*-лицом-отличием*, это вещь как говорящее лицо, знаки это всё «говорящее», причем *по-немецки* или *по-китайски*. Толкуя знак, я говорю при нем что́ он «хочет сказать», ср. франц. *Qu'est-ce que cela veut dire?* или датское *det vil sige* 'то есть'. А *сам по себе* я не говорю, ведь у меня без других нет лица, я себя не вижу, так что не только «третье лицо» не есть лицо (Бенвенист *Лицо глаг.*), «первое» тоже. Настоящее и первичное лицо—«второе», а он и я лишь по образу тебя. Слово как свой говорящий человек, а знак как чужой, гость. Глоссолалия, иносказание. *См. 63.

в26: «“Думать” можно только с собою». Розанов *Еще о смерти Пушкина* (2—Вел. инкв. 438):

—«читать» можно только с немногими; но, как «думать» можно только с собою, и при *такой* думе вспыхивает гений, поэзия,—так гений и поэзия семьи вспыхивают тогда, когда есть *единство субъективного лица* в кажущихся двоих.—«Ну, давайте думать вдвоем, я и Рцы».—

В сказанном мимоходом аналитическом «думать» *можно только с собою* замена *думать* на синтетическое *говорить с собою* или на аналитическое *думать с собою* невозможна из-за возникающего повтора отличия (сюда же логический пример с Вальтером Скоттом). Что же значит здесь *думать*? Ну допустим *говорить про себя*, тогда мы получим приемлемое «*говорить/думать про себя*» *можно только с собою**. А думать вслух можно и наедине с другим, с немногими близкими, ср.

* В. Айрапетян, *Толкуя слово: Опыт герменевтики по-русски*, Москва 2011.

«думать вдвоем» у Розанова, *думать* с кем, *дума* ‘совет’. Но принял бы наше толкование сам Розанов? *Ср. в гб.

дб4: Филологическая герменевтика в ожидаемом «веке гуманитарных наук» могла бы объединить вокруг себя эти науки. Филология, красиво сказал Аверинцев в *КЛЭ* 7, «есть служба понимания—» (стб. 976)*; во главе такой—глубинной—филологии предназначена стоять глубинная по преимуществу герменевтика, а не лингвистика с литературоведением, подмявшие под себя фольклористику и этимологию. Это был бы «брак Филологии и Меркурия», но не как у Марциана Капеллы.—Толкование, словесное средство достичь понимания, заметно говорящему лишь в меру его непонимания. А понятливость, будь то женская догадливость (интуиция) или философская и естественнонаучная смышленость, как бы непосредственно соотносит мысль с делом, ср. «мыследеятельность». Понятливый противник толкования вроде Сонтаг *Против толк.* или Канетти** всего лишь против заметных ему толкований и за незаметные, неосознанные. Задача филологической герменевтики—восстанавливать опускаемый средний член триады мысль, слово и дело. *Еще см. дб213. **Выдержки в а431. ▼1: Филология и герменевтика.

в561: Безымянность иного. Не имеет имени и н о й—один, единственный в своем роде и некто, он же другой, отличный от всех и никто. Кого бы ни видеть в «лишней тени» *без лица и названья* (*Поэма без героя* 1.1 и .4), это, сказала сама Ахматова, «конечно—никто, постоянный спутник нашей жизни и виновник стольких бед», или иной по правилу «Если никто, то иной». Архангельское *бэзымень* обозначает привидение без лица (*СВРЯ* под *безыменный*, к этому слову Журавлев *Древнеслав. аксиол.* 23сл.), у Случевского есть рассказ *Безымень* о таком привидении. Но и мое «я сам», я-для-себя (бахтинская категория) безымянно, ведь каждый для себя иной по отношению к другим для него людям-лицам. *Борхес и я* Борхеса рассказывает об именитом я-для-других и безымянном я-для-себя. «Тебе дано, а люди пользуются», это загадка про имя (*Заг.* 1623), вслед за нею Бахтин: «Мое имя я получаю от других, и оно существует для других (самоименование—само-

званство).»—1961 год. Заметки (БСС 5 344). Вот почему «—есть Петры и Иваны, которые не могут без чувства фальши произнести Петя, Ваня», сказано у Набокова (*Подвиг* 3), «меж тем как есть другие, которые, передавая вам длинный разговор, раз двадцать просмакуют свое имя и отчество, или еще хуже—прозвище.» Мое имя—для других как и мое лицо, с той разницей что «Имя свое всяк знает, а в лицо себя никто не помнит» или «В лицо человек сам себя не признаёт, а имя свое знает» (ПРН 308 и 704), и произнести свое имя что посмотреться в зеркало. Обращение к себе *Голядка ты этакой в Двойнике*. О чувстве фальши у человека перед зеркалом в *Авторе и герое* Бахтина (112сл.) и его особая заметка в БСС 5 71. ▼1: Полкан.—2: Я за него.—3: «Когда зовут по имени—значит, врут».—4: Цветаева об имени и псевдониме.—5: Флоренский против безымянного «я».—6: Обращение к себе.

г611: «Пока слово не скажешь—». Яков Титыч из *Чевенгура* Платонова про свое пережиточное думание вслух даже при других: «Пока слово не скажешь, то умным не станешь, оттого что в молчании ума нету—есть одно мученье чувства...»—Вместо *умным* и *ума* точнее *разумным* и *разума**; итак мы *разумеем*—понимаем толкуя, а толкование это неполное выражение немого смутного чувства-мысли-смысла, по-латински *sensus*, в звучащем внятном слове-значении-толке, по-гречески λόγος**. *Понять* значит *взять* именно в толк. *См. а23312. **См. 6321 и в522.

а2221: Иван, Митя, Смердяков и Алеша. Автор статьи о церковном суде и поэмы *Великий инквизитор* Иван Карамазов про себя хочет убийства отца, отставной военный Митя вслух грозит убить, а повар Смердяков убивает. Так у Достоевского триада мысль слово дело—Бердяев в сборнике *Из глубины* пропустил Митин грех словом (*Духи русской революции* 2)—соотнесена с тремя социальными функциями по Дюмезилю. А главный герой романа «чудак» Алеша и н о й - н и к т о, это ответ на «Кто не желает смерти отца?..» (Иван в 12.5) и четвертая функция по Нику Аллену; ср. о рисунке Брейгеля *Каждый**. «Отца чёрт убил», говорит на допросе Митя, «убил не ты», говорит Ивану Алеша, «вы главный убийца и есть», говорит Ивану убийца Смердяков, которому, говорит Иван, «сам черт помогал» (9.5 11.5 и .8): деятель-дух и одушевленное орудие, 'кто' и 'кем'. Отца убил черт-двойник умника

Ивана руками слуги Смердякова, слуга кончает с собой. В *Преступлении и наказании* умник и слуга еще в одном лице Раскольникова: «Разве я старушонку убил? Я себя убил, а не старушонку!—А старушонку эту черт убил, а не я...» (5.4). *Я не я, сам не свой***. Иван это развитой Раскольников с тем же чертом, но без Смердякова в себе и оттого более высокомерный. Бахтин об отцеубийстве—БСС 5 по указателю под «убийство» и 93 и 486 прим. 11=4.1 239сл. •В г733 и 7333. **См. 636211. ▼1: Раскольников и Карамазовы.

а2412: Чужое слово, своя мысль и свое слово, в таком порядке. Сперва говорящий другой с его словом ко мне, потом слушатель я сам с моим пониманием-непониманием этого слова («Чего не слышишь, того и не думаешь»—Сб. *посл. рус. 161*) и напоследок будущий толкователь я как другой с выражением этой моей мысли в новом слове. Биbihин *Понять другого* в его *Слове и соб. (163–66/120–22)*. Чужое слово предполагает эпитетееву триаду, а свое слово прометееву. ▼1: Выражение-толкование.

а4411: Поиск и находка как вопрос и ответ по Бахтину, они тоже «предполагают взаимную вненаходимость» (БСС 6 432). Искатель неосознанного знания Сократ не сам приходил к сознанию, а разговаривая со своим находчиком, можно сказать Гермесом «в сердце»*, и проверял «гермесовы» находки на своих собеседниках. Словесная находка для такого искателя не отысканное, не что́ ты мысленно искал, а нечто, *нещечко***. «Кто ищет, тот найдет» только став другим, Сократ Гермесом, слушатель-вопросчик толкователем-ответчиком, кто по слову Пикассо не ищет, но находит. На рисунке Брейгеля *Каждый**** ищущие «каждые» смотрят вокруг, а нашедший Никто видит себя. •См. в а2424. **См. г7334. ***См. в г733 и 7333.

61279: Выдуманный Козленок. Наоборот *девятым* людям действует герой сказочки Альфа Прёйсена *Про Козленка, который умел считать до десяти*: первым делом Козленок узнаёт себя в зеркале воды как переосмысленный Нарцисс* и начинает счет с себя! Эту литературную выдумку норвежца перевели на русский, да еще нарисовали по ней мультфильм детям на просвещение. А кто возьмется толково анимировать наш правдивый анекдот чтобы проглядывала

притча? Фильм без общих планов, без точки зрения двенадцатого.

•См. в а1221.

63166: Пришвин о «двух человеках» в дневнике под 4.12.1933:

С малых лет забили меня человеком так сильно, что я до сих пор повторяю это слово—человек, не решаясь сам лично войти в это понятие и раскрыть его самостоятельно. По-моему, как я понимаю это сейчас, есть два человека: один человек, всё равно как электрический ток в прерывателе, является искрами; одна искорка мелькнет и ее уже нет, и уже другая светит, и так весь человек, как ток, распадается на искорки-личности—и я сам, тоже искорка-личность, смотрю на другого по себе и знаю его и чувствую как себя самого; глядя так на бесчисленные искры, я научаюсь их различать, и сущность человека мне является в его искре-личности. Человек в другом понимании нам не виден, как ток, бегущий по проволоке, и личности людей нам ценны не сами по себе, а лишь как переменчивое свойство текущего невидимо человека.

«Новый человек» = не существующий лично. Человек—предмет веры: то был бог невидим, а то человек невидим; и тоже бессмертен и всемогущ и вездесущ.

Я очень склонен к этой вере и, вероятно, в этой вере живу; но я чувствую другое по соседству с собой и, как слепой, познаю ту дорогу костылем.

Эту тему о двух человеках продолжить и дойти до ясности.

К «искре-личности»—«душа-искра» цадика Шмелке* и «scintilla» Мастера Экхарта, к «смотрю на другого по себе»—под 28.10.1932 и 26.10.38 о понимании-суждении по себе и со стороны. А «весь человек как ток» станет пришвинской герменевмой *Весь(-)человек*, сюда же воспоминание под 6–8.8.39: «Вечером, когда внизу темным неопределенным пятном скрывался лес в туманах, я вспомнил, как то же самое видел тому назад лет тридцать и что тогда я в этом почувствовал душу всего человека: это было мне тогда не лес и туман, а весь человек и его душа.» *Приведено в а12212.

в4461: *Весьчеловек* Пришвина. Дальше в *Неодетой весне* (4 11 и 23): «такими глазами собака на меня поглядела, что казалось мне, Весьчеловек на меня поглядел», «он не себе радовался, а Всемучеловеку», «океан жизни Всегочеловека». Из его же дневника: «весь человек, как ток, распадается на искорки-личности»•—это будущий *Весьчеловек*; «Смотришь» фильм *Чапаев* «и чувствуешь “суд Божий”

войны и кажется, что только тут на войне весь человек как бог...»—к народобожью Шатова**; «Много людей прошло—умерло моих родных, знакомых, а я всё жив и стою на своем месте: мне кажется, не люди, а водопад, Весь-человек переливается во всем своем разнообразии.»

Вот встречаются иногда и такие лица, что забудешь о временном и как будто в этом лице Весь-человек.

Весь-человек, но что это—дух? Можно ли видеть его?—Можно. Ты гляди на человека на всякого как на временного... но, бывает, забудешь, и так...

И в этом временном, что есть в человеке, нам [утешение]: бывают и зверские лица, ужасней крокодилова, казалось бы, с таким и жить нельзя—но подумаешь—временное! умрет, исчезнет это чудовище—и [успокоишься]. Зато, бывает, увидишь такое прекрасное, что о временном забудешь, вот так и показывается Весь-человек.

На свою жизнь я смотрю как на жизнь Всего-человека в личном моем отражении. Мне стыдно думать о себе, до того жизнь моя бедна и сам я так беден нужными способностями. Но одна способность замечательная—это постоянно чувствовать, что через меня проходит Весь-человек, и если хорошо вдуматься, то я могу постигать его ход. Эту способность я использовал для писания—

—под 4.12.1933 1.1.35 3.6 7.6 и 18.6.39***, последнее место к его записям о представительстве****. *Весь(-)человек* Пришвина вместе со *все-человеком* Достоевского соответствует тысячеглавому, тысячеглазому, тысяченогому первочеловеку *Пуруше* Ригведы 10.90, а *Весьчеловек*, «глядевший из прекрасных Ладиных глаз», соответствует *пуруше* 'человеку' в (правом) глазу, образу «внутреннего правителя» *атмана* 'души',—например Брихадараньяка-упанишада 2.3.5 и Чхандогья-упанишада 4.15.1. Так и русский мировой человек *Иван* : *иванчики* 'человечки, мальчики в глазах'—*СВРЯ*. В замятинском *Мы* (6) герой очутился в глазах любимой женщины, развертывание этого же мотива образует рассказ Кржижановского *В зрачке*. Но есть и поверье что в зрачках убитого запечатлевается убийца. А из *Глаза* Эсхера смотрит, напоминая о смерти, череп вместо человечка. Другие изображения—*Хаксли Глаз*. *Полнее приведено в 63166. **См. 61263 и 3186. ***Еще см. в в5111 и 25121. ****Выдержки в в251. ▼1: Лев Толстой об одном во всех.

в4472: Душа. «Чужая душа—темный лес / дремучий бор» при «Чужи люди—дремучий лес» (ПРН 304сл. и 616)—душа как люди-лес внутри человека-дерева. А вот о человеке-камне: «Не во всяком камне искра, не во всяком муже правда» или «Во всяком человеке правда, во всяком камне искра, да не скоро ее выбьешь» (ПРН 202, Р. нар. посл. 314), отсюда возможна фольклорная этимологизация церковнославянизма *искренний* 'ближний' как *искрящийся* правдой, словами от души (ср. Мурьянов в ВЯ 1981 2 117, к действительному родству *искра* с *искренний* см. Журавлев—Этим. '86/'87 79–83); есть и переносное *кремёнь* 'крепкого нрава, твердый, стойкий', 'безжалостный', 'скупой' (СВРЯ). Душа *посреди* людей и в *сердце* каждого, между и внутри, ср. *внутри* < праслав. **вън-отрь* : лат. *inter* 'между'; «где двое или трое собраны во имя Мое, там Я посреди (ἐν μέσῳ) них» и «Царствие Божие внутри (ἐντός) вас есть»—Матфея 18.20 и Луки 17.21. А у кого *нет ничего за душой*, тот хоть и душевный, но бездуховный человек наоборот Сократу*. Как душа каждого связана с другими людьми, так дух за душой связан с богом. Бахтин (*Автор и герой* 201 и 133): «Душа—это дар моего духа другому.» «Но я-для-себя—другой для Бога.—Чем я должен быть для другого, тем Бог является для меня.» Чем Сократ должен был стать для своего собеседника-свидетеля, а именно дарителем сознающей души, тем его «демон» явился для него. *См. в 61321сл. ▼1: Вера в бессмертие души.

д1211: Большая герменевтика и малая, народная и ученая: проконструирующая, синтетическая герменевтика мирового человека, кто толкует мир в меру своего понимания, а в меру мифотворческого непонимания показывает себя, сам того не сознавая, и реконструирующая, аналитическая герменевтика филолога-мирянина, кто толкует слова мирового человека о мире. Солнечный герменевтический день и лунная герменевтическая ночь, а между ними просвещенный вечер. Как глубинная психология Юнга это демифологизованная алхимия, так малая фольклорная герменевтика это демифологизованная большая. Принятый на веру *миф*-басня большой герменевтики и дающий знание *логос*-толк малой, Топоров об отличии *μῦθος* от *λόγος*—*О ритуале*

прим. 83. Сократ, вот кто своими вопросами о бессознательном готовил возрождение большой герменевтики в малой навстречу софистам. А вот у Достоевского в *Братьях Карамазовых* (3.6) миф творения, насмешливый вопрос к нему и далеко не толковательский* ответ:

Григорий выучил его грамоте и, когда минуло ему лет двенадцать, стал учить Священной истории. Но дело кончилось тотчас же ничем. Как-то однажды, всего только на втором или третьем уроке, мальчик вдруг усмехнулся.

—Чего ты?—спросил Григорий, грозно выглядывая на него из-под очков.

—Ничего-с. Свет создал Господь Бог в первый день, а солнце, луну и звезды на четвертый день. Откуда же свет-то сиял в первый день?

Григорий остолбенел. Мальчик насмешливо глядел на учителя. Даже было во взгляде его что-то высокомерное. Григорий не выдержал. «А вот откуда!»—крикнул он и неистово ударил ученика по щеке.

—Этот мальчик Смердяков, а Григорий тот самый любитель читать непонятное (3.1)**; христианское просвещение без демифологизирующего малого толкователя. Узнать на какой вопрос «Сократа в нас» (Коллингвуд) отвечает значимое слово, от сказуемого до сказания, как носитель знания говорящего о мире, узнать это и есть «познание познанного» (Бёк), спасительное дело нашего «Гермеса в сердце»***. На какой вопрос отвечает слово «думать» в его отличии от «говорить» или слово *стоеросовый*****, не грамматический, а герменевтический разбор высказывания «по вопросам». *См. а123. **Приведено в 63 и а31. ***См. 6132 а232 г5322 и а2424. ****См. д3 и 6341. ▼1: Басня.—2: Мораль.

д5732: К соотношению *учить* и *учиться*: если язык *учишь* сам или *учишь* ему кого-то другого, это иностранный язык, а своему родному *учишься*; «Наука учит только умного», «Умный любит учиться, а дурак учить», «Учи других—и сам поймешь» (ПРН 423 439 и 422); «Научить» хорошо писать «—нельзя, а научиться можно, если по-настоящему захотеть, не считаясь ни с чем!»—Гумилевский *Судьба и жизнь* (3.6), «Народ научить не может, но у народа научиться можно, чтоб затем объяснить ему самого себя.»—Горенштейн *Псалом* (5). Хороший учитель не тот, кто учит (суффикс *-тель* 'кто' < 'кем'*), а у кого и с чьей помощью способный ученик учится сам, ср. *самоучи-*

тель, учебное пособие; на этом построена книга Лакатоша *Доказ. оп-ров*. Педагогика искусство учить, передавать тебе готовое знание, которого у тебя еще нет, а эвристика искусство учиться, воссоздавать знание, которое у тебя давно есть, но ты его не признаёшь^{••}. Данное и заданное. Сюда же из Суконика «Умный это тот, кто хочет узнать что́ уже знает, а дурак—то, чего не знает» (*Спаси нас, доктор Достойевски!* 2.11)^{•••}, или: Умный любит учиться, а дурак любит когда его учат —чтобы потом учить других дураков и самому понять толкуя. [•]См. 6231 с прим. ^{••}См. д535 с прим. ^{•••}Полнее приведено в д53111. ▼1: За и против зеркала народности.

д6213: «Служба понимания», филология по Аверинцеву (*КЛЭ* 7 стб. 976), оказывается по-английски службой разведки, *intelligence service*. Этот перевод говорит против интеллигентской герменевтики понимания, она же герменевтика перевода, непонимания, подозрения. Филолог-толкователь не шпион в чужом языке и не предатель в своем родном.

д6643: Русская литература как герменевтика, уже не народная большая и еще не ученая малая. Русская герменевтика не развивалась, сказал мне когда-то Топоров, «и на это есть свои причины». Я не спросил какие, а теперь вижу главную причину в русском литературоцентризме. Светская русская литература продолжила родной фольклор так сильно, что сама стала, особенно Пушкин и Достоевский, для интеллигенции если не обновленной народной герменевтикой, то снова художественной герменевтикой народности и «нашим всем». (Французы тоже литературоцентричны, но в их литературе растворена риторика, не герменевтика. А у немцев «философиецентризм».) Но вот беда, писательское подражание говорящему мировому человеку оборачивается непослушной отсебятиной, ее девиз «Я сам народ», а последователь превращается в преследователя[•]. Отсюда уже у Розанова отказ от литературоцентризма, от написанного слова и возврат к записанному, к фольклору и фольклорной герменевтике. Это соответствует протестантскому отказу от предания в пользу «одного Писания» (Лютер)^{••}, хотя русский «возврат к началу»^{•••} зашел глубже. Демифологизация Евангелия в *Мастере и Маргарите*, Булгаков здесь русский Бультман.

Из дневника Пришвина под 30.7.1937: «Розанов—послесловие русской литературы, я—бесплатное приложение. И всё...» Да, толкователь-филолог не писатель, не последователь говорящего, а исследователь, так что не для него «литературоведение как литература» по Бочарову, всё еще литературоцентричное. После словаря Даля русская герменевтика может не быть литературой, а после книги Бахтина о Достоевском и посвященной Бахтину статьи Топорова о *Преступлении и наказании* (МРСО 193–258), сюда же Бочаров *Холод*, русская литература может не быть герменевтикой; «Третье возрождение» фольклорного золотого века в литературном серебряном****, или «домашний эллинизм» (Мандельштам), это собственно филологическое дело. Мандельштам против «нарочитого», «профессионального» символизма (*О природе слова*), Цветаева о своем делании не понимая***** и Пришвин под 3.7.39:

Символист—это кто осознал себя таким и тем подчеркнул, и этой чертой сознания уничтожил свой собственный путь, в который, конечно, входил и символизм. Это было действительное и волшебное начало в составе творческого процесса, но раз оно осознано, вынута из целого и заключено в «изм», оно переходит в лабораторию для исследования—.

Осознавшие себя символистами Брюсов, Андрей Белый, Вяч. Иванов занимались литературой как литературоведением, они подменяли собой не только большого говорящего, но и малого толкователя. Набоков тоже такой. *См. д54 6318 с прим. и д552. **См. д541 5411 и а24524. ***См. д5731. ****См. д53311сл. *****Приведено в д5845.

а24212: Фольклорная речь. Убеждение Соссюра, родовитого индивидуалиста, что речь в отличие от языка индивидуальна, эгоцентрически исходит из «моего» слова и не признаёт фольклор как коллективную речь самого хозяина языка—словесность собирательного говорящего, кого открыл диалогист Розеншток-Хюсси. Говорящий мне здесь и сейчас другой это один из многих других, взявший слово представитель мирового человека; такова герменевтическая установка*. Сюда же «речевые жанры» и «память жанра» по Бахтину: Соссюр «игнорирует речевые жанры» (*Проблема речевых жанров—БСС 5 184* прим.) не просто так, соссюровская общая лингвистика с ее го-

ворящим «я» и слушателем-другим и потому без толкователя** игнорирует всё фольклорное в речи включая памятливые жанры; к бахтинским жанрам Лена Силард в *ЧС 191–205*. И бахтинская «полифония», к ней Махов *Musica lit.* по указателю. *Ср. в 6263 и 428. **См. д521сл.

a24524: Протестантская герменевтика. Герменевтическая неудача христианства отчасти преодолена в протестантизме. Отказ Лютера от предания и возврат к Писанию как ответ на вопрос о говорящем* образовал библейскую герменевтику протестантов от Маттиаса Флация до Бультмана. Ее возможности наперед ограничены христианским выбором говорящего (каков говорящий, таков и толкователь) и немецким «философиецентризмом». *См. д541 552 и 5411.

622112: Губитель и спаситель. Неполное число сказочного губителя гибельно, круглое число героя спасительно, а сверхполное число двойственно*. Однокоренные *губить-гнуть* с угрозой *в бараний рог согну!* и *ги(б)нуть-(за)гнуться, па-губа* и *(по)гибель, су-губый* 'двойной', сюда же хотя бы по созвучию *губы* (Трубачев *ЭССЯ 7 79* отделяет *губá* 'гриб' и 'рот' от *гнуть*). Люди *со складкой* у Достоевского, к этому слову Г. Степанова в *ДМИ 7 200–03*; «складка» Делёза. А толкование это раз-гибание сугубого, раз-вертывание свернутого, ср. армянское *teknel***. Вот Гёльдерлин, начало гимна *Патмос*: «Близок | и трудно-объятен Бог. | Но где опасность (Gefahr), там растет | и спасительное (das Rettende).»—о Боге как у Борхеса в *Сфере Паскаля*, а дальше порусски получают однокоренные *о-пас-ность* и *с-пас-ение* (об этом не раз Топоров, еще см. в предисловии Бочарова к *ПТ 15*сл. с прим. 26сл.). Так и *девятью людьми* с их опасной неполнотой в пути и спасительным восполнением глазами встречного, это про них соответствующая отрывку из Гёльдерлина пословица (*СВРЯ* под *беда*) «Где беда, там и Бог/Никола». *Пастух-пастырь-спаситель*, толкователи Гермес и Христос***. *Спаси Господи, спасибо*, «Призывай Бога на помощь, а св. Николу в путь», «На поле Никола общий бог», есть и Никола Морской, «Благому чудотворцу Николаю два праздника в году, а Касьяну немилостивому один в четыре года» (*ПРН 275 43* и *898*). А бог-творец происходит от бога-спасителя****. Ср. у Григоряна *ПВТЧ 22*

и 397 «В религии особенно чётко проговариваются эти роли: первый—создатель, второй—погубитель (или гибнущий сам), третий—спаситель.» «Спасение, спаситель приходят третьими после второго, отрицателя и разрушителя.» •См. 6123. •В 643. ••См. в д6622. •••Так в 61276 и 12763.

641322: После ГУЛАГа. «Писать стихи после Освенцима невозможно», сказал Адорно. И тем более после ГУЛАГа невозможна всякая наивная писанина от себя, дурное подражание большой герменевтике. Хватит самодовольной болтовни, замолчите толковательским молчанием*. Хватит воображать себя говорящими, ср. *строить из себя Ивана* и подобные**, говорящий у нас в конечном счете только один на всех, это хозяин языка мировой человек Иван со своей большой герменевтикой. Теперь возможна и нужна малая русская герменевтика не желающих *валять ваныку* (как Пригов) мирян. Слушайте же родную-народную речь со стороны, а толкуйте слова без отсебятины чтобы спастись. Достоевский после острога, Мандельштам *Четвертой прозы*, Шаламов. •См. д2132. •В 6148.

в41121: Плагиат вторичен, это переkraжа литературной собственности, которой предшествует присвоение грамотеями фольклорных общих мест как ничьих. «Собственность это кража» (Прудон), писатель как вор с девизом «Беру свое добро где нахожу» (ответ уличенного в плагиате Мольера), а находка по-гречески «гермесово». Толкователь тоже находчик, но он не присваивает чужих слов, он отчуждает свои родные. Герменевтика искусство Гермеса-вестника, а риторика Гермеса-вора. Риторическое злоупотребление общими местами. История идей и их фольклорная предыстория, литературный «интертекст» и фольклорные варианты.

Сокращения

Художественная литература и другие общие источники в этот список не вошли.


Автор и герой—М.М. Бахтин, *Автор и герой в эстетической деятельности*.
В кн. БСС 1, с. 69–263

- БСС—М.М. Бахтин, *Собрание сочинений*, т. 1–6, Москва 1996–2012
- Вел. инкв.—В.В. Розанов, *Легенда о Великом инквизиторе Ф.М. Достоевского*—, Москва 1996
- ВЯ—Вопросы языкознания, Москва
- ДМИ 7—Достоевский: Материалы и исследования, вып. 7, Ленинград 1987
- Доказ. опров.—Imre Lakatos, *Proofs and Refutations: The Logic of Mathematical Discovery*, Cambridge 1983; по-русски не полностью: И. Лакатос, *Доказательства и опровержения: Как доказываются теоремы*, Москва 1967, переиздано в его кн. *Избранные произведения по философии и методологии науки*, Москва 2008, с. 25–198
- Древнеслав. аксиол.—А.Ф. Журавлев, *Древнеславянская фундаментальная аксиология в зеркале праславянской лексики*. В кн. *Славянское и балканское языкознание. Проблемы лексикологии и семантики*—, Москва 1999, с. 7–32
- Заг.—Загадки (серия *Памятники русского фольклора*). Изд. подготовила В.В. Митрофанова, Ленинград 1968
- ИЭС—В.Н. Топоров, *Исследования по этимологии и семантике*, т. 1–4.2, Москва 2004–10
- КЛЭ 7—Краткая литературная энциклопедия, т. 7, Москва 1972
- Лицо глаг.—É. Benveniste, *Structure des relations de personne dans le verbe*. In: *Общ. лингв.* 1, с. 225–36; с. 259–69 русского изд.
- МРСО—В.Н. Топоров, *Миф. Ритуал. Символ. Образ: Исследования в области мифопоэтического*. Избранное, Москва 1995
- Musica lit.—А.Е. Махов, *Musica literaria: Идея словесной музыки в европейской поэтике*, Москва 2005
- О ритуале—В.Н. Топоров, *О ритуале: Введение в проблематику*. В кн. *Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках*, Москва 1988, с. 7–60; переиздано в ИЭС 1, с. 484–538
- Общ. лингв.—É. Benveniste, *Problèmes de linguistique générale*, [1] & 2, Paris 1966 & 1974; по-русски частично: Э. Бенвенист, *Общая лингвистика*, Москва 1974
- ПВТЧ—Армен Григорян, *Первый, второй и третий человек*, второе изд., Москва 2014
- ПРН—Пословицы русского народа. Сб. В. Даля, Москва 1957
- Против толк.—Susan Sontag, *Against Interpretation and Other Essays*, New York 1969, pp. 3–14; по-русски в кн. С. Зонтаг, *Мысль как страсть*. Избранные эссе 1960–70-х годов, Москва 1997, с. 9–18

- ПТ—В.Н. Топоров, *Петербургский текст*, Москва 2009
- Р. нар. посл.—*Русские народные пословицы и поговорки*. Составил А.М. Жигулев, третье изд., Устинов 1986
- Сб. посл. рус.—*Сборник пословиц русского языка*. Составитель В. Танчук, Нью-Йорк 1986
- СВРЯ—В. Даль, *Толковый словарь живого великорусского языка*, т. 1–4, третье изд., под ред. И.А. Бодуэна де Куртенэ, Санкт-Петербург—Москва 1903–09; репринты: Москва 1994 и 2000
- Слово и соб.—В.В. Библихин, *Слово и событие*, Москва 2001; переиздано с приложениями: *Слово и событие; Писатель и литература*, М. 2010, с. 3–258
- Сюжеты р. лит.—С.Г. Бочаров, *Сюжеты русской литературы*, Москва 1999
- Филол. сюжеты—С.Г. Бочаров, *Филологические сюжеты*, Москва 2007
- Холод—С. Бочаров, *Холод, стыд и свобода: История литературы sub specie Священной истории*. В кн. *Сюжеты р. лит.*, с. 121–51; переиздано в *Филол. сюжетах*, с. 199–232
- ЧС—*Человек как слово: Сб. в честь В. Айрапетяна*, Москва 2008
- ЭССЯ—*Этимологический словарь славянских языков: Праславянский лексический фонд*. Под ред. О.Н. Трубачева / А.Ф. Журавлева, вып. 1, Москва 1974– (изд. продолжается)
- Этим.—*Этимология*, Москва 1963– (изд. продолжается)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարեն Խաչատրյան, Համո Սուքիասյան, Գեղամ Բադալյան,
Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, 187 էջ+1 ներդիր և 2 քարտեզ:



Հրատարակվել է վաղուց սպասված մի բացառիկ կարևորության գիտական ամբողջական աշխատություն, որում առաջին անգամ հիմնարար պատմաքննության ներքո տրվել է հայկական պետականության համար առանցքային և ցայսօր անտեսված սահմանատարածքային հիմնախնդիրը Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների համատեքստում: Բացառիկ բարեխիղճ աշխատանք, որում վերհանված են հայ ժողովրդի խորհրդային ժամանակաշրջանի ամենացավոտ հարցերից մեկը՝ հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Ադրբեջանին: Աշխատության աղբյուրագիտական հիմքը և

փաստարկային հենքը հիմնականում հեղինակների կողմից հմտորեն առաջին անգամ շրջանառված արխիվային վավերագրերն են, իսկ առաջնային նյութը՝ Հայաստանի և Վրաստանի արխիվներում պահվող փաստաթղթերը:

Հեղինակների անմիջական հետազոտման առարկա են հանդիսացել քննալական Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ հայկական պետականության տարածքային-սահմանային հարցերի հստակ և ճշգրիտ ներկայացումը, դրանց վերաբերյալ աշխարհաքաղաքական պարտադրանքի պայմաններում կնքված պայմանագրերը, որոնք ստորագրել են Ռուսաստանի խորհրդային իշխանությունները, սակայն արմատները գալիս են առնվազն 1920 թ. թուրք-հայկական՝ Հայաստանի համար կապիտուլյացիոն պատերազմի և դրա անմիջական արդյունք Ալեքսանդրապոլի չարաբաստիկ պայ-

մանագրի ժամանակներից: Այստեղ տեղին է ասել, որ աշխատության հեղինակները նաև ցույց են տվել, թե գործնականում ինչ ժառանգություն էին ստացել Խորհրդային Հայաստանի իշխանությունները նախորդ կառավարությունից, որի պայմաններում դեռ 1920 թ. աշնանը դաշնակիցներից լքված և Խորհրդային Ռուսաստանին բարեպատեհ պահին չընդունած Հայաստանի առաջին հանրապետության անցումային փուլի կառավարությունը նոր Խորհրդահայ կառավարությանն առանձնապես մանկերլու տեղ չէր թողել՝ ժառանգելով բզկտված պետություն, սովալլուկ գաղթականներ, անորոշ սահմաններ և լարված հարաբերություններ հարևանների հետ: Առավել ևս, որ տարածքային սահմանազատման հարցերը Ադրբեջանի և Թուրքիայի հետ ընթացան 1921 թ. փետրվարյան իրադարձությունների իրավիճակում, երբ Երևանում և Գյումրիում գտնվող թուրքական ներկայացուցչությունները և առհասարակ լրտեսական-հետախուզիչ ծառայությունները, շահագրգռված լինելով ՀՍԽՀ-ում քառսի և անիշխանության սերմանմամբ (այդ մասին կան անառարկելի փաստեր), վարում էին դավադիր-քայքայիչ գործունեություն, որի սկիզբը դրվել էր դեռևս 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը կնքված Ալեքսանդրապոլի չարաբաստիկ պայմանագրով, երբ թուրքական իշխանություններն իրենցից հետագայում ռազմական և այլևայլ աջակցություն ստանալու հույսեր էին սերմանել հայկական կողմի շրջանում, որից չհապաղեց օգտվել «Հայրենիքի փրկության կոմիտեի» ղեկավար Սիմոն Վրացյանը Հայաստանի համար ստեղծված չափազանց անբարենպաստ և վտանգալից 1921 թ. փետրվարյան օրերին, երբ Մոսկվայում վարվում էին Խորհրդա-թուրքական բանակցություններ, կնքվում էր հայության համար ճակատագրական՝ բարեկամության և եղբայրության մասին պայմանագիր Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև, և որին ո՛չ Խորհրդային Հայաստանի, ո՛չ էլ «Հայրենիքի փրկության կոմիտեի» ներկայացուցիչներն իրավունք չստացան մասնակցելու:

Կ.Հ. Խաչատրյանը, Հ.Կ. Սուքիասյանը և Գ.Մ. Բադալյանը փաստական հարուստ հենքի վրա ցույց են տալիս, որ այդ զարգացումների հետևանքով էլ հայկական երկու պետությունները՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, զգալի տարածքներ կորցրին, որն էլ պայմանավորել և կարևորել է 1920-30-ական թվականներին քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի կողմից բուն հայկական տարածքների յուրացման գործընթացների համակողմանի և ամբողջական լուսաբանումը:

Սույն հիմնարար աշխատության մեջ հեղինակները շատ իրատեսորեն և փաստական անառարկելի հենքի վրա ներկայացրել են Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմամոլ և հայատյաց քաղաքականությունը Հայաստանի Հանրապե-

տության նկատմամբ (ըստ այդմ էլ խորհրդայնացմանն այլընտրանք չէր մնացել), որն արտացոլում էր այսրկովկասյան տարածաշրջանում առաջացած աշխարհաքաղաքական նոր իրավիճակը, որի պայմաններում էլ Վ. Լենինի կողմից քաղաքացիական պատերազմի արյունոտ հորձանուտի մեջ ներքաշված Ռուսաստանը գնաց 1921 թ. Մոսկվայի և Կարսի ոչ հայանպաստ պայմանագրերին, որոնք աշխարհաքաղաքական պահի թելադրանքն են արտացոլում, բայց ոչ նորբուլշևիկյան Ռուսաստանի առավել ցանկալի կայսերապաշտական շահերը: Դա ինքնին ակնհայտ էր, քանզի հեղինակների բերած փաստերը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին բռնակցած հայկական տարածքների և խորհրդաթուրքական սահմանազատման, Ադրբեջանին անցած Լեռնային Ղարաբաղի ոչ օրինական հիմք ունեցող բռնակցման խնդրի, Անդրկովկասյան Դաշնության կենտրոնական գործադիր կոմիտեի և նրա բազմաթիվ հանձնաժողովների կողմից հայկական սահմանամերձ բնակավայրերին պատկանող տարածքները ադրբեջանական սահմանակից շրջաններին կցելու ոչ միանշանակ գործընթացների մանրագնին ներկայացումը վկայում է, որ այդ իրավիճակում, սակայն, խորհրդահայ առաջնորդների գոնե մի ավելի առողջ մասը առանձնապես հակվածություն չի դրսևորել հայկական տարածքների օտարման և Ադրբեջանին միացման խնդրում, իսկ մի շարք դեպքերում էլ ակնհայտորեն դիմադրել է: Հենց այս կտրվածքով էլ սույն աշխատությունն ունի միանգամայն արդի հնչեղություն:

Այս համատեքստում, կարծում ենք, հեղինակները հանգել են կարևոր և հիմնարար եզրահանգման, համաձայն որի՝ թե՛ ցարական և թե՛ խորհրդային Ռուսաստանը երբեք չեն հաշտվել և չէին կարող հաշտվել անդրկովկասյան տարածաշրջանի կորստի հետ, որը տիրապետող գործոն էր XVIII դարից սկսած առ այսօր, որն իրատեսորեն չգնահատվեց և արտաքին քաղաքական առաջնահերթությունների տեսանկյունից անտեսվեց Առաջին հանրապետության քաղաքական ղեկավարության կողմից 1920 թ. և անգամ աշնանը Դաշնակիցների կողմից վերջնականապես ու անհուսալիորեն լքվելուց հետո, սակայն գործնականորեն արժևորեցին Ադրբեջանի իշխանությունները, որոնք Մ. Քեմալի խորհրդով և հանձնարարականով ընտրեցին անարյուն խորհրդայնացման ուղին՝ ձեռք բերելով որոշ ռազմավարական առավելություններ: Ամեն դեպքում դրանք կարևոր իրողություններ էին, որոնք փորձեցին հասկանալ անհամեմատ ավելի հեռատես դաշնակցական գործիչները, ինչպես, օրինակ, Հովհ. Քաջազնունին, որը կարծում էր, թե Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացման հարցը տվյալ պարագայում ընդամենը ժամանակի խնդիր էր: Հատկանշական է հեղինակների դիտարկումը Բ. Լեգրանի հանդիպման մասին

ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի և Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հետ, որի ժամանակ Ռուսաստանի ներկայացուցիչները պնդել էին, որ իրենց միջնորդությունը կարող է իրական արդյունքներ տալ միայն Հայաստանում ռուսական բանակի առկայության դեպքում, որը կատեգորիկ մերժվում է: Ք. Կարաբեքիրի զորքերից ջախջախիչ պարտություն կրած և կապիտուլացված Հայաստանը պահպանում էր անկախությունը փրկելու հիմնազուրկ պատրանքը, որը շարունակվեց մինչև վերջնական անկումը: Ակնհայտ է, որ, մի կողմից, Խորհրդային Ռուսաստանը տատանվելով փորձում էր ստանալ արտոնություն Հայաստան մտնելու, մյուս կողմից, սակայն, իրադարձությունների սրընթաց զարգացումն այլ իրողություններ պարտադրեց, և իր հնարավորությունները լիովին չկորցնելու համար Խորհրդային Ռուսաստանը Ս. Կասյանի գլխավորությամբ կազմակերպեց Ռազմահեղափոխական կոմիտեի և նրան ուղեկցող «Հատուկ Գնդի» մուտքը Ղազախից Իջևան՝ հռչակելով խորհրդային իշխանություն Հայաստանում: Դրան զուգահեռ՝ Երևանում ընթացան ուշացած բանակցություններ Բ. Լեգրանի և հայկական իշխանությունների միջև, որոնք, ի վերջո, ավարտվեցին դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի կնքմամբ: Այս կապակցությամբ հեղինակները ուշագրավ հետևության են անում՝ եթե այն չիրականացվեր այդ ժամանակ, ապա, անկասկած, որոշ ժամանակ անց հայ ժողովրդի համար ավելի մեծ կորուստներով իրականություն էր սպասվում: Իրադարձությունների հետագա ընթացքը ևս դա փաստեց, երբ Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 3-ի գիշերը, այլևս գոյություն չունեցող կառավարության լիազորած պատվիրակությունն ստորագրեց հայ-թուրքական հաշտության պայմանագիր. ըստ այդմ՝ Հայաստանը կորցնում էր շուրջ 21 հազար քառ. կմ տարածք, Կարսի մարզը և Սուրմալուի գավառն անցնում էին Թուրքիային, Շարուր-Նախիջևանը և Շահթախթին հայտարարվում էին Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող տարածքներ, որտեղ հանրաքվեի միջոցով պետք է հաստատվեր հատուկ վարչություն, Հայաստանը զրկվում էր ընդհանուր զինվորական ծառայություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից և այլն: Այս առումով ինքնին ակնհայտ է դառնում հեղինակների բերած անհերքելի փաստերի արդի հնչեղությունը այսօրվա հայ-թուրքական զարգացումների մեկնակետից:

Անդրադառնալով 1921 թ. պայմանագրի խնդիրն՝ հեղինակները սկզբունքային եզրահանգման են գալիս, որ Հայաստանի խորհրդայնացմամբ Հայաստանին վերաբերող տարածքային հարցերը աշխարհաքաղաքական ուժերի նոր դասավորվածությամբ տեղափոխվում են խորհրդաթուրքական հարթություն, զուգահեռաբար խիստ կարևոր և իրապաշտական, ոչ զգացմունքային

տեսակետի հանգում, որ թեպետ ՀՄԽՀ նոր իշխանությունները, ի դեմս հայ կոմունիստների, վճռական էին տրամադրված հայկական տարածքների և սահմանների լուծման հարցում, այդուհանդերձ, վճռորոշ էր Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Հեղինակները մանրագնին ներկայացնում են Խորհրդային Ռուսաստանի առաջադրած մոտեցումների բոլոր տարբերակները, ըստ ամենայնի արժևորում դրանք՝ նշելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Խորհրդային իշխանություններին ակնհայտորեն չեն բավարարել Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագրով հանրապետությանն անցնող տարածքները, քանզի ակնկալիքներն ավելին էին, որոնք, սակայն, նշանակություն չունեցան Մոսկվայի 1921 թ. մարտի 16 (18)-ի պայմանագրի կնքման ժամանակ, և այդ պայմանագրով հայ-թուրքական սահմանագիծը որոշելիս Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքները կազմեցին ավելի քան 25 հազար քառ. կմ:

Հեղինակները տրամաբանական և արդարացի եզրահանգման են եկել. 1921 թ. Մոսկվայում ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեց և Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեց հայկական տարածքների մի զգալի մասը՝ միջազգային իրավունքի նորմերի ոտնահարմամբ և առանց Խորհրդային Հայաստանի մասնակցության, և կարծես, որպես մխիթարանք, միայն Ալեքսանդրապոլի գավառի հարցում Խորհրդային ղեկավարությունը և Կարմիր բանակի հրամանատարությունը արդեն Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո վճռական դիրքորոշում դրսևորեցին, և այն մնաց Խորհրդային Հայաստանի տարածքակազմում, իսկ ընդհանուր արդյունքների համակազմի տեսանկյունից Ռուսաստանը ոչ միայն զոհաբերեց հայկական տարածքները Թուրքիային և Ադրբեջանին, այլև պարտավորվեց պարտադրելու ՀՄԽՀ իշխանություններին ճանաչել այդ փաստը, որն էլ օրինականացվեց Կարսում 1921 թ. հոկտեմբերի կեսին. թեև ՀՄԽՀ իշխանությունները փորձեցին դիմադրել և որոշ հակաառաջարկներ ներկայացնել, սակայն էական հաջողության չհասան, և չնչին փոփոխություններով Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը Կարսում վերահաստատվեց: Կարևոր է նաև հեղինակների այն սկզբունքային և անաչառ եզրակացությունը, որ, այդուհանդերձ, ՀՄԽՀ իշխանությունները առիթը բաց չեն թողել իրենց դժգոհությունը հայտնելու և, վկայակոչելով ՀՄԽՀ արտգործոլկոմ Ասք. Մռավյանին, արձանագրում են վերջինիս հստակ դիրքորոշումը, ըստ որի՝ իրենք չեն կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք իրենց համար կենսական անհրաժեշտություն են, կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը:

Հեղինակների կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ բոլշևիկյան Ռուսաստանի ոչ հայամետ դիրքորոշման հետևանքով ՀՄԽՀ-ն ունեցավ

զգալի տարածքային կորուստներ. հայության համար այդ կորստաբեր գործընթացը շարունակվեց նաև 1920-ական թվականներին, և եթե 1921 թ. վերջին – 1922 թ. սկզբին ՀՍԽՀ տարածքը տատանվել է 32-33 հազար քառ. կմ-ի սահմաններում՝ Երևանի համաձայնագրով ենթադրելի 43 հազարի փոխարեն, ի վերջո, այն սահմանափակվեց ընդամենը 29.742,59 քառ. կմ տարածության վրա:

Անդրկովկասյան դաշնության օրոք, հեղինակների եզրահանգմամբ, ի վնաս հայկական շահերի՝ ՀՍԽՀ-ին պատկանող տարածքների կորստի հաշվին հանգուցալուծվեցին Հայաստանի հյուսիսարևելյան սահմաններում առկա տարածքային վեճերը, որոնք էլ ժառանգվեցին Խորհրդային Հայաստանի իրավահաջորդ Երրորդ հանրապետությանը: Միաժամանակ, հեղինակները պարզորոշ արձանագրում են Ադրբեջանի նկրտումները ռազմավարական և տնտեսական մեծ կարևորություն ունեցող սահմանամերձ շրջանների նկատմամբ, որի արտացոլանքը ներկա փուլի իրադարձություններն են՝ ոչ հայա-նպաստ զարգացումներով, որոնք ինչպես 1920-ական թվականներին, այնպես էլ այսօր ուղեկցվում են վիճելի տարածքներում ադրբեջանական տեղական իշխանությունների կողմից հաճախաբար հրահրվող խժոժություններով, այլ սադրիչ գործողություններով՝ դրանով իսկ հայկական կողմին հարկադրելով հրաժարվել ադրբեջանցիների կողմից արհեստականորեն և ոչ օրինական ձևով վիճելի հայտարարված տարածքների նկատմամբ իրավաչափ և օրինական հավակնություններից:

Ստեղծված իրավիճակում, օգտվելով կենտրոնական իշխանությունների թողտվությունից, իր ժամանակին ՀՍԽՀ քաղաքական ղեկավարությունը ի զորու չեղավ արդյունավետ հակազդելու ադրբեջանական նկրտումներին, չնայած, այդ ամենով հանդերձ, տարածքային-սահմանային վեճերը չդադարեցին, մնացին քողարկված վիճակում՝ դառնալով անընդմեջ գործընթաց առ այսօր:

Ըստ այդմ, ըստ հեղինակների նույր և տեղին դիտարկման, 1920-ական թվականներին և դրանից հետո ընկած ժամանակահատվածում Ադրբեջանը երբեք չի խորշել և ներկայումս էլ բոլորովին չի խորշում զանազան ճնշումների և սպառնալիքների մեթոդով Հայաստանին «նեղը զցել» և մերկ պարտադրանքի լեզվով խոսել՝ օգտագործելով իրեն ընձեռված ռազմավարական և կոմունիկացիոն առավելությունները, ինչպես նաև իր դաշնակիցների աջակցությունը և հիմք ընդունելով «որտեղ ադրբեջանական գյուղ, այնտեղ ադրբեջանական տարածք»: Ադրբեջանը անհիմն մերժում և ցայսօր անտեսում է հայկական խորհրդային և ոչ խորհրդային իշխանությունների փաստարկները: Դրան, անկասկած, նպաստում են աշխարհաքաղաքական ուժերի դասավոր-

վածությունը և ռազմավարական-քաղաքական կողմնորոշումների հարցում անհեռանկար հաշվարկները և ընտրանքը:

Հեղինակների հանրագումարային եզրահանգումն այն է, որ 1920-1930-ական թվականներին տարածքային-սահմանային կորուստների հետևանքով Խորհրդային Հայաստանը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և ՀՍԽՀ-ի իրավահաջորդ Հայաստանի երրորդ հանրապետությունը ռազմավարական առումով հայտնվեցին աննպաստ իրավիճակում:

Հետազոտությունից հետո կազմված քարտեզները հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու Խորհրդային Հայաստանի սահմանների փոփոխությունների մասին:

Հիրավի, ուշագրավ փաստ է, որ Կարեն Խաչատրյանը, Համո Սուքիասյանը և Գեղամ Բադալյանն ստեղծել են պատմագիտական մտքի տքնաջան աշխատանքի արժեքավոր արգասիք մի հիմնարար աշխատություն, որն իր վրա պետք է բևեռի պատմաբանների և քաղաքագետների, գիտակից հասարակության, արտաքին-քաղաքական գերատեսչության ոլորտի ներկայացուցիչների, միջազգայնագետների չթուլացող ուշադրությունը, դառնա աշխատանքային ուղեցույց Հայաստանի Հանրապետության առջև կանգնած նորօրյա սահմանային-տարածքային հարցերի լուծման գործում: Սահմանային-տարածքային սահմանազատման հարցերին նվիրված այս աշխատությունը լուրջ ներդրում է պատմագիտության և հարակից մի շարք գիտությունների բնագավառում, ուղենիշ՝ ներկա արտաքին-քաղաքական գործառնություններում:


Նկատի ունենալով սույն ծանրակշիռ ուսումնասիրության արտաքին քաղաքական նշանակությունը՝ հեղինակներն առաջիկայում լույս կընծայեն նաև աշխատության անգլերեն և ռուսերեն տարբերակները:

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում, ժողովածուի կազմող և թարգմանիչ՝ Գ. Մախմուրյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, 560 էջ:

Armenia in Documents of the U.S. Department of State, 1917-1920. Compiled and translated by G. Makhmourian. Ed. V.R. Aglyan. Yerevan: Institute of History NAS of Armenia, 2020, 560 p.



1991 թ. Հայաստանի անկախության վերականգնումով հայ պատմագիտության համար սկսվեց խորհրդային գաղափարաքաղաքական կապանքներից ազատ, ազգային-պետական շահերի վրա հիմնված զարգացման փուլ: Թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ Սփյուռքում գիտական նոր հնչեղություն ստացավ 1917-1920 թթ. իրադարձությունների լուսաբանումը՝ 1918 թ. ստեղծված Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին գործընթացների առանձնահատկությունները և օրի-

նաչափությունները վեր հանելու համար: Մասնավորապես, պատմաբանների ուշադրությունը կենտրոնացավ 1918 թ. հայկական պետականության վերականգնման տնտեսական ու ռազմաքաղաքական նախադրյալների և պայմանների, Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքական կյանքի, Արևմտյան Հայաստանի և ՀՀ-ի նկատմամբ Առաջին աշխարհամարտում հաղթանակած Գլխավոր դաշնակից պետությունների¹ քաղաքա-

¹ Գլխավոր դաշնակից պետություններն էին՝ Բրիտանական կայսրությունը, ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ Դաշնակից տերությունները՝ Պորտուգալիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովենական պետությունը, Չեխոսլովակիան, Հայաստանը, Հեջազը (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ.՝ պրոֆ. Զ.Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, փաստ. N 338, էջ 676):

կանության հիմնահարցերի, ՀՀ-ի անկման պատճառների ուսումնասիրության վրա: Նշված խնդիրները համակողմանի վերլուծելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ԱՄՆ-ի արտաքին գերատեսչության՝ Պետական դեպարտամենտի փաստաթղթերը, որոնք պահպանվում են ԱՄՆ-ի ազգային արխիվում (Վաշինգտոն): Այդ փաստաթղթերի առավել կարևոր մասն ընդգրկված է 1931-1947 թթ. ԱՄՆ-ի կառավարության կողմից պաշտոնապես հրատարակված հատորներում, իսկ մի մասի ժապավենային պատճեններն էլ 1980-ական թվականներին ստացվել են ԱՄՆ-ի ազգային արխիվից և պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) միկրոժապավենների հավաքածուներում: Խորհրդային տարիներին այդ վավերագրերը պահպանվում էին հատուկ ֆոնդերում՝ անհասանելի լինելով Հայկական հարցի ու Հայաստանի առաջին հանրապետության պատմությունն ուսումնասիրող պատմաբանների համար:

Դեռևս 2011 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ռուսերեն լույս է ընծայել «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում» վերնագրով ծավալուն ժողովածուն, որում ամփոփված է ՀԱԱ-ի տարբեր ֆոնդերում ու միկրոժապավենների հավաքածուներում հայտնաբերված, ինչպես նաև ԱՄՆ-ի կառավարության հրատարակված հատորներից քաղված, Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող 330 ամերիկյան դիվանագիտական փաստաթուղթ²: Դրանք ընտրել, անգլերենից ռուսերեն թարգմանել ու ժողովածուն կազմել է պատմագիտության դոկտոր Գայանե Մախմուրյանը: Այս հրատարակությունը նույն ժողովածուի անգլերեն տարբերակն է, որը ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ և պատմագիտության թեկնածու, դոցենտ Վահագն Ազյանի խմբագրությամբ լույս է ընծայվել 2020 թ.:

Ժողովածուի բովանդակային առանցքը կազմում են երեք հիմնական թեմա: Դրանք են՝ Հայաստանի առաջին հանրապետության ընդհանուր իրավիճակն ու նրա հնարավորությունները, Հայկական հարցը 1919-1920 թթ. Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում, ինչպես նաև ամերիկացի գեներալ Ջեյմս Հարբորդի զինվորական առաքելության այն զեկուցագրերը, որոնք 1919 թ. օգոստոս-հոկտեմբերին կազմվել են նրա՝ Ադանայից, Մարդինից, Խարբերդից, Սեբաստիայից, Էրզրումից, Կարսից Երևան և այնուհետև անդրկովկասյան մյուս մայրաքաղաքներ այցելության ողջ ընթացքում՝ մինչև Բաթումից նավով հեռանալու պահը: Ժողովածուում զետեղված փաստաթղթերը

² Ст'я Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. Сост. и пер. с англ. Г.Г. Махмурия, Ереван, 2011.

լույս են սփռում Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության ձևավորման ընթացքի, Հայաստանի առաջին հանրապետությանը տնտեսապես աջակցելու, արևմտահայկական տարածքները թուրքական տիրապետությունից ազատագրելու հարցերի, հայկական անկախ պետություն ստեղծելու ամերիկյան քաղաքականության, դրա հեռանկարների վերաբերյալ Մերձավոր Արևելք ուղարկված ամերիկյան զինվորական առաքելությունների տեսակետների, Հայկական հարցում ԱՄՆ-ի և մյուս Գլխավոր դաշնակից պետությունների միջև հակասությունների, Հայկական հարցի լուծման ուղղությամբ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի գործունեության վրա:

Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Ֆելիքս Սմիթի 1917 թ. հոկտեմբերի 19-ի ճեպագիրը՝ ուղղված Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպան Դեվիդ Ֆրենսիսին և պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, ապա նոյեմբերի 9-ին վերջինիս հասցեագրված հեռագիրը բուլղարական կառավարության նկատմամբ Անդրկովկասի իշխանության ազգային մարմինների դիրքորոշման, երկրամասի ժողովուրդների անջատողական տրամադրությունների և դրանց իրագործմանը նյութական ու ռազմական աջակցություն ցույց տալու վերաբերյալ վկայում են, որ ԱՄՆ-ի պետդեսպարտամենտը, հիմնավորված զգուշավորություն դրսևորելով, խուսափեց փաստացիորեն ճանաչել Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությունը և չէր շտապում նյութական օգնություն տրամադրել վերջինիս: Չնայած դրան, Ռ. Լանսինգը, Ֆ. Սմիթը և Եվրոպայում ԱՄՆ-ի կառավարության հատուկ ներկայացուցիչ Էդվարդ Հաուզն ուշադրությամբ հետևում էին Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին (էջ 11-14):

1917-1918 թթ. պետքարտուղար Ռ. Լանսինգի նամակագրությունը Մեծ Բրիտանիայում ԱՄՆ-ի դեսպան Ուոլթեր Փեյջի, ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ռուֆուս Ռեդինգի, Է. Հաուզի, Դաշնակից պետությունների Գերագույն ռազմական խորհրդում ԱՄՆ-ի ներկայացուցիչների՝ ռազմական գնումների և ֆինանսների գծով՝ Օսկար Քրոսբիի և գեներալ Թասքեր Բլիսի, Ֆ. Սմիթի, Մեծ Բրիտանիայում ԱՄՆ-ի գործերի հավատարմատար Իրվին Լոլինի հետ վկայում են, որ ԱՄՆ-ի դիվանագիտական շրջանակներում ոչ թե մարդասիրական, այլ աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից էր կարևորվում Օսմանյան կայսրության և Ռուսաստանի սահմաններում ապրող հայերի ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրը: Ընդ որում, ամերիկյան կառավարությունը հետևողականորեն խուսափում էր որևէ ֆինանսական և ռազմական պարտավորությամբ իրեն կաշկանդելուց՝ դա համարելով Մեծ Բրիտանիայի պարտականությունը կամ էլ բարձրացնելով ԱՄՆ-ի ու Գլխավոր դաշնակից պետությունների միասնական որոշումների և գործողությունների հարցը: Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ի արտաքին քաղաքա-

կանությունը մեկնաբանելիս Պետքարտուղարությունն ընդգծում էր, որ այն հեռու է տարածքային հավակնություններից ու շահադիտական նկատառումներից և առաջնորդվում է միայն մարդասիրական մղումներով (էջ 35-36): Պետդեպարտամենտի այս գործելաոճը պայմանավորված էր հաշտության միջազգային բանակցություններում ԱՄՆ-ի առաջարկների նկատմամբ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի փոխհամաձայնեցված հակազդեցությամբ:

Ժողովածուում Հայաստանի առաջին հանրապետության ընդհանուր դրությունը և նրա հնարավորությունները ներկայացված են 1917-1918 թթ. Կովկասյան ռազմաճակատում տիրող իրավիճակի մասին Գլխավոր դաշնակից պետությունների բարձրաստիճան դիվանագետների զեկուցագրերով՝ ընդհուպ 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումն ու հետագայում դրա չեղյալ հայտարարումը: Ընթերցողին ներկայացված են ուշագրավ նամակներ, հուշագրեր և Ամերիկյան պարենային վարչության տնօրեն Հերբերտ Հուվերի 1919 թ. հուլիսի 16-ի հայտագիրը՝ ուղղված Հինգի խորհրդին³ Հայաստանի Հանրապետությունում տիրող իրադրության և օգնության կազմակերպման վերաբերյալ (էջ 158-159): Այս տեսանկյունից խոսուն վավերագրեր են 1919 թ. հոկտեմբերի 5-ին Կողբի մոտ Եվրոպայում ԱՄՆ-ի էքսպեդիցիոն զորքերի գլխավոր շտաբի գեներալ-մայոր Ջեյմս Հարբորդի գլխավորած պատվիրակության վրա կատարված հարձակման նկարագրությունը (էջ 254-255, 268-272), նույն թվականի հոկտեմբերի 7-ին փոխգնդապետ Ջոն Ջեքսոնի կազմած հուշագիրը (էջ 260-262), սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 8-ի ընթացքում պատվիրակության՝ ցամաքով ընթացած խմբի օրագիրը (էջ 266-276), Ջ. Հարբորդի՝ հոկտեմբերի 14-ի թվակիր հեռագիրը Փարիզում ամերիկյան առաքելության ղեկավար Ֆրենկ Փոլկին Հայաստանի դժվարությունների մասին (էջ 298-299): 1919 թ. կեսերին ՀՀ-ի սոցիալական ծանրագույն դրությունն արտացոլված է ԱՄՆ-ի փոխյուպատոս Հուքեր Դուլիթլի և Ամերիկյան նպաստամատույց վարչության առաքելության պետ մայոր Ջոզեֆ Գրինի՝ Թիֆլիսից հղված զեկուցագրերում (էջ 165-170) և Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ Ջեյմս Ջերարդի՝ 1919 թ. օգոստոսի 14-ին ԱՄՆ-ի պետքարտուղարին հասցեագրված նամակում (էջ 188-189):

³ Հինգի խորհուրդը կամ Մեծ հնգյակը Փարիզի վեհաժողովի օրակարգում տեղ գտած որոշիչ, սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի քննարկման նպատակով ձևավորված խորհուրդ էր, որում ընդգրկված էին հակազերմանական դաշինքի առաջատար պետությունների առաջնորդները՝ Վուդրո Վիլսոնը (ԱՄՆ), Դեյվիդ Լյուդ Ջորջը (Մեծ Բրիտանիա), Վիտորիո Օլանդոն (Իտալիա), Ժորժ Կլեմանսոն (Ֆրանսիա) և Սայոնձի Կիմոտին (Ճապոնիա):

Գ. Մախմուդյանը հսկայածավալ աշխատանք է կատարել՝ ուսումնասիրելով 1918-1920 թթ. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանն ու դիվանագիտությանը վերաբերող ամերիկյան արխիվային նյութերի պետական հրատարակությունների 16 հատոր, որոնցից ամենածավալունը 1919 թ. դիվանագիտական գրագրությունն ընդգրկող 12 հատորներն են (Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference. In 12 vols. Wash., US GPO, 1942-1947): Դրանցից ընտրվել են Հայաստանին ու Հայկական հարցին առնչվող բանակցություններին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերը: Վերջիններս բացահայտում են դիվանագիտական մեծ «խաղի» բազում նրբերանգներ, օգնում հասկանալ, թե Գլխավոր դաշնակից պետությունները հատկապես ինչի հետ էին կապում հայկական խնդիրները միջազգային խոշոր բանակցությունների ժամանակ, ինչ դիվանագիտական հնարքներ էին կիրառում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի առաջին դեմքերը: Հասկանալի են դառնում Գերագույն տնտեսական խորհրդի գործառույթները, ամերիկյան պատվիրակության նիստերում տարբեր հարցերի քննարկումների էությունը: Միևնույն ժամանակ, բացահայտվում են Գլխավոր դաշնակից պետությունների դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ և այդ երկրում սկսված քաղաքացիական պատերազմի երկարաձգմանը նպաստելու նրանց շահագրգռվածության պատճառները:

Հայաստանին ու Հայկական հարցին առնչվող բանակցությունների ընթացքի վերաբերյալ փաստաթղթերն է՛լ ավելի ուշագրավ են, քանի որ լույս են սփռում Վ. Վիլսոնի ու Դ. Լյուդ Ջորջի քաղաքականության և դիվանագիտության առանձնահատկությունների՝ ինչպես սեփական ազգային-պետական շահերին հետամուտ քաղաքական մեծագույն դեմքերի սուր վեճերի, այնպես էլ նրանց համագործակցության վրա: Վերջինս թեև հիմնականում պարտադրված բնույթ ուներ, սակայն, անխուսափելի էր:

ԱՄՆ-ի պետդեպարտամենտի՝ Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի ամենաստվար մասը վերաբերում է Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում քննարկման առարկա դարձած մանդատների հիմնահարցին: Դրանց թվում իրենց կարևորությամբ առանձնանում են՝ 1919 թ. հունվարի 29-ին Տասի խորհրդի⁴ նիստում Դ. Լյուդ Ջորջի ներկայացրած մանդատակիր պետությունների

⁴ Փարիզի հաշտության վեհաժողովի առաջին ղեկավար մարմինը: Գործել է վեհաժողովի աշխատանքի առաջին մեկ ու կես ամսվա ընթացքում: Նրանում ընդգրկված են եղել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի նախարարները:

վերաբերյալ բանաձևի նախագիծը, Տասի խորհրդի՝ հունվարի 30-ի ու 31-ի նիստերի քարտուղարի արձանագրությունները, որոնցից առաջինում ամրագրված է Վ. Վիլսոնի պահանջը Օսմանյան կայսրության բոլոր զավթված տարածքների և գերմանական գաղութների համար մանդատակրի համակարգ ընդունելու վերաբերյալ, իսկ երկրորդում՝ բրիտանական պատվիրակության նշյալ բանաձևի նախագծի ընդունումը Տասի խորհրդի կողմից (էջ 51-60): Ուշագրավ է նաև Չորսի խորհրդի⁵ նիստի (1919 թ. մարտի 20) արձանագրությունը. դրանից տեղեկանում ենք, որ հենց այդ նիստում է Վ. Վիլսոնն առաջին անգամ արծարծել Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների նկատմամբ միասնական մանդատ սահմանելու նախընտրելիության հարցը՝ դա հիմնավորելով 1915-1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերից Խորհրդային Ռուսաստանի հրաժարմամբ, հետևաբար՝ Արևմտյան Հայաստանի մեծ մասի նկատմամբ նրա շահերի ու հետաքրքրությունների իրավական հիմքի վերացմամբ, Արևելյան Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցության կորստով և ամբողջ Հայաստանի բնակչության ցանկությունը հաշվի առնելու, այդ երկրի ու նրա բնակչության տնտեսական, սոցիալական, հասարակական-քաղաքական զարգացման աստիճանին համապատասխան մանդատ սահմանելու անհրաժեշտությամբ: Ապա, որպես ուշագրավ լրացում, ԱՄՆ-ի նախագահն ակնարկել է նաև Կիլիկիայի, Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի և Թուրքիայի, այսինքն՝ Օսմանյան կայսրության բոլոր տարածքների նկատմամբ միասնական մանդատ սահմանելու կարևորության ու նպատակահարմարության մասին՝ մատնանշելով այդ տարածքների զարգացման խնդիրների շաղկապվածությունը: Ժ. Կլեմանսոն և Դ. Լյուդ Զորջը պաշտպանել են ինչպես Վ. Վիլսոնի այդ տեսակետը, այնպես էլ մանդատների հարցը տեղում համապարփակ կերպով ուսումնասիրելու նպատակով Մերձավոր Արևելք ու Անդրկովկաս առաքելություն ուղարկելու վերաբերյալ նրա առաջարկը (էջ 77-80): Ժողովածուում խնդրո առարկա հարցի վերաբերյալ փաստաթղթերից հատկապես առանձնանում են Թուրքիայում մանդատների ուսումնասիրման միջազգային հանձնաժողովի ամերիկյան բաժանմունքի, այն է՝ Թուրքիայում ԱՄՆ-ի լիազորներ Հենրի Քինգի և Չարլզ Քրեյնի հանձնաժողովի զեկուցագիրը (1919 թ. օգոստոսի 28) Փարիզի վեհաժողովին և Վ. Վիլսոնին (էջ 199-223), ապա Զ. Հարբորդի ռազմական

⁵ 1919 թ. մարտին փոխարինել է Տասի խորհրդին: Չորսի խորհուրդը կամ Մեծ քառյակը Փարիզի հաշտության վեհաժողովի առավել կարևոր հարցերը քննարկող և դրանց վերաբերյալ իրավական որոշումներ կայացնող ղեկավար մարմին էր, որի կազմում էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները:

առաքելության՝ հոկտեմբերի 16-ին Պետդեպարտամենտին, այնուհետև՝ Սենատին ներկայացրած զեկուցագիրը (էջ 300-332): Առաջինը արժեքավոր վկայություններ է ներառում 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության, Կիլիկիայի հայերի ակնկալիքների, հայկական առանձին պետություն ստեղծելու և մանդատակիր խոշոր տերության ուժերով նրան պաշտպանելու անհրաժեշտության մասին: Զեկուցագրի հեղինակները ներկայացնում են նման պետության հնարավոր չափերն ու ազգային կազմը՝ ելակետ ընդունելով 1914 թ. տվյալները: Իր հերթին, ժողովածուն կազմող Գ. Մախմուդյանը, հղում կատարելով ՀԱԱ փաստաթղթերին, այդ թվում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներին, Գրիգոր Զոհրապի՝ 1913 թ. լույս ընծայված աշխատությանն ու Փարիզում հայկական պատվիրակության 1919-1920 թթ. հայտագրերին, փաստարկված ճշգրտումներ է կատարում ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ նրա հատվածները կազմող՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի նահանգներում, Կիլիկիայում ու Հայաստանի Հանրապետությունում նույն ժամանակահատվածում բնակված հայերի քանակական կազմի վերաբերյալ (էջ 221-223): Այս զեկուցագրերից բացի, ժողովածուում ընդգրկված են Զ. Հարբորդի առաքելության անդամների գրչին պատկանող մի շարք օրագրեր ու զեկուցագրեր, որոնք ներկայացնում են ուղևորության ընթացքում ամերիկացիների հանդիպումները հայերի, համերկրացի քարոզիչների, հույների ու թուրքերի հետ, տեղացիներից ստացած բազմաթիվ խնդրագրերը, առաքելության անդամների կազմած տեղեկանքները: Որպես համալրում՝ ժողովածուում նաև ընդգրկված է ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին Հայկական միասնական պատվիրակության ղեկավարներ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի հասցեագրած հուշագիրը (1920 թ. հուլիսի 14) առդիրներով, այդ թվում՝ «Հայաստանի բնակչություն» վերնագրված տեղեկանքը (էջ 401-409):

Փարիզի վեհաժողովին վերաբերող փաստաթղթերի թվում առանձին թեմա են կազմում օգնության գծով Գլխավոր դաշնակից պետությունների գերագույն կոմիսար, ամերիկացի գնդապետ Վիլյամ Հասկելի նշանակման ու գործունեության հարցերը (էջ 147-149, 153-155, 192-193), նաև հայկական լեռնաշխարհում տիրող իրադրության ու հայերի իրավիճակի հետ ծանոթանալու համար ստեղծված՝ Զ. Հարբորդի ռազմական առաքելության պատմությունը (էջ 176-177, 186, 198): Իսկ գերագույն կոմիսարի գործունեությունը ներկայացված է 1919 թ. հուլիսի 5-ին Ռ. Լանսինգին, օգոստոսի 27-ին ու դեկտեմբերի 1-ին Փարիզի վեհաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին ուղարկված հեռագրերով (էջ 147-148, 198-199, 348-349), օգոստոսի 21-ին ՀՀ վար-

չապետ Ա. Խատիսյանին հղված դիմումով (էջ 192-193), նաև 1920 թ. հունվարի 22-ին Ռ. Լանսինգին հասցեագրված հեռագրով (էջ 379-380):

Հարկ է նշել, որ «Հայաստանը ԱՄՆ պետական դեսպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում» ժողովածուի և՛ ռուսերեն, և՛ անգլերեն հրատարակությունները կրում են կազմողի՝ Գ. Մախմուրյանի ուշադիր ու սրտացավ գիտական աշխատանքի կնիքը: Ժողովածուում ընդգրկված փաստաթղթերի հետ կապված, ըստ անհրաժեշտության, կատարվել է աղբյուրագիտական լրացուցիչ աշխատանք, ճշտվել ու նույնականացվել են բազմաթիվ անուններ, որոնք վավերագրերում հիշատակված են եղել աղավաղված կերպով: Այդպիսի օրինակներից է այն պաշտոնական անձանց ցուցակը, որոնց հետ Ջ. Հարբորդի առաքելության անդամները հանդիպել էին Ադանայից մինչև Թիֆլիս իրենց երկարուձիգ ճանապարհին (էջ 280-285): Աշխատանքի արժանիքն են նաև Գ. Մախմուրյանի կազմած գիտատեղեկատվական հարուստ նյութերն ու առանձին վավերագրերի մասին նրա մեկնաբանությունները: Գիտատեղեկատվական նյութերը ներառում են անձնանունների ընդարձակ ցանկը՝ փաստաթղթերում հիշատակված բոլոր անձանց վերաբերյալ պարզաբանումներով հանդերձ (էջ 428-499), ժողովածուում ընդգրկված փաստաթղթերի աղբյուրագիտական ցանկը (էջ 500-506), անձնանունների և տեղանունների ցանկերը, ըստ այբբենական հաջորդականության ու համապատասխան էջերի նշումով (էջ 507-530), և փաստաթղթերի ցանկը՝ կազմված, ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության (էջ 531-558): Իսկ մեկնաբանություններն էլ բովանդակում են ոչ միայն անհրաժեշտ մատենագիտական տվյալներ, այլև միանգամայն տեղին պարզաբանումներ՝ շարադրված բարձրորակ անգլերենով (օրինակ՝ էջ 23-24, 79-80, 221-223, 331-332, 350-354, 385-386):

Ժողովածուում զետեղված հարուստ նյութը, անկասկած, կարող է օգտակար լինել ոչ միայն մեր հանրապետության պատմաբաններին, ուսանողներին ու Հայաստանի և միջազգային հարաբերությունների պատմությամբ հետաքրքրված ընթերցողներին, այլև անգլալեզու հետազոտողներին: Աշխատանքը ողջունելի է՝ հաշվի առնելով նաև թեմայի հայագիտական արդիականությունն ու կարևորությունը, փաստական նյութի հագեցվածությունը և խնդրո առարկա ժամանակահատվածի ու մերօրյա իրողությունների միջև զուգահեռներ անցկացնելու լայն հնարավորությունները:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՌՈՔԵՐՏ ԲԱՂՊԱՍԱՐՅԱՆ, Հոդվածներ. Հայ-ռուսական գրական-մշակութային առնչություններ, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2020, 108 էջ:



Ժողովածուն ընդգրկում է Հայաստանի պարբերական մամուլում 1980-ական թթ. վերջերից մինչև 2020 թ. հրապարակված հոդվածներ՝ նվիրված հայ-ռուսական գրական-մշակութային առնչություններին, հայ և ռուսականավոր գրողներին:

Ռոքերտ Բաղդասարյանը քաջ հայտնի է հանրապետության գրական-մշակութային շրջանակներին, հայ և ռուս ընթերցողներին, ինչպես հայ, այնպես էլ ռուս գրականությանը, պատմությանը, արվեստին նվիրված իր ուսումնասիրություններով, բազմաթիվ հոդվածներով և գրքերով, որոնք լույս են տեսել ոչ միայն Հա-

յաստանում, այլ նաև Ռուսաստանում: Դրանց թվում են եզակի և շատ արժեքավոր մենագրություններ՝ «Յեղասպանությունը և Ռուսաստանի հայ մտավորականությունը» (2003), «Կարեն Միքայելյան. ստեղծագործությունը և ավանդը ռուս-հայկական գրական-մշակութային փոխադարձ կապերում» (2010) և այլն:

Գրքում զետեղված 12 հոդվածները լուսաբանում են XIX-XX դդ. հայ-ռուսական առնչությունների հարուստ և բազմազան իրողությունները՝ «Պուշկինը և Հայաստանը», «Ի. Էրենբուրգ. «Երջանիկ եմ, որ եղա Հայաստանում», «Եվ այդ սերը փոխադարձ էր», «Բուլգակովը և հայերը», «Հայաստանի երգիչն ու բարեկամը», «Չարենցը և Ռուսաստանը», «Գրողը՝ փշե պսակով», «Հայկական արմատներով ռուս գրողը», «Վոլֆ Էդլիխ. «Այս երկիրը իմ սրտովն է...», «Սայաթ-Նովան՝ ռուսական գրական իրականության մեջ», «Դու բացեցիր ոգու մեր գանձարանն անհուն...», «Ավետիք Իսահակյանը և Ռուսաստանը»:

Հոդվածները առանձնանում են յուրահատուկ մոտեցումով, լակոնիկ շարադրանքով, որոնք չի կարելի շփոթել նույն թեմաներով գրված մեկ այլ հեղինակի գործերի հետ: Բաղդասարյանի ոճը ուրույն է, բնորոշ միայն իրեն:

Կարևորելով հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը՝ նա անդրադառնում է նաև նրանց գրական-մշակութային առնչություններին: Այսպես, «Եվ այդ սերը փոխադարձ էր» հոդվածը նվիրված է Հովհաննես Թումանյանի և ռուս գրականության երևելիների ջերմ կապերին, «Հայաստանի երգիչն ու բարեկամը» ներկայացնում է անվանի բանաստեղծ Նիկոլայ Տիխոնովի ուրույն տեղն ու մեծ դերը խորհրդային շրջանի հայ-ռուսական կապերում: «Գրողը՝ փշե պսակով» հոդվածը լուսաբանում է մոսկվայաբնակ հայտնի հայ մտավորական և գրական-հասարակական գործիչ Կարեն Միքայելյանի բեղմնավոր և հայանպաստ գործունեությունը: «Հայկական արմատներով ռուս գրողը» ծանոթություն է Նինա Բերբերովայի՝ ռուս էմիգրացիայի անվանի ներկայացուցչի հետ:

Նշված հոդվածներում շեշտը ակնհայտորեն դրված է XIX-XX դդ. հայ և ռուս մտավորականության ականավոր գործիչների սերտ կապերի վրա, որի մասին վկայում են հենց ակնարկների «հերոսները» և նրանց ստեղծագործությունները:

Ահա, օրինակ, Թումանյանի մասին հոդվածում հանճարեղ բանաստեղծը փաստում է. «Մենք եկել ու գնում ենք դեպի մեծ Ռուսաստանը, դեպի մեծ ռուս ժողովուրդը, մենք սիրեցինք ու հարգեցինք նրան... որովհետև նրա հետ ենք կապում մեր հույսը, մենք նրան ծառայում ենք բոլոր բնագավառներում... Ռուսաստանում մենք գտնվում ենք աշխարհի լավագույն ժողովուրդներից մեկի մեջ և ենթարկվում ենք լավագույն գրականություններից մեկի ազդեցությանը» (էջ 22-23):

Ռ. Բաղդասարյանը մեկնաբանում է այս տողերը՝ դրսևորելով նաև իր վերաբերմունքը այդ հարցի նկատմամբ. «Հասկանալի է, որ և՛ Թումանյանի ժամանակ, և՛ այժմ կային և կան մարդիկ, որոնք գտնում են, որ Ռուսաստանը հայերին հովանավորում էր միայն Կովկասում և, ամբողջությամբ վերցրած, Արևելքում իր ունեցած շահերի պատճառով: Որոշ ազգային գործիչների այդօրինակ ելույթներին մեծ բանաստեղծը պատասխանել է դեռևս 1912 թվականին. «Ավելի լավ, եթե հզոր Ռուսաստանի շահերը համընկնում են հայ ժողովրդի շահերի հետ: Հենց դա էլ հայ ժողովրդին ռուսական օգնության պատճառն է, նրա հետևողականության պատճառը: Ահա ինչու և ինչ կերպ եմ ես իմ հույսերը կապում Ռուսաստանի հետ»: Թումանյանն ազգի հեռանկարը հստակորեն առնչում էր Ռուսաստանին. «Մեր ապագան... կապված է Ռուսաստանին, և որքան Ռուսաստանն ազատ լինի, այնքան ավելի լավ կլինի ինչպես մեր, այնպես էլ ողջ աշխարհի համար» (էջ 23-24):

Անշուշտ, ընթերցողը հետաքրքրությամբ կկարդա նաև մեծն Իսահակյանին նվիրված հոդվածը, որտեղ կարևորվում են հայ պոեզիայի պատ-

րիարքի մտքերը հայ-ռուսական առնչությունների վերաբերյալ. «Երիտասարդ Ավետիքը 1894 թ. գրում էր, որ ռուսների հովանու ներքո հայերը կգարգանան և կկազմեն մի ամբողջություն... Նա երազում էր թափել իր արյունը հզոր Ռուսաստանի դրոշի ներքո և փրկել Հայաստանը կրակից, կոտորածներից, քաղցից: Իսահակյանը համոզված էր, որ պետք է քարոզել այդ ուղին և, հետևաբար, աջակցել հենց ռուսներին: Նրա գաղափարն էր Հայաստանի և Ռուսաստանի կամավոր ու բարեկամական միությունը՝ հանուն հարազատ ժողովրդի փրկության օսմանյան հազարամյա դաժան լծից: Իսահակյանը, իհարկե, ինչպես հայ գրականության մյուս նշանավոր գործիչները, քաջատեղյակ էր հսկայական տարբերությանը՝ բուն ռուս ժողովրդի, նրա առաջադեմ մտավորականության և ռուս ցարական վարչակազմի գաղութային, երբեմն հայատյաց, քաղաքականության միջև... Շատ լավ հասկանալով այդ ամենը, արդյունքում հայ բանաստեղծի սրտում հաղթանակ տարան «հոգևոր Ռուսաստանը», նրա առաջադեմ, հայամետ մտավորականությունը» (էջ 102):

Ռ. Բաղդասարյանի գրքում ըստ արժանվույն ներկայացվում են նաև Իլյա Էրենբուրգի կապերը Հայաստանի և հայ ժողովրդի հետ: Իր հիշողություններում XX դ. ականավոր ռուս գրողը, մասնավորապես, նշել է. «...Ես հասկացա, որ հայերի մեջ կրքոտությունն ու անմիջականությունը զուգորդվում են հոգեկան զսպվածության հետ»: Էրենբուրգը հիշեցնում է XX դարասկզբին հայերի ողբերգական ճակատագրի մասին՝ գալով այն եզրակացության, որ դա ցեղասպանության առաջին փորձն էր: «Հայերի զգացմունքները ինձ հասկանալի են: Իսկվել է Արևմտահայաստանը, ոչնչացվել են հնադարյան ճարտարապետության հրաշալի հուշարձանները: Ողջ մնացածները ցրվել են աշխարհով մեկ... Ամեն մի հայի համար Արարատը, որ կախված է Երևանի վրա, բզկտված Արևմտյան Հայաստանի ստվերն է... Հայերի հայրենասիրությունը սրված է, հաճախ այն կարող է թվալ չափազանցված, բայց ոչ ոք այն չի կարող շփոթել շովինիզմի հետ, որը ժխտում է ուրիշի մշակույթը, և ոչ ոք չի կարող այն համարել հետամնացություն: Թվում է՝ հայերի մեջ ես չեմ հանդիպել ինտերնացիոնալիզմի գաղափարներին խորթ մարդկանց... Հիշաչար չլինելով, նրանք ոչ մի կերպ չեն ուզում հրաժարվել հիշողությունից, դրա մեջ տեսնելով մարդու առանձնաշնորհը» (էջ 17-18):

Ժողովածուի մեջ առանձնակի հնչեղություն ունի «Բուլգակովը և հայերը» ծավալուն ակնարկը, քանզի Բաղդասարյանը, փաստորեն, առաջիններից մեկն է հայ ուսումնասիրողներից, որը Հայաստանի գրական շրջանակների և լայն հասարակության ուշադրությունն է հրավիրել նշանավոր ռուս գրողի և հայ մտավորականության ականավոր ներկայացուցիչների կապերի վրա: Հոդվածի հեղինակը գրում է. «Միխայիլ Բուլգակովի անունը նույնքան

հանրաժանոթ է Հայաստանում, որքան գրողի հայրենիքում... Մեզ համար ուշագրավ է այն հանգամանքը, որ գրողն ունեցել է ծանոթության բավական մտերիմ շրջանակ մեր հայրենակիցների հետ, ինչը քիչ է հայտնի ու կարող է ինչ-որ տեղ անգամ անսպասելի լինել հայ ընթերցողի համար: Իսկ նրանց մեջ կային արտասովոր մարդիկ, որ իրավամբ համարվում են հայ ժողովրդի փառքն ու հպարտությունը՝ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյան, դիրիժոր Ալեքսանդր Մելիկ-Փաշաև, դերասան և ռեժիսոր Ռուբեն Սիմոնով, նկարիչ Գեորգի Յակովով» (էջ 31):

Բուլգակովի հարուստ և բազմազան կյանքի «հայկական էջը» Ռ. Բաղդասարյանի ակնարկում, իրոք որ, հայտնություն եղավ հայաստանցի մտավորականների, լայն հասարակության համար...

«Չարենցը և Ռուսաստանը» հոդվածում ժողովածուի հեղինակը գրում է. «Չարենցի ամենասիրելի ռուս պոետներից է Պուշկինը: Հայ բանաստեղծն իր օրագրերում խոստովանում էր, որ չկա նրա համար ավելի մեծ հաճույք, քան կարդալ ռուս մեծ դասականի յուրաքանչյուր ստեղծագործությունը... Ռուս ժամանակակից գրողների և բանաստեղծների մեջ, որոնցից ոմանց նա գիտեր անձամբ, Չարենցը գնահատում էր Նիկոլայ Տիխոնովին, Վլադիմիր Մայակովսկուն, Բորիս Պաստերնակին, Իլյա Սելվինսկուն... Նա խոստովանում էր, որ ռուս բանաստեղծները հարստացրել են իր սեփական ստեղծագործությունները, լայնացրել իր մտահորիզոնը, երկերի թեմատիկան: Չարենցը բարձր էր գնահատում Մաքսիմ Գորկուն, որին համարում էր հանճար և գրականության աստղ, աշխարհի մեծագույն քաղաքացի, հայ ազգի բարեկամ» (էջ 66):


Բանասիրական գիտությունների դոկտոր Ռոբերտ Բաղդասարյանի հոդվածների նոր ժողովածուն արժևորվում է հայ-ռուսական կապերը և հարաբերությունները գնահատելու տեսանկյունից՝ մանավանդ մեր ժամանակի իրադարձությունների և իրողությունների պայմաններում: Գիրքը, նախատեսված լինելով բանասերների և մշակութաբանների համար, կարող է գրավել հումանիտար բուհերի ուսանողների և դասախոսների, հայ հասարակության ամենալայն շրջանակների ուշադրությունը:

ԱՆԱՀԻՏ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, «Կոմիտասը և իր ժառանգությունը», հ. Ե, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., Երևան, Բեռլին, Հալլե, 2020, պատասխանատու խմբ.՝ Տաթևիկ Շախկույան, 320 էջ:

Komitas museum-institute Yearbook, "Komitas and his legacy", volume V, Publication of Komitas Museum-Institute, Yerevan, Berlin, Halle 2020, articles edited by Tatevik Shakhkulyan, 320 p.



2019 թ. լրացավ հայ մեծանուն կոմպոզիտոր, երաժշտագետ, բանահավաք, խմբավար և երգիչ, հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի (1869-1935) 150-ամյակը: Այս առիթով Կոմիտասի թանգարան-ինստիտուտը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Բեռլինի Հումբոլդտի համալսարանի, Բեռլինի պետական գրադարանի և Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանի հետ համատեղ հոկտեմբերի 8-10-ը Գերմանիայում՝ Բեռլինի Հումբոլդտի և Հալլեի

Մարտին-Լյութեր համալսարաններում, կազմակերպեց «Կոմիտասը և իր ժառանգությունը» միջազգային գիտաժողովը: Վերջինիս մասնակցեցին 26 գիտնականներ վեց երկրներից (Հայաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ռուսաստան, Ուկրաինա), որոնց ներկայացրած թեմաների առանցքում ներառված էին ինչպես Կոմիտասի կյանքն ու ստեղծագործական ուղին, այնպես էլ վերջինիս ուսումնասիրության և գործունեության մաս կազմող մասնագիտական ոլորտներ (ժողովրդական և միջնադարյան երաժշտություն, կոմպոզիտորական արվեստ), Կոմիտաս-Գերմանիա փոխառնչություններ: Զեկուցումների մեծ մասն ամփոփվեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտի (ԿԹԻ) տարեգրքի՝ գիտաժողովի խորագիրը կրող հինգերորդ հատորում, որը հրա-

տարակվեց 2020 թ.: Ժողովածուի շնորհադեսը կայացավ 2021 թ. փետրվարի 19-ին, ԿԹԻ-ում:

«Կոմիտասը և իր ժառանգությունը» Ե տարեգիրքը հրատարակվել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Բեռլինի Հումբոլդտի համալսարանի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ համատեղ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ: Ինչպես տարեգրքի նախորդ չորս հատորների, այնպես էլ սույնի պատասխանատու խմբագիրը արվեստագիտության թեկնածու, ԿԹԻ գիտական բաժնի ղեկավար **Տաթևիկ Շախկույանն է** [ԿԹԻ, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա (ԵՊԿ)]: Խմբագրական խորհրդի կազմում են արվեստագիտության թեկնածու **Գայանե Ամիրադյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԿԹԻ), արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ), արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Աննա Արևշատյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԿԹԻ, ԵՊԿ), դոկտոր, պրոֆեսոր **Արմենուհի Դրոստ-Աբգարյանը** (Գերմանիա, Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութեր համալսարան), արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Լիլիթ Երնջակյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԵՊԿ), արվեստագիտության թեկնածու **Նիկոլայ Կոստանդյանը** (ԿԹԻ), **Նանե Միսակյանը** (ԿԹԻ), արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Մհեր Նավոյանը** (ԿԹԻ, ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԵՊԿ) և **Ջոզեֆ Պոհիկյանը** (ԱՄՆ, Նյու Յորքի համալսարան): Հատորը բաղկացած է 320 էջից: Գրքի ձևավորողը Գոհար Գրիգորյանն է: Հրատարակվել է «Հայկարյի» ՍՊԸ տպարանում:

Ժողովածուն բաղկացած է «Կոմիտաս. դերն ու նշանակությունը հայ մշակույթի պատմության մեջ (նախաբանի փոխարեն)» խորագրով հայերեն-անգլերեն առաջաբանից (հեղինակ՝ Մհեր Նավոյան) և չորս գլուխներից:

Հատորում ընդգրկված են 17 հեղինակների 15 հոդվածներ (երկու հոդված գրված է երկու մասնագետների համահեղինակությամբ), որոնցից երեքը հայերեն են, վեցը՝ անգլերեն և վեցը՝ գերմաներեն: Բոլոր հոդվածներն ունեն հայերեն և անգլերեն ամփոփումներ:

Հեղինակներից տասը ներկայացնում են Հայաստանի, յոթը՝ եվրոպական երկրների (Գերմանիա, Ռուսաստան, Ուկրաինա) առաջատար գիտական հաստատություններ: Հոդվածագիրները ոչ միայն երաժշտագետներ են, այլ նաև այլ ոլորտներում գործող մասնագետներ: Հոդվածներն ունեն ինչպես պատմական, այնպես էլ տեսական-վերլուծական ուղղվածություն:

Առաջին՝ «Կոմիտասը և իր ստեղծագործությունը» խորագրով գլխում ընդգրկված է 4 հոդված:

Պրոֆեսոր **Մհեր Նավոյանը** իր «The Conception of ‘National’ in Komitas’s perception» («Ազգայինի կոմիտասյան հայեցակարգը») հոդվածում անդրադառնում է Կոմիտասի ժառանգության մեջ ազգայինի գաղափարին, որը պայմանավորում է վերջինիս՝ որպես հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադրի տեղն ու դերը հայ երաժշտության պատմության մեջ: Այս համատեքստում հեղինակը Կոմիտասի ժառանգության մեջ առանձնացնում է ազգայինի՝ որպես ստեղծագործական և աշխարհայեցողական ելակետի հիմնավորման երկու առանցք՝ հայ և եվրոպական մշակութային միջավայրերը, որոնցից ամեն մեկն իր ուրույն ազդեցությունն է ունեցել Կոմիտասի կյանքի և գործունեության մեջ:

Փիլիսոփայության դոկտոր **Էլկե Հարումանի** (Գերմանիա, Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլիան համալսարան, Համբուրգի համալսարան) «Komitas und das Armenische Leben im Osmanischen Reich» («Կոմիտասը և հայերի կյանքը Օսմանյան կայսրության մեջ») հոդվածում Կոմիտասի կյանքն ու նրա թողած ստեղծագործական ժառանգությունը քննարկվում են ավանդականն ու ժամանակակիցը համադրող պատմափուլի համատեքստում (XVIII դարավերջից մինչև XX դարի սկիզբ): Լուսաբանվում է Կոմիտասի ընկալումը հայերի և այլազգիների կողմից, մեկնաբանվում են նրա ժառանգության տարբեր ոլորտները:

Ուշագրավ է պատմական գիտությունների թեկնածու **Արսեն Բորոխյանի** (<< ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ) «Կոմիտասի ստեղծագործության ենթաշերտային խորհրդաբանությունը և դրա թվագրության խնդիրը» հոդվածը, որում խոսվում է Կոմիտասի գրառած և ուսումնասիրած ժողովրդական երգերի տեքստերում առկա, հնագույն ծագում ունեցող խորհրդանիշների համակարգի մասին: Աստվածային, մարդկային, համայնական, բնության տարրերի և երևույթների, լանդշաֆտի, բուսական և կենդանական աշխարհի, մարդու ստեղծած առարկայական ոլորտներին պատկանող հայկական խորհրդանիշները հեղինակը «պեղում է» կոմիտասյան երգերից՝ փորձելով տեղավորել դրանց սկզբնավորումը պատմական որոշակի ժամանակաշրջանի մեջ, ինչպես նաև ցույց տալ համապատասխան երգային տեքստերի փոխակերպումները ժամանակի ընթացքում՝ պատմահնագիտական գործիքակազմի միջոցով:

Տարբեր երկրների գիտնականների մասնագիտական փոխառնչությունների առումով հատկանշական է դոկտոր **Թեքլա Քլուբիգի** (Գերմանիա, Սաքսոնական պետական արխիվ, Լայպցիգի պետական արխիվ) և արվեստագիտության թեկնածու **Լիլիթ Հարությունյանի** (Հայաստան, ԿԹԻ) համահեղինակությամբ գրված «Das Verlagsarchiv von Breitkopf und Härtel:

Dokumente für die Komitas-Forschung» («Breitkopf und Härtel հրատարակչության արխիվ. փաստաթղթեր Կոմիտաս ուսումնասիրելու համար») հոդվածը: Հեղինակները հոդվածին նախորդող համատեղ աշխատանքը կատարել են Լայպցիգի պետական արխիվում, Սաքսոնական արխիվների պարունակած՝ Breitkopf and Härtel հրատարակչության ծավալուն արխիվային նյութերի ուսումնասիրության հիման վրա, որտեղ հայտնաբերվել են Միջազգային երաժշտական ընկերության փաստաթղթերը (վերջինիս ղեկավարումը, որի անդամներից էր նաև Կոմիտասը, ստանձնել էր այս հրատարակչությունը) և որոշ նամակներ Կոմիտասի վերաբերյալ:

Տարեգրքի՝ «Կոմիտաս և Գերմանիա» խորագիրը կրող երկրորդ գլխում ընդգրկված չորս հոդվածներից մեկը դարձյալ համահեղինակությամբ է գրված: Պրոֆեսոր **Արմենուհի Դորստ-Աբգարյանի** (Գերմանիա, Հալլե-Վիտենբերգի Մարտին-Լյութեր համալսարան) և դոկտոր **Ռեգինա Ռանդոֆերի** (Գերմանիա, Հանովերի երաժշտության, դրամայի և հաղորդակցության համալսարան) «Komitas als Symbolfigur für die Deutsch-Armenischen Beziehungen» («Կոմիտասը՝ որպես առանցքային կերպար հայ-գերմանական հարաբերություններում») հոդվածում հեղինակները Կոմիտասին դիտարկում են որպես Հայոց ցեղասպանությանը նախորդող տասնամյակների հայ-գերմանական հարաբերությունների վառ խորհրդանիշ, ընդգծում բեռլինյան տարիների թողած ազդեցությունը ոչ միայն Կոմիտասի արվեստում, այլև նրա միջոցով՝ նաև հայ ազգային դասական երաժշտության մեջ:

Պրոֆեսոր **Թոմաս Բուխտլի** (Գերմանիա, Գերմանիայի կոմպոզիտորների միություն) «Komitas - der Europäer: Spuren europäischen Musikdenkens und Komponierens in ausgewählten Werken von Komitas» («Կոմիտասը՝ եվրոպացի. եվրոպական երաժշտական մտածողության և կոմպոզիցիոն արվեստի հետքերը Կոմիտասի որոշ երկերում») հոդվածում հեղինակն անդրադառնում է Կոմիտասի կողմից ստեղծված հայ ավանդական երաժշտության և եվրոպական երաժշտարվեստի առանձնահատկությունների համադրությանը՝ ընդգծելով, որ Կոմիտասի ստեղծագործությունը արժեք է ներկայացնում ոչ միայն հայ երաժշտության համատեքստում, այլև կարող է համարվել նվաճում՝ եվրոպական մշակույթի բազմազանության տեսանկյունից:

Տաթևիկ Շախկույանը «Komitas's Berlin Period of Creation» («Կոմիտասի բեռլինյան շրջանի ստեղծագործությունը») հոդվածում քննում է Կոմիտասի՝ Բեռլինում ուսանելու տարիներին (1896-1899) ստեղծված գործերը, որոնց թվում են գերմանացի անվանի բանաստեղծների տեքստերով գրված երգերն ու խմբերգերը, դաշնամուրային, կամերային գործեր, Կոմիտասից

պահպանված միակ նվագախմբային գործը և «Պատարագ»-ի՝ գերմաներեն թարգմանված տարբերակը:

Հելմուտ Պաուլ Զանդեքի (Գերմանիա, Ենայի Ֆրիդրիխ Շիլլեր համալսարան, Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութեր համալսարան) «Oskar Fleischer und Komitas» («Օսկար Ֆլայշերը և Կոմիտասը») հոդվածում լուսաբանվում է Կոմիտասի և Բեռլինի Ֆրիդրիխ Վիլհելմ (ներկայումս՝ Հումբոլդտի) համալսարանում նրան դասավանդած ականավոր երաժշտագետ, միջնադարյան երաժշտության, մասնավորապես՝ բյուզանդական նոտագրության խոշոր գիտակ Օսկար Ֆլայշերի մասնագիտական հետաքրքրությունների ընդհանրությունը: Կոմիտասը, որ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում արդեն իսկ գիտելիքներ էր ստացել հայկական միջնադարյան խազագրության մասին, Ֆլայշերի ղեկավարությամբ, հույս ուներ գտնել խազերի վերծանման բանալին: Այս խնդրի վրա Կոմիտասը աշխատեց նաև ուսմանը հաջորդող տարիներին:

«Կոմիտաս և միջնադարյան երաժշտություն» խորագիրը կրող երրորդ գլխում գետեղված է երեք հոդված:

Գայանե Ամիրադյանի «Über das Prinzip von Komitas' Methode der Analyse der Modi (basierend auf dem Beispiel der Etschmiadsiner und Neu-Dschulfaer Gesänge der armenischen geistlichen Musik)» [(«Ձայնեղանակի վերլուծության Կոմիտասի մեթոդի մեկ դրույթի մասին (Հայ հոգևոր երգարվեստի Էջմիածնական և Նոր Զուղայի երգվածքների օրինակով)»)] և **Նանե Միսակյանի** «Հայոց ԲՁ եղանակը և Dies irae միջնադարյան սեկվենցիան» հոդվածները տեսական-վերլուծական բնույթ ունեն: Գ. Ամիրադյանը անդրադառնում է հայ հոգևոր երաժշտության Ութնայն համակարգի վերլուծության կոմիտասյան մեթոդաբանության դրույթներից մեկին՝ ինտերվալային թոփշներին՝ դրանց դրսևորումները համեմատելով Էջմիածնի և Նոր Զուղայի երգվածքների շարականներում: Հեղինակի կարծիքով, ինտերվալային թոփշների դիտարկումը մեծապես նպաստում է ձայնեղանակի՝ առավել որոշարկված և լիարժեք տեսական բնութագրմանը: Ն. Միսակյանը, համակողմանի քննության առնելով հայ հոգևոր երգարվեստի Արմաշական ավանդույթի (Պոլսական երգվածքի առանձին ենթաճյուղի) ԲՁ ձայնեղանակի շարականները, ուշագրավ ինտոնացիոն աղբյուրներ է բացահայտում վերջիններիս և Dies Irae միջնադարյան սեկվենցիայի միջև:

Պրոֆեսոր **Աննա Արևշատյանի** «The art and the Books of *Manrusum* in the Light of Komitas's studies» («Մանրուսման գրքերը և արվեստը Կոմիտասի ուսումնասիրությունների լույսի ներքո») հոդվածը նվիրված է XI դ. վերջից ի հայտ եկող երգչական ժողովածուի նոր տեսակին՝ Մանրուսման գրքերին,

որոնք ամփոփում էին հայ հոգևոր երգարվեստի առավել բարդ մեղեդիական նկարագիր ունեցող՝ զարդուրդուն երգաոճի նմուշները և դրանց վերաբերող տեսական ուսմունքը: Հեղինակը հանգամանորեն քննության է ենթարկում կոմիտասյան տեսական դիտարկումները Մանրուսման արվեստի և Մանրուսման գրքերի վերաբերյալ:

Տարեգրքի եզրափակիչ՝ «Կոմիտաս և ժողովրդական երաժշտություն» խորագրով ներառված է չորս հոդված:

Արվեստագիտության թեկնածու, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր **Ալինա Փահլևանյանը** (ԵՊԿ) «Komitas and the problems of Armenian music folkloristics» («Կոմիտասը և հայ երաժշտական ֆոլկլորագիտության հիմնախնդիրները») հոդվածում քննության է ենթարկում Կոմիտասի առաջադրած մի շարք ֆոլկլորագիտական խնդիրներ, որոնք վերաբերում են, մասնավորապես, հայ ավանդական երաժշտության բանավոր էությանը, երաժշտության մեջ նոտագրության դերին, տարբեր տարածաշրջաններին հատուկ երաժշտական բարբառների բացահայտմանը, բանահավաքչության մեջ երգի ստացիոնար գրառման մոտեցմանն ու այլ հարցերին: Հեղինակը փաստում է, որ Կոմիտասը գերազանցել է իր ժամանակը, ինչպես նաև նոր ուղիներ առաջադրել ֆոլկլորագիտության հետագա զարգացման համար:

Պրոֆեսոր **Լիլիթ Երնջակյանը** «Multilingualism and Identity in the Armenian Bard Tradition in Light of Komitas's Perceptions» («Բազմալեզվությունը և ինքնությունը հայ աշուղական ավանդույթում Կոմիտասի դրույթների լույսի ներքո») հոդվածում լուսաբանում է հայ աշուղների բազմալեզու ստեղծագործությունները ժամանակակից էթնոերաժշտագիտության մեջ կիրառվող ինքնության դրույթի բազմակողմանի մեկնությունների տեսանկյունից:

Արվեստագիտության թեկնածու **Նունե Աթանասյանը** (ԵՊԿ) «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ձևավորման ակունքները. Կոմիտաս Վարդապետ, Սահակ Ամատունի, Արշակ Բրուտյան» հոդվածում անդրադառնում է ֆոլկլորագիտության ոլորտում ժողովրդական երգերի հավաքման, ուսումնասիրման և մշակման աշխատանքներին՝ որպես առանցք նկատի ունենալով Կոմիտասի, ինչպես նաև նրա ավագ ժամանակակիցների՝ Ս. Ամատունու և Ա. Բրուտյանի ծավալած գործունեությունը:

Ազգային-մշակութային-աշխարհագրական առումով, այս գլխի մյուս՝ հայալեզու և հայ ժողովրդական երաժշտությանն առջնվող հոդվածներից կտրուկ տարբերվում է ժողովածուի վերջին հոդվածը: Արվեստագիտության թեկնածու **Տատյանա Կապլունի** (Ուկրաինա, Օդեսայի Նեժդանովայի անվան երաժշտական ակադեմիա) «The Archetype of the Maiden Warrior in Eastern

Slavic and German musical Traditions» («Կույս-ռազմիկների արքետիպը արևելասլավոնական և գերմանական երաժշտական ավանդույթներում») հոդվածում դիտարկվում են կանացի նախասկզբի հնագույն դիցաբանական մարմնավորումը հանդիսացող Մեծ աստվածուհու կերպարի դրսևորումները արևելասլավոնական (Մակոշ, Լադա, Լեյլա, Մարա աստվածուհիներ, *պայլանիցա* կոչվող դիցուհիներ, հերոսուհի-ռազմիկներ...) և գերմանական (Բրյունհիլդե) ավանդույթներում: Հեղինակն անդրադառնում է նաև այդ կերպարների արտացոլմանը XIX դ. երկրորդ կեսի և XX դ. առաջին քառորդի կոմպոզիտորական արվեստում:

Գրքում տեղ գտած հոդվածները ուղեկցվում են լուսանկարների, տարբնույթ փաստաթղթերի պատճենների և նոտային օրինակների նմուշներով: Ժողովածուն հասցեագրված է երաժշտագետներին, արվեստաբաններին, մշակութաբաններին, ֆոլկլորագետներին, միջնադարագետներին և առհասարակ հայ երաժշտությամբ հետաքրքրվող անձանց:

Որպես ամփոփում՝ նշենք, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը տարեգրքի այս և մյուս հատորներով խթանում է կոմիտասագիտության և Կոմիտասի ուսումնասիրության առանցքում գտնվող ոլորտների (ֆոլկլորագիտություն, միջնադարագիտություն, կոմպոզիտորական արվեստ) ուսումնասիրությունը: Իսկ տարեգրքի միջազգային լինելը նպաստում է գիտական մտքի, ինչպես նաև Կոմիտասի, նրա թողած ժառանգության և, առհասարակ, հայ երաժշտության հանրահռչակմանը նաև Հայաստանից դուրս՝ հնարավորություն տալով արտերկրի մասնագետներին ևս հաղորդակից լինելու կոմիտասյան և լայն իմաստով՝ հայ երաժշտության հետ:

ԱՍՏԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԴՐՎԱԳՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեր մշակույթի անբաժանելի մասն է կազմում մետաղի մշակումը: Այն կատարվել է մեր պատմության ողջ ընթացքում: Մետաղից պատրաստվել են կենցաղային իրեր, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, զարդեր, ինչպես նաև պաշտամունքի առարկաներ:

Մեր ուսումնասիրության առարկան Խորհրդային Հայաստանում արտադրված մետաղե դրոշմաքանդակներն են (դրվագում, чеканка, штамповка), որոնք ունեն գեղարվեստապատմական արժեք, արտացոլում են արդեն անցած դարաշրջանը և, մեր կարծիքով, դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Այս ամենը դարձավ ոգեշնչման աղբյուր՝ ստեղծելու հավաքածու և կասեցնելու արվեստի հազվագյուտ առարկաները զբոսաշրջիկների կողմից երկրից դուրս հանելու գործընթացը: Հավաքածուն կազմել ենք տարիների ընթացքում, մեր անձնական միջոցներով: Աշխատանքները գնել ենք հնաոճ իրերի առևտրով զբաղվող մարդկանցից, շուկաներից, դրվագագործ վարպետների մտերիմներից: Հավաքածուն այժմ պահվում է Հայաստանի մետաղարվեստի կենտրոն-թանգարանում, որտեղ կատարում են առարկաները վերականգնելու աշխատանքներ, ապահովում պատշաճ խնամք: Այն ներառում է Խորհրդային Հայաստանում 1960-1991 թթ. արտադրված արդյունաբերական և ձեռագործ ավելի քան 150 նմուշ: Կարծում ենք՝ ավելի վաղ պատրաստված դրվագումները հուշանվեր համարելը սխալ է, քանի որ հուշանվերների առաջին գործարանները բացվել են 1970-ականներին: Այսպես, 1975 թ. Խորհրդային Հայաստանի Տեղական արդյունաբերության նախարարության հրամանով, Երևանի հուշանվերների գործարանի և Ազգային գեղարվեստական արհեստների կոմբինատի հիմքի վրա ստեղծվել է «Հայկական հուշանվերներ և ազգային-գեղարվեստական արհեստներ» արտադրական միավորումը, որը 1985 թ. վերանվանվել է «Ուրարտու» արտադրական միավորում¹:

Հիմնականում հենց այս արտադրական միավորման ստեղծագործություններն են կազմում մեր հավաքածուն: Դրանք առանձնանում են գեղարվեստական բարձր կատարումով, քանի որ արտադրվել են Խորհրդային Հա-

¹ Հայաստանի ազգային արխիվ: Հիմնադրամ՝ N 1119/2. 1976-1985:

յաստանի նկարիչների միության անդամների էքսիզներով: Շատ էքսիզներ արել են Հայաստանի գեղարվեստական հիմնադրամի և կոմբինատի գլխավոր նկարիչներ Ռուբեն Առուսյանը, Էդուարդ Ղարսյանը, Հակոբ Փիլիպոսյանը, Ռուբեն Շահվերդյանը, Ռուբեն Ղևոնդյանը, Իոսիֆ Բաբայանը և այլք: Թողարկված ապրանքը անցել է նաև, այսպես կոչված, ՏՀԲ-ի (տեխնիկական հսկողության բաժին) փուլերով: Վերջինս սահմանված պահանջներին ապրանքի համապատասխանության նկատմամբ իրականացրել է անկախ հսկողություն և սպառողի համար երաշխավորել է այդ համապատասխանությունը: Յուրաքանչյուր արտադրանք ունի պիտակ, որի վրա առկա են ապրանքի նկարագրությունը և տվյալներ արտադրողի մասին:

Մեր հավաքածուի ցուցանմուշների մեջ կան նաև այնպիսի առարկաներ, որոնցում նկատվում է գեղարվեստական առումով ոչ այնքան արհեստավարժ աշխատանք, սակայն, դրանով հանդերձ, չի նվազում դրանց պատմագեղարվեստական արժեքը: Նշենք, որ ժողովրդի մեջ գործարանային դրոշմաքանդակները սխալմամբ ընդունում են որպես ձեռագործ դրվագումներ: Պատճառն այն է, որ դրվագումների վրա նկատվում են ձեռքի մշակման հետքեր, սակայն դրանք պատրաստում են, անշուշտ, գործարանային պայմաններում, բարձր ճնշման տակ արված դրոշմների օգնությամբ: Այս արտադրությունը կարելի է համարել տիրաժ, որը ներառում է մեծաթիվ և հազվագյուտ գործեր: Գործարանային դրոշմները պատրաստվել են արհեստավարժ փորագրող վարպետների կողմից՝ նկարիչների էքսիզներով:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թեպետ մետաղե արտադրանքում արտացոլվում էր մոդեռնիզմի ոճը, սակայն այն միաժամանակ ներառում էր հայ դարավոր արվեստի հիմնական մոտիվները: Դա հանգեցրել է յուրօրինակ մի ոճի առաջացման, որը կրում է պատմական հիշողությունը: Դրվագումներով հիմնականում արտացոլված էին հայ էթնոսին և առասպելներին առնչվող, ինչպես նաև ռազմապատմական, ռոմանտիկ-սիրային, գյուղատնտեսական, կենցաղային թեմաներ, ճարտարապետական հուշարձաններին վերաբերող պատկերներ: Այդ ժամանակների ամենասիրված կերպարը Թամար թագուհին էր՝ «Ախթամար» առասպելից: Տասնյակ գեղեցիկ աշխատանքներ են նվիրվել այս թեմային: Հաճախակի պատկերվող կերպարներից էին Վարդան Մամիկոնյանը, Անդրանիկ Օզանյանը, Շամիրամ թագուհին, Մեսրոպ Մաշտոցը, Կոմիտասը: Կժերով ու մրգերով դրվագված՝ աղջիկների, նաև կենդանիների պատկերները նույնպես քիչ չէին այդ աշխատանքների մեջ: Գործերի մեծ մասը աչքի է ընկնում վարպետորեն փորագրված նախշերով՝ դրանք առատորեն զարդարող բույսերի մոտիվներով:

Այդ նախշերը ունեն բազմաթիվ լուծումներ, որոնք երևան են հանում նկարչի հարուստ երևակայությունը: Աշխատանքները հիմնականում կատարվել են այդ ժամանակաշրջանում տարածված ար-նուվո, ար-դեկո՝ սոցիալիստական ռեալիզմին բնորոշ ոճերով:



Նկ. 1 Ախթամար. կատարված է դրվագման եղանակով



Նկ. 2 Անի. կատարված է ձուլման եղանակով



Նկ. 3 Դվին. կատարված է գալվանոպլաստիկայի եղանակով

Պղնձով երեսպատված ալյումինե ձուլվածքների վրա արտացոլված թեմաները հիմնականում պատկերում են Հայաստանի ճարտարապետական հուշարձանները և հեղինակային կատարմամբ հին հերալդիկ խորհրդանշանները: Առանձնապես հետաքրքիր են այն աշխատանքները, որոնք կատարվել են գործարանային պայմաններում՝ գալվանոպլաստիկայի միջոցով: Գալվանոպլաստիկան էլեկտրաքիմիական գործընթաց է, որը թույլ է տալիս ցանկացած առարկայի մակերեսին, որի ձևը ցանկանում են կրկնել, առաջացնել մետաղի (պղնձի, նիկելի, արծաթի և այլնի) շերտ և, այն առանձնացնելով նմուշից, ստանալ դրա ճշգրիտ պատճենը:

Խորհրդային տարիներին Հայաստանում կար գալվանոպլաստիկայի գործարան, որտեղ արտադրվում էին վերը հիշատակված հուշանվերային ապրանքները: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո գործարանը դադարեցրեց իր գոյությունը: Գործարանի հուշանվերային ապրանքների մեծ մասը պահպանվել է: Դրանք ներկայացված են մեր հավաքածուում:

Մետաղի գեղարվեստական դրվագման արտադրությունը, մեր կարծիքով, այսօր ավելի զարգացած է հարևան երկրներում: Կարևոր է գեղարվեստական դրվագման վերածնունդը Հայաստանում՝ դեկորատիվ կիրառական մշակույթի հարուստ ժառանգությունը պահպանելու համար: Աճող սերնդի համար կազմակերպվող կրթական ծրագրերը, ցուցահանդեսները, վարպետաց դասերը կարող են նպաստել նոր վարպետների դաստիարակմանը, որոնց համար մետաղի գեղարվեստական դրվագումը կարող է դառնալ կյանքի գործ:

Այսօր, մեր կարծիքով, մետաղի գեղարվեստական դրվագումը պետք է դասավանդվի արհեստագործական ուսումնարաններում և արվեստի մասնավոր դպրոցներում՝ փայտի փորագրությանը, քանդակագործությանը, կերամիկային հավասար: Կարծում ենք՝ այն պիտի դառնա նաև դիպլոմային աշխատանքների և ատենախոսությունների պաշտպանության թեմա: Մետաղի գեղարվեստական մշակման կորսված հայկական ժառանգությունը պահպանելը և հաջորդ սերնդին փոխանցելը ոչ միայն մեր կենտրոնի, այլ նաև պետության խնդիրն է:

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՏԱՂԱՆԴԱՇԱՏ ՀԱՅ ԹԱՏԵՐԱԳԵՏԸ (Հենրիկ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)



Հենրիկ Հովհաննիսյանի թատերագիտական ուսումնասիրությունների շրջանակն այնքան լայն է և բազմաբովանդակ, որ հնարավոր չէ մեկ հաղորդման շրջանակում ամբողջությամբ՝ ըստ արժանվույն ներկայացնել: Ահա թե ինչու կանդիդատնամ միայն նրա հետազոտությունների շարքից ամենախորհրդանշական՝ **«Թատրոնը միջնադարյան Հայաստանում»** աշխատությանը (Երևան, 1978), որով հայրենական թատերագիտության մեջ առաջին անգամ պատմատեսական քննության շնորհիվ ամբողջացան և համակարգվեցին տվյալ ժամանակաշրջանում ձևավորված հայ թատերական արվեստի հիմնորոշ առանձնահատկություններն ու սահմանումները: Այս հիմնարար հետազոտությանը նախորդել էին նրա «Մարտիրոս Մնակյան» (1969), «Բեմական խոսքի պոետիկան» (1973), իսկ հաջորդել՝ «Թատրոն. հին և նոր արժեքներ» (1986), «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը» (1990), «Հայ թատրոնի պատմություն. 19-րդ դար» (1996), «Դերասանի արվեստի բնույթը. էսթետիկական քննություն» (2002), «Միջնադարյան բեմ. թատրոն-եկեղեցի հարաբերությունը և հայ հոգևոր դրաման» (2004), «Թատրոն և թատերախոսություն (ժող.)» (2004), «Հայ թատրոնի պատմություն. 19-րդ դար (երկրորդ բարեփոխված հրատ.)» (2010), «Հնագույն դրա-

ման Հայաստանում» (2010), «Ստանիսլավսկու «սիստեմը» և խաղի պարադոքսը» (2012) աշխատությունները, ինչպես նաև թատերագիտական բազմաթիվ հոդվածներ:

Եվ այսպես, դիմենք **«Թատրոնը միջնադարյան Հայաստանում»** աշխատության հիմնական դրույթներին, որոնք այսօր էլ չափազանց ուսանելի են միջնադարյան թատրոնով զբաղվողների կամ պարզապես հետաքրքրվողների համար:

Շատ կարևոր է, որ հենց սկզբից՝ ներածության մեջ, հեղինակը հստակեցրել է **միջնադարյան թատերակարգ, թատերայնություն և թատրոն** հասկացությունները, քանի որ նախապես անհրաժեշտ էր որոշել առարկայի առանձնահատկությունը, գեղարվեստական բնույթը, որը մինչ այդ նախորդ հետազոտողներն աչքաթող էին արել՝ կառուցելով իրենց դատողությունները գլխավորապես պատմաբանասիրական և պատմաագագրական հենքի վրա: Մինչդեռ, ինչպես հիմնավորել է Հ. Հովհաննիսյանը, հայ միջնադարյան թատրոնի հենց ինքնատիպության բացահայտումով է մտահայեցողաբար տեսանելի դառնում վաղուց անհետացած երևույթի իրական պատկերը:

Չխախտելով ժամանակագրական կարգը՝ աշխատությունում պատմատեսական քննության եղանակով Հ. Հովհաննիսյանն իմաստավորել է հայկական միջնադարում թատրոնի էսթետիկական ստորոգություններն ու դրանց աշխարհայացքային հիմքը՝ իբրև հնագույն թատերական արվեստի կառուցած: Ըստ այդմ՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ հայ միջնադարյան թատրոնն առաջացել է ավելի վաղ՝ ձևավորվել դեռևս բանահյուսական-խաղային ավանդույթների միջավայրում: Իսկ հեղինակի այն դրույթը, որ թատրոնը թե՛ Արևմտյան Եվրոպայում և թե՛ Առաջավոր Ասիայում հանդիսացել է միջնադարյան քաղաքային կյանքի խորհրդանիշ, հիմնորոշ նշանակություն ունեցավ նաև հետագայում այս բնագավառում կատարված ուսումնասիրությունների համար:

Ձևավորվելով ուշ հելլենիստական թատերական ավանդույթների և առաջավորասիական խաղային-վիպերգային բանահյուսության կիզակետում՝ վաղ միջնադարյան հայ իրականության մեջ ավելի կենսունակ գտնվեց բանահյուսական գիծը, ուստի անտիկ ավանդույթներն այստեղ առանձնապես էական հետք չթողեցին: Խզելով կապը գրականության հետ՝ թատրոնն ըստ էության շարունակել է զարգանալ իր նախասկզբնական հիմքերի վրա: Ասել է թե՛ մինչև արևմտաեվրոպական աշխարհում ձևավորվելը միջնադարյան թատրոնն ուրույն ճանապարհ է անցել Սիրիայում, Կապադովկիա-

յում, Բյուզանդիայում և Հայաստանում (IV-IX դդ.): Սա ևս աշխատության հիմնարար դրույթներից է:

Հաջորդ նշանակալի քայլը հայ միջնադարյան թատրոնին հատուկ բարոյագեղագիտական չափանիշների հստակեցումն էր՝ ըստ Ափթնիոսի «Գիրք պիտոյից» և Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունների մեկնության: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է **«ողբերգություն»** և **«կատակերգություն»** եզրերի հայ միջնադարյան քերականների սահմանումներին, որոնք սկզբունքորեն տարբերվում են արիստոտելյան ըմբռնումից, հատկապես գրական արվեստի ալեքսանդրյան տեսությունից: Պատճառն այն է, որ դարերի ընթացքում անտիկ թատրոնի առարկայական նկարագիրն իսպառ մոռացվել էր, հետևաբար նախկին հասկացություններին համարժեք նշանակությանը եկան փոխարինելու հայ միջնադարյան իրականության մեջ ծնված բանահյուսական ժանրային հորինվածքները:

Անդրադառնալով Մովսես Խորենացու հիշատակած **«երգ ցցոց և պարուց»** բառակապակցությանը, որի ստուգաբանությամբ մինչ այդ բազմիցս էին հանդես եկել հայ գրականագետները, Հ. Հովհաննիսյանն առաջարկել է բոլորովին նոր բացատրություն. ըստ այդմ՝ Խորենացու «Հայոց պատմություն» երկում հիշատակված է հնագույն պարերգային դրամայի անվանումը: Այստեղից էլ հետևում է, որ հայկական միջավայրում թատերական այս երևույթն արդեն իսկ վերաճել էր իր նախնական սաղմնային վիճակից՝ կրոնապաշտամունքային արարողակարգից, ճիշտ այնպես, ինչպես այն դիտարկվում է հին հունական աշխարհում, բայց և դեռևս չէր հասել գրական մշակման աստիճանի:

Դրա փոխարեն՝ պարերգային դրաման հանդիսացավ այն պարարտ հոդը, որի վրա էլ ձևավորվել է դրամատիկական բանահյուսությունը: Հիմքում **«այծերգության»** հնագույն կրոնաաշխարհայացքային պայմանաձևն էր: Այս հայեցակետից հունական ողբերգության խորհրդանիշը համարվող այծը իր փոքրասիական ծագումով պատկերանում է առեղծվածային շղարշի մեջ: Այդուհանդերձ, խնդիրը որոշակիորեն պարզեցվում է հնագիտական և ազգագրական աղբյուրների հիման վրա, որոնց համաձայն, միջնադարյան Հայաստանում երկար ժամանակ պահպանվել է **«այծից պատարագի»** սովորույթը: Ընդ որում, ևս մի կարևոր շտրիխ. բազմաթիվ հայկական գրույցներում, հեքիաթներում և առակներում այծը հանդես է գալիս իբրև հակադրության և կոնֆլիկտի խորհրդանիշ:

Դրամատիզմով են հագեցած նաև հնագույն և վաղ միջնադարյան վիպերգային բանահյուսության շարքերը: Ուսումնասիրությունը հավաստում

է, որ հին պատմիչների տեքստում արտացոլվել են վաղեմի ժողովրդական դրամայի արձագանքները: Սա ոչ միայն Հ. Հովհաննիսյանի տեսական պրպտումների հետևությունն է, այլև նույնը հաստատում են նաև միջնադարյան հեղինակները, մասնավորապես՝ Գրիգոր Մագիստրոսի վկայությամբ, հայկական առասպելապատումները ավանդաբար խաղարկվել են **«ի հրապարակս գռեհից և քաղաքաց»**: Պատահական չէ, որ ժողովրդական դրամայի հետքերը ցայտուն արտահայտվել են «Սասունցի Դավիթ» էպոսում, որոնք չեն համապատասխանում էպիկական պոեզիայի հեգելյան տեսության չափանիշներին: Հնագույն պարերգային դրամայի ավանդման ձևերն անուղղակի պահպանվել են անգամ երկխոսությամբ պատմվող զրույցներում՝ հասնելով մինչև նոր ժամանակներ:

Հայկական միջնադարում մեծ ժողովրդականություն էր վայելում հնագույն միմոսների և կատակաբան գուսանների պրոֆեսիոնալ արվեստը: Հանդես գալով զանազան խաղահարթակներում՝ բացօթյա հրապարակներից մինչև իշխանական խնջույքներն ու իջևանատները, իրենց անզուսպ ծիծաղով, երգիծանքով և զգայացունց տեսարաններով նրանք քաղաքային կյանքի անբաժան մասն էին: Հ. Հովհաննիսյանն այստեղ արձանագրել է երեք հիմնական տիպար-դիմակ՝ **կիսամերկ կնոջ-հերոսուհու** (վարձակ), **հրաշագործ տղամարդ-հերոսի** (գուսան, աճաբարար, լարախաղաց) և **ծաղրածու-հտպիտի** (խեղկատակ), որոնք աշխարհիկ հանդիսանքների գլխավոր դերակատարներն էին:

Այդ հնագույն թատրոնի հետքերը պահպանվել են հայ ժողովրդական խաղերում ընդհուպ XIX դարավերջ և XX դարասկզբ: Այդ են վկայում նույնիսկ նորագույն ժամանակներում գրի առնված **փահլևան-լարախաղացի** և նրա **ծառա-ծաղրածուի** միջև ծավալվող երկխոսությունները: Չափազանց ուշագրավ է Հ. Հովհաննիսյանի մեկնությունը նրանց փոխհարաբերության մասին, որի համաձայն, առաջինը խորհրդանշում է վերևում կանգնած և փորձության միջով անցնող ողբերգակի տիպարը, մյուսը՝ կատակերգակի, որն ապահով կանգնել է ներքևում և ծաղրում է կյանքը վտանգող հերոսին: Սա խորհրդանշում է Երկինքն ու Երկիրը, իդեալականն ու նյութականը, որոնք հետագայում, արդեն ոչ առաջավորասիական հողում ենթարկվեցին սուբլիմացիայի՝ վերածելով ավելի բարդ կերպարների, ինչպիսիք են Դոն Կիխոտն ու Սանչոն, Լիրն ու Հուպիտրը, Դոն Ժուանն ու Սգանարելը, Նեսչաստլիվցևն ու Սչաստլիվցևը:

Այդպիսով, հիրավի կարող ենք արձանագրել, որ Հենրիկ Հովհաննիսյանի **«Թատրոնը միջնադարյան Հայաստանում»** (Երևան, 1978) աշ-

խատությամբ հայրենական թատերագիտությունը կանգնեց միանգամայն նոր աստիճանի:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նա այն սակավաթիվ գիտնականներից է, որը խոշոր ներդրում ունի ոչ միայն իր մասնագիտական՝ թատերագիտության բնագավառում, այլև մեծաթիվ աշխատություններով բացահայտել է ընդհանրապես արդի հայ արվեստագիտության բովանդակ էությունը և ճանապարհի հարթել հետագա հետազոտությունների համար:

Այսօր Հենրիկ Հովհաննիսյանը բոլորել է իր կյանքի 85 տարին՝ անցնելով ձիգ ու երանելի ճանապարհ, որի բազմանշանակ խորհուրդն ամեն անգամ մի նոր խորությամբ է իմաստավորվում նրա աշխատություններում: Ցանկանանք քաջառողջություն և երկար տարիների ստեղծագործական կյանք:

ԳՐԻԳՈՐ ՕՐԴՈՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ. ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՄՈՒՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ**



Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Վլադիմիրի Աղասյանի ծննդյան 65-ամյա հոբելյանը:

Ա. Աղասյանը ծնվել է 1956 թ. օգոստոսի 11-ին ՀԽՍՀ Սիսիան քաղաքում, ԽՍՀՄ պետական բանկի հայկական գրասենյակի կառավարիչ, ՀԽՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, ՀԽՍՀ մինիստր, ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու Վլադիմիր Աղասյանի և մանկավարժ, անգլերեն լեզվի ուսուցչուհի Մարգարիտա Ասոյանի ընտանիքում: 1960-ին Ա. Աղասյանը ծնողների հետ տեղափոխվել է Երևան, 1973-ին ավարտել Երևանի № 122 միջնակարգ դպրոցը և ընդունվել Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան: 1978-ին ավարտելով համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժինը և ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում՝ իր գիտելիքները հայրենի արվեստաբանությանը ծառայեցնելու նպատակով Ա. Աղասյանը վերադառնում է հայրենիք և օգոստոսի 1-ին աշխատանքի անց-

նում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Հենց այս գիտական օջախում էլ անցնելու էր երիտասարդ արվեստաբանի գիտաստեղծագործական ու գիտակազմակերպչական հետագա ողջ կյանքը:

1989-ին, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում Ա. Աղասյանը ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Դմիտրի Սարաբյանովի գիտական ղեկավարությամբ պաշտպանել է «Մարտիրոս Սարյանի ստեղծագործական մեթոդի ձևավորումը» թեմայով ատենախոսություն և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2007-ի մարտին Երևանում՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» թեմայով դոկտորական ատենախոսությունը, ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականի նոյեմբերին Ա. Աղասյանին շնորհվել է «Արվեստագիտություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: 2005-ին Ա. Աղասյանը որակավորվել է որպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իսկ 2010-ին, 2015-ին, 2016-ին և 2021-ին՝ գլխավոր գիտաշխատող:

2009-ին Ա. Աղասյանն ընտրվել է Սանկտ Պետերբուրգի՝ Պետրոս Մեծի անունը կրող Գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ: Նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ է (2007-ից), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ (2011):

2014-ի դեկտեմբերին Ա. Աղասյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Այսօր պրոֆեսոր Ա. Աղասյանը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմության լավագույն գիտակն է, որի արվեստագիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը XIX-XX դարերի հայ կերպարվեստի ու գեղարվեստական մտքի պատմությունն է: Նա հեղինակ է մասնագիտական բարձր մակարդակով և հարուստ փաստական նյութեր պարունակող 22 գրքերի ու մենագրությունների, շուրջ 180 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, որոնք ընդգրկվել են Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, ԱՄՆ-ում, ԳՖՀ-ում, Հունգարիայում, Լիբանանում, Լեհաստանում լույս տեսած գիտական ժողովածուներում, կերպարվեստին նվիրված հանրագիտարաններում և պարբերականներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային, միութենական և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում:

Ա. Աղասյանն առաջինն է ուսումնասիրել և հայերենով շարադրել **նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմությունը:**

Արվեստաբանի երկարամյա հետազոտությունների ու պրպտումների հանրագումարը դարձավ ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով պետական

պատվերի շրջանակում հրատարակված՝ գեղարվեստական, պատմամշակութային և փաստագրական մեծածավալ նյութ պարունակող «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնարար ուսումնասիրությունը¹, որտեղ առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվեց հայ կերպարվեստի պատմական ուղին՝ սկսած Ռուսաստանի կազմում 1801-1828 թթ. Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց մինչև մեր օրերը: Երևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի պետական և մասնավոր թանգարաններում ու արխիվներում պահվող ստեղծագործությունների, ցուցահանդեսային կատալոգների, ձեռագրերի ու վավերագրերի, հին ու նոր գեղարվեստական մամուլի, հայ արվեստագետների գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրության շնորհիվ Ա. Աղայանը կատարել է փաստական բազմաթիվ ճշտումներ, զուգահեռներ անցկացրել XIX դ. կեսերի արևելահայ և արևմտահայ կերպարվեստին բնորոշ միտումների, գեղարվեստական համանման ու յուրահատուկ երևույթների միջև, լայնորեն ներկայացրել ու նորոպի մեկնաբանել խորհրդահայ կերպարվեստը, ընդհանուր գծերով բնութագրել Հայաստանի Հանրապետության գեղարվեստական կյանքում 1991-ից հետո կատարված տեղաշարժերը, դրանց դրական ու բացասական հետևանքները: Հայաստանում և սփյուռքում լայն արձագանք գտած աշխատության մեջ, որը «ազգային նոր և նորագույն կերպարվեստի ամբողջական պատմությունը հայերեն շարադրելու անդրանիկ փորձն է»² և էապես խորացնում է հայ կերպարվեստի մասին մեր պատկերացումները, հեղինակը նյութը դիտարկել և լուսաբանել է տարբեր կողմերից, պատմամշակութային լայն համատեքստում, մոռացությունից հանել բազմաթիվ դեմքեր ու ստեղծագործություններ, բացահայտել և մատնանշել XIX-XX դդ. հայ կերպարվեստին առավել բնորոշ, ուրույն գծերը: Մեթոդաբանական ամուր հիմքերի վրա խարսխված, կերպարվեստի բոլոր հիմնական տեսակներն ընդգրկող ու համապարփակ բնույթ ունեցող այս աշխատությունը տալիս է մեր կերպարվեստի պատմության նոր և նորագույն փուլերի օբյեկտիվ պատկերը՝ բացահայտելով XIX-XX դդ. հայ նկարչության և քանդակագործության ազգային առանձնահատկությունները: Իսկ գիտական շրջանառության մեջ դրված հայերեն մասնագիտական մի շարք եզրույթներ և հասկացություններ հարստացնում են արվեստաբանության ասպարեզում գործածվող բառապաշարը: Ինչպես նկատել է ՀՀ ԳԱԱ թղթակից

¹ Տե՛ս Աղայան Ա., 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 292 էջ:

² Ավագյան Ա., 2009, Արարատ Աղայան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 262:

անդամ Մուրադ Հասրաթյանը, «...հատուկ պետք է նշել աշխատանքի վերջում տրված «Օգտագործված գրականության ցանկի» մասին: Ցանկը պարունակում է նոր և ժամանակակից հայ գեղարվեստական կյանքի վերաբերյալ արխիվային բոլոր նյութերը և հրատարակությունները, ընդհանուրը՝ 600-ից ավելի անուն: Սա հայ արվեստի պատմությանը վերաբերող նյութերի ամենաընդարձակ ցուցակն է, որն ունի գիտաճանաչողական կարևոր նշանակություն և նույնիսկ կարող է առանձին տպագրվել»³:

Ա. Աղասյանն է հեղինակել 2007-ին Մոսկվայում լույս տեսած՝ Նոնա Ստեփանյանի «Искусство Армении» մենագրության՝ հետխորհրդային Հայաստանի կերպարվեստին նվիրված գլուխը⁴:

Ծանրակշիռ է գիտնականի ներդրումը «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հիմնարար աշխատության ստեղծման գործում, որի համար նա 2009 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի՝ կերպարվեստի ոլորտում⁵: Նա հեղինակել է XIX-XX դդ. հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդարձակ բաժինները, որոնք «կազմում են գրքի ուղիղ կեսը»⁶:

Բազմավաստակ արվեստաբանն է շարադրել «Հայոց պատմություն» քառահատորի՝ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստին վերաբերող բաժինները՝ երրորդ և չորրորդ հատորներում:

Ա. Աղասյանը XIX դարի **արևմտահայ կերպարվեստի պատմության** առաջին հետազոտողներից է⁷: Հայ կերպարվեստի պատմաբանը ոչ միայն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել մոռացված անուններ ու ստեղծագործություններ, հետազոտել «ուսումնասիրման կարոտ արևմտահայ 28 արվեստագետների կյանքը և ստեղծագործությունը»⁸, այլև համակողմանիորեն ուսումնասիրել է հայկական և թուրքական քանդակագործութ-

³ Հասրաթյան Մ., 2009, Արարատ Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, հ. 2-3, էջ 274:

⁴ Տե՛ս Агасян А. Искусство Армении постсоветского периода (Заключительный раздел книги Нонны Степанян «Искусство Армении», Москва, «Галарт», 2007, с. 270-278):

⁵ Տե՛ս Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., 2009, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 575 էջ:

⁶ Ավագյան Ա., Արարատ Աղասյան, Հրավարդ Հակոբյան, Մուրադ Հասրաթյան, Վիգեն Ղազարյան 2010, Հայ արվեստի պատմություն, Պատմաբանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 274:

⁷ Տե՛ս Կիրակոսյան Մ., 2016, Արարատ Աղասյանի վաստակը արևմտահայ կերպարվեստի ուսումնասիրության դործում, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 94-107:

⁸ Կիրակոսյան Մ., 2016, Արարատ Աղասյանի վաստակը արևմտահայ կերպարվեստի ուսումնասիրության դործում, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 98:

յան հիմնադիր Երվանդ Ոսկանի ու պոլսահայ շնորհալի գեղանկարիչ Ինտրայի (Տիրան Չրաքյան) ստեղծագործությունը:

Ա. Աղասյանը լրջագույն ներդրում ունի **սփյուռքահայ կերպարվեստի** ուսումնասիրության գործում⁹:

ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համատեղ հիմնարկված «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարի անդրանիկ հատորը Ա. Աղասյանի «Քաջագի մշտավառ կանթեղը» աշխատությունն էր՝ նվիրված ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջագունի Քեչեճյանին¹⁰: Առաջին անգամ՝ փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացվում է արվեստագետի երկարատև, փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հեղինակը Քաջագի արվեստը մատուցել է ժամանակագրական հերթագայությամբ՝ ըստ շրջանների, և լուսաբանել տարբեր կողմերից:

Հայրենական արվեստաբանության մեջ Ա. Աղասյանն առաջինն էր, որ Հայաստանում ներկայացրեց ֆրանսահայ նկարիչ Լևոն Թուրունջյանի արվեստը: Նա ամփոփ, բայց հնարավորինս ամբողջական լուսաբանել է «Թյուրունջյանի կյանքի և գործունեության հիմնական ասպեկտները, անհատական և խմբային ցուցահանդեսները, կուրսերը, ապա՝ տաշիզմին և սյուրռեալիզմին հարող գեղարվեստական նախասիրությունները, արժևորել նրա դերն ու տեղը ժամանակի ֆրանսիական արվեստի համատեքստում»¹¹:

Ա. Աղասյանն ուսումնասիրել է ֆրանսահայ նկարչուհի Արմինիա Կարբոնել-Բաբայանի¹² և քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունները: Սփյուռքահայ արվեստագետների ստեղծագործությունների հետազոտությանն են նվիրած պրոֆեսոր Աղասյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանված թեկնածուական ատենախոսություններից մի քանիսը՝ Մովսես Հերկեյան. «Ամերիկահայ կերպարվեստ» (2001), Վահե Գասպարյան. «Ժանսեմի գրաֆիկան» (2002), Սաթենիկ Մելիքյան. «Ալեքսանդր Սարուխանի արվեստը» (2006), Մարգարիտա Քամալյան. «Ժան Գառզուի բեմանկարչությո-

⁹ Տե՛ս Քամալյան Մ., 2016, Արարատ Աղասյան՝ սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրող, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 133-164:

¹⁰ Տե՛ս Աղասյան Ա., 2009, Քաջագի մշտավառ կանթեղը (Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության), Երևան, «Տիգրան Մեծ», 128 էջ:

¹¹ Քամալյան Մ., 2016, Արարատ Աղասյանը՝ սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրող, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 157:

¹² Նկատենք, որ Արմինիա Կարբոնել-Բաբայանը հայ երաժշտարվեստի երախտավորներ Մարգարիտ Բաբայանի և Շուշանիկ Լալուա-Բաբայանի քույրն էր:

յունը» (2013), Շուշանիկ Վարդանյան. «Արտո Չաքմաքչյանի արվեստը» (2015): 2009-ի մարտի 1-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում վերաբացվեց Սփյուռքահայ արվեստի բաժինը, որի աշխատակիցների գերակա խնդիրներից է սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությունը, և որի ղեկավարը 2016 թ. փետրվարի 1-ից Արարատ Աղասյանն է:

Հատկապես նշելի է Ա. Աղասյանի ներդրումը **սուրենյանցագիտության**¹³ և **այվազովսկիագիտության** ասպարեզում:

2010 թ. մարտի 10-ին լրացավ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակը: Հորեյանական միջոցառումների շարքում Ա. Աղասյանի նախաձեռնությամբ և ջանքերով 2010 թ. նոյեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց «Վարդգես Սուրենյանց – 150» հորեյանական գիտական նստաշրջանը, որը եզրափակվեց վաստակաշատ արվեստաբանի՝ «Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին» ուշագրավ զեկուցմամբ: Հորեյանական միջոցառումների շարքում Հայաստանի ազգային պատկերասրահում նոյեմբերի 26-ին բացվեց Վ. Սուրենյանցին նվիրված ցուցահանդեսը և հրատարակվեց նկարչի ստեղծագործությունների պատկերագիրքը՝ Ա. Աղասյանի առաջաբանով (հայերեն և անգլերեն)¹⁴:

Իսկ մինչ այդ՝ 2009 թ. օգոստոսի 1-ին, Ախալցխայի նախկին Սաֆարյան, ներկայումս՝ Քեթևան թագուհու անունը կրող փողոցում գտնվող առանձնատան պատին, որտեղ անցել են Վ. Սուրենյանցի մանկության տարիները, բացվել էր մեծ նկարչի հուշաքարը (հեղինակ՝ քանդակագործ Լևոն Գրիգորյան)՝ Ախալցխայի պատմության մեջ առաջին հայատառ հուշատախտակը, որին հաջորդած հորեյանական հանդիսավոր երեկոյի ընթացքում Ախալցխայի թատրոնի լեւի-լեցուն դահլիճում Սուրենյանցի կյանքի և գործունեության մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ Արարատ Աղասյանը:

2017-ին լրացավ հայ հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հորեյանը: Ա. Աղասյանի նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով 2017 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում Արվեստի ինստիտուտը Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ գումարեց «Հովհաննես Այվազովսկի – 200» գիտական նստաշրջանը: Հայ իրականության մեջ առաջին անգամ մի ամբողջ գիտական նստաշրջան

¹³ Տե՛ս Մելիքյան Ս., 2016, Վարդգես Սուրենյանցի արվեստը Արարատ Աղասյանի ուսումնասիրություններում, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 85-93:

¹⁴ Աղասյան Ա., 2010, Վարդգես Սուրենյանց (1860-1921), Երևան, «Հայաստանի ազգային պատկերասրահ», 224 էջ և այլն:

բացառապես նվիրվեց մեծ ծովանկարչի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը: Ա. Աղասյանը հանդես եկավ «Հովհաննես Այվազովսկու իտալացի սանը. Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսի» զեկուցումով՝ բացահայտելով, որ մեծահամբավ նկարիչը նկատելի ազդեցություն է թողել նաև եվրոպացի առանձին վարպետների ստեղծագործության վրա: Հոբեյանական նստաշրջանին ընդառաջ՝ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հայկական հիմնադրամի աջակցությամբ լույս տեսավ Ա. Աղասյանի «Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) մենագրությունը¹⁵:

Ծանրակշիռ է Ա. Աղասյանի ներդրումը **սարյանագիտության**¹⁶ և **քոչարագիտության** բնագավառներում, ինչպես նաև **խորհրդային**¹⁷ ու **հետխորհրդային** հայ կերպարվեստի, գեղարվեստական կյանքի ուսումնասիրման գործում:

1992-ին հրատարակվեց Ա. Աղասյանի անդրանիկ՝ «Мартiros Сарьян. Раннее творчество» մենագրությունը¹⁸, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Երիտասարդ հետազոտողի վստահ մուտքը սարյանագիտություն պատահական չէր. դեռևս 1980-ին հրատարակվել էր Մարտիրոս Սարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որի համահեղինակներից մեկը 24-ամյա Ա. Աղասյանն էր¹⁹:

2012-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերի շրջանակում «Ոսկան Երևանցի» հրատարակչատունը հրատարակեց Ա. Աղասյանի «Символизм и творчество Мартirosa Сарьяна» մենագրությունը՝ նվիրված XX դ. հայ խոշորագույն նկարիչ Մարտիրոս Սարյանի ստեղծագործության վաղ՝ սիմվոլիստական շրջանին: Սարյանի վաղ շրջանի հիմնական ստեղծագործությունների մանրազնին ու բազմակողմանի ուսումնասիրության շնորհիվ բացահայտվեցին նրա արվեստի ձևաոճական և գաղափարական-կերպարային առավել բնորոշ առանձնահատկույթ-

¹⁵ Աղասյան Ա., 2017, Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի, Երևան, «Գիտություն», 88 էջ (նույնը՝ ռուսերեն և անգլերեն):

¹⁶ Տե՛ս Մկրտչյան Մ. 2016, Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի արվեստն Արարատ Աղասյանի ուսումնասիրություններում, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 108-120:

¹⁷ Տե՛ս Ավագյան Ա., 2016, Արարատ Աղասյանը՝ խորհրդահայ կերպարվեստի ուսումնասիրող, Արարատ Աղասյան – 60, Երևան, «Գիտություն», էջ 121-132:

¹⁸ Տե՛ս Агасян А. 1992, Мартiros Сарьян. Раннее творчество, Ереван, изд. АН Армении, 210 с.:

¹⁹ Տե՛ս Ղազարյան Մ., Աղասյան Ա. 1980, Մարտիրոս Սարյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, «Հայաստանի պետական պատկերասրահ», 317 էջ:

յունները: Վարպետի վաղ շրջանը դիտարկվել է պատմամշակութային լայն ֆոնի վրա, իսկ նրա առանձին գործերը ներկայացվել են XIX դարավերջի և XX դարասկզբի ռուս և արևմտաեվրոպական նկարիչների աշխատանքների համադրությամբ:

Ա. Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում հարատև գտնվել է XX դարի հայ ականավոր արվեստագետներից մեկի՝ քանդակագործ, գեղանկարիչ և գծանկարիչ Երվանդ Քոչարի արվեստը: Հայ մեծ քանդակագործը բազմավաստակ արվեստաբանի սիրելի արվեստագետներից է: Այսօր նա Քոչարի արվեստի լավագույն գիտակն է՝ Երվանդ Քոչարի թանգարանի գիտական խորհրդի երկարամյա անդամը նրա մասին երկու մենագրությունների, բազմաթիվ գիտական հոդվածների ու զեկուցումների հեղինակ է: Առաջին մենագրությունը հրատարակվել է 1999-ին: Իսկ 2013-ին ՀՀ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հայերեն և ռուսերեն հրատարակվեց Ա. Աղասյանի «Երվանդ Քոչարի տարածության մեջ» մենագրությունը, որտեղ ներկայացվել են Երվանդ Քոչարի կյանքն ու արվեստը²⁰:

Ա. Աղասյանի գիտական գործունեության կարևոր ուղղություններից է ժամանակակից նկարիչների և քանդակագործների ստեղծագործության հանդեպ կենդանի հետաքրքրությունը: Ի դեպ՝ Ա. Աղասյանի մուտքը կերպարվեստագիտություն տեղի ունեցավ հենց ժամանակակից նկարիչների մասին ուսումնասիրություններով: «Սովետական արվեստ» հանդեսում 1979 թ. լույս տեսավ «Ռուբեն Շահվերդյանի արվեստը» հոդվածը, որին հաջորդեցին Ռուբեն Ադալյանին և Լևոն Թոքմաջյանին նվիրված հետազոտությունները: Այս ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ «Հայաստանի երիտասարդ նկարիչները» երկլեզու (հայերեն և ռուսերեն) պատկերագիրքը²¹: Այսօր էլ հեղինակավոր արվեստաբանի խոսքն ու կարծիքը, նկատառումն ու խորհուրդը խիստ կարևորում են մեր գեղանկարիչներն ու քանդակագործները:

Գաղտնիք չէ, որ հայրենական արվեստագիտության առջև ծառացած կարևոր ու հրատապ խնդիրներից է հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրությունը, որը գիտական կարևոր նշանակությունից զատ՝ ունի նաև քաղաքական ոչ պակաս կարևոր նշանակություն:

²⁰ Տե՛ս Աղասյան Ա., 2013, Երվանդ Քոչարի տարածության մեջ, Երևան, «Ոսկան Երևանցի», 196 էջ:

²¹ Տե՛ս Աղասյան Ա., 1987, Հայաստանի երիտասարդ նկարիչները, Երևան, «Սովետական գրող», 168 էջ:

Իր գիտական ուսումնասիրություններում Ա. Աղասյանը մեծ կարևորություն է տալիս հարևան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի ու Եվրոպայի հետ XIX-XX դդ. հայ կերպարվեստի ունեցած առնչություններին և զուգահեռներին: Այդ հարցերի բազմակողմանի լուսաբանման շնորհիվ նա բացահայտել է ոչ միայն դրանց պատմական ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները: Հատկապես ուշագրավ են հայ-ռուսական, հայ-իտալական և հայ-ֆրանսիական գեղարվեստական կապերին նվիրված՝ Ա. Աղասյանի գիտական հրապարակումներն ու զեկուցումները:

Հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների հետազոտության բնագավառում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ-ռուսական մշակութային կապերի ուսումնասիրությունը, ինչը շարունակում է մնալ Ա. Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: 2015-ին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Ա. Աղասյանի և տողերիս հեղինակի «Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար–XX դարի սկիզբ)» աշխատությունը²²: Գրքի առաջին՝ «Սանկտ Պետերբուրգում կրթված հայ արվեստագետները» վերտառությամբ պատմական ակնարկում Ա. Աղասյանը հանգամանորեն ներկայացրել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում՝ Գեղարվեստի կայսերական ակադեմիայում և գեղարվեստական այլ կրթարաններում մասնագիտացած, այնտեղ ապրած և գործած հայ արվեստագետների ստեղծագործական դիմանկարները՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք մոռացված կամ գրեթե մոռացված անուններ, անհայտ ստեղծագործություններ, կենսագրական նորահայտ փաստեր ու վկայություններ:

Իսկ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2018-ին լույս ընծայված «Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը)» մենագրության մեջ²³ Ա. Աղասյանը պատմական ակնարկի ձևով ներկայացնում է հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան

²² Տե՛ս Աղասյան Ա., Ասատրյան Ա., 2015, Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ), Երևան, «Գիտություն», 208 էջ:

²³ Աղասյան Ա., 2018, Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը), Երևան, «Գիտություն», 94 էջ:

կայսրության տարածքում նշված ժամանակաշրջանում: Հեղինակը, հենվելով թեմային առնչվող հայ և օտարազգի մասնագետների ուսումնասիրությունների՝ գրքերի ու հոդվածների, հուշագրությունների ու նամակների, հին ու նոր մամուլի և այլ աղբյուրների վրա, բերում է հայկական վանքերում ու եկեղեցիներում պահվող՝ մանրանկարներով զարդարված մեր միջնադարյան ձեռագրերի, ինչպես նաև որմնանկարների, սրբանկարների, քանդակների, խաչքարերի ու խաչարձանների, կիրառական արվեստի տարատեսակ նմուշների միտումնավոր ոչնչացման և յուրացման բազմաթիվ օրինակներ, որը վկայում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած և այսօր էլ պարբերաբար շարունակվող մշակութային վանդալիզմի մասին:

Ա. Աղասյանը նոր խոսք է ասել նաև կոմիտասագիտության բնագավառում: 2019-ին լրացավ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը, որին ակտիվորեն մասնակցեց ոչ միայն Արվեստի ինստիտուտը, այլև անձամբ վաստակաշատ արվեստաբանը: Հայտնի է, որ Կոմիտասի կերպարին են անդրադարձել հայ գեղանկարիչներից ու քանդակագործներից շատերը թե՛ իր կենդանության օրոք, թե՛ հետագայում: Մեր խնդրանքով, հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ Ա. Աղասյանը ձեռնամուխ եղավ հայ գեղանկարիչների և քանդակագործների կոմիտասականի ներկայացմանը: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի 2019 թ. մարտի 25-ի նիստում, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանի առաջարկությամբ, Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանին ընդառաջ, Ա. Աղասյանը հանդես եկավ «Կոմիտասը հայ կերպարվեստում» զեկուցմամբ, որը լայն արձագանք ստացավ ակադեմիական շրջանակներում և ակադեմիկոս Յու. Սուվարյանի առաջարկությամբ հոդվածի տեսքով տպագրվեց «Բանբեր հայագիտության» հայագիտական միջազգային հանդեսում:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմը 2019 թ. սեպտեմբերի 20-22-ին Մոսկվայում գումարեց «Национальная классика в мировом художественном контексте» խորագրով միջազգային գիտական կոնֆերանս՝ նվիրված Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյաններին: Կոմիտասագիտության մեջ առաջին դեպքն էր, որ Մոսկվայում կազմակերպվում էր միջազգային գիտական կոնֆերանս, որի զեկուցումները նվիրված էին բացառապես Կոմիտասի կյանքին ու ստեղծագործությանը: Արվեստի ինստիտուտը սույն կոնֆերանսի համակազմակերպիչ հիմնարկն էր՝ Կոմիտասի մասով: Ա. Աղասյանը՝ կոնֆերանսի «Կոմիտասի դերն ու նշանակությունը հայ մշակույթում» մասնաճյուղի համաղեկավարը, լիազումար նիստում հանդես եկավ «Կոմիտասի կերպարը հայ կերպարվեստում» բանախոսությամբ:

Տարեվերջին Արվեստի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ լույս տեսավ Ա. Աղասյանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրքը²⁴, որտեղ ներկայացված ստեղծագործություններն ունեն ինչպես գեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային և վավերագրական նշանակություն:

Ա. Աղասյանի ուսումնասիրությունների վերաբերյալ տպագրվել են շուրջ 81 գրախոսականներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Իրանում:

Նրա գիտական խմբագրությամբ հրատարակվել է 70 գիրք ու մենագրություն: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը լույս ընծայեց ավստրիացի ակադեմիկոս արվեստաբան Յոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն գրքի ռուսերեն թարգմանության առաջին գրքի առաջին (2011) և երկրորդ (2018) հատորները (պատասխանատու խմբագիրներ՝ Մ. Հասրաթյան և Ա. Աղասյան), որոնց աշխատանքներն ընթացել են Ա. Աղասյանի ընդհանուր հսկողությամբ:

Կերպարվեստագիտության ակնառու ժառանգության կողքին հիշատակության է արժանի Ա. Աղասյանի ներդրումը հայ պոեզիայում, թարգմանչական արվեստում: Քչերին է հայտնի, որ դեռևս պատանեկան տարիներին արվեստաբանը ստեղծագործել է, բանաստեղծություններ գրել հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնք, ցավոք, մինչ օրս անտիպ են:

2013 թ. նա ընթերցողի դատին հանձնեց «Ռուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուն, որտեղ ներառել է XIX–XX դդ. ռուսական պոեզիայի լավագույն նմուշներն ու դրանց սեփական թարգմանությունները, որոնք հետաքրքրեցին ընթերցողներին և դրական արձագանքներ գտան գրականագետների շրջանում: Գայանե Հարությունյանի կարծիքով՝ «Ա. Աղասյանի թարգմանությունները ռուս քնարերգության, նրա հոգու, նրա անկրկնելի փոխաբերականության խորունկ ընթերցման վառ նմուշներ են: Նուրբ ճաշակով, վանկի նրբագեղությամբ, ոչ միայն բառը, այլև պոեզիայի լռությունը լսելու հազվագյուտ ունակությամբ օժտված Ա. Աղասյանն ստեղծել է ռուսական բանաստեղծական սիմֆոնիայի հայկական պարտիտուր՝ պահպանելով նրա ին-

²⁴ Աղասյան Ա., 2019, Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով (առաջաբանը՝ Աննա Ասատրյանի), Երևան, «Գիտություն», 88 էջ:

տոնացիաները, արխիտեկտոնիկան, մտածողության կերպարայնությունն ու ռուսական մշակույթին բնորոշ աշխարհընկալումը»²⁵:

Արարատ Աղասյանը, հիրավի, գիտության հմուտ կազմակերպիչ է: 1978-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում աշխատանքի անցնելուց քիչ անց բացահայտվեց շնորհալի երիտասարդ արվեստաբանի կազմակերպչական ջիղը. 1980-ին նա ընտրվեց ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտխորհրդի նախագահ, իսկ 1981-ին արդեն գիտական խորհրդի անդամ էր:

1991 թ. հունիսի 1-ին Ա. Աղասյանը նշանակվեց Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար և գիտխորհրդի քարտուղար:

1995-ի օգոստոսի 8-ին Արվեստի ինստիտուտում ստեղծվեց հանրապետությունում միակ՝ արվեստագիտության բնագավառի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհուրդը, որի ակունքներում կանգնած էր Ա. Աղասյանը. նա խորհրդի առաջին գիտքարտուղարն էր, այնուհետև՝ միակ գիտությունների թեկնածու անդամը, 2009-ից՝ նախագահի տեղակալը:

Վարչական աշխատանքի ընթացքում դրսևորվեցին Ա. Աղասյանի՝ գիտության կազմակերպչի աներկբա ունակությունները, և ինստիտուտի ապագայով մտահոգ տնօրենը՝ ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, դեռևս իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, հանձին Ա. Աղասյանի՝ տեսավ ինստիտուտի ապագա ղեկավարին: Ինքս էլ, 1990-ականների վերջին, լինելով ինստիտուտի ասպիրանտ, պատվարժան ակադեմիկոսից քանիցս լսել եմ, որ իրենից հետո ինստիտուտի տնօրենը պետք է լինի Աղասյանը: Լ. Հախվերդյանը վախճանվեց 2003 թ. փետրվարի 5-ին: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում նրան փոխարինեց Արարատ Աղասյանը. իրականացավ Լևոն Հախվերդյանի ցանկությունը: Ա. Աղասյանը ինստիտուտի կոլեկտիվի կողմից 2003-ի գարնանը առաջադրվեց և հունիսի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից միաձայն հաստատվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում, իսկ 2008-ին, 2013-ին և 2019-ին վերընտրվեց նույն պաշտոնում: 2003-2021 թթ. Ա. Աղասյանն ինստիտուտի գիտխորհրդի նախագահն էր: 2021 թ. ընտրվել է Արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար:

Ա. Աղասյանն ինստիտուտում ոչ միայն պահպանեց և շարունակեց նախկին տնօրենների՝ ակադեմիկոսներ Ռուբեն Զարյանի ու Լևոն Հախվերդյանի ավանդույթները, այլև իր հմուտ ղեկավարությամբ հայ արվեստագիտության գլխավոր օջախը բերեց նոր հանգրվանի: Տնօրենի պաշտոնում Ա. Աղասյանի պաշտոնավարման 19 տարիների ընթացքում ինստիտուտում վեր-

²⁵ Арутюнян Г.Г. 2013, Из сокровищницы русской поэзии в переводах Апарата Агасяна, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 324:

ստեղծվել են Թատրոնի (2004) և Սփյուռքահայ արվեստի (2009, 2014-ից՝ Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի) բաժինները: Նրա նախաձեռնությամբ 2004-ին վերստեղծվեց երիտասարդ արվեստաբանների խորհուրդը, և ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեցին արդեն ամենամյա դարձած՝ երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջանները, հիմնարկվեց «Հայ արվեստի հարցեր» մատենաշարը, պետական պատվերի շրջանակում հրատարակվեցին «Հայ ավանդական երաժշտության» 13 հատորները: 2014-2018 թթ. ինստիտուտը հրատարակել է «Կանթեղ» գիտական պարբերականը, իսկ 2019-ից՝ «Արվեստագիտական հանդեսը»:

Ա. Աղասյանի առաջարկությամբ և մեծ ջանքերի շնորհիվ Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդին ԲՈԿ-ի կողմից տրվեց ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման իրավունք: Ինստիտուտում ստեղծվեց նույն թվանիշով մասնագիտական քննական հանձնաժողով:

Տիրող գիտաստեղծագործական բեղմնավոր մթնոլորտում այդ տարիներին պաշտպանվել է 8 դոկտորական և 27 թեկնածուական ատենախոսություն, հաջողությամբ է լուծվել գիտական անձնակազմի սերնդափոխության հարցը: Ինստիտուտում ավանդույթ է դարձել հայ կերպարվեստի ու երաժշտարվեստի գործիչների հոբելյանական գիտական նստաշրջանների գումարումը՝ զեկուցումների ժողովածուների հրատարակությամբ:

Ինստիտուտը, որտեղ այսօր աշխատում են ՀՀ ԳԱԱ չորս թղթակից անդամ, գիտությունների 13 դոկտոր և 30 թեկնածու, ձեռք է բերել լայն ճանաչում, գնահատվել պետության կողմից. 2008-2015 թվականների ընթացքում գիտաշխատողներից տասներեքն արժանացել են ՀՀ պատվավոր կոչումների:

Ա. Աղասյանի պաշտոնավարման ընթացքում իր հիմնադրման կեսդարյա տարեդարձը բոլորեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, որի տարեգրության կարևոր էջերից դարձան 50-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շարքը (2008) և «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50» գրքի հրատարակումը՝ պետական պատվերի շրջանակում: 2013-ին՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանի կապակցությամբ, Արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ ստեղծվեց ՀՀ ԳԱԱ հիմնը: Ա. Աղասյանի նախաձեռնությամբ վերականգնվեց ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը, որն արդեն շնորհվել է երկու անգամ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանին և ճարտարապետության դոկտոր Գառնիկ Շախկյանին (2011), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արմեն Ղազարյանին (2015): Ա. Աղասյանի ջանքերով նկատելիորեն աշխուժացել է նաև միջազգային համագործակցությունը:

Արվեստաբանի գիտական ու գիտակազմակերպչական բեղմնավոր աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեության հետ: Պրոֆեսորը տարիներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա արվեստաբաններին: Բազմիցս ղեկավարել է արվեստաբանության գծով պետական քննությունների և ավարտական աշխատանքների հանձնաժողովները պետական համալսարանում, գեղարվեստի պետական ակադեմիայում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերջին շրջանում վաստակաշատ գիտնականը ձեռնամուխ է եղել արվեստի դպրոցների և գեղարվեստական ուսումնարանների աշակերտության համար նախատեսված «Արվեստի պատմություն. Կերպարվեստ» ուսումնական ձեռնարկի ստեղծման աշխատանքներին: Կերպարվեստի պատմությանը նվիրված հայերեն առաջին դասագիրքը բաղկացած է երեք գրքից: Արվեստի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ 2020 թ. լույս տեսավ ձեռնարկի առաջին գիրքը, որը ներկայացնում է նախնադարյան կերպարվեստից մինչև եվրոպական Վերածննդի դարաշրջանի կերպարվեստը²⁶, միևնույն ժամանակ դառնալով «Եզակի, խիստ արդիական և մեզանում իրապես նշանակալի երևույթ»²⁷:

Նշանակալի է Ա. Աղասյանի ներդրումը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական տասնչորս ատենախոսություն: Ակնհայտ է, որ նա գիտական դպրոցի հիմնադիր է. նրա սաներն այսօր ևս, հետևելով իրենց Ուսուցչի օրինակին, շարունակում են անձնական նպաստը բերել հայրենական կերպարվեստի ուսումնասիրության գործին: Արվեստաբանի ասպիրանտների թվում են նաև Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները: 2008-ից ի վեր նա «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի նախագահն է:

Ա. Աղասյանն ընդգրկվել է «Գրականության և արվեստի բնագավառում արվեստի ոլորտի ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2009), «Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ՀՀ պետական

²⁶ Աղասյան Ա., 2020, Արվեստի պատմություն. Կերպարվեստ, գիրք 1, Երևան, «Արմավ», 256 էջ:

²⁷ Քամայան Մ., Աղասյան Ա., 2021, Արվեստի պատմություն. Կերպարվեստ, գիրք 1, Արվեստագիտական հանդես, N1, Երևան, էջ 220:

մրցանակների շնորհման» (2011, 2013, 2015) և «Հանրապետության Նախագահի մրցանակների շնորհման» (2006-2009) արվեստի հանձնախմբերում: Նա ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, ՀՀ նկարիչների միության վարչության անդամ: Ընդգրկված է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Ռուսական արվեստի թանգարանի (պրոֆեսոր Արամ Աբրահամյանի հավաքածու), Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարանի» գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության» և «Գիտության աշխարհում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նորաստեղծ «Արվեստագիտական հանդեսի», ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսի, «Կանթեղ» գիտական պարբերականի, Ստեփանակերտի (Արցախի Հանրապետություն) «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհուրդների կազմում:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Ա.Աղասյանն արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2008), պարգևատրվել ՀՀ ԳԱԱ վաստակագրով (2016) ու պատվոգրով (2005), ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2008) և ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2008):

Հավարտ խոսքիս՝ ուզում եմ մեր սիրելի հոբելյարին մաղթել բազմաթիվ հոբելյաններ, որոնք կնշանավորվեն գիտական նոր նվաճումներով՝ ի փառս հայրենական գիտության:

Շնորհակալություն, որ Ձեր անդուլ ու նվիրական ջանքերի շնորհիվ Արվեստի ինստիտուտը ստացել է նոր շնչառություն՝ դառնալով բոլորիս հարազատ օջախը, մեր երկրորդ տունը:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ
(Էդիկ Մինասյանի ծննդյան 65-ամյակին)



Նշանավոր պատմաբան, հայագետ Էդիկ Գարեգինի Մինասյանը անցել է կյանքի դժվարին, բայց բովանդակալից ուղի: Ծնվել է 1956 թ. ապրիլի 27-ին Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում (այժմ՝ Արագածոտնի մարզ): 1973 թ. ավարտել է Կարմրաշենի միջնակարգ դպրոցը: 1974-1979 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: Այնուհետև ուսումնառությունը շարունակել է ասպիրանտուրայում (1979-1983 թթ.): 1985 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, իսկ 2003 թ.՝ դոկտորականը՝ «Սոցիալ-տնտեսական վերափոխումները ՀՀ-ում 1990-ական թթ.» թեմայով: Այս ընթացքում է. Մինասյանը զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ: 1979-1982 թթ. եղել է Պատմության ֆակուլտետի դեկանի օգնականը, 1986-1994 թթ.՝ Արտասահմանյան քաղաքացիների ֆակուլտետի Հումանիտար առարկաների ամբիոնի վարիչը: Այդ տարիներին նա միաժամանակ դասավանդել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ԽՄԿԿ, ապա՝ Հայոց պատմության ամբիոններում: 1999-2009 թթ. է. Մինասյանը եղել է Պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալը, իսկ 2009 թ. արդեն նույն ֆակուլտետի դեկանն էր: 2005 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Խոսելով է. Մինասյանի գիտական ժառանգության մասին՝ նշենք, որ այն «խիստ» բազմաշերտ և բազմաբովանդակ է: Արդեն իր առաջին աշխա-

տություններում նա ցուցաբերեց հմուտ և բազմափորձ ուսումնասիրողին բնորոշ բոլոր հատկանիշները:

Է. Մինասյանը այժմ հեղինակ է 200-ից ավելի գիտական աշխատանքների, այդ թվում՝ հեղինակ կամ համահեղինակ՝ 20-ից ավելի գրքերի: Դրանց մեջ նախ և առաջ պետք է մատնանշել դասագրքերը:

Տարբեր տարիներին նա դասընթացներ է վարել Հայոց պատմության (նորագույն ժամանակաշրջան), Հայոց պատմության հիմնահարցերի, Հայ դիվանագիտության պատմության (հին և միջին դարեր), Հայաստանի երրորդ հանրապետության պատմության վերաբերյալ՝ առաջնահերթ նշանակություն տալով դասագրքեր ստեղծելու գործին: Դրանց մեջ պետք է առանձնացնել Մ.Ա. Մուրադյանի հետ շարադրած՝ «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.)» (Երևան, 2005), «Ձեռնարկ-մեթոդական ուղեցույց հայոց պատմություն բուհական դասընթացի» (համահեղ.՝ Ա. Վարդանյան, Ստեփանակերտ, 2008), «Հայոց պատմություն», 9-րդ և 12-րդ դասարաններ (հումանիտար և բնագիտական հոսքերի համար), նորագույն շրջան՝ հումանիտար հոսքի համար (շարադրված՝ հեղինակային կոլեկտիվի կողմից, Երևան, 2016) և մյուս դասագրքերը:

Է. Մինասյանը առաջինն էր, որ զբաղվեց Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրությամբ: Դրա արգասիքը դարձավ «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1991-2003 թթ.» սովորածավալ և արժեքավոր մենագրությունը (Երևան, 2003), որը, բոլոր առումներով, մեր անկախ պետականությանը նվիրված առաջին այսպիսի կապիտալ գործն էր: Հեղինակի ուշադրության կենտրոնում են եղել համարյա այն բոլոր հիմնահարցերը, որոնք պատմաբանը, իսկ առավել ևս նրա նման արդեն հմուտ հեղինակը, չէր կարող մոռանալ կամ շրջանցել: Քննարկվել են ինչպես դեպի անկախացման ճանապարհի տանող նախադրյալները, այնպես էլ պետականության ատրիբուտների (կառավարման մարմիններ, բանակ, ոստիկանություն և այլն) ստեղծման գործընթացները: Սրանք բեկումնային պահեր էին մեր պետականության համար, քանզի այս ամենին զուգահեռ ընթանում էր նաև չհայտարարված Արցախյան պատերազմը: Վերջին խնդրին նա անդրադարձավ նաև հետագայում՝ շարադրելով մի շարք հոդվածներ՝ «Фальсификация истории Арцахского движения и Нагорно-Карабахской республики в азербайджанских учебниках» (ԲՀ, 2013, N 1, էջ 180-193), «ԼՂՀ պատմության նենգափոխումը Ադրբեջանական դասագրքերում» (ԼՂՀ դատական իշխանություն, N 2, Երևան, 2012, էջ 5-15), «Արցախյան գոյամարտի պատմության ուսումնասիրության խնդիրները» (Լրատու, N 1, Երևան, 2012, էջ 72-85), «Արցախյան ազատագրական շարժումը և «դեպի երկիր»

կարգախոսը» («Հայ դատ» մատենաշար, N 3, Երևան, 2011, էջ 150-162), «Սումգաիթյան և Բաքվի ջարդերի իրավաքաղաքական գնահատականը. Մեծ եղեռն. Դատապարտումից հատուցում» (Գիտ. հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2011, էջ 36-50 և այլն): Հեղինակը նաև հատուկ ուշադրություն է հատկացրել կատարված սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական վերափոխումներին, որոնք տեղի ունեցան նորաթուխ իշխանությունների կողմից: Նա իրավացիորեն գտնում է, որ թույլ տրվեցին նաև որոշ սխալներ ու անճշտություններ, քանզի տեղի էր ունենում հնի վերացում, իսկ նորի ստեղծման ճանապարհին իրեն զգացնել էր տալիս կենսափորձի պակասը: Քանի որ այս մենագրությունը բովանդակային առումով «անդրանիկ» հետազոտություն էր մեր պատմագրության մեջ, ուստի հիմնականում շարադրվել է արխիվային նյութերի և մամուլի հրապարակումների հիման վրա: Հետագայում այս խնդիրներին նա անդրադարձավ «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» սովորածավալ մենագրությունում (Երևան, 2013): Շուտով հրատարակվեց մեր անկախ պետականության հոբելյանին նվիրված նրա արժեքավոր մենագրությունը՝ «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017)» (Երևան, 2018) վերտառությամբ, որտեղ հեղինակը քայլ առ քայլ նշում է այն բոլոր ձեռքբերումներն ու բացթողումները, որոնք տեղի են ունեցել մեր պետականության ստեղծման առաջին 25 տարիներին:

Նույնպիսի բնույթ և բովանդակություն ունի նաև «Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին» (համահեղ.՝ Տ.Է. Մինասյան, Երևան, 2016) անգնահատելի հետազոտությունը, որը տպագրվել է նաև ռուսերեն (Э.Г. Минасян, Героическая деятельность армянок в годы освободительного движения конца XIX – начала XX веков, Москва, 2020): Սա խորհրդային տարիներին արգելված թեմա էր, և կարելի էր գրել միայն խորհրդահայ կանաց՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին գործած սխրանքների մասին (հմմտ. Լ. Մարտիրոսյան, Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (1941-1945 թթ.), Երևան, 1961, Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Երևան, 1968): Է. Մինասյանի և Տ. Մինասյանի աշխատությունն ընդգրկում է բավական մեծ ժամանակաշրջան՝ հայ կանանց՝ ազատագրական շարժումների մեջ մտնելու ակունքներից (1850-ական թթ.) մինչև ֆիդայական ողջ պայքարին մասնակցելը: Անշուշտ, շատերը գիտեին Սոսե Մայրիկի մասին, սակայն մինչ այս մեծարժեք ուսումնասիրությունը չգիտեին, թե ովքեր են եղել Սրբուհի Յանըզյանը, Ծաղիկ (Սաթենիկ) Մատինյան-Արղությանը, Նունե Մայրիկը, Մարիամ Չիլինկիրյանը, Սաթո (Սաթենիկ) Օհան-

ջանյանը, Նատալյա Մատինյանը, Հորթանս Դավթյանը, Խանըմ Քերեմնյանը և շատ-շատերը, նաև Գևորգ Չաուշի կինը՝ Եղսոն: Թեմայի **տարբու** (արգելված) լինելու մասին են հուշում նաև մենագրության գրականության ցանկերը: Դրանք հիմնականում սփյուռքում տպագրված աշխատություններ են և սփյուռքահայ մամուլում պահպանված նյութեր: Փաստորեն, այս մենագրությունը որակապես մի նոր երևույթ էր մեր պատմագիտության մեջ: Այս գրքի հետ մեծապես փոխկապակցված է նաև պատմաբանի «Հայ հերոսուհի կանայք» (Երևան, 2016) մենագրությունը:

Է. Մինասյանի գիտահետազոտական ժառանգության անդաստանում կարևոր տեղ է զբաղեցնում նաև սփյուռքի և տարագրված հայության հիմնախնդրի վերլուծությունը: Ճիշտ է՝ խորհրդային տարիներին ևս այս հարցերին եղել են անդրադարձներ, որոնցից մենք հատկապես ցանկանում ենք նշել Հ. Ու. Մելիքսեթյանի կատարած աշխատանքը (Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985), սակայն ժամանակները նրան և սփյուռքով զբաղվող մյուս մասնագետներին հնարավորություն չէին ընձեռում բացելու բոլոր «փակագծերը»: Է. Մինասյանը, հենվելով մինչ այդ արգելված և չօգտագործված փաստաթղթերում պահպանված վկայությունների վրա, կարողացավ բացել «երկաթյա վարագույր» և բեմի հետնախորքում տեսնել հայության դեմ կատարվածի իրական պատկերը (Է. Մինասյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.). Գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, Հայրենիք-սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017), Երևան, 2018, Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. Պատմություն և մարտահրավերներ, Երևան, 2019): Դրանց իրականացնողներն էին XIX-XX դդ. օսմանյան կառավարիչները, երիտթուրքերը և ապա Մ.Ք. Աթաթուրքը՝ մեղմ ասած՝ Վ.Ի. Լենինի լռելայն համաձայնությամբ: Վերջինիս ռազմադիվանագիտական և տնտեսական աջակցությունն էր, որ Թուրքիան փրկեց փլուզումից: Ահա մասամբ այս, իսկ առավել հանգամանալից XX-XXI դդ. սահմանազլխին ձևավորված Սփյուռք - Հայաստանի Հանրապետություն խնդիրների վերլուծություններին են վերաբերում նրա սփյուռքագիտական հետազոտությունները: Եթե այս աշխատություններում սփյուռքի առաջացման և ձևավորման հարցերը քննության էին ենթարկվում մասնակիորեն, քանզի ուսունասիրողի նշաձողն էր սփյուռքի հիմնախնդիրը ձևավորումից մեկ դար անց, ապա Է. Մինասյանը կիսատ չթողեց նաև առաջացման խնդիրների քննարկումը:

Կան գրքեր, որոնք ունեն հավերժության ուղի: Այսպիսի հետազոտություններից են նաև Լեոյի «Հայկական հարցի վավերագրերը» (Լէօ, Հայոց

Հարցի վաերագրերը Թիֆլիս, 1915) և Ա.Կ. Զիվելեգովի հոդվածները Հայկական հարցի վերաբերյալ (А.К. Дживелегов, Армяне в России, М., 1906; Будущее Турецкой Армении, М., 1911; Судьба Армении, Армянский вестник, 1916, N 1; Положение армян в Турции, ն.տ., 1916, N 5; Об армянском вопросе, ն.տ., 1916, N 9; Беседа Талаат-бея с немецким журналистом, ն.տ., 1916, N 23; Неотуранизм и Армения, ն.տ., 1916, N 41; Новые ужасы в Армении, ն.տ., 1917, N 26): Է. Մինասյանն իրականացրեց երկու կարևոր գործերի վերահրատարակումը՝ գրելով նաև ծավալուն առաջաբաններ ու թարմացրեց գիտական ապարատը (Հայկական հարցի վաերագրերը, կազմ. Է. Մինասյան, Երևան, 2014, Ա. Զիվելեգով Թուրքիան և Հայկական հարցը, կազմ. Է. Մինասյան, Երևան, 2014): Այս աշխատությունների հետ փոխկապակցված է նաև Հայոց պատմության վերջին քառահատորյակի (հատորներից յուրաքանչյուրը բաղկացած է երկու մասից) «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը» վերտառությամբ բաժնի շարադրումը Է. Մինասյանի կողմից. տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք Երկրորդ, Նորագույն ժամանակաշրջան (1945-1991 թթ., Երևան, 2016): Պետք է նաև արձանագրել, որ նա այս հրատարակության խմբագրական խորհրդի անդամներից է:

Այս ամենով հանդերձ, դժվար է մեկ հոդվածի սահմաններում ներկայացնել այն ամենը, ինչ շարադրել է Է. Մինասյանը: Դրանք վերաբերում են Երևանի պատմությանը, հայ պարբերական մամուլին, հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերին՝ Խրիմյան Հայրիկից սկսած՝ մինչև Մ. Սիլիկյան, ԵՊՀ-ի պատմությանը և նրա ցուցաբերած մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին, հայ-ֆրանսիական և հայ-ռուսական առնչություններին: Այս ամենի արգասիքն է այն, որ վերջին 5 տարիներին նա անընդմեջ ճանաչվում է Արդյունավետ գիտաշխատող մրցույթի հաղթող:

Էդիկ Մինասյանի ղեկավարությամբ պաշտպանվել են մոտ 2 տասնյակ թեկնածուական ատենախոսություններ: Նա գրախոսել է բազմաթիվ թեկնածուական և դոկտորական աշխատանքներ: Եղել է մի շարք աշխատանքների պաշտոնական ընդդիմախոսը: Է. Մինասյանի ղեկանության տարիներին ԵՊՀ պատմության ֆակուլտետն սկսեց հրատարակել իր տարեգիրքը՝ «Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես» վերտառությամբ: Նա միաժամանակ մի շարք հանդեսների խմբագրական հանձնաժողովների անդամ է («Հայագիտության հարցեր», «Հայկական բանակ», «Նոր-Դար» և այլն): Է. Մինասյանը նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին կից՝ հայոց պատմության գծով գիտական խորհրդի նախագահի տեղակալն է, ինչպես նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահը: Փորձառու ղեկավարը բազմիցս արժանացել է «Լավագույն դեկան» մրցանակին:

Պատմաբանը նաև Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ է:

Գիտական ուսումնասիրություններից զատ, Է. Մինասյանը կատարում է նաև հասարակական կարևոր աշխատանքներ: Նա Խնուս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, իսկ 2015 թ. ՀՀ նախագահի կարգադրությամբ նշանակվել է Հանրային խորհրդի անդամ: Դասախոսություններով բազմիցս հանդես է եկել ՀՀ և ԱՀ զորամասերում: Այս ամենի արգասիքն են նրան տրված պետական պարգևները: 2007 թ. պատմաբանն արժանացել է ԼՂՀ-ի «Ոսկե արծիվ», 2009 թ.՝ Ֆրիտյոֆ Նանսենի և ՀՀ վարչապետի, 2014 թ.՝ «Մովսես Խորենացի», 2016 թ.՝ Երևանի քաղաքապետի, իսկ 2018 թ.՝ «Վաչագան Բարեպաշտ» մեդալներին:

Վստահ ենք, որ Է. Մինասյանը այսուհետև ևս հայագիտությունը կհարստացնի ուշագրավ և բովանդակալից հետազոտություններով: Մաղթենք նրան ամուր առողջություն և գիտական նորանոր նվաճումներ:

ՀԱԿՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

**ԾՈՓՔԻՑ ԴԵՊԻ ՏՐՈՅԱ.
ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**



Արամ Վաղարշակի Քոսյան, ՀՀ ԳԱԱ դահլիճում, 2017 թ.

Տարիներ առաջ՝ 1990-ական թթ. սկզբին, երբ Հայաստանն իր առաջին քայլերն էր կատարում դեպի ինքնուրույնություն, պատերազմ էր ընթանում ինչպես հակառակորդի դեմ, այնպես էլ ներսում՝ երկրի ենթակառուցվածքները, կրթությունն ու գիտությունը պահպանելու ուղղությամբ: Հիշում եմ՝ այդ մութ ու ցուրտ տարիներին Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում մի շարք երիտասարդներ հավաքվում էին և դասեր լսում Հին աշխարհի պատմության և սեպագիր քաղաքակրթությունների մասին: Առաջին հայացքից ասես անհեթեթություն է. չէ՞ որ երկիրը պատերազմի մեջ էր, և ի՞նչ իմաստ ունեին այդ դասերը, այն էլ այդքան «ոչ պրակտիկ» բաների՝ հնությունների ու սեպագրերի մասին: Իրականում սա վկայությունն էր այն բանի, որ կյանքը երկրում շարունակվում է, գիտությունը ապրում է, հետևաբար ապագայի նկատմամբ հույս կա: Այդ դասերը վարում էր արևելագետ Արամ Քոսյանը:

Ա. Քոսյանը ծնվել է 1956 թ. մայիսի 18-ին Երևանում՝ նշանավոր բանասեր Վաղարշակ Քոսյանի ընտանիքում: 1973-1977 թթ. սովորել է Խ. Աբով-

յանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և հասարակագիտության ֆակուլտետում: 1981-1982 թթ. հետբուհական կրթությունը շարունակել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի սլավոնագիտության և բալկանագիտության ինստիտուտում: Այստեղ նրա ղեկավարն է դառնում հոշակավոր գիտնական Վյաչեսլավ Իվանովը: Ա. Քոսյանը Հայաստան է վերադառնում նոր գիտելիքներով զինված՝ տիրապետելով հին (սեպագիր խեթերեն, սեպագիր լուվիերեն, հիերոգլիֆային լուվիերեն, աքքադերեն, ուրարտերեն) և ժամանակակից (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն) լեզուների: Հետագայում նա վերապատրաստվում է նաև Արևմուտքում, մասնավորապես ԱՄՆ-ի Քլիվլենդի պետական համալսարանում (1994-1995 թթ., Ֆոլբրայթի կրթաթոշակ) և ԳՖՀ-ի Վյուրցբուրգի համալսարանում (2000-2002 թթ., Հումբոլդտի հիմնադրամ):

Ա. Քոսյանը 1987 թ. Երևանում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական թեզը և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան. ատենախոսության թեման էր «Մ.թ.ա. XII-VIII դդ. Փոքր Ասիայի և հարակից շրջանների լուվիական պետությունները», իսկ պաշտոնական ընդդիմախոսն էր հայտնի արևելագետ Իգոր Դյականովը: Ընդամենը տասը տարի անց՝ 1997 թ., վերստին Երևանում նա պաշտպանում է նաև դոկտորական ատենախոսությունը՝ «Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը» թեմայով:

Ա. Քոսյանը 1978 թ. մինչ օրս աշխատում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում: 1995-2001 թթ. եղել է այդ ինստիտուտի փոխտնօրեն, իսկ 2011 թ. առ այսօր Հին Արևելքի բաժնի վարիչն է:

Նա զուգահեռաբար զբաղվել է նաև գիտության կազմակերպմամբ և մանկավարժական գործունեությամբ: Մասնավորապես դասավանդել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում (2012 թ. սկսած՝ որպես պրոֆեսոր), իսկ 1991-1993 թթ.՝ նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 2002-2007 թթ. եղել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության և հետբուհական կրթության վարչության պետ, որից հետո՝ պետական մանկավարժական համալսարանի գիտական կենտրոնի տնօրեն:

Ա. Քոսյանի գիտական ժառանգությունը (յոթ մենագրություն և ավելի քան հարյուր հոդված) ընդգրկում է բավական լայն աշխարհագրական տարածք (Հայկական լեռնաշխարհի կենտրոնաարևմտյան շրջաններից մինչև Փոքր Ասիայի արևմուտք) և ժամանակաշրջան (մ.թ.ա. II հազ. – I հազ. կեսեր)՝

առնչվելով հինարևելագիտության (մասնավորապես խեթագիտության) և հնագիտության ամենատարբեր խնդիրներին: Այդ աշխատանքները թեև հիմնականում գրված են օտար աղբյուրների տեղեկությունների հիման վրա, սակայն գլխավորապես անդրադառնում են Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության և մշակույթի խնդիրներին: Ի դեպ, Ա. Քոսյանի առաջին գիտական աշխատանքը տպագրվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում (1982, N 2, էջ 75-82): Նա այն բացառիկ հայ հեղինակներից է, որի հոդվածները դեռևս խորհրդային տարիներին տպագրվում էին միջազգային հեղինակավոր հանդեսներում:

Թեմատիկ առումով այդ աշխատանքները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

1. Խեթական թագավորության շրջանին (մ.թ.ա. XVII-XIII դդ.) վերաբերող աղբյուրագիտություն, վարչաքաղաքական և էթնիկ պատմություն, պատմական աշխարհագրություն, կրոն. այս ոլորտին են վերաբերում հեղինակի գիտական գործունեության հիմնական շրջանի աշխատանքները (մոտ 40), որոնց մեջ հիշարժան են հատկապես երեք մենագրությունները (Հայկական լեռնաշխարհի տեղանունները՝ ըստ խեթական սեպագիր աղբյուրների, Երևան, «Ձանգակ», 2004. Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը, Երևան, «Գիտություն», 2016. Մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, Երևան, «Գիտություն», 2018, վերջինը՝ համահեղինակությամբ): Այս համատեքստում հեղինակը հատուկ քննարկել է երկու աշխարհագրական գոտի՝ Իսուվա-Ծոփքը (հմմտ. Իսուվան/Ծոփքը մ.թ.ա. XIII-XII դդ., Պատմա-բանասիրական հանդես, N 1-2, 1997, էջ 177-192. An Aryan in Isuwa, Iran and the Caucasus, N 10/1, 2006, p. 1-6) և Հայասա-Բարձր Հայք/Տուրուբերանը (հմմտ. Մուսիլիս II-ի հայասական արշավանքները. նոր սկզբնաղբյուրներ, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 2004, էջ 197-204. Հայասայի աստվածները. KUB XXVI 39, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, N XXIV, 2005, էջ 444-457. Rulers of Hayasa. Hukkana, Aramazd, N VIII/1-2, 2014, p. 128-134)՝ ցույց տալով այդ տարածքների սերտաճման գործընթացը, մի կողմից՝ խեթական, մյուս կողմից՝ հայկական միջավայրում: Անհրաժեշտ է նշել, որ հեղինակն անդրադարձել է նաև խեթական շրջանի պատմության այնպիսի խնդիրների, որոնք ուղղակիորեն չեն առնչվում Հայկական լեռնաշխարհին (հմմտ. Խեթական տերությունը և Ախիյավան. Տրոյական պատերազմը, Երևան, Արևելագիտության ինստիտուտ, 1997 մենագրությունը):

2. Ուշ խեթական/լուվիական թագավորությունների շրջանին (մ.թ.ա. XII-VIII դդ.) վերաբերող քաղաքական պատմություն, տեղագրություն, հիերո-

գլխի լուվիերեն լեզու և հայ-լուվիական լեզվական առնչություններ. այս թեմաներին են վերաբերում հեղինակի գիտական գործունեության սկզբնական շրջանի (և ոչ միայն) մոտ 15 աշխատանքները, որոնցից հատկապես հիշարժան է ռուսերեն մենագրությունը (Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н.э.: по иероглифическим лувийским источникам, Ереван, изд. НАН РА, 1994), ինչպես նաև միջազգային հայտնի գրախոսվող հանդեսներում տպագրված հոդվածները (հմմտ. The Outline of Anatolian Onomastics, Studi Micenei ed Egeo-Anatolici, N XXIV, 1984, p. 225-227. The Epithet "Celestial" in Hieroglyphic Luwian Inscriptions, Archiv für Orientforschung, N 15/1, 1988, p. 114-118. A Note on Anatolian-Armenian Linguistic Contacts, Annual of Armenian Linguistic, N 19, 1998, p. 41-42):

3. Ուրարտական թագավորության շրջանին (մ.թ.ա. IX-VI դդ.) առնչվող աղբյուրագիտություն և պատմական աշխարհագրություն. այս հարցերին հեղինակն անդրադարձել է մոտ 5 աշխատանքներում (հմմտ. Ճշգրտումներ Արգիշտիխիլի մի պակասավոր արձանագրության ընթերցումներում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 1982, էջ 75-82; On Anatolian-Urartian Linguistic Contacts, Journal of Indo-European Studies, N 25/1-2, 1997, p. 27-34; Western Periphery of Urartu and Beyond, Aramazd, N V/1, 2010, p. 43-54), թեև համապատասխան թեմատիկան կարմիր թելի նման անցնում է բազմաթիվ այլ աշխատանքներում:

4. Կլիմայական ճգնաժամ և էթնիկ տեղաշարժեր. վերոհիշյալ երեք թեմաների համատեքստում հեղինակը հատուկ անդրադարձել է մ.թ.ա. XII դ. մերձավորարևելյան գլոբալ ճգնաժամին և դրա ազդեցությանը Հայկական լեռնաշխարհի էթնիկ պատկերի վրա (մուշկերի խնդիրը): Այս թեմայով Ա. Քոսյանը հրապարակել է մեկ մենագրություն (Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, «Զանգակ», 1999) և մոտ 10 հոդված (հմմտ. էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XII դարում, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 1991, էջ 65-78. «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը, Պատմա-բանասիրական հանդես, N 1-2, 1996, էջ 207-220. Кризис XII в. до н.э. - этнические передвижения и депопуляция: к постановке проблемы, Вестник общественных наук, N 3, 1998, с. 45-52):

5. Մերձավորարևելյան պատմության համատեքստում հայկական սկզբնաղբյուրների վերլուծություն. իր մի շարք աշխատանքներում Ա. Քոսյանն անդրադարձել է հայ հեղինակների և հատկապես Մովսես Խորենացու տվյալներին՝ հայերի կազմավորման խնդրի տեսանկյունից: Այս խնդրի շուրջ հեղինակը հրապարակել է մեկ մենագրություն («Տուն Թորգոմայ». առասպել

և իրականություն, Երևան, Արևելագիտության ինստիտուտ, 1998) և մոտ 5 հոդված (հմմտ. Արամ Նահապետը Կապադովկիայում. մի վարկածի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 1999, էջ 237-259. About the Historical Sources of Movses Khorenatsi's History, Fundamental Armenology, N 2, 2017, p. 30-33):

6. Ընդհանրացնող և միջմասնագիտական հետազոտություններ. Ա. Քոսյանը հատկապես վերջին շրջանի գործերում ընդհանրացրել է առկա տվյալները՝ պատմական աղբյուրներից բացի օգտագործելով նաև միջմասնագիտական (հիմնականում մշակութաբանական, հնագիտական, կլիմայաբանական) գործիքակազմ: Այսպես, մոտ 20 հրապարակումներում նա անդրադառնում է պատմական պարբերացման խնդիրներին (Հին Առաջավոր Ասիայի և Էգեյան ծովի ավազանի պատմության պարբերացման շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ, N XVII, 1998, էջ 124-140), պատմական իրողությունները քննարկում շրջակա միջավայրի համատեքստում (Առաջավոր Ասիայի շրջակա միջավայրը և Հայկական լեռնաշխարհը. վաղ և միջին բրոնզեդար, Հին Արևելք, N 1, 2014, էջ 144-165), անդրադառնում «կոնտակտային գոտի» հասկացությանը (Euphrates-Tigris Contact Zone, Aramazd, N XI/1-2, p. 2017, 47-56. Ինտեգրացիոն գործընթացները Եփրատյան կոնտակտային գոտում մ.թ.ա. II-I հազարամյակներում, Արևելագիտությունը Հայաստանում, N 3, 2017, էջ 200-212. The Northern Gates of the Euphrates-Tigris Contact Zone, in: Margaryan E. (ed.), On the Borders of World-Systems: Contact Zones in Ancient and Modern Times, Oxford, 2020, p. 71-93): Այս տեսանկյունից հիշարժան է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի առաջին հատորը (Երևան, «Զանգակ», 2013), որի պատասխանատու խմբագիրը և Փոքր Ասիայի ու Միջագետքի պատմությանը նվիրված առանձին գլուխների հեղինակը Ա. Քոսյանն է:

7. Գիտական մեթոդիկա. Ա. Քոսյանի գիտական աշխատանքների մեջ հատուկ տեղ է գրավում հեղինակի մի հոդվածը՝ նվիրված գիտության և սիրողականության սահմանի որոշմանը (Գիտություն, թե՞ դիլետանտիզմ, Պատմա-բանասիրական հանդես, N 2-3, 1992, էջ 11-26): Այս աշխատանքը բացահայտում է այն բացասական հետևանքները, որոնք առաջանում են, երբ մասնագիտական կրթություն և համապատասխան մեթոդաբանություն չունեցող հեղինակները միջամտում են լուրջ գիտական խնդիրներին, մի երևույթ, որը լայնորեն տարածված է հայ իրականության մեջ:

8. Գրախոսություններ. Ա. Քոսյանն ինը գրախոսության հեղինակ է, որոնցում քննարկվում կամ քննադատվում են հինարևելագիտությանը վերա-

բերող տարբեր աշխատանքներ (հմմտ. Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1990, Պատմա-բանասիրական հանդես, N 2-3, 1992, էջ 243-246. A.-M. Wittke, Musker und Phryger, Wiesbaden, Reichert Verl., 2004, Aramazd, N 2, 2007, p. 202-206):

9. Դասագրքեր. Ա. Քոսյանը հեղինակել է նաև հանրակրթական և ավագ դպրոցի դասագրքերի՝ Հին աշխարհին, Համաշխարհային պատմությանը, Հայաստանի հարակից երկրներին, Հայոց եկեղեցու պատմությանը վերաբերող հատվածները (21 հրատարակություն, 1990-2018 թթ.):

Ա. Քոսյանի երկարատև աշխատանքի շնորհիվ գիտական շրջանառության մեջ են մտել բազմաթիվ նոր տեղեկություններ, զարգացվել են նոր տեսակետներ և տեսություններ, որոնք գալիս են լույս սփռելու ինչպես հինմերձավորարևելյան, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության և հայ ժողովրդի կազմավորման ընթացքին վերաբերող հարցերի վրա:

Ա. Քոսյանը գիտական մի շարք պարբերականների խմբագրական խորհրդի անդամ է կամ գլխավոր խմբագիր («Հիմնարար հայագիտություն», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Հին Արևելք»): Դրանց թվում հատկապես հիշարժան է «Արամազդ. մերձավորարևելյան ուսումնասիրությունների հայկական հանդեսը», որը տպագրվում է եվրոպական լեզուներով Երևանում (2006-2017 թթ.) ու Օքսֆորդում (2017-2021 թթ.): Այն այսօր դարձել է միջազգայնորեն լայն ճանաչված հանդես, որը տարածում է համապատասխան գիտական բնագավառի հայկական տեսակետը:

Ա. Քոսյանն իր փորձն ու գիտելիքները սիրով փոխանցել և շարունակում է փոխանցել երիտասարդ սերնդին: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել և պաշտպանվում են ատենախոսություններ, զարգացվում են նորարարական թեմաներ: Նրա հին և նոր աշակերտներն այսօր կարևոր դիրք են գրավում հումանիտար գիտությունների զարգացման տարբեր բնագավառներում:

Ընթացիկ տարում լրացավ պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Քոսյանի ծննդյան 65-ամյակը: Սրտանց շնորհավորելով՝ ամենայն բարիք և նորանոր ձեռքբերումներ ենք ցանկանում մեր ուսուցչին: Երեսուն տարի անց՝ մեր երկրի ու պետության համար այս դժվարին պահին, մարտահրավերները ոչնչով չեն փոխվել, և մեր երկիրը Արամ Քոսյանի նման անհատների կարիքն ունի:


ԱՐՄԵՆ ԲՈՐՈՒՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ՀՆԱԳԵՏԸ

(Գևորգ Տիրացյանի ծննդյան 95-ամյակի առթիվ)



Գևորգ Տիրացյանը ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 18-ին Ռումինիայի Չետատեա-Ալբա քաղաքում՝ հայտնի մտավորական և մանկավարժ Արտաշես Տիրացյանի ազնիվ ու բարեկիրթ ընտանիքում: Դեռևս դպրոցական տարիքում ի հայտ է գալիս նրա նախասիրությունը հին պատմության և լեզուների հանդեպ, որը հիմք է դառնում 1945 թ. Բուխարեստի համալսարանի պատմության ֆակուլտետ ընդունվելու համար: Երբ Տիրացյանների ընտանիքը հայրենադարձվում է, ուշիմ երիտասարդը դառնում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող: Համալսարանական կրթություն ստանալով՝ նա 1952 թ. ընդունվում է ասպիրանտուրա՝ Բորիս Պիոտրովսկու գիտական ղեկավարությամբ: Ապագա հնագետի ընդգրկումն աշխարհայացքը ձևավորվել է նաև ականավոր գիտնականներ Հովսեփ Օրբելու և Կամիլա Տրևերի հետ անմիջական շփումների շնորհիվ: Գ. Տիրացյանը սիրով էր հիշում լենինգրադյան գիտական ընթերցասրահների գրասեղաններին դրված

լուսամփոփների լույսը և գրքերի թերթերի շրշյունը՝ ընթերցասարահի խաղաղ լուռության մեջ:

1956 թվականը նշանակալից էր տաղանդավոր գիտնականի կյանքում: Այդ տարի նա հաջողությամբ պաշտպանում է «Հայաստանի մ.թ. առաջին դարերի նյութական մշակույթն ըստ Գառնիի դամբանադաշտի և բաղնիքի տվյալների» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ու աշխատանքի անցնում Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում: Նրան պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է շնորհվում արդեն հաջորդ տարի: Գ. Տիրացյանի գիտական գործունեությունը 1959 թ. ի վեր կապվում է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Գիտության ազնիվ մշակը, տասնյակ տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ, 1986 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանը մ.թ.ա. VI – մ.թ. III դարերում» թեմայով, արժանանում պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (1987 թ.) և դառնում նույն ինստիտուտի տնօրեն (1988-1993 թթ.): Հնագիտության նվիրյալի չորս տասնամյակ շարունակվող գիտական արգասավոր գործունեությունը ծառայում էր կարևոր մեկ նպատակի՝ հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրությանը: Նրա պատմահնագիտական մեծարժեք աշխատություններում վեր է հանում հայ ժողովրդի հին պատմության ամբողջ մի հազարամյակ:

Հին հայկական պետության կազմավորումը Գ. Տիրացյանի պատմագիտական հետաքրքրություններից էր: Գնահատելի է հատկապես գիտնականի էական ներդրումը պատմագիտության բնագավառում՝ «Երվանդունիները Հայաստանում» ուսումնասիրությամբ: Այսօր էլ արդիական է առաջարկված այն տեսակետը, որ ուրարտացիներից անմիջապես հետո՝ Երվանդունիների օրոք, Հայկական լեռնաշխարհը վերամիավորելու նոր փորձ է կատարվել: Ձեռք բերված այդ փորձի ազդեցությունը իշխող հաջորդ հարստությունների միավորիչ պետական քաղաքականության վրա չի կարելի անտեսել: Այլ աշխատություններում ևս նա խորաթափանց դիտարկումներ է կատարում երկու սատրապությունների բաժանված Հայաստանի վերաբերյալ, որը շարունակում էր հանդես գալ մեկ անվան տակ՝ Արմինա: Հայկական լեռնաշխարհի ամբողջականության գաղափարը, ըստ Գևորգ Տիրացյանի, մեզ ժառանգություն է մնացել հայկական առաջին հարստությունից ու դրա նախորդներից: Գիտական գործունեության վաղ շրջանից սկսած՝ նա անդրադարձել է նաև հայ-սկյութական առնչությունների խնդրին: Հիմնվելով Արմավիրում, Կարմիր բլուրում, Նորշունթեփեում և այլուր սկյութական մշակույթին բնորոշ հեծելասարքերի հայտնաբերման փաստերի վրա՝ մեծանուն գիտնականը հետևություն է արել Հայկական լեռնաշխարհում սկյութների երբեմնի ներկա-

յության վերաբերյալ: Ուշագրավ է նրա տրամաբանական հետևությունը՝ արված այն դիտողության հիման վրա, որ ուրարտական քաղաքների բնակելի թաղամասերում հաջորդ ժամանակաշրջանի դամբարանների հայտնաբերման փաստը վկայում է դրանցում քաղաքային կյանքի ժամանակավոր դադարի մասին: Հայաստանի հելլենիստական քաղաքների ծագումնաբանությունն ուսումնասիրելով՝ նա եզրակացրել է, որ ուրարտական քաղաքների անկման պատճառներից մեկն էլ հրոսակների կողմից դրանց ջրամատակարարման համակարգերի և ոռոգման կառույցների ավերումն էր: Հետազոտողի սրատես հայացքից չի վրիպել այն իրողությունը, որ մի շարք խոշոր բնակավայրերում քաղաքային կյանքը վերականգնվել ու շարունակվել է նաև Վանի թագավորության անկումից հետո, քանի որ աքեմենյան ժամանակաշրջանում դրանք եղել են վարչական կենտրոններ: Պեղումներով հայտնաբերված հնագիտական տվյալների հիման վրա նա ապացուցել է, որ հետուրարտական ժամանակաշրջանում քաղաքային կյանքը շարունակվում էր Արգիշտիխինիլի-Արմավիրում, Էրեբունի-Արինբերդում, Տոսպ-Վանում: Նրա գիտական խոհունությունը և հին լեզուների իմացությունը նպաստել են այնպիսի խրթին հարցերի հիմնավոր մեկնաբանությանը, ինչպիսիք են Հայոց պետականության կազմավորումը, Ուրարտու-Հայաստան խնդիրը, «Անաբասիսը» և Հայաստանը, Կոմմագենե երկիրն ու Հայաստանը, Հայաստանի վաղմիջնադարյան մշակույթի ակունքները:

Գ. Տիրացյանի գիտական գործունեության առանցքն էին Հին Հայաստանի հնագիտության հարցերը, թեև նրա հնագիտական հետազոտությունների ոլորտը շատ ավելի ընդգրկում էր: Հին հայկական մշակույթի պարբերացման խնդիրները քննարկելիս ցուցաբերել է համալիր մոտեցում՝ չսահմանափակվելով զուտ հնագիտական իրողություններով, օգտագործել է պատմական տարաբնույթ աղբյուրների տեղեկությունները: Հին Հայաստանի մշակույթի փուլաբաժանման տիրացյանական սանդղակը այսօր էլ չի կորցրել իր կիրառական նշանակությունը: Գ.Ա. Տիրացյանի «Հին Հայաստանի մշակույթը մ.թ.ա. VI – մ.թ. III դդ. (ըստ հնագիտական տվյալների)» ամփոփիչ մենագրությունը ռուսերենով լույս տեսավ 1988 թ. և անմիջապես դարձավ հնագետների, պատմաբանների, արվեստաբանների, արևելագետների ու մշակութաբանների կողմից փնտրված մի գիրք: Հիշյալ մասնագետներից յուրաքանչյուրն այս աշխատության մեջ կարող է գտնել հին հայկական մշակույթի զարգացման հազարամյա փուլի վերաբերյալ իրեն հետաքրքրող բազմաթիվ հարցերի պատասխանները:

Գ. Տիրացյանն իր աշխատություններում այն միտքն է հայտնել, որ հին հայկական մշակույթի ակունքները պետք է փնտրել վաղ և զարգացած եր-

կաթի դարաշրջաններում: Գիտական փաստերի հիման վրա նա ապացուցել է Հայկական լեռնաշխարհի նախորդ մշակույթների շարունակականությունը տնաշինության, մետաղագործության, խեցեգործության, տարազի, դամբանների կառուցվածքի, թաղման գույքի, հավատալիքների ոլորտներում: Հին ու նոր լեզուների իմացությունը, մասնագիտական համապարփակ գիտելիքները դրսևորվում էին հատկապես տարբեր մշակույթների կապերը հետազոտելու բնագավառում՝ անկախ գիտական թեմայի բովանդակությունից: Իսկ մեծանուն գիտնականի հետաքրքրությունների շրջանակը արտասովոր լայն էր՝ հին Հայաստանի ապակուց մինչև ուրարտական քաղաքակրթություն և աքեմենյան Իրան, քաղաքաշինության սկզբունքներից մինչև արտաշեսյան սահմանաքարեր ու դրանց արձանագրությունների վերծանում:

Պեղումները Գևորգ Տիրացյանի կյանքի կարևոր մասն էին: Նրա դաշտային հնագիտական աշխատանքների թագն ու պսակն են դարձել Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրի պեղումները, որոնք ղեկավարել է 1970 թվականից մինչև իր մահկանացուն կնքելը: Տարիների համառ աշխատանքի և մի քանի տասնյակ գիտական հրատարակությունների շնորհիվ հին Արմավիրը՝ որպես հնագիտական դասական հուշարձան, միջազգային ճանաչում ստացավ: Այսօր էլ Արմավիրի պեղումները շարունակվում են, և դրանց վերաբերյալ լույս են տեսնում նոր հրատարակություններ: Գ. Տիրացյանը վաղուց արդեն մեզ հետ չէ, սակայն նրա ջանքերով ստեղծված արշավախումբը կամ Արմավիրի հնագիտական դպրոցը դեռ գործում է: Նա իր կրտսեր գործընկերներին սովորեցնում էր լինել հանդուրժող միմյանց նկատմամբ և աշխատել հանուն մեկ միասնական նպատակի: Գ. Տիրացյանը նաև այլ նշանավոր արշավախմբերի անդամ է եղել (Կարմիր բլուր, Գառնի, Արտաշատ), հնագիտական պեղումներ է իրականացրել Հացավանում, Դովրիում, Փարաքարում, հնագիտական հետազոտություններ է կատարել Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Մեծավաստակ գիտնականի գործը արդեն մոտ երեք տասնամյակ շարունակում են նրա աշակերտները Արմավիրում ու հնագիտական այլ համալիրներում՝ չմոռանալով անցյալի իրենց կապերը և, ավա՛ղ, կյանքից հեռացած գործընկերներին:

Գևորգ Տիրացյանը «ԽՍՀՄ հնագիտության» Կովկասի ու Միջին Ասիայի հնագույն պետություններին նվիրված հատորի և «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության առաջին հատորի բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Արտակարգ հետաքրքրությամբ են ընթերցվում «Հայկական սովետական հանրագիտարանին» տրամադրված ծավալով ոչ մեծ, սակայն բովանդակությամբ տարողունակ նրա հոդվածները՝ «Երվանդունիներ», «Երվանդ Ա Սակավակյաց», «Տիգրան Երվանդյան», «Եր-

վանդ Բ», «Երվանդ Գ», «Երվանդ Դ Վերջին», «Մարաստան», «Կոմմագենե», «Նեմրուփ», «Արմազի», «Արսամեա», «Արտաշատ», «Ակունք», «Հացավան»:

Գ. Տիրացյանը հատիկ առ հատիկ հավաքում էր Արևմտյան Հայաստանի վերաբերյալ արտերկրում հրատարակված հնագիտական տվյալները և իմաստավորում դրանց տեղը հին հայկական մշակույթի պատմության մեջ: Նա հանդես էր գալիս նաև ոչ գիտական պարբերականներում՝ հանրամատչելի հոդվածներով՝ նվիրված հուշարձանների համաժողովրդական պահպանության և թանգարանային գործի արդյունավետ կազմակերպման խնդիրներին: Եվրոպական բազմաթիվ լեզուների և ուսումնասիրության բնագավառին գերազանց տիրապետելը Գ. Տիրացյանին հնարավորություն էր ընձեռում գործուն մասնակցություն ունենալու միջազգային գիտական կյանքին, ինքնատիպ զեկուցումներով հանդես գալու աշխարհի տարբեր երկրներում անցկացվող գիտաժողովներում ու նստաշրջաններում: Դրանցում արտահայտված գաղափարներն աչքի էին ընկնում իրենց հստակությամբ ու խորությամբ: Նրա ջանքերով միջազգային գիտաժողովներ էին կազմակերպվում նաև Հայաստանում, որտեղ գիտնականը հանդես էր գալիս որպես աշխույժ ու հմուտ կազմակերպիչ, անհրաժեշտության դեպքում՝ նաև արհեստավարժ թարգմանիչ:

Պատմագիտական ու հնագիտական աշխատությունների գրախոսությունը Գ. Տիրացյանի տաղանդի դրսևորման մեկ այլ ասպարեզ էր: Տարբեր լեզուներով տպագրված մասնագիտական աշխատություններին քաջատեղյակությունը նրան դրդում էր հարկ եղած դեպքում հրապարակայնորեն քննարկել դրանք, ընդգծել բարձրացված հարցերի կարևորությունը հայագետների համար, իր կարծիքը չպարտադրելով՝ հաղորդակցվել գործընկերների հետ: Դիմացինի գիտական վաստակի հանդեպ հարգալից վերաբերմունքը խիստ բնորոշ էր նրբանկատ գիտնականի համար: Չէր զլանում հակիրճ, բայց ընդհանրացնող ոճով շնորհակալական խոսքեր ուղղել գիտության երախտավորներին՝ դիպուկ գնահատելով նրանց վաստակը:

Տիրացյան-գիտնականն օժտված էր մարդկանց հետ ջերմ և տևական կապեր հաստատելու հատուկ շնորհով: Առանձին թեմա կարող է դառնալ նրա հարաբերությունների քննարկումը լենինգրադյան դպրոցն անցած «նույն տրամաչափի» իր հասակակից հայ գործընկերների հետ: Գիտության նվիրյալների այդ աստղաբույլում նա թերևս ամենաքիչ տիտղոսավորն էր: Սակայն երբ խոսքը լենինգրադյան դպրոցի հայ գիտնականների նշանավոր խմբի վերաբերյալ էր, հաճախ առաջինը հնչում էր Գ. Տիրացյանի անունը: Երբ մի անգամ խոսակցություն բացվեց այդ մասին, իրեն հատուկ հումորով ասաց՝ «Իմ մտերիմներն են, այդ պատճառով առաջինն իմ անունն են տա-

լիս»: Իհարկե, բոլորն էլ բարեկամներ էին, բայց տաղանդավոր հետազոտողների այդ խմբում Գևորգ Տիրացյանին, անկասկած, գնահատում ու սիրում էին:

Երբ Գ.Ա. Տիրացյանը Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենը դարձավ, մնաց նույն համեստ ու աշխատունակ անձնավորությունը, միայն հոգսերը շատացան: Ղեկավարում էր անաղմուկ, չէր փակվում իր առանձնասենյակում, հաճախ լսողի դերում էր: Այդ տարիներին պայմաններն անասելի ծանր էին, ինստիտուտի գործունեության նվազագույն անհրաժեշտ պայմաններն ապահովելը ահռելի ճիգեր էր պահանջում: Նա հղացավ և իրագործեց համատեղ արշավախմբեր ստեղծելու գաղափարը: Կազմակերպվեցին հայ-ամերիկյան, հայ-բելգիական, հայ-ռուսական հնագիտական արշավախմբերը, հեռանկարում կյանքի էր կոչվելու հայ-իտալական արշավախումբը: Դրա շնորհիվ մասամբ հնարավոր դարձավ երիտասարդ մասնագետներին պահել գիտական հաստատությունում: Ամենացուրտ ձմեռնամուտին նա չզլացավ մասնակցել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական նստաշրջանին և վերջին անգամ ամփոփել գիտաժողովի աշխատանքները, քանի որ իր առջև խնդիր էր դրել պահպանել գիտնականի իսկական տեսակը:

Կենսախինդ մարդ էր Գևորգ Տիրացյանը: Սիրում էր երիտասարդների հետ քայլել Երևանի փողոցներով ու զրուցել ամենաբազմազան հարցերի շուրջ՝ արվեստի ու գրականության, հին ու նոր դեպքերի մասին: Իր տարիքից ավելի երիտասարդ էր թվում, թեև գիտնականի խոհուն և ուշադիր հայացք ուներ ու փոքր-ինչ օրորուն քայլվածք: Քայլելիս հետաքրքրությամբ շուրջն էր նայում, ասես նոր էր տեսնում իր քաղաքը: Պեղումների մեկնելու ժամանակ՝ արշավախմբի մեքենային սպասելիս, նստում էր Բաղրամյան պողոտայի մայթեզրի պատաշարի քարերին՝ հրաժարվելով դրանց վրա գոնե թերթ փռել: Ամռանն ընթացող պեղումների ամիսներին՝ երեկոյան, Արմավիրի հնագիտական արշավախմբի նախկին բանվորները, որոնք պատանեկան տարիքից վաղուց դուրս էին եկել՝ ընտանիքներ կազմել, այցելում էին «ընկեր Գևորգին» և նրան հյուրասիրության հրավիրում: Գ. Տիրացյանն արժանապատիվ, բայց նաև ընկերական-անկաշկանդ պահվածք ուներ: Շատ հետաքրքիր զրուցակից էր, երբեք չէր կորցնում հումորի զգացողությունը և չէր ցուցադրում իր գիտելիքները: Երբ մի անգամ սեղանի շուրջ հյուրընկալողի տարեց հարևանը, որը պատերազմի ժամանակ գերմաներեն մի քանի բառ էր սովորել, անհաջող փորձ արեց դրանցով նախադասություն կազմելու, Գ. Տիրացյանը դա ընկալեց լուռ ժպիտով ու զարմացած հայացքով՝ իբր իրեն անհասկանալի էր այդ

օտար լեզուն: Գյուղացին հպարտությամբ իր շուրջն էր նայում՝ չկասկածելով անգամ, որ դիմացինը մայրենի լեզվի պես տիրապետում է գերմաներենին:

Եզակի պայծառ մարդ էր Գևորգ Տիրացյանը՝ բարյացակամ ու մեծ հոգու տեր: Նա իր սրտի ջերմությունը բաժանում էր շրջապատի մարդկանց, հուսադրում և համախմբում նրանց: Կյանքից անժամանակ հեռացած տաղանդաշատ գիտնականին իր գործընկերները սիրով են հիշում, իսկ երախտապարտ աշակերտները՝ ակնածանքով:

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

**ՀԵՆՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՍՎԱԶՅԱՆ.
ԼՈՒՍԱՎՈՐ ՀԵՏԱԳԻԾ ԹՈՂԱԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ**



Կյանքի 83-րդ տարում իր մահկանացուն կնքեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Սուրենի Սվազյանը: Կյանքից հեռացավ մեր գործընկերը, բարեկամը և գիտնականը՝ բոլորիս մեջ թողնելով անդառնալի կորստյան զգացումը:

Հենրիկ Սվազյանը ծնվել է 1938 թ. Լենինականում (Գյումրի), ավարտել է տեղի Վ. Մայակովսկու անվ. թիվ 5 միջնակարգ դպրոցը, այնուհետև ծառայել խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետ և բարձր առաջադիմությամբ ավարտել այն 1966 թ.: Այնուհետև սկսվում է դեպի գիտություն տանող նրա արգասաբեր կենսագրական ընթացքը՝ աշխատանքը ՀՀ հուշարձանների պահպանության վարչությունում, իսկ 1967 թ. տեղափոխվել է Հեղափոխության պետական թանգարան՝ որպես ավագ գիտաշխատող: Այնուհետև նրա ուսումնառությունն ու աշխատանքային գործունեությունը կապվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ. 1968 թ. ընդունվել է այդ ինստիտուտի ասպիրանտուրան և, ավարտելով այն, 1971 թ. աշխատանքի անցել Միջին դարերի պատմության բաժնում՝ տասնամյակներ շարունակ մեծ հաջողությամբ իրա-

կանացնելով գիտական արդյունավետ գործունեություն: Թեկնածուական ատենախոսությունը նա պաշտպանեց 1975 թ., իսկ 1991 թ.՝ առավել լայն և հետազոտական խորքերով առանձնացող դոկտորական ատենախոսություն՝ «Աղվանից աշխարհի պատմություն» (հնագույն ժամանակներից VIII դ. ներառյալ): Պրոֆեսորի կոչում է ստացել 2003 թ.:

1997-2003 թթ. գիտնականն աշխատում էր Վ. Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտում՝ հիմնելով դաստիարակչական աշխատանքների և հասարակագիտական առարկաների ամբիոնը և իր ակնառու ներդրումն անելով հանրապետության բանակի կազմավորման ու կայացման և զինվորական կադրերի ռազմահայրենասիրական դաստիարակության անդաստանում: 2002 թ. դրան հետևեց իր վաստակի հատուցումը՝ ՀՀ բանակի գնդապետի կոչումը: Ռազմագիտական ամբիոնը գլխավորելով հանդերձ՝ ինստիտուտում Հ. Սվազյան դասավանդել է «Հայոց պատմություն» առարկան, կազմակերպել գիտաժողովներ, հանդես եկել բովանդակալի զեկուցումներով և ուղղորդել ուսանողների մտավոր նախասիրությունները՝ ի հայտ բերելով իր գիտակազմակերպչական ընդարձակ կարողությունները: Գիտական նստաշրջաններում նրա հարուստ փորձը դրսևորվել է ուշագրավ և հրատապությամբ բնութագրվող ելույթներում, հատկապես Երևանում (1991 և 2012 թթ.) և Արցախում (2006 և 2007 թթ.) տեղի ունեցած միջազգային գիտաժողովներում՝ Աղվանից պատմության հիմնահարցերի վերաբերյալ: Հենց այս վերջիններս են, որ տասնամյակներ ի վեր շարունակում են մնալ հայագիտության ուշադրության կենտրոնում և միաժամանակ առանցքային տեղ են գրավում Հ. Սվազյանի գիտական հետազոտությունների ոլորտում, հիմնահարցեր, որոնց համակողմանի և բովանդակային լուսաբանությամբ նա անհերքելիորեն առաջատարի տեղ ունի մեր արդի պատմագիտության մեջ: Այս թեմայով բազմավաստակ հետազոտողն ստեղծել է գիտական կուռ հայեցակարգ, ընդլայնել մեր ճանաչողության սահմանները նորովի և թարմ եզրահանգումներով, որոնք առարկայացել են նրա մենագրություններում, բազմաթիվ հոդվածներում, հրապարակումներում, ուսումնական ձեռնարկներում և քանիցս միջազգային գիտաժողովներում հնչեցրած ելույթներում: Առաջինը մեր պատմագիտության մեջ՝ Հ. Սվազյանը արդիական գիտական մեկնաբանություն է տվել Աղվանից աշխարհի ամբողջական պատմությանը, որի արդյունքը եղավ նրա հանրահայտ «Աղվանից աշխարհի պատմություն» մենագրությունը (Ե., 2006): Այս աշխատությունը հանրագումարի է բերում գիտնականի բազմաթիվ տարիների աշխատանքը՝ հագեցած նոր որակների դրսևորումներով, հետազոտության առարկայի խոր իմացությամբ և հայեցակարգային հետևողականությամբ: Նրա ուշադրությունից չեն վրիպում մինչ այդ առկա մնացած կամ

վիճահարույց բազմաթիվ հարցեր, որպիսիք են իր աշխատության իմացական հիմքերը կազմող սկզբնաղբյուրների վերհանումն ու բնութագրերը (հայկական, հունահռոմեական, վրացական, ասորական և այլ օտարալեզու աղբյուրներ, վիմագրական արձանագրություններ, հնագիտական այլ փաստեր և այլն), Աղվանքի քաղաքական սահմանների հստակ ու պատճառաբանված վերարտադրությունը, աղվանական ցեղային միությունների սոցիալ-տնտեսական ու էթնոմշակութային նկարագիրը և անցումը դեպի պետական կազմավորում, Աղվանքի քաղաքական կացությունը պարթևահռոմեական հարաբերությունների ոլորտից մինչև Սասանյաններ, այնուհետև Արշակունիներից մինչև Միհրանյանների ու Առանշահիկների դարաշրջաններ և այլն: Արժեքավոր է հեղինակի հակադրությունը ադրբեջանական այն կեղծարարություններին՝ իրենց արյունակից հոչակել աղվաններին և այդպիսով «ժառանգել» պատմական Աղվանքի տարածքը, այդպիսին համարելով Արցախն ու Ուտիքը: Անհերքելի փաստերով Հ. Սվազյանն ապացուցում է, որ աղվանական ցեղերը պատմության բավիղներում լուծվել են պարսկական, արաբական և այլ ցեղերի մեջ և չքացել այդ զանգվածների խառնարաններում՝ բացարձակապես որևէ կապ չունենալով տարածաշրջան ներխուժած թուրքացեղ կազմավորումների հետ, որոնք ներկայիս ադրբեջանցիների իրական նախորդներն են:

Հ. Սվազյանի հաջորդ՝ «Աղվանից աշխարհի պատմության ուսումնասիրության հիմունքները» (Ե., 2017) եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գիրքն ընդգրկում է հեղինակի բովանդակային հետազա մշակումները խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ: Ուտիքի և Արցախի վարչական կացության հետ կապվող հանգույցների համոզիչ քննարկմամբ նա հիմնավորում է այդ նահանգների հայկական պատկանելությունը: Նա առաջարկում է քննարկվող թեմայի սահմանների և բուն հարցի հստակեցում՝ վարչաքաղաքական և տարածական ընդգրկումներով տարբեր՝ բուն Աղվանքի, Մարզպանական Աղվանքի և Հետմարզպանական կամ Հայոց Աղվանքի առանձնական շրջանների ուսումնասիրության մեթոդը՝ երեք առանձին և ինքնաբավ ժամանակաշրջաններով: Աշխատության արժանիքներից է, մասնավորապես, վերոհիշյալ նահանգների տեղադրության ստույգ մատնանշումը՝ Կուրի աջափնյակի սահմաններում՝ մեր մատենագիտության մեջ Ուտիքի և Արցախի քաղաքացիություն ստացած անվանումների (Խորին աշխարհ Հայոց, Աղուանք Հայոց, Աղուանից Հայք, Հայոց հյուսիս արևելից կողմանք և այլն) վկայակոչմամբ:

2019 թ. հրատարակվեց Հենրիկ Սվազյանի «Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում» (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ.) աշխատությունը, որն այս թեմայով նրա կատարած գիտահետա-

զոտական աշխատանքի յուրօրինակ հանրագումարն է: Գրքում համոզիչ կերպով վերհանվում են Մեծ Հայքի և Աղվանքի փոխհարաբերությունների պատմական հիմքերն ու առանձնահատկությունները: Դրանք ունեն արդիական և հրատապ նշանակություն, որչափով հիմնիվեր հերքում են նշված հարաբերությունների աղավաղված և ձևախեղված պատկերացումները, փաստական ամուր հենքի վրա ցույց տրվում երկու երկրների քաղաքական ու հոգևոր համագործակցության իրական պատկերը: Հեղինակը գիտական հիմնավոր տարրորոշումներով է բնութագրում Աղվանից աշխարհի քաղաքական պատմությունը՝ խնդիրն ուսումնասիրելով իր կոնկրետության մեջ՝ պատմականորեն ձևավորված և տարբեր ժամանակների վարչաքաղաքական կազմավորումների շրջանակներում:

Իր համար նվիրական դարձած հետազոտական խնդիրները շարունակում էին մինչև կյանքի վերջը աշխատանքի կոչել և հուզել գիտնականին՝ հայտնաբերելու նոր ծալքեր, վերարտադրության կարոտ նոր իրողություններ իր գիտական նախասիրությունների անդաստանում: Ավաղ, այդ ամենը բեկվեց ճակատագրի անագորոյն միջամտությամբ, որ անզոր է, սակայն, բեկանելու նշանավոր հայագետի՝ մեզ համար թանկ և լուսավոր հետազիծ թողած Հենրիկ Սվազյանի գիտական երևելի վաստակը:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

«Բանբեր հայագիտության» հանդես

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седя Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1127
Ստորագրված է տպագրության 27.10.2021 թ.
Տպագրական 24 մամուլ: Տպաքանակը՝ 200
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 27.10.2021 г.
24 печ. л. Тираж – 200. Типография НАН РА
Ереван, пр. Маршала Баграмяна 24
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 27.10.2021
24 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press
Yerevan, Marshal Baghramyan av. 24
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am